This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

**Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

**About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

CU60501561
BS2851.A65 A5 1898g Ankanon girk Nor Kta
Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google

# ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

Բ

Digitized by Google

Digitized by Google

Ի ՅԻՇԱՏԱԿ ՄԿՐՏՉԻ ԷՄԻՆ

# ԹԱՆԳԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

## ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ

## Բ

## ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔ

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ՂԱԶԱՐՈՒ

1898

Digitized by Google

ButlStax
BS
2851
.A65
A5
1898g

Acopian Armenian
Collection

Digitized by Google

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

ԶԻՂՁՍ տենչանաց բարեացապարտ բանասիրի առն Պր. Մկրտչի Էմինեան, զայս ահա երկրորդ նուագ, գամք լնուլ, երկրորդ հատորով ԹԱՆԳԱՐԱՆԻՍ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ԴՊՐՈՒԹԵԱՆՑ[1], յորում բովանդակին ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔ ՆՈՐՈՑ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ, կամ՝ ԳԻՐՔ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ, այլովքն հանդերձ, սկսեալ ցգլուխ ԺԸ՝ հօր Սարգսի Յովսեփեան, զոր մեք յառաջ մատուցաք առ նորին բացակայութեան: Յայս անուն դրոշմեցաք զգիրս զի գտցեն ընթերցողք ի մատենիս զանենայն աւանդական եւս և առասպելական վէպս՝ զՔրիստոսէ և զծնողաց նորին, զորս ի բազմազանն մթերից նախնեաց՝ աստ անդ ցրիւ ի գրչագիր մատեանս սփռելոց՝ հաւաքեալ ամփոփեցաք ի մի յայս հատոր:

Ջհնութենէ սոցին և զնմանեացն՝ ոչ ոք արդեւք ի հետաքննին բանասիրաց երկբայեսցի. զի անգամ և մատենագիրք նախկին դարուց քրիստոնէութեան, որպիսիք կացին՝ Յուստինոս, Կղեմէս աղեքսանդրացի, Որիգենէս, Եպիփան և Ս. Եփրեմ, յիշատակ ալարեալ զնոցանէ, ստայօդ և առասպելական վէպս անուանեն զնոսին, և ոչ ի ստուգապատում արանց ինչ դրոշմեալ: Բայց թէ ո՞յր ուրուք գրեալ զնոսին՝ չունիմք ասել հաւաստի գտակաւ: Զի թէպէտ և առաքելոց ոմանց և աշակերտաց

1. Այսպէս կոչեմք այսուհետեւ զժողովածոյս՝ փոխանակ Թանգարանի Հին եւ Նոր Նախնեաց:

Digitized by Google

Քրիստոսի ընծայիՒ յորոց սակի են՝ Յակովբոս եղբայր Տեառն, Նիկոդեմոս, և այլք, այս ինչ սակայն յայտնի է ամենայն հմտաց, զի "խարդախողք ոմանք գրեցին ի մտաց իւրեանց **Աւետարան** յանուն **տղայութեան Քրիստոսի Տեառն մերոյ**, և այլք՝ **Գիրս հարցուածոց** յանուն **Մարիամու և աշակերտացն Քրիստոսի**[1]": Այսպէս և Ս. Կիւրեղ ի գիրս Ընծայութեանն հաստատելով զստուգութիւն չորեցունց աւետարանացն, զայլս ամենայն կոչէ "Սուտ անուանեալ գրեալ, և վնաս ընթերցեալ ընթեռնլեացն. այլ գրեցին և Մանիքեցիքն՝ **Թովմայ գլուխ աւետարան**, որում անուշահոտ աւետարանացն անուն եդեալ կարդան, ծեփեալ շաղախ առ ապականել զոգիս միամտացն"[2]: Սմին համգոյն և մերս Սարգիս վարդապետ ի Մեկնութեան Կաթուղիկէիցն[3] գրէ. "Իսկ որ ամենևին խոտելիք են, զի ի հոգւոյն մոլորութենէ արտադրեցան **Պրակս–աւաքայքն**՝ զորս **Տօն Մարիամու** անուանեն, և **Աւետարան** զոր **Թովմայի** ասեն, և **Գիրք տղայութեանն Քրիստոսի**, և այլք սոյնպիսիք. որք ի տիպ ճշմարտութեան կամեցան ի ներքս մտանել. զոր ոչ ընկալաւ եկեղեցի Աստուծոյ զորոմն չարութեան և զղաղձն վնասակար. վասն զի ոչ ետես ի նոսա տիպ ինչ ստուգութեան, այլ ամենևին լի ստութեամբ":

Դարձեալ, չէ մարթ ստուգութեամբ ասել ինչ, եթէ յոր՞ում ժամանակի և յո՞յր ձեռն յեղան ի մերս բարբառ վէպքս այսոքիկ, զի պակասին ստոյգ յիշատակարանք: Սակայն եթէ մտադիւրութեամբ ոք ակն արկանիցէ ի գիրսն, քաջ իսկ ունի տեսանել՝ զի նուազեալ գտանին յոճոյ և ի շնորհաց անտի նախնի հայեցի լեզուիս, ուր չքնաղապէս իմն

1. Մեկն. Գործ. Առաք. տպ. ի Վենետիկ 1839, Ճառ Առաջին:
2. Կոչ. ընծայ. տպ. ի Վիեննա 1832, Գլխ. Դ. Վասն. երրոյ-ոբէոյ:
3. Տպ. ի Կ. Պոլիս, ի Թուին Հայոց 1193:

փայլեն յԱստուածաշունչ մատեանս, և ըստ այնր երևին ի նոսին տիպք նորոյ թարգմանութեանն : Ցորմէ ի դէպ ուրեմն է կարծել՝ եթէ հանեալ իցեն ի մեր խօսս և ի գիր՝ յ՚Ը և ի յաջորդ դարս․ դարձեալ, ոչ յուղղափառաց անտի, այլ ի թերևելոց, գուցէ և ի Մանիքեանցն և ի Պաւղիկեանց:

Անցցուք և զհանգամանաց կազմութեան մատենիս տալ տեղեկութիւնս ինչ համառօտս, զկարևորացն ասեմ զքնագրացն՝ զորս առաջնորդ կալաք մեզ, և զու-րոց զտարբերութիւնս ընթերցուածոցն, զայլասացիկ ի-մաստսն և զբառսն կարգեցաք ի ստորև իւրաքանչիւր էջիցն՝ ի դիւրութիւն ընթերցանելեացն: Ասլաքէն զտա-նին ուրեք ուրեք բայք և բառք, որոց մթին և անյայտ են իմաստքն, այլ մեք ոչ ինչ ամենևին իշխեցաք ձեռ-նամուխ լինել և ինքնօրէն դատաստանաւ յայտնաբանել զնոսին, մանաւանդ զի՝ ուրանօր գրչագիրք ինչ յաճախ նովիմբք վարէին մանումբք վրիպակօք, թերևս առաւել քան զարժանն պատկառ կացեալ գրչին, թողաք զայնս՝ որպէս և էինն, ի հմտութիւն և ի զիտութիւն ուոց միանգամ ի գաւառացի խօսից և ի բանից քննութիւնս պարապիցին: Գիտելի է և այս, զի յընթացս դարուց՝ ի ձեռն անհմուտ և ռամիկ դպրաց՝ ի տեղիս տեղիս յա-ւելմամբ և յապաւմամբ՝ խաթարեալ և խանգարեալ են օրինակքն, որ և պատճառք եղեն մեզ զմիանգամ տպեալն՝ սակս ինչ ինչ տարբերութեանց՝ երկիցս և երիցս ընդ մա-մուլ անցուցանելոյ և ստուարացուցանելոյ զմատեանս:

Այսչափ ինչ ի մէնջ՝ ոչ ի քննութիւն, այլ ի լրումն կարգի բանիցս․ վասն որոյ զմանրակրկիտ հետազօտու-թիւն մատենիս թողեալ ի քննասէր բանասէրս, ասասցուք սուղ ինչ զգրչագրացն:

**Ա․ ԳԻՐՔ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ․** — Առաջին օրինակ գրոցս որ ի մերում Մատենադարանի, ըստ մասին

Digitized by Google

գաղափարեալ է ի Հ. Կարապետ վարդապետէ մերմէ Եսայեան՝ յօրինակէ Եզընկացի Բարունակ դպրի. Թիւ գրչագրիս 298, Նոտրագիր, գրեալ ի վերայ թղթոյ. ի վերջ կոյս մատենիս գրեալ կայ յիշատակարանս. “Օրինակեալ ի վայելումն Բարունակ ապարդիւն դպրիս, ի հին ձեռագրէ իմեքէ, յամի Քրիստոսի փրկչին մերոյ 1821, և ի թուականութեանս Հայոց՝ ՌՄՀ: — Արդ աղաչեմ զ.ձեզ իմ վայելօղսդ զսոյն զայս զանձս անգիտ՝ յիշման արժանի առնել զվերոյգրեալ Գրիչ գրոցս՝ զապարդիւն **Բարունակ** դպիրս **Եզընկացի**, հանդերձ կենդանեօք և ննջեցելովք իմովք...„: Յետ այսորիկ յաւելու զայս ինչ և Հ. Կարապետ վարդապետն մեր. “**Յիշատակարան**. — Զհին օրինակ գրոցս, յորմէ օրինակեալ էր գաղափար մերոյս, որպէս լուաք ի հաւատարիմ պատմողէ, մի ոմն ի փոքրաւորաց Պօղոս պատրիարգի ադրիանուպօլսեցւոյ՝ ի հուր արկեալ է, իբրև գործ արժանի կորստեան: — Եղև ընդօրինակեալ յամի 1824 ի Նոյեմբ.„:

Բ. օրինակն է՝ բոլորգիր, գրեալ ի վերայ թղթոյ, միասիւն, մեծ. 13½×9. ի սկզբան և ի վերջն թերի է մատեանս, վասն որոյ պակասին յիշատակարան և թուական գրչութեան. գլխակարգութիւնքն եղեալ են ի ստորև իջից կարմրադեղիւ:

## ՀԱՏԱԿՈՏՈՐՔ Ի ԳՐՈՑ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ

Ա. ՅԻՇԱՏԱԿ ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՒ ՈՎՍԱՆՆԱՅ, ԾՆՈՒՆԴ ՄԱՐԻԱՄՈՒ ԿՈՒՍԻՆ ԵՒ ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ. — Բնագիր սորա է **Դ. Ճառընտիր** Մատենադարանիս. Թիւ գրչ. 985, մեծ. 31×22, բոլորգիր, երկսիւն, գրեալ ի վերայ թղթոյ, բազում ուրեք վրիպակագիր: Թուական գրութեան չիք, զի պակասեն կարևոր յիշատակարանք: Գրիչն է՝ ոմն **Կիւրեղ**, իսկ Ստացողն՝ **Պօղոս երէց**:

Բ. ՄԵԾԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՅԻՆ, ՅՈ-

Digitized by Google

ՎԱԿԻՄԱՅ ԵՒ ԱՆՆԱՅԻ, ԾՆՈՂԱՑ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ. — *Բնագիր սորա է* **ԻԴ Ճառընտիր** *Մատենադարանի վանացս. Թիւ գրչ.* 1447, *մեծ.* 38×25, *բոլորգիր երկսիւն, գրեալ ի վերայ թղթոյ: Կարեւոր մասն յիշատակարանին թերի գոլով՝ անյայտ մնայ ժամանակ գրութեան, Գրիչն է* **Կարապետ եպս. գանձակեցի**, *իսկ Ստացողն՝* **Յակոբ եպիսկոպոս**: *Տեղի գրութեան՝* **Առջակ** *կամ* **Արճակ** *մենաստան՝ ի Վասպուրական նահանգի:*

Գ. ՅԱՂԱԳՍ ԾՆՆԴԵԱՆ ԱՄԵՆԱՍՈՐԲՈՒՀՒՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԵՒ ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ, Ի ԾՆՕՂԱՑ ԻՒՐՈՑ՝ Ի ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՒ ՅԱՆՆԱՅԷ. Ի ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ԳՐՈՑ Ս. ՅԱԿՈԲԱՅ ԵՂԲՕՐ ՏԵԱՌՆ. — *Տպագրեցաւ յ՚* **Բ Ճառընտրէ** *վանացս. Թիւ գրչ.* 1014, *մեծ.* 33×24, *գրեալ ի վերայ թղթոյ, մեծաւ մասամբ բոլորգիր մեծ և հին՝ նման երկաթագրոյ. ի սկզբան և ի վերջն պակասաւոր, մասամբ և եթ լրացեալ նոր բոլորգրաւ: Անուանք Գրչացն յիշին բազում ուրեք՝* **Սարգիս**, **Հայրուկ** *և* **Ստեփաննոս**, *եայլն. գոյ ընդարձակ յիշատակարան Հայրուկի, այլ մնայ թերատ և անթուական. գոյ միւս եւս հարևանցի յիշ''. ուրումն՝ յետին ստացողի, ի թուին հայոց ՊՀԵ. հին գրչութիւնն թուի եղեալ յ՚ԺԲ դարու:*

Դ. ՎԱՍՆ ԱՒԵՏԱՒՈՐ ՀՐԵՇՏԱԿԻՆ ԵՒ ՔԱՐՈԶԵԼՈՅ ԶՅՂՈՒԹԻՒՆ Ս. ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ. — *Բնագիր սորա է* **Լ Ոսկեփորիկ** *Մատենադարանիս. Թիւ գրչ.* 1095, *մեծ.* $15^1/_2 \times 10^1/_2$, *բոլորգիր, գրեալ ի վերայ թղթոյ. ի վերջ կոյս մատենիս գրեալ կայ այս յիշատակարան նոտարագիր գրով. "Գրեցաւ տետրակս թուին ՌՃԽԹ, ձեռամբ* **Յոհան** *մեղօք մածուցեալ* **երիցու**, *ի խնդրոյ սիրացու* **Մելիքին**, *զոր Տէր Աստուած բարով վայելել տացէ խաղաղական կենօք. ամէն,,:*

Ե. ԳԱԼՈՒՍՏ ՄՈԳՈՒՑՆ ՅԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ. — *Տպագրեցաւ ի* **ԺԸ Ճառընտրէ** *Մատենադարանի վանացս.*

Digitized by Google

թիւ գրչ. 456, մեծ. 27×17, բոլորգիր, երկսիւնեան, գըրեալ ի վերայ թղթոյ. Ստացող մատենիս է՝ **Վարդան երէց**՝ համօրէն ընտանեօքն, (հայրն՝ **Մուրատ**, մայրն՝ **Խոնդ խաթուն** և եղբայրն **Ամիրեզտին**), իսկ Գրիչն՝ **Եղիա** ոմն: Չիք թուական գրչութեան. վերջին ստացող՝ գրոյս **Ադամ**՝ նոտարագի գրով ունի "Թվ. ՌՃԿԲ", և դարձեալ՝ "... Խուտին մեռաւ Թվ. ՌՃԾԵ.. Դաւութն մեռաւ՝ Թվ. ՌՃԽԹ... Աղեկսարնն հոգևոր տէր է, որ եկաւ Թվ. ՌՃԾԶ":

Զ. ՑԱՂԱԳՍ ՄՈԳՈՒՑ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԹԷ Ո՛ՐՊԷՍ ԵԿԻՆ ԶՕՐՈՔՆ ԻՒՐԵԱՆՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ. — Բնագիր սորա է **ԻԴ Ճառընտիր**, զորմէ տես յ՚էջ Թ:

Է. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՄՈԳՈՒՑ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ ՅԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՆՈՐԱԾԻՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ. — Բնագիր սորա է **ԼԵ Ճառընտիր** Մատենադարանի վանացս. թիւ գրչ. 569, մեծ. $27\times17\frac{1}{2}$, բոլորգիր երկսիւնեան, ուրեք ուրեք պակասաւոր, գրեալ ի թուին Հայոց ՋԶԷ(=1538) ի **Հաւհաւոյ վանս Բաղեշայ**, ձեռամբ **Մելքիսեթեկ երիցու**: Երկրորդ օրինակն է՝ **ԺԸ Ոսկեփորիկ**, հաւաքեալ ի ձեռն Մովսէս վարդապետի Եզընկացւոյ, որոյ և թուղթն գոյ ի սկիզբն մատենին. թիւ գրչ. 986. մեծ. 30×20, բոլորգիր երկսիւնեան, գրեալ ի վերայ թղթոյ. թուղթք ինչ անկեալ են ի վերջ մատենիս, այլ յիշատակարանն մնայ անթերի. Գրիչ մատենիս է՝ **Մխիթար վարդապետ**, իսկ Ստացողն՝ **Պր. Խլղաթ** հանդերձ ընտանեօքն:

Ը. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՑԱՂԱԳՍ ՓԱԽՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ ՅԵԳԻՊՏՈՍ Ի ՀԵՐՈՎԴԷ: — Բնագիր սորա է **ԼԵ Ճառընտիր** Մատենադարանի վանացս, զորմէ տես ի վեր:

**Բ.** ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ՊԻՂԱՏՈՍԻ. — Բնագիր սորա է **ԺԶ Ոսկեփորիկ** Մատենադարանի վանացս. թիւ. գրչ. 104, մեծ. $15\frac{1}{2}\times10\frac{1}{2}$, բոլորգիր՝ գրեալ ի վերայ թըղ-

Digitized by Google

թոյ. չիք թուական գրչութեան և անուն Ստացողի, Գրիչ մատենիս է **Կարապետ Հիզանցի**։

Բ. օրինակն է **ԺԱ Ճառընտիր** Մատենադարանիս. թիւ գրչ. 1352. և է հաւաքումն զանազան ճառից նախնեաց, գաղափարեալ յայլևայլ գրչագրաց արքունի գրանոցին Պարիսու, ձեռամբ Հ. Արսէն վրդ. Բագրատունւոյ, ի նմին քաղաքի, յամի 1824–1825։ Երրորդ օրինակն է **ԻԳ Ճառընտիր**, տես յ'էջ Թ:

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ԹԱՂՄԱՆՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ.** — Բնագիր սորա է նոյնպէս **ԻԳ Ճառընտիր**: Երկրորդ օրինակն է՝ **ԻԸ Ճառընտիր** վանացս. թիւ գրչ. 657, մեծ. $35^{1}/_{2}\times22^{1}/_{2}$, նոտրագիր անվայրժ, և է հաւաքումն 69 ճառից, գաղափարեալ ի ճառընտրէն գտելոյ ի Բաղէշ քաղաքի յամի 1846: Երրորդ օրինակն՝ է **Դ Ճառընտիրն**, զորմէ տես յ'էջ Ը:

**Դ. ԹՈՒՂԹ ՊԻՂԱՏՈՍԻ.** — Բնագիր սորա (որ է յառաջին սիւնակ տպագրին) է **ԻԵ Ոսկեփորիկ** Մատենադարանիս. թիւ գրչ. 433, մեծ. $18\times12^{1}/_{2}$, բոլորգիր, գրեալ ի վերայ թղթոյ, այլ և ուրեք նոտրագիր. ի մէջն պակասին թուղթք ինչ. Գրիչ սորա է՝ **Աւոոմ կրօնաւոր**, ի թուին ՊԺԵ: Երրորդ օրինակն՝ որ յերկրորդ սիւնակ տըպագրին՝ է **ԻԳ Ճառընտիր**, տես յ'էջ Թ: Երրորդ օր. է **ԺԸ Ոսկեփորիկ** զորմէ տես յ'էջ Ժ: Չորրորդն՝ **ԻԸ Ճառընտիր**, տես ի վեր: Հինգերորդն է՝ **Ժ օր. Թըղթոյն՝ Ս. Ներսիսի Շնորհալւոյ**. թիւ գրչ. 1252, մեծ. $21^{1}/_{2}\times16^{1}/_{2}$, շղագիր և մասամբ նոտրագիր անվայրժ. Ստացող մատենիս՝ **Համբեցի** մահտէսի **Մարտիրոս**. Տեղի՝ "ի քաղաքս **Սպահան** ի **Գիւղաքաղաքս Ջուղայ**, ի **դուռն Ամենափրկիչ սուրբ վանաց**. ի հայրապետութեան տեառն Նահապետի, և թուականութեան Հայոց փոքր ՀԹ նաղար ԺԷ, ՌՃԽԴ = (1695)։

ԱՅԼ ՕՐԻՆԱԿ ԹՂԹՈՑՆ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌ ՏԻԲԵՐ. — *Բնագիր սորա է* **ԺՋ Ոսկեփորիկ**, *զորմէ տես յ'էջ Ժ*:

**Դ. ԹՈՒՂԹ ԼԵՆՏՈՒԼԵԱՑ ՊՈԲԼԻՈՍԻ ՅԻՍՈՒՍԷ ՆԱԶՈՎՐԵՑԻՈՅ.** — *Պատառիկս գաղափարեալ է նոր նոտրագրով ի Կիւրին՝ յամի* 1897, *ի* 14 *հոկտեմբերի, և է թարգմանութիւն նոր*:

**Ե. ՏԵՍԻԼ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.** — *Առ մեզ՝ ի Մատենադարանի վանացս էին մետասան օրինակք Տեսլեան Ս. Աստուածածնին. և զի անմարթ էր միոյ և եթ ընտրելագոյն համարեալ օրինակի տպագրութեամբ, զայլոց տասանց զտարբերութիւնս ի ստորև իջիցն դրոշմել, վասն որոյ արժան համարեցաք զամենայնն ի հինգ խումբս բաժանել, զայս ձև օրինակի*:

ԱՌԱՋԻՆ. — *Բնագիր Տեսլեանս է* **ԿԸ Մաշտոց** *Մատենադարանի վանացս. թիւ գրչ.* 570 *մեծ.* $25 \times 17^1/_2$, *բոլորգիր՝ գրեալ ի վերայ թղթոյ. ի սկիզբն և ի վերջն թերի է և բազում ուրեք բրդզեալ: Տեղի գրչութեանն* ***յԱստուածայր անապատի Ծոփաց***, *գրեալ ի թուին Հայոց* ՈԾԷ (1208): — *Երկրորդ օր. է* **ԼԱ Ճառընտիր** *Մատենադարանի վանացս. թիւ գրչ.* 633, *մեծ.* $31 \times 23^1/_2$, *երկսիւն՝ գրեալ ի վերայ թղթոյ. թերի է յոյժ մատեանս, և պակասի թուական գրչութեանն. ի յիշատակարանին յիշին Գրիչք մատենիս՝* ***Կոստանդին երէց, Վասիլ և Ստեփ. քահանայք***. *յետին Ստացող մատենիս է* ***Հերումքահանայ***:

ԵՐԿՐՈՐԴ. — *Բնագիր Տեսլեանն՝ որ և երրորդ օրինակ, է* **Լ Ոսկեփորիկ** *Մատենադարանի վանացս, զորմէ տես յ'էջ Թ: Չորրորդ օրինակն՝ է* **ԻԸ Ոսկեփորիկ** *Մատենադարանիս. թիւ գրչ.* 972, *մեծ.* $11^1/_2 \times 7$, *բոլորգիր, գրեալ ի վերայ թղթոյ, ժէպէտև դիւրընթեռնլի՝*

Digitized by Google

այլ յոյժ վրիպակագիր է մատեանս. Գրիչ մատենիս Ըն-շանալի ումն **Ներսէս**, իսկ Ստացողն՝ **Խոշմար**. չիք թուական գրչութեան: Հինգերորդ օր. է **Ժ Ոսկեփորիկ**. թիւ գրչ. 646, մեծ. 9½×16, բոլորգիր փոքր, գրեալ ի վերայ թղթոյ. Գրիչ մատենիս՝ **Վարդեգոյն սարկաւագ**, իսկ Տեղի գրչութեան "Երկիրն **Ցաղով**, ի գիւղն ի **Քարձին** որ կոչի **Լալա-տարա**". չիք թուական գրչութեան, բայց գործ է յետին դարուց: Վեցերորդ օր. է **Է Ոսկեփորիկ** Մատենադարանի վանացս, թիւ գրչ. 161, մեծ. 6×10. նոտրագիր՝ գրեալ ի վերայ թղթոյ, յոյժ սխալագիր. Գրիչն է **Պօղոս** ումն, բայց չիք թուական գըրչութեան: Եօթներորդ օր. է **ԼԶ Ճառընտիր** Մատենադարանի վանացս, թիւ գրչ. 305, մեծ. 19×15, նոտըրգիր, գրեալ ի վերայ թղթոյ. Ստացող մատենիս՝ **Սարգիս** ումն, Տեղի գրչութեան՝ **Ենկիչէհիր**, ի թուին ՌՁԳ (=1634):

**ԵՐՐՈՐԴ.** — Բնագիր սորա, որ և ութերորդ օրինակ Տեսլեանս, է **Գ Կանոնական բանք և խրատք**, որ ի Մատենադարանի վանացս. թիւ գրչ. 531, մեծ. 7×11, բոլորգիր, գրեալ ի վերայ թղթոյ. Գրիչ մատենիս՝ ումն **Ղազար**. պակասի թուական գրչութեան. բայց մի ոմն՝ գուցէ յետին ստացող մատենիս, յաւելու ուրեք նոտրագիր գրով ըզթուականն ՌՃՁԲ (1733): Իններորդ օրինակն է **ԻԴ Ճառընտիր**, զորմէ տես յ'էջ Թ:

**ՉՈՐՐՈՐԴ.** — Բնագիր սորա որ և տասներորդ օրինակ Տեսլեան Ս. Աստուածածնին, է **ԺԸ Ոսկեփորիկ** Մատենադարանի վանացս, տես յ'էջ Ժ:

**ՀԻՆԳԵՐՈՐԴ.** — Բնագիր սորա որ և մետասաներորդ օրինակ Տեսլեան Ս. Կուսին, է **ԻԴ Ոսկեփորիկ**. թիւ գրչ. 541, մեծ. 25×15, բոլորգիր, երկիշեան, գրեալ ի վերայ թղթոյ. պակասաւոր ի սկիզբն և յաւարտն. Ստացող մատենիս՝ է Տիրացու Պարոն **Աշագ**, Գրիչն՝ **Մկրտիչ**,

գրեալ՝ «ի թվին հայոց ՌՀԷ (1628) ամին, ապրիլ ամսոյն ի ԺԸ, աւրն Եշի», այսպէս յաւելու. «.. անմեղադիր լերուք ով ընթերցողք, զի տրտում և ի տարակուսի էի, զերէ՝ գրիս գրելն՝ (այսմ ամի) մայրս՝ (Թագուհի) առ Աստուած փոխեցաւ»:

**Զ. ՆՆՋՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.** — Առաջին օրինակ գրոցս որ և բնագիր, է **Բ Ճառընտիր** Մատենադարանի վանացս, զորմէ տես յ՚էջ Թ: Երկրորդ օրինակն է **Գ Ճառընտիր**. թիւ գրչ. 512, մեծ. 28×20, նոտրագիր, գրեալ ի վերայ թղթոյ. Գրիչ մատենիս է **Մըկրտիչ** որդի Ղազարու, Ստացողն՝ **Տէր Զաքարիա** աւագ երէց Լովայ կամ Իլվով քաղաքի Լեհաց, որդի Տէր Գասպարի, որպէս նշանակի սաէպ յընթացս մատենիս. Տեղի գրչութեան «Ի Սուրբ քաղաքն **Երուսաղէմ**, **ի դուռն Սրբոյն Յակովբայ**, ի թուին Հայոց ՌՁԶ». է ամբողջ և անթերի, բովանդակեալ ի 1277 թղթահամարս, բաց ի քանի մի թղթոց՝ որք երևին ի բաց անկեալ, և կամ ի պակասաւոր գաղափարէ օրինակեալ: Երրորդ օրինակն է **ԻԹ Ճառընտիր** Մատենադարանի վանացս. թիւ գրչ. 653, մեծ. 36×22, բովանդակ մատեանս է ձեռագիր Հ. **Ներսէս վրդ. Սարգսեան**, քաղելով ընդօրինակեալ յամի 1847, ի մեծ յերկաթագիր եռիշեան մագաղաթեայ ճառընտրէ **Առաքելոց վանաց Մշոյ**, «ահաւոր մեծութեամբ, ասէ, և պատկառելի ամենայն տեսողաց». թուական գրչութեան է՝ ՈԾԴ (1205) եղեալ ի **յիշատակարանին**՝ որ ի կատարած մատենին: Չորրորդ օրինակն է **Ե Ճառընտիր**. թիւ գրչ. 1553, մեծ. 25×16, բոլորգիր, գրեալ ի վերայ բամբակեայ թղթոյ, մաշեալ, բորգզեալ և գունաթափ, պակասաւոր ի սկզբան, բայց ի վերջն ամբողջ. թուական գրչութեան՝ «Յամին վեցհարիւրորդի վաթսներորդի և չոր

ըոլդում ամի շրջաբերութեան Հայոց տումարի (Քրիստոսի 1215), և ի թագաւորութեան Հայոց Լևոնի, ի վերջացեալ և ի նուաղեալ դառն ժամանակի, յաւուրս աստուածապատիւ և հոգևոր տեառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի, յաշխարհս Պաղեստին՝ ի մէջ գերութեան **Երուսաղեմի**, առաքելական աթոռոյս,, ։ ի **Յովհաննէս** գրչէ, ի խնդրոյ **Յովհաննէսի ձգնաւորի**, առ ի դնել յիշատակ յԵրուսաղէմ, ի Ս. Աստուածածնի տաճարն, զոր շինեալ է Գէորգ քահանայ՝ հօրեղբայր Յովհաննու ճգնաւորի, ասէ: Հինգերորդ օրինակն է **Մեկնութիւն Աւետ. Ղուկասու, Իգնատիոս վարդապետի Գ. օր.** թիւ գրչ. 271, մեծ. $26\frac{1}{2} \times 17$, բոլորգիր հին, գրեալ ի վերայ թղթոյ. յ'էջ 396 ընթեռնումք "... Ես **Մանումախս** յամենայնի տկար զօրով և անվարժ գծողութեան տառիս ... զի ծեր եմ և ծանրացեալ և ի լուսոյ պակասեալ, ձեռս դողդոչեալ, դեղս խառնակ (զի բացագոյն է թանաքն), և տեղիս անխնամ. վասն զի յամենայնէ չքաւոր, ի յարկէ, ի ծածկութից, աւտար և թափառական,, , ասէ. իսկ յ'էջն՝ 660 յիշատակէ զթուական գրչութեանն. "ի թվին ՈՀԲ (1223) գրեցաւ գիրքս այս ձեռամբ Մանումախի... ի **Գառնու Եկեղեաց**, ի մայրաքաղաքս **Եզնկայս**, ընդհովանեաւ Սուրբ Գէորգա սքանչելագործ վկային Քրիստոսի, ի տան Գրիգորի սրբասէր քահանայի,, , ասէ:

Հ. ԽՍԱՑԻ ՏԱՑԵՑԻ

Digitized by Google

# ԱՆԿԱՆՈՆ ԳԻՐՔ

# ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԱՑ

## Ա

## ԳԻՐՔ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ[1]

### ԳԼՈՒԽ Ա.

*Վասն սրբոյ կուսին Մարիամու՝ որ եղեւ ի տան հօր իւրում. զոր ասացեալ է սրբոյն Յակոբայ Տեառն եղբօրն։*

ԻՍԿ այրն Յովակիմ յորժամ ել ի տանէ իւրմէ՝ առեալ զհօտս և զհովիւս, գնաց յանապատն, և անդ հարկանէր զվրան իւր. և կացեալ Նորա յաղօթս զքառասուն տիւ և զքառասուն գիշեր՝ լալով և արտասուելով, լոկ հացիւ և ջրիւ միայն. Նստեալ խնդրէր յԱստուծոյ ցաւագին անձամբ և ասէր այսպէս. Յիշեա զիս, Տէր, ըստ ողորմութեան և արդարութեան քո, և արա յիս զնշան բարերարութեան քո, որպէս արարեր Նախահօրն մե-

1. Օրինակքն մեր չունէին խորագիր զայս խորագիր առաք մեք ի Սարգսէ Վարդապետէ. (Մինասեան հանդիսի. Թուղթ Պետրոսի Բ. Յակովբեան)։



Digitized by Google

րում Աբրահամու. որ ի ժամանակի ծերութեան ետուր նմա զաւակ օրհնութեան որդի աւետեաց զՍահակ միամօր, և ժառանգ մխիթարութեան յազգս իւր: Եւ այսպէս արտասուելով հայցէր յԱստուծոյ ցաւագին անձամբ՝ խնդրելով ողորմութիւն ի Տեառնէ. և ասէր. Ո՛չ ելից աստի, ո՛չ կերայց և ո՛չ արբից՝ մինչև այց արասցէ Տէր ի վերայ իմ, և ողորմեսցի ծառային իւրոյ:

Եւ իբրև եղև կատարումն քառասնօրեայ պահոց նորա. եկն հրեշտակ Տեառն և եկաց առաջի Յովակիմայ, և ասէ ցնա. Յովակիմ՝ լուաւ Տէր աղաչանաց քոց, և կատարեաց զխնդրուածս քո. ահա յղասցի կին քո, և ծնցի քեզ զաւակ օրհնութեան քո. և եղիցի անուն նորա մեծ, և ամենայն ազգ երանիցեն նմա: Արի՛ առ զընծայս զոր խոստացար առնել, և տարցես ի տաճարն սրբութեան, և կատարեսցես զուխտն անդ. զի ահա ես յառաջ վասն քո ի գիշերիս յայսմիկ երթեալ ծանուցից քահանայապետին՝ առնուլ ըզնուէրս ի ձեռաց քոց: Եւ զայս ասացեալ հրեշտակապետն գնաց ի նմանէ. և Յովակիմ յարուցեալ վաղվաղակի խնդութեամբ՝ գայր բազում հօտիւք իւրովք և ընծայիւք:

Եւ ի նոյն տեսլեանն երևեալ հրեշտակ Տեառն քահանայապետին Եղիազարոսի՝ և ասէ ցնա. Ահա Յովակիմ գայ առ քեզ ընծայիւք, ընկալցիս զնուէրս նորա սրբութեամբ և օրինօք՝ որպէս արժանն է. զի Տէր լուաւ աղաչանաց նորա, և կատարեաց զխնդրուածս նորա: Եւ զարթուցեալ քահանայապետին ի քնոյ անտի՝ և յարուցեալ գոհանայր զՏեառնէ և ասէր. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի, որ ո՛չ անտես առնէ զծառայս իւր՝ որք խնդրեն զնա: Եւ ապա դարձեալ հրեշտակ Տեառն կրկին երևեալ Աննայի և ասէ ցնա. Ահա գայ այր քո, արի՛ ել ընդ յառաջ նորա, և ուրախութեամբ ընկալ զնա: Իսկ Աննայ յարուցեալ զգեցաւ զարդ հարսնութեան իւրոյ, և ընթացաւ ընդ յառաջ նորա. և յորժամ ետես զայր իւր՝ խնդութեամբ երկիր եպագ նմա, և անկաւ ի պարանոց նորա: Եւ ասէ ցնա Յովակիմ. Ողջոյն քեզ Աննայ և աւետիս, զի

Digitized by Google

Տէր Աստուած ողորմեցաւ ինձ, և օրհնեաց զիս, և խոստացաւ տալ մեզ զաւակ օրհնութեան։ Եւ ասէ Աննայ ցՅովակիմ. Դարձեալ քեզ աւետիս, զի և ինձ Տէր հրամայեաց տալ՝ զոր ասես դու։ Ուրախացեալ Աննայ և ասէ. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՝ որ ո՛չ անտես արար զաղաչանս մեր, և ո՛չ զողորմութիւն իւր ի մէնջ։ Եւ նոյն ժամայն հրամայեաց Յովակիմ կոչել զբարեկամս և զդրացիս իւր. և արար ընդունելութիւն մեծ. կերան և արբին և ուրախ եղեն. և գոհացեալ զԱստուծոյ գնացին իւրաքանչիւր ի տունս իւրեանց. և ի ձայն մեծ փառաւոր առնէին զԱստուած։

## ԳԼՈՒԽ Բ.

*Վասն սրբոյ կուսին Մարիամու ծննդեան, որ եղեւ ի տան հօր իւրում։*

Եւ ի վաղիւն յարուցեալ Յովակիմ կոչեաց զհովիւսն, և ասէ ցնոսա. Ածէք որոջս տասն սպիտակ, եղիցի այն ընծայ մեծ տաճարին Աստուծոյ իմոյ. և հորթս երկոտասան. եղիցի այն քահանայիցն, դպրաց և պաշտօնէիցն, որք են սպասաւորք եկեղեցւոյն. և խոյս հարիւր. եղիցի այն ամենայն ժողովրդեանն Իսրայելի։ Եւ իբրեւ առեալ Յովակիմ զընծայսն տանէր ի տաճար Տեառն, և երկրպագեալ քահանայիցն և ամենայն ժողովրդեանն, և բերեալ առաջի նոցա՝ կացուցանէր զնուէրս իւր. և նոքա տեսեալ զնա՝ ուրախ եղեն, և երանի տային նմա, զի հաճեցաւ Տէր առնուլ զընծայս սրբութեան ի ձեռաց նորա։ Հիացեալ բազմութիւն մարդկան որ անդ էին, և ասէին. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՝ որ կատարեաց զխնդրուածս սրտի քո. երբ խաղաղութեամբ ի տուն քո,

և Տէր եղիցի ընդ քեզ յաւիտեան. և տացէ քեզ զաւակ բարի և ծնունդ սուրբ ի պտղոց որովայնից ձերոց: Եւ Յովակիմ երկրպագեալ քահանայիցն որ անդ էին, և յարուցեալ եմուտ ի տաճարն, և յաղօթս կացեալ՝ գոհանայր զՏեառնէ և ասէր. Տէր Աստուած Իսրայէլի հարցն մերոց. որպէս լուար ծառայիս քում, և մեծ արարեր զողորմութիւն քո. և այժմ աղաչեմ զքեզ, Տէր, եթէ տացես ինձ զաւակ արու կամ էգ, տաց զնա քեզ, Տէր, ի տաճարի աստ լինել պաշտօնեայ զամենայն աւուրս կենաց իւրոց: Եւ զայս ասացեալ Յովակիմայ՝ և յարուցեալ գնաց խնդութեամբ ի տուն իւր:

Իբրեւ անցին ամիսք երեք, խաղայր մանուկն յորովայնի մօր իւրոյ: Եւ Աննայ յոյժ ուրախացեալ ցնծայր և ասէր. Կենդանի Տէր՝ եթէ լիցի ինձ զաւակ օրհնութեան արու կամ էգ, տաց զնա ի տաճար սրբութեան զամենայն ժամանակս կենաց իւրոց: Եւ եղեւ Աննայ ի յղութեան հարիւր և ութսուն աւուրս՝ որ է ամիս վեց: Ելեալ Յովակիմ ընծայիւք գնաց ի տաճարն սրբութեան, և մատուցանէր առաջի քահանայիցն զնուէրս զենմանց զոր խոստացեալ էր տանել ամենայն կատարումն՝ ի գլուխ տարւոյն: Եւ իբրեւ հանին ի սեղանն զողջակէզն, և զենուին. ի հեղուլ արեանն տեսանէին՝ որ ո՛չ գոյր մեղք ի նոսա, և յոյժ ուրախացեալ օրհնէին զԱստուած: Իսկ Յովակիմ յետ մատուցանելոյն զընծայսն, որոջ մի առեալ և մատուցեալ յառաջ՝ զենոյր ի վերայ սեղանոյ անդր. և տեսանէին ամենեքեան որ յանկարծակի իբրեւ զկաթն սպիտակ բղխեալ ի յերակէ անտի փոխանակ արեանն. և քահանայիցն և ժողովրդեանն ամենեցուն զայն տեսեալ և սքանչացեալ հիանային, զի ո՛չ ումեք երբեւեցաւ այնպիսի նշան որ եղեւ ի վերայ զենմանն այնորիկ: Ասէ քահանայապետն Եղիազարոս ցՅովակիմ. Ասա՛ մեզ. ո՞ւմ յանուն մատուցեր զընծայս զայս՝ որ յետոյ ածեր զորոջս ի զենումն ի վերայ սեղանոյն: Ասէ Յովակիմ. Զառաջին նուէրս խոստացեալ էի Տեառն իմոյ արարչին ուխտ կատարել. իսկ զյետին որոջս

զայս յանուն զաւակի իմոյ՝ խորհուրդ առեալ էի վասն նորա առնել։ Ասէ քահանայապետն. Տեսանե՞ս զնշանն զայն՝ զոր Տէր եցոյց քեզ յանուն զաւակի քում։ Ասէ քահանայապետն. Կաթն որ բղխեաց այժմիկ յերակէ անտի յանուն զաւակի քո. զի որ ծնանի յորովայնի մօր իւրոյ՝ էգ լինի անապական կոյս սուրբ։ Եւ կոյսն յղացեալ առանց առն, մանուկ ծնանի արու, լինի արքայ մեծ և թագաւոր Իսրայելի։ Եւ իբրեւ լուան զայս ամենեքեան որ անդ կային՝ զարմանային յոյժ։ Եւ Յովակիմ գնաց լռութեամբ ի տուն իւր, և պատմեաց Աննայի կնոջն իւրում վասն աքանչելեացն որ եղեւ, և գոհացեալ զԱստուծոյ ուրախ լինէին և ասէին Տեառն, կամք քո եղիցին։ Եւ իբրեւ յղութիւն Աննայի[1] յաւուրս երկերիւր և տասն. որ է ամիս եօթն և նոյն ժամայն յեօթներորդ ժամու ծնանէր Աննայ զմանուկն իւր սուրբ, ի լնուլ[2] ամսոյ քսան և մի. որ է սեպտեմբերի ութ։ Առաջին աւուրն հարցանէր զմանկաբարձն. Զի՞նչ ծնայ։ Եւ նա ասէ. Զաւակ ծնար էգ, բայց գեղեցիկ յոյժ, տեսլեամբն պայծառ և վայելուչ, անարատ առանց ամենայն աղտոյ։ Ասէ Աննայ. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՝ որ լուաւ աղաչանաց ծառայիցն իւրոց, և մեծ արար զողորմութիւն իւր և զառնելն իւր ընդ մեզ. և մեք եղաք բերկրեալք։ Այժմ հաստատեցաւ սիրտ իմ ի Տէր, և բարձրացաւ յոյս իմ յԱստուած փրկիչ իմ։

Իբրեւ եղեւ զաւակն աւուրս երիս՝ հրամայեաց մանկաբարձին լուանալ զնա, և դնել դատիկոնիսն[3] պատուով. և բերեալ զնա առաջի իւր, և տուեալ զստինս՝ դիեցուցեալ արբուցանէր կաթամբ, և խանդաղատելով կոչէր զանուն նորա Մարիամ. և օր ըստ օր աճէր և զարգանայր, և թռուցանէր հրճուելով ի գիրկս իւր։ Եւ այնպէս ծնողացն բարձեալ սնուցանէին զնա։ Իբրեւ եղեւ Մարիամ քառասնօրեայ աւուրբ՝ առեալ զնա

1. Ի գրչագրին պակասի Եղեւ։
2. Ի գրչագրին պակասի անունն եբրայական ամսոյ։
3. Թերեւս դողոփէլոն որ նշանակէ կոնք։

ծնողացն մեծաւ պատուով և բազում ընծայիւք, և տարեալ ի տաճարն Տեառն, ըստ օրինի աւանդութեան իւրեանց. Եւ մանուկն Մարիամ օր ըստ օրէ աճէր և զարգանայր։ Եւ իբրեւ եղեւ նա ամսոց վեցից. Թոյլ տայր մայրն իւր զի թեւակոխեսցէ առ ի գնալն. և իբրեւ փոխէր զքայլս երիս՝ դառնայր անդրէն ի յետս և գայր անկանէր ի գիրկս մօր իւրոյ. և մայր նորա բարձեալ զնա ի վերայ բազկաց իւրոց՝ և գգուելով ասէր. Մարիամ սուրբ կուսից մայր, դու բարի արմատ տնկոց, բարունակ շառաւիղ. ի քէն առաւօտ ծագէ արուսեակ լուսոյ՝ նման լուսնի քան զաստեղ պայծառ. քան զշող արեգական լոյս տունջեան, ծագումն արեւելից արփոյն։ Զայս ասելով և այլ ինչ բանս խօսէր Աննայ, և գգուէր զմանուկն սուրբ և ասէր. Կենդանի է Տէր՝ որ ո՛չ կոխեսցեն ոտք քո մինչեւ տանելոյ զքեզ ի տաճարն սրբութեան։ Եւ ասէ Յովակիմ. Այո՛ բարի ասացեր։ Եւ կացեալ մանուկն ի տան հօր իւրում մինչեւ եղեւ ամաց երից. ամէն։

## ԳԼՈՒԽ Գ.

**Վասն սրբոյ կուսին Մարիամու սննդեանն որ եղեւ ի տաճարն սրբութեան, զամս երկոտասան։**

Ասէ Յովակիմ ցԱննայ. Լցան աւուրք մանկանս՝ որ եղեւ աստ առ մեզ. հրամայեա՛ կոչել զամենայն դըստերս եբրայեցւոց զկուսանսն նուիրեալս Աստուծոյ, և առցեն իւրաքանչիւր ոք զղամպարս ի ձեռս իւրեանց. և տարցեն զմանուկս պատուով և սրբութեամբ ի տաճարն Աստուծոյ որպէս և արժան է։ Եւ տարեալ նստուցին զնա ի յերրորդ աստիճան խորանին, և տայր նմա Տէր Աստուած շնորհք և իմաստութիւն։ Եւ հրեշտակ Աստուծոյ իջեալ յերկնից՝ սպասաւորէր նմա առ սե-

Digitized by Google

ղանոմն. և նա կերակրեալ լինէր ի հրեշտակաց Հոգւոյն, և հանապազ լսէր զձայն բարբառոյ և զերգս հրեշտակաց ի խորանի անդ։

Եւ Մարիամ էր ամաց երից՝ յորժամ ետուն զնա ծնողքն նորա ի տաճարն անդ, և կացեալ ամս երկոտասան։ Եւ ի միում ամի վախճանեցան ծնողքն նորա. և յոյժ տրտմութիւն կրեաց Մարիամ ի վերայ հօրն և մօրն իւրոյ՝ սուգ առեալ նորա զաւուրս երեսուն։ Եւ կացեալ Մարիամ ի տաճարի անդ՝ սնեալ և աճեալ ըստ օրինի կանանց՝ որպէս զայլ դստերս եբրայեցւոց՝ որք ընդ նմա էին՝ մինչեւ եղեւ Մարիամ հնգետասանամեայ։ Ի նոյն ամի մեծ քահանայապետն Եղիազար վախճանեցաւ. և սուգ առեալ ի վերայ նորա լային զնա որդիքն Իսրայելի աւուրս երեսուն։ Ապա յետ այսր ամենայնի եղեւ ժողով քահանայիցն և ծերոցն և այլոցն՝ խորհուրդ արարեալ կացուցանել քահանայապետ տաճարին, և արկանել վիճակս. և ել վիճակն Զաքարիայի որդւոյ Բարաքեայ. և զնա ձեռնադրեալ քահանայիցն ամենեցուն, և եդին զնա սպասաւոր սրբութեան սեղանոյն։ Եւ էին Աննայ և Եղիսաբեթ ազգականք միմեանց. և սոքա երկոքեանն ամուլ էին, և ո՛չ գոյր նոցա զաւակ։ Եւ յետ յղութեան Աննայի, և ծննդեանն Մարիամու չորեքտասան ամ էր անցեալ՝ մինչեւ Զաքարիա քահանայապետ եղեւ տաճարին։ Եւ եղեւ ի քահանայանալն Զաքարիայի, և կինն իւր նոյնպէս ամուլ էր որպէս Աննայ. յետոյ զմտաւ ածեալ քահանայիցն, և ամենայն ժողովրդեանն՝ և ասեն ցմիմեանս. Կարի դժուարին եղեւ, և ո՛չ յառաջ իմացաք զգործս զոր արարաք, ընդէ՞ր կացուցաք զնա քահանայապետ ի տաճարիս, քան զի մեղք են, և կին նորա ամուլ է, և ո՛չ ունի զաւակ օրհնութեան։ Ասէ մի ոմն ի նոցանէ քահանայիցն՝ որոյ անունն էր Ղեւի, թէ արժանի համարիք զնա՝ հրամանաւ ձերով ասացից նմա զայս։ Ասեն քահանայքն. Ծածուկ միայն նմա յայտնեա՛ զբանս, զի գիտասցէ զգործս զայս, և մի՛ ումեք ասասցես։ Ասէ քահանայն. Այո՛, ասացից նմա զայդ, և ո՛չ այլ ումեք։

Digitized by Google

Եւ եղեւ յաւուր միում ի կատարել ժամու աղօթիցն, մտեալ քահանայն անդ ի ծածուկ՝ և յայտնէր նմա զբանն ասացեալ։ Եւ իբրեւ լուաւ զայս Զաքարիա՝ տրտմեցաւ յոյժ, և խորհէր ի միտս իւր՝ թէ, զի՞նչ արարից, և կամ զի՞նչ տաց պատասխանի, զի ես զանձնէ իմմէ մնաս իրաց գործ ոչ գիտեմ. և եթէ զուր ատեն զիս անմեղութեամբ. զի այն միայն ինքն Տէր քննեսցէ։ Եւ եթէ արձակեմ զկին իմ առանց իրիք մնասու պատճառանաց՝ ծանր մեղք է ինձ։ Եթէ մնաս համարին ինձ ունել՝ զի և քակիցիմ, և եթէ ի սպասաւորութենէ սրբոյ սեղանոյս, և ի քահանայապետութենէ աստի լուեալ ի բաց կայցեմ, կարի դժուարին է ինձ։ Զի՞նչ լինիցիմ արդեօք, քան զի յոյժ տարակուսեալ եմ ցաւագին անձամբ։

Մինչ դեռ նա զայն զմտաւ ածեալ էր և խորհէր՝ եհաս ժամ պաշտաման աղօթից՝ խունկ արկանել առաջի Տեառն, և կայր ի տաճարի անդ մերձ առ սրբութեան սեղանովն Աստուծոյ, և հեղոյր զարտասուս իւր ի դէմ խորանին, և աղօթէր այսպէս. Տէր աստուած հարցն մերոց, Աստուած Իսրայելի. հայեաց ողորմութեամբ քով ի ծառայս քո՝ որ կամ ամօթով առաջի տէրութեանդ քո, և հայցեմ ի բարերար քաղցրութենէ կամաց քոց՝ մի՛ անտես առներ զծառայս քո, եթէ արժանի համարիս զիս սպասաւորել սրբոյ սեղանոյ քո, արա՛ առ իս զգութ մարդասիրութեան քո՝ որ միայնդ ես ողորմած և կարող յամենայնի. և քեզ փառք յաւիտեանս. ամէն։

Իւ զայս ասաց քահանայապետն Զաքարիա. կայր ընդ յաջմէ սրբոյ սեղանոյն, և խոնարհեալ երկիր պագանէր Տեառն, և ահա հրեշտակ Աստուծոյ երեւեալ նմա ի խորանի անդ՝ ասէ ցնա. Մի՛ երկնչիր Զաքարիա՝ քան զի լսելի եղեն աղօթք քո, և խնդրուածք քո ելին առաջի Աստուծոյ. ահա կին քո Եղիսաբեթ յղասցի և ծնցի որդի, և կոչեսցի անուն նորա Յովհաննէս։ Ասէ Զաքարիա. Ո՞րպէս գիտացից զայդ, զի ես ծեր եմ, և կինն իմ անցեալ է զաւուրբք իւր, երբ լինիցի ինձ այդ։ Ասէ հրեշտակն. Որովհետեւ ո՛չ լուար

Digitized by Google

ինձ, և ո՛չ հաւատացեր բանից իմոց, ահա եղիցիս համր, և մի՛ կարասցես խօսել մինչև յօրն յորում լինիցի քեզ։ Եւ նոյն ժամայն պապանձեցաւ Զաքարիա ի տաճարին, և անկեալ լռութեամբ առաջի սեղանոյն՝ ողբալով կոծէր զկուրծս իւր և լայր դառնապէս։ Իսկ քահանայիցն և այլ բազմութեան ժողովոյն որ անդ էին՝ հիացեալ զարմանային ընդ յամել նորա ի տաճարին. և մտեալ քահանայիցն գտին զնա պապանձեալ և ոչ կարէր խօսել. բայց միայն ձեռամբն նշանացի առնէր։ Ապա յետ անցանելոյ տօնի տաղաւարահարացն սրբութեան ի թշրին ամսոյ հնգետասան՝ որ է հոկտեմբերի երկու, կատարումն եղև ամենայն գլուխ տօնիցն. և ի թշրին քսան և երկուս՝ որ է հոկտեմբերի ինն՝ եղև յղութիւն Եղիսաբեթի. և ի թամուզ ամսոյ վեշտասանին՝ որ է յունիսի հինգ, եղև ծնունդն Յովհաննու Մկրտչին։ Փառք Քրիստոսի. ամէն։

## ԳԼՈՒԽ Դ.

Վասն սրբոյ կուսին Մարիամու՝ տալ զնա Յովսեփայ ի կնութիւն՝ ըստ օրինի աւանդութեան իւրեանց, պահել զկոյսն սուրբ զգուշութեամբ, և յանձնելոյ զնա հաւատով ի Տէր. ամէն։

Իբրև լցան աւուրք սրբութեան կուսին Մարիամու ի տաճարի անդ՝ որ եղև ամաց հնգետասան, խորհուրդ արարեալ քահանայիցն ընդ միմեանս՝ և ասեն. Զի՞նչ արասցուք զՄարիամ, քան զի ծնողքն նորա վաղճանեցան, և մեզ սրբութեամբ յանձն արարին զնա ի տաճարիս աստ, և յոյժ կատարեալ հասակաւ եղև ի կանանց օրինի. ո՛չ է պահել զնա այլ ի միջի մերում, զի մի՛ յանկարծակի ապականեսցէ նա զտաճարն

Digitized by Google

Աստուծոյ: Ասեն քահանայքն ցմիմեանս. Ապա զի՞նչ արասցուք առնել զնա: Ասէ մի ոմն ի նոցանէ քահանայ մի՝ որում անուն էր Բեհեզի. Եւ են բազում դստերք եբրայեցւոց ի տաճարի աստ ընդ նմա, արասցուք և հարցցուք ցքահանայապետն Զաքարիայ, և զոր ինչ կամք նմա եղիցի զայն արասցուք: Ասեն միաբան. Բարի: Ապա յառաջ մատուցեալ քահանային Բեհեզայ՝ ասէ ցԶաքարիայ. Դու ես քահանայապետ կատարեալ[1] ի սպասաւորութիւն սրբոյ սեղանոյն. և են աստ կուսանք եբրայեցւոց՝ որք զանձինս իւրեանց նուիրեալ են Աստուծոյ. մո՛ւտ ի սրբութիւն սրբութեանց, և արա՛ աղօթս վասն նոցա. և զոր ինչ Տէր յայտնէ՝ ըստ կամաց նորա զայն արասցուք:

Եւ նոյն ժամայն յարուցեալ քահանայապետն Զաքարիա, և առեալ զերկոտասանակն, և մտեալ ի սրբութիւն սրբութեանց, և արարեալ աղօթս վասն նոցա: Եւ իբրեւ արկանէր զխունկն առաջի Տեառն, ահա հրեշտակ Աստուծոյ եկն եկաց առ սեղանովն խորանին, և ասէ ցԶաքարիայ. Ե՛լ արտաքոյ դրան տաճարին, և հրամայեա՛ կոչել զմետասան դստերս եբրայեցւոց, և զՄարիամ ընդ նոսին ածցես աստ, որ ի յազգէն Յուդայ և ի ցեղէն Դաւթի. և հրամայեա կոչել զամենայն ամուրիսն ի քաղաքի աստ, և բերցեն իւրաքանչիւր ոք մի մի տախտակ, և դիցես ի խորանի վկայութեան, և գրեսցես զանուանս ի վերայ տախտակին, և արասցես աղօթս. և զոր Տէր ցուցանէ նոցա՝ նա եղիցի կին առն այնմիկ: Եւ ելեալ քահանայապետն Զաքարիա ի տաճարէ անտի, և հրամայեաց քարոզել ընդ ամենայն քաղաքն՝ եթէ ուր իցեն ամուրիք վաղվաղակի եկեսցեն այսր: Եւ իբրեւ լուան ամենեքեան՝ առ հասարակ ժողովեցան անդ. և ունէին ընդ իւրեանս տախտակս իւրաքանչիւր ոք՝ ի ձեռին իւրում: Եւ լուեալ ծերոյն Յովսեփայ զայս, առժամայն ընկէց զուրագն իւր յինքենէ, և առեալ տախտակ մի ի ձեռին իւրում, և փութացեալ անդր հա-

1 Լաւագոյն էր դնել կոչեցեալ:

սանէր: Եւ քահանայապետն առեալ զտախտակն ի ձեռաց նորա ընդունէր. և մտեալ ի տաճարն աղօթս առնէր վասն նոցա. քան զի օրէն էր ազգաց Իսրայէլի՝ ի յազգէն Յուդայ ի ցեղէն Դաւթի տալ նոցա հանապազ զդստերս իւրեանց ի տաճարին, պահել զնոսա սրբութեամբ և արդարութեամբ զամս երկոտասան. սպասել և մնալ գալստեան հրամանին Աստուծոյ. գալ մարմնանալ Բանին յանարատ և յանապական սրբոյ կուսէն, և իբրև զմի ի մարդկանէ երևեալ մարմնով շրջել յերկրի: Զայս ինչ գրով կնքեալ և պահեալ ունէին ազգն Իսրայէլի վասն աւանդութեան հարցն իւրեանց ի տաճարի անդ. և ո՛չ լինէր առ նոսա նշան և ազդումն ի Հոգւոյն սրբոյ, տարեալ ամուսնացուցանէին զնոսա. սոյնպէս և սոքա՝ որք էին դստերք ի յազգէն Յուդայ և ի ցեղէն Դաւթի կոյս երկոտասան. և կոյսն Մարիամ ընդ նոսա, որ է նա գլուխ ի վերայ ամենայն կուսանացն. սոքա ժողովեալ անդ՝ միաբանեալ բերեալ կացուցանէին. և արկեալ ի վերայ նոցա վիճակ վասն ամուրեացն՝ որում ելցէ ի նոցանէ կին:

Եւ արդ, իբրև քահանայապետն Զաքարիա ի տաճարէն առեալ զիւրաքանչիւր տախտակ տայր յամուրիսն, և տեսեալ զգիրս անուանց կուսիցն գրեալ ի վերայ տախտակին որում ելանիցէ կին: Եւ իբրև տայր քահանայապետն զտախտակսն, ոչինչ նշան լինէր ի նոսա, բայց միայն գիր անուանցն որ գրեալ էր: Իսկ զվերջին տախտակն Յովսեփայ՝ յորում գրեալ էր գիր անուան սրբոյ կուսին Մարիամու. և ահա աղաւնի մի ելեալ ի տախտակէն[1] գայր և հանգչէր ի վերայ գլխոյն Յովսեփայ: Ասէ քահանայապետն ցՅովսէփ. Դու ժառանգ ելեալ կուսին Մարիամու՝ ա՛ռ զնա, պահեսցի քեզ ի կնութիւն. զի նա վիճակեցաւ սրբութեամբ քեզ յամուսնութիւն կնութեան, որպէս և այլ կուսանք յիւրաքանչիւր ամուրիսն: Իսկ ծերոյն Յովսեփայ՝ իբրև լուաւ զայս՝ դիմադարձ եղեալ և ասէ. Աղաչեմ զձեզ

1. Ի գրչագրին եդեալ էր է տախտակն:

*քահանայք և ժողովուրդք՝ որ էք միաբան ի սրբութեան տաճարիս յայսմիկ. մի՛ բանադատէք զիս առաջի ձեր ամենեցուն, զի՞րդ արարից ես զայդ ամենայն զոր ասէք, զի բազում ազգ ունիմ ինձ որդի և սիրելի, և ի նոցանէ յայժ պատկառեալ ամաչեմ, մի՛ բանադատէք զիս: Ասեն քահանայքն և ամենայն ժողովուրդն. Լո՛ւր մեզ, և հնազանդ լեր օրինացն Աստուծոյ, և մի՛ այդչափ հակառակիր և դիմադարձ լինիր, զի ո՛չ է օրէն ումեք առնել զայդ զոր առնես: Ասէ Յովսէփ. Ես կարի ծերացեալ եմ և մերձ ի մահ եկեալ, և ընդէ՞ր է ինձ այդ ամենայն իրս՝ զոր հրամայէք առնել ծերութեանս իմոյ՝ զոր ո՛չ է արժան: Ասէ քահանայապետն. Լո՛ւր մեզ, ոչինչ ամօթ և տրտմութիւն հասցէ քեզ յումեքէ, այլ յամենեցուն օրհնութիւն, մեծութիւն և փառաւորութիւն: Ասէ Յովսէփ. Բարիոք ասէք, բայց զի դա ինձ դուստր հասանէ և ո՛չ կին, և ամենեքին տեսանեն և լսեն զայս՝ այպն առնեն զիս որդիքն Իսրայելի: Ասէ քահանայապետն. Գիտեմք զքեզ արդար և բարի հոգի և աստուածասէր. և դա որբ է, և անտես ի ծնողացն, և ի մեզ յանձն արարեալ նոցա՝ ետուն երդմամբ ի տաճարս այս. և մեք հրամանաւ քահանայիցն և ամենայն ժողովրդեանն վկայեալ օրինօք՝ առ քեզ վիճակեցաւ կոյսն Մարիամ. ա՛ռ զդա կամօք մերովք և օրհնութեամբ, տարեալ պահեսցես սրբութեամբ և պատուով՝ որպէս օրէն է և աւանդութիւն սրբոց նախահարցն մերոց, մինչև ժամ լինելոյ քեզ առնուլ զպսակ օրհնութեան ընդ այլ կուսանսն և ընդ ամուրիսն: Ասէ Յովսէփ. Ողորմեցարո՛ւք ծերութեան ալեաց իմոց, և մի՛ բռնադատէք զիս առնել՝ զոր ո՛չ ունիմ յօժարութիւն կամաց պահել զդա զգուշութեամբ և պատրաստութեամբ՝ որպէս արժանն է. զի դա կուսան է, և յայր իսկ հասեալ ի կանանց օրինի, և կամ որպէս պարտ է ինձ առնուլ զդա ի կնութիւն, քան զի մեղք են: Ասէ քահանայապետն. Եթէ ո՛չ էիր յօժար և կամեցող բանիս, ո՞ բռնադատեաց զքեզ, ընդէ՞ր եկիր այսր ընդ ամուրիսն, և մտեալ վիճակեցար ըստ օրինի սրբու-*

Digitized by Google

թեան. և առեալ ի տաճարի Տեառն զնշան օրհնութեան՝ որ յԱստուծոյ շնորհեցաւ քեզ ի զուգակցութիւն: Ասէ Յովսէփ. Յառաջ ո՛չ իմացայ, զմտաւ ածեալ իմ ո՛չ կարացի իմանալ դրանդ զայդ՝ որ լինելոց էր, կամ այսպիսի գործ ինչ պատահելոց. զի ինձ այժմ ժամանակ մահու է, և ո՛չ ծերութեան ալեաց իմոց[1] . . . կեանս անարատ: Ասէ քահանայապետն. Երկի՛ր ի Տեառնէ, և մի՛ ընդդիմանար հրամանաց նորա. յիշեա՛ զոր ինչ արար Աստուած ընդ Կորխ և ընդ Դաթան և ընդ Աբիրոն, ո՛րպէս պատառեցաւ երկիր և եկուլ զնոսա վասն դիմադարձութեան իւրեանց զոր արարին. և արդ՝ դու նոյն երկնչիր յԱստուծոյ, զի մի՛ յանկարծակի չար ինչ հանդիպեսցի քեզ վաղվաղակի: Զայս իբրև լուաւ Յովսէփ՝ խոնարհեալ երկիր եպագ քահանայից և ամենայն ժողովրդեանն. և առեալ զՄարիամ ի տաճարէ անտի, և գնացեալ տարաւ զնա ի տուն իւր ի քաղաքն Նազարէթ:

Եւ ասէ Յովսէփ ցՄարիամ. Աղջիկ դու, լո՛ւր ինձ զոր ինչ ասացից քեզ այժմ, ո՛ւնկն դիր և ի միտ առ. ահա թողում զքեզ աստ ի տան իմում որպէս և տեսանես իսկ, և զամենայն պէտս մարմնոյ քո պատրաստեցից քեզ աստ. և դու նիստ ի տեղիս աստ պատուով որպէս ասացի ցքեզ. և զգո՛յշ կաց և պատրաստ լեր անձին քո. մի՛ երթիցես ուրեք վայրապար, և մի՛ ոք մտցէ առ քեզ մուտ և ել առնել, մինչև ես դարձայց եկից առ քեզ, որպէս և Տէր կամեսցի: Աստուած հարցն մերոց՝ Աստուած Իսրայելի եղիցի ընդ քեզ յաւիտեան: Եւ զայս ասացեալ Յովսեփայ՝ և յարուցեալ գնաց ի ճանապարհ գործոյ իւրոյ հիւսնութեան:

Եւ եղեւ յետ սակաւ աւուրց՝ խորհուրդ արարեալ ընդ միմեանս՝ ասեն. Եկայք արասցուք վարագոյր տաճարիս, զի յաւուր մեծի տօնին երևելի ի ժողովել ժողովրդոցն, պայծառասցի պաշտօն սրբութեան խորանին: Ասեն քահանայքն. Բարիոք ասէք: Ապա հրամայեաց քահանայապետն կոչել զկանայս և զկուսանս

1. Ի գրչագրին պակասին բառք ինչ:

որ նուիրեալ էին Աստուծոյ ի տաճարի անդ՝ ի յազգէն Յուդայ և ի ցեղէն Դաւթի։ Եւ իբրև եկին մետասան կուսանքն՝ յիշեաց քահանայապետն Զաքարիա զսուրբ կոյսն Մարիամ՝ զի ի ցեղէ անտի էր, և գնացեալ կոչեցին զնա։ Եւ իբրև եկն Մարիամ՝ ասէ քահանայապետն. Արկէք վիճակ, ո՛ մանէ զոսկեթելն զբեհեզն և զծիրանին, զկարմիրն և զկապուտն. և իբրև արկին վիճակ, ել վիճակն Մարիամու ծիրանին և կարմիրն. և առեալ լռութեամբ երթայր ի տուն իւր, և սկսաւ յառաջ մանել զկարմիրն։ Եւ ի նոյն ժամայն առեալ զսափորն գնաց յաղբիւրն բերել ջուր։

## ԳԼՈՒԽ Ե.

*Վասն աւետաւոր հրեշտակի ձայնին, որ քարոզեաց զյղութիւն սրբոյ կուսին Մարիամու։*

Յայնժամ եղեւ առ նա բարբառ ի հրեշտակէն՝ որ ասէր ցնա. Ուրախ լեր կո՛յս Մարիամ։ Եւ յանկարծակի զարհուրեցաւ Մարիամ, և երկեաւ յոյժ, և հայեցեալ յայս կոյս և յայն կոյս՝ ո՛չ զոք տեսանէր. և զմտաւ ածեալ՝ եթէ ուստի եղեւ ձայն առ իս. և առեալ զսափորն վաղվաղակի գայր փախստական մտանէր ի տուն իւր, և զդուռն փակեալ՝ զգուշութեամբ կնքէր. և ինքն երթեալ լռութեամբ նստէր յանկիւնս տանն. և ընդ միտս իւր ի հիացումն եղեալ՝ կարմանայր և ասէր. Զի՞նչ է ողջոյնս այս որ տուաւ ինձ. ո՞վ ոք ճանաչէր զիս և կամ գիտէր յառաջագոյն թէ ո՛ իցեմ, և կամ ո՛ ուրեք իմ տեսեալ զնա այսպիսի բանս բարբառեալ խօսեցաւ ընդ իս. և զայս ամենայն ինչ զմտաւ ածեալ սարսէր և դողայր։ Եւ յարուցեալ եկաց յաղօթս և ասէր. Տէր Աստուած հարցն մերոց Աստուած Իսրայելի, հայեաց ողորմութեամբ քո, և խո-

նարհեա յաղաչանս իմ ի խնդրուածս սրտի իմոյ, և լուր տառապեալ աղախնոյ քոյ՝ որ ի քեզ յուսացեալ և ապաւինեալ կարդամ. մի՛ տար զիս ի փորձութիւն թշնամւոյն և ի պատրանս բանսարկուին, այլ փրկեա՛ զիս ի յորոգայթէ և ի նենգութենէ որսողին, զի ի քեզ յուսացեալ եմ, և զկուսութիւնս իմ ամբողջապէս պահեսցես Տէր և Աստուած իմ։ Եւ զայս ասացեալ Մարիամու՝ արտասուելով գոհանայր զՏեառնէ. և կացեալ նորա ժամս երիս, և առեալ ի ձեռին իւրում մանէր զկարմիրն։

Եւ ահա հրեշտակ Տեառն եկն եմուտ առ նա դրօքն փակելովք, երեւեալ նմա անմարմին իբրեւ զմարմնաւոր տեսլեամբ և ասէր. Ուրա՛խ լեր Մարիամ կոյս անարատ աղախին Տեառն։ Եւ Մարիամու տեսեալ յանկարծակի զհրեշտակն՝ երկեաւ ի նմանէ և զարհուրեալ ոչ կարէր փախստական լինել։ Եւ ասէ ցնա հրեշտակն. Մի՛ երկնչիր Մարիամ, օրհնեալդ ի կանայս, ես եմ հրեշտակն Գաբրիէլ՝ որ առաքեցայ յԱստուծոյ խօսել ընդ քեզ զայդ, զի ահա յղասցիս, և ծնցիս որդի Հօր բարձրելոյն. և նա եղիցի թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի։ Ասէ Մարիամ. Զի՞նչ խօսիս և զի՞նչ ասես, պատմեա՛ ինձ։ Ասէ հրեշտակն. Զոր ինչ ասացի քեզ՝ լուար յինէն, ընկալ զհրաւէրս պատգամաց իմոց՝ զոր յառաջ խօսիմ ընդ քեզ. և դու ուրա՛խ լեր։ Ասէ Մարիամ. Նոր իրս զայս զարմանալի լսեմ ի քէն և հիանամ և զարհուրիմ. յղացայց և ծնայց որպէս ամենայն կին. զիա՞րդ լինի ինձ այդ՝ որ զայր ո՛չ գիտեմ։ Ասէ հրեշտակն. Ո՜վ սուրբ կոյս Մարիամ. մի՛ այդպէս կարծեր և իմանար զգործդ զայդ՝ զոր ասես. ո՛չ այդպէս իցէ. զի ո՛չ ի մարդկանէ, և ո՛չ յարենէ, և ո՛չ ի կամաց առն, այլ զօրութենէ շնորհաց Հոգւոյն սրբոյ է՝ որ ի քեզ բնակեսցի և ընդ քեզ եղիցի, որպէս և ինքն կամեսցի։ Ասէ Մարիամ. Ծանր և օտարոտի թուի ինձ բանդ՝ զոր ասես, և ո՛չ կարեմ հանդուրժել և ժուժկալ լինել ընդ բանիցդ քո ասացելոց. և ընդ խօսելդ քո զարմանամ, զի անդէպ է խորհուրդդ և աննման գործ սքանչելեացդ՝ զոր ա-

սես ինձ. և ընդ լսելն իմ ի քէն զարհուրեալ սոսկայ անձն իմ և դողայ. միտք իմ ի տարակուսանս անկեալ կայ. և ո՛չ գիտեմ եթէ առ այդ բանդ զի՞նչ տաց պատասխանի։ Ասէ հրեշտակն. Ընդէ՞ր զարհուրիս և դողայ անձն քո։ Ասէ սուրբ կոյսն. Զիա՞րդ լուայց քեզ արդեօք, և կամ հաւատացից բանից քոց, որ ոչ է իմ լուեալ ի մարդկանէ զբանդ զայդ, և ո՛չ իմացեալ իսկ ո՛ զոր ասես։ Ասէ հրեշտակն. Ես զճշմարտութեան բանս բարբառեալ խօսիմ ընդ քեզ հաւաստեաւ, ո՛չ վայրապար՝ և ոչ յանձնէ ինչ մտածութեամբ ասացի ցքեզ. այլ զոր լուայ ի Տեառնէ, և առաքեցայ յԱստուծոյ աւետարանել և պատմել քեզ զայդ, և դու զբանս իմ ստութեամբ համարիս. երկի՛ր ի Տեառնէ և լո՛ւր ինձ։ Ասէ սուրբ կոյսն Մարիամ. Ոչ եթէ վայրապար համարիմ զբանս քո, այլ յոյժ հիացեալ զարմանամ. զոր երկինք և երկիր ո՛չ բովանդակել կարէ՝ զաստուածութիւն պարածածկել, և ամենայն դասք երկնային զօրացն անմարմնոց հոգեղինաց և հրեղինաց ո՛չ իշխէին հայել և տեսանել զփառս Նորա, և զիա՞րդ համբերել և ժուժել անբաւելի հրոյն, և ի մարմնի իմում տաղաւարել զնա. և կամ զիա՞րդ կարացից հանդուրժել և բառնալ զնա մարմնով ի գիրկս իմ, և ձեռամբ շօշափել զնա. անհնարին է բանդ, և անհաս խորհուրդ, և զարմանալի գործդ, և ի վեր քան զամենայն տեսութիւն մտաց մարդկան, քննել զնա և իմանալ. միթէ՞ պատրողական բանիւ կամիս հաւանեցուցանել զմիտս իմ. ո՛չ այդպէս։ Ասէ հրեշտակն. Ո՜վ երանելի սուրբ կոյս, լո՛ւր ինձ զոր ինչ ասացից քեզ. Մովսէս ի լերինն Սինայ ո՞րպէս ականատես եղեւ Աստուծոյ, և մորենին իբրեւ զհուր վառէր և ո՛չ այրէր։ Տաղաւարն Աբրահամու ո՞րպէս ընկալաւ զնա մարմնով տեսլեամբ, և հուրն ի Նոսա ո՛չ մերձեցաւ. և ընդ Յակոբայ ո՞րպէս գօտեմարտ եղեալ խօսակից լինէր՝ և ընդ այլ բազում նահապետսն և ընդ մարգարէսն. ո՛րպէս երեւեցաւ Նոցա. ըստ արժանաւորութեան տեսան. և դու մի՛ երկնչիր, միայն հաւատա և լո՛ւռ լեր՝ զոր ինչ ասացից քեզ այժմ։ Ասէ Մարիամ. Ո՞րպէս լինի-

ցի ինձ այդ՝ զոր ասես դու, և կամ ո՞րպէս կարիցեմ իմանալ զգալուստ Նորա, եթէ յորում աւուր իցէ, և կամ յորում ժամու պատմեա ինձ։ Ասէ Հրեշտակն. Մի՛ այդպէս խօսիր զոր ո՛չ գիտես, և մի՛ անհաւատալի լինիր զոր ո՛չ իմանաս. այլ խոնարհեցո զունկն քո, և հաւատա ինձ զոր ինչ ասացից քեզ։ Ասէ Մարիամ. Ո՛չ երկմտութեամբ խօսիմ, և ո՛չ երկբայութեամբ, այլ կամիմ հաւաստեաւ քննել և իմանալ զճշմարիտն՝ եթէ ո՛րպէս լիցի ինձ այդ, կամ յի՞նչ ժամու իցէ՝ որ պատրաստ լինիցիմ արդեօք։ Ասէ Հրեշտակն. Գալուստ Նորա յամենայն ժամու պատրաստ է, և ի մտանելն և ի բնակելն յորովայնի քում, սրբէ և մաքրէ զամենայն բնութիւն մարմնոյ քո, և տաճար Նորա լինիցի։ Ասէ Մարիամ. Ո՞րպէս լինիցի ինձ այդ, զի զայր ո՛չ գիտեմ։ Ասէ Հրեշտակն. Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի քեզ, և Բանն Աստուած մարմնանայ ի քէն, և ծնցիս որդի Հօր բարձրելոյն, անարատ և անապական մնայ կուսութիւն քո։ Ասէ Մարիամ. Եւ ո՞րպէս կին կարէ կուսութեամբ մանուկ ծնանել առանց առն։ Ասէ Հրեշտակն. Ո՛չ այսպէս է զոր ասես, և ո՛չ է ծնունդ քո ըստ մարմնական կարեաց ցանկութեան գործոյ, և ո՛չ յղութիւն քո յամուսնութենէ մերձաւորութեան գործոյ. այլ սուրբ և անարատ մնայ կուսութիւն քո. ո՛չ ի մտանելն Բանին Աստուծոյ զզուէ զորովայն քո, և ո՛չ յելանելն մարմնով խզէ զկուսութիւն քո։ Ասէ Մարիամ. Երկնչիմ ի քէն, զի քաղցրութեամբ բանս բարբառեալ խօսիս ընդ իս, և կարի յոյժ զարմացուցանես զիս յասելդ քո ընդ իս. մի՞թէ խաբէութեամբ բանիւք կամիս պատրել զիս՝ որպէս զնախամայրն Եւայ, որ ընդ ասել բանին՝ քաղցր և ողոքական խօսիւք հաւանեցոյց զնա, և յետոյ զմահ ժառանգեաց։ Ասէ Հրեշտակն. Ո՜վ Մարիամ սուրբ կոյս, քանիցս անգամ խօսեցայ ընդ քեզ, և ասացի քեզ բան ճշմարտութեամբ և հաստատուն, և ո՛չ լսես հրամանաց և պատգամի բերանոյ իմոյ՝ որ առաքի կամ քո, և Աստուծով դարձեալ խօսիմ ընդ քեզ. մի՛ զարհուրես-

ցի սիրտ քո ի տեսութենէ իմմէ, և մի՛ երկմտիցեն
խորհուրդք քո ի Տեառնէ Աստուծոյ քումմէ, և մի՛
հեռացուցաներ զսիրտ քո յասացելոց բանից իմոց՝ զոր
այժմ լուար և ծանեար յինէն. զի ո՛չ խաբէութեամբ
իւիք պատրանօք, և ո՛չ խորամանկութեամբ և նեն֊
գութեամբ եկի խօսել ընդ քեզ, այլ յառաջագոյն պա֊
տրաստել զքեզ տաճար և բնակարան նորա: Ասէ Մա֊
րիամ. Այժմ ընդ ասել բանիդ քո և ընդ յաճախ խօ֊
սելդ զարմացեալ եմ, և միտք իմ զբաղեցուցանէ զիս,
եթէ զինչ առ այդ բան տաց պատասխանի. և եթէ
զմիտս իմ ո՛չ կարեմ հաճեցուցանել, այլ ո՞ւմ պատ֊
մեցից զբանս իմ. կամ ո՞ հաւատայ ինձ՝ եթէ այն է
բանս զոր խօսիմ: Ասէ հրեշտակն. Ո՛վ սուրբ անա֊
րատ կոյս՝ մի՛ այդպէս ցնորիւք զմիտս զբաղեցու֊
ցաներ: Ասէ Մարիամ. Ո՛չ երկմտիմ ի բանիցդ զոր ա֊
սես, և ո՛չ անհաւատալի է զոր խօսիս, այլ առաւել
յոյժ խնդամ և ուրախանամ ընդ բանդ քո. բայց
զարհուրի անձն իմ և սոսկայ, զԱստուած մարմնով
իմով բառնամ՝ իբրև զմարդ ծնանել զնա. և յետոյ
կուսութիւն իմ անապական մնայ. ո՜ հիացումն և զար֊
մանալի գործդ զոր ասես: Ասէ հրեշտակն. Քանիցս
անգամ խօսեցայ ընդ քեզ բազում բանիւք, և վկայ
կացուցի քեզ ստուգապէս. և դու անհաւատալի եղեր
ինձ: Ասէ Մարիամ. Աղաչեմ զքեզ՝ ծառայ բարձրե֊
լոյն, մի՛ տրտմիր վասն յաճախ հարցանելոյ իմոյ, զի
գիտես զբնութիւն մարդկան որ անհաւատալի են յա֊
մենայն գործս, վասն այնորիկ քննել կամիմ հաւաս֊
տեաւ զի գիտացից. և դու մի՛ ձանձրանար վասն բա֊
նից ասացելոց իմոց: Ասէ հրեշտակն. Բարիոք ասես,
բայց հաւատա՛ ինձ՝ որ յԱստուծոյ առաքեցայ խօսել
ընդ քեզ, աւետարանել քեզ: Ասէ Մարիամ. Այո՛ հա֊
ւատամ բանից քոց, և լսեմ հրամանացդ զոր ասա֊
ցեր ինձ, որ յիրաւի այդպէս է. բայց լո՛ւր ինձ զոր
խօսիմ ընդ քեզ. մինչև ցայսօր պահեալ եմ զանձն
իմ սրբութեամբ և արդարութեամբ, առաջի քահա֊
նայիցն և ամենայն ժողովրդեանն՝ վիճակեալ օրինօք
Յովսեփայ ի կնութիւն. և այժմ եղեալ է պահես֊

Digitized by Google

տի ի տան իւրում, և զգուշութեամբ պահել զանձն իմ՝ մինչեւ արասցուք զպսակն օրհնութեան ընդ այր կուսանսն և ընդ ամուրիսն: Արդ, եթէ գայցէ և տեսանիցէ զիս ծանրացեալ յղի, զինչ տաց պատասխանի, և կամ զի՞նչ ասասցից նմա. և թէ հարցանիցէ զիս՝ ուստի՞ է յղութիւնդ այդ, զի՞նչ առ այդ բանիդ տաց պատասխանի: Ասէ հրեշտակն. Ո՛վ երանելի սուրբ կոյս, լռեա՛ ի խօսելոյ այտի, և ի մտի կալ զասացեալս յինէն, զի ո՛չ է ի մարդկանէ գործդ այդ, և ո՛չ յումեքէ է բանս՝ զոր խօսիմ ընդ քեզ, այլ Տեառն է որ առնէ քեզ զայդ, նա կարող է փրկել զքեզ յամենայն նեղութենէ փորձանաց: Ասէ Մարիամ. եթէ այն է բանդ զոր ասես, և ինքն Տէր հաճեցաւ խոնարհել յաղախին ծառայս իւր, եղիցի ինձ ըստ բանի քում: Եւ գնաց ի նմանէ հրեշտակն:

Նոյն ժամայն ընդ ասել բանին, և խոնարհեալ սրբոյ կուսին, Բանն Աստուած եմուտ ընդ ունկն լսելեացն ի ներքս, և սրբեցաւ խորհուրդ բնութեան մարմնոյն արտաշնչական՝ հանդերձ ամենայն զգայութեամբ երկոտասան անդամօքն, և մաքրեցաւ որպէս զոսկի ի հուր. և եղեւ տաճար սուրբ, անարատ, և բնակարան աստուածութեան նորա: Եւ նոյնժամայն եղեւ սկիզբն յղութեան սրբոյ կուսին. զի յորժամ հրեշտակն աւետեաց Մարիամու՝ նիսան ամսոյ հնգետասան էր, որ էր ապրիլի վեց. յաւուր չորեքշաբաթի յերրորդ ժամու աւուրն: Եւ նոյն ժամայն հրեշտակ Տեառն ընթացեալ գնաց ի կողմանս Պարսից, և աւետիս ետ մոգուց թագաւորացն՝ գալ նոցա յերկրպագութիւն նորածին մանկանն: Եւ նոցա առաջնորդեալ աստեղբն զամիսս ինն. ապա եկեալ հասեալ ժամանեցին ի ծնունդ սրբոյ կուսին. քան զի յայնմ ժամանակի թագաւորութիւն Պարսից զօրաւոր էր և յաղթող քան զայլ թագաւորսն՝ որ էին յաշխարհն արեւելից. և սոքա որք էին թագաւորք մոգուցն՝ եղբարք երեք. Առաջինն Մելքոն, որ ունէր զիշխանութիւն Պարսից. և երկրորդն Պաղտասար, որ ունէր զիշխանութիւն Հնդկաց. և երրորդն Գասպար՝ որ ունէր զաշ-

Digitized by Google

խարհն Արարացւոց ։ Սոքա հրամանաւն Աստուծոյ միաբանեալ հասին ի ծնունդն սրբոյ կուսին, փութապէս եկեալ ժամանեցին ի ծնունդն Յիսուսի ։

Արդ, իբրեւ լուաւ սուրբ կոյսն զաւետիսն ի հրեշտակէն՝ յարուցեալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր և ասէ. Ո՜ Տէր հոգւոյ և մարմնոյ իմոյ. ունիս իշխանութիւն առնել որպէս և կամք արարչական սիրոյ քո լինիցին, և որպէս հաճեցար և յանձն առեր զամենայն կամաւորապէս. այժմ խոնարհեա յաղաչանս ծառայի քո՝ և լո՛ւր ինձ, և փրկեա զանձն իմ, զի դու ես Աստուած փրկիչ իմ, և անուն քո Տէր կոչեցեալ է ի վերայ իմ զօրհանապազ. և մինչեւ ցայսօր պահեցի զանձն իմ սրբութեամբ և արդարութեամբ և անարատութեամբ, առ քեզ Տէր Աստուած իմ, զկուսութիւնս իմ պահել հաստատուն և ամբողջ՝ առանց ամենայն աղտեղութեան մարմնական ցանկութեանց, և այժմ կամք քո լինին ։

Եւ զայս ասացեալ սրբոյ կուսին Մարիամու, և յարուցեալ գոհանայր զՏեառնէ ։ Եւ ապա յետ այսր անցանելոյ՝ եղեւ ժամ մի, զմտաւ ածեալ սրբոյ կուսին, լայր և ասէր. Զի՞նչ է այս նոր զարմանալի հիացումն բանիս՝ որ եղեւ ընդ իս, որ ո՛չ ոք եղեւ ի ծընունդս մարդկան մինչեւ ցայսօր. որ եղէ առակ և նախատինս ամենեցուն արանց և կանանց. և այժմ տարակուսեալ եմ, և ո՛չ գիտեմ զինչ արարից և կամ զինչ պատասխանի տաց ումեք ըստ անձին իմոյ. առ ո՛ գնացից, կամ ո՛ւմ պատմեցից. ընդէ՞ր երկնեաց զիս մայրն իմ, և ընդէ՞ր ծնողքս խնդրեցին զիս յԱստուծոյ ցաւագին անձամբ՝ լինել նախատինս ինձ և ծնողաց իմոց. ընդէ՞ր ետուն զիս նուիրօք ի տաճարն սրբութեան պահել զկուսութիւնս իմ. ընդէ՞ր ո՛չ յառաջն եղէ տարագիր մահուամբ փոխիլ յաշխարհէ. և եթէ կենդանի մնացեալ եմ, ընդէ՞ր լռութեամբ ո՛չ ամուսնացուցին զիս ծնողքն իմ որպէս զայլ դստերս եբրայեցւոց. ո՜հ, ո՛ լուաւ, ո՛ ետես զբանս, ո՞ պատմեաց, ո՞ հաւատայ եթէ կին առանց առն մանուկ ծնանի՝ որ զայր ոչ գիտէ ։ Ո՞ւմ պատմեցից զբանս

զայս. և յայտնի՞ ասացից, եթէ ի ծածուկ[1] . . . առանց պատասխանի տացէ. թէ կանա՞նց կուսանաց եթէ ամուսնացելոց. զո՞ կարացից բանիւք հաւանեցուցանել. եթէ արդարութեամբ ասացից զբանս զայս՝ ծաղր համարին զիս, եթէ երդմամբ խօսեցայց՝ մեղք են ինձ. և սուտ ասելն ինձ անհնար է. և անմեղութեամբ զանձն իմ դատապարտել կարի դժուարին է. և եթէ վկայ խնդրեն՝ ո՛չ ոք է որ արդարացուցանէ զիս. և եթէ կրկին անգամ խօսեցայց զբանս իմ և ասացից զայն, արհամարհանօք սպանանեն զիս: Եւ որք լսեն զբանս իմ՝ ամենեքեան մօտաւորք և հեռաւորք ասեն՝ թէ ստութեամբ պատճառանօք խաբէ զանմիտն և զտխմարն: Եւ այժմ ո՛չ գիտեմ զի՞նչ արարից, և կամ ո՛ տացէ ինձ խրատ վասն գործոյս այսմիկ տալ ամենեցուն պատասխանի, և կամ ո՞րպէս ասացից զայս առն իմում՝ որ անուանեցայ նմա ի կնութիւն, և կամ քահանայիցն և ժողովրդեանն, ո՞րպէս համարձակեցայց խօսել առաջի նոցա, և կամ ուրեք ի մէջ հրապարակին՝ ընդ մարդկան պատճառ եղեալ կարացից: Եթէ կանանց ասացից ամուսնացելոց զկուսութիւն իմ՝ թէ առանց առն յղի եմ, ծաղր համարին զբանս իմ, և ո՛չ հաւատան ինձ. Զի՞նչ իւիք պատճառանօք հնարս գտանեմ ղանձնէ իմմէ վասն գործոյս այսմիկ, որ եղէ. բայց միայն գիտեմ զանձնէ իմմէ՝ որ կուսութիւն իմ սուրբ է, և յղութիւն հաստատուն. զի հրեշտակ Տեառն ո՛չ ստութեամբ խօսեցաւ ընդ իս, այլ ճշմարտութեամբ և ո՛չ վայրապար իւիք պատրեաց զիս նենգութեամբ, այլ իւրաւամբք և արդարութեամբ բանս բարբառեալ Հոգւոյն սրբով պատմեաց ինձ. արդ՝ զի՞նչ գործեցից այժմ՝ որ եղէ նախատինս և անարգանս ի մէջ որդւոցն Իսրայելի: Ո՜ զարմանալի բանս, ո՜ հիանալի գործս, ո՜ ահեղ աքանչելի իրս և կարհուրելի, որ բնաւ զայր ո՛չ գիտեմ, և յղութիւնս որ անտես է՝ ո՛չ հաւատան. եթէ ասացից ումեք հաւատեաւ՝ եթէ կուսութեամբ յղի եմ, ասասցեն ցիս.

1. Պակասին ի գրչագրին բառք ինչ:

Digitized by Google

ԱՀա՛ հաւատամք քեզ որ ճշմարտութեամբ և իրաւի խօսիս, այլ պատմեա՛ զիա՞րդ կարիցէ կին կոյս՝ առանց առն խզելոյ զկուսութիւնն՝ մանուկ ծնանել. և նովին բանիւն յանդիմանեալ ծաղր առնեն զիս: Բայց գիտեմ՝ որ բազումք խօսին զինէն ապիրատութիւն, և ի զուր դատեն զիս անմեղութեամբ. այլ Տէր փրկէ զանձն իմ ի հայհոյութենէ և ի բամբասանաց մարդկան:

Եւ զայս ասացեալ Մարիամու՝ առ ժամայն լռեաց ի խօսելոյ. և յարուցեալ երաց զդուռն տանն տեսանել՝ թէ ո՛ իցէ անդ, որ ունկն դնէ բանիցն ասացելոց. իբրեւ ո՛չ ոք տեսանէր ի մարդկանէ, դարձեալ անդրէն եմուտ ի տունն և նստաւ. և առեալ զնոյն կարմիրն և ծիրանին՝ մանէր, զոր յառաջ առեալ էր ի քահանայիցն առնել վարագոյր տաճարին: Իբրեւ կատարեաց զգործն՝ տարեալ ետ ի քահանայապետն Զաքարիա: Եւ իբրեւ առեալ ի ձեռանէ սուրբ կուսին՝ ասէ ցնա. Ո՛րդեակ Մարիամ, օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է որովայն կուսութեան քո. և մեծ արասցէ Տէր զանուն քո սուրբ ընդ ամենայն երկիր. և եղիցիս դու գլուխ կանանց, և ընդ ամենեցուն և մայր կուսանաց. և ի քէն եղիցի փրկութիւն ամենայն երկրի: Եւ զայս ասացեալ քահանայապետն Զաքարիա. և Մարիամ երկիր եպագ քահանայիցն և ամենայն ժողովրդեանն, և գնաց ուրախութեամբ ի տուն իւր: Եւ յորժամ աւետիս ետ Հրեշտակն առ կոյսն Մարիամ՝ էր յղութեան Եղիսաբեթի ի թշրին քսան, ի հոկտեմբերի ինն. և անտի մինչեւ ցնիսան հնգետասան, որ է ապրիլի վեց. որ եղեն աւուրք հարիւր և ութսուն, որ է ամիս վեց. և անտի առնու սկիզբն մարդեղութեան Քրիստոսի մարմնանալն ի սրբոյ կուսէն:

Արդ, յաւուր միում զմտաւ ածեալ սրբոյ կուսին Մարիամու՝ ասէ. Յարուցեալ գնացից յազգական իմ առ Եղիսաբեթ, և պատմեցից նմա զամենայն գործս զայս՝ որ եղեւ ընդ իս, և զոր ինչ ասիցէ ցիս՝ զայն արարից: Ապա ելեալ ի ծածուկ ընդ լուսանալ առաւօ-

տունն՝ գնաց ի լեռնակողմն Հրէաստանի ի քաղաքն Յուդայ, և եմուտ ի տունն Զաքարիայի, և ետ ողջոյն Եղիսաբեթի։ Եւ իբրև լուաւ Եղիսաբեթ զձայնն Մարիամու՝ խաղաց մանուկն ցնծալով յորովայնի նորա. և լցաւ Եղիսաբեթ Հոգւովն սրբով, ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո. և ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։ Զի ահա յորժամ լուայ զձայն ողջունի քո յականջս իմ՝ խաղաց մանուկս յորովայնի իմում։ Եւ Մարիամ իբրև լուաւ զայս ի նմանէ, արտասուելով զաչս ի յերկինս համբարձեալ և ասէ. Տէր ո՞ եմ ես՝ որ ամենայն ազգ երանեսն ինձ, զի՞ յամենայն կանայս և ի դստերս երբայեցւոց ես յայտնի եղէ, և անուամբ նշանաւոր, և երևելի ի մէջ ամենայն ազգաց որդւոցն Իսրայելի։ Եւ Մարիամ մոռացեալ էր զբան զոր յառաջ լուեալն էր ի հրեշտակէն։

Եւ կացեալ Մարիամու առ Եղիսաբեթ զաւուրս բազում, և պատմեաց նմա զամենայն կարգաւ ի ծածուկ զբանն՝ զոր ետես և զոր լուաւ ի հրեշտակէն։ Եւ Եղիսաբեթ յոյժ զարմացեալ եղև, և ասէ ցնա. Որդեակ, այդ կարի սքանչելի գործ է Աստուծոյ՝ զոր ասես. բայց լո՛ւր ինձ զոր ինչ ասացից քեզ, մի՛ երկրնչիր ի բանիցդ յայդմիկ, և մի՛ անհաւատալի լինիր, զի ամենայն խորհուրդ և գործ և բան ի վեր է քան զամենայն միտս մարդկան. զի ահա տեսանես զիս՝ որ ծերացեալ եմ և այժմ մերձ ի մահ հասեալ եմ. և այժմ ի յալիս պառաւութեանս յղացեալ եմ և ծնանիմ, զի ո՛չ տկարասցի առաջի Աստուծոյ ամենայն բան։ Բայց ե՛րթ դու լռութեամբ կա՛ց ի տան քո, և մի՛ ասասցես ումեք՝ զոր ինչ տեսեր և լուար. և մի՛ պատմեսցես ումեք որդւոցն Իսրայելի. զի մի՛ վայրապար խօսիւք հրապարակեալ՝ այպն արասցեն զմեզ, և զայր քո՝ որ խօսեցեալ է, զի մի՛ վիրաւորեսցի սիրտ նորա ի քէն, և թողցէ քեզ՝ մինչև կամք Տեառն լինիցի, և նա յայտնէ զգործն զոր խորհի առնել։ Ասէ Մարիամ. Զոր ինչ պատուէր առ-

Digitized by Google

սես ինձ. և ընդ լսելն իմ ի քէն զարհուրեալ սոսկայ անձն իմ և դողայ. միտք իմ ի տարակուսանս անկեալ կայ. և ո՛չ գիտեմ եթէ առ այդ բանդ զի՞նչ տաց պատասխանի։ Ասէ հրեշտակն. Ընդէ՞ր զարհուրիս և դողայ անձն քո։ Ասէ սուրբ կոյսն. Զիա՞րդ լուայց քեզ արդեօք, և կամ հաւատացից բանից քոց, որ ոչ է իմ լուեալ ի մարդկանէ զբանդ զայդ, և ո՛չ իմացեալ իսկ ո՛ զոր ասես։ Ասէ հրեշտակն. Ես զճշմարտութեան բանս բարբառեալ խօսիմ ընդ քեզ հաւաստեաւ, ո՛չ վայրապար՝ և ոչ յանձնէ ինչ մտածութեամբ ասացի ցքեզ. այլ զոր լուայ ի Տեառնէ, և առաքեցայ յԱստուծոյ աւետարանել և պատմել քեզ զայդ, և դու զբանս իմ ստութեամբ համարիս. երկի՛ր ի Տեառնէ և լո՛ւր ինձ։ Ասէ սուրբ կոյսն Մարիամ. Ոչ եթէ վայրապար համարիմ զբանս քո, այլ յոյժ հիացեալ զարմանամ. զոր երկինք և երկիր ո՛չ բովանդակել կարէ՝ զաստուածութիւն պարածածկել, և ամենայն դասք երկնային զօրացն անմարմնոց հոգեղինաց և հրեղինաց ո՛չ իշխէին հայել և տեսանել զփառս Նորա, և զիա՞րդ համբերել և ժուժել անբաւելի հրոյն, և ի մարմնի իմում տաղաւարել զնա. և կամ զիա՞րդ կարացից հանդուրժել և բառնալ զնա մարմնով ի գիրկս իմ, և ձեռամբ շօշափել զնա. անհնարին է բանդ, և անհաս խորհուրդ, և զարմանալի գործդ, և ի վեր քան զամենայն տեսութիւն մտաց մարդկան, քննել զնա և իմանալ. միթէ՞ պատրողական բանիւ կամիս հաւանեցուցանել զմիտս իմ. ո՛չ այդպէս։ Ասէ հրեշտակն. Ո՜վ երանելի սուրբ կոյս, լո՛ւր ինձ զոր ինչ ասացից քեզ. Մովսէս ի լերինն Սինայ ո՞րպէս ականատես եղեւ Աստուծոյ, և մորենին իբրեւ զհուր վառէր և ո՛չ այրէր։ Տաղաւարն Աբրահամու ո՞րպէս ընկալաւ զնա մարմնով տեսլեամբ, և հուրն ի Նոսա ո՛չ մերձեցաւ. և ընդ Յակոբայ ո՞րպէս գօտեմարտ եղեալ խօսակից լինէր՝ և ընդ այլ բազում նահապետսն և ընդ մարգարէսն. ո՛րպէս երեւեցաւ Նոցա. ըստ արժանաւորութեան տեսան. և դու մի՛ երկնչիր, միայն հաւատա և լո՛ւռ լեր՝ զոր ինչ ասացից քեզ այժմ։ Ասէ Մարիամ. Ո՞րպէս լինի-

Digitized by Google

ցի ինձ այդ՝ զոր ասես դու, և կամ ո՞րպէս կարիցեմ իմանալ զգալուստ նորա, եթէ յորում աւուր իցէ, և կամ յորում ժամու պատմեա՛ ինձ։ Ասէ հրեշտակն· Մի՛ այդպէս խօսիր զոր ո՛չ գիտես, և մի՛ անհաւատալի լինիր զոր ո՛չ իմանաս· այլ խոնարհեցո զունկն քո, և հաւատա ինձ զոր ինչ ասացից քեզ։ Ասէ Մարիամ· Ո՛չ երկմտութեամբ խօսիմ, և ո՛չ երկբայութեամբ, այլ կամիմ հաւաստեաւ քննել և իմանալ զճշմարիտն՝ եթէ ո՛րպէս լիցի ինձ այդ, կամ յի՞նչ ժամու իցէ՝ որ պատրաստ լինիցիմ արդեօք։ Ասէ հրեշտակն· Գալուստ նորա յամենայն ժամու պատրաստ է, և ի մտանելն և ի բնակելն յորովայնի քում, սրբէ և մաքրէ զամենայն բնութիւն մարմնոյ քո, և տաճար նորա լինիցի։ Ասէ Մարիամ· Ո՞րպէս լինիցի ինձ այդ, զի զայր ո՛չ գիտեմ։ Ասէ հրեշտակն· Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն բարձրելոյն հովանի լիցի քեզ, և Բանն Աստուած մարմնանայ ի քէն, և ծնցիս որդի Հօր բարձրելոյն, անարատ և անապական մնայ կուսութիւն քո։ Ասէ Մարիամ· Եւ ո՞րպէս կին կարէ կուսութեամբ մանուկ ծնանել առանց առն։ Ասէ հրեշտակն· Ո՛չ այսպէս է զոր ասես, և ո՛չ է ծնունդ քո ըստ մարմնական կարեաց ցանկութեան գործոյ, և ո՛չ յղութիւն քո յամուսնութենէ մերձաւորութեան գործոյ· այլ սուրբ և անարատ մնայ կուսութիւն քո· ո՛չ ի մտանելն Բանին Աստուծոյ զգուէ զորովայն քո, և ո՛չ յելանելն մարմնով խզէ զկուսութիւն քո։ Ասէ Մարիամ· Երկնչիմ ի քէն, զի քաղցրութեամբ բանս բարբառեալ խօսիս ընդ իս, և կարի յոյժ զարմացուցանես զիս յասելդ քո ընդ իս· մի՞թէ խաբէութեամբ բանիւք կամիս պատրել զիս՝ որպէս զնախամայրն Եւայ, որ ընդ ասել բանին՝ քաղցր և ողոքական խօսիւք հաւանեցոյց զնա, և յետոյ զմահ ժառանգեաց։ Ասէ հրեշտակն· Ո՜վ Մարիամ սուրբ կոյս, քանիցս անգամ խօսեցայ ընդ քեզ, և ասացի քեզ բան ճըշմարտութեամբ և հաստատուն, և ո՛չ լսես հրամանաց և պատգամի բերանոյ իմոյ՝ որ առաջի կամ քո, և Աստուծով դարձեալ խօսիմ ընդ քեզ· մի՛ զարհուրես-

ցի սիրտ քո ի տեսութենէ իմմէ, և մի՛ երկմտիցեն խորհուրդք քո ի Տեառնէ Աստուծոյ քումմէ, և մի՛ հեռացուցաներ զսիրտ քո յասացելոց բանից իմոց՝ զոր այժմ լուար և ծանեար յինէն. զի ո՛չ խաբէութեամբ իւիք պատրանօք, և ո՛չ խորամանկութեամբ և նենգութեամբ եկի խօսել ընդ քեզ, այլ յառաջագոյն պատրաստել զքեզ տաճար և բնակարան նորա: Ասէ Մարիամ. Այժմ ընդ ասել բանիդ քո և ընդ յաճախ խօսելդ զարմացեալ եմ, և միտք իմ զբաղեցուցանէ զիս, եթէ զինչ առ այդ բան տաց պատասխանի. և եթէ զմիտս իմ ո՛չ կարեմ հաճեցուցանել, այլ ո՞ւմ պատմեցից զբանս իմ. կամ ո՞ հաւատայ ինձ՝ եթէ այն է բանս զոր խօսիմ: Ասէ հրեշտակն. Ո՜վ սուրբ անարատ կոյս՝ մի՛ այդպէս ցնորիւք զմիտս զբաղեցուցաներ: Ասէ Մարիամ. Ո՛չ երկմտիմ ի բանիցդ զոր ասես, և ո՛չ անհաւատալի է զոր խօսիս, այլ առաւել յոյժ խնդամ և ուրախանամ ընդ բանդ քո. բայց զարհուրի անձն իմ և սոսկայ, զԱստուած մարմնով իմով բառնամ՝ իբրև զմարդ ծնանել զնա. և յետոյ կուսութիւն իմ անապական մնայ. ո՜ հիացումն և զարմանալի գործդ զոր ասես: Ասէ հրեշտակն. Քանիցս անգամ խօսեցայ ընդ քեզ բազում բանիւք, և վկայ կացուցի քեզ ստուգապէս. և դու անհաւատալի եղեր ինձ: Ասէ Մարիամ. Աղաչեմ զքեզ՝ ծառայ բարձրելոյն, մի՛ տրտմիր վասն յաճախ հարցանելոյ իմոյ, զի գիտես զբնութիւն մարդկան որ անհաւատալի են յամենայն գործս, վասն այնորիկ քննել կամիմ հաւաստեաւ զի գիտացից. և դու մի՛ ձանձրանար վասն բանից ասացելոց իմոց: Ասէ հրեշտակն. Բարիոք ասես, բայց հաւատա՛ ինձ՝ որ յԱստուծոյ առաքեցայ խօսել ընդ քեզ, աւետարանել քեզ: Ասէ Մարիամ. Այո՛ հաւատամ բանից քոց, և լսեմ հրամանացդ զոր ասացեր ինձ, որ յիրաւի այդպէս է. բայց լո՛ւր ինձ զոր խօսիմ ընդ քեզ. մինչև ցայսօր պահեալ եմ զանձն իմ սրբութեամբ և արդարութեամբ, առաջի քահանայիցն և ամենայն ժողովրդեանն՝ վիճակեալ օրինօք Յովսեփայ ի կնութիւն. և այժմ եդեալ է պահես֊

Digitized by Google

տի ի տան իւրում, և զգուշութեամբ պահել զանձն
իմ՝ մինչեւ արասցուք զպսակն օրհնութեան ընդ այլ
կուսանսն և ընդ ամուրիսն: Արդ, եթէ գայցէ և տե-
սանիցէ զիս ծանրացեալ յղի, զինչ տաց պատասխա-
նի, և կամ զինչ ասացից նմա. և թէ հարցանիցէ
զիս՝ ուստի՞ է յղութիւնդ այդ, զի՞նչ առ այդ բանիդ
տաց պատասխանի: Ասէ հրեշտակն. Ո՛վ երանելի
սուրբ կոյս, լուեա՛ ի խօսելոյ այտի, և ի մտի կալ զա-
սացեալս յինէն, զի ո՛չ է ի մարդկանէ գործդ այդ,
և ո՛չ յումեքէ է բանս՝ զոր խօսիմ ընդ քեզ, այլ
Տեառն է որ առնէ քեզ զայդ, նա կարող է փրկել զքեզ
յամենայն նեղութենէ փորձանաց: Ասէ Մարիամ. ե-
թէ այն է բանդ զոր ասես, և ինքն Տէր հաճեցաւ
խոնարհել յաղախին ծառայս իւր, եղիցի ինձ ըստ բա-
նի քում: Եւ գնաց ի նմանէ հրեշտակն:

Նոյն ժամայն ընդ ասել բանին, և խոնարհեալ սըր-
բոյ կուսին, Բանն Աստուած եմուտ ընդ ունկն լսե-
լեացն ի ներքս, և սրբեցաւ խորհուրդ բնութեան մարմ-
նոյն արտաշնչական՝ հանդերձ ամենայն զգայութեամբ
երկոտասան անդամօքն, և մաքրեցաւ որպէս զոսկի
ի հուր. և եղեւ տաճար սուրբ, անարատ, և բնակա-
րան աստուածութեան նորա: Եւ նոյնժամայն եղեւ
սկիզբն յղութեան սրբոյ կուսին. զի յորժամ հրեշ-
տակն աւետեաց Մարիամու՝ նիսան ամսոյ հնգետա-
սան էր, որ էր ապրիլի վեց. յաւուր չորեքշաբաթի
յերրորդ ժամու աւուրն: Եւ նոյն ժամայն հրեշտակ
Տեառն ընթացեալ գնաց ի կողմանս Պարսից, և աւե-
տիս ետ մոգուց թագաւորացն՝ գալ նոցա յերկրպա-
գութիւն նորածին մանկանն: Եւ նոցա առաջնորդեալ
աստեղբն զամիսս ինն. ապա եկեալ հասեալ ժամա-
նեցին ի ծնունդ սրբոյ կուսին. քան զի յայնմ ժա-
մանակի թագաւորութիւն Պարսից զօրաւոր էր և յաղ-
թօղ քան զայլ թագաւորսն՝ որ էին յաշխարհն արեւե-
լից. և սոքա որք էին թագաւորք մոգուցն՝ եղբարք
երեք. Առաջինն Մէլքոն, որ ունէր զիշխանութիւն Պար-
սից. և երկրորդն Պաղտասար, որ ունէր զիշխանու-
թիւն Հնդկաց. և երրորդն Գասպար՝ որ ունէր զաշ-

Digitized by Google

խարհն Արարածոց։ Սոքա հրամանաւն Աստուծոյ միաբանեալ հասին ի ծնունդն սրբոյ կուսին, փութապէս եկեալ ժամանեցին ի ծնունդն Յիսուսի։

Արդ, իբրեւ լուաւ սուրբ կոյսն զաւետիսն ի հրեշտակէն՝ յարուցեալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր և ասէ. Ո՜ Տէր հոգւոյ և մարմնոյ իմոյ. ունիս իշխանութիւն առնել որպէս և կամք արարչական սիրոյ քո լինիցին, և որպէս հաճեցար և յանձն առեր զամենայն կամաւորապէս. այժմ խոնարհեա յաղաչանս ծառայի քո՝ և լո՛ւր ինձ, և փրկեա զանձն իմ, զի դու ես Աստուած փրկիչ իմ, և անուն քո Տէր կոչեցեալ է ի վերայ իմ զօրհանապազ. և մինչեւ ցայսօր պահեցի զանձն իմ սրբութեամբ և արդարութեամբ և անարատութեամբ, առ քեզ Տէր Աստուած իմ, զկուսութիւնս իմ պահել հաստատուն և ամբողջ՝ առանց ամենայն աղտեղութեան մարմնական ցանկութեանց, և այժմ կամք քո լինին։

Եւ զայս ասացեալ սրբոյ կուսին Մարիամու, և յարուցեալ գոհանայր զՏեառնէ։ Եւ ապա յետ այսր անցանելոյ՝ եղեւ ժամ մի, զմտաւ ածեալ սրբոյ կուսին, լայր և ասէր. Զի՞նչ է այս նոր զարմանալի հիացումն բանիս՝ որ եղեւ ընդ իս, որ ո՛չ ոք եղեւ ի ծընունդս մարդկան մինչեւ ցայսօր. որ եղէ առակ և նախատինս ամենեցուն արանց և կանանց. և այժմ տարակուսեալ եմ, և ո՛չ գիտեմ զինչ արարից և կամ զինչ պատասխանի տաց ումեք ըստ անձին իմոյ. առ ո՛ գնացից, կամ ո՛ւմ պատմեցից. ընդէ՞ր երկնեաց զիս մայրն իմ, և ընդէ՞ր ծնողքս խնդրեցին զիս յԱստուծոյ ցաւագին անձամբ՝ լինել նախատինս ինձ և ծնողաց իմոց. ընդէ՞ր ետուն զիս նուիրօք ի տաճարն սրբութեան պահել զկուսութիւնս իմ. ընդէ՞ր ո՛չ յառաջին եղէ տարագիր մահուամբ փոխիլ յաշխարհէ. և եթէ կենդանի մնացեալ եմ, ընդէ՞ր լռութեամբ ո՛չ ամուսնացուցին զիս ծնողքն իմ որպէս զայլ դստերս եբրայեցւոց. ո՜հ, ո՛ լուաւ, ո՛ ետես զբանս, ո՞ պատմեաց, ո՞ հաւատայ եթէ կին առանց առն մանուկ ծնանի՝ որ զայր ոչ գիտէ։ Ո՞ւմ պատմեցից զբանս

Digitized by Google

զայս․ և յայտնի՞ ասացից, եթէ ի ծածուկ[1] . . . առանց պատասխանի տացէ․ թէ կանա՞նց կուսանաց՝ եթէ ամուսնացելոց․ զո՞ կարացից բանիւք հաւանեցուցանել․ եթէ արդարութեամբ ասացից զբանս զայս՝ ծաղր համարին զիս, եթէ երդմամբ խօսեցայց՝ մեղք են ինձ․ և սուտ ասելն ինձ անհնար է․ և անմեղութեամբ զանձն իմ դատապարտել կարի դժուարին է․ և եթէ վկայ խնդրեն՝ ո՛չ ոք է որ արդարացուցանէ զիս․ և եթէ կրկին անգամ խօսեցայց զբանս իմ և ասացից զայն, արհամարհանօք սպանանեն զիս։ Եւ որք լսեն զբանս իմ՝ ամենեքեան մօտաւորք և հեռաւորք ասեն՝ թէ ստութեամբ պատճառանօք խաբէ զանմիտն և զտխմարն։ Եւ այժմ ո՛չ գիտեմ զինչ արարից, և կամ ո՛ տացէ ինձ խրատ վասն գործոյս այսմիկ տալ ամենեցուն պատասխանի, և կամ ո՞րպէս ասացից զայս առն իմում՝ որ անուանեցայ նմա ի կնութիւն, և կամ քահանայիցն և ժողովրդեանն, ո՞րպէս համարձակեցայց խօսել առաջի նոցա, և կամ ուրեք ի մէջ հրապարակին՝ ընդ մարդկան պատճառ եղեալ՝ կարացից։ Եթէ կանանց ասացից ամուսնացելոց զկուսութիւն իմ՝ թէ առանց առն յղի եմ, ծաղր համարին զբանս իմ, և ո՛չ հաւատան ինձ․ Զի՞նչ իւիք պատճառանօք հնարս գտանեմ զանձնէ իմմէ վասն գործոյս այսմիկ, որ եղէ․ բայց միայն գիտեմ զանձնէ իմմէ՝ որ կուսութիւն իմ սուրբ է, և յղութիւն հաստատուն․ զի հրեշտակ Տեառն ո՛չ ստութեամբ խօսեցաւ ընդ իս, այլ ճշմարտութեամբ և ո՛չ վայրապար իւիք պատրեաց զիս նենգութեամբ, այլ իւրաւամբք և արդարութեամբ բանս բարբառեալ Հոգւոյն սրբով պատմեաց ինձ․ արդ՝ զի՞նչ գործեցից այժմ՝ որ եղէ նախատինս և անարգանս ի մէջ որդւոցն Իսրայելի։ Ո՜ զարմանալի բանս, ո՜ հիանալի գործս, ո՜ ահեղ սքանչելի իրս և զարհուրելի, որ բնաւ զայր ո՛չ գիտեմ, և յղութիւնս որ անտես է՝ ո՛չ հաւատան․ եթէ ասացից ումեք հաւաստեաւ՝ եթէ կուսութեամբ յղի եմ, ասասցեն ցիս․

1․ Պակասին ի գրչագրին բառք ինչ։

Digitized by Google

Ահա՛ հաւատամք քեզ որ ճշմարտութեամբ և իրաւի խօսիս, այլ պատմեա՛ զիա՞րդ կարիցէ կին կոյս՝ առանց առն խզելոյ զկուսութիւնն՝ մանուկ ծնանիլ. և նովին բանիւն յանդիմանեալ ծաղր առնեն զիս: Բայց գիտեմ՝ որ բազումք խօսին զինէն ապիրատութիւն, և ի զուր դատեն զիս անմեղութեամբ. այլ Տէր փրկէ զանձն իմ ի հայհոյութենէ և ի բամբասանաց մարդկան:

Եւ զայս ասացեալ Մարիամու՝ առ ժամայն լռեաց ի խօսելոյ. և յարուցեալ եբաց զդուռն տանն տեսանել՝ թէ ո՛ իցէ անդ, որ ունկն դնէ բանիցն ասացելոց. իբրև ո՛չ ոք տեսանէր ի մարդկանէ, դարձեալ անդրէն եմուտ ի տունն և նստաւ. և առեալ զնոյն կարմիրն և ծիրանին՝ մանէր, զոր յառաջ առեալ էր ի քահանայիցն առնել վարագոյր տաճարին: Իբրև կատարեաց զգործն՝ տարեալ ետ ի քահանայապետն Զաքարիա: Եւ իբրև առեալ ի ձեռանէ սուրբ կուսին՝ ասէ ցնա. Ո՛րդեակ Մարիամ, օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է որովայն կուսութեան քո. և մեծ արասցէ Տէր զանուն քո սուրբ ընդ ամենայն երկիր. և եղիցիս դու գլուխ կանանց, և ընդ ամենեցուն և մայր կուսանաց. և ի քէն եղիցի փրկութիւն ամենայն երկրի: Եւ զայս ասացեալ քահանայապետն Զաքարիա. և Մարիամ երկիր եպագ քահանայիցն և ամենայն ժողովրդեանն, և գնաց ուրախութեամբ ի տուն իւր: Եւ յորժամ աւետիս ետ հրեշտակն առ կոյսն Մարիամ՝ էր յղութեան Եղիսաբեթի ի թշրին քսան, ի հոկտեմբերի ինն. և անտի մինչեւ ցնիսան հնգետասան, որ է ապրիլի վեց. որ եղեն աւուրք հարիւր և ութսուն, որ է ամիսս վեց. և անտի առնու սկիզբն մարդեղութեան Քրիստոսի մարմնանալն ի սրբոյ կուսէն:

Արդ, յաւուր միում զմտաւ ածեալ սրբոյ կուսին Մարիամու՝ ասէ. Յարուցեալ գնացից յազգական իմ առ Եղիսաբեթ, և պատմեցից նմա զամենայն գործս զայս՝ որ եղեւ ընդ իս, և զոր ինչ ասիցէ ցիս՝ զայն արարից: Ապա ելեալ ի ծածուկ ընդ լուսանալ առաւօ-

Digitized by Google

տուն՝ գնաց ի լեռնակողմն Հրէաստանի ի քաղաքն Յուդայ, և եմուտ ի տունն Զաքարիայի, և ետ ողջոյն Եղիսաբեթի։ Եւ իբրև լուաւ Եղիսաբեթ զձայնն Մարիամու՝ խաղաց մանուկն ցնծալով յորովայնի նորա․ և լցաւ Եղիսաբեթ Հոգւովն սրբով, ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ․ Օրհնեալ ես դու ի կանայս, և օրհնեալ է պտուղ որովայնի քո․ և ուստի՞ է ինձ այս, զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։ Զի ահա յորժամ լուայ զձայն ողջունի քո յականջս իմ՝ խաղաց մանուկս յորովայնի իմում։ Եւ Մարիամ իբրև լուաւ զայս ի նմանէ, արտասուելով զաչս ի յերկինս համբարձեալ և ասէ․ Տէր ո՞ եմ ես՝ որ ամենայն ազգ երանեն ինձ, զի՞ յամենայն կանայս և ի դստերս եբրայեցւոց ես յայտնի եղէ, և անուամբ նշանաւոր, և երևելի ի մէջ ամենայն ազգաց որդւոցն Իսրայելի։ Եւ Մարիամ մոռացեալ էր զբան զոր յառաջ լուեալն էր ի հրեշտակէն։

Եւ կացեալ Մարիամու առ Եղիսաբեթ զաւուրս բազում, և պատմեաց նմա զամենայն կարգաւ ի ծածուկ զբանն՝ զոր ետես և զոր լուաւ ի հրեշտակէն։ Եւ Եղիսաբեթ յայժ զարմացեալ եղև, և ասէ ցնա․ Որդեակ, այդ կարի սքանչելի գործ է Աստուծոյ՝ զոր ասես․ բայց լո՛ւր ինձ զոր ինչ ասացից քեզ, մի՛ երկընչիր ի բանիցդ յայդմիկ, և մի՛ անհաւատալի լինիր, զի ամենայն խորհուրդ և գործ և բան ի վեր է քան զամենայն միտս մարդկան․ զի ահա տեսանես զիս՝ որ ծերացեալ եմ և այժմ մերձ ի մահ հասեալ եմ․ և այժմ ի յալիս պառաւութեանս յղացեալ եմ և ծնանիմ, զի ո՛չ տկարասցի առաջի Աստուծոյ ամենայն բան։ Բայց ե՛րթ դու լռութեամբ կա՛ց ի տան քո, և մի՛ ասասցես ումեք՝ զոր ինչ տեսեր և լուար․ և մի՛ պատմեսցես ումեք որդւոցն Իսրայելի․ զի մի՛ վայրապար խօսիւք հրապարակեալ՝ այպն արասցեն զմեզ, և զայր քո՝ որ խօսեցեալ է, զի մի՛ վիրաւորեսցի սիրտ նորա ի քէն, և թողցէ քեզ՝ մինչև կամք Տեառն լինիցի, և նա յայտնէ զգործն զոր խորհի առնել։ Ասէ Մարիամ․ Զոր ինչ պատուէր առ-

Digitized by Google

նեա ինձ՝ զայն արարից։ Ասէ Եղիսաբեթ. Զոր ինչ խրատ տամ քեզ՝ ո՛ւնկն դիր և ի միտ առ. երթ խաղաղութեամբ ի տուն քո, և մի՛ այսր և անդր տեղի ուրեք երթիցես, այլ լռութեամբ նիստ ի տան քում, և պահեա զանձն քո ծածուկ ի մարդկանէ, զի մի՛ ոք գիտասցէ. և զոր ինչ այլ քո պատուէր արար քեզ՝ զայն արասցես, և Տէր ընդ փորձութեանդ քո և զելն արասցէ. մի՛ երկնչիր, ուրա՛խ լեր։ Եւ ասացեալ Եղիսաբեթ՝ և Մարիամ երկիր եպագ նմա, և գնաց ուրախութեամբ ի տուն իւր։ Եւ կացեալ անդ աւուրս բազումս, և օր ըստ օրէ աճէր մանուկն յորովայնի նորա. և երկուցեալ ի մարդկանէ՝ հանապազ թագուցանէր զանձն իւր, զի մի՛ ոք գիտասցէ։

## ԳԼՈՒԽ Զ.

Վասն տրտմութեան Յովսեփայ, և զրպարտելոյ զկոյսն սուրբ անմեղութեամբ և դատապարտելոյ զնա։

Եւ կատարեալ աւուրցն այնոցիկ՝ գայր հասանէր Յովսէփ ի տուն իւր՝ ի գործոյ հիւսնութեան, և Մարիամու յարուցեալ ել ընդ յառաջ նորա, և երկիր եպագ նմա։ Ասէ ցնա Յովսէփ. Բարի՞ կաս, ուրա՛խ ես, ո՞րպէս եղեւ քեզ։ Ասէ Մարիամ. Բարիոք կեամ։ Եւ իբրեւ եդին առաջի իւրեանց սեղան, կերան և ուրախ եղեն. և Յովսէփ ընկողմանեալ ի մահիճս իւր կամէր հանգչել. և հայեցեալ ետես զՄարիամ, և զերեսս իւր այլագունեալ երփն երփն տալով ծածկէր յամօթոյ զանձն իւր, և ո՛չ կարէր։ Եւ Յովսէփ հայեցեալ ի նա տրտմութեամբ՝ յարուցեալ նստաւ և ասէ ցնա. Աղջիկ դու՝ ասա՛ ինձ, թուի թէ ո՛չ ունիս մանկութիւն գեղոյ, քան զի այլեւայլ իմն տեսանեմ զքեզ։ Ասէ Մարիամ.

Digitized by Google

Եւ զի՞նչ կամիս խօսել զինէն՝ որ այդչափ հարցանես և քննես։ Ասէ Յովսէփ. Ես ընդ ասել և ընդ պատճառելդ քո զարմացեալ եմ. ընդէ՞ր այլագունեալ երեսով նստիս դատարկ և տրտում. մի՞ ոք խօսեցաւ ընդ քեզ, դժուարին է ինձ. Նեղութիւն և տկարութիւն մարմնոյ եկն ի վերայ քո, և կամ փորձութիւն յումեքէ հասա՞ւ քեզ, և կամ որոգայթ ի մարդկանէ։ Ասէ Մարիամ. Ո՛չ այդպէս է զոր ասես։ Ասէ Յովսէփ. Ապա ընդէ՞ր ո՛չ տաս համարձակութեամբ պատասխանի։ Ասէ Մարիամ. Զի՞նչ խնդրես յինէն, զի ասացից քեզ։ Ասէ Յովսէփ. Ես խօսից քոց ո՛չ հաւատամ, մինչեւ տեսից. ցո՛յց ինձ զանձն քո յայտնի համարձակութեամբ առաջի իմ. եթէ այն է բանդ զոր ասես։ Եւ Մարիամ տարակուսեալ ի միտս իւր, ո՛չ գիտէր թէ զի՛նչ առնէր։ Ապա Յովսէփ վաղվաղակի նստաւ յաթոռ իւր, և զաչս իւր այսր և անդր ածելով հայեցեալ տեսանէր զՄարիամ յղի ծանրացեալ. ճիչ բարձեալ ասէ. Ո՜հ, զի՞նչ գործդ այդ անօրէնութեան՝ զոր արարեալ ես։ Եւ անկեալ Յովսէփ յաթոռոյ իւրմէ ի վերայ երեսաց իւրոց յերկիր, և ձեռամբն հարեալ զճակատն, և զմօրուսն և զալիսն փետէր, և զերեսն ի մոխիրն վարանէր և ասէր. Վա՜յ է ինձ, և եղո՜ւկ է դառնացեալ ծերութեանս իմոյ, եթէ զի՞նչ գործս այս է, կորուստս զոր տեսանեմ ի տան իմում. որո՞վ երեսօք հայեցայց յերեսս մարդկան, և կամ զի՛նչ տաց պատասխանի քահանայիցն և ամենայն ժողովրդեանն Իսրայելի. և զպատճառ յանցաւորութեան գործոյս ո՞րպէս կարացից խափանել, և կամ զմիտս ամենայն մարդոյ ո՞րպէս կարացից խաբէութեամբ հաճեցուցանել. զի՞նչ արարից զսա, և կամ զի՞նչ խորհեցայց վասն դորա՝ որ կոյս առի զդա սուրբ և անարատ ի տաճարէն, և ո՛չ կարացի պահել զսա օրինօք ըստ աւանդութեան հարցն իմոց։ Եթէ խնդրեն յինէն բռնութեամբ՝ թէ ո՞ւր է կուսութիւն սրբութեան դորա, բե՛ր անարատ կացո առաջի մեր. զի՞նչ տաց պատասխանի ամենայն քահանայից և ժողովրդեանն. ո՞վ էր թշնամին այն՝ որ որսաց զիս. ո՞վ

էր աւազակն որ գերեաց զկուսութիւն դորա յինէն. ո՞ էր որ գործեաց զայս չարիս մեծս ի տան իմում, և զիս ծաղր և նախատինս արար ի մէջ որդւոցն Իսրայելի։ Մի՞թէ պատճառ յանցաւորութեան առ իս կատարեցաւ, որ խաբէութեամբ օձին արտաքսեալ եղեւ ի բարերարութենէ այտի։

Եւ զայս ասացեալ Յովսեփայ՝ լալագին ողբալով կոծէր զանձն իւր. և ապա դարձեալ կոչեաց զՄարիամ առաջի իւր՝ և ասէ ցնա. Ասա՛ ինձ, ո՛ լալի և ողբալի անձն՝ որ այժմ մոլորեալ եղեր, զի՞նչ է գործդ այդ անօրէնութեան զոր արարեր. ընդէ՞ր մոռացար զՏէր Աստուած քո՝ որ ստեղծ զքեզ յորովայնէ մօր քո, զոր ծնողքն քո լալով և արտասուօք խնդրեցին զքեզ յԱստուծոյ, սրբութեամբ և օրինօք ետուն զքեզ ընծայիւք. ի տաճարին սնար և զարգացար, և հանապազ լսէիր զփառաբանութիւն Տեառն, և զերգս հրեշտակաց, և գրոց ընթերցմանց մտադրութեամբ ունկն դնէիր, և լսէիր զասացեալսն ի Նոցանէ։ Եւ յետ մահուան ծնողաց քոց յանձնեալ ետուն զքեզ ի տաճարի անդ մինչեւ գայիր ի զգաստութիւն, և եղեր ծանօթ և հմուտ աստուածային օրինացն. և ի ձեռն քահանայիցն օրհնութեան մեծաւ պատուով ընկալեալ լինէիր։ Եւ յորժամ ետուն զքեզ յիս յանձնեալ, հրամանաւն Աստուծոյ և օրհնութեամբ քահանայիցն և ամենայն ժողովրդեանն՝ առեալ իմ զքեզ սրբութեամբ և բերեալ կացուցի զքեզ ի տան իմում, և զամենայն պէտս մարմնոյ քո պատրաստեցի քեզ, և պատուիրեցի քեզ զգուշանալ և պահել զանձն քո մինչեւ եկից ես։ Արդ՝ զի՞նչ է գործդ այդ զոր արարեր՝ ընդէ՞ր ո՛չ խօսիս և կամ տաս պատասխանի։ Ո՜ եղկելի և թշուառական՝ ընդէ՞ր խոնարհեցար յայդպիսի անկարգութիւնդ, եղեր նախատինք ամենեցուն ի մէջ արանց և կանանց և ամենայն մարդկան։

Եւ Մարիամ լռութեամբ խոնարհեցուցեալ զգլուխ իւր արտասուէր և լայր՝ և ասէր. Մի՛ զուր դատեր զիս, և մի՛ հայհոյութեամբ զրպարտեր զկուսութիւն իմ, զի սուրբ եմ ես ամենեւիմբ ի մեղաց, և բնաւ

զայր ո՛չ գիտեմ: Ասէ Յովսէփ. Ապա յղութիւնդ ուստի՞ է, պատմեա՛ ինձ: Ասէ Մարիամ. Կենդանի է Տէր, որ ո՛չ գիտեմ զի՛նչ խօսիս: Ասէ Յովսէփ. Ո՛չ բռնութեամբ խօսիմ ընդ քեզ և սրտմտութեամբ, այլ քաղցրութեամբ կամիմ բան հարցանել. ասա՛ ինձ՝ ո՞ առ քեզ մարդ եմուտ, կամ մուտ ել եղև, և կամ ի յո՞ր տուն վայրապար գնացեր: Ասէ Մարիամ. Ո՛չ ուրեք[1] մեկնեալ եմ ես ի տանէ աստի: Ասէ Յովսէփ. այդ իսկ են աքանչելիք, որ դու ո՛չ գիտես, և յղութիւնդ հաստատուն տեսանեմ. ո՞ ետես, ո՞ լուաւ՝ թէ կին առանց[2] յղութիւն առնու, և մանուկ ծնանի. ես բանիդ այդմիկ ո՛չ հաւատամ: Ասէ Մարիամ. Ապա ո՛րպէս կարացից հաճեցուցանել զքեզ. եթէ արդարութեամբ հարցանես այն՝ ես զանձնէ իմմէ վկայեմ, որ անմեղ եմ, և բնաւ զայր ո՛չ գիտեմ. և եթէ ի զուր դատես զիս, դու տացես պատասխանի զինէն առաջի Աստուծոյ:

Իբրև լուաւ զբանս զայս Յովսէփ՝ զարհուրեցաւ և երկեաւ յոյժ, և ի միտս իւր եկեալ ասէ. Ո՜ ահեղ և զարմանալի բանս, որ զելս իրացն ամենեւին ո՛չ հասու եղէ և իմացայ. զի այս աննման է բանս, և ի վեր քան զամենայն միտս գերազանց՝ զոր տեսանեմք և լսեմք ականջօք, որ եմ լուեալ և իմացեալ ի նախահարցն անտի. հիացումն պատէ զմիտս իմ. առ ո՞ գնացից, և կամ առ ո՞ հարցից զբանս զայս, զի տարակուսի միտք իմ ի ծածուկ գործոյս, այդ յայտնի ի լուր և ի համբաւս ընդ ամենայն տեղիս ելանէ, և որք լսեն՝ ծաղր առնեն զասացեալն: Ասէ Մարիամ. Մինչեւ ե՞րբ բարկացեալ ես ի վերայ իմ, և վայրապար խօսիւք դատապարտես, և ո՛չ լռես բազում հայհոյութենէդ զոր նծես ի վերայ իմ: Ասէ Յովսէփ. Զի ո՛չ կարեմ համբերել տրտմութեանս մեծի և սգոյս այսմ որ եկն ի վերայ իմ. զի՞նչ արարից քեզ, և զի՞նչ տաց ումեք պատասխանի զոր հարցանիցեն զիս: Եւ երկըն-

1. Յօրինակին էր ուրուք:
2. Պակասի առն:

չիմ, եթէ յայտնի ելանէ բանս և համբաւս ամենեցուն ի լսելիս, և ալիքս իմ խայտառակի ի մէջ որդւոցն Իսրայելի: Եւ զայս ասացեալ Յովսեփայ՝ յարտասուս ելեալ լայր և ասէր. Ողորմելի և եղկելի ծեր, ընդէ՞ր եղեր պահապան դորա, ընդէ՞ր լուար քահանայիցն և ամենայն ժողովրդեանն Իսրայելի, և զալիս քո խայտառակ արարեր ի ծերութեան քո և ի ժամ մահուան: Եւ ո՛չ գիտէր զի՛նչ առնէր. ի միտս իւր եկեալ ասէ. Զի՞նչ արարից զաղջիկս զայս, զի ո՛չ գիտեմ զայն՝ մինչեւ Տէր յայտնեսցէ զգործն որ լինելոց է. զի ո՛չ կամօք իմովք արարի ես զայս, ո՛չ ծանեայ և ո՛չ իմացայ յառաջ զայս՝ եթէ ամենայն ինչ կատարելոց էր. բայց գիտեմ հաւաստեաւ՝ եթէ յԱստուծոյ է փորձութիւնս այս որ եկն ի վերայ իմ, բարիոք է. ապա եթէ ի թշնամեաց իցէ նեղութիւնս այս, Աստուած զեղն արասցէ. բայց ո՛չ գիտեմ թէ զի՞նչ արարից. եթէ դատապարտեմ զսա՝ ինձ մեծ մեղք են. և եթէ չար ինչ ասացից վասն դորա՝ յԱստուծոյ դատապարտիմ արդեօք: Ապա առեալ զսա գաղտ ի գիշերիս յայսմիկ, և տարեալ արձակեցից խաղաղութեամբ երթալ ուր և կամեսցի: Յայնժամ կոչեաց զՄարիամ առաջի իւր, և ասէ ցնա. Ահա զոր ինչ ասացեր՝ եթէ ստութեամբ, եթէ ճշմարտութեամբ՝ լուայ քեզ և հաւատացի. և ես չար ոչինչ արարից քեզ, այլ ի գիշերիս յայսմիկ տարեալ արձակեցից զքեզ, գնա՛ ուր և կամեսցիս: Զայս իբրեւ լուաւ Մարիամ՝ յարտասուս ելեալ լայր: Եւ Յովսէփ ել տրտմութեամբ ի տանէ անտի՝ գնաց առանձինն, նստեալ լայր և կոծէր զանձն իւր: Եւ Մարիամ յարուցեալ անկաւ ի վերայ երեսաց իւրոց յերկիր՝ և ասէր այսպէս. Աստուած հարցն մերոց՝ Աստուած Իսրայելի, հայեաց ողորմութեամբ քով ի տառապանս աղախնոյ քոյ, և ի ցաւագին անձն իմ, և մի՛ տար զիս Տէր յամօթ և ի նախատինս բազմաց, զի դու Տէր գիտես զսիրտ որդւոց մարդկան՝ որ անհաւատալի են. յայտնեա զանուն քո սուրբ առաջի ամենեցուն, զի ծանիցեն զքեզ՝ եթէ դու միայն ես Տէր Աստուած, և անուն քո կոչեցեալ է ի վերայ մեր,

Digitized by Google

և քեզ: Եւ զայս ասացեալ սրբոյ կուսին Մարիամու, հեղոյր զարտասուս իւր առաջի Տեառն: Եւ նոյն ժամայն եղեւ առ նա բարբառ ի հրեշտակէն՝ որ ասէր. Մի՛ երկնչիր, զի ահաւասիկ ես ընդ քեզ եմ ի փրկել զքեզ յամենայն նեղութենէ քումմէ. զօրացի՛ր այսուհետեւ ուրա՛խ լեր:

Եւ զայս ասացեալ գնաց ի նմանէ հրեշտակն: Եւ Մարիամ յարուցեալ անտի գոհանայր զՏեառնէ. և ի մերձենալ երեկոյի ժամուն՝ եկն Յովսէփ լռութեամբ ի տուն իւր, և նստաւ. և հայեցեալ տեսանէր զՄարիամ յոյժ ուրախացեալ և զուարթ երեսօք: Ասէ ցնա Յովսէփ. Աղջիկ դու, այժմ կարի լուրջմիտ երեւիս ինձ պայծառ տեսլեամբ, զի վաղիւն գնալոց ես յինէն ուր և կամիցիս գնալ: Ասէ Մարիամ. Ո՛չ այդպէս է՝ զոր ասես դու, այլ գոհանամ զԱստուծոյ իմոյ յամենայն ժամ, որ նա կարող է առնել զամենայն ինչ որք խնդրեն զնա. և զոր ինքն Տէր կամի և խորհի յայտնի ցուցանել զգործ մարդկան առ ամենայն ուրեք, այն՝ որ քննիչ է խորհրդոց և մտաց: Եւ զայս ասացեալ Մարիամ լռեաց: Եւ Յովսէփ կացեալ տրտմութեամբ յերեկօրեայ մինչեւ ցառաւօտն, ո՛չ եկեր և ո՛չ էարբ, և ի քուն լեալ՝ ի տեսլեան գիշերոյ երեւեալ նմա հրեշտակ Տեառն և ասէ. Յովսէփ որդի Դաւթի մի՛ երկնչիր առնուլ առ քեզ զՄարիամ կին քո, քանզի որ ի նա ծնեալն է ի Հոգւոյն սրբոյ է. ծնցի որդի, և կոչեսցի անուն նորա Յիսուս: Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի, և յարուցեալ եկաց յաղօթս՝ և ասէ այսպէս. Տէր Աստուած հարցն մերոց, Աստուած Իսրայէլի, գոհանամ զքէն Տէր, և փառաւոր արարից զանուն քո սուրբ, որ լուար ձայնի աղաչանաց իմոց, և ի ժամանակի ծերութեան իմոյ ո՛չ անտես արարեր զիս. այլ ետուր ինձ յոյս փրկութեան և մխիթարութեան, և փարատեցեր զսուգ և զտրտմութիւն ի սրտէ իմմէ, և պահեցեր զկոյսն սուրբ անարատ յամենայն աղտեղութենէ աշխարհի: Եւ զայս ասացեալ Յովսէփ ուրախ եղեւ և ցնծայր, և օրհնէր զԱստուածն ամենայնի:

Digitized by Google

## ԳԼՈՒԽ Է.

*Վասն Մարիամու յանդիմանելոյ զկուսութիւնն սուրբ, և պարկեշտութիւնն Յովսէփայ, և տալ նոցա երկոցունց զջուրն փորձութեան։*

Եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ եկն ի գործոյն առ տունն իւր, կոչեաց ուրախութեամբ սրտիւ զՄարիամ առաջի՝ և ասէ ցնա. Մեղայ Տեառն Աստուծոյ իմոյ, քան զի բազում անգամ զրպարտեցի զկուսութիւն քո սուրբ, և ոչ յառաջ իմացայ և ծանեայ՝ եթէ այն է բանդ զոր ասես։ Եւ մինչ դեռ Յովսէփ զայս ամենայն զմտաւ ածեալ խօսէր, և զբաղեալ խորհէր՝ ի նոյն ժամայն գայր հասանէր դպիր մի՝ որում անունն էր Աննաս, և էր այր պաշտօնեայ և հաւատարիմ և սպասաւոր տաճարին Տեառն։ Եւ իբրև եմուտ նա ի տուն անդր, յարուցեալ Յովսէփ համբուրեցին զմիմեանս և նստան։ Եւ ասէ Աննաս դպիրն. Բարև ես եկեալ հայր պատուական ի ճանապարհէ քումմէ, ո՞րպէս եղեւ քեզ յերթալն և ի դառնալն քում։ Ասէ Յովսէփ. Բարի տեսի զքեզ ա՛յր դպիր և պաշտօնեայ Աստուծոյ։ Ասէ դպիրն. Ե՞րբ եկիր այր պատուական, ծեր և սիրելի հաճոյ Աստուծոյ։ Ասէ Յովսէփ. յերեկօրեայ եկի աշխատեալ, և ո՛չ կարացի գալ ի ժամու պաշտման աղօթիցն։ Ասէ դպիրն. Քահանայքն և ամենայն ժողովուրդքն սպասեալ մնային գալստեան քո։ Ասէ Յովսէփ. Օրհնեսցէ զնոսա Տէր Աստուած Իսրայէլի այժմ և յաւիտեան։ Եւ զայս ասացեալ նոցա՝ եդին սեղան առաջի իւրեանց, կերան և արբին և ուրախ եղեն, և գոհացեալ զՏեառնէ՝ ետուն փառս Աստուծոյ։ Եւ ի նոյն ժամայն Աննաս դպիրն հայեցեալ

Digitized by Google

ետես զկոյսն Մարիամ, և տեսանէր յղի ծանրացեալ։ Այլ լռութեամբ գնաց առ քահանայսն և ասէ ցնոսա. ԶՅովսէփ զորմէ վկայէք՝ եթէ արդար է նա, այժմ անօրինեցաւ յոյժ։ Ասեն քահանայքն. Զի՞նչ տեսեր ի նա գործ անօրէնութեան։ Ասէ դպիրն. Զկոյսն Մարիամ զոր էառ ի տաճարէն, և ետուք նմա հրաման պահել սրբութեամբ, այժմ ապականեալ է, և զպսակն օրհնութեան ո՛չ ընկալաւ օրինօք։ Ասեն քահանայքն. Զայդ ո՛չ առնէր Յովսէփ, զի նա այր արդար է սուրբ և կատարեալ։ Ասէ դպիրն. Ես ինքնին տեսի աչօք իմովք, և զոր ասեմ ձեզ՝ ինձ ո՞չ հաւատայք։ Ասէ քահանայապետն. Մի՛ ստութեամբ վկայեր վասն նորա՝ քան զի մեղք են քեզ։ Ասէ դպիրն. Առաջի Աստուծոյ և ամենայն ժողովրդեանն եթէ ստութեամբ վկայեմ՝ արժանի եմ մահու. և թէ ինձ ո՛չ հաւատայք, հրամայեա՛ այլ ստուգիւ տեսանել, և գիտասցես։ Յայնժամ առաքեաց քահանայապետն Զաքարիա նուիրակս կոչել զՅովսէփ առաջի ամենայն ժողովրդեանն։ Եւ իբրեւ գնացին նուիրակքն՝ գտին զկոյսն յղի ծանրացեալ, և եկեալ պատմեցին քահանայիցն և այլոցն ամենեցուն՝ եթէ այն է զոր ասաց դպիրն։ Զայս իբրեւ լուաւ քահանայապետն Զաքարիա, հրամայեաց բռնութեամբ ածել զՅովսէփ և զՄարիամ՝ առաջի իւր ի տեղի դատաստանին։ Եւ իբրեւ եկին նոքա ի մէջ բազմութեան ժողովոյն՝ եհարց քահանայապետն Զաքարիա ցսուրբ կոյսն Մարիամ և ասէ. Ասա՛ ինձ աղջիկ դու, զի՞նչ է գործդ այդ անօրէնութեան զոր գործեցեր և ապականեցեր զկուսութիւն քո, և մոռացար զՏէր Աստուած քո։ Եւ իբրեւ Մարիամ լռութեամբ խոնարհեցուցեալ զգլուխ իւր հեղոյր զարտասուս իւր առաջի քահանայիցն և ամենայն ժողովրդեանն, խոնարհեալ երկիր պագանէր և ասէր. Կենդանի է Տէր Աստուած Իսրայելի, և սուրբ է անուն նորա, որ բնաւ զայր ո՛չ գիտեմ։ Ասէ քահանայապետն. Ապա յղութիւնդ ուստի՞ է զոր տեսանես։ Ասէ Մարիամ. Ո՛չ գիտեմ։ Յայնժամ հրամայեաց քահանայապետն ածել զՅովսէփ առաջի իւր, և ասէ ցնա.

Digitized by Google

Ծեր դու սաս ինձ՝ ընդէ՞ր գործեցեր զայդպիսի չարիսդ ի մէջ որդւոցն Իսրայելի, և եղեր նախատինս ի մէջ ազգաց բազմաց։ Ասէ Յովսէփ. Մի՛ զուր դատէք զիս առանց վկայից, քան զի մեղք են ձեզ։ Ասէ քահանայապետն. Ո՛չ վայրապար իւիք դատապարտեմ զձեզ և անմեղութեամբ, այլ իրաւամբք. տո՛ւր զկոյսն սուրբ անարատ զՄարիամ՝ զոր առեր ի տաճարէն, ապա թէ ոչ՝ արժանի ես մահու։ Ասէ Յովսէփ. Բարիոք ասացեր, բայց կենդանի է Տէր Աստուած Իսրայելի՝ որ ոչ գիտեմ ի բանիցդ յայդմիկ, զոր ասէք։ Ասէ քահանայապետն. Մի՛ ստեր, այլ զայն ասա, գողացա՞ր զհարսանիս քո, և արհամարհեցեր զօրէնս Աստուծոյ, և ոչ յայտնեցեր որդւոցն Իսրայելի, և ո՛չ խոնարհեցուցեր զգլուխ քո ընդ հզօր ձեռամբն Աստուծոյ, որպէս զի օրհնեսցի զաւակ քո ընդ ամենայն երկիր։ Ասէ Յովսէփ. Յառաջ ասացի ձեզ զայն, և այժմ դարձեալ ասեմ եթէ հաւատայք ինձ, դուք ինքնին գիտէք զինէն, որ ո՛չ երբէք խոտորեալ եմ ի պատուիրանացն Աստուծոյ, և ո՛չ հակառակ և թշնամի ումեք լեալ. արդ ես զանձնէ իմմէ գիտեմ այն Հոգւով, և Տէր է որ վկայէ վասն իմ, որ բնաւ կին օտար ո՛չ գիտեմ, բայց միայն զառաջինն օրինօք. և դուք միաբանեալ ի վերայ իմ՝ քահանայք և ժողովուրդք՝ բռնութեամբ և ողոքանօք հաւանեցուցէք զիս. և ես երկեայ յԱստուծոյ և ի ձէնջ, և լսող եղէ հրամանաց ձերոց, և առարի զոր ինչ արժան է՝ հնարեցայք առնել ինձ. և առեալ տարայ զդա ի տուն, և ամենայն ինչ ի պէտս մարմնոյ պատրաստեցի նմա, և պատուիրեցի զգուշանալ և պահել զանձն սրբութեամբ մինչեւ եկից ես։ Եւ ես յարուցեալ գնացի ի գործս իմ արուեստի, մինչեւ կատարեցից զբանս իմ զոր առնէի։ Եւ յորժամ եկի ես յերեկորեայ, ամենեքեան լուան զինէն և զգալուստ իմ եթէ որպէս իցէ. և այլ ո՛չ եմ տեսեալ զդա, բայց միայն յղի ծանրացեալ, և ո՛չ գիտեմ։ Իբրեւ լուան զայս բազմութիւն ժողովոյն՝ ասեն. Արդար և յիրաւի է ծերդ այդ։ Ասէ քահանայապետն. Այո՛, գիտեմ այն ասա-

Digitized by Google

ցեր. բայց աղջիկդ այդ տղայ հասակ էր և որբ ի ծնողաց, և դու հաստատուն ծեր էիր կատարեալ. յաղագս այնորիկ յանձն արարաք ի քեզ զկուսութիւն դորա ամբողջ մնալ և անարատ՝ մինչև ի ժամ առնլոյ ձեզ պսակ օրհնութեան։ Ասէ Յովսէփ. Բարիոք ասէք, բայց ես ո՛չ ծանեայ մտօք զգործդ զայդ որ լինելոց էր. այլ Տէր յայտնէ զմ՟ղս անձին դորա՝ որպէս և ինքն կամեսցի։ Եւ զայս ասացեալ Յովսեփայ՝ լռեաց ի խօսելոյ։ Ասէ քահանայապետն. Արբուցից զջուրն յանդիմանութեան՝ և Տէր յայտնէ զգործն ձեր, եթէ յայն էք։ Յայնժամ առեալ քահանայապետն Զաքարիա ըզջուրն փորձութեան ի ձեռին իւրում, կոչեաց զՅովսէփ առաջի իւր և ասէ ցնա. Ա՛յր դու՝ հայեաց ի ծերութիւն ալեաց քոց, և տես այնպէս աչօք քո զդեղ կենաց և մահու, և մի՛ տար կամաւ զանձն քո ի փորձութիւն և ի կորուստ։ Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէր և սուրբ է անուն նորա, որ բնաւ չար զանձնէ իմմէ ո՛չ գիտեմ. այլ եթէ Տէր կամեսցի զիս անմեղութեամբ դատել՝ կամք Տեառն լիցին։

Եւ նոյն ժամայն ետ քահանայապետն ըմպել զջուրն Յովսեփայ, և առաքեաց զնա փութով երթալ և դառնալ. և Յովսէփ ընթացեալ գայր և գնայր, և իջանէր ողջ անարատ անձամբ անփորձ մնալով։ Եւ իբրև տեսին ամենեքին՝ եթէ ոչ եղև նմա մ՟ղս մահու, երկեան յոյժ։ Ապա հրամայեաց կոչել զՄարիամ առաջի իւր, և իբրև եկն՝ առեալ զջուրն փորձութեան ի ձեռին իւրում, և ասէ ցնա Զաքարիա. Աղջիկ դու՝ տե՛ս զհասակ մանկութեան քո, և յիշեա՛ զառաջինն զոր սնար և զարգացար ի տաճարին. ողորմեա՛ անձին քում, եթէ անմեղ ես՝ փրկեա՛ զանձն քո ի մահուանէ, և ո՛չ ինչ հասցէ քեզ մ՟ղս. ապա եթէ ստութեամբ փորձես զԱստուած կենդանի, նա յամօթ արասցէ զքեզ հրապարակաւ, և չարամահ սատակեսցէ։ Ասէ Մարիամ արտասուելով. Ես զանձնէ իմմէ մ՟ղս ո՛չ գիտեմ, այլ կուսութիւնս իմ սուրբ է և անապական՝ առանց մեղաց. և եթէ Տէր անմեղութեամբ դատէ զիս՝ կամք Տեառն լիցին։ Յայնժամ առեալ քահանայապետ-

տին զջուրն, և ետ ըմպել Մարիամու. և հրամայեաց նմա վաղվաղակի գնալ և դառնալ. և նա երթայր ի հեռաստանէ, գայր և իջանէր անարատ և ամբողջ մնալով: Զայն տեսեալ բազմականացն՝ և սքանչացեալ հիանային, և ասէին. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի՝ որ անարատ և անմեղք են սոքա, որ ո՛չ վնասեցան ի փորձութենէ անտի, և ո՛չ յայտնեցան գործք մեղաց նոցա: Յայնժամ հրամայեաց քահանայապետն կոչել զՅովսէփ և զՄարիամ առաջի իւր՝ և ասէ ցնոսա. Դուք ինքնին գիտէք զանձնէ ձերմէ՝ որ պատասխանի տալոց էք առաջի Աստուծոյ. և զոր օրէնքն մեր հրամայեցին առնել՝ արարաք. Տէր ո՛չ յայտնեաց զմեղս ձեր, և ես ո՛չ դատապարտեմ զձեզ, երթա՛յք խաղաղութեամբ:

Եւ նոցա երկրպագեալ քահանայիցն և ամենայն ժողովրդեանն՝ գնացին լռութեամբ ի տունս իւրեանց ո՛չ յայտնի՝ այլ ի ծածուկ. և կացեալ նոցա անդ՝ մինչեւ լցան աւուրք յղութեան սրբոյ կուսին: Եւ իբրեւ մերձեցան երկունք ծննդեանն Մարիամու, երկուցեալ Յովսեփու՝ ասէ. Զի՞նչ արարից զդա՝ զի մի՛ ոք գիտասցէ զամօթոյ մերոյ զգործս զայս՝ որ եղեւ: Եւ ասէ Յովսէփ ցՄարիամ. Ոչ է արժան կալ մեզ ի քաղաքիս յայսմիկ. ե՛կ երթիցուք յայլ հեռաւոր աշխարհ՝ որ ո՛չ ճանաչեն զմեզ. զի եթէ կացցուք և մնասցուք աստ, ամենեքին որ լսեն զծնունդ քո՝ ծաղր և նախատինս լինիմք ի մէջ որդւոցն Իսրայելի: Ասէ Մարիամ. Արա՛ որպէս հաճոյ թուի քեզ առնել: Եւ Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն:

Digitized by Google

# ԳԼՈՒԽ Ը.

*Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յայրին։*

Եւ եղեւ ընդ աւուրսն ընդ այնոսիկ ել հրաման Աւգոստոս կայսերէ, աշխարհագիր առնել ընդ ամենայն երկիր, և տալ հարկս կայսեր արքունուստ՝ ըստ իւրաքանչիւր անուանց մարդաթուի, որչափ ոգիք ի տանն լիցին՝ տալ նմա տասանորդս յամենայն ամի, ի գլուխ տարւոյն։ Եմուտ Յովսէփ հանդերձ Մարեմաւ յաշխարհագիրն զոր գրեալ էին։ Եւ նոյն ժամայն յարուցեալ Յովսէփ հանդերձեաց զգրաստս իւր, և պատրաստեաց զամենայն ինչ պէտս մարմնոյ իւրեանց կերակրոյ։ Եւ առեալ ընդ իւր զկրտսեր որդին զՅովսէ, և եդ զՄարիամ ի վերայ գրաստոյ իւրոյ, և ելեալ գնացին զճանապարհաւն ի կողմանս հարաւոյ. և իբրեւ գնացին ի քաղաքէն հնգետասան ասպարիզաւ հեռի, որ է ինն մղոն. հայեցեալ Յովսէփ տեսանէր զՄարիամ այլագունեալ զերեսս իւր, և տրտմեալ կայր տխուր. կարծէր ի մտի իւրում՝ թէ ծանր է ամանն, չեղեւ նմա վասն յղութեան նստել ի վերայ գրաստոյ։ Ասէ Յովսէփ ցՄարիամ. Ընդէ՞ր տրտում է անձն քո, և յոյժ խռովեալ ես։ Ասէ Մարիամ. Ո՞րպէս ուրախ լինիմ, զի ո՛չ գիտեմ եթէ յո՛ երթամ, և այսպիսի յղի ծանրացեալ։ Ասէ Յովսէփ. Բարիոք ասես. բայց օրհնեալ է Տէր Աստուած Իսրայելի՝ որ ազատեաց զմեզ ի հայհոյութենէ մարդկան և ի բամբասանաց։ Ասէ Մարիամ. Եւ ո՛չ իսկ յառաջ ասացի քեզ, եթէ հաւատաս ինձ՝ որ ո՛չ գիտեմ վնաս զանձնէ իմմէ, և դու անմեղութեամբ ի զուր դատէիր զիս. բայց միայն Տէրն ամենեցուն փրկեաց զիս ի յորոգայթէ մահու։

Digitized by Google

Եւ իբրեւ գնացին ժամ մի՝ հայեցեալ Յովսէփ տեսանէր զՄարիամ լրջմտութեամբ՝ զի ուրախացեալ ցնծայր։ Ասէ Մարիամ. Զի՞նչ տեսանես յիս՝ որ այդպէս բազում անգամ հարցանես ցիս։ Ասէ Յովսէփ. Նոր իրս տեսանեմ ի քեզ և զարմանամ, երբեմն տըխուր երեւիս և երբեմն ուրախ և զուարթ երեսօք։ Ասէ Մարիամ. Յաղագս այնորիկ ցնծամ և ուրախանամ, զի փրկեաց զիս Տէր յամենայն փորձութենէ թշնամւոյն։ Բայց նոր իրս պատմել կամիմ քեզ՝ գիտասցես։ Ասէ Յովսէփ. Ասա՛ ինձ զի՛նչ խօսիս։ Ասէ Մարիամ. Յաղագս այնորիկ ուրախանամ և տրտմիմ, զի տեսանեմ երկոտասան դասս ժողովեալ բազում գունդս զօրաց՝ մինն յաջմէ և մինն յահեկէ։ Եւ որ յաջմէն են, ուրախութիւն են, և որ յահեկէն՝ ի տրտմութիւն և ի սուգ։ Զայս իբրեւ լուաւ Յովսէփ, զարմացաւ յոյժ, և ի միտս իւր եկեալ՝ ասէ. Եթէ զի՞նչ է տեսիլս այս որ երեւեցաւ սմա։ Եւ նոյն ժամայն եղեւ առ նա բարբառ ի հրեշտակէն որ ասէր. Ուրա՛խ լեր Մարիամ կոյս և աղախին Տեառն. տեսանե՞ս ըզնշանն զայն՝ որ երեւեցաւ քեզ։ Ասէ Մարիամ. Այո՛։ Ասէ հրեշտակն. Մերձեցաւ այսօր երկունք ծննդեան քո, և որ յաջակողմեան են դասք՝ ժողովեալ են ամենայն բազմութիւնք զօրացն անմարմնոց հրեշտակացն, սպասեն մեան սրբոյ ծննդեան քո՝ գալ յերկրըպագութիւն նորածին մանկանն որդւոյ արքայի՝ թագաւորին Իսրայելի։ Եւ որ ի ձախակողմեան են՝ հաւաքեալ են սեւազգեստեալ լէգէոնեան զօրքն դիւացն են, յոյժ տարակուսեալ մեան, որ ի փախուստ դառնան։ Եւ զայս լուեալ Յովսեփայ և Մարիամու ի հրեշտակէն, յոյժ գոհացեալ զԱստուծոյ ուրախ եղեն։

Եւ ի գնալն նոցա էր օրն այն սաստիկ ցուրտ՝ յաւուր ձմերային յորում էր տըբէթ ամսոյ քսան և մի, յունվարի վեց։ Եւ իբրեւ եկին ի տեղի մի աւերակի, որ յառաջ լեալ էր նա քաղաք արքայի՝ անուանեալ կոչի Բեթղեհէմ, և էր օրն այն հինգշաբաթի վեցերորդ ժամու տուընջեան։

Ասէ Մարիամ ցՅովսէփ. Իջո՛ զիս ի գրաստոյ աս-

տի վաղվաղակի, Նեղէ մանուկն զիս։ Ասէ Յովսէփ. Ո՛հ, զի՞նչ լինիցիմ արդեօք, որ ոչ պատահեաց ծնունդ դորա ի շէնն, այլ ի տեղի յանապատի և յանմարդաբնակ՝ որ ո՛չ գոյ ուրեք օթեւան. արդ, յո՞ երթայց, կամ ո՞ւր տարեալ հանգուցից զսա. և տուն և յարկ բնակութեան ո՛չ գոյ որ ընդ հովանեաւ նորա ծածկէ զամօթոյ զմերկութիւն։ Ապա գտեալ անդ Յովսէփ քարայր մի մեծ յոյժ, որ հովիւք և հողագործք՝ որք անդ շուրջ զսահմանօքն վարէին և վաստակէին, և յերեկօրեայ բերէին զանասունս իւրեանց մակաղէին. և մսուր եզանց արարեալ էին տուն անասնոց իւրեանց դարման կերակուր. բայց ի ժամուն յայնմիկ ո՛չ էին հօտք և մշակ եզանց, զի աւուրք ձմերայնոյ էր։ Երբեր անդ Յովսէփ զՄարիամ, մուծանէր ի ներքս, և կացուցանէր զՅովսէ որդին իւր մերձ առ նմա ի դրանն, և ինքն ելեալ երթայր ի խնդիր մանկաբարձի։ Եւ ի գնալն իւրում տեսանէր զերկիրս բարձրացեալ, և զերկինս խոնարհեալ, և զձեռն իւր վերացուցեալ՝ այնպէս թէ ի յօդս հասանէր։ Տեսանէր շուրջ՝ որ ընդարմացեալ յիմարեալ կային՝ զտարերս, զհողմունս և զօդս երկնից անշարժ մնացեալ, որ ոչ ընթանային, և զթռչունս թեւաւորս՝ որ ոչ վերանային։ Հայէր յերկիր և տեսանէր կուժ մի նոր, զի կայր անդր կաւագործ մի հողամաղեալ, և եդեալ զձեռս իւրեանց ի բարձունս, իբրեւ թէ ոչ մերձեցուցանէին. այլ ամենեցուն ի վեր համբարձեալ զաչս իւրեանց լինէին։ Եւ դարձեալ տեսանէր և զհօտս վարեալս որ ո՛չ երթային և ո՛չ գային, և ո՛չ արածէին. և հովիւն համբառնայր զգաւազանն ի վեր, և ո՛չ կարէր հարկանել զհօտն, այլ զձեռն բարձրակոյն վերացուցանէր։ Դարձեալ հայէր՝ հեղեղատ մի ի գբոյ, և տեսանէր ուղտս ճարակաւորս, եդեալ զբերանս իւրեանց առ եզր գբոցն. և ոչ ինչ ճարակէին. և այսպէս ի ժամ ծննդեան սրբոյ կուսին ամենայն տարերք ի կայանս իւրեանց ընդարմացեալ կային։ Հայէր Յովսէփ ի հեռաստանէ և տեսանէր կին մի, որ գայր ի լեռնէ անտի և կտաւ մի մեծ զուսովն արկեալ. և պատահեալ նմա ողջունեցին

զմիմեանս։ Ասէ Յովսէփ. Կի՛ն դու՝ ուստի՞ գաս, կամ յո՞ երթաս։ Ասէ կինն. Եւ զի՞ խնդրես, որ հարցանես զիս։ Ասէ Յովսէփ. Մանկաբարձ երբայեցի կու խընդրեմ։ Ասէ կինն. Ո՞վ է որ ծնեալ է յայրին։ Ասէ Յովսէփ. Մարիամ, որ սնեալ է ի տաճարին. նա վիճակեցաւ ինձ ի կնութիւն. և ոչ է ըստ մարմնոյ կին, և յղութիւն նորա ի Հոգւոյն սրբոյ է։ Ասէ կինն. Բա, ընդ աասցեր. այլ պատմեա՛ ինձ, ո՞ւր է նա։ Ասէ Յովսէփ. Ե՛կ և տես։

Եւ իբրեւ գնացին նոքա երկոքեան, զճանապարհայն եհարց ցնա Յովսէփ և ասէ. Կի՛ն դու պատմեա՛ ինձ զանուանէ քումմէ. զի գիտացից, թէ ո՞վ ես դու։ Ասէ կինն. Զի՞ հարցանես զիս զանուանէ իմմէ. ես եմ նախամայրն ամենեցուն Եւա, և եկի տեսանել աչօք իմովք զփրկութիւն իմ, որ գործեցաւ ինձ։ Եւ զայս լուեալ Յովսեփայ՝ զարմացաւ ընդ սքանչելի իրսն զոր ետես։ Եւ եկեալ կացեալ նոցա ի հեռաստանէ ի դուռն այրին. և տեսանէին յանկարծակի զձեղունս երկնից բացեալ՝ և լոյս սաստիկ հեղեալ ի վերուստ մինչեւ ի վայր. և սիւն հրեղէն ամպոյ կառուցեալ կայր ի վերայ այրին. և ամպ մի լուսաւոր հովանի էր յայրին. և ձայն անմարմնոց վերին զուարթնոց հրեշտակաց լսելի լինէր բարբառ նոցա, երգս առեալ գոչէին անդադար ձայնիւ և փառաւոր առնէին զԱստուած։

## ԳԼՈՒԽ Թ.

*Վասն Նախամօրն Եւայի և Յովսեփայ փութով հասանել նոցա, և տեսանել զծնունդ ամենազովեալ սուրբ կուսին Մարիամու։*

Եւ իբրեւ զայն տեսեալ Յովսեփայ և Նախամօրն, անկեալ յերկիր երեսաց իւրեանց պագանէին՝ և գոհանալով ի ձայն մեծ փառաւոր առնէին զԱստուած և ասէին. Օրհնեալ ես Տէր Աստուած հարցն մերոց՝ Աստուած Իսրայելի՝ որ արարեր այսօր փրկութիւն որդւոց մարդկան ի գալստեան քում. և վերստին Նորոգեցեր և կանգնեցեր զիս ի գլորմանէ անտի, և հաստատեցեր յառաջին փառս։ Այժմ մեծացաւ անձն իմ և ցնծացաւ յոյս իմ Աստուած փրկիչ իմ։ Եւ զայս ասացեալ Նախամօրն Եւայի, տեսանէր՝ զի բարձրացեալ վերանայր ամպ մի յերկինս և հեռանայր ի յայրէն։ Եւ միւս կողմն լուսոյն բոցայայտնեալ երեւէր յառաջ բազմեալ ի յանբանից մսուր։ Եւ գայր առնոյր զստինս ի մօրէն իւրմէ, և կերակրէր կաթամբըն. և դարձեալ ի տեղին իւր երթայր և բազմէր։ Եւ զայն տեսեալ Յովսեփայ և Նախամօրն Եւայի, և գոհացեալ փառս տային Աստուծոյ, և հիացեալ զարմանային ընդ սքանչելի գործսն որ եղեւ. և ասէին. Ո՞ երբէք արդեօք զայս լուեալ յումեքէ և կամ ետես աչօք իւրովք զայս ամենայն որ եղեւ։ Եւ Նախամայրն եմուտ ի յայրն, և առեալ զմանուկն ի գիրկս իւր՝ խանդաղատելով գգուէր զնա և համբուրէր և օրհնէր զԱստուած. զի էր մանուկն կարի յոյժ գեղեցիկ տեսլեամբ պայծառ և վայելուչ, զուարթ երեսօք. և պատեալ զնա խանձարրովք՝ եդ ի մսուր եզանց. և ելեալ Նախա-

Digitized by Google

մայրն Եւա ի յայրէ անտի. և տեսանէր յանկարծակի կին մի ի քաղաքէն յԵրուսաղեմէ, որում անուն էր Սողոմէ. գնաց Նախամայրն Եւա ընդ առաջ նորա և ասէ ցնա. Քեզ նոր իրս խնդութեան աւետիս տամ. որ կոյս մի աղջիկ՝ մանուկ ծնաւ ի յայրին, որ բնաւ զայր ոչ գիտէ։ Ասէ Սողոմէ. Գիտեմ ես, որ ամենայն քաղաքն Երուսաղէմ դատապարտեցին զնա, եթէ մեղապարտ է և արժանի է մահու. և դա յաղագս ամօթոյ և նախատանաց ելեալ ի քաղաքէն փախստական եկն աստ։ Եւ ես Սողոմէ յԵրուսաղէմ լուայ, եթէ մանուկ ծնաւ կոյսն՝ արու, և ես խնդութեամբ եկի տեսանել զնա։ Ասէ Նախամայրն Եւա. Այո՛ կուսութիւն իւր սուրբ է անարատ մնալով։ Ասէ Սողոմէ. Դու ո՞րպէս կարացեր իմանալ զդա, եթէ կոյս իցէ։ Ասէ Նախամայրն. Զոր ինչ տեսի աչօք իմովք՝ պատմեցից։ Ասէ Սողոմէ. Ասա։ Ասէ Նախամայրն. Մինչեւ ես եկի յայրս յայս. և տեսի ամպ մի լուսաւոր, որ հովանի էր ի վերայ նորա. և ձայն բարբառոյ լսելի լինէր ի վերուստ. և բազմութիւնք զօրացն անմարմնոց դասուց հրեշտակաց՝ որք օրհնէին և փառաւոր առնէին զԱստուած ի ձայն մեծ, և իբրեւ վերացաւ լուսեղէն ամպն ի յերկինս։ Ասէ ցնա Սողոմէ. Կենդանի է, որ բանից քոց ոչ հաւատամ, մինչեւ տեսից. եթէ կոյս առանց առն մանուկ ծնանի, որ զայր ոչ գիտէ։ Եւ մտեալ Նախամայրն ի յայրն, ասէ ցսուրբ կոյսն Մարիամ. Ստիպէ զմեզ և պատրաստ կաց, զի ահա Սողոմէ կամի գալ փորձել զքեզ, և տեսանել զկուսութիւն քո։ Եւ իբրեւ եմուտ Սողոմէ ի յայրն, և տարեալ զձեռն իւր կամէր մերձենալ ի կոյսն, և յանկարծակի հուր ցոլացեալ անտի բորբոքեալ կիզոյր զձեռն նորա. և նա ճիչ բարձեալ ասէ. Վա՜յ անձին իմոյ եղկելոյս և յոյժ մոլորեալ մեղօք թշուառականիս. զի՞նչ գործեցի անօրէնութեամբ. զի մեղայ Տեառն իմոյ և բարկացուցի զնա և թերահաւատութեամբ փորձեցի զԱստուած կենդանի. ահա ձեռն իմ իբրեւ հրով այրեալ եղեւ ինձ։ Իսկ հրեշտակն որ մերձ կայր առ նա, ասէր առ Սողոմէ. Զգեա՛ զձեռն քո ի մանուկդ

և մերձեցիր ի Նա՝ և բժշկեցիս։ Եւ Նա անկեալ առ ոտս մանկանն՝ համբուրէր զնա, և առեալ ի գիրկս իւր գգուէր և ասէր. Ո՜վ Նորածին մանուկ որդի Հօր մեծի հզօրի. դու մանուկդ Յիսուս Մեսիա Թագաւոր Իսրայելի, դու փրկիչ օծեալ Տէր՝ յայտնեցար ի քաղաքի Դաւթի. դու լոյս ծագեցար յաշխարհի և փրկութիւն մեզ յայտնեցար աշխարհաց։ Զայս բանս և այլ ինչ բազում բանս խօսեցաւ Սողոմէ. և նոյն ժամայն ողջացաւ ձեռն Նորա. և նա յարուցեալ երկիր եպագ մանկանն. և կամեցաւ երթալ յԵրուսաղէմ։ Յայնժամ եղեւ բարբառ ի հրեշտակէն որ ասէր. Սողոմէ յորժամ երթաս ի քաղաք յԵրուսաղէմ և ի տեղի ուր երթալոց ես, մի՛ ումեք ասեր զտեսիլս զայս որ երեւեցաւ քեզ. զի մի՛ յայտնի լիցի Հերովդիայ արքայի, մինչեւ եկեսցէ մանուկն Յիսուս քառասնօրեայ ի տաճարն սրբութեամբ։ Ասէ Սողոմէ. Այո՛ Տէր. կամք քո լիցին։ Եւ իբրեւ գնաց Սողոմէ ի տուն իւր, ոչ ումեք յայտնեաց զբանն, զոր ասաց Նմա հրեշտակն։

## ԳԼՈՒԽ Ժ.

### Վասն հովուացն՝ որ տեսին զծնունդ Տեառն մերոյ։

Ապա հովիւքն ի տեղւոջն յայնմիկ բնակեալ զոր յառաջ ասացաք, բայց ոչխարք միայն հօտից ի յօդեաց և ի յայծից բացուստ ի հեռաստանէ, որ արածէին ի լերինս և ի դաշտս, և բերեալ իւրաքանչիւրք յերեկօրեայ ի փարախ զհօտս իւրեանց մակաղէին. և զգիշերն ամենայն արթնութեամբ պահէին մինչեւ ցառաւօտն։ Եւ հրեշտակ Տեառն երեւեալ նոցա և փառք Տեառն ծագեաց ի նոսա. և երկեան երկիւղ մեծ. ձայն տուեալ հովուացն՝ ժողովեցան ի մի տեղի, և ասէին ցմիմեանս. զի՞նչ է բարբառ աղաղակիս այս

Digitized by Google

որ եղեւ առ մեզ, զոր ոչ գիտեմք։ Իսկ հրեշտակն դարձեալ ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք արք իմաստունք և հանճարեղք, որ ժողովեալ կայք ի միասին. զի աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ. որ ծնաւ ձեզ այսօր փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի։ Եւ այս ձեզ նշան ամենեցունդ. յորժամ երթայցէք ի յայրն, գտանիցէք անդ մանուկ մի պատեալ ի խանձարուրս և եդեալ ի մսուր եզանց։ Եւ նոյն ժամայն ընդ ասել հրեշտակին, փութացեալ հովուացն՝ անդ հասանէին, ուր էին արք թուով հնգետասան. և նոցա տեսեալ զՅիսուս՝ անկեալ երկիր պագանէին նմա առաջի նորա. և ի ձայն մեծ փառաւոր առնէին զԱստուած և ասէին. Փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ զայս ասացեալ հովուացն՝ գնացին իւրաքանչիւր ի հօտս իւրեանց՝ փառաւորելով զՔրիստոս, որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

## ԳԼՈՒԽ ԺԱ.

*Վասն գալստեան մոգուցն ընծայիւք յերկրպագութիւն նորածին մանկանն Յիսուսի։*

Եւ Յովսէփ և Մարիամ հանդերձ մանկամբն կացեալ ի յայրն, ոչ յայտնի՝ այլ ի ծածուկ, զի մի՛ ոք գիտասցէ։ Իսկ յետ անցանելոյ երից աւուրց. որ էր տըբէթ ամսոյ քսան և երեք և յունվարի ինն։ Ահա մոգք յարեւելից՝ որք ելեալ էին յաշխարհէն իւրեանց և բազում զօրօք եկեալ հասեալ նոցա ի քաղաքն Երուսաղէմ զամիսս ինն. և էին թագաւորք մոգուցն երեք եղբարք ի միասին։ Առաջին թագաւորն Մելքոն էր Պարսից. երկրորդ թագաւորն Հնդկաց Գասպար էր.

Digitized by Google

երրորդ Թագաւորն Արաբացւոց Պաղտասար էր։ Եւ գլուխք զօրաց նոցա՝ որք էին կարգեալք զօրապետ՝ արք երկոտասան. իսկ զօրք հեծելոցն՝ որք ընդ նոսա էին, արք թուով երկոտասան հազար յամենայն իշխանութենէ չորս չորս հազար, կարգեալ էր։ Նոքա ամենեքեան հրամանաւն Աստուծոյ ի մոգուց յաշխարհէն, ի կողմանէ յարեւելից բնակութիւնք նոցա. զի յորժամ հրեշտակ Տեառն աւետարանեաց զյղութիւնն սրբոյ կուսին՝ զոր յառաջն ասացաք. ի նոյն ժամայն գնացեալ ազդեաց նոցա ի ձեռն Հոգւոյն սրբոյ գալ նոցա յերկրպագութիւն նորածին մանկանն։ Եւ նոցա խորհուրդ առեալ ժողովեցան ի միասին, և աստեղն առաջնորդութեամբն եկեալ հասեալ նոցա զօրօք իւրեանց ի քաղաքն Երուսաղէմ զամիսս ինն ճանապարհորդեալ. և իջեալ նոցա շուրջ զքաղաքաւն, և կացեալ անդ զաւուրս երիս, իւրաքանչիւր ոք և թագաւորք իւրում իշխանութեան. թէպէտ և միմեանց եղբարք էին հարազատք որդիք թագաւորի, բայց ի բազում լեզուաց զօրք եկեալ էին զկնի նոցա։ Առաջին Թագաւորն Մելքոն որ ունէր զմուռն և զհալուէս, բեհեզս և ծիրանիս և այլ կտաւս պատանաց. և զգիրսն՝ զոր գրեալ էր մատամբն Աստուծոյ և կնքեալ։ Երկրորդ Թագաւորն Հնդկաց Գասպար որ ունէր զընծայս ի պատիւ մանկանն, զնարդոս մեծագին, զըստաշխն և կասիայ, զկինամոն, զկնդրուկն, զայլ ծխանելիս։ Երրորդ Թագաւորն Արաբացւոց Բաղդասար. որ ունէր ոսկի և արծաթ և ականս պատուականս, մեծագին շափիւղայ, մարգարիտս գեղեցիկս։

Եւ իբրեւ եկին ամենեքեան ի քաղաքն յԵրուսաղէմ, աստղն՝ որ առաջնորդէր նոցա, առ ժամայն ծածկեցաւ լոյսն. և ապա այնուհետեւ դադարեալ նոցա ի[1] տեղի յայրին։ Եւ բազմութիւնք զօրաց հեծելոցն և թագաւորքն ասեն ցմիմեանս. Զի՞նչ արասցուք այժմ, և կամ յո՞ երթիցուք ճանապարհ, ո՛չ գիտեմք. զի աստղըն առաջնորդեաց մեզ մինչեւ ցայսօր. և յայնժամ

1. Ճառընտիրն ԻԴ ունի զտեղի տունն։

անյայտ եղեալ պակասեցոյց[1] ի մէնջ: Ասեն մոգքն ցմիմեանս. Եկա՛յք հարցցուք վասն մանկանն, և ստուգիւ քննեսցուք եթէ ո՞ւր իցէ, և ապա երթիցուք զճանապարհս մեր: Ասեն միաբան. Այո՛, բարիոք ասէք զայս:

Իբրև ետես արքայն Հերովդէս զբազմութիւն զօրաց հեծելոցն՝ որ բռնութեամբ շուրջ զքաղաքաւն բընակեցան, յոյժ երկեաւ ի նոցանէ. ի միտս իւր եկեալ ասէ. Զի՞նչ են սոքա, որ աստ բնակեալ են բազում զօրօք և մեծաւ բռնութեամբ և գանձիւք և մեծաւ հարըստութեամբ լցեալ են, և ընչիւք փարթամութեամբ. և ոչ ոք ի նոցանէ առ մեզ մուտ և ել առնէ, և գըլխաւորք նոցա այնպէս կարի մեծ են և յաղթօղք, որք ոչ եկին սիրով առ մեզ: Ապա հրամայեաց արքայն կոչել զիշխանս և զմեծամեծս իւր, և խորհուրդ առնել ընդ միմեանս ասեն. զի՞նչ արասցուք վասն նոցա. զի արք զօրաւորք և բռնազլուխք են: Ասեն ցնա իշխանքն. Ո՛վ արքայ, հրամայեա՛ զգուշութեամբ պահել զքաղաքս զայս. զի մի՛ գաղտ ըմբռնեալ գողասցին զսա և բռնութեամբ առցեն, և ի գերութիւն վարեսցեն: Ասէ արքայ. Բարիոք ասէք. բայց փորձեսցուք սիրով՝ և ապա իմասցուք: Ասեն իշխանքն. Ո՛վ արքայ՝ հրամայեա զօրացն ամենեցուն ժողով առնել և զգուշութեամբ արիանալ, զգաստ լինել և պատրաստ: Եւ առաքեաց առ նոսա արս իմաստունս. զի երթեալ խօսեսցին ընդ նոսա և ստուգութեամբ քըննեսցեն զամենեսեան թէ ուստի՞ գան, կամ յո՞ երթան: Յայնժամ յարուցեալ գնացին յարքայէն իշխանքն արս երիս առ նոսա. և երկրպագեալ նոցա համբուրեցին զմիմեանս և նստան: Ասեն իշխանքն. Ո՛վ արք պատուականք և թագաւորք մեծամեծք, ասացէ՛ք մեզ զպատճառս գալստեան ձերոյ: Ասեն մոգքն. Եւ զի՞նչ խնդրէք ի մէնջ որ եկեալ էք հարցանել զմեզ. մեք ի հեռաւոր աշխարհէ եմք եկեալ՝ ի Պարսից, և կամիմք վաղիւն գնալ զճանապարհս մեր: Ասեն իշխանքն. Լուարո՛ւք մեզ սիրովն Աստուծոյ և ունկն դի՛ք. Թա-

1. Լաւագոյն էր յաւելուլ զայս բառ:

գաւորն մեր ի քաղաքիս է, և յորժամ նոսա զձեզ իջեալ աստ և տեսեալ, Մնայր գալստեան ձերոյ առ ինքն. և ցանկայր տեսանել զձեզ, ասել և խօսել և լսել բան ինչ ի ձէնջ. և դուք անփոյթ արարեալ ո՛չ կամեցարուք գալ առ նա: Եւ նա առաքեաց Նուիրակս ի խնդիր առ մերձ կոչել ի յարքունիս անդ, և մեծաւ պատուով քննել և իմանալ զխորհուրդս ձեր եթէ զի՞նչ խնդրէք: Ասեն մոգքն. Եւ զի՞նչ խնդրէ արքայն ձեր ի մէնջ. եթէ խնդրէ ի մէնջ բան ինչ հարցանել, ո՛չ ունիմք ասել ինչ բան զումեքէ, ո՛չ լսել և ո՛չ տեսանել: Ասեն իշխանքն. Ասացէ՛ք մեզ զայն, սիրո՞վ եկիք աստ, եթէ բռնութեամբ: Ասեն մոգքն. Յաշխարհէն մերմէ մինչեւ ի տեղիս եկեալ եմք ուրախութեամբ, և այդպէս քննութիւն բազում՝ որ ոչ է արարեալ մեզ. և դուք այժմ եկեալ էք աստ փորձել զմեզ: Ասեն իշխանքն. Հրամանաւն արքային եկեալ եմք տեսանել զձեզ, խօսել և լսել ի ձէնջ. և որչափ դուք օթեւանս արարեալ էք, հոտ անուշութեան խնկոց ելանէ ի ձէնջ և լցուցանէ զքաղաքս մեր. միթէ մեծագին վաճառակա՞ն էք, և կամ այլ մեծամեծք՝ Թագաւորաց սիրելիք. որ յամենայն ցանկալի ծաղկանց հոտոց վայելչութեամբ լցեալ էք. և կամիք ի տեղի ուրեք մեծութեան փոխանակել: Ասեն մոգքն. Ոչ այդպէս է զոր կարծէք. այլ մեք ոչինչ ունիմք վաճառելոց. բայց միայն զճանապարհն մեր, խնդրեմք: Ասեն իշխանքն. Զո՞ր ճանապարհ: Ասեն մոգքն. Զոր Տէր առաջնորդեաց մեզ արդարութեամբ յերկիր բարի. և մեք հրամանաւն Աստուծոյ միաբանեալ եկաք աստ. զի այս իններորդ ամիս է՝ որ ի ճանապարհի աստ եմք. և ապա կարացաք մինչեւ ցայսօր ի տեղիս ժամանել. և աստղն՝ որ առաջնորդէր մեզ և հանապազորդէր հետ մեզ, և ի յօթեւանս ժամանեալ անդ կացեալ ի վերայ մեր երեւէր: Եւ յորժամ փութացեալ զճանապարհն ընթանայաք՝ և աստղն զկնի մեր հետեւեալ առաջնորդէր մինչեւ ի տեղիս յայս. և այժմ ծածկեցաւ լոյսն ի յաչաց տեսութենէ մերմէ. և մեր ի տարակուսանս անկեալ ո՛չ գիտեմք զի՞նչ արասցուք:

Digitized by Google

Եւ գնացին իշխանքն պատմեցին Հերովդէի զամենայն ինչ, զոր լուան ի մոգուցն։ Յայնժամ յարուցեալ՝ եկն Հերովդէս առ մոգսն և ասէ ցնոսա. Զի՞նչ խնդրէք՝ որ յայդչափ ճանապարհ եկեալ էք յաշխարհս յայս բազում զօրօք և ընծայիւք։ Ասեն մոգքն. Յաղագս այնորիկ եկաք աստ և կամիմք հարցանել ընդ ձեզ. զի լուեալ եմք յաշխարհն մեր, եթէ որդի թագաւորի ծնանի յերկիրն Հրէաստանի, և եկաք զնա տեսանել և երկիր պագանել նմա։ Իբրև լուաւ զայս Հերովդէս՝ զարհուրեցաւ յոյժ, և երկեաւ ի բանէն, զոր ասացին։ Եւ ասէ ցնոսա. Յումմէ՞ լուայք վասն զոր ասէք դուք. և կամ ո՞ պատմեաց ձեզ։ Ասեն մոգքն. Ի նախահարցն անտի ունիմք զվկայութիւնս զայս գրով կնքեալ և պահեալ. և ի բազում ժամանակս սպասեալ միայն հարքն մեր ազգ առ ազգ և որդիք որդւոց իւրեանց մինչև եկեալ բանն առ մեզ կատարեցաւ։ Եւ ապա հրամանաւն Աստուծոյ ի ձեռն սրբոյ հրեշտակին յայտնեալ երևեցաւ մեզ. և եկաք ի տեղիս յայս զոր Տէր եցոյց մեզ։ Ասէ Հերովդէս. Ուստի՞ ունիք զվկայութիւնն զայն, զոր դուք միայն գիտէք։ Ասեն մոգքն. Մեր վկայութիւնն ոչ ի մարդկանէ և ո՛չ յումեքէ, այլ աստուածատուրք է հրամանս պատգամաց զոր խոստացաւ Տէր առնել որդւոց մարդկան, առ մեզ պահեալ կայր մինչև ցայսօր։ Ասէ Հերովդէս. Ուստի՞ է գիրն այն, որ ազգն ձեր միայն ունին, և այլ ոչ ոք։ Ասեն մոգքն. Այլ ազգ ո՛չ ոք գիտէ զայդ, ո՛չ լուեալ և ո՛չ իմացեալ. բայց միայն ազգն մեր որ գրով ունին զվկայութիւնս զայս. զի յետ ելանելոյն Ադամայ ի դրախտէն, և Կայենի սպանանելոյ զԱբել, ետ Տէր Աստուած Ադամայ զՍէթ որդի մխիթարութեան, և զթուղթս զայս ընդ նմա մատամբն Աստուծոյ գրեալ փակեալ և կնքեալ. և Սէթ առեալ ի հօրէ իւրմէ և ետ ցորդիս իւր. և որդիք որդւոց յազգս իւրեանց. և պատուէր առեալ նոցա պահել զթուղթս զգուշութեամբ մինչև ցՆոյ։ Եւ Նոյ ետ ի Սէմ որդին իւր, և որդիք՝ որդւոց իւրեանց. և յետ նոցա առեալ ետուն ցԱբրահամ. Աբրահամ ետ ի քահանա-

յապետն Մելքիսեթեկ. և անտի ազգ մեր ի Կիւրոս թագաւորն Պարսից։ Եւ հարքն մեր առեալ եդին ի սենեկի անդ պատուով, մինչեւ եկեալ Թուղթս եհաս առ մեզ. և մեք առեալ զգիրն զայն դիցուք առաջի նորընծայ արքայի որդւոյ թագաւորին Իսրայելի։

Իբրեւ լուաւ զայս Հերովդէս՝ զայրացեալ ի սիրտս իւր և ասէ. Ո՛չ թողից զձեզ ելանել աստի՝ մինչեւ ցուցէք զամենայն ինչս ձեր զոր ունիք։ Յայնժամ հրամայեաց ձեռն արկանել ի նոսա բռնութեամբ։ Եւ յանկարծակի շարժեցաւ ապարանք տանն, յորում նստեալ կային անդ բազմութիւնք մարդկան. ի չորից կողմանց սիւնք խախտեալ՝ և ամենայն շինուածք ապարանից անկեալ կործանեցան. և բազմութիւնք ժողովոյն՝ որ արտաքոյ դրանն էին, փախեան ի տեղւոջէ անտի, և որ ի ներքոյ շինուածոյն էին՝ անկեալ սատակեցան հոգիք իբրեւ եօթանասուն և երկուս. ընդ մեծամեծս և ընդ փոքունս։ Եւ զայս տեսեալ ամենեցուն որք անդ եկեալ էին, անկեալ առ ոտսն Հերովդէի՝ աղաչէին զնա և ասէին. Արձակեա զնոսա խաղաղութեամբ, զի երթիցեն զճանապարհս իւրեանց. Նոյնպէս և Արքեղայոս որդի նորա անկեալ առ ոտս հօրն աղաչէր զնա։ Եւ անօրէնն Հերովդէս հաւանեալ կամաց որդւոյ իւրոյ, արձակեաց զնոսա. և հրամայեաց սիրով կոչել առաջի իւր զմոգսն. և ասէ ցնոսա. Ասէք այն, զի՞նչ խնդրէք յինէն, զի արարից ձեզ։ Ասեն մոգքն միաբան. Ո՛չ ինչ պիտոյ է մեզ ի քէն իրս խնդրել, բայց միայն զայս։ Ա՛սացէք մեզ, ի յօրէնս ձեր զի՞նչ գրեալ է, ո՞րպէս ընթեռնուք։ Ասէ Հերովդէս. Զի՞նչ կամիք հարցանել, որ ասեմք։ Ասեն մոգքն. Ո՞ւր ծնանի Քրիստոս արքայն Հրէից։ Զայս իբրեւ լուաւ Հերովդէս՝ խռովեցաւ յոյժ՝ և ամենայն Երուսաղէմ ընդ նմա. և ժողովեալ զամենայն քահանայս և զդպիրսն ժողովրդեանն, հարցանէր ցնոսա. թէ ո՞ւր ծնանի Քրիստոսն։ Եւ նոքա ասեն. ի Բեթղեհէմ Հրէաստանի ի քաղաքս Դաւթի արքայի։ Ասէ Հերովդէս ցմոգսն. Երթա՛յք ստուգեցէք վասն մանկանն. և յորժամ գտանիցէք, փութով ա՛զդ արասջիք ինձ ի քա-

ղաքս յայսմիկ. զի ես երթեալ երկրպագից նմա: Զայս ասէր անօրէն բռնաւորն, զի նենգութեամբ գաղտ հարցեալ ի սուր անցուսցէ զմանուկն:

Եւ մոգքն նոյն ժամայն յարուցեալ երկրպագին Հերովդէի և ամենայն քաղաքին Երուսաղեմի. և գնացին զճանապարհս իւրեանց: Եւ ահա աստղն՝ զոր տեսին՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերայ՝ ուր էր մանուկն Յիսուս: Եւ նոքա խնդութեամբ հասեալ ի քաղաքն Բեթղեհէմ, և իջեալ իւրաքանչիւր յերիվարաց իւրոց. հարին յանկարծակի զփողս իւրեանց և զծնծղայս, զքնարս, զտաւիղս և զերգս նուագարանաց իւրոց, ի պատիւ նորընծայ մանկանն որդւոյ Թագաւորին Իսրայելի: Թագաւորքն և իշխանքն, և այլ բազմութիւն զօրացն երգս առեալ կաքաւէին. և ի ձայն մեծ ցնծութեամբ և օրհներգութեամբ ուրախ սրտիւ՝ օրհնէին զԱստուած, և գոհանային ըզՏեառնէ, որ արժանի եղեն հասանել և տեսանել զպատիւ մեծի աւուր խորհրդոյն այնմիկ, որ ցուցաւ նոցա: Իբրեւ զայն ամենայն ինչ տեսեալ Յովսեփու և Մարիամու՝ երկուցեալ ի թագաւորացն և ի զօրացն ամենեցուն[1], և ահաբեկ եղեալ նոցա, մտին ի յայրն, բազմեալ կայր յանբանից մսուրն: Իբրեւ տեսին զնոսա ամենայն իշխանքն և մեծամեծքն՝ ասեն ցնա. Տէր, ընդէ՞ր զարհուրեալ երկնչիս և փախստական լինիս ի մէնջ. զի մեք արդեօք մարդիկ եմք իբրեւ զձեզ: Ասէ Յովսէփ. Ուստի՞ էք եկեալ դուք այժմ, և կամ զի՞նչ խնդրէք աստ ի մէնջ, որ այսպէս բազում զօրօք եկեալ էք աստ: Ասեն մոգքն. Մեք ի հեռաւոր յերկրէ եմք եկեալ աստ, և եմք ի Պարսից, բազում ընծայիւք և պատարագօք. և ցանկամք տեսանել զնորածին մանուկն, զարքայն Հրէից՝ և երկրպագել նմա: Արդ եթէ գիտիցէք արդեօք զայն հաւաստեաւ, պատմեցէք մեզ ստուգապէս զտեղին, զի տեսցուք զնա:

1. ԻԴ. Ճառընտիրն ունի զայս օրինակ. ամենեցուն, փոխեալ յայրէ անտի, և մանուկն Յիսուս միայն մնաց յայրին՝ բազմեալ յանբանից մսուր

Զայս իբրեւ լուաւ Մարիամ, խնդութեամբ եմուտ ի յայրն եւ առեալ զմանուկն ի գիրկս իւր, ուրախութեամբ սրտիւ լցաւ. եւ գոհութեամբ օրհնէր եւ փառաւոր առնէր զԱստուած, եւ լռութեամբ նստեալ կայր անդ: Իսկ մոգքն կրկին անգամ հարցանէին ցՅովսէփ. Ո՞ պատուական ծեր, պատմեա՛ մեզ զայն ստուգութեամբ. գիտիցե՞ս արդեօք, զի տեսցուք զնորածին մանուկն: Եւ Յովսէփ մատամբն ցուցանէր զայրն ի հեռաստանէ. եւ մոգուցն խնդութեամբ հասեալ ի դուռն այրին, եւ տեսեալ զմանուկն յանբանից մսուրն եւ յերես անկեալ երկիր պագանէին նմա թագաւորքն եւ իշխանքն եւ մեծամեծքն, եւ այլ ամենայն զօրք բազմութեան ժողովոյն. եւ բերեալ մատուցանէին իւրաքանչիւր զնուէրս առաջի նորա: Եկն յառաջ Գասպար թագաւորն Հնդկաց, եւ բացեալ զնարդոս մեծագին, զստաշխ եւ զկասիայ, զկինամոն, զկնդրուկ եւ զայլ ծխանելիսն անուշահոտութեան իւղոց եւ խնկոց. եւ առժամայն հոտ անմահութեան ելից զայրն՝ յորում նստեալ էին անդ: Իսկ Բաղդասար թագաւորն Արաբացւոց բացեալ զգանձս մեծութեան իւրոյ, եւ տարեալ մատուցանէր առաջի նորա ոսկի եւ արծաթ, ակունս, մարգարիտ գեղեցիկ եւ շափիւղայ պատուական: Իսկ Մելդոն թագաւորն Պարսից բերեալ զմուռն, հալուէս, զբեհեզս եւ զծիրանիս եւ զայլ կտաւս պատանաց: Եւ իբրեւ մատուցին իւրաքանչիւր զընծայս իւրեանց ի պատիւ որդւոյ թագաւորին Իսրայելի. յայնժամ յարուցեալ թագաւորքն ի յայրէն առանձին բացուստ մեկուսի երեքեանն, եւ միաբանեալ երեքին նստան, եւ հարցանէին ցմիմեանս, եւ ասէին. Զարմանալի բանս եւ գործս էր զոր տեսաք աչօք մերովք. այսպիսի աղքատ եւ տընանկ գոլով յամենայն ընչից. ո՛չ տուն եւ ո՛չ յարկ եւ կամ տեղի հանգստեան, այլ անապատ եւ անմարդաբնակ վայրի, որ ոչ գոյր նոցա պէտս, եւ ո՛չ ծածկոյթ անձանց իւրեանց. զի՞նչ է գալս մեր ի հեռաստանէ՝ տեսանել եւ ճանաչել զնոսա. ասացէ՛ք մեզ զճշմարիտն. զի՞նչ նշան սքանչելեաց տեսաք անդ, եկայք պատմեսցուք միմեանց, եթէ զի՞նչ է այս որ երեւեցաւ մեզ:

Ասեն մոգքն. Եղբարք, բարիոք ասէք. մի մի պատմեմք զտեսիլ մեր։ Ասէ Գասպար Թագաւորն. Յորժամ զկնդրուկն տարայ մատուցի առաջի նորա, տեսի զնա մարմնով որդի Աստուծոյ բազմեալ յաթոռ փառաց, և զօրք անմարմինք սպասաւորէին նմա։ Ասէ Պաղտասար. Եւ ի մտանելն իմոյ՝ տեսի զնա նստեալ ի բարձրութեան գահոյից. և զօրք բազմութեան առաջի նորա՝ որք անկեալ երկիր պագանէին նմա։ Ասէ Մելքոն. Ես մարմնով տեսի զնա ի չարչարանս մեռեալ, դարձեալ յարուցեալ իսկ և կենդանի։ Զայս իբրեւ լուան Թագաւորքն ի միմեանց, հիացումն եղեալ զարմանային և ասեն. զի՞նչ են նոր սքանչելիքս, որ ցուցաւ մեզ, որ նման միմեանց ո՛չ են վկայութիւնքս. հաւատալի գործ զոր աչօք մերովք իսկ տեսանեմք։

Եւ ի վաղիւն յարուցեալ թագաւորքն, ասեն ցմիմեանս. Եկայք միաբան երթիցուք ի յայրն, և տեսցուք թէ այլ ինչ նշան երեւի մեզ։ Եւ գնացեալ Պաղտասար, այն որ առաջին զտեսիլն ո՛չ ետես, այլ որդի մարդոյ մարմնաւոր Թագաւորի յայտնեցաւ նմա։ Եւ Գասպար ետես զմանուկն բազմեալ ի յանբանից մսուր, և ետես զերկրորդ տեսիլն. և պատմեաց նոցա. եթէ զառաջին տեսիլն ո՛չ տեսի, այլ զքոյդ Պաղտասար, զոր ասացեր։ Յայնժամ եմուտ Մելքոն, և ետես զՅիսուս բազմեալ ի վերայ գահոյիցն. և զառաջին տեսիլն ո՛չ ետես, որ մեռեալ էր, և դարձեալ կենդանի ետես զնա՝ այլ զոր Գասպարն ետես զնա մարմնով Աստուած ծնեալ ի կուսէն. և վաղվաղակի խնդութեամբ գնաց Մելքոն, և պատմեաց եղբարցն։ Զայս տեսեալ Թագաւորացն ամենեցուն, և գնացեալ նոցա առանձինն միաբանեալ նստան. և սկսեալ միմեանց պատմեցին զտեսիլն, զոր ծանեան և իմացան։ Ասեն ցմիմեանս. Եղբարք, եկայք գնասցուք ի տեղի իջեւանի մերոյ։ Եւ վաղիւն դարձեալ մտցուք ի յայրն և հաւաստեաւ ստուգեսցուք զբանս, եթէ այն է՝ զոր Տէր եցոյց մեզ։ Եւ գնացեալ ի բնակութիւնս իւրեանց, կացեալ խնդութեամբ և ուրախութեամբ մինչեւ ցառաւօտն, և ի վաղիւն յարուցեալ գնացին մինչեւ ի

Digitized by Google

դուռն այրին, և մտեալ Թագաւորացն մի ըստ միոջէ տեսանէին, և ծանուցաւ նոցա։ Եւ նոքա նոյնպէս ցնծութեամբ սրտիւ բերկրեալ ուրախ լինէին։ Եւ եկեալ խնդութեամբ մեծաւ և սիրով պատմէին զօրացն ամենեցուն, եթէ արդարեւ այն Աստուած է նա և որդի Աստուծոյ. որ ըստ իւրաքանչիւր նուիրացն՝ զոր մատուցաք նմա, զնոյն տեսութիւն կերպարանացն երևեցաւ մեզ. և զողջոյն և զպատիւս մեր սիրով և խաղաղութեամբ ընկալաւ ի մէնջ. և հաւատացին Թագաւորքն և իշխանքն և ամենայն բազմութիւնք զօրացն, և ժողովն՝ որք էին անդ։

Եւ դարձեալ Մելքոն Թագաւորն առեալ զգիր կտակին, զոր ունէր ընդ իւր պահեալ յառաջին նախահարցն անտի՝ որ ասացաք, և տարեալ մատուցանէր առաջի մանկանն և ասէր. Ահա նամակ գրոյն, զոր կնքեալ և փակեալ ետուր մեզ ի պահեստի, ա՛ռ և ընթերցիր զգիրս հաւաստեաւ զոր գրեալ ես։ Եւ գիր գրոյն՝ որ գրեալ և կնքեալ կայր ի պահեստի, զոր մոգքն ո՛չ համարձակեցան բանալ զգիրն և տալ ումեք ընթեռնուլ քահանայիցն և կամ ժողովրդեանն լսել. զի ո՛չ էին նոքա արժանի լինել որդի արքայութեան, զի ուրացողք և խաչողք լինելոց էին փրկչին։

Արդ յետ ելանելոյն Ադամայ ի դրախտէն, և Կայենի՝ որ եսպան զԱբէլ, և սուգ առեալ Ադամ ի վերայ մահուան որդւոյ իւրոյ՝ քան զելանելն նմա ի դրախտէն. և ետ Տէր Աստուած՝ Ադամայ որդի զՍէթ մխիթարութեան. զի Ադամ յառաջ ցանկացաւ աստուածանալ, և Աստուած խորհեցաւ մարդանալ վասն առաւել գթոյ և մարդասիրութեան։ Եդ Աստուած երդումն ընդ նախահայրն, իւր միջնորդութեամբ գրել գիր և կնքել մատամբն իւրով ոսկէգիր ի վերայ մագաղաթի, եթէ. Ի վեց հազար ամի օր վեցերրորդի առաքեմ զմիածին որդի իմ որդի մարդոյ, և զքեզ դարձեալ վերստին յառաջին փառսն կանգնեցից։ Եւ յայնժամ եղիցիս դու Ադամ անմահացեալ մարմնով՝ աստուած, ընդ Աստուած միաւորեալ. իբրեւ զմի ի մէնջ ճանաչել զբարի և զչար։ Այս է գիրն, զոր գրեալ մա-

Digitized by Google

տամբն Աստուծոյ կնքեալ և փակեալ, զոր մատուցին մոգքն առաջի Յիսուսի։ Արդ եղեւ կատարեալն զուխտ և զխնդրուածս Թագաւորացն, իշխանաց և ամենայն զօրացն. և կացին ի յայրն աւուրս երիս։ Խորհուրդ առեալ Թագաւորացն՝ ասեն. Եկա՛յք միաբան երթիցուք և երկիր պագցուք և խոստովանեսցուք զնա Աստուած. և դարձեալ երթիցուք խաղաղութեամբ զճանապարհս մեր։ Եւ նոցա հաւանեալ կամացն իւրեանց, յարուցեալ ամենեքեան գնացին ի յայրն, և երկիր պագին Յիսուսի. և խոստովան եղեն, եթէ այն Աստուած ես դու և որդի Աստուծոյ։ Եւ ելեալ նոցա ի յայրէն՝ ցնծութեամբ և ուրախութեամբ փառաւոր առնէին զԱստուած։ Եւ ընդ այգն ընդ առաւօտն ի լուսանալ միաշաբաթին՝ յորում էր տեբէթ ամսոյ քսան և հինգ և յունվարի երկոտասան, պատրաստ եղեն գնալ ի յաշխարհն իւրեանց։ Ապա խորհուրդ առեալ նոցա գնալ առ Հերովդէս ի քաղաքն յԵրուսաղէմ, և նոյն ժամայն եղեւ առ նոսա ձայն բարբառոյ՝ որ ասէր. Մի՛ երթայք առ Հերովդէս անօրէն բռնաւորն. զի ի խնդիր է զմանուկդ զայդ սպանանելոյ։ Եւ զայս լուեալ մոգուցն և զօրացն ամենեցուն ոչ գնացին. այլ գնացին խնդութեամբն ընդ ճանապարհս զոր առաջնորդեաց նոցա Տէր ի յաշխարհն իւրեանց, փառաւորելով զՔրիստոս Աստուածն ամենայնի։

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԺԲ.

*Վասն քառասնօրեայ գնալոյն ի տաճարն բազում ընծայիւք ։*

Յետ այսր ամենայնի եղելոցս որ գործեցաւ, Յովսէփ և Մարիամ ի յայրն կացեալ ի ծածուկ հանդերձ մանկամբն գաղտ, զի մի՛ ոք գիտասցէ. և զամենայն տուացուածս զանձուց՝ զոր բերին մոգքն՝ տարեալ Յովսեփայ թագոյց ի յայրն զգուշութեամբ ։ Եւ երթեալ Յովսէփ օր ըստ օրէ հանապազ գաղտ շրջէր ի քաղաք, ի գիւղ և յագարակ, և ամենայն պէտս կարեաց մարմնոյ իւրեանց անդր պատրաստէին, և ո՛չ ունէին յումեքէ ահ և երկիւղ, հրամանաւն Աստուծոյ. զի Բեթղեհէմ սակաւ մի հեռագոյն էր ի քաղաքէ յԵրուսաղեմէ՝ երկոտասան մղոնաւ, և շուրջ զսահմանօք նոցա աւերակք և անմարդաբնակ ։ Եւ յորժամ Յովսէփ երթայր վասն կարեաց պիտոյից ի տեղի ուրեք՝ զՈվսէ որդին իւր, որ է կրտսերագոյն քան զայլ եղբարսն, զկնի հօր իւրոյ եկեալ էր, և զնա կացոյց տեսուչ և սպասաւոր սրբոյ կուսին Մարեմու ։ Եւ իբրեւ լցան աւուրք մանկանն ութօրեայ, ասէ Յովսէփ ցՄարիամ. Զի՞նչ արասցուք զմանուկս զայս, զի օրէն է առնուլ ութօրեայ զթլփատութիւն ։ Ասէ Մարիամ. Կամք քո լիցին, արա որպէս և կամիս ։ Եւ յարուցեալ Յովսէփ ի ծածուկ գնաց ի քաղաքն յԵրուսաղէմ. և առեալ այր մի իմաստուն ընդ իւր, որ էր յոյժ բարի ողորմած և երկիւղած յԱստուծոյ, և էր ինքն հմուտ և ծանօթ աստուածային օրինացն, որում անունն էր Յովէլ. և եկին ի յայրն անդ ուր մանուկն էր ։ Եւ իբ-

Digitized by Google

րեւ մերձեցոյց զսուրն, ոչ եղեւ ի նմա հատուածն[1] մարմնոյ նորա։ Եւ նոցա զայն տեսեալ, և հիացումն եղեալ յոյժ, ասէին. Ահա եկաց արիւն մանկանս այսմիկ. և անուն նորա կոչեցաւ Յիսուս, որ անուանեցաւ յառաջ ի հրեշտակէն։

Եւ կացեալ Յովսէփ և Մարիամ ի յայրն. և մանուկն Յիսուս աճէր և զարգանայր շնորհօք և իմաստութեամբ. մինչեւ հասեալ նոցա ի գլուխ քառասնօրեայ աւուրն ի թագստեան, զի մի ոք գիտասցէ։ Արդ, յորժամ գնացին մոգքն յաշխարհն իւրեանց, և ոչ դարձան առ Հերովդէս, ապա ի միտս իւր եկեալ ասէ. Եթէ մոգքն՝ որ գնացին՝ ո՛չ դարձան այսր, վաճառականք էին նոքա և թագաւորաց մերձակայ. վասն այնորիկ՝ ո՛չ յայտնեցին ինձ զխորհուրդս իւրեանց, այլ երկեան յինէն եթէ առցուք բազում ինչ ի նոցանէ. վասն այնորիկ սուտութեամբ և պատճառանօք փախեան յինէն, զի մի՛ չար ինչ արարից նոցա։ Եւ զայս ասացեալ Հերովդէս, յարուցեալ ի քաղաքէն յԵրուսաղեմէ և եկեալ յայնժամ ի Հրէաստան ի կողմանս Աքայիա։ Եւ առ ժամայն մոռացաւ զբանն, զոր խնդրէր մանկանն չար ինչ առնել, քահանայիցն և ամենայն ժողովրդեանն անփոյթ արարեալ՝ մոռացումն եղեւ բանին։ Ապա առեալ Յովսէփ զՄարիամ և զՅիսուս գաղտ՝ ընծայս բազումս և զնուէրս պատարագացն՝ զոր ի մոգուցն ընկալեալ էին. և եկեալ մտեալ ի քաղաքն յԵրուսաղէմ, և տարեալ զմանուկն Յիսուս առաջի քահանայիցն՝ մատուցանէին ի տաճարն սրբութեան, ըստ օրինի աւանդութեան իւրեանց, զոյգս տատրակաց կամ երկուս ձագս աղաւնեաց։ Եւ առեալ Սիմէոն ծերունին ի գիրկս իւր, և ընկալեալ զօծեալն՝ հայցէր ի Տեառնէ զարձակումն և զաւանդումն հոգւոյն՝ արձակիլ ի խաղաղութեան։ Զոր Սիմէոն[2] մարգարէութեամբ հոգւովն ասէր վասն Յիսուսի. Սա կայ ի գլորումն և ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայելի։ Արդ, յետ կատարման նուի-

1. Յօր. էր հատուածոյն, ուղղեցաք ըստ Բ. օր. հատուածն։
2. Ըստ Բ. օր. յաւելու Սէմէոն։

րանաց և պատգամացն, առեալ Յովսէփ զՄարիամ և զՅիսուս և դարձաւ անդրէն ի քաղաքն Բեթղեհէմ. և մտեալ նոցա ի յայրն և կացեալ բազում աւուրս, մինչեւ ի գլուխ տարւոյն, յայտնի ո՛չ այլ ի ծածուկ՝ ի յահէ անօրէն արքայէն Հերովդէէ։ Արդ իբրեւ եղեւ Յիսուս իններորդ ամսոյ զատուցեալ ի ստեանէ մօր իւրոյ, ո՛չ ճաշակէր և կերակրէր իրս ինչ ի ստեանց մօրն։ Եւ նոցա զայն տեսեալ զարհուրեալ լինէին. հարցանէին ցմիմեանս և ասէին. Զի՞նչ է այս որ ո՛չ ուտէ և ոչ ըմպէ և ո՛չ ննջէ. բայց միայն զգուշութեամբ և արթնութեամբ լինի. և ոչ ոք կարէր իմանալ զկամս իշխանութեան իւրոյ զոր առնէր նմա։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

**Վասն Հերովդէի և կոտորելոյ նորին զմանկունս ի Բեթղեհէմ և խաբելոյ ի մոգուցն։**

Եւ իբրեւ եղեւ կոտորումն նոցա ի գլուխ ամին, մատուցեալ այր մի անօրէն ի քաղաքէ անտի, որում անունն էր Բեգովր՝ պատմեաց Հերովդէի անօրէն արքային և ասէ. Մոգքն՝ զոր առաքեցեր ի Բեթղեհէմ, և պատուէր արարեր նոցա գալ առ քեզ, և ո՛չ եկին այսր, այլ գնացին գտին զնորածին մանուկն, որք ասէին՝ եթէ որդի թագաւորի է, և մատուցին նմա զամենայն ինչս և զընծայս իւրեանց՝ զոր ունէին. և ընդ այլ ճանապարհաւ գնացին յաշխարհն իւրեանց։ Իբրեւ լուաւ զայս Հերովդէս, եթէ խաբեցաւ ի մոգուցն, հրամայեաց կոչել զիշխանս և զմեծամեծս իւր և ասէ ցնոսա. Զի՞նչ արասցուք. զի արքն այնք զմեզ խաբէութեամբ ծաղր և այպն արարեալ գնացին ի մէնջ փախստեամբ. զի՞նչ եղեւ մանուկն այն, կամ ո՞ւր

Digitized by Google

թագուցեալ է յինէն ի ծածուկ գաղտ, որ ո՛չ յայտնեցան նոքա ումեք ի մարդկանէ· եկա՛յք առաքեսցուք արս զինուորս ի Բեթղեհէմ· զի գտեալ զնա կալցեն և սպանցեն զհայր և զմայր նորա։ Ասեն իշխանքն· Ո՞վ արքայ, լո՛ւր մեզ· Բեթղեհէմ քաղաքն աւերեալ է· և այս բազում աւուրք է որ եղեւ ընդ այդ· ո՛չ իցէ ի տեղւոջն յայնմիկ· այլ գնացեալ լինի փախըստեամբ յաշխարհ հեռաւոր։ Եւ զայս ասացեալ նմա իշխանքն հրամանաւն Աստուծոյ, անփոյթ արարեալ զբանն վասն նոցա ի տեսութենէ հոգւոյն սրբոյ, ո՛չ յայտնեցան նոքա ումեք· քանզի անդ էին բնակեալ։ Իսկ անօրէն ամբարիշտն զայրացեալ ի սիրտ իւր, ո՛չ գիտէր՝ զի՛նչ առնէր։ Ասեն իշխանքն· Ո՞վ արքայ՝ մի՛ այդպէս տրտմիր և բարկութեամբ խռովեցուցաներ զսիրտ քո· հրամայեա՛ զոր ինչ կամիս· զի արասցուք։ Ասէ արքայն· Այո՛, գիտեմ զի՛նչ արարից· այլ դուք միայն պատրաստ լերուք։ Եւ հրամայեաց կոչել արս զօրագլուխս, և զպետս գաւառաց· և առաքեաց ընդ ամենայն յաշխարհ իւրոյ տէրութեանն խնդրել զՅիսուս, և ոչ գտին։ Եւ դարձեալ պատմեցին արքային· եթէ շրջեցաք ընդ ամենայն գաւառս Հրէաստանի և ո՛չ գտաք զնա։ Ապա հրաման ետ զօրացն իւրոց ութ և տասն հազարապետութեան, ընթանալ ընդ աշխարհն իւր տէրութեան։ Եւ պատուէր ետ նոցա և ասէր· Մի՛ ողորմեսջիք մանկանց տղայոց, և մի՛ լալոյ հարց և մարց իւրեանց· և մի՛ գանձիւք և կամ խաբէութեամբ երդմանց հաւանեսջիք, և կամ իրաց կաշառաց ակն ածիցէք· այլ ուր և գտանիցէք զմանկունս յերկեմենից մինչեւ ի խոնարհ, զմանուկս նոցա մաշեցէ՛ք ի սուր սուսերի։ Յայնժամ ժողովեցան առ նա ամենայն զօրավարք և զօրագլուխք· հազարք հազարաց, սուսերօք և զինուք· և ելեալ շրջեցան ընդ ամենայն տեղիս· և կոտորեցին զամենայն մանկունս զոր և գտին յութսուն և երեք գեղջէ, որք իբրեւ հազար երեք հարիւր վաթսուն։ Եւ զայս արարեալ անօրէն բռնաւորն վասն Յիսուսի· զի թերեւս պատահեսցի Յիսուս ընդ նոսա։ Իսկ Յովսէփ և Մարիամ լուան զայս ամենայն,

Digitized by Google

երկուցեալ ի յահէ անօրէն արքային և ի զօրաց նորա. և առեալ Մարիամ զմանուկն Յիսուս, պատեաց զնա ի խանձարուրս՝ և եդ ի մսուր եզանց թագուցեալ. և նոցա ելեալ գաղտ ի յաւերակս քաղաքին, նստեալ հայէին. և ոչ ոք ի մարդկանէ առ նոսա գնացեալ. զի յորժամ տեսանէին զնոսա, զանց առնէին և ո՛չ տեսանէին։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

*Վասն սպանման Հերովդի զԶաքարիա քահանայապետն ի տաճարին։*

Իսկ անօրէն բռնաւորն իբրեւ ո՛չ կարաց իրաց հնարս գտանել, ապա խնդիր արարեալ առ Զաքարիա վասն Յովհաննու, եթէ որդի նորա միամօր է. և նա թագաւորելոց է ի վերայ Իսրայելի. առաքեաց առ նա արս զինուորս խնդրել զմանուկն Յովհաննէս։ Ասէ նա ցԶաքարիա. Լուեալ եմ ի բազմաց, եթէ որդի քո թագաւորելոց է ի վերայ աշխարհիս Հրէաստանի, ցոյց ինձ զնա, զի տեսից։ Իսկ Զաքարիա իբրեւ լուաւ զայս ի յանօրէն ամբարշտէն, ասէ ցնա. Կենդանի է Տէր, որ ո՛չ գիտեմ, զի՞նչ խօսիս։ Զայս իբրեւ լուաւ Եղիսաբեթ առեալ զմանուկն Յովհաննէս գնաց փախստական ի լեառն յանապատ տեղի, և անդ խնդրէր թագուցանել զանձն մանկանն։ Ապա յոգւոց հանեալ՝ լայր դառնապէս և հեղոյր զարտասուս իւր առաջի Տեառն, և ասէր. Տէր Աստուած հարցն մերոց, Աստուած Իսրայելի. լո՛ւր աղաչանաց ծառայի քո, և արա՛ առ իս զգութ մարդասիրութեան քո. և փրկեա զանձն իմ ի ձեռաց Հերովդէի, և յանօրէն չան կատաղելոյ զօրաց նորա։ Բացցի երկիր և կլցէ զմայրն

հանդերձ մանկամբն իւրով, և մի՛ հայեսցին աչք իմ տեսանել զմահ որդւոյ իմոյ։ Եւ զայս ասացեալ՝ առ ժամայն պատառեցաւ լեառն և ընկալաւ զնա. և ծածկեաց զմայրն հանդերձ մանկամբն իւրով. և եկն ամպ մի լուսաւոր և հովանի եղեւ նոցա, և պահեաց զնոսա անվնաս։ Եւ հրեշտակ Տեառն իջեալ ի վերայ նոցա պահապան և հովանի պահէր զնոսա։

Իսկ Հերովդէս կրկին անգամ առաքեաց նուիրակս առ Զաքարիա և ասէ. Ասա՛ ինձ, ո՞ւր է թագուցեալ որդին քո՝ յայտնեա՛ ինձ այժմ, զի տեսից։ Ասէ Զաքարիա. Ես սպասաւոր եմ ի տաճարիս, և տուն իմ ո՛չ է աստ, այլ ի լեառնակողմն Գալիլեացւոց. ո՛չ գիտեմ ես թէ զի՞նչ եղեւ մայրն հանդերձ մանկամբն։ Եւ գնացեալ նուիրակն պատմեաց զասացեալն Զաքարիայի։ Դարձեալ առաքեաց առ զօրավարս և ասէ. Երթա՛յք ասացէք Զաքարիայի, եթէ, այսպէս ասէ թագաւորն Իսրայելի. Եթէ տարեալ թագոյց զորդին իւր յինէն, և ո՛չ կամեցաւ յայտնի ցուցանել ինձ. զի գիտեմ որդին իւր թագաւորելոց է ի վերայ տանն Իսրայելի. մի՛թէ կարիցե՞ս բանիւք վճարել յինէն. և կամ ստութեամբ պատճառանօք անցուցանել զիս. ո՛չ այդպէս է. եթէ ո՛չ կամաւ տացես այլ բռնութեամբ առից զնա, և զքեզ ընդ նմին կորուսից։ Ասէ Զաքարիա. Կենդանի է Տէր, որ ո՛չ գիտեմ զմայրն և զմանուկն նորա, թէ զի՞նչ եղեւ։ Եւ զասացեալն Զաքարիայի գնացին պատմեցին Հերովդէի։ Իսկ անօրէն բանաւորն լցեալ ամենայն անիրաւութեամբ, դարձեալ առաքեաց հրաւիրակս և ասէ, թէ. Ահա երրորդ անգամ առաքեցի առ քեզ զհրամանս իմ և դու ո՛չ լուար ինձ և ո՛չ երկեար ի սպառնալեաց իմոց. ո՞չ գիտես եթէ արիւն քո ընդ ձեռամբ իմով իցէ. և ոչ ոք է, որ փրկէ զքեզ. և ո՛չ այն՝ յոր յուսացեալ ես։ Եւ իբրեւ եկեալ պատմեցին Զաքարիայի, ասէ Զաքարիա. Գիտեմ որ խնդիր ես դու արեան իմոյ, և կամիս հեղուլ զարիւնն իմ ի տարապարտուց. այլ թէպէտ և զմարմինն իմ դառն մահուամբ կորուսանես, բայց զհոգիս իմ Տէր ընկալցի, այն որ արար և ստեղծ զիս։

Եւ զայս տեսեալ Զաքարիա, գնացեալ պատմեցին Հերովդի։ Իսկ անօրէնն առ առաւել չարութեան սրտի իւրոյ՝ ոչինչ ետ պատասխանի։ Եւ ի նմին գիշերի առաքեաց անօրէն բռնաւորն արս զինուորս, և մտեալ գաղտ ի տաճար անդ, և սպան զԶաքարիա մերձ առ սեղանոյն ի խորանին վկայութեան. և ո՛չ ոք իմացաւ զնա ի քահանայից կամ ի ժողովրդենէ։ Այլ ի ժամու պաշտաման աղօթիցն սպասեալ մնային և խնդրէին տեսանել զնա և ոչ գտին. ապա ի լուսանալ առաւօտեան՝ քահանայից և ժողովրդեանն ժողովեալ ի ժամ արձակման աղօթիցն՝ գալ ողջոյն տալ միմեանց, և ասէին. Զի՞նչ եղեւ քահանայապետն Զաքարիա, ո՞ւր իցէ. զարմանային ընդ յամել Նորա և ասէին. Առանձին աղօթս մատուցանէ, և կամ տեսիլ իմն ետես ի տաճարին։ Իսկ մի ոմն ի քահանայից՝ որում անունն էր Փիլիպպէ, սա համարձակութեամբ եմուտ ի սրբութիւնս սրբութեանցն, և տեսանէր զարիւնն մածեալ առ սեղանոյն Աստուծոյ։ Եւ ահա ձայն բարբառոյ գայր ի խորանէն անտի, որ ասէր, եթէ. Հեղաւ արիւնն անբիծ ի տարապարտուց. և մի՛ ջնջեսցի յորդւոցն տանն Իսրայէլի, մինչեւ եկեսցէ վրէժխնդրութիւն ամենեցուն։ Իբրեւ զայս տեսեալ քահանայիցն և այլ բազմութեանց ժողովոյն՝ պատառեցին զհանդերձս իւրեանց, և հող ընդ գլխոյն արկեալ՝ ասէին. Վա՜յ մեզ, և եղուկ ծնողաց մերոց, որ յայսպիսի կորուստ և ի նախատինս մատնեցաք ամենեքեան։ Եւ մտեալ քահանայքն ի խորանն անդ, տեսանէին զարիւն մածեալ առ սեղանոյն Աստուծոյ որպէս զքար, և զմարմինն ո՛չ գտին. և զահի հարեալ ասեն միմեանց զկորուստ անձանց իւրեանց որ գործեցաւ. և ասէին, զի՞նչ եղեւ մարմին Նորա որ ոչ յայտնեցաւ ումեք. շրջեցան ընդ ամենայն տեղիս խնդրել զնա և ոչ գտին. կարծէին ամենեքեան ի միտս իւրեանց, եթէ գաղտ ոք գողացաւ զմարմինն Նորա ի մարդկանէ, և տարեալ ի տեղի ուրեք թաղուցին զնա։ Ապա սուգ առեալ մեծ ի վերայ Նորա, լացին զնա որդիքն Իսրայէլի զաւուրս երեսուն, և ի բազում տեղիս քննեցին և ո՛չ գտին զմարմին Նորա։ Կատարումն Զաքարիայի այսպէս եղեւ։

## ԳԼՈՒԽ ԺԵ.

*Վասն հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ՝ գնալ նոցա փախստական ի ձեռաց չար Հերովդէի յերկիրն յԵգիպտոս։*

Յարուցեալ Յովսէփ վաղվաղակի՝ առ զմանուկն և զմայրն իւր և գնաց փախստական յԱսկողոն որ անուանեալ կոչի Յասխալոն, քաղաք մերձ առ սահմանօքն յՈվկիանոսի ծովուն. և անտի ի Քեբրոն, և անդ կացեալ նոցա ի ծածուկ ամիսս վեց։ Եւ երթայր ինքն ոտիւքն ի վերայ երկրի, և գայր խաղալիս անկանէր ի գիրկս մօրն իւրոյ. և նա խանդաղատելով բարձեալ ի վերայ բազկաց իւրոց, գգուէր և գոհանալով փառաւոր առնէր զԱստուած։

Իսկ ի քաղաքէն ոմանք եկեալ պատմեցին Հերովդէի, եթէ մանուկն Յիսուս կենդանի է. ահաւասիկ է ի Քեբրոնն քաղաքի։ Եւ առաքեաց դեսպան գաղտ առ գլխաւորս քաղաքին, զի նենգութեամբ կալցեն ըզՅիսուս և սպանցեն։ Իբրեւ զայս իմացեալ Յովսեփու և Մարիամու՝ պատրաստեցին զանձինս իւրեանց ելանել անտի և գնալ յԵգիպտոս։ Եւ ելեալ գաղտ փախըստական ի քաղաքէն գնային զճանապարհաւն. և բազում օթեւանս արարեալ նոցա և ի տեղի ուր իջեւանս առնէին, ջուր հանէր յաւազանէն մանուկն Յիսուս և տայր ըմպել նոցա. մինչեւ հասեալ նոցա յերկիրն Եգիպտացւոց ի դաշտին Տայանու. և իջեալ անտի ի քաղաք մի, ի բազում աւուրս անդ լինէին և կացեալ նոցա անդ ամիսս վեց. և Յիսուս էր ամաց երկու։

Եւ յարուցեալ անտի՝ եկին մօտ առ սահմանս Ն-

գիպտոսի, ի քաղաք մի, որ Խարհէ կոչի, ի պաղատ մի մեծ Թագաւորանիստ, որ է տեղի ապարանից. և բերդիւ բարձրաւանդակ գեղեցիկ և վայելուչ նկարեալ ազգի ազգի տեսակօք և յօրինեալ. զոր Աղեքսանդր Թագաւորն յառաջ շինեալ էր յաւուրս իշխանութեան իւրոյ։ Եւ անդ կացեալ նոցա ամիսս չորս, մինչեւ եղեւ Յիսուս երկու ամաց և չորս ամսոց։ Եւ ելեալ Յիսուս երթայր և շրջէր ընդ մանկունս և ընդ տղայսն փոքրագոյն խաղ արկանել ընդ նոսա և խօսակից լինել. և առեալ հանէր զնոսա ի բարձրաւանդակ տեղիս ի յերդիք կամ ի պատուհան՝ ընդ որ նշոյլք արեգական մտանէր, և ասէր. Ո՞վ ոք ի ձէնջ կարիցէ գիրկս արկանել նշուլից լուսոյն, և իջանել անտի ի վայր՝ և ո՛չ վնասել։ Եւ նոքա ասեն. Ոչ ոք ի մէնջ կարիցէ առնել զայդ։ Ասէ Յիսուս. Հայեցարուք ամենեքեանդ և տեսէք. և գիրկս արկեալ Յիսուս շառաւիղից արեգականն մանրամաղ փոշոյն այնորիկ և գայր հասանէր վերուստ ի վայր, և ոչ վնասէր։ Եւ զայն տեսեալ տղայոցն ամենեցուն՝ որք անդ էին ի քաղաքին, զգործսն զոր առնէր Յիսուս. և որք տեսեալ լսէին, հիացեալ զարմանային։ Իսկ Յովսեփայ և Մարիամու լուեալ զբանս զայս, և երկուցեալ նոցա եկեալ ի քաղաքն յայնմիկ վասն մանկանն. զի մի՛ ոք գիտասցէ։ Եւ ելեալ գաղտ ի գիշերի և առեալ զՅիսուս գնացին փախստական ի տեղւոջէ անտի. և եկեալ հասին ի քաղաքն յԵգիպտոս. ուր ամենայն բազմութիւն մարդկան ժողովեալ էին. և քաղաքն այն՝ մեծ յոյժ և կարի բարձր պարըսպաւ։

Եւ ի մտանելն նոցա ի ներքս՝ յայս կոյս արարեալ էին Թըլըսըմ. և յորժամ փորձութիւն կամ աւերումն հասանէր ի թշնամեաց յերկիրն յայն. նա Թըլըսըմներն յառաջ հաւասար ձայն արկանէին քաղաքին. և որք լսէինն բազմաց զձայն Թըլըսըմոց, ճանաչէին ի ձայնէն և իմանային զոր ինչ գալոց էր յաշխարհն յայն։ Յառաջին դրան պարսպին կային երկու արծիւք երկաթէ, և ժանիք նոցա պղնձէ, արու և էգ. մինն յաջմէ և միւսն յահեկէ։ Եւ յերկրորդ

Digitized by Google

դրան՝ կաւեղէն և խեցեղէն գազանք, միոյն կողմն արջոյ, և միւսոյն առիւծոյ. և այլք գազանք քարեղէն և փայտեղէն։ Ցերրորդ դրանն՝ երիվար մի պղնձէ. և ի վերայ պղնձէ երիվարին՝ պղնձէ թագաւորի պատկեր մի. և ի ձեռին իւրում արծիւ մի պղնձէ։ Իբրեւ մերձ եղեւ Յիսուս մտանել ի ներքս դրան քաղաքին, յանկարծակի գոչեցին թըլըրըմներն ղօղանջելով միաբան. և այլ ամենայն անշունչք պատկերք կռոց յել և յելս առնէին. և բագինք մեհենիցն զաղաղակ բարձին, մինչեւ քաղաքն ամենայն ի հիմանէն շարժեցաւ, և մարդիկ յահէն և յերկիւղէն ոչ կարէին կեալ։ Եւ ի նոյն ժամայն ի գոչել երկու առիւծոցն՝ հնչեաց արծիւն, խխնչեաց երիվարն, և ձայն արձակեաց թագաւորն. որ էր պղնձէ՝ որ ի ձեռին արծիւ ունէր. եթէ. Լուարո՛ւք ամենեքին առհասարակ, և պատրաստ կացէք. զի թագաւոր ոմն որդի արքայի մեծի եմուտ զօրօք բազմօք ի քաղաքս յայս։ Իբրեւ լուան ամենեքին փութով բազում զօրօք եկեալ հասեալ զինուք ի վերայ պարսպին, հայէին յայս կոյս և յայն կոյս, և ոչինչ տեսանէին. և ի միտս իւրեանց եկեալ՝ զարմանային. եթէ զի՞նչ է բարբառ աղաղակիս՝ որ եղեւ առ մեզ. ո՞ ետես կամ ո՞ լուաւ, եթէ որդի թագաւորի եմուտ ի քաղաքս յայս։ Յայնժամ շրջեցան նոքա ընդ ամենայն տեղիս և ոչինչ տեսին. բայց միայն գտին զՅովսէփ և զՄարիամ և զՅիսուս ի տան միում. և կալան զՅովսէփ տարան ի մէջ հրապարակին, և ասեն ցնա. Ասա՛ մեզ ծե՛ր դու. ուստի՞ ես եկեալ ի քաղաքս. կամ յո՞ ազգէ ես։ Ասէ Յովսէփ. Յերկրէն Հրէաստանի ի քաղաքէն յԵրուսաղեմէ։ Ասեն ցնա. Ասա՛ մեզ զճշմարիտն, ե՞րբ եկիր աստ։ Ասէ Յովսէփ. Այս երրորդ օր է, որ եկեալ եմ ի քաղաքս յայս։ Ասեն ցնա. Եւ ո՛չ ես տեսեալ ի ճանապարհին յորում գայիր՝ թագաւոր ոմն որդի արքայի, որ զօրօքն իւր եկն յերկիրս յայս։ Ասէ Յովսէփ. Ո՛չ եմ տեսեալ։ Ասեն ցնա. Ապա ո՞րպէս եկիր յայս բազում անջրդի ճանապարհիս։ Ասէ Յովսէփ. Զկնի ընկերաց գայի տամբ և ընտանեօք, երբեմն միայն։ Ա-

սեն բազմութիւնքն. Գիտեմք զի աղքատ ոմն ես ծեր և օտարական, հաստատուն այր. և կամիմք քննել և իմանալ. մի՛ մեղադիր լինիր մեզ, զի նշան իմն երեւեցաւ մեզ այսօր, և մեք ամենեքինս հիացեալ կամք։ Եւ զայս ասացեալ նոցա՝ թողին և գնացին։ Եւ եղեւ ի մտանել Յովսեփայ ի քաղաք մի, և հանդիպեցաւ իջեւանք նորա մերձ առ մեհեանս կռոցն Ապողոնի. և անդ կացեալ յաւուրս բազում։ Եւ ի միում աւուր հայեցեալ Յիսուս՝ տեսանէ՛ր զտուն կռոցն այնպէս մեծաւ լայնութեամբ. և բարձրութիւն նորա իբրեւ փոքր քաղաքի մի։ Ասէ Յիսուս ցմայր իւր. Պատմեա՛ ինձ և տուր ինձ պատասխանի զոր ինչ հարցից քեզ։ Ասէ ցնա Մարիամ. Ասա՛ ինձ որդեակ, զի՞նչ խնդրես։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է այն շինուածք բարձր, և լայնութիւն նորա այնչափ մեծ։ Ասէ Մարիամ. Ո՛րդեակ այն է տուն կռոցն մեհենից պաշտօն սնոտեաց, չաստուծոյ պատկեր Ապողոնի։ Ասէ Յիսուս. Երթամ տեսանել զնա, թէ զի՞նչ տեսակ ունի և նմանութիւն նորա։ Ասէ Մարիամ. Եթէ կամիս երթեալ անդ՝ պատրաստ լեր, զի մի՛ վնասեսցիս։ Եւ Յիսուս յարուցեալ վաղվաղակի, գնաց անդ, և եմուտ ի տաճարն կռոցն և հայէր շուրջ զնովօք, և տեսանէր զվայելչութիւն շինուածոյն. զի էր նկարեալ ազգի ազգի գեղեցկութեամբ զարդարեալ. զարմացաւ յոյժ և ել վաղվաղակի արտաքս։ Եւ դարձեալ թըլըըմքն քաղաքին ըստ առաջին օրինակին աղաղակեցին և ասէին. Լուարո՛ւք ամենեքին, ահա որդի թագաւորի մեծի եմուտ ի տաճարն Ապողոնի։ Եւ իբրեւ լուան զայս բազմութիւն քաղաքին, ընթացեալ անդր հասանէին, և հարցանէին ընդ միմեանս, և ասէին. Զի՞նչ է ձայն աղաղակիս որ եղեւ առ մեզ։ Շրջեցան ընդ ամենայն քաղաքն, և ոչինչ տեսին բայց միայն զՅիսուս. հարցանէին ցնա. Մանուկ դու, ո՞ւմ որդի ես։ Ասէ Յիսուս. Ես պատանեակ եմ ծերոյ ալեւորի միոյ աղքատ և օտարական, զի՞նչ խնդրէք յինէն. Նոքա թողին զնա և գնացին։ Հարցանէին ցմիմեանս քաղաքացիքն և ասէին. Զի՞նչ է այս նոր ըսքանչելի իրս, զոր տեսանեմք զձայն աղաղակիս. եր-

կընչիմք, եթէ կորուստ հասցէ մեզ յանկարծակի ուստի ակն ոչ ունիցիմք։ Եւ զայս ասացեալ նոցա ի տարակուսանս լեալ էին քաղաքն ամենայն։ Իսկ Յիսուս լռութեամբ գնաց ի տուն իւր, և պատմէր զամենայն ինչ, զոր և լուաւ ի նոցանէ. և նոքա զարմացեալ լինէին։

Եւ եղեւ ի կատարել նոցա ի գլուխ ամին, որ էր Յիսուս ամաց երեց և ամսոց չորից։ Յաւուր միում տօն էր Ապողոնի, և ժողովեցան անդ ամենայն բազմութիւն ի դուռն տաճարի կռոցն բազում ընծայիւք և նուիրօք, զոհել զոհ մեծ դիցն՝ անասնոց և ամենայն չորքոտանեաց, զխառնելիս և զզոհարանս պատրաստէին և զսեղան մեծ ընթրեացն ուտել և ըմպել. և ամենայն բազմութիւնք ժողովոյն, հասեալ կային դըրան. և չքահանայքն պաշտօն կատարէին պաշտել կռոցն Ապողոնի։ Իսկ Յիսուս ելեալ գնաց ի ծածուկ և նստաւ. քուրմքն ամենայն ժողովեալ էին և սպասաւորք մեհենիցն։ Իսկ առիւծքն և գազանքն՝ որ էին թըլըրըմն, իբրեւ տեսին զՅիսուս, զի եմուտ ի տաճարն կռոցն, դարձեալ աղաղակեցին և ասեն. Տեսէք ամենեքինդ. ահա որդի թագաւորի մեծի եմուտ ի տաճարն Ապողոնի։ Զայս իբրեւ լուան ամենայն բազմութիւնքն որ անդ էին, լցան տրտմութեամբ և բարկութեամբ. և դիմեցին ի վերայ միմեանց և կամէին սրով սպանանել զմիմեանս, և ասէին. Զի՞նչ արասցուք զծերն զայն. զի ընդ մտանելն նորա ի քաղաքս մեր, ամենայն նշանք և սքանչելիք ի գալստեան նորա եղեւ. մի՛թէ մանուկն այն՝ զոր ունի որդի թագաւորի՞ իցէ. և նորա առեալ փախստական հկն յաշխարհն մեր. եկա՛յք կալցուք զնա և սպանցուք։ Մինչեւ նոքա զայն խորհէին, և Յիսուս էր անդ ի տաճարն Ապողոնի. հայեցեալ տեսանէր զպատկերն զայն ոսկւով և արծաթով քանդակեալ, և գրեալ կայր ի վերայ նորա, եթէ. Սա է Ապողոն չաստուածն արարիչ երկնի և երկրի, որ տայ կենդանութիւն ամենայն մարդկան։

Եւ առ ժամայն զայրացեալ Յիսուս յոգի իւր, ել վաղվաղակի արտաքս ի տաճարէն, և հայեցեալ յեր-

Digitized by Google

կինս՝ ասէ. Հայր փառաւորեա զորդի քո, զի և որդին քո փառաւորեսցէ զքեզ[1]. և ահա ձայն ի յերկնից եկն՝ որ ասէր. Փառաւոր արարի և դարձեալ փառաւորեցից: Եւ զայս ասացեալ Յիսուսի, շարժեցաւ տեղին ի նմին ժամու, և ամենայն շինուածք տաճարին ի հիմէն անկեալ կործանեցան, և պատկեր կռոցն Ապողոնի և քուրմքն մեհենիցն և քահանայք կռոցն ընկղմեալ անդ ի ներքոյ շինուածոյն և սատակեցան. և այլ բազմութիւն քաղաքին որ անդ էին՝ փախեան ի տեղւոջէ անտի. և ամենայն կուռք և բագինք դիւացն որ ի քաղաքին էին՝ անկեալ կործանեցան. և ամենայն շինուածք Թըլըսըմներն՝ որ շուրջ զքաղաքաւն անշունչ պատկերք մարդկան, գազանաց և անասնոց՝ անկեալ կործանեցան: Յայնժամ դեւքն աղաղակ բարձին և ասեն. Տեա՛ռք ամենեքեանդ և ողորմեցարուք մեզ, որ մանուկ մի փոքրիկ տղայ հասակ՝ զմեզ զամենեսեան առ հասարակ կործանեաց, և զտեղի բնակութեան մերոյ քակտեաց, և զպաշտօնեայս մեր չարամահ արարեալ ջնջեաց. արդ, կալարո՛ւք զնա և չարամահ արասցուք:

Իբրեւ զայս լուան ամենայն բազմութիւնք քաղաքին՝ զլալ և զողբումն դիւաց, և ի ձայնէ աղաղակի նոցա դիմեցին նոքա ամենեքեան առհասարակ ի տեղի կործանման տաճարին, և սուգ առեալ լային իւրաքանչիւր զմեռեալն իւրեանց: Եւ Յիսուս գնաց լըռութեամբ ի տուն իւր, և նստէր յանկիւնս տանն. և նոցա կալեալ զՅովսէփ՝ կացուցին առաջի ատենին և ասեն. Ասա՛ մեզ, զի՞նչ է կորուստս այս որ եկն ի վերայ մեր ընդ մտանելն ձեր ի քաղաքս մեր այս. ո՞չ իսկ յառաջ ասացաք քեզ՝ եթէ պատմեա՛ մեզ, զի՞նչ տեսեր ի ճանապարհին, զի՞նչ լուար՝ և դու թագուցեր ի մէնջ զգործս զայս. ահաւասիկ չարամահ սատակեսցուք զքեզ և զորդին քո և զայնոսիկ՝ որ ընդ քեզ են. զի կախարդութեամբ իւիք կորուսեր զքաղաքս զայս. Ասա՛ մեզ, ո՞ւր է որդին քո, յայտ-

1. Յօրինակին էր զմեզ. ըստ միւսին եդաք զքեզ:

նեա՛ ամենեցուն՝ զի տեսցուք զնա, որ չաստուածսն մեր կործանեաց և զպաշտօնեայս մեր խափանեաց և զքահանայս մեր ընկղմեաց, և զբազում հոգիս տարաժամ արար. և ահա ո՛չ զերծանիք ի ձեռաց մերոց մինչեւ զամենեսին զձեզ այնպէս արասցուք։ Եւ այսպէս բազում հայհոյութեան բանս խօսէին ի նա։ Իսկ Մարիամ անկեալ առ ոտն Յիսուսի, աղաչէր զնա արտասուելով և ասէր. Որդեակ իմ Յիսուս՝ լո՛ւր ինձ աղախնոյ քո. և մի՛ այդպէս բարկանար մեզ, և խռովեցուցանէր զքաղաքս զայս, զուցէ թշնամութեամբ կալցեն զմեզ և սպանցեն, և զքեզ դառն մահուամբ կորուսցեն։ Ասէ Յիսուս. Ո՜վ մայր իմ՝ դու ոչ գիտես որ և խօսիս. ամենայն դասք երկնային զօրացն անմարմնոց հրեշտակաց սարսեալ դողան յահէ զօրութեան փառաց աստուածութեան իմոյ, որ զկենդանութիւն շնորհեմ ամենեցուն։ Եւ դա[1] սաղայել ի հակառակ իմ եղեալ և ստեղծուածոց իմոց, որ ըստ իմոյ նմանութեան իշխէ և զանձն իւր անուանել, և ի մարդկանէ պաշտօն առնուլ և երկրպագութիւն։ Ասէ Մարիամ. Որդեակ՝ բարիոք ասես. բայց աղաչեմ զքեզ, լո՛ւր ինձ բարեխօսութեամբ մօր քո և ծառայի, յարո ըզմեռեալսն զայնոսիկ՝ զոր կորուսեր, և ամենեքեան՝ որ տեսանիցեն զսքանչելիսն որ առնես հաւատասցեն յանուն քո. զի ահա տեսանես զծերսն որ վասն քո կալեալ ունին, բազում աանջանօք չարչարեն։ Ասէ Յիսուս. Ո՜վ մայր իմ՝ մի՛ այդպէս բանադատեր զիս. զի չեւ է հասեալ ժամանակ իմ առնելոյ զայդ։ Ասէ Մարիամ. Աղաչեմ զքեզ լո՛ւր ինձ որդեակ, և հայեաց ի նեղութիւնս մեր, և ի տառապանս աղախնոյ քո, որ պանդուխտ և օտար շրջիմք վասն քո անծանօթ յերկիր հեռաւոր։ Ասէ Յիսուս. Յաղագս աղաչանաց քոց արարից զայդ, զի հաւատասցեն եթէ որդի Աստուծոյ եմ։

Եւ կայս առացեալ Յիսուսի և յարուցեալ գնաց ի մէջ բազմութեան ժողովոյն. իբրեւ տեսին զնա ամե-

1. Յօրինակին դաւ էր՝ ըստ միւսին եղաք դա։

նքեան տղայ հասակաւ և փոքրագոյն՝ որ էր երից ամաց և չորս ամսոց, աւեն միմեանց. Սա է նա, որ զտաճար կռոցն քակեաց և զպատկեր Ապողոնի կործանեաց: Ասեն. Այո՛, սա է: Իբրեւ լուան զայս, հիացեալ զարմանային ընդ գործոն զոր արա՛ր. և առ ի նա պշուցեալ հայէին և ասէին. Զի՞նչ կամիցի առնել դա: Եւ Յիսուս զայրացեալ յոգի իւր եկն եկաց ի մէջ ատենին ի վերայ մեռելոցն. և առեալ հող յերկրէ՝ ցանեաց ի վերայ նոցա, և ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Ձեզ ասեմ քահանայիցդ ամենեցուն, որ աստ անկեալ կայք մեռեալ ի ներքոյ շինուածոյս. արի՛ք վաղվաղակի ի կորստեան կործանմանէդ և եկայք արտաքս: Եւ նոյն ժամայն ընդ ասել բանին՝ յանկարծակի շարժեցաւ տեղին՝ յորում կային անդ. և հողն եռացեալ ի վեր զվէմն թաւալեցուցեալ՝ յարեան ի մեռելոց և կանգնեցան ի վերայ ոտից իւրեանց՝ հոգիք իբրեւ հարիւր ութսուն և երկու: Իսկ այլք սպասաւորք և քրմապետք Ապողոնի ո՛չ յարեան, որ էին հոգիք հարիւր և ինն. ահ և դողումն կալաւ զամենեսեան՝ և զահի հարեալ ասեն. Սա է Աստուած երկնի և երկրի որ տայ կենդանութիւն ամենայն մարդկան: Իսկ քահանայից ամենեցուն որք յարեան ի մեռելոց՝ եկեալ անկանէին առաջի նորա և խոստովանէին զմեղս իւրեանց և ասէին. Արդարեւ որդի Աստուծոյ է սա, և փրկիչ աշխարհի, որ եկն ի կեցուցանել զմեզ: Եւ ել համբաւ սքանչելեաց նորա ընդ ամենայն երկիրն ընդ այն. և որք լսէին բազումք ի հեռաստանէ գային ի տեսութիւն նորա, և ընդ հասակ տղայութեան նորա առաւել զարմանային:

Ապա անկեալ բազմութիւնք ժողովոյն առ ոտսն Յիսուսի և աղաչէին յարուցանել զմեռեալսն զայնոսիկ, որք էին սպասաւոր մեհենիցն: Եւ Յիսուս ո՛չ կամեցաւ առնել: Եւ զՅովսէփ կալեալ ի մէջ բազմութեան ամբոխին՝ աղաչէին զնա և ասէին. Թո՛ղ զմեղս մեր՝ զոր մեղաք քեզ, և աղաչեա զմանուկն քո, զի յարուսցէ զմեռեալսն զայնոսիկ որ ի տաճարի անդ էին: Եւ Յովսէփ ասէ. Թողութիւն արարէ՛ք ինձ. զի ոչ կա-

Digitized by Google

րեմ բռնադատել զնա. ապա եթէ ինքնին կամեսցի առնել, կամք Տեառն լիցի, զի նա կարող է յամենայնի: Եւ զայս ասացեալ նոցա, եկն այր մի մեծատուն, և անկեալ երկիր պագանէր Յիսուսի և Յովսեփայ, և ասէր. Աղաչեմ զձեզ եկա՛յք ի տուն ծառայի ձերոյ և մտեալ ընդ յարկաւ իմով՝ հանգերուք որչափ և կամք ձեր լիցին, և տարեալ զնոսա ի տուն իւր. և ամենայն բազմութիւն քաղաքին գային առ նա և մեծաւ սիրով պաշտէին զնա յընչից իւրեանց: Եւ որք նեղեալ էին յայսոց չարաց և ի դիւաց և ի հիւանդութենէ իւրեանց, անկանէին առաջի նորա և բժշկէր զնոսա. և բազում ուրախութիւն լինէր ի քաղաքին յայնմիկ. և որ շուրջ զսահմանօքն էին, իբրեւ լսէին զայս ամենայն, ի ձայն մեծ փառաւոր առնէին զԱստուած:

Իսկ Յովսէփ կացեալ ի քաղաքին յայնմիկ աւուրս բազում ի տան իշխանի միոյ՝ որ էր ազգաւ Եբրայեցի անուն նորա Եղիազար. և ունէր որդի մի, և դստերս երկու և անուն որդւոյ նորա Ղազարոս. և աղջկանցն Մարթա և Մարիամ. և այնպէս ընկալեալ զնոսա մեծաւ պատուով որպէս արժանն էր: Եւ Յովսէփ եկաց և զամենայն եղեալսն պատմեաց Եղիազարու զոր արարին որդիքն Իսրայելի, զնեղութիւնս, զհալածանս և զչարչարանս և զտառապութիւն որ եղեւ իսկ: Եւ Եղիազար լուեալ զայս ամենայն իրս, տրտմութեամբ լի եղեւ: Ասէ Յովսէփ ցնա. Օրհնեալ լիցիս, քանզի բարիոք արարեր մեզ զամենայն, ուրախութեամբ ընկալար և համբերեցեր՝ որքան եկեալ եմք աստ, և բարիոք արարեր: Ասէ Եղիազար ցՅովսէփ. Տէր պատուական՝ կաց դու հաստատուն ի տեղիս յայսմիկ և մի՛ երկմտիր, զի յետոյ ի նեղութենէ քումմէ հանգիստ և փրկութիւն գտանես: Եւ զայս ասացեալ նոցա, և նոքա խնդութեամբ ուրախ եղեն: Ասէ Եղիազար. Եւ ես եմ յերկրէն Հրէաստանէ և ի քաղաքէն Երուսաղեմի. և բազում նեղութիւն և հարուածք եկն ի վերայ իմ ի ձեռաց թշնամեաց. և եղէ ունայն և թափուր յամենայն ընչից իմոց, և յահէն անօրէն

Digitized by Google

ամբարիշտ Հերովդէի եղէ հալածական հանդերձ տամբք և ընտանեօք իմովք՝ եկի ի տեղիս յայս. հնգետասան ամ է որ բնակեալ եմ ի քաղաքիս յայսմիկ. և ոչինչ նեղութիւն ունիմ ես ի մարդկանէ, այլ կամ ուրախութեամբ և սիրով, բազում պատուով. և դու մի՛ երկնչիր յումեքէ, այլ կա՛ց ի տեղի ուրեք հաստատուն որպէս և կամիս. մինչեւ այց արասցէ Տէր ի վերայ քո, և հասակի ծերութեան քո ողորմեսցի. և յետոյ դարձցիս յաշխարհն յայն, և կեցցէ անձն քո յուսով ի Տէր. և զայս ասացեալ նոցա, և կատարեալ կացին անդ ամիսս երիս: Եւ եղեն Յովսէփ և Եղիազար իբրեւ զեղբարս սիրելի և բարեկամ միմեանց. Մարթա և Մարիամ ընկալան զկոյսն Մարիամ և զՅիսուս ի տան իւրեանց իբրեւ զմի անձն և զմի հոգի կատարեալ սիրով: Եւ Մարթա առեալ զՂազարոս զեղբայր իւր ի բաժին ինքնին. և Մարիամ քոյրն Ղազարու զմանուկն Յիսուս սիրէր որպէս զեղբայր իւր. զի էին նոքա հաւասարք միմեանց:

Իսկ Յիսուս իբրեւ ետես զայս ամենայն ինչ, որ եղեւ, զայրացեալ յոգի իւր, և ասէ ցՄարիամ մայրն իւր. Տրտում է անձն իմ, զոր ինչ արարի ի քաղաքիս յայսմիկ. զի ոչ կամէի յայտնել զանձն իմ, զի մի՛ ոք գիտասցէ. և ահա ես լուայ աղաչանաց քոց, և արարի զհրամանս քո: Ասէ կոյսն Մարիամ. Ընդէ՞ր մեղադիր լինիս մեզ որդեակ. իսկ դու եղեր պատճառ կորստեան կռոցն և արարեր զամենեսեան ի կորուստ և ի մահ. և մեք վասն այնորիկ աղաչեցաք զքեզ՝ փրկել զանձինս մեր ի մահուանէ. և ահա այսուհետեւ զոր ինչ առնելոց ես, և զոր ինչ խորհիս առնել կամք քո լիցին: Եւ ապա ի նոյն գիշերոյ ի տեսլեան Յովսեփայ ասէ հրեշտակն. Արի՛ ա՛ռ զմանուկդ և զմայրն իւր և ե՛կ յաշխարհն Իսրայելի, զի մեռան արքն այնոքիկ, որք խնդրէին զանձն մանկանդ: Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի՝ պատմէր Մարիամու զտեսիլն, իբրեւ լուան՝ ուրախ եղեն: Իսկ յետ անցանելոյ սակաւ ինչ աւուրց լուեալ՝ եթէ Արքեղայոս Թագաւորեաց փոխանակ հօրն իւրոյ՝ երկեաւ

Digitized by Google

երթալ անդր։ Ապա յարուցեալ ի գիշերի՝ էառ զմանուկն և զմայրն իւր, և գնացեալ ի կողմն Հարաւոյ առ ստորոտ լերինն Սինայ, անցանել ընդ անապատ տեղի մերձ առ սահմանօքն, ուր յառաջ բնակեալ էին ազգն Իսրայէլի և անդ լեալ։

## ԳԼՈՒԽ ԺԶ.

*Վասն գնալոյ յերկիրն Իսրայէլի և բնակելոյ յաշխարհն Գալիլեացւոց ի քաղաքն Նազարէթ։*

Եւ ի վաղիւն յարուցեալ նոցա՝ եկին անցանել յերկիրն Մովաբու յանդիման Մամբրէի, և բազում օթևանս արարեալ նոցա ի ճանապարհին յԱրաբացւոց քաղաքին. և իբրև անցանէր Յիսուս առ սահմանօքն քաղաքին, էին անդ բագինք դիւաց. և էր ի ճանապարհին լեառն մի բարձրագոյն, և ի վերայ նորա տաճար մի մեծ զարդարեալ ազգի ազգի նկարօք վայելչութեամբ ի պաշտօն դիւացն. և ժողովեալ նստէին դևքն յանցս ճանապարհին խորհէին ընդ միմեանս և ասէին. Բարիոք կամք մեք աստ ի բնակութիւնս մեր և ի հանգստեան եմք. բայց լուեալ եմք ի բազմաց, եթէ որդի ծերոյ ալևորի միոյ յայտնեալ է որ զամենայն գործս մեր գիտէ և ճանաչէ. հալածիչ և թշնամի է ազգիս մերոյ, և արդ զի՞նչ լինիցիմք արդեօք ի նմանէ։ Ասեն դևքն. Ո՞րպէս կարէք իմանալ և գիտել զնա՝ եթէ ո՛վ իցէ։ Ասէ միւս դևն. Դուք ո՛չ գիտէք զնա, եթէ ո՞վ իցէ, ես գիտեմ և ճանաչեմ զնա յառաջնմէ։ Ասեն դևքն. Եթէ գիտես զնա, պատմեա՛ մեզ։ Ասէ դևն. Նա է որ ի յերկնից կամարացն ընկէց զմեզ ի բնակութենէ անտի, և կործանեալ կորոյս զմեզ զամենեսեան. և այժմ եկեալ է

Digitized by Google

աստ հալածական առնել զմեզ ի մարդկանէ։ Ասեն դեւքն. Եւ որպէ՞ս կարասցես գիտել՝ եթէ զայն առնէ։ Ասէ դեւն. Ես անդ էի ի տաճարն Ապողոնի, զոր կործանեաց նա զամենայն տունս մեհենիցն, և զպատկեր չաստուածոցն փշրեաց, և կորուստ արար առհասարակ։ Ասեն դեւքն. Եւ վա՜յ է մեզ, եթէ նա գայ աստ, զի՞նչ լինիցիմք։

Եւ մինչդեռ զայն խօսէին ընդ միմեանս, յանկարծակի տեսին զՅիսուս, զի գայր, ճիչ բարձին և ասեն. Ահա՛ մանուկն Յիսուս ի քաղաքս այսր գայ, ելէ՛ք ի տեղւոջէ աստի և փախերուք. զի ի ձեռաց նորա կործանելոց եմք։ Ասեն դեւքն. Զի՞նչ արասցուք. եկա՛յք ճիչ բարձցուք ի քաղաքիս՝ զի թերեւս ըմբռնեսցեն զնա և սպանցեն, և մեք խաղաղութեամբ մնասցուք ի բնակութիւնս մեր։ Եւ զայս ասացեալ ամենեքեան ցրուեցան ի տեղիս տեղիս, և աղաղակ բարձին. Տեսէ՛ք ամենեքեանդ և լուարուք. զի որդի թագաւորի մեծի գայ մտանէ զօրօք բազմօք ի քաղաքս յայս։ Եւ զայս լուեալ ամենայն բնակիչք տեղւոյն այնորիկ, դիմեցին ամենեքին զօրօք և զինուք, և ելեալ շրջեցան ընդ ամենայն տեղիս, և ոչինչ գտին։ Իսկ Յիսուս իբրեւ եմուտ ընդ դուռն քաղաքին, յանկարծակի շարժեցան ամենայն շինուածք մեհենիցն՝ և անկեալ կործանեցան և ոչ մնաց մի ի նոցանէ. իսկ քրմապետքն և պաշտօնեայքն լցան յիմարութեամբ դիւացն մոլեգնութեան. կոծէին զանձինս իւրեանց և ասէին. Վա՜յ մեզ, և եղուկ է անձանց մերոց, որ ի բնակութենէ մերմէ հալածական եմք. ո՞ գործեաց ըզգործս զայս. և ո՛չ կարէին ճանաչել զեղեալ գործսն և զկորուստ քաղաքին այնորիկ։

Իսկ Յովսէփ կացեալ անդ յաւուրս բազումս. և Յիսուս էր ամաց չորից. յորժամ զարգացաւ մանուկն Յիսուս, ոչ դադարէր նստիլ ի տուն, այլ երթայր ընդ տղայսն խօսակից լինէր. և նոքա դիմեալ յօժարութեամբ գային առ նա և հնազանդ լինէին կամաց նորա։ Եւ քաղցրութեամբ և սիրով կոչէր զամենեսեան ի հաւանութիւն առ ինքն, և ողոքական բանիւ յա-

ռաջադէմ ինքն լինէր ամենեցուն և գլուխ մանկանց։ Եւ զոր ինչ հրամայէր նոցա առնել, կատարէին ըղձկամս նորա. և նա ոչ տայր ումեք թոյլ զմիմեանս հարկանել. և թէ ոք ի տղայոց զմիմեանս վիրաւորէին և գանալից առնէին, սակայն նա ձեռն դնէր և բըժըշկէր զնոսա, և սիրով կոչէր զամենեսեան։ Զտըրտմեալսն հաշտեցուցանէր և ուրախ առնէր զնոսա. և նոքա երթային առ ծնօղս իւրեանց. և զպատճառ յանցաւորութեան մեղացն դնէին ի վերայ Յիսուսի, և գային ծնօղք նոցա խնդրել զՅիսուս և ոչ գտանէին. հարցանէին և ասէին. Ո՞ւր է նա։ Ասեն տղայքն. Ո՛չ գիտեմք. ապա որդի է նա ծերոյ միոյ պանդուխտ օտարականի։ Եւ զայս լուեալ նոցա՝ գնային իւրաքանչիւր ի տունս[1] իւրեանց։

Եւ եղեւ ի միում աւուր ելեալ Յիսուս գնաց առ տղայքն, ուր ժողովեալ էին և խաղ արկեալ խաղային խօսէին և վիճէին ընդ միմեանս։ Եւ Յիսուս զարմանայր ընդ անմեղութիւն նոցա. և մի[2] ոմն ի մանկանցն կուրացուցին զաչս նորա. և նա ճիչ բարձեալ լայր դառնապէս։ Ասէ Յիսուս. մի՛ լար և արի՛ յոտն կաց վաղվաղակի, և մի՛ երկնչիր. և Յիսուս մերձեցաւ ի նա, և առ ժամայն լուսաւորեցաւ աչք նորա և տեսանէր։ Իսկ տղայքն՝ որ անդ էին՝ փութապէս գնային ի քաղաքն և պատմէին զգործսն, զոր արար Յիսուս. և որք լսէինն ընթացեալ անդ հասանէին տեսանել զնա և ո՛չ գտին. և Յիսուս խոյս ետ և թագեաւ ի նոցանէ։

Եւ ապա յաւուր միում եկեալ Յիսուս, ուր մանկունսն ի վերնատուն մի ժողովեալ էին. և էր յոյժ բարձր իբրեւ քարընկէց մի։ Եւ տղայոց մինն ննջէր յեզեր տանն թանձրութեան որմոյն, և անկեալ ի բարձրութենէ անտի ի վերայ պագաթանն, և հերձաւ գըլուխն և արիւնն հանդերձ ըղեղովն ցրուեցաւ ի վե-

1. Ըստ միւս օր. եղած է տունս զի ի բնագրին պակասէր։
2. Միւս օր. մի ամն եհար մօտ յեռամբ և խաղալով կարողացոյց զուլու մանկան մօտ։

բայ վիմին. և նոյն ժամայն ապառեցաւ հոգին ի մարմնոյն։ Եւ զայս տեսեալ տղայոցն որ անդ էին, փախեան ի տեղւոջէ անտի։ Եւ բազմութիւն քաղաքին ժողովեալ անդ և ճիչ բարձեալ ասէին. Յումմէ՞ պատանեակս այս վերուստ ի վայր անկեալ մեռաւ։ իսկ ծնողացն զայն լուեալ անդր հասանէին. և արարեալ կոծ մեծ ի վերայ նորա, ապա սկսան քննել և իմանալ, եթէ ո՞ արար զվնաս զայս։ Եւ ամենեքին երդմամբ ասեն, թէ. Ո՛չ գիտեմք։ Ասեն ծնօղք նորա. ո՛չ այդպէս հաւատամք ձեզ, զոր ասէք։ Ապա յայնժամ ժողովեցին զամենայն տղայքն բռնութեամբ, և բերեալ կացուցին առաջի ատենին, սկսան հարցանել ցնոսա և ասեն. ասէ՛ք մեզ. ո՞ եսպան զտղայս զայս, և ընկէց ի բարձրութենէ անտի։ Եւ նոցա երկուցեալ ի մահուանէ՝ ասեն ցմիմեանս. Զի՞նչ արասցուք, զի ամենեքինս գիտեմք և վկայեմք միմեանց որ անմեղ եմք, և ոչ ոք եղեւ նմա պատճառ մահու. և ճշմարտութեան բանիցս ո՛չ հաւատան. ընդէ՞ր անմեղութեամբ դատապարտիմք ի մահ։ Ասէ մի ոմն ի նոցանէ. Գիտէք ամենեքեանդ որ անմեղ եմք և վկայ ո՛չ ունիմք. զբանս մեր ստութեամբ համարին։ Եկայք դիցուք զմեղանս ի վերայ Յիսուսի, զի նա ընդ մեզ էր. և դա այլ է իբրեւ զմեզ և օտարական որդի ծերոյ միոյ պանդխտի. զնա դատապարտեսցուք մահուամբ և մեք ազատք լիցուք։ Ասեն միաբան. Այո՛, բարիոք ասացեր։ Յայնժամ բազմութիւն ժողովոյն կալեալ զմանկունս չարչարէին և ասէին. ասացէ՛ք ո՞ արար զվնաս զայս, և զանմեղ տղայս տարաժամ սպան։ Ասեն միաբան. Ոմն մանուկ մի օտարական՝ անուն նորա Յիսուս ասեն. որդի ալեւորի միոյ, նա արար. և հրամայեցին կոչել զնա. իբրեւ գնացին, ոչ գտին զնա։ Ապա կալեալ զՅովսէփ՝ կացուցին առաջի ատենին, և ասեն. Ո՞ւր է որդի քո։ Ասէ Յովսէփ. Զի՞նչ խնդրէք ի նըմանէ։ Ասեն միաբան. Եւ դու ո՛չ գիտես զի՞նչ արար մանուկն քո, որ զտղայս մեր ի բարձրութենէ վերնատանն ընկէց և կորոյս։ Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէր որ ո՛չ գիտեմք ուր է նա։ Ապա տարան զՅովսէփ առ

դատաւորն։ Ասէ դատաւորն. Ծեր դու՝ ուստի՞ ես եկեալ, և կամ յո՞ր երկրէ ես։ Ասէ Յովսէփ. Ի յերկրէն Հրէաստանէ ի քաղաքէն յԵրուսաղեմէ։ Ասէ դատաւորն. Ասա՛ մեզ, ո՛ւր է մանուկն քո որ զողայս մեր չար մահուամբ եսպան։ Ասէ Յովսէփ. Ո՛ դատաւոր մի՛ այդպէս անիրաւութեամբ զրպարտեր զմեզ, զի չեմք պարտական արեան դորա։ Ասէ դատաւորն. Եթէ չես պարտական ընդէ՞ր երկնչիս ի մահուանէ։ Ասէ Յովսէփ. Օտարական ծեր եմ աղքատ և մուրացիկ, և մանուկն այն ըստ հոգւոյ զաւակ է ինձ և ոչ ըստ մարմնոյ, եթէ կամք իւր լիցի նա կարող է տալ պատասխանի։ Եւ զայս ասացեալ. իսկ Յիսուս եկաց յառաջ և ասէ. Զո՞ խնդրէք։ Եւ նոքա ասեն. Զորդին Յովսեփայ։ Ասէ Յիսուս. Ես եմ։ Ասէ դատաւորն. Պատմեա՛ ինձ ո՞րպէս արարեր զմնասն զայն։ Ասէ Յիսուս. Ո դատաւոր՝ մի՛ այդպէս աչառութեամբ դատաստան առներ, զի մեղք են և մնաս հոգւոյդ։ Ասէ դատաւորն. Ո՛չ վայրապարիւք դատապարտեմ ըզքեզ այլ իրաւամբ. քանզի ընկերք նորա՝ որ ընդ քեզ էին, նոքա վկայեցին վասն քո։ Ասէ. Վասն դոցա ո՞վ, եթէ դոքա ճշմարիտ են։ Ասէ դատաւորն. Ինքեանք միմեանց վկայեն որ անմեղ են նոքա, և դու ես պարտական մահու։ Ասէ Յիսուս. Եթէ այլ ոք վկայէ վասն իմ՝ իրաւի է, ապա եթէ ինքեանք երկուցեալ ի մահուանէ՝ միմեանց վկայեն՝ սուտ են. և դու անիրաւութեամբ առնես զդատաստանդ զայդ։ Ասէ դատաւորն. Վասն քո ո՞վ վկայէ, զի մահապարտ ես։ Ասէ Յիսուս. Դատաւոր՝ ո՛չ այդպէս է զոր ասես, այլ օտար համարեցար զիս. զի պանդուխտ և աղքատի որդի, վասն այնորիկ եդին ի վերայ իմ զվճիռ մահու. և դու յաղագս մարդահաճութեան իրաւ կարծես զնոսա, և զիս սուտ առնես։ Ասէ դատաւորն. Ապա ո՞րպէս արարից։ Ասէ Յիսուս. Արդարութեամբ կամիս դատաստան առնել, յերկոցունց կողմանց կացո՛ վկայ զօտարքս, և ապա ճշմարտութեամբ ստութիւնն յայտնի երեւի։ Ասէ դատաւորն. Ես զայդ ո՛չ գիտեմ զոր ասես դու, այլ վկայութիւն խնդրեմ ի քէն որպէս ի նոցանէ։ Ասէ

Յիսուս․ Եթէ ես վկայեմ զանձնէ իմմէ, հաւատամ ինձ։ Ասէ դատաւորն․ Եթէ ստութեամբ երդնուս՝ ոչ գիտեմ, և եթէ ճշմարտութեամբ՝ ո՛չ։ Ասէ Յիսուս․ Ապա անիրաւութեամբ առնես զդատաստանն, որ յինէն վկայ խնդրես, և ի նոցանէ ո՛չ։ Ասեն տղայքն միաբան․ Լո՛ւռ լեր՝ գիտեմք զքեզ եթէ ո՞ իցես, որ բազում նեղութիւն և չարչարանս անցուցեր ընդ մեզ և ընդ այլ տղայսն քաղաքիս․ և մեք քեզ ոչ ինչ արարաք։ Ասէ դատաւորն․ Տե՛ս թէ ո՞րչափ վկայիւք զքեզ սուտ առնեն, և դու ո՞չ տաս պատասխանի։ Ասէ Յիսուս․ Բազում անգամ խօսեցայ ընդ քեզ, և դու բանից իմոց ոչ հաւատացեր․ յետոյ տեսանես՝ հիացեալ զարմանաս։ Ասէ դատաւորն․ Արդ տեսցուք զոր ասես։ Յայնժամ Յիսուս եկն եկաց առ մեռեալն, և ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ․ Աբիաս՝ որդի Թամարայ՝ արի՛ բաց զաչս քո և պատմեա՛ մեզ, եթէ ո՞ եղեւ պատճառ կորստեան քո։ Եւ նոյն ժամայն յարեաւ մեռեալն իբրեւ ի քնոյ զարթուցեալ, նստաւ և հայէր շուրջ զնովաւն, և զամենայն ոք յանուանէ ճանաչէր։ Եւ ծնողացն զայն տեսեալ զիրկս արկեալ համբուրէին զմիմեանս և ասէին․ Ո՞րպէս կաս՝ զի՞նչ եղեւ քեզ։ Եւ ասէ մանուկն․ Ոչ ինչ։ Ասէ Յիսուս ցմանուկն․ Ո՛ մանուկ ասա, ո՛ եղեւ պատճառ կորստեան քո։ Ասէ մանուկն․ Տէր ոչ ես դու արեան իմոյ պարտական, և ո՛չ տղայքն այն որ ընդ իս էին, այլ ի մահուանէ երկեան և ի վերայ քո եդին։ Այլ ես ի քուն եղեալ էի՝ անկայ վերուստ ի վայր և մեռայ։

Իսկ ետես դատաւորն զայն, և բազմութիւն ժողովոյն, ասէին․ Երբ զնչանս զայս արար մանուկս այս ո՛չ է որդի մարդոյ, այլ[1] մարմնով յերկրի երեւի։ Ասէ Յիսուս․ Հաւատա՞ս դատաւոր՝ որ անմեղ եմ։ Եւ նա յամօթոյն՝ ոչ տայր պատասխանի․ և ամենեքեան զարմանային ընդ հասակ տղայութեան նորա, և ընդ գործոյն զոր արար․ և որք լսէին զարհուրեալ լինէին ընդ

1․ Թուի թէ պակասէ Աստուած։

աքանչելի իրսն՝ զոր առնէր Յիսուս։ Եւ եկաց մանուկն ժամս երիս։ Եւ ասէ Յիսուս. Արիաս ննջեա՛ այսուհետեւ մինչեւ ի հասարակաց յարութիւնն։ Եւ զայս ասացեալ Յիսուսի՝ փաղփաղակի եդ զգլուխ իւր և ննջեաց։ Եւ զայս տեսեալ մանկանցն, ահիւ մեծաւ դողային ի նմանէ։ Ապա անկեալ դատաւորն և ամենայն բազմութիւնն՝ առ ոտն Յիսուսի, աղաչէին զնա և ասէին. Կենդանացո՛ զմեռեալն։ Եւ Յիսուս ո՛չ կամեցաւ, այլ ասէ. Ո՜ անիրաւ դատաւոր և օրինաց դատիչ. ո՞րպէս խնդրես յինէն արդար իրաւունս, որ դու և ամենայն քաղաքս միաբանեալ ի զուր դատէիք զիս, և խօսից իմոց ո՛չ հաւատայիք. և զստութիւն դոցա որ վասն իմ՝ ճշմարտութիւն համարէիք. որովհետեւ ոչ անսայիք ինձ, և ոչ ես ձեզ լուայց։ Եւ զայս ասացեալ Յիսուսի, եւ փաղփաղակի արտաքս և թագեաւ ի նոցանէ, խնդրէին զնա և ոչ գտանէին. և եկեալ անկանէին առ ոտն Յովսեփայ և աղաչէին և ասէին. Ո՞ւր է մանուկն Յիսուս, որ եկեալ յարուցանէ զմեռեալն մեր. և նա ասէ. Ո՛չ գիտեմ անձնիշխան շրջի, և ո՛չ հրամանաւ իմով։

## ԳԼՈՒԽ ԺԷ.

### Վասն փոխելոյ անտի և գնալոյ յերկիրն Ասորոց։

Եւ ի գիշերին յայնմիկ յարուցեալ Յովսէփ ա՛ռ զմանուկն և զմայրն իւր, եկին յերկիրն Ասորւոց ի քաղաք մի, որոյ անունն էր Շահապրաւ. և Յիսուս էր ամաց հնգից և ամսոց երից. և եղեւ ի մտանելն իւրում ընդ դուռն քաղաքին, և էին անդ պատկեր կռոց. իբրեւ տեսին դեւքն զի գայր Յիսուս, զաղաղակ բարձին և ասեն. Գայ մանուկ մի որդի թագաւորի ար-

Digitized by Google

քայի մեծի՝ որ խռովեցուցանէ զքաղաքս մեր, և զմեզ հալածական առնէ ի բնակութենէ աստի. եկա՛յք զգուշ կացէք անձանց ձերոց, զի մի՛ մերձեսցի մեզ. յո՞ր անապատս կորիցուք: Իբրև լուան քրմապետքն, չքահանայքն և պաշտօնեայք կռոցն, ժողովեցան ի տաճար կռոցն և ասեն. Զի՞նչ է ձայն աղաղակիս, որ զարհուրեցուցանէ զմեզ: Եւ նոյն ժամայն շարժեցան ամենայն պատկերք կռոցն՝ անկեալ յերկիր կործանեցան: Եւ Յովսէփ մտեալ ի քաղաք անդր ի տեղի ուրեք իջեւանս արարեալ, և անդ բնակէր: Եւ Յիսուս շրջէր շուրջ զքաղաքաւն ընդ ամենայն տեղիս, և եկեալ առ տղայսն ուր հաւաքեալ էին, և նստէր եզեր ջրին ի վերայ աղբիւրաց. և առեալ զհողն արկանէր ի ջուրն և գային տղայքն ըմպել ջուր, և տեսանէին զջուրն՝ արիւն դարձեալ և նեխեալ, և ի ծարաւոյն լային: Եւ Յիսուս առեալ ամանով ջուր, և ցանէր ի վերայ տղայոցն ամենեցուն. և հանդերձն իբրև արեամբ ներկէր, և լային անմեղ տղայքն առաջի նորա: Եւ Յիսուս քաղցրութեամբ կոչէր զտղայսն, և զձեռն իւր անցուցանէր ի վերայ նոցա և ասէր. Մի՛ լայք, ահա չի՛ք աղտեղութիւն ի վերայ հանդերձից ձերոց: Եւ տղայքն խնդութեամբ ուրախ լինէին ընդ գործն զոր առնէր Յիսուս:

Եւ ի միում աւուր այլ գնաց Յիսուս առ տղայքն, ուր միաբանեալ էին, և ասէ ցնոսա. Եկա՛յք երթիցուք ի միասին ի տեղի հեռաւոր, և սրասցուք անդ որս թռչնոց ըմբռնել: Եւ նոքա ասեն. Այո՛, և յարուցեալ գնացին ի տեղի նշանաւոր դաշտ մի, և կացին նոքա անդ զօրն ամենայն, և ոչ կարացին ըմբռնել ի թռչնոց. էր օրն ամարայնոյ, և ի սաստիկ ջերմութենէ օդոյն յոյժ նեղեալ էին մեծաւ տագնապաւ: Եւ զայն տեսեալ Յիսուսի՝ զթացաւ ի վերայ նոցա, և ձեռն տուեալ յարուցանէր զնոսա և ասէր. Մի՛ երկընչիք՝ արի՛ք երթիցուք ի վէմն այն մեծ՝ որ հանդէպ մեր է, և ընդ հովանեաւ նորա հանգչիցուք. իբրև գնացին նոքա և ժողովեցան ի տեղին, զի ոչ կարէին հանդուրժել ի սաստկութենէ տապոյն. և բազումք

Digitized by Google

անկանէին անմեղ տղայքն որ անշնչացան իբրեւ զմեռեալ, և ոմանց պշուցեալ զաչս իւրեանց հայէին ի Ցիսուս. իսկ Ցիսուս յարուցեալ եկաց ի մէջ նոցա, և եհար՝ գաւազանաւն զվէմն, և նոյն ժամայն ջուր բղխեաց ի վիմէն աղբիւր յորդառատ անուշահամ, և արբոյց զամենեսին, և կայ աղբիւրն մինչեւ ցայսօր: Եւ իբրեւ արբին ամենեքեան և կենդանացան, յարուցեալ երկիր պագին Ցիսուսի: Իբրեւ ձգեաց Ցիսուս զձեռն իւր ի ջուրն այն, և եղ ձուկն բազում, և հրամայեաց տղայոցն ըմբռնել, և նոքա ըմբռնեցին բազում ձուկն: դարձեալ ժողովեցին փայտ, և այրեցաւ փայտն առանց հրոյ և խորովեցին զձուկն, կերան և յագեցան, և առին բազում ձուկն և գնացին խնդութեամբ ի տունս իւրեանց. և սկսեալ պատմէին զգործսն զոր արար Ցիսուս. և ցուցին յորսոյ ձկանցն, զոր ըմբռնեալ էին, և բազումք հաւատացին ի նա: Իսկ տղայքն՝ որ ուժեղ և զօրաւոր էին, կանխաւ եկեալ ժամանեցին ի տունս[1] իւրեանց, և որ փոքրն էր յետոյ. իսկ պատանեակ մի, որ էր ամաց երից, մոլորեալ ի դաշտի անդ՝ անշնչացաւ, և անկաւ յերկիր և ննջեաց. և ի գիշերին զարթեաւ և բացեալ զաչս իւր հայէր այսր և անդր, և ո՛չ զոք տեսանէր, ապա սրտաբեկեալ լայր. և կացեալ նորա զաւուրս երիս, և զգիշերն ամենայն շրջեցաւ ի դաշտին և զցերեկն, և հեռացաւ ի սահմանաց անտի, և ո՛չ ոք ի մանկանցն իմացաւ թէ զի՞նչ եղեւ: Ապա ի սովոյ և ի ծարաւոյ և ի տապոյ արեգական սպառեցաւ հոգի նորա ի մարմնոյն: Եւ ծնօղք մանկանն հարցանէին տղայոցն. Ո՞ւր է պատանեակն մեր, որ զկնի ձեր էր, զի՞նչ եղեւ նա: Ասեն. Ոչ գիտեմք: Ասեն ծնօղքն նորա. Ընդէ՞ր ոչ գիտէք որ զկնի ձեր էր: Ասեն տղայքն. Գիտեմք որ զկնի մեր էր, բայց յետոյ ո՛չ կարացաք իմանալ թէ զի՞նչ եղեւ: Ասեն ծնօղքն նորա. Ցո՞ւմ ժամու տեսաք զնա որ ընդ ձեզ էր: Ասեն տղայքն. Մինչեւ ի հասարակ աւուրն ամենեքեանս տեսաք զնա. բայց յորժամ արեգական

1. Մեղէն յաւելաք տունս զի յօրինակին պակասէր:

տաքութիւնն նեղեաց զմեզ, նա ամենեքեանս փախըս֊
տական եղեալ՝ մինն զմիւսն ոչ գիտէր. և յորժամ
մանուկն Յիսուս ժողովեաց զմեզ, և ջուր հանեալ ի
վիմէն արբոյց մեզ՝ ո՛չ տեսաք զնա անդ. կարծէաք՝
թէ եկեալ է աստ ի տունն: Իսկ ծնօղք նորա յարու֊
ցեալ գնացին առ դատաւոր քաղաքին և պատմեցին
զամենայն. և նա հրամայեաց ժողովել զամենայն ըղ֊
տղայսն առաջի իւր, և սկսաւ հարցանել ցնոսա, և ա֊
սէ. Ասացէ՛ք ինձ որդեակք իմ զճշմարիտն, թէ զի՞նչ
եղեւ մանուկն: Ասեն ցնա. Ո՜վ դատաւոր լո՛ւր մեզ.
յերեկ վաղիւն մինչ ժողովեալ էաք միաբան, և կա֊
մեցաք գնալ ի խաղ, եկն եհաս Յիսուս որդի Յովսե֊
փայ և այլ փոքրագոյն տղայք՝ որ ընդ նմին ժողո֊
վեալ էին. ասացեալ մեր զպատճառն, եթէ ի հե֊
ռաւոր տեղի֊գնալոց եմք, և նա ո՛չ կամեցաւ դառ֊
նալ, թողաք զնա անդ և գնացաք: Ասէ դատաւորն.
Յորժամ ժողովեցաք ի մի վայր՝ ետե՞ս զնա ոք: Ասեն.
Այո՛, զօրն ամենայն ընդ մեզ էր մինչեւ ի կէս աւու֊
րըն: Եւ յորժամ նեղեցաք ի տապոյ արեգականն,
ցրուեցաք ի տեղւոջէ անտի, և մինն զմիւսն ոչ գիտէր:
Ասէ դատաւորն. Արի՛ք գնացէք խնդրել զնա մինչեւ գը֊
տանիցէք մեռեալ կամ կենդանի. և նոքա գնացեալ
շրջեցան, և ո՛չ գտին. և եկեալ առ դատաւորն, եթէ
ոչ գտաք: Ասէ դատաւորն. Զի՞նչ եղեալ էք ի մտի,
միթէ կարիցէ՞ք խաբէութեամբ իւիք զերծանիլ յինէն.
ո՛չ այդպէս, այլ ասացէք ինձ, ո՞ եղեւ պատճառ գնա֊
լոյ ձեր, և կամ ո՞ կոչեաց զմանուկն և տարաւ ընդ
իւր: Ասեն տղայքն. Ո՛չ ոք կամեցաւ, ինքն դիմեաց:
Ասէ դատաւորն. Զճշմարիտն ո՛չ ասէք, զի ամենեքեան
կորուսիք: Ասէ մինն ի նոցանէ. Գիտե՞ս զՅիսուս որ֊
դի ծերոյն Յովսեփայ, նա ընդ մեզ էր, և եղեալ ա֊
ռաջնորդ՝ և զմեզ տարեալ ընդ իւր որ յայսպիսի ո֊
րոգայթ մահու մատնեաց: Ասեն ընկերքն. Եւ մեզ
զի՞նչ չար արար նա, որ ի տօթոյն ծարաւի մեռեալ էաք.
նա ջուր հանեալ ի վիմէն, արբեցոյց զմեզ, և ձուկն
կերակրեաց զմեզ, և ապա կարացաք ի տուն ժամա֊
նել: Ասեն մանկունք. Եկա՛յք դիցուք զմեղանս զայս

Digitized by Google

ի վերայ նորա. զի անծանօթ է և օտար ի քաղաքէս, և ո՛չ գիտէք թէ որպիսի՞ նեղութիւն և տանջանս կրեմք ի նմանէ։ Եւ ճիչ բարձեալ գնացին առ դատաւորն և ասեն. Ընդէ՞ր անմեղութեամբ դատէք զմեզ։ Ասէ դատաւորն. Եթէ անմեղ էք յայտնեցէ՛ք զմահապարտն։ Ասեն տղայքն. Մանուկ մի ծերոյ օտարականի ընդ իւր տարեալ, և ո՛չ գիտեմք, զի՞նչ արար զնա։ Ասէ դատաւորն. Յառաջ ընդէ՞ր չասացիք վասն նորա։ Ասեն տղայքն. Մեղք համարեցաք, զի յոյժ աղքատ է և մուրացիկ. և հրամայեաց դատաւորն կոչել զՅիսուս, և ոչ գտին։ Ապա կալեալ զՅովսէփ և բռնութեամբ բերեալ կացուցին առաջի ատենին։ Ասէ դատաւորն. Ծե՛ր դու, ուստի՞ եկեալ ես կամ յո՞ երթաս։ Ասէ Յովսէփ. Ես ի հեռաւոր յաշխարհէ եմ, և օտար պանդուխտ շրջիմ ի վերայ երկրի։ Ասէ դատաւորն. Ո՞ւր է որդին քո։ Ասէ Յովսէփ. Զի՞նչ խնդրէք ի նմանէ։ Ասէ դատաւորն. Ո՞չ գիտես որ որդին քո առեալ զամենայն տղայս քաղաքիս ի խաղ գնաց, և մի պատանեակն ոչ եկն. արդ ասա ինձ, ո՞ւր է նա, և կամ զի՞նչ արար զմանուկն։ Ասէ Յովսէփ. Զայդ ո՛չ գիտեմ։ Ասէ դատաւորն. Այսպիսի պատճառանօք ո՛չ զերծանիք ի ձեռաց իմոց, մինչեւ զմանուկն կենդանի առ իս բերիցես։ Ասէ Յովսէփ. Ես ծեր եմ, զիա՞րդ կարացից շրջիլ զօրն ամենայն։ Ասէ դատաւորն. Գուցէ վաղվաղակի գտցես զնա ի տեղի ուրեք։ Եւ գնացեալ Յովսէփ՝ էառ զմանուկն Յիսուս առաջի իւր և գնացեալ ի քաղաքէն իբրեւ երկոտասան մղոնաւ հեռի. և գտին զտղայն մեռեալ ի դաշտին ի տապոյ արեգականն, իբր թէ հրով այրած. և ամենայն մարմինն նորա սեւացեալ և հանդերձ նորա ի ճարպոյ լուծեալ ամենայն զօդուածք մարմնոյ նորա։ Եւ զայն տեսեալ և եկեալ ի քաղաքն՝ պատմեցին ծնողաց նորա։ Եւ եկեալ գտին զմանուկն. և ճիչ բարձեալ՝ զանձինս իւրեանց քարկոծ առնէին. և դարձեալ պատեալ զնա կտաւով զմարմին նորա և առեալ բերին ի քաղաքն. և բազմութիւն քաղաքին տեսեալ ապաշաւէին զնա։ Յայնժամ հրամայեաց դատաւորն կացուցանել զՅի-

Digitized by Google

սուս ի մէջ ատենին և ասէ. Մանուկ դու՝ ընդէ՞ր արարեր զվնասդ զայդ, և կորուստ ածեր ի վերայ քաղաքիս մերոյ։ Ասէ Յիսուս. Ո՛ դատաւոր՝ մի՛ այսպէս առներ գործ անիրաւութեամբ, զոր ո՛չ է արժան ասել կամ լսել ումեք։ Ասէ դատաւորն. Ապա ո՞րպէս արարից ի մէջ երկոցունցդ իրաւունս։ Ասէ Յիսուս. Թէ արդարութեամբ առնես՝ դատաստանք քո այն են, ապա թէ ո՛չ մեծ մեղս գործես։ Ասէ դատաւորն. Մի՛ այդպէս պատասխանի առներ և զմեզ յանդիմաներ առաջի ամենեցուն, ո՛չ ստութեամբ առնեմ՝ այլ իրաւամբ։ Ասէ Յիսուս. Եթէ ճշմարտութեամբ առնէիր, յառաջ վկայութեամբ ստուգիւ քննէիր, և ապա օրինօք դատէիր։ Ասէ դատաւորն. Ո՞րպէս քննեցից զայդ, որ դոցա ասես զքէն, թէ անմեղ եմ, ապա ո՞ արար զվնասն զայն։ Ասէ Յիսուս. Զվկայութիւն դոցա ընդունիս որ զինէն խօսին զապիրատութիւն, և իմոյ ճշմարտութեան բանիցս ո՛չ հաւատաս, բայց յետոյ ամօթով լիցիս։ Ասէ դատաւորն. Արա՛ որպէս և կամիս։ Եւ Յիսուս զայրացեալ եկն եկաց ի վերայ մեռելոյն, և ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Մովսի որդի Տարուհի՝ արի՛ յոտն կաց վաղվաղակի, և ասա՛ ո՞ եղեւ պատճառ կորստեան քո։ Եւ նա յարուցեալ նստաւ. իսկ ծնօղացն և այլ ծանօթիցն՝ ճիչ բարձեալ ի վերայ մանկանն, և գիրկս արկեալ համբուրէին զնա և ասէին. Որդեակ, ո՞ կենդանացոյց զքեզ։ Եւ նա ասէ. Մանուկն Յիսուս որդի ծերոյն։ Եւ զայն տեսեալ քըրմացն, երկիր պագանէին Յիսուսի, և հարցանէին զմանուկն և ասէին. Որդեակ ո՞ եղեւ պատճառ կորստեան քո։ Ասէ մանուկն. Ո՛չ ոք՝ ամենեքեանն անմեղ են, և Յիսուս մի՛ դատապատէք, զի ո՛չ է նա արեան իմոյ պարտական. այլ ես մոլորեալ ի սովոյն և ի ծարաւոյն սպառեցաւ հոգի իմ, և այլ ո՛չ գիտեմ զի՞նչ եղեւ ինձ։ Ասէ Յիսուս. Ո՛ անիրաւ դատաւոր՝ կամէի՞ր ի զուր դատել և սպանանել զիս։ Եւ դատաւորն ամօթով եղեալ՝ ո՛չ իշխէր խօսել. և եկաց մանուկն կենդանի իբրեւ ժամս երիս մինչեւ ամենեցուն տեսեալ զարմանային։ Եւ դարձեալ ասէ Յիսուս ցմանուկն.

նէջեա այսուհետեւ, և նոյն ժամայն նէջեաց. և զայս ասացեալ Յիսուսի՝ եղեւ ի նոցանէ աներեւոյթ։

## ԳԼՈՒԽ ԺԸ.

Վասն երթալոյ նոցա յերկիրն Քանանու, և տղայութիւնն զոր առնէր Յիսուս։

Եւ ընդ լուսանալ առաւօտին՝ էառ Յովսէփ զՄարիամ և զՅիսուս, գնաց ի յերկիրն Քանանու ի քաղաք մի, որոյ անունն էր Մադիամ. և Յիսուս էր ամաց վեցից։ Եւ եղեւ ի շրջելն Յիսուսի ի քաղաքն անդր՝ տեսանէր զտղայսն, ուր ժողովեալ էին, և դիմեալ երթայր. իբրեւ տեսանէին զնա զի դայր, ասեն ցմիմեանս. Ահա մանուկ մի գայ օտարական, եկայք փախստական արասցուք զնա. և կէսքն ասէին, և զի՞նչ չար կամեսցի առնել նա մեզ, զի տղայ է իբրեւ զմեզ։ Եւ եկն Յիսուս նստաւ ի մէջ նոցա և ասէ ցնոսա. Ընդէ՞ր կայք լռութեամբ, և զի՞նչ զմտաւ ածէք առնել։ Ասեն տղայքն. Ո՛չինչ։ Ասէ Յիսուս. Ո՞ գիտասցէ խաղ ինչ։ Ասեն տղայքն. Մեք ոչինչ գիտեմք առնել։ Ասէ Յիսուս. Հայեցարո՛ւք ամենեքեանդ և տեսէք։ Եւ առեալ Յիսուսի զկաւն ի ձեռն իւր, և արար ճնճղուկ և փչեաց թռոյց, և ասէր. Արի՛ք հասէ՛ք և կալարուք զճնճղուկն. և նոցա տեսեալ հիացան, զարմանային ընդ գործսն Յիսուսի։ Եւ դարձեալ առեալ զհողն յերկրէ ցանեաց ընդ օդս երկնից, և լինէր ճանճ և մժեխ, և լցուցանէր զքաղաքն ամենայն. և բազում նեղութիւն հասուցանէր մարդոյ և անասնոյ։ Դարձեալ առեալ զկաւն՝ մեղու և պիծակ առնէր, և ցանէր ի վերայ նոցա և խռովեցուցանէր զնոսա։ Եւ եղեւ յետ երից աւուրց[1]

1. Յօր. պակասէր աւուրց մեզէն յաւելաք։

անցանելոյ, յարուցեալ Յիսուս երթայր ի ծածուկ ընդ մէջ քաղաքին, և ունկն դնէր վասն բանիցն ասացելոցն՝ որք ասէին. եթէ ո՞ ոք ետես ի քաղաքիս այսմիկ որդի ծերոյ ալեւորի ամենեցուն վկայեալ, եթէ զօրութիւն և սքանչելիս զոր առնէ նա՝ այսպիսի ո՛չ կարեն առնել չաստուածքն մեր։ Կէսքն ասէին. այո՛ բարիոք ասէք, կարէր առնել նա՝ զինչ և կամէր. և զայս լուեալ Յիսուսի դարձաւ լռութեամբ ի տուն իւր, և թագուցանէր զանձն, զի մի՛ ոք իմասցի։

Եւ յաւուր միում Յովսէփ և Մարիամ խորհուրդ արարեալ վասն Յիսուսի, թէ զի՛նչ արասցուք զսա, զի այսպիսի նեղութիւն կրեմք վասն նորա։ Ասէ Յովսէփ. Զի՞նչ խորհիս առնել վասն նորա, զոր հարցանես, տեսանե՞ս զի աճա՛ զարգացեալ է հասակաւ. և հանապազ զիւրովի շրջի, և ի տուն ոչ մտանէ. եթէ կամք քո լիցի, տացուք զդա ի գործ արուեստի դըպրութեան. զի ի հնազանդութեան կացցէ վարդապետին, և վարժի ամենայն ուսմամբ և գիտութեամբ աստուածային օրինացն, և լիցի ի հանգստեան և ի խաղաղութեան կեանք մեր։ Ասէ Յովսէփ. Բարիոք ասես, եղիցին կամք քո։ Ասէ Մարիամ. եթէ ո՛չ դադարի ուրեք ուսանել, զի կարի ճարտար է և հասու ամենայն իմաստութեան, ո՛չ հնազանդի վարդապետին։ Ասէ Յովսէփ. Մի՛ երկնչիր վասն դորա, զի բազում սքանչելեօք է տեսիլ դորա։ Եւ մենք յաղագս այսորիկ շըրջիմք օտար և պանդուխտ ընդ ամենայն երկիր, մինչեւ այց արասցէ Տէր Աստուած մեր և կատարեսցէ զխնդրուածս սրտից մերոց՝ ի բարի։ Ասէ Մարիամ. Ես յոյժ նեղեալ եմ վասն դորա, և յետոյ ոչ գիտեմ զի՛նչ լինելոց է։ Ասէ Յովսէփ. Յետոյ ընդ փորձութեան՝ Աստուած զելն արասցէ, մի՛ տրտմիր։ Եւ զայս ասացեալ լռեցին։

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԺԹ.

*Վասն երթալոյ նոցա յերկիրն Իսրայելի և տալոյ յուսումն դպրութեան:*

Յարուցեալ Յովսէփ առ զՅիսուս և զՄարիամ, և եկեալ յերկիրն Իսրայելի ի քաղաք մի, որ կոչի Բոթոսորոն. և էր ի քաղաքին յայնմիկ թագաւոր մի բարեպաշտ՝ ազգաւ Եբրայեցի, որոյ անունն էր Բարեսու. այր բարի ողորմած և մարդասէր: Եւ իբրև լուաւ Յովսէփ զնմանէ բարի, խորհեցաւ տեսանել զնա, հարցանէր ցքաղաքացիսն, եթէ զի՞նչ բնութեամբ իցէ թագաւորն ձեր. ասեն. Բարիոք. յայնժամ յարուցեալ Յովսէփ՝ գնաց ի դուռն արքունական, և ծանուցեալ դռնապանին զխորհուրդն իւր, ասէ. Ո՞ պատուական այր, կամիմ բան ինչ հարցանել ցքեզ: Ասէ դռնապանն. Ասա: Ասէ Յովսէփ. Լուեալ եմ վասն թագաւորին ձերոյ եթէ բարի, ողորմած, աղքատասէր և օտարաց խնամածու. և ես յօտար աշխարհէ եմ, աղաչեմ զքեզ՝ կամիմ տեսանել զնա և լսել բան ի բերանոյ նորա: Ասէ դռնապանն. Համբեր սակաւիկ մի, մինչև ծանուցից, և ապա մտանել և զքեզ ծանուցանել. քանզի գիտես որ թագաւորաց և դատաւորաց՝ որ յառաջ ծանուցանել, և ապա առնել զհրամանս նոցա: Յայնժամ դռնապանին ծանուցեալ մերձակայից թագաւորին, և ապա հրաման եղեալ ի թագաւորէն մուծանել զՅովսէփ ի ներքս. և նա յարուցեալ եկաց առաջի արքային, և խոնարհեալ երկիր եպագ նմա: Ասէ ցնա արքայն. Բարի եկիր այր[1] ծեր

1. Յօր. էր յայղ, մեք ուղղեցաք այր:

պատուական, հրամայեա՛ և նիստ. և իբրև նստաւ Յովսէփ՝ առժամայն լուռ եղև և ո՛չ խօսեցաւ։ Եւ արքայն մեծաւ սիրով ընկալաւ զնա, և եդ առաջի նորա սեղան, կերան և արբին և ուրախ եղեն։ Ասէ արքայն. Ասա ինձ պատուական այր, յո՞ր աշխարհէ ես եկեալ և կամ յո՞ր երթաս։ Ասէ Յովսէփ. Ես ի հեռաւոր երկրէ եմ եկեալ։ Ասէ արքայն. Բարի եկիր ծեր դու, զոր ինչ խնդրես յինէն արարից քեզ։ Ասէ Յովսէփ. Ես ալևոր եմ և օտարական, եկի աստ և կամիմ բնակիլ ի քաղաքս յայս ի տեղի ուրեք, և եմ ճարտար ի գործս հիւսնութեան, և զոր ինչ պէտք լիցի յարքունիս՝ հանապազ կատարեցից։ Ապա հրամայեաց՝ զի մի՛ ոք զրպարտեսցէ զնա իբրև զօտար։ Եւ յարուցեալ Յովսէփ երկիր եպագ արքային, և ասէ. Ո՛ արքայ՝ եթէ կամք քո լիցի, տաց զմանուկն իմ յուսումն դպրութեան։ Ասէ արքայն. Ես արարից զայդ, և հրամայեաց թագաւորն կոչել զվարդապետն՝ որում անունն էր Գամաղիէլ. և իբրև եկն, մեծաւ սիրով ընկալաւ զնա։ Ասէ արքայն. Վարդապետ, կամիմ զի առցես զմանուկս զայս ի յուսումն դպրութեան, և զամենայն պէտս մարմնոյ քո արքունուստ առցես։ Ասէ Գամաղիէլ. Ո՞ւմ է պատանեակս այս գեղեցիկ։ Ասէ արքայն. Որդի է դա առն մեծատան ի թագաւորի տօհմէ, և ծերդ այդ վերակացու է մանկանդ։ Ասէ Գամաղիէլ. Կամք քո լիցին։ Յայնժամ յարուցեալ Յովսէփ երկիր եպագ և էառ զմանուկն և գնաց ուրախութեամբ ի տուն իւր, և պատմեաց Մարիամու զամենայն, և ուրախ եղև և գոհանայր զԱստուծոյ։

Digitized by Google

## ԳԼՈՒԽ Ի.

*Վասն տալոյ զՅիսուս Գամաղիելի յուսուցմն գրոց:*

*Եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ առ տատրակ մի և զՅիսուս առաջի իւր, և եկն առ Գամաղիէլ. և իբրև ետես Յիսուս զվարդապետն իւր՝ խոնարհեալ երկիր եպագ նմա: Ասէ Գամաղիէլ. Բարի եկիր Նորատունկ արմատ, քաղցրահամ պտուղ, և ողկոյզ ծաղկեալ: Դարձեալ Գամաղիէլ ասէ ցՅովսէփ. Պատուական ծեր ասա ինձ, քո՞ է մանուկս այս, եթէ այլում իցէ: Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէր, որ յԱստուծոյ տուեալ է դա ինձ որդի, և ոչ է ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ: Ասէ Գամաղիէլ. Քանի ամաց է մանուկս: Ասէ Յովսէփ. Ութն: Յայնժամ առեալ վարդապետին զտախտակն ի ձեռանէ մանկանն, և ասէ. Գրեցից զերգս երկոտասան, եթէ բաւական իցէ իմանալ և ի միտ առնուլ զայն[1], այլ բովանդակ գրեցից: Ասէ Յովսէփ. Արա ըստ կամաց քոց որպէս և կամիս. և առեալ վարդապետն՝ գրեաց գիրս երկոտասան, և Յիսուս յարուցեալ գնաց առաջի վարդապետին իւրոյ, և սկսաւ յառաջ նկատել զմեկնութիւն գրոյն՝ և ապա զգիրսն: Եւ իբրև գրեաց ետ զտախտակն ի Յիսուս, և Յիսուս խոնարհեալ երկիր եպագ նմա, և առեալ զտախտակն ի ձեռանէ նորա: Ասէ Գամաղիէլ. Լո՛ւր ինձ որդեակ և զոր ինչ խրատ՝ տամ քեզ՝ ընթերցիր. և սկսաւ Գամաղիէլ յառաջ զգիրն ասել: Ասէ Յիսուս. Ո՞վ վարդապետ՝ զիա՞րդ այդպէս խօսիս, զի զոր ասես՝ ո՛չ գիտեմ. այլ մի բան օտարի[2] թուի ինձ, և ոչ կարեմ ի-*

1. Յօր. էր զայն ուղղեցաք զայն:
2. Գուցէ օտարոտի:

մանալ։ Ասէ Գամաղիէլ. Այս է անուն գրոյն։ Ասէ Յիսուս. Զգիրդ ճանաչեմ, բայց զմեկնութիւնն ասա՛ ինձ։ Ասէ Գամաղիէլ. Եւ գիրդ զի՞նչ ունի ինքեան թարգմանութիւն։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է որ առաջին գիրն այլ կերպարան ունի, և միւսն այլ տեսակ, և միւսն այլ նմանութիւն։ Ասէ Գամաղիէլ. Ցաղագս տեսութեան աչաց է, այլ հրամայեա ինձ զմեկնութիւն գրոյն, զի գիտացից։ Ասէ Յիսուս. Դու ես վարդապետ Իսրայէլի, և զայդ ո՞չ գիտես։ Ասէ Գամաղիէլ. Զոր ինչ ուսեալ եմ ի հարց անտի գիտեմ։ Ասէ Յիսուս. Գիրն անուն Աստուած թարգմանի, և Բանն Աստուած ծնունդ առնու և մարմնանայ. Բանն Աստուած գրոյն, և ի Բանէն Հոգին սուրբ, որ է Երրորդութիւն։ Իբրեւ լուաւ Գամաղիէլ զայս, հիացեալ հայէր ընդ շնորհս գիտութեան Նորա. և ասէ Գամաղիէլ. Ո՞ւր ես ուսեալ զայդ իմաստութիւնդ, կարծեմ եթէ շնորհք Հոգւոյն սրբոյ ընդ քեզ միացեալ է։ Ասէ Յիսուս. Վարդապետ ուսո ինձ այլ բան՝ զոր յառաջն խոստացար ուսուցանել։ Ասէ Գամաղիէլ. Որդեակ՝ ինձ պարտ է աշակերտել քեզ, զի աքանչելի երեւեցար ի միջի մերում. արդ աղաչեմ զքեզ ասա՛ ինձ զմեկնութիւն գրոյն։ Ասէ Յիսուս. Ասացից և ոչ կարես իմանալ ըզխորհուրդն՝ որ ծածկեալ է ի տեսութենէ մտաց մարդկան, մինչեւ այց արասցէ Տէր ամենեցուն, և ապա ափռեալ տարածեսցի շնորհք Հոգւոյն սրբոյ ընդ ամենայն տեղիս։ Ասէ Գամաղիէլ ընդ միտս իւր, արդարեւ որդի Աստուծոյ է սա. կարծեմ՝ թէ սա է Քրիստոսն զոր մարգարէքն խօսեցան վասն գալստեան դորա։

Զայս իբրեւ ասաց Գամաղիէլ, կոչեաց զՅովսէփ և ասէ ցնա. Ծեր դու՝ իրաւի ասացեր, թէ ո՛չ է որդի իմ ըստ մարմնոյ՝ այլ ըստ հոգւոյ։ Ասէ Յովսէփ ցՅիսուս. Ասա՛ ինձ որդեակ, զի՞նչ արարից քեզ որ ո՛չ հնազանդիս վարդապետին։ Ասէ Յիսուս. Ընդէ՞ր այդչափ բարկացեալ ի վերայ իմ, զոր ասաց նա գիտեմ, և զոր հարցանեմ՝ ոչ տայ պատասխանի։ Ասէ Յովսէփ. Ցաղագս խրատու և իմաստութեան ետու ուսա-

նել զքեզ, և դու դարձեալ խրատ տաս վարդապետին։ Ասէ Յիսուս. Զոր ոչն գիտէի ուսայ, և զոր գիտեմ՝ ո՛չ ինչ է պիտոյ ուսանել։ Ասէ Գամաղիէլ. Լուեա՛ ի խօսելոյ, զի այսպէս յանդիմանես զմեզ. արի երթ ի խաղաղութիւն, և Տէր առաջնորդեսցէ քեզ յամենայն գործ բարութեան։ Եւ Յիսուս յարեաւ վաղվաղակի առ զտախտակն, երկիր եպագ վարդապետին և ասէ. Վարդապետ բարի՝ Աստուած հատուսցէ քեզ զվարձս։ Ասէ Գամաղիէլ. Ե՛րթ խաղաղութեամբ՝ և Տէր կատարէ զխորհուրդ քո ի բարի։ Եւ Յիսուս եկն առ մայրն իւր, և ասէ Մարիամ. Որդեակ, ո՞րպէս ուսար այսօր զամենայն և կատարեցեր։ Ասէ Յիսուս. Ուսայ և այլ ոչ կարէ տալ պատասխանի ինձ վարդապետն իմ։ Եւ Յովսէփ տրտմեալ էր վասն Յիսուսի. ասէ ցԳամաղիէլ. Ասա՛ ինձ վարդապետ զինչ արարից զմանուկս։ Ասէ Գամաղիէլ. Ուսո՛ զամենայն արուեստ հիւսնութեան քո։ Եւ գնաց Յովսէփ ի տուն իւր, և տեսեալ զՅիսուս նստեալ, և տախտակն ի ձեռին իւրում։ Ասէ ցնա. Ուսա՞ր զամենայն ինչ։ Ասէ Յիսուս. Ուսեալ եմ և կամիմ լինել վարդապետ տղայոց։ Ասէ Յովսէփ. Գիտեմ որ ո՛չ կամիս ուսանել՝ ե՛կ և ուսիր զարուեստս հիւսնութեան։ Ասէ Յիսուս. Բարի և ուսանիմ։ Եւ Յովսէփ սկիզբն էր արարեալ շինել թագաւորին թախտ մի գեղեցիկ քանդակեալ. և մի բազրոտն փայտին կարճ էր և ո՛չ գոյր այլ բազրոտ. և Յովսէփ զմտաւ ածէր, թէ զի՞նչ արասցէ։ Ասէ Յիսուս. Զի՞նչ խորհիս առնել զայդ։ Ասէ Յովսէփ. Զի՞ փոյթ է քեզ հարցանել, ա՛ռ զտապարն և կոփեա՛ զբազրոտն զայն, և արա՛ չորեքկուսի ըղորդ քառաձեւ։ Եւ Յիսուս առեալ զտապարն ի ձեռն, և եհար երիցս անգամ զփայտն որ էր հնգետասան չափ, և եհար սրով ընդ մէջ՝ և բաժանեաց զնա ընդ երկուս մասունս, և եդ զսուրն ի վերայ փայտին՝ և նստաւ։ Եկն Մարիամ և ասէ ցՅիսուս. Որդեակ, կատարեցե՞ր զգործն զոր սկսար։ Ասէ Յիսուս. Այո՛, կատարեցի, ապա ընդէ՞ր ամենայն գործ բռնադատէք զիս ուսանիլ։ Եկն Յովսէփ, և ետես զփայտն յերկուս մասունս բաժանեալ, և ասէ

ցՅիսուս. Որդեակ, զի՞նչ է վնաս մեծ որ արարեալ ես։ Ասէ Յիսուս. Զի՞նչ արարի ասա՛ ինձ։ Ասէ Յովսէփ. Միւս փայտն պակաս էր, և միւսն կարի աւել, ընդէ՞ր հատեր որ ո՛չ լինիցի երկու կողմանց։ Ասէ Յիսուս. Վասն այնորիկ՝ զի երկուց կողմանց լինիցի։ Ասէ Յովսէփ. Ո՞րպէս լինիցի։ Ասէ Յիսուս. Մի՛ տրտմիր յաղագս այնորիկ, ա՛ռ երկու փայտն չափեա՛ և իմացի՛ր, և դարձեալ չափեա՛, և եղեւ երկոտասան թիզ։ Իբրեւ ետես Յովսէփ՝ զարմացաւ և երկեաւ ի նմանէ, զի եղեւ երկու կողմանց հաւասար, միւսն պակաս էր փայտին և միւսն կարի առաւել։ Զայս արարեալ Յիսուս նշանս առաջի Յովսեփայ և Մարիամու մօրն իւրոյ։

Իսկ յետ անցանելոյ աւուրց՝ առեալ Յովսէփ զտախտակն՝ զոր շինեալ, տարեալ ետ առաջի թագաւորին, և երկիր եպագ նմա. իբրեւ ետես արքայն՝ հաճեցաւ և ուրախ եղեւ, հրամայեաց տալ նմա ինչս և ստացուածս ի պէտս կերակրոյ՝ որչափ և բաւական իցէ. և նորա առեալ խնդութեամբ երթայր ի տուն իւր։ Եւ յաւուր միում հրամայեաց կոչել զՅովսէփ ի ճաշ, և այլ իշխանք մեծամեծք ընդ նմա, կերան և արբին և ուրախ եղեն. ասէ թագաւորն ցՅովսէփ. Ծեր դու խնդիր ունիմ ինչ ի քէն զի արասցես։ Ասէ Յովսէփ. Հրամայեա զի արարից։ Ասէ արքայն. Կամիմ շինեսցես ինձ ապարանս դեղեցիկս, և վերնատուն մի բարձրագոյն յոյժ, զլայնութիւնն և զերկայնութիւնն մի՛ով չափով արասցես, և շուրջ զնովաւ աթոռս և բազմակալս, և զարդարեսցես զնա նկարիւք, որպէս և դու իսկ քաջ գիտես. և զամենայն պէտս մարմնոյ և աշխատութեան քո կրկին հատուցից քեզ։ Ասէ Յովսէփ. Այո, արքայ՝ ես արարից զհրամանս քո, բայց հրամայեա՛ բերել յանփուտ փայտից առաջի իմ՝ զի տեսից։ Ասէ արքայն. Ես արարից զամենայն՝ զոր ինչ պիտոյ իցէ։ Ապա յարուցեալ թագաւորն, էառ ընդ իւր իշխանս մեծամեծս և զՅովսէփ ընդ նոսին, և գնացին ի տեղի մի վայելուչ և շրջաժողով, և բազում ակունս աղբերաց, և բարձր բլուր մի յեզեր ջրին։ Եւ

Digitized by Google

հրամայեաց թագաւորն Յովսեփայ չափել պտեղին, և Յովսէփ չափեաց զլայնութիւն և զերկայնութիւն տեղւոյն, որպէս հրամայեաց թագաւորն, և սկիզբն էառ շինել: Իբրեւ կամեցաւ ձգել զպարունակն, մի փայտն կարճ էր և ո՛չ հասանէր. և տրտմեցաւ Յովսէփ, և ոչ գիտէր զի՞նչ առնէր: Նոյն ժամայն եկեալ թագաւորն և տեսեալ զՅովսէփ տրտմեալ, ասէ ցնա. Ընդէ՞ր նըստեալ կաս դատարկ: Ասէ Յովսէփ. Զոր բազում ջանիւ աշխատեցայ ի վերայ փայտիս՝ և թերի եղեւ: Ասէ թագաւորն. Ես այլ փայտ բերից լաւագոյն քան զայս. և ի խօսել բանին՝ եկն եկաց Յիսուս ի մէջ նոցա, եւ խոնարհեալ երկիր եպագ թագաւորին: Ասէ թագաւորն. Բարի եկիր գեղեցիկ մանուկ, Հօր միածին և անդրանիկ: Ասէ Յիսուս. Ընդէ՞ր տրտում նստեալ կայք աստ դատարկ՝ անբան: Ասէ արքայն. Ո՛ մանուկ դու, ամենայն ինչ կատարեալ է որպէս տեսանես, և մի ինչ պակաս է: Ասէ Յիսուս. Ո՞ր գործ: Ասէ արքայն. Հայեաց և տե՛ս զքանդակ փայտս՝ որ կարճ է, և ո՛չ գոյ այլ: Ասէ Յիսուս ցՅովսէփ. Բուռն հար զտասանէ փայտիդ և պինդ կալջիր. և թագաւորն հայեցեալ ի Յիսուս, ասէ. Զի՞նչ կամիք առնել: Եւ Յիսուս կալեալ բուռն եհար զտասանէ փայտին և ասէ ցՅովսէփ. Քարշեա՛ զի մի՛ մեկնեսցի փայտիդ պակասութիւնն. և թուէր յաչս ամենեցուն ծաղր առնել. և Յովսէփ հաւատացեալ կամացն Յիսուսի, ձգեաց զձեռն իւր, և կալաւ զփայտն, և[1] յաւելաւ երիս թիզս: Եւ իբրեւ ետես թագաւորն զոր արար նշանս Յիսուս, և երկեաւ ի նմանէ՝ երկիր եպագ նմա՝ և համբուրեաց զնա, և զգեցոյց նմա զգեստ արքունական, և թագ կապեաց ի գլուխ նորա, և առաքեաց զնա առ մայրն իւր: Եւ Յովսէփ կատարեաց զամենայն գործ շինուածոյն, և արքայն տեսեալ ուրախ եղեւ. և շնորհեաց նմա բազում ինչս ոսկւոյ և արծաթոյ, և արձակեաց զնա ուրախութեամբ ի տուն իւր:

1. Յօր. պակասէր և ; մեղէն յաւելաք.

## ԳԼՈՒԽ ԻԱ.

Վասն գնալոյ ի քաղաքն Տապարիս, և տալոյ զՅիսուս յարուեստ ներկարարութեան։

Ցարուցեալ Յովսէփ ընդ առաւօտն անտի՝ էառ զՅիսուս և զմայրն իւր, եկեալ ի քաղաքն Տապարիս, և անդ իջեւանս արարեալ առ դրանն տան միոյ որոյ անուն էր Իսրայէլ, որ էր ներկարար՝ որ զամենայն ներկն քաղաքին առեալ էր ի տան իւրում. և եկեալ Իսրայէլ ետես ի դրան իւրում զՅովսէփ և զմանուկն Յիսուս և զմայրն իւր՝ ուրախ եղեւ յոյժ։ Ասէ ցՅովսէփ. Ասա ինձ տէր, ուստի՞ գաս կամ յո՞ երթաս։ Ասէ Յովսէփ. Ես ի հեռաւոր աշխարհէ եմ և շրջիմ պանդուխտ և օտար ընդ ամենայն տեղիս։ Ասէ Իսրայէլ. Եթէ կամիս կեալ՝ կա՛ց ի քաղաքիս յայսմիկ, և ես արարից քեզ ընդունելութիւն ի տան իմում, որպէս և հաճոյ թուի քեզ։ Ասէ Յովսէփ. Եղիցին կամք քո որպէս և կամիս։ Ասէ Իսրայէլ. Ո՞րպէս կաս արուեստիւ։ Ասէ Յովսէփ. Դիւրին է, զի ես ամենայն արուեստիւ հմուտ եմ առնել լուծ եզանց և արօր, և այլ ինչ.պիտոյ իցէ ումեք կարեմ առնել։ Ասէ Իսրայէլ. Կա՛ց ի տան իմում, և ո՛չ ինչ նեղութիւն հասցէ քեզ յումեքէ, իբրեւ զհայր պատուեմ զքեզ. և եթէ տացես զմանուկն քո յուսումն արուեստի իմոյ, իբրեւ զորդի հարազատ ընդունիմ զնա պատուով։ Ասէ Յովսէփ. Բարիոք ասես, ա՛ռ զմանուկս որպէս և կամիս, ա՛ծ զդա ի հաւանութիւն կամաց քոց, զի կարի յոյժ նեղեալ եմ ես ի դմանէ ի բազմաց ժամանակաց։ Ասէ Իսրայէլ. Մի՛ լսօղ և հնազանդօղ չէ՞ հրամանաց քոց։ Ասէ Յովսէփ. Ո՛չ այդպէս է զոր ա-

սես, այլ ի բազում արուեստ փոխեալ է դա՝ և ոչ կատարեալ։ Ասէ Իսրայէլ. Քանի՞ ամաց է դա։ Ասէ Յովսէփ. Ինն ամաց և երկու ամսոց։ Ասէ Իսրայէլ. Բարւոք է։ Յայնժամ առեալ Իսրայէլ զմանուկն Յիսուս՝ և տարաւ ի տուն իւր, և եցոյց նմա զամենայն գործ արուեստին իւրոյ կարգաւ, և ասէ. Ահա՛ որդեակ, տե՛ս զայդ ամենայն աչօք քո և իմացի՛ր, և զոր ինչ ցուցանեմ քեզ՝ միտ դի՛ր։ Եւ Յիսուս հաւանեալ կամաց նորա, և մտադիւրութեամբ ունկն դնէր խրատոյ նորա։

Եւ յաւուր միում յարուցեալ կամէր շրջիլ ընդ ամենայն քաղաքն, և ժողովեաց բազում կտաւս, և բերեալ զամենայն գրով եդ ի տան իւրում. և կոչեաց զՅիսուս առ ինքն, և ասէ. Ահա որդեակ զոր տեսանես ամենեցուն համարն տալոց եմք իւրաքանչիւրոց, և դու այսուհետեւ զգուշ կաց յամենայն ընչից որ ի տանս մեր իցէ. զի մի՛ մեզ կորուստ հասցէ վաղվաղակի՝ և տուգանս տայցեմք իւրաց, զի ահա հինգ հարիւր դահեկանի պարտական եմ յարքունիս վճարել։ Ասէ Յիսուս. Դարձեալ դու յո երթաս։ Ասէ Իսրայէլ. Ահա ժողովեալ եմ զամենայն ներկ քաղաքիս՝ առ քեզ թողից, զի ես երթեալ արտաքոյ շրջիմ ի գիւղս և յագարակս, մինչեւ զամենայն բաւական ի տեղի հատուցից, և զոր ինչ հրամայիցեն ինձ առնել զգործն՝ զայն արարից։ Ասէ Յիսուս. Զո՞ր գործ։ Ասէ Իսրայէլ. Զգոյնս և զներկն, երբեմն ծաղկանց նկարից, կարմիր յորդան, կանանչ, կապուտ, ծիրանի, դեղին, խարտեշ, թուխ և այլ զանազան տեսակս, զոր ո՛չ կարեմ պատմել քեզ։ Իբրեւ լուաւ զայս Յիսուս, զարմացաւ ընդ զօրութիւն մտաց մարդկան։ Ասէ Յիսուս ցԻսրայէլ. Վարպետ, գիտե՞ս զիւրաքանչիւր անուանս։ Ասէ Իսրայէլ. Այո՛, գրով կարեմ իմանալ։ Ասէ Յիսուս. Աղաչեմ զքեզ վարպետ, ուսո ինձ առնել զամենայն ինչ։ Ասէ Իսրայէլ. Այո՛, եթէ լսես ինձ և հնազանդ լինիս հրամանաց իմոց՝ ուսուցից. և Յիսուս խոնարհեալ երկիր եպագ նմա, և ասէ. Վարպետ, արարից զկամս քո, բայց յառաջ ծանո ինձ զգործն, զի տե-

տից։ Ասէ Խորայէլ. Բարիոք ասես, բայց մի՛ ինչ առնէր յանձնէ քումմէ զոր ո՛չ գիտես, մինչեւ դարձեալ եկից առ քեզ. և զդուռն տանն, զոր փակեալ և կընքեալ եմ մատանեաւս իմով, մի՛ բանայցես, և դուն հաստատուն կաց ի տեղիս և մի՛ երկմտիր։ Ասէ Յիսուս. Յորո՞ւմ աւուր ակն ունիցիմ գալստեան քո։ Ասէ Խորայէլ. Զի՞ փոյթ է քեզ հարցանել վասն իմ, զի օր աւուր գործն յաջողեսցէ ի վերայ իմ, որպէս Տէր կամեսցի։ Ասէ Յիսուս. Երթ ի խաղաղութիւն։ Յայնժամ յարուցեալ Խորայէլ գնաց ի քաղաքէ անտի։

Եւ Յիսուս յարուցեալ եկաց, բացեալ զդուռն տանն՝ և առեալ զամենայն ներկս քաղաքին և լից ի կարաս մի կապուտ ներկի, և եփեալ զկարասն՝ և փակեաց զդուռն տանն, և ելեալ գնաց ըստ սովորութեան իւրում ի տեղի՝ որ խաղ առնէին տղայքն. և ընդ նոսա գոտէմարտ եղեալ նուաճեցուցանէր զամոլաջիլս նոցա. և տղայքն անկեալ ի վերայ երեսաց իւրեանց՝ և ո՛չ կարէին ելանել ի վերայ ոտից իւրեանց. դարձեալ ձեռն դնէր՝ և հաստատէր զնոսա։ Եւ այլ փչէր ընդդէմ երեսաց տղայոցն և կուրացուցանէր զաչս նոցա. դարձեալ ձեռն դնէր և լուսաւորէր զաչս նոցա, և առեալ փայտ մի ի ձեռին իւրում ձգէր ի մէջ տղայոցն, լինէր օձ և զամենեսին փախստական առնէր. և զոր հարեալ վիրաւորէր և դարձեալ ձեռն դնէր և բժշկէր զնոսա։ Եւ ածէր զմատն իւր ի լսելիս տղայոցն և խլացուցանէր զնոսա, դարձեալ փչէր՝ ի լսողութիւն ածէր։ Առեալ քար ի ձեռին փչէր ի վերայ քարին՝ որպէս զհուր բորբոքէր, և ձգէր առաջի տղայոցն՝ կիզոյր ըզհուրն որպէս խռիւ չորացեալ. ապա առնոյր զքարն ի ձեռին, փոխարկեալ լինէր քարն յառաջին բնութիւնն։ Առեալ տղայքն տանէր առ եզր ծովուն, և առեալ զգնտակ խաղին և զճոկանն[1], երթայր անթաց ոտիւք ի վերայ ալեաց ծովուն, իբրեւ ի վերայ պաղի սառուցելոյ՝ խաղալեօք. և տեսեալ տղայոցն ամենեցուն ճիչ բարձեալ ասէին. Տեսէք զմանուկն Յիսուս,

1. Յօր. էր ճաճան ուղղեցաք ճոկան։

եթէ զի՞նչ առնէ ի վերայ ալեաց ծովուն. զայն լուեալ բազմութիւն քաղաքին՝ անդր հասանէին, և տեսեալ զգործն հիանային։ Իսկ Յովսեփայ տեսեալ՝ անդ հասանէր և ասէր. Ո՛րդեակ զի՞նչ է գործդ զոր առնես, զի ահա վարպետն քո զամենայն ինչ հաւաքեալ է ի տանն, քեզ յանձն արար, և դու անփոյթ արարեալ ես, և եկեալ ես ի տեղիս խաղ արկեալ ես, աղաչեմ զքեզ արի՛ գնամք առ վարպետն քո։ Ասէ Յիսուս. Բարիոք ասես, գնամք և ես կատարեմ, զամենայն ինչ՝ զոր վարպետն իմ պատուէր ետ ինձ՝ զայն արարից. այժմ ապասեալ մնամ գալոյ նորա։ Եւ Յովսէփ իբրև լուաւ զայս բանս, ոչ իմացաւ՝ եթէ զի՞նչ խօսէր Յիսուս. իբրև եկն նա առ մայրն իւր, և հայեցեալ Մարիամ ընդ Յիսուս ասէ. Որդեակ կատարեցե՞ր զամենայն զոր պատուէր ետ վարպետն. ասէ Յիսուս. Զամենայն ինչ կատարեալ եմ, և ո՛չ ինչ պակաս է. զի՞նչ խնդրէ յինէն վարպետն իմ։ Ասէ Մարիամ. Տեսանեմ զքեզ որ այսօր երրորդ օր է որ ո՛չ զանց արարեալ իցես, տեսանե՞ս զտունն զայն, ընդէ՞ր կամիս զմեզ ի կորուստ մահու մատնել։ Ասէ Յիսուս. Լռեա՛ց ի խօսելոյ, զոր ինչ խրատ ետ վարպետն իմ՝ ուսայ, և զպատուէրն զոր ետ ինձ՝ գիտեմ։ Ասէ Մարիամ. Որդեակ բարիոք է, դու գիտես։ Եւ ի խօսելն նոցա՝ հայեցեալ Յիսուս տեսանէր զվարպետն զի գայր. յարուցեալ Յիսուս խոնարհութեամբ ել ընդ առաջ նորա, և խոնարհեալ երկիր եպագ նմա։ Ասէ Իսրայէլ. Որդեակ, որպիսի՞ կաս, ուրա՞խ ես։ Ասէ Յիսուս. Բարիոք կամ։ Դարձեալ ասէ Յիսուս ցԻսրայէլ. Վարպետ որպիսի՞ եղեւ ի դառնալդ քում։ Ասէ Իսրայէլ. Որպէս Տէր կամեցաւ։ Ասէ Յիսուս. Բարի եկիր և խաղաղութեամբ, Աստուած հատուցանէ քեզ ըստ վաստակոց քո որպէս և դու ինձ արարեր։ Զի ահա ուսայ ամենայն գործ արուեստիդ, և զոր ինչ խրատ ետուր ինձ ուսայ և գիտեմ, և զոր ինչ խորհէիր առնել իմացայ և կատարեցի զամենայն։ Ասէ Իսրայէլ. Զո՞ր գործ։ Ասէ Յիսուս. Զոր ինչ խրատ ետուր ինձ՝ զայն արարի։ Իբրեւ իմացաւ Իսրայէլ զոր ինչ ասաց Յիսուս,

Digitized by Google

և գնաց առ դուռն, որ զփակն բացեալ էր, և տրտմեցաւ յոյժ, և մտեալ ի ներքս հայեցաւ յանկիւն տանն և ոչ ինչ ետես. ճիչ բարձեալ և ասէ. Ո՞ւր է ներկ քաղաքիս որ ի տուն աստ ժողովեալ կայր: Ասէ. Ո՞չ ասացի քեզ յորժամ ելի ընդ առաջ քո, եթէ զգործն զոր խորհէիր առնել՝ կատարեալ եմ զայն: Ասէ Իսրայէլ. Ա՞յս է գործդ, զոր արարեալ ես, որ զամենայն ներկ քաղաքիս հաւաքեալ ես ի կարասն կապուտին: Ասէ Յիսուս. զի՞նչ չար արարի քեզ որ այդպէս բարկացեալ ես, որ ի բազում հոգոց և աշխատութեանց զերծուցի զքեզ: Ասէ Իսրայէլ. Ա՞յս է հանգիստն՝ որ բազում վնաս և կորուստ և տուգանս ածեր ի վերայ անձին իմոյ. իբրաւի ասաց ծերն, եթէ ոչ կարես ածել զդա ի հաւանութիւն. արդ զի՞նչ արարի քեզ՝ որ այսպիսի վնաս մեծ գործեցեր ի տան իմում՝ որ ո՛չ իմ իցէ, այլ ամենայն՝ է քաղաքիս. վա՜յ ինձ, զի՞նչ է չարս որ եղեւ ինձ. լայր և կոծէր զանձն իւր: Դարձեալ ասէր Յիսուսի. Ընդէ՞ր այսպիսի աւեր և քակտումն ածեր ի վերայ տան իմոյ: Ասէ Յիսուս. Ընդէ՞ր այդչափ զայրացեալ ես, զի՞նչ պակասութիւն արարի ի տան քում, յորժամ զգործն իմաստութեամբ լուայ ի քէն՝ և խրատ առեալ իմացայ, և զոր ասացեր ուսայ ի քէն զամենայն և կարէի առնել: Ասէ Իսրայէլ. Ո՞չ ասացի քեզ. մի՛ առներ ինչ յանձնէ քո, զոր ո՛չ գիտես: Ասէ Յիսուս. Վարպետ հայեա՛ց աչօք քո և տե՛ս. զի՞նչ վնաս արարեալ եմ քեզ: Ասէ Իսրայէլ. Ո՞րպէս կարացից համարս տալ զգոյն և զներկն, զոր խնդրեն յինէն: Ասէ Յիսուս. Յորժամ գնայիր խաղաղութեամբ և դարձար ի տուն քո, զի՞նչ պակաս գտար: Ասէ Իսրայէլ. Եթէ խնդրեն իւրաքանչիւր զգործն իւր, զի՞նչ արարից: Ասէ Յիսուս. Բե՛ր կացո զտէր իրաց առաջի իմ, և ես տաց նմա ըստ նմանութեան գեղոյ՝ որպէս ինքն կամեսցի: Ասէ Իսրայէլ. Ո՞րպէս կարես ճանաչել զամենայն իրս մարդոյ: Ասէ Յիսուս. Ո՛ վարպետ, զո՞ր գոյն խնդրես՝ որ ցուցանեմ ի միոյ կարասէ: Իբրեւ լուաւ զայս Իսրայէլ, բարկացաւ ընդ ասելն Յիսուսի. Թուէր յաչս իւր եթէ ծաղր առնէր զինքն: Ասէ Յի-

Digitized by Google

սուս. Հայեա՛ց աչօք քո և տե՛ս իսկ. և սկսաւ Յիսուս հանել զներկն ի միոյ կարասէ ըստ անուանց գեղեցկութեանց պայծառ և վայելուչ։ Իբրեւ ետես Իսրայէլ զոր արար Յիսուս, և ո՛չ իմացաւ զհրաշ Նորա. այլ կոչեաց զՅովսէփ և զՄարիամ առաջի իւր, և ասէ ցնոսա. Զի՞նչ է գործս այս զոր արար մանուկն ձեր ի տան իմում զվնասս մեծ. արդ, զի՞նչ արարի ձեզ, իբրեւ զհայր պատուով և մեծաւ սիրով ընկալայ զձեզ. ահա հինգ հարիւր դահեկանի պարտական եմ յարքունիս վճարել. լայր և կոծէր զանձն իւր։ Ասէ Մարիամ ցՅիսուս. Զի՞նչ է գործդ այդ որ արարեր ի քաղաքիս, և ածեր այսպիսի կորուստ. ահա մատնիս դու ի ծառայութիւն, և մեք ընդ քեզ ի մահ մատնիմք։ Ասէ Յիսուս. Զի՛նչ չար արարի ձեզ՝ որ ժողովեալ էք վասն իմ, և ի զուր դատէք զիս. եկէ՛ք և տեսէ՛ք ըզգործսն զոր արարի։ Եւ գնացեալ Մարիամ և Յովսէփ տեսին զգործսն զոր առնէր Յիսուս. զարմացեալ հայէին ընդ բանս Նորա, և Իսրայէլ ոչ իմացաւ զնըշանն զայն այլ բարկացեալ կրճտէր զատամունս իւր ի վերայ Յիսուսի, և մռմռեալ իբրեւ զչար գազան՝ կամեցաւ հարկանել զՅիսուս։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է՝ զի այդչափ բարկութեամբ լցեալ ես, զի՛նչ չար տեսեր յիս։ Իբրեւ լուաւ զայս Իսրայէլ, էառ զկոփիչն և ընթացեալ զի հարկանիցէ զՅիսուս. տեսեալ Յիսուսի փախեաւ ի տեղւոջէն. և ձգեաց զկոփիչն ի յետ Յիսուսի, ո՛չ կարաց հարկանել, և եհար զգետինն. Նոյն ժամայն արմատացաւ կոփիչն և եղեւ ծառ, ծաղկեալ և երեր պտուղ և կայ մինչեւ ցայսօր. և Յիսուս փախըստական ել ընդ դուռն քաղաքին և ընթացեալ անկաւ ի ծովն, և երթայր ի վերայ ծովուն իբրեւ զցամաք։ Եւ Իսրայէլ ճիչ բարձեալ ի մէջ քաղաքին և ասէր. Տեսէ՛ք և ողորմեցէ՛ք ինձ, զի փախեաւ մանուկն Յիսուս, և տարաւ զամենայն ինչ որ ի տան իմոյ էր. հասէ՛ք և կալարո՛ւք զնա, և ինքն այլ երթայր զհետ բազմութեանն. կալեալ զկիրճս ճանապարհին՝ խնդրէին զմանուկն Յիսուս, և ո՛չ գտանէին։ Իսկ ոմանք վկայէին զնմանէ, եթէ յորժամ ել

նա ընդ դուռն քաղաքին տեսաք զնա ի ծովն անկեալ, և այլ ոչ գիտեմք՝ եթէ զինչ եղեւ։ Եւ գնացեալ բազմութիւնք մարդկան՝ շուրջ պատեալ զափն ծովուն, և ո՛չ գտանէին. յետոյ դարձեալ գնացին, և ի գնալն նոցա՝ ելեալ Յիսուս ի ծովէն՝ նստէր ի ծովափն ի վերայ վիմի միոյ՝ ի նմանութիւն տղայի. քաղաքացիքն հարցանէին զնա և ասէին. Մանո՛ւկ դու՝ ո՞չ ես տեսեալ զՅիսուս որդի ծերոյն։ Ասէ Յիսուս. Ո՛չ գիտեմ։ Ապա լինէր ի կերպս երիտասարդի. հարցանէին զնա. Դու ո՞չ ես տեսեալ զորդին Յովսեփայ. Ասէ Յիսուս. Ո՛չ։ Դարձեալ լինէր ի նմանութիւն ծերոյ. հարցանէին զնա. Տէր դու, տեսեա՞լ ես զորդի ծերոյ Յովսէփայ։ Ասէ Յիսուս. Ոչ եմ տեսեալ։ Իբրեւ ոչ գտին զՅիսուս, դարձան ի քաղաքն, և կալեալ զՅովսէփ կացուցին յատեանն, և ասեն. Ո՞ւր է մանուկն քո՝ որ այսպիսի խաբէութեամբ պատրեաց զմիտս մեր, որ ի տան առն այնորիկ առեալ և փախեաւ զինչս նորա։ Եւ Յովսէփ լռութեամբ կայր և ո՛չ տայր պատասխանի։ Եւ Իսրայէլ գնաց տրտմութեամբ ի տուն իւր, և եկն ի տեղին յայն, ուր ձգեալ էր զկոփիչն, զի առցէ. իբրեւ ետես արմատացեալ և ունէր պտուղ, զարհուրեցաւ և ասէ ի միտս իւր. արդարեւ որդի Աստուծոյ էր նա, կամ ի նմանէ է։ Եւ գնաց եմուտ ի տուն իւր, և բացեալ զկարասն. և եգիտ զամենայն ներկս ի մի կարաս հաւաքեալ որ էր կապոյտ։ Իբրեւ սկըսաւ հանել, և ո՛չ ինչ պակաս էր ի համարոյ զգիրս զգեստից և զգոյնս՝ զոր պատուէր առեալ էր ներկել. տեսանէր զամենեսեան գոյն զգոյն ներկեալ էր, որպիսի պատուէր առեալ էր ի նոցանէ. տեսեալ զնշանս զայս գոհացեալ զԱստուծոյ և փառս ետ։ Ապա յարուցեալ ի գիշերին յայնմիկ՝ գնաց յեզեր ծովուն նստեալ հանդէպ վիմին, և լայր դառնապէս զգիշերն ամենայն. և ողբս առեալ հառաչանօք կոծէր զանձն իւր, և ասէր. Մանուկդ Յիսուս՝ Հօր մեծի արքայի՝ ողորմեա՛ ինձ եղկելոյս, և մի՛ անտես առներ. զի յաղագս անգիտութեան իմոյ մեղայ քեզ, և ո՛չ յառաջ իմացայ։ Եթէ դու ես Տէր Աստուած և փրկիչ անձանց մերոց,

այժմ յայտնեա՛, Տէր, ինձ զքեզ. քանզի ցանկայ անձն իմ լսել բա՛ն ի բերանոյ քումմէ։ Եւ նոյնժամայն երեւեցաւ նմա Յիսուս նոյն կերպիւ որպէս յառաջն, ասէ ցնա. Վարպետ, զի՞նչ խնդրես՝ որ այդչափ ողբաս զգիշերս ամենայն։ Ասէ Իսրայէլ. Տէր ողորմեա՛ ինձ, և լո՛ւր աղաչանաց ծառայիս քո, և թո՛ղ զամենայն յանցանս իմ զոր առ քեզ արարի անգիտութեամբ, և օրհնեա՛ զիս։ Ասէ Յիսուս. Օրհնեալ լիցիս դու, և ամենայն ինչ ի տան քում. և թողեալ լիցին քեզ մեղք քո, երթ ի խաղաղութիւն, և Տէր եղիցի ընդ քեզ։ Օրհնեաց զնա՝ և եղեւ աներեւոյթ, և Իսրայէլ անկեալ յերկիր և հող առեալ՝ զգլխո՛ւն արկանէր, կոծէր զանձն քարամբ և ո՛չ գիտէր՝ եթէ զի՞նչ առնէր, և ել գնաց ի տուն իւր։ Եւ ի վաղիւն ելեալ ի տանէն գնաց ի տեղին, ուր ժողովեալ էին մարդիկք, ասէ ցնոսա. Լուարո՛ւք ինձ ամենեքեանդ, եթէ որպիսի՛ հիացումն ունէր զիս, և զգործսն զոր արար Յիսուս ի տան իմում։ Ասեն միաբան, պատմեա՛ մեզ, և ասէ Իսրայէլ. Յաւուր միում յարուցեալ գնացի ի տան իմում, և տեսի ծեր մի այր նստեալ առ դրամբն իմով, տեսի մանուկ մի և մայր նորա, և հարցայ զնմանէ, և յայտնեաց ինձ զխորհուրդն իւր՝ եթէ կամիմ աստ բնակիլ, և ես արարի նմա ընդունելութիւն և մեծարանս ի տան իմում. և ետ զմանուկն իւր յուսումն արուեստի իմոյ. և ես առեալ զմանուկն և տարայ ի տան իմում. և ես ժողովեալ էի ի տան իմում զներկ քաղաքիս և փակեալ զդուռն և կնքեցի զնա, և եդի զմանուկն ի պահեստի տան իմում՝ մինչեւ ես դարձեալ եկից. և ելեալ գնացի ըստ սովորութեան իմոյ բերել այլ ներկս։ Իբրեւ եկի՝ տեսի զդուռն բացեալ տանն, և հանեալ զամենայն ներկն տարեալ արկեալ էր ի կարաս մի կապուտի։ Իբրեւ զայն տեսի բարկացայ յոյժ և առեալ զկոփիչն ձգեցի յետոյ առ ի հարկանել, և նա անկեալ յերկիր, և առժամայն արմատացաւ և երեր պտուղ. և զայն տեսեալ ելի վաղվաղակի և գնացի զհետ նորա, և ո՛չ գտի. դարձայ ի տուն իմ, և տեսի զկարասն գոյն զգոյն

Digitized by Google

ներկս ի մի կարասն կապուտոյն հաւաքեալ. եկայք գնամք, տեսէք զարմանքն զայն:

Ցարեան դատաւոր քաղաքին և ամենայն մեծամեծք բազմութեամբ գնացին ի տեսութիւն սքանչելեացն. և զկարասն բացեալ տեսին զներկն ի մի տեղի հաւաքեալ. և իբրև եհան՝ զգիր անուանցն կարդացին, և զգոյն նմանութեան տեսոյն խնդրէին. և նա հանէր պայծառ և վայելուչ ցուցանէր ամենեցուն. ասեն ցմիմեանս. Ո՞վ է տեսեր որ ի մի կարասէ այսպիսի ցեղ ցեղ վայելչութիւն ելանէ. որ այսպիսի առեալ իւրաքանչիւր զներկսն՝ դարձան ի տունս իւրեանց, և ասէին. Արդարեւ նշան է և գործս այս Աստուծոյ և ոչ մարդոյ գործ, և բազումք հաւատացին յանուն նորա: Յետ սորա տարեալ եցոյց զկոփիչն թէ որպէս արմատացեալ. և զայն տեսեալ բազմացն, ասեն. Արդարեւ որդի Աստուծոյ էր նա: Եւ հրամայեաց դատաւորն արձակել զՅովսէփ ի բանտէն և բերել առաջի իւր. և իբրև եկն՝ եհարց զնա դատաւորն և ասէ ցնա. Տե՛ր դու, ասա մեզ, քո՞ է մանուկն որ այսպիսի շնորհք և զօրութիւնք ի ձեռաց նորա կատարի: Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէր՝ որ յԱստուծոյ տուեալ է դա ինձ որդի, և ո՛չ ըստ մարմնոյ՝ այլ ըստ հոգւոյ: Ասեն բազմութիւնքն. Երանի է ծնողաց նորա, որ այսպիսի պսակ օրհնութեան ունիցին յաղագս իւրեանց: Եւ Յովսէփ դարձեալ լռութեամբ ի տուն իւր, և պատմեաց Մարեմու զգործսն Յիսուսի՝ զոր լուաւ և ետես: Եւ ասէ Մարիամ. Զի՞նչ արդեօք կամեցի լինել մանուկս այս, զի այսպիսի չարչարանս կրեմք վասն[1] դորա: Ասէ Յովսէփ. Մի՛ տրտմիր՝ Աստուած հոգասցէ որպէս ինքն կամեսցի: Եւ ի ասել բանին եկն Իսրայէլ, անկեալ յոտն Յովսեփայ և Մարիամու՝ խնդրէր թողութիւն յանցանաց իւրոց: Ասէ Յովսէփ. Ե՛րթ խաղաղութեամբ, և Տէր առաջնորդեսցէ քեզ զբարին:

1. Յօր. եղեալ էր վէրս:

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԻԲ.

*Վասն գնալոյ նորա յԱրեմաթեայ քաղաք, զտղայութիւնն զոր առնէր Յիսուս մանուկ և յարուցեան։*

Յարուցեալ Յովսէփ էառ զՄարիամ և զմանուկն Յիսուս, և ելեալ ի քաղաքէն անտի գնացին զճանապարհաւն, ակն արկանէին վասն Յիսուսի, զի տեսցեն զնա։ Եւ ի նոյն ժամայն երեւեալ նոցա Յիսուս և գնացեալ զհետ նոցա յերկիրն Գալիլեա և ի քաղաք մի՝ որում անունն էր Արեմաթեայ. և իջեւանս արարեալ ի տան միում, և Յիսուս էր ամաց տասն, և շրջէր ի քաղաքն առ մանկունսն ուր ժողովեալ էին։ Իբրեւ տեսին զՅիսուս, և ասեն. Ասա մեզ, ուստի՞ ես եկեալ։ Ասէ ցնոսա. Յանծանօթ աշխարհէ։ Ասեն մանկունքն. Ասա մեզ, ո՞ւր իցէ հայրենի բնակութիւն քո։ Ասէ Յիսուս. Ո՛չ կարէք իմանալ։ Ասեն մանկունքն. Ասա մեզ բան ինչ, զի ուսցուք ի քէն։ Ասէ Յիսուս. Զի՞նչ խնդրէք յինէն. զի որ ասեմ՝ ոչ գիտէք։ Ասեն տղայքն. Ասա մեզ զի մենք անգէտ եմք, և դու ամենայն իրաց հասու երեւիս։ Ասէ Յիսուս. Գիտեմ զամենայն ինչ, բայց դուք զիս օտար համարիք, և ո՛չ ընդունիք զբանն իմ զոր ինչ առնեմ։ Ասեն մանկունքն. Մեք իբրեւ զեղբայր սիրով ընդունիմք զքեզ, և հնազանդիմք քո կամաց որպէս և կամիս։ Ասէ Յիսուս. Արիք երթիցո՛ւք։ Յարեան տղայքն միաբան, և գնացին ի մի վայր, և էր ի տեղւոջն վէմ մի մեծ. և Յիսուս կացեալ առաջի նորա, և հրամայեաց վիմին խոնարհեցուցանել զգլուխ իւր. և ելեալ Յիսուս նստէր ի վերայ նորա, և վէմն գնայր ի տեղի իւր։ Եւ տղայքն ճիչ բարձեալ շուրջ զքարիւն նայէին առ Յիսուս. և

Յիսուս հրաման տուեալ վիմին խոնարհեցուցանել ըզ-գլուխն, և ի վայր իջեալ Յիսուս։ Եւ գնացեալ ի քա-ղաքն՝ պատմէին տղայքն զգործսն զայն զոր արար Յի-սուս. և Յիսուս գնաց փախստական։ Ոմն երիտասարդ տեսեալ զնա և բուռն հարեալ զաղտ և ըմբռնեաց զնա, դարձաւ Յիսուս փչեաց ի յերեսս նորա, առժամայն կուրացան աչք նորա. և նա ճիչ բարձեալ աղաղակեաց և ասէ. Յիսուս, ողորմեաց ինձ. և Յիսուս եդ զձեռն ի վերայ աչաց նորա և բացան աչք նորա։

Ի միում աւուր ժողովեալ էին տղայքն ի վերայ աղբեր ջրին, և եկն եկաց Յիսուս ի մէջ նոցա. իբրև տեսին զնա՝ ուրախ եղեն։ Եւ ասէ ցնոսա Յիսուս. Յի-սուսի՞ կայք ժողովեալ յեզեր ջրհորիս. և նոքա խա-ղային լրբութեամբ յեզեր ջրհորին։ Եւ եղև ի վի-ճել նոցա՝ հարին զմի ոմն ի տղայոցն և ընկեցին ի ջրհորն՝ և փախեան ի տեղւոջէ անտի. և Յիսուս յա-րուցեալ գնաց ի տուն իւր։ Եւ իբրև եկին ի քա-ղաքէն առնուլ[1] ջուր, յորժամ արկին զսափորն ի ջուրն՝ տեսեալ մեռեալ մանուկ մի ի մէջ, և գնացեալ ի քա-ղաքն պատմեցին. և եկեալ տեսեալ ծնողացն՝ զի խեղ-դեալ կայր մանուկն ի մէջ ջրին՝ լային դառնապէս, և կոծէին զխրտս իւրեանց. և էր մանուկն գեղեցիկ յոյժ և ամաց հինգ. ապա լային և խնդրէին եթէ ո՞ գործեաց զկորուստս զայս, և ո՛չ գտին զսպանողն։ Եւ ապա գնացեալ դատաւորին պատմեցին ծնողքն նորա վասն մանկան մեռելոյն. ապա հրամայեաց դատաւորն ժողովել զմանկունսն քաղաքին և բերել առաջի իւր։ Ասէ ցնոսա դատաւորն. Ասացէ՛ք ինձ որդեակք իմ, ո՞ ընկէց զպատանեակդ ի ջրհորն և եսպան։ Ասեն տը-ղայքն. Մենք ո՛չ գիտեմք։ Ասէ դատաւորն. Կամիք որ պատճառ էք[2]. մի՛ առնէք զայդ. որ ընդ մահապարտին անմեղ մեռանիք։ Ասեն իշխանքն և մեծամեծքն. Ա-

1. Յոր. էր առնոյր, ուղղեցաք առնուլ։

2. Աստանօր իմաստն թերի է, անշուշտ պիտի իմանալ այս-պէս. Ասէ դատաւորն. Գիտէք, և չունիք պատճառանօք ըսել կամ թաքուցանել։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

*Վասն գնալոյ նորա յԱրեմաթեայ քաղաք, զաղայուցիւնն զոր առնէր Յիսուս մանուկ և յարուցեան:*

Ցարուցեալ Յովսէփ էառ զՄարիամ և զմանուկն Յիսուս, և ելեալ ի քաղաքէն անտի գնացին զճանապարհաւն, ակն արկանէին վասն Յիսուսի, զի տեսցեն զնա: Եւ ի նոյն ժամայն երեւեալ նոցա Յիսուս և գնացեալ զհետ նոցա յերկիրն Գալիլեա և ի քաղաք մի՝ որում անունն էր Արեմաթեայ. և իջեւանս արարեալ ի տան միում, և Յիսուս էր ամաց տասն, և շրջէր ի քաղաքն առ մանկունսն ուր ժողովեալ էին: Իբրեւ տեսին զՅիսուս, և ասեն. Ասա՛ մեզ, ուստի՞ ես եկեալ: Ասէ ցնոսա. Յանծանօթ աշխարհէ: Ասեն մանկունքն. Ասա՛ մեզ, ո՞ւր իցէ հայրենի բնակութիւն քո: Ասէ Յիսուս. Ո՛չ կարէք իմանալ: Ասեն մանկունքն. Ասա՛ մեզ բան ինչ, զի ուսցուք ի քէն: Ասէ Յիսուս. Զի՞նչ խնդրէք յինէն. զի որ ասեմ՝ ոչ գիտէք: Ասեն տղայքն. Ասա՛ մեզ զի մենք անգէտ եմք, և դու ամենայն իրաց հասու երեւիս: Ասէ Յիսուս. Գիտեմ զամենայն ինչ, բայց դուք զիս օտար համարիք, և ո՛չ ընդունիք զբանն իմ զոր ինչ առնեմ: Ասեն մանկունքն. Մեք իբրեւ զեղբայր սիրով ընդունիմք զքեզ, և հնազանդիմք քո կամաց որպէս և կամիս: Ասէ Յիսուս. Արիք երթիցո՛ւք: Ցարեան տղայքն միաբան, և գնացին ի մի վայր, և էր ի տեղւոջն վէմ մի մեծ. և Յիսուս կացեալ առաջի նորա, և հրամայեաց վիմին խոնարհեցուցանել զգլուխ իւր. և ելեալ Յիսուս նստէր ի վերայ նորա, և վէմն գնայր ի տեղի իւր: Եւ տղայքն ճիչ բարձեալ շուրջ զքարիւն նայէին առ Յիսուս. և

Digitized by Google

Տիտուս հրաման տուեալ վիմին խոնարհեցուցանել ըզգլուխն, և ի վայր իջեալ Տիտուս։ Եւ գնացեալ ի քաղաքն՝ պատմէին տղայքն զգործսն զայն զոր արար Տիտուս. և Տիտուս գնաց փախստական։ Ոմն երիտասարդ տեսեալ զնա և բուռն հարեալ գաւտ և ըմբռնեաց զնա, դարձաւ Տիտուս փչեաց ի յերեսս նորա, առժամայն կուրացան աչք նորա. և նա ճիչ բարձեալ աղաղակեաց և ասէ. Տիտուս, ողորմեաց ինձ. և Տիտուս եդ զձեռն ի վերայ աչաց նորա և բացան աչք նորա։

Ի միում աւուր ժողովեալ էին տղայքն ի վերայ աղբեր ջրին, և եկն եկաց Տիտուս ի մէջ նոցա. իբրև տեսին զնա՝ ուրախ եղեն։ Եւ ասէ ցնոսա Տիտուս. Տիտուսի՞ կայք ժողովեալ յեզեր ջրհորիս. և նոքա խաղային լրբութեամբ յեզեր ջրհորին։ Եւ եղև ի վիճել նոցա՝ հարին զմի ոմն ի տղայոցն և ընկեցին ի ջրհորն՝ և փախեան ի տեղւոջէ անտի. և Տիտուս յաբուցեալ գնաց ի տուն իւր։ Եւ իբրև եկին ի քաղաքէն առնուլ[1] ջուր, յորժամ արկին զսափորն ի ջուրն՝ տեսեալ մեռեալ մանուկ մի ի մէջ, և գնացեալ ի քաղաքն պատմեցին. և եկեալ տեսեալ ծնողացն՝ զի խեղդեալ կայր մանուկն ի մէջ ջրին՝ լային դառնապէս, և կոծէին զանձինս իւրեանց. և էր մանուկն գեղեցիկ յոյժ և ամաց հինգ. ապա լային և խնդրէին եթէ ո՞ գործեաց զկորուստս զայս, և ո՛չ գտին զսպանողն։ Եւ ապա գնացեալ դատաւորին պատմեցին ծնօղքն նորա վասն մանկան մեռելոյն. ապա հրամայեաց դատաւորն ժողովել զմանկունսն քաղաքին և բերել առաջի իւր։ Ասէ ցնոսա դատաւորն. Ասացէք ինձ որդեակք իմ, ո՞ ընկէց զպատանեակդ ի ջրհորն և եսպան։ Ասեն տղայքն. Մենք ո՛չ գիտեմք։ Ասէ դատաւորն. Կամիք որ պատճառ էք[2]. մի՛ ասնէք զայդ. որ ընդ մահապարտին անմեղ մեռանիք։ Ասեն իշխանքն և մեծամեծքն. Ա-

1. Յօր. էր առնույր, ուղղեցաք առնուլ։

2. Աստանօր իմաստն մթերի է, անշուշտ պիտի իմանալ այսպէս. Ասէ դատաւորն. Գիտէք, և չկամիք պատճառանօք ընել կամ խոստովանել։

ասացէ՛ք զայն հաւաստեաւ և մի՛ ստէք։ Ասեն միաբան. Եթէ բանից մերոց հաւատայք, մենք ո՛չ եղաք նմա պատճառ մահու, այլ անպատրաստութեամբ անկաւ ի ջրհորն, և մենք ո՛չ կարացաք հանել։ Ասէ դատաւորն. Յորժամ տեսիք զնա ի ջրհորն անկեալ, ընդէ՞ր ո՛չ ճիչ բարձիք, զի ո՛չ ոք մնաց անդ այլ, զի ամենեքեան փախեան. եթէ ինքն էր անկեալ՝ նա ամենեքեանքդ ճիչ բարձեալ էիք և ամենեցուն յայտնեալ, բայց դուք արարեալ էք և ի յահէ անտի փախեայք, և կարծէք եթէ պատճառանօք զերծանիք ի մահուանէ։ Ասեն տղայքն. Եթէ զմեզ կամիք դատել անիրաւութեամբ՝ կամք ձեր լիցին, զի ամենայն ոք զանձնէ իւրմէ անմեղ է, և որ մահապարտն է նա գիտէ զգործն. արդ մեք ընդէ՞ր դատիմք։ Ասէ դատաւորն. Եթէ գիտէի՝ զվնասակարն և զանմեղն՝ ես ո՛չ դատէի, վասն այնորիկ դատեմ զանմեղն՝, որ յայտնեսցի մահապարտն։ Ասեն մանկունքն. Մեզ մեղք ո՛չ գոյ, զի զբաղեալ էաք ի գործոյ խաղոյ, և մեք ո՛չ իմացաք, մինչեւ ճիչ բարձեալ տղայոցն և զփախուստ առեալ, և այլ ո՛չ գիտեմք։ Ասէ դատաւորն. Եթէ կամիք՝ ես զարդարն ասացից ձեզ, տեսէ՛ք ամենեքեանդ, հայեցարո՛ւք և ողորմեցարո՛ւք ի վերայ անձանց ձերոց։ Ասեն տղայքն. Ասացաք քեզ՝ և ո՛չ լուար ի մէնջ։ Ասէ դատաւորն. Ստութեան խօսից ձերոց ո՛չ հաւատամ։ Ասեն տղայքն. Եթէ կամիս բռնութեամբ դատել, դու գիտես։ Ասէ դատաւորն. Եթէ ո՛չ ասէք ստոյգն՝ տարայց զձեզ ի ջրհորն, և խեղդամահ արարից ի ջուրն։ Իսկ պատանին որ սպանողն էր, ասէ. Թէպէտ և չարչարես զմեզ ո՛չ կարասցուք ստութեամբ ասել ինչ։ Յայնժամ գնաց դատաւորն յեզր ջրհորին և հրամայեաց մերկացուցանել զնոսա և ածել կապանօք առաջի իւր։ Ասէ պատանին՝ որ սպանողն էր. Ո՛ դատաւոր, բե՛ր վկայ կացո՛, ապա դատեսջի՛ր զմեզ. առանց վկայի ընդէ՞ր մեռանիմք։ Ասէ դատաւորն. Զո՞վ վկայ կացուցանեմ, զի դուք ամենեքինդ անդ էիք, ո՛չ ողոքանօք և ո՛չ կաշառօք զերծանիք ի ձեռաց իմոց։ Իսկ ծնողացն տեսեալ ըզտղայսն մերկ առաջի դատաւորին՝ ի մէջ հրապարա-

կին՝ լային դառնապէս։ Ասէ դատաւորն. Ես լալոյ ո՛չ ողորմիմ։ Յայնժամ հրամայեաց ընկենուլ ի ջրհորն. իսկ այն որ սպաննօղն էր՝ ճիչ բարձեալ ասէ. Մի՛ արկանէք զիս, և ես ցուցից թէ ո՛ իցէ. ո՞ւր է Յիսուս որդի ծերոյն. Նա՛ գործեաց զվնասն զայն։ Ասէ դատաւորն. Ապա դուք ընդէ՞ր անմեղ մեռանիք։ Ասեն տղայքն. Դու գիտես, կամք քո է։ Յայնժամ հրամայեաց դատաւորն կոչել զՅիսուս առաջի իւր, գնացին ոչ գտին զՅիսուս, այլ զՅովսէփ կալեալ բերին առաջի դատաւորին։ Եհարց ցնա դատաւորն, և ասէր. Տէր դու, ուստի՞ ես եկեալ ի քաղաքս յայս։ Ասէ Յովսէփ. Ես ի հեռաւոր երկրէ եմ։ Ասէ դատաւորն. Ո՞ւր է մանուկն քո՝ որ այսպիսի վնաս մահու գործեաց։ Ասէ Յովսէփ. ո՛չ գիտեմ զնա։ Ասէ դատաւորն. Եւ դու ո՞չ գիտես որ վնաս մահու արարեալ էք։ Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէր՝ որ ո՛չ գիտեմ։ Ասէ դատաւորն. Այո՛, գիտես, ապա կարծես թէ զերծանիս ի մահուանէ։ Ասէ Յովսէփ. Ո՛վ դատաւոր, մի՛ ի զուր դատէք զանմեղ մանուկն։ Ասէ դատաւորն. Բարիոք, ապա եթէ անմեղ իցէ, ընդէ՞ր փախչի ի մահուանէ։ Ասէ Յովսէփ. Զայդ ո՛չ գիտեմ։ Ասէ դատաւորն. Ո՛չ հլանիցես ի բանդէն, մինչեւ զմանուկդ փութով առաջի իմ կացուցանես։ Իբրեւ զայս խօսէր դատաւորն, Յիսուս եկաց ի մէջ ատենին, և ասէ ցնոսա. Զո՞ խնդրէք։ Ասեն նոքա. ԶՅիսուս որդին Յովսեփայ։ Ասէ Յիսուս. Ես եմ։ Ասէ դատաւորն. Ե՞րբ եկիր ի քաղաքս յայս։ Ասէ Յիսուս. Այս բազում աւուրք են որ աստ եմ։ Ասէ դատաւորն. Ասա ինձ, ո՞վ եղեւ պատճառ արեան մանկանն։ Ասէ Յիսուս. Զայդ ո՛չ գիտեմ։ Ասեն ծնօղք մանկանն. Ըզտղայս մեր խեղդամահ արարեր, և ասես թէ ո՛չ գիտեմ։ Ասէ Յիսուս. Եթէ այլ ոք եղեւ պարտական դորա արեանն, ի զուր ընդէ՞ր դատէք զիս։ Ասէ դատաւորն. Մի՛ ստութեամբ ասեր, զի մահապարտ դու ես։ Ասէ Յիսուս. Նոքա ստութեամբ վկայեն, և ես արդարութեամբ. ոչ եմ վնասակար կորստեան դորա։ Ասէ դատաւորն. Երդուի՛ր օրինօք Տեառն։ Ասէ Յիսուս. Ընդէ՞ր ստութեամբ խօսիս առաջի Տեառն, և ո՛չ

երկնչիս յԱստուծոյ։ Ասէ դատաւորն. Զի՞նչ վնաս է երդնուլ անմեղութեամբ և փրկիլ ի մահուանէ։ Ասէ Յիսուս. Ա՞յդպէս օրինօք առնես դատաստան անիրաւութեան։ Ասէ դատաւորն. Ասա ինձ զի՞նչ արարից։ Ասէ Յիսուս. Գիտես որ դատաւոր ես կարգեալ։ Ասէ դատաւորն. Զի՞նչ արարից, տուր ինձ պատասխանի։ Ասէ Յիսուս. Եթէ արդարութեամբ առնէիր իրաւունս, բայց ո՛չ առնես։ Ասէ դատաւորն. Զայն առնեմ զոր լսեմ։ Ասէ Յիսուս. Զայդ արդար ասացեր, բայց զանձնէ իմմէ վկայութիւն ո՛չ առնես։ Ասէ դատաւորն. Ո՛չ անիրաւ դատեմ զքեզ[1]։ Ասէ Յիսուս. Թէ զմտաւ ածէիր զխիղճ, ո՛չ վայրապար դատէիր զոք։ Ասեն տղայքն. Ո՛ դատաւոր՝ լո՛ւր մեզ, ոչ կարեմք խօսիւք առնել դմա պատասխանի։ Ասէ Յիսուս. Զի՞նչ կամիք ասել զինէն։ Ասեն տղայքն. Որչափ եկեալ ես ի քաղաքս, բազում հալածանս և նեղութիւնս ածեալ ես ի վերայ մեր. մեք անփոյթ առնէաք, թէ աղքատ և օտար է. և այժմ զայսպիսի վնաս գործեցեր, և զմեզ ի մահ մատնեցեր. արժան է սպանանել զքեզ։ Ասէ դատաւորն. Դա է մանուկն, որ ասէիք, թէ առ աչօք իմն գործէ։ Ասեն միաբան. Այո՛։ Ասէ Յիսուս. Գիտեմ որ ամենեքեանդ վասն իմ ժողովեալ էք, և կամիք ստութեամբ դատապարտել զիս ի մահ։ Ասէ դատաւորն. Ո՛րպէս ասես, զի վկայ ո՛չ ունիս, և զքեզ իրաւ համարիս։ Ասէ Յիսուս. Եթէ վկայ կացուցանեմ անձին իմոյ՝ հաւատա՞ս։ Ասէ դատաւորն. Այո՛, հաւատամ։ Ասէ Յիսուս. Սակաւ մի համբերեա, զի ցուցից քեզ։ Եւ զայս ասացեալ Յիսուսի՝ զայրացեալ յոգի իւր եկն եկաց առ մեռեալն, և ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Յովնաթան որդի Բերիեայ, արի՛ յոտն կաց, և բա՛ց զաչս քո և տե՛ս թէ ո ընկէց ըզքեզ ի Ջրհորն։ Եւ նոյնժամայն յարեաւ մեռեալն և բացեալ զաչս իւր, հայէր յամենեսեան և յանուանէ ճանաչէր։ Իսկ ծնողացն ճիչ բարձեալ խնդութեամբ

1. Յօր. սատանօր եղեալ կայր այլ այն, զուցէ այլ էրաս, կամ այլ զենլմորէիրն չափն խմանալ։

գիրկս արկանէին և համբուրէին զնա. հարցանէին ցնա և ասէին. Որդեակ, ո՞ կենդանացոյց զքեզ. և նա մատամբն ցուցանէր զՅիսուս՝ զորդին Յովսեփայ։ Ասէ ցնա Յիսուս. Ո՞ եղեւ պատճառ կորստեան քո։ Ասէ Յովնաթան. Տէր, ո՛չ ես դու պարտական արեան իմոյ, այլ եղբօրորդին իմ Սարաքա[1] բռամբ հարեալ ընկէց զիս ի ջրհորն։ Ասէ Յիսուս. Լուարո՛ւք ամենեքեանդ, որ մեռեալս յարուցեալ վկայեաց վասն իմ։ Զայս իբրեւ տեսին՝ զահի հարեալ ասեն. Արդարեւ Աստուած է սա և որդի յերկնից[2] ի հօրէ։ Ասէ Յիսուս. Ո՛ դատաւոր անիրաւ, հաւատամ վկայութեան իմոյ և անմեղութեանս, և տեսեր աչօք քո, որպիսի՛ առ աչօք է առնելն իմ։ Եւ նա յամօթոյն ո՛չ տայր պատասխանի։

Եւ կացեալ մանուկն կենդանի մինչեւ յերեկոյ, և մինչեւ եկեալ բազմութիւն մարդոց տեսանել զսքանչելիսն զոր արար Յիսուս. գային ամենեքեան առ ոտն Յիսուսի, երկիր պագանէին և խոստովան լինէին զմեղս իւրեանց։ Դարձեալ ասէ Յիսուս ցպատանին. Արի՛ ննջեա՛ այսուհետեւ և հանգի՛ր. մինչեւ գայցէ դատաւորն ամենեցուն, և առնէ հատուցումն և արդար իրաւունս։ Եւ զայս ասացեալ Յիսուսի, եդ տղայն զգլուխ իւր ի մահիճս և ննջեաց։ Եւ զայն տեսեալ նոցա, ա՛հ պատեաց զնոսա զամենեսեան, և երկնչէին ի նմանէ։ Եւ Յիսուս կամեցաւ ելանել արտաքս, և նոցա անկեալ առ ոտն, աղաչէին զՅիսուս և ասէին. Կենդանացո՛ զմեռեալն, և Յիսուս ո՛չ կամեցաւ, և ասէ ցնոսա. Ի զուր անմեղութեամբ դատապարտէի՛ք զիս, իսկ արդարութիւն զանձն իմ փրկեաց ի մահուանէ։ Եւ ի յասել բանին, եղեւ ի նոցանէ աներեւոյթ։ Եւ Յովսէփ հանեալ ի բանտէն և եկեալ լռութեամբ ի տուն իւր և պատմեաց Մարեմու զգործն, զոր արար Յիսուս։

1. Իսաքար (՞)։
2. Յոբ. վրիպակաւ եղեալ էր նշան Երէրէ.

## ԳԼՈՒԽ ԻԳ.

*Վասն գնալոյ նոցա յարտեւան չերինն։ Տղայութիւն զոր առնէր Յիսուս։*

Ցարուցեալ Յովսէփ ընդ առաւօտն, էառ զմանուկն և զմայրն իւր և ելեալ ի քաղաքէն անտի, երթային լռութեամբ։ Ասէ ցնա մայրն իւր. Որդեակ, ընդէ՞ր այսպիսի փախստական լինիս ի մարդկանէ։ Ասէ ցնա Յիսուս. Մայր, լո՛ւռ լեր, և ե՛րթ խաղաղութեամբ զճանապարհս քո, և զոր ինչ գործն յաջողէ՝ զայն արարից։ Եւ կացեալ անդ ամիսս վեց, և շրջէր Յիսուս զսահմանօքն քաղաքին, և երթայր նստէր առ տղայսն՝ ուր ժողովեալ էին, և խօսէր ընդ նոսա բազում բանիւք, և նոքա ո՛չ կարէին իմանալ եթէ զի՛նչ խօսի։ Ապա առեալ Յիսուսի զտղայսն, տանէր զնոսա յեզեր ջրհորին՝ ուր քաղաքն ամենայն անդ գային առնուլ ջուր։ Եւ առեալ զսափորն ի ձեռանէ տղայոցն՝ հարեալ զմիմեանս՝ զարկուցանէր ընդ քարի, և արկանէր ի ջրհորն. և ո՛չ իշխէին տղայքն յահէ ծնողացն երթալ ի տունս իւրեանց։ Եւ տեսեալ Յիսուսի զի լային տղայքն, կոչէր առաջի իւր, և ասէր. Մի՛ լայք, և ես տաց զսափորսն ձեր. և հրաման տուեալ ալեաց ջրոյն, զսափորսն անարատ զարկուցանէր ի վեր երեսս ջրոյն. և առեալ զսափորսն իւրաքանչիւր տղայքն գնացին ի տունս իւրեանց. և պատմէին զգործսն Յիսուսի զոր արար։

Դարձեալ, յաւուր միում առեալ Յիսուս զտղայսն, և տարեալ կացուցանէր առաջի բարձր ծառոյ միոյ. և հրաման տայր ծառոյն խոնարհեցուցանել զճիւղն. և ինքն Յիսուս ելեալ նստէր ի վերայ նորա, և հրաման

Digitized by Google

տայր ծառոյն վերանալ, և ծառն բարձրացեալ գնայր ի տեղին իւրում ի վեր. և կացեալ անդ ժամ մի. իբրև աղաչէին զնա մանկունքն, և ասէին. Տո՛ւր հրաման ծառոյն խոնարհիլ, և մենք գալ առ քեզ վերդ։ Յայնժամ Յիսուս հրամայեաց ծառոյն խոնարհեցուցանել զճիւղն, և ասէ ցտղայսն. Եկա՛յք փութով առ իս. և նոքա ելանէին խնդութեամբ առ Յիսուս։ Եւ յետ սակաւ յամելոյ՝ հրամայեաց Յիսուս ծառոյն, և ծառն զճիւղն ի վայր խոնարհեցուցանէր, ի վայր իջանէին տղայքն ընդ Յիսուսի, և ծառն ի տեղին իւր երթայր։

Եւ եղև ի միում աւուր ժողովեալ էին տղայքն ի մի վայր, և Յիսուս էր ընդ նոսա. և էր պատանեակ մի երկոտասան ամաց. անձամբն վիրաւորեալ յախտից ցաւոց, և էր ուռուկ լուանոտ. ձեռաց և ոտից ծայր մատանցն հատեալ էր, և ի տեսութեան մարդկանց կերպէ ելեալ էր, և ո՛չ կարէր գնալ արտաքոյ փողոցին։ Իբրև ետես զնա Յիսուս, գթացաւ ի նա և ասէ ցնա. Ո՛վ տղայ, ցոյց ինձ զանձն քո. և պատանին այն հանեալ զզգեստն իւր, և եղև մերկ. և հրամայեաց Յիսուս մանկանցն տարածել զնա ի վերայ երկրի, և առեալ Յիսուս հող յերկրէ, և ցանեաց ի վերայ նորա, և ասէ ցնա Յիսուս. Զգեա՛ զձեռն քո, զի բժշկեցար յամենայն ախտէ քումմէ։ Եւ առ ժամայն լուծաւ ամենայն մորթն ի մարմնոյն. և հաստատեցան ջիլք և զօդուածք ոսկերաց նորա, և եղև ողջ և անարատ իբրև զնոր տղայոյ. և նա յարուցեալ լալով անկանէր առ ոտն Յիսուսի, և երկիր պագէր նմա։ Եւ ասէ Յիսուս. Երթ ի խաղաղութիւն. և նա ելեալ գնաց խաղաղութեամբ ի տուն իւր. և տեսեալ ամենեցուն զսքանչելիսն զոր արար Յիսուս, որ ընդ նմայն, և խնդրէին տեսանել և ո՛չ գտանէին։

## ԳԼՈՒԽ ԻԴ.

*Վասն գնալոյ նոցա ի գիւղն յԵմաւուս, և բժշկէր զհիւանդս, և զսքանչելիսն զոր առնէր Յիսուս։*

Իբրև զայն տեսեալ Յովսեփայ և Մարեմու, առեալ զՅիսուս ի գիշերի՝ գնացին ի գիւղ մի, որում անունն էր Եմաւուս. և իջևանս արարեալ անդ, և Յիսուս էր ամաց տասն, և շրջէր ընդ գաւառսն։ Եւ յաւուր միում ելեալ գնաց ի գիւղ մի, որում անունն էր Եփթայիեայ. և ի ճանապարհին հանդիպեցաւ պատանեակ մի ամաց հնգետասանից, ամենայն անձամբն վիրաւորեալ, և ո՛չ կարէր ընթանալ ոտիւք, այլ սողալով երթայր և նստէր յանցս ճանապարհին, և որք անցանէին խընդրէր ի նոցանէ ողորմութիւն. և ետես զնա Յիսուս ի հեռաստանէ, և եկեալ առաջի նորա զանց առնէր. ասէ ուրուկն ցՅիսուս. Մանուկ դու տղայ, աղաչեմ զքեզ, լո՛ւր ինձ վասն ծնողաց քոց և տղայ հասակի քո. արա՛ ինձ ողորմութիւն, Աստուած վարձս բարեաց հատուսցէ քեզ։ Ասէ Յիսուս. Ես իբրև զքեզ աղքատ եմ և տնանկ, և որդի օտարականի, զի՞նչ արդեօք արարից քեզ ողորմութիւն։ Ասէ ուրուկն. Ո՛ մանուկ դու, մի՛ պատճառեր. եթէ մնացեալ է քեզ կտոր մի հաց և կամ փող և լումայ ինչ առ քեզ ի պահեստի, շնորհեա ինձ սակաւիկ մի ի քէն պարգև, զի տեսանեմ զքեզ՝ թէպէտ և տղայ հասակի իցես. քանզի թուի ինձ թէ մեծատան որդի իցես՝ հազարապետի արքունեաց. քանզի կերպարանօք քո յայտնես զքեզ. մի՛ թագուցաներ զքեզ յինէն, փառաւոր երևիս ինձ և գեղեցիկ յոյժ։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է անուն քո, կամ յորմէ՞ ազգէ իցես պատմեա՛ ինձ։ Ասէ ուրուկն. Ես

ազգաւ Եբրայեցի եմ ի ցեղէն Յուդայի։ Ասէ Յիսուս. Ո՞ իցէ քեզ հայր և կամ մայր՝ որ սպասաւորէ քեզ։ Ասէ ուրուկն. Հայրն իմ վախճանեալ է և մայրն իմ կենդանի է, և նա ծառայէ ինձ որպէս և կամի։ Ասէ Յիսուս. Ո՞րպէս։ Ասէ ուրուկն. Տեսանես՝ որ այսպիսի տկար եմ, իբրեւ երեկոյ լինի գայ մայրն իմ, և բարձեալ տանի զիս ի տունն, և ի վաղիւն բերեալ աստ նստուցանէ, և որք անցանեն՝ քաղցրութեամբ առնեն ինձ ողորմութիւն և այնու կերակրիմ հանապազ։ Ասէ Յիսուս. Ընդէ՞ր ո՛չ ես յայտնեալ զանձն քո բժշկաց, զի ողջացուցեն զքեզ։ Ասէ. Ես տկար եմ և ո՛չ կարեմ առնել, և մայրն իմ անփոյթ արարեալ է զինէն. զի յորժամ ծնայ ես յարգանդէ մօր իմոյ, բազում ցաւօք և հեծութեամբ սնայ. եւս առաւել ի սաստիկ և ի դառն տանջանացն՝ լուծեալ քակտեցան անդամք մարմնոյ իմոյ, և ջիլք ոսկերաց իմոց մաշեալք փտեցան. և եղէ ես ամենայն անձամբս վիրաւորեալ՝ որպէս և տեսանես։ Ասէ Յիսուս. Են իմաստուն բժիշկք, որ գիտեն դեղ առնել մահու և կենաց. արդ, եթէ կամիս՝ նա լինի քեզ բժշկութիւն։ Ասէ ուրուկն. Ի տղայութենէ մինչեւ ցայսօր ո՛չ եմ հանդիպեալ բժշկի, և ո՛չ եմ լուեալ եթէ զայսպիսի վտանգ ի մարդկանէ բժշկեալ։ Ասէ Յիսուս. Ո՛չ ասացի քեզ եթէ են ճարտար բժիշկք՝ որ ի մահուանէ ի կեանս դարձուցանեն։ Ասէ ուրուկն. Եւ ո՞ր դեղով կարէ մարդ որ այսպիսի ցաւս բժշկել։ Ասէ Յիսուս. Այլ բանիւ միայն լինի, և ոչ դեղով։ Իբրեւ լուաւ պատանին զարմացաւ յոյժ, և ասէ. Այդ իսկ են սքանչելիք, զի՞արդ լինի որ առանց դեղոյ ցաւ բժշկի։ Ասէ Յիսուս. Իցեն բժիշկք հաստատուն, որ կարեն ճանաչել զցաւս մահու և կենաց։ Ասէ ուրուկն. Եւ դու տղայ երեւիս քան զիս, ուստի գիտես զայդ ամենայն իմաստութիւնդ։ Ասէ Յիսուս. Լուեալ եմ և գիտեմ։ Ասէ ուրուկն. Տեսեա՞լ ես աչօք քո որ բժշկեցաւ մարդ յայսպիսի ցաւոց։ Ասէ Յիսուս. Սակաւիկ մի հմուտ եմ գործոյն, որդի բժշկի։ Ասէ ուրուկն. Ապա իրաւի՞ ասես՝ եթէ հմուտ եմ գործոյն։ Ասէ Յիսուս. Զամենայն ցաւ կարող եմ բժշ-

կել բանիւ միայն, զոր տեսեալ եմ և ուսեալ ի հօրէ իմմէ։ Ասէ ուրուկն. Եւ յո՞ր աշխարհ է հայրն քո, և ո՞ կարէ տեսանել։ Ասէ Յիսուս. Որում վարձս տացես և զգին բժշկութեան անձին քում, և նա տարցէ ըզքեզ առաջի հօր իմոյ, և ողջացուսցէ զքեզ[1]։ Ասէ ուրուկն. Զի՞նչ է վարձն քո զոր խնդրես լինէն։ Ասէ Յիսուս. Դիւրին է քեզ քառեակ[2] մի դահեկան և ակունս պատուականս։ Իբրեւ լուաւ զայս ուրուկն՝ բարկ ծիծաղեցաւ, և ասէ. Կենդանի է Տէր որ ոչ լուեալ եմ զանուն դոցա, բայց լուր. գիտեմ որ տղայ երեւիս հասակաւ, և ամենայն ինչ քեզ դիւրին, և որդի հօր մեծատան՝ աքցունեաց տոհմէ, և մենք աղքատ գոլով՝ քեզ խաղ և ծաղր երեւիմք. ուստի՞ է ինձ այդ ամենայն մեծութիւնդ զոր ասացեր։ Ասէ Յիսուս. Ընդէ՞ր այդպէս բարկացար. և ես յաղագս բարեմտութեան սիրոյ քո ասացի քեզ զայդ։ Ասէ պատանին. Բազում անգամ փորձեալ են զիս, և քեզ այլ յայտնի՝ որ ո՛չ ինչ ունիմ, բայց միայն զգեստս որ ընդ անձամբ իմով իցէ, և զաւուր կերակուր՝ զոր պատրաստէ Աստուած ինձ և մօրն իմոյ։ Ասէ Յիսուս. Բայց այդու որպիսի՛ լինի քեզ բժշկութիւն, զի դատարկաձեռն ես։ Ասէ ուրուկն. Աստուած հոգասցէ։ Ասէ Յիսուս. Գիտեմ որ կարող է Աստուած առնել զամենայն՝ որք հաւատով խնդրեն ի նմանէ. բայց այդու ո՞րպէս լինի քեզ բժշկութիւն, զի աղքատ ես։ Ասէ ուրուկն. Կարի զարմացեալ եմ ընդ քեզ՝ որ այդպիսի յաճախ խօսիւք ձանձրացուցեր զիս։ Ասէ Յիսուս. Սակաւիկ մի գիտեմ ի գործոց օրինաց։ Ասէ ուրուկն. Թուի ինձ՝ եթէ բազում անգամ ընթերցեալ ես ի պատուիրանացն Աստուծոյ, զի՞նչ պարտ է առնել ինչ աղքատաց և կարօտելոց։ Ասէ Յիսուս. Ողորմութիւն և սէր ցուցանել առ ամենայն ոք։ Ասէ ուրուկն. Բարիոք ասացեր, և արդար ետուր ինձ զպատասխանին. արդ, արա՛ ինձ ողորմութիւն՝ նոյնպէս դու, և այն՝ որ տուօղն է բա-

1. Յօր. էր զքէզ, ուղղեցաք զքեզ։
2. Յօր. էր քառուակ, ուղղեցաք քառեակ։

րեաց՝ Նա հաստուսցէ քեզ։ Իբրեւ ետես Յիսուս, զի զարտասուս հեղեալ լայր՝ գթացաւ ի նա, և ասէ. Ես արարից քեզ ողորմութիւն. և նոյնժամայն ձգեաց զձեռն Յիսուս, և կալաւ զնա ի ձեռանէ, և ասէ. Ե՛լ և յոտն կաց՝ և ե՛րթ խաղաղութեամբ ի տուն քո։ Եւ զայս ասացեալ Յիսուսի՝ առժամայն յարուցեալ և խոնարհեալ երկի՛ր եպագ նմա, և ասէ. Տէր Աստուած արասցէ քեզ ողորմութիւն որպէս և դու ինձ արարեր։ Եւ ասէ Յիսուս. Ե՛րթ ի խաղաղութիւն, և մի՛ ումեք ասասցես զոր ինչ արարի քեզ։ Ասէ ուրուկն. Եթէ ոք հարցանիցէ ցիս՝ ո՞ բժշկեաց զքեզ, զի՞նչ ասացից։ Ասէ Յիսուս. Այսպէս ասասցես ցնոսա, եթէ մանուկ մի որդի բժշկի՝ ընդ անցանել ի ճանապարհին՝ տեսեալ գթացաւ յիս, և արար ինձ ողորմութիւն։ Եւ ելեալ բժշկեալն երկիր եպագ Յիսուսի, և գնաց ուրախութեամբ առ մայրն իւր։ Եւ իբրեւ ետես զնա մայրն՝ խնդութեամբ ճիչ բարձեալ, և ասէ ցորդին. Ո՞ բժշկեաց զքեզ։ Ասէ որդին. Որդի բժշկի մեծատան հանդիպեցայ, նա բժշկեաց զիս բանիւ միայն։ Իբրեւ լուաւ մայրն և այլ ոք ի տեղւոյն, ժողովեցան ի վերայ մանկանն, և հարցանէին ցնա. Ո՞ւր է բժիշկն այն որ բժշկեաց զքեզ։ Ասէ մանուկն. Ո՛չ գիտեմ, զի պատուէր ետ ինձ, եթէ ումեք մի՛ ասասցես եթէ զի՞նչ արարի քեզ։ Եւ որք լսէին ի հեռաստանէ զեղեալ գործն, զարմանային, և ասէին. Ո՞ւմ է մանուկն այն որ այսպիսի շնորհս գիտութեան ունի, նշանս մեծամեծս գործէ. և բազումք հաւատացին յանուն նորա, և ցանկային տեսանել՝ և ո՛չ կարէին տեսանել, զի զանց արարեալ էր Յիսուս։

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԻԵ.

*Վասն հրեշտակին ազդ առնելոյ Յովսեփայ գնալ ի քաղաքն Նազարէթ:*

Եւ յաւուր միում ի տեսլեան գիշերին՝ հրեշտակ Տեառն երեւեալ Յովսեփայ, եւ ասէ ցնա. Արի՛, ա՛ռ զմանուկդ եւ զմայրն իւր եւ երթ[1] ի քաղաքն Նազարէթ, եւ բնակեսջի՛ր անդ, եւ մի՛ ելանիցես անտի. այլ շինեսցե՛ս տուն, եւ կացցե՛ս անդ ժամանակս բազումս, եւ մինչեւ այց արասցէ՝ Տէր Աստուած ի բարութեան. եւ զայս ասացեալ հրեշտակին գնաց ի նմանէ: Եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ էառ զմանուկն եւ զմայրն իւր, եւ եկն ի քաղաքն Նազարէթ ի տուն իւր, յուրում առաջին բնակեալ կային անդ, եւ կացեալ անդ զամս ութ եւ տասն. եւ Յիսուս էր ամաց երկոտասանից[2], որ եւ լինի երեսուն ամ:

Յաւուր երկրորդի ելեալ Յիսուս ի Նազարեթէ՝ երթայր նստէր յանցս ճանապարհի, տեսանէր երկու պատանեակք որ գային եւ վիճէին ընդ միմեանս բանութեամբ, եւ մարտուցեալ հարկանէին զմիմեանս. իբրեւ տեսին զՅիսուս՝ լռեցին ի խօսելոյ. եւ մատուցեալ երկիր պագանէին նմա. եւ հրամայեաց Յիսուս նստել նոցա, եւ նոքա նստան: Եւ Յիսուս ասէ ցնոսա. Ո՛ տղայք, ընդէ՞ր այդչափ բարկութեամբ լցեալ էք, զի՞նչ բաժանում ունիք ի միջի ձերում՝ որ այդպիսի բանութեամբ հարկանէք զմիմեանս: Ասէ մի ոմն ի նոցանէ, որ կրտսերն էր. Զի ոչ է աստ դատաւոր՝ որ առնէ մեզ իրաւունս: Ասէ Յիսուս. Զի՞նչ է անունն ձեր: Ասէ

1. Յօր. Եր:
2. Յօր. Երկոտասանից:

կրտսերն. Անուն իմ Մաղաքիա Լոչի, և նորա անունն Միքիա, և մեք համաշունչ եղբայր եմք՝ միմեանց հարազատ: Ասէ Յիսուս. Ապա ընդէ՞ր այդչափ նախատանօք անարգէք զմիմեանս և թշնամութեամբ: Ասէ Մաղաքիա ցՅիսուս. Աղաչեմ զքեզ մանուկ դու, լո՛ւր ինձ, և ես ասացից քեզ. եղբայրս այս աւագագոյն է քան զիս, և ես կրտսեր գոլով քան զնա, և նա ջանայ անիրաւութեամբ զրկել զիս, և ես ո՛չ կամիմ. արդ, արա՛ դու այսօր ի միջի մերում զարդար դատաստան: Ասէ Յիսուս. Ասացէք ինձ զպատճառն տրտմութեան ձերոյ, թէ ո՞րպիսի իցէ: Ասէ Միքիա. Թուի ինձ թէ որդի դատաւորի իցես, ի տանէ արքունեաց մեծաց: Ասէ Յիսուս. Բարիոք ասես: Ասէ Միքիա. Աստուած հատուսցէ քեզ և ծնողաց քոց զվարձս, զոր առնես այսօր խաղաղութեամբ ընդ իս և ընդ եղբայրն իմ իրաւունս: Ասէ Յիսուս. Ո՛ կացոյց զիս դատաւոր կամ բաժանող, և ո՞րպէս արարից ձեզ իրաւունս. նայիմ ի ձեզ՝ որ ոչ կամիք հնազանդիլ հրամանաց իմոց: Ասեն եղբարքն. Մի՛ այդպէս ասասցես, և զմեզ յանդիմաներ. տղայ և անգէտ համարիս զմեզ. մինք հմուտ եմք դըպրութեան և աստուածային օրինացն, բայց ի քէն ուսանիլ կամիմք: Ասէ Յիսուս. Յառաջ դի՛ք ուխտ վըկայութեան որ ոչ ստէք զմիմեանս, այլ զոր հրամայեմ ձեզ զայն առնէք: Ասեն մանկունքն միաբան. Վկայութեամբ օրինացն Աստուծոյ, և երդմամբ պատուիրանաց նորա՝ լսեմք հրամանաց քոց՝ որպէս ի դրանէ արքունեաց: Ասէ Յիսուս. Ասացէ՛ք ինձ զճշմարիտն, զի լուայց ի ձէնջ: Ասէ Մաղաքիա. Մինք միմեանց եղբայր ենք տղայ, և մնացաք որբ ի ծնողաց. հարքն մեր թողին մեզ ժառանգութիւն, և այլք յափշտակութեամբ կալան զհայրենիս մեր. և մեք վիճեմք ընդ միմեանս, զի անիրաւութեամբ ջանայ զրկել զիս եղբայրն իմ, և ես ո՛չ կամիմ: Ասէ Յիսուս. Յորժամ վախճանեցան ծնողքն ձեր, ո՞ւմ պատուէր արարին զձեզ, որ եղեւ վերակացուն՝ մինչեւ հասաք ի զգաստութիւն: Ասեն տղայքն. Ոչ ոք ի մէնջ կարէ յիշել զծնողսն մեր: Ասէ Յիսուս. Ապա ընդէ՞ր զրկէք զմի-



Digitized by Google

մեանս: Ասէ Մաղաքիա. Եղբայր իմ ջանայ զրկել զիս, եթէ ես մեծ իցեմ: Ասէ Յիսուս. Ո՛չ այդպէս, եթէ կամիք լսել ինձ՝ խաղաղութիւն արարէք ի միջի ձերում, և սիրով բաժանեցէք զինչս ձեր: Ասէ Միքիա ցՅիսուս. Ո՛ մանուկ դու, գիտեմ որ բարիոք ասես վասն սիրոյ, բայց ոչ այդպիսի դատաստանդ՝ զոր առնես. այլ լսէ զոր ասեմ քեզ. ես կատարեալ հասակաւ մեծ էի քան զդա յորժամ ծնօղքն մեռան, և դա փոքր էր, և ես բազում աշխատութեամբ ջանացայ առնուլ զհայրենիսն. քանզի աւերեալ էր և խոպանացեալ. և ես միայն էի վաստակեալ. և դա ո՛չ գիտէ: Ասէ Յիսուս. Եղբայր քո է և տղայ, վասն սիրոյ մինչև ցայսօր ընկալար զդա և սնուցեր. արդ մի՛ զրկեր, այլ ե՛րթ բաժանեա՛ զինչս ձեր ո՛րպէս և կամիս. լերո՛ւք սիրով և խաղաղութեամբ ընդ միմեանս. և խաղաղութիւն Աստուծոյ եղիցի ընդ ձեզ և ի վերայ ձեր:

Եւ նոցա հնազանդեալ կամացն Յիսուսի երկիր պագին նմա, և գիրկս արկեալ եղբարցն համբուրեցին զմիմեանս, և ասեն Յիսուսի. Որդի արքայի, որ արարեր խաղաղութիւն ի միջի մերում, և զսէրն Աստուծոյ ընկալաք միջնորդութեամբ քո, Աստուած մեծացուսցէ զանձն քո և զանուն քո սուրբ ընդ ամենայն երկիր. աղաչեմք զքեզ, մանուկ դու, օրհնեա՛ զմեզ: Ասէ Յիսուս. Երթա՛յք խաղաղութեամբ, և սէրն Աստուծոյ հանգիցէ ի ձեզ: Եւ զայս ասացեալ Յիսուսի երկիր պագին նմա, և յարուցեալ գնացին ի տունս իւրեանց: Եւ Յիսուս եկն ի քաղաքն Նազարէթ առ մայրն իւր. և տեսեալ մայրն զորդին իւր, և ասէ. Յո՞ երթաս զօրն ամենայն, և ո՛չ գիտեմ՝ եթէ զի՞նչ եղև քեզ, և երկընչիմ ի քէն որ դու միայն ի հեռաւոր տեղիս շըրջիս: Ասէ Յիսուս. Զի՞նչ խնդրէք յինէն, զի ո՛չ գիտէք պարտ է յայսմ հետէ շրջիլ և տեսանել զգրեալսն վասն իմ. զի այն իսկ առաքեցայ: Ասէ Մարիամ. Որդեակ՝ զի դեռ տղայ հասակաւ ես և ո՛չ կատարեալ. այլ մի՛ երթայցես ի տեղի ուրեք, զի մի՛ գուցէ չար ինչ հանդիպիցէ քեզ: Ասէ Յիսուս. Մայր իմ, դժուարին իրս խորհիս անմտութեամբ, զի ես զամենայն լի-

նեղոցն գիտեմ։ Ասէ Մարիամ. Մի՛ տրտմիր զոր ինչ
ասացի քեզ. քանզի բազում ցնորք պաշարեն զիս, և
ո՛չ գիտեմ զի՞նչ արարից։ Ասէ Յիսուս. Զի՞նչ խոր-
հիս առնել վասն իմ։ Ասէ Մարիամ. Վասն այնորիկ
հոգամ, որ ամենայն արուեստ փութացայ զքեզ ի տը-
ղայութեան առնել, և դու ո՛չ արարեր, և ո՛չ հնա-
զանդեցար, և արդ կատարեալ հասակաւ եղեր, զի՞նչ
կամիս առնել, և ո՞րպէս կամիս վարել զկեանս աշխար-
հի։ Զայս իբրև լուաւ Յիսուս, զայրացեալ յոգի իւր,
ասէ ցմայրն իւր. Կարի անմտութեամբ բան խօսիս,
և ո՛չ իմանաս զնշանս և զգործսն զոր առնեմ առաջի
քո, և զոր տեսանես աչօք քո և անհաւատալի ես, որ
այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ. զամենայն սքանչե-
լիսն իմ տեսանէք զոր ինչ առնեմ, ա՛ծ զմտաւ, և
համբերեա՛ սակաւիկ մի, և տեսանես զամենայն զգործս
կատարեալ. զի այժմ չև է լցեալ ժամանակ իմ, բայց
դուք հաստատուն կացէ՛ք յիս։ Եւ զայս ասացեալ Յի-
սուսի վաղվաղակի գնաց ի տանէն։

## ԳԼՈՒԽ ԻԶ.

**Վասն բազում բժշկութեանց՝ զոր կատարեաց Յի-
սուս ի քաղաքն և ի գիւղն և յայլ տեղիս տեղիս, զոր
առնէր բժշկութիւն Յիսուս։**

Եւ յաւուր միում ելեալ Յիսուս գնաց, մեկուսի շրջէր
առ սահմանօքն Գալիլեացւոց. և գնացեալ ի գիւղ մի,
որում անուն էր Բուբորան. և հանդիպեցաւ այր մի
երեսուն ամաց, յոյժ նեղեալ էր ի խստութենէ ցա-
ւոց, և անկեալ դնէր ի մահիճս. և իբրև ետես զնա
Յիսուս, գթացաւ ի նա, և ասէ ցնա. Այր դու, յորմէ՞
ազգէ ես։ Ասէ այրն. Ես ազգաւ Ասորի եմ, ի յեր-

Digitized by Google

կրէն Ասորեստանեաց։ Ասէ Յիսուս. Իցէ՞ քեզ հայր և մայր։ Ասէ այրն. Այո, և ծնօղք իմ հանին զիս ի բնակութենէ իւրեանց, և ես շրջիմ ընդ ամենայն տեղիս՝ խնդրել կերակուր օր ըստ օրէ. այլ տեղի և բնակութիւն ո՛չ ունիմ։ Ասէ Յիսուս. Եւ ո՞րպէս կարացեր գալ յաշխարհէն քումմէ։ Ասէ այրն. Երբեմն վարձս տալով, և երբեմն վասն վարձու բերէին։ Ասէ Յիսուս. Վասն որո՞յ եկիր յաշխարհս յայս։ Ասէ այրն. Վասն ողորմութեան և պէտս մարմնոյ իմոյ։ Ասէ Յիսուս. Եթէ համբերես չարչարանացդ, և յետոյ հանգիստ գտանես։ Ասէ այրն. Եթէ կարեմ և եթէ ո՛չ՝ համբերեմ, և զամենայն խնդութեամբ ընդունիմ։ Ասէ Յիսուս. Զո՞ր Աստուած պաշտես։ Ասէ այրն չաստուածն Փաթթեա։ Ասէ Յիսուս. Ապա իրաւի ես, որ այդպէս անձամբ կաս։ Ասէ այրն. Ի ծնողաց իմոց զայս եմ լուեալ, որք ասէին՝ թէ այն է չաստուածն Ասորեստանեայց որ կարող են առնել զինչ որ կամին մարդիկք։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է անուն քո։ Ասէ այրն. Քիրամ է։ Ասէ Յիսուս. Եթէ կամիս զբժշկութիւնդ անձին քում՝ փախիր ի մոլորութենէդ այտի։ Ասէ Քիրամ. Ո՞րպէս հաւատայց քեզ, զի տղայ երեւիս, և ես կատարեալ եմ։ Ասէ Յիսուս. Եթէ կարող է պաշտօն քո բանիւ միայն կեցուցանել զքեզ։ Ասէ Քիրամ. Դու գիտես արդեօք եթէ գոյ այլ Աստուած, որ կարող է մարդոյ կենդանութիւն շնորհել։ Ասէ Յիսուս. Եթէ հաւատաս բոլորով սրտիւ, և խոստովանիս՝ եթէ գոյ Աստուած երկնի և երկրի, որ ստեղծ զամենայն աշխարհս և զամենայն մարդիկք, կարող է նա բժշկել զքեզ։ Ասէ Քիրամ. Ես զայդ ոչ եմ լուեալ։ Ասէ Յիսուս. Այո՛, բայց միայն հաւատա, և կեցցէ անձն քո։ Ասէ Քիրամ. Ո՞րպէս հաւատամ։ Ասէ Յիսուս. Եթէ հաւատամ, գոյ Աստուած ի վերայ արարիչ ամենայնի, և յՈրդի նորա միածին և ի սուրբ Հոգին այն, Երրորդութիւն և մի Աստուածութիւն կատարեալ։ Ասէ Քիրամ. Զոր ինչ ասացեր՝ հաւատամ։ Ասէ Յիսուս. Զե՞ս ուրուք յայտնեալ զանձն քո, զի ողջացուսցեն զքեզ։ Ասէ Քիրամ. Ո՞ բժիշկ կարէ ի նեղութենէ աստի ա-

Digitized by Google

պատել: Ասէ Յիսուս. Դիւրին է որում վարձս տացես: Ասէ Քիրամ. Ես տնանկ գոլով՝ ոչ ինչ ունիմ տալոյ, և ձրի ոչ ոք առնէ ողորմութիւն: Ասէ Յիսուս. Ասես դու՝ եթէ ես ի հեռաւոր աշխարհէ եմ եկեալ, և ընդ բազում գաւառս շրջեալ եմ, և առեալ ողորմութիւն. ընդէ՞ր ստութեամբ ասես, եթէ ո՛չ ունիմ վարձս տալոյ: Ասէ Քիրամ. Աղաչեմ զքեզ, մանուկ, զոր ինչ ասացից քեզ այն է՝ որ ո՛չ ունիմ իրս տալոյ, բայց միայն օր ըստ օրէ զաւուր կերակուրն, և զպեստ՝ որ ափածեալ[1] ունիմ. և Յիսուս եւես զնա որ արտասուէր, ասէ ցնա. Այր դու, խնդրեա՛ յինէն. զի՞նչ առնեմ քեզ: Ասէ Քիրամ. Զոր ինչ կամքդ իցէ՝ զայն արա՛, և շնորհեա՛ ինձ ողորմութիւն: Եւ Յիսուս ձգեաց զձեռն իւր, կալաւ զնա և ասէ. Արի՛, յոտն կաց, և երթ ի խաղաղութիւն: Եւ նոյն ժամայն բժշկեցաւ ի յախտիցն, և անկեալ լալով առ ոտն Յիսուսի աղաչէր զնա, և ասէր. Տէր, եթէ կամիս՝ զամ զկնի քո աշակերտիլ քեզ: Եւ ասէ ցնա Յիսուս. Երթ խաղաղութեամբ ի տուն քո, և պատմեա՝ զոր ինչ միանգամ արար քեզ. և նա երկիր եպագ Յիսուսի, և գնաց յաշխարհն իւր:

## ԳԼՈՒԽ ԻԵ.

*Վասն մարգարէիցն աւանդութեանն զգրեալսն կատարելոյ, և օրինացն՝ զոր առնէր Յիսուս:*

Եւ Յիսուս դարձեալ զօրութեամբ Հոգւոյն գնաց ի քաղաքն Նազարէթ, և շրջէր հանապազ ի ծածուկ տեղիս, և որք տեսանէին[2], զարմանային և ասէին. Տե-

1. Յօր. ծծեալ էր՝ ուղղեցաք ափածեալ:
2. Յօր. տանէին էր՝ ուղղեցաք տեսանէին:

Digitized by Google

սանէք զմանուկն Յիսուս զորդի ծերոյն, թէ որպիսի
զգաստ և իմաստուն երեւի մեզ։ Ասեն ոմանք. Բա-
րիոք զոր ասէք։ Եւ Յիսուս տեսեալ զգործս անհաւա-
տութեան նոցա, ո՛չ յայտնի ցուցանէր զինքն։

Եւ եղեւ ի մերձենալ տօնի մեծի, կամեցաւ Յիսուս
երթալ յԵրուսաղէմ. և ի գնալն՝ ի ճանապարհին հան-
դիպեցաւ ծեր մի ալեւոր՝ որ երթայր. և հաստա-
տեալ էր ի վերայ երկու տախտակի՝ փոփոխելով
զտախտակսն՝ անկանէր յայս կոյս և յայն կոյս. և
էր վտանգեալ[1] ի յաչացն և ի լսելեացն։ Իբրեւ ե-
տես զնա Յիսուս զարմացաւ, և ասէ ցնա. Բարի եր-
թաս, ծեր դու հնացեալ։ Ասէ ծերն. Բարի եկիր մա-
նուկ որդի մեծի միածին որդի անդրանիկ։ Ասէ ցնա
Յիսուս. Նիստ աստ և հանգիր սակաւ մի, և ապա
երթիցուք զճանապարհս մեր։ Ասէ ծերն. Որդեակ, ա-
րարից զհրամանս քո։ Իբրեւ նստան՝ սկսաւ հարցա-
նել ցնա Յիսուս. Ասա՛ ինձ ծեր դու, զի՞նչ է անուն
քո, և կամ յորմէ՞ յազգէ ես դու, և կամ յո՞ր երկրէ
եկեալ ես աստ։ Ասէ ծերն. Անուն իմ Բաղդասար է,
և ես ազգաւԵբրայեցի եմ ի յաշխարհէն Հնդկաց։ Ասէ
Յիսուս. Աստ զի՞նչ խնդրես։ Ասէ ծերն. Ես որդի էի
մեծատան իշխանի, և հայրն իմ հմուտ էր բժշկու-
թեան արուեստի, և ինձ ուսոյց զգործն իւր. և ես
տկա՛ր եմ մարմնով և կամիմ երթալ յԵրուսաղէմ մու-
րալ և ապրիլ։ Ասէ Յիսուս. Ասես՝ եթէ որդի բժշկի
եմ, ընդէ՞ր ո՛չ կարես ողջացուցանել զանձն քո։ Ասէ
ծերն. Մինչեւ մանուկ էի՝ առնէի զբժշկութիւնն, իսկ
յորժամ հասաւ փորձութիւնս ի վերայ իմ, և յամե-
նայն զօրութենէ տկարացայ, և ոչ կարեմ առնել ինչ։
Ասէ Յիսուս. Ի մանկութեա՞ն ժամանակի՝ թէ ի ծե-
րութեանդ եկն ի վերայ քո տկարութիւնդ։ Ասէ ծերն.
Երեսուն ամաց էի, որ եկն ի վերայ իմ ցաւս այս,
և առ հասարակ դողայ ամենայն մարմին իմ։ Իբրեւ
լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ցնա. Ո՞րպէս առ-
նէիր զբժշկութիւնն։ Ասէ ծերն. որպէս է ցաւն նոյն-

1. Յօր. էր վտանգ, ուղղեցաք վտանգեալ։

պէս է դեղն։ Ասէ Յիսուս. Կարող էիր որ զմեռեալն յարուցանէիր, զկաղն գնալ առնէիր, զբորոտն սրբել. զդեւս հանել և զամենայն հիւանդութիւն բժշկել, ո՛չ դեղով՛ այլ բանիւ։ Իբրեւ լուաւ զայս ծերն՝ զարմացաւ, և ծիծաղելով ասէ. Կարի զարմացուցեր զիս, զի այդ հիանալի գործ է, և անհնար ի մարդկանէ։ Ասէ ցնա Յիսուս. Զի զարմանաս զոր ասեմ։ Ասէ ծերն. Դու տղայ երեւիս ինձ. որպէս կարես գիտել զայդ ամենայն։ Ասէ Յիսուս. Ո՛չ եթէ յումեքէ տեսեալ և ուսեալ, այլ ծանօթ եմ ի գործոյն։ Ասէ ծերն. Եթէ այն է զոր ասես դու, ապա յԱստուծոյ իցէ տուեալ, և ո՛չ ի մարդկանէ։ Ասէ Յիսուս. Բարիոք ասես։ Ասէ ծերն. Թուի ինձ եթէ հմուտ ես յարուեստ բժշկութեան։ Ասէ Յիսուս. Կարող է առնել զայդ ամենայն Հայրն իմ։ Ասէ ծերն. Ամենայն աշակերտ ի վարդապետէն ուսանին, և որդի ի հօրէ, արդ աղաչեմ զքեզ արա ինձ ողորմութիւն, և շնորհեսցէ քեզ Տէր ժամանակս և կեանս ընդ երկայն աւուրս։ Ասէ Յիսուս. Տէր դու, բարիոք ասես, բայց ո՛չ կարեմ ձրի առնել, այլ տո՛ւր ինձ վարձս ըստ աշխատութեան։ Ասէ ծերն. Եւ զի՞նչ են վարձս քո զոր խնդրես յինէն։ Ասէ Յիսուս. Դիւրին է քեզ, ոսկի և արծաթ, այլ ինչ և իցէ ի յարկս գրոց։ Իբրեւ լուաւ, ծիծաղեցաւ ծերն, և յետոյ ի միտս իւր եկեալ ասէ. Զի՞նչ արարից զի մանուկս այս խարէութեամբ ծաղր առնէ զիս։ Դարձեալ ասէ ծերն ցՅիսուս. Մանուկ դու, որ ծաղր առնես զիս ի ծերութեան իմոյ. աղքատին իրս տան մանաւանդ ծերոյն, և ո՛չ այպն առնեն։ Ասէ Յիսուս. Յառաջ կարի յոյժ գովեցեր զիս, և այժմ պարսաւես։ Ասէ ծերն. Քանզի կարի դառնացուցեր զիս։ Ասէ Յիսուս. Մի՛ այդպէս բարկացուցաներ զիս, զի ես տղայ գոլով՛ ցանկամ խօսակից լինել ընդ քեզ։ Ասէ ծերն. Է՞ր չես հարցաներ բան իմաստութեան՝ որ օգտիս յինէն. արդ ասա՛ ինձ. ուստի՞ է այդ մեծութիւնդ՝ զոր խնդրես յինէն։ Ասէ Յիսուս. Ո՞չ ասացեր՝ եթէ մեծատան որդի եմ ես իշխանի, և թագաւորական տոհմէ։ Ասէ ծերն. Զոր ինչ ասացի ո՛չ է ստութեամբ, ունէի բազում ինչ,

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԻԴ.

*Վասն գնալոյ նոցա ի գիւղն յԵմաւուս, և բժշկեր զհիւանդս, և զսքանչելիսն զոր առնէր Յիսուս։*

Իբրև զայն տեսեալ Յովսեփայ և Մարեմու, առեալ զՅիսուս ի գիշերի՝ գնացին ի գիւղ մի, որում անունն էր Եմաւուս. և իջևանս արարեալ անդ, և Յիսուս էր ամաց տասն, և շրջէր ընդ գաւառսն։ Եւ յաւուր միում ելեալ գնաց ի գիւղ մի, որում անունն էր Եփթայիեայ. և ի ճանապարհին հանդիպեցաւ պատանեակ մի ամաց հնգետասանից, ամենայն անձամբն վիրաւորեալ, և ո՛չ կարէր ընթանալ ոտիւք, այլ սողալով երթայր և նստէր յանցս ճանապարհին, և որք անցանէին խընդրէր ի նոցանէ ողորմութիւն. և ետես զնա Յիսուս ի հեռաստանէ, և եկեալ առաջի նորա զանց առնէր. ասէ ուրուկն ցՅիսուս. Մանուկ դու տղայ, աղաչեմ զքեզ, լո՛ւր ինձ վասն ծնողաց քոց և տղայ հասակի քո. արա՛ ինձ ողորմութիւն, Աստուած վարձս բարեաց հատուսցէ քեզ։ Ասէ Յիսուս. Ես իբրև զքեզ աղքատ եմ և տնանկ, և որդի օտարականի, զի՞նչ արդեօք արարից քեզ ողորմութիւն։ Ասէ ուրուկն. Ո՛ մանուկ դու, մի՛ պատճառեր. եթէ մնացեալ է քեզ կտոր մի հաց և կամ փող և լումայ ինչ առ քեզ ի պահեստի, շնորհեա ինձ ոսկաւիկ մի ի քէն պարգև, զի տեսանեմ զքեզ՝ թէպէտ և տղայ հասակի իցես. քանզի թուի ինձ թէ մեծատան որդի իցես՝ հազարապետի արքունեաց. քանզի կերպարանօք քո յայտնես զքեզ. մի՛ թագուցաներ զքեզ յինէն, փառաւոր երևիս ինձ և գեղեցիկ յոյժ։ Ասէ Յիսուս. Զի՛նչ է անուն քո, կամ յորմէ՞ ազգէ իցես պատմեա՛ ինձ։ Ասէ ուրուկն. Ես

Digitized by Google

ազգաւ Եփրայեցի եմ ի ցեղէն Յուդայի։ Ասէ Յիսուս.
Ո՞ իցէ քեզ հայր և կամ մայր՝ որ սպասաւորէ քեզ։
Ասէ ուրուկն. Հայրն իմ վախճանեալ է և մայրն իմ
կենդանի է, և նա ծառայէ ինձ որպէս և կամի։ Ասէ
Յիսուս. Ո՞րպէս։ Ասէ ուրուկն. Տեսանես՝ որ այսպիսի
տկար եմ, իբրեւ երեկոյ լինի գայ մայրն իմ, և բար-
ձեալ տանի զիս ի տունն, և ի վաղիւն բերեալ աստ
նստուցանէ, և որք անցանեն՝ քաղցրութեամբ առնեն
ինձ ողորմութիւն և այնու կերակրիմ հանապազ։ Ասէ
Յիսուս. Ընդէ՞ր ո՛չ ես յայտնեալ զանձն քո բժշկաց,
զի ողջացուցեն զքեզ։ Ասէ. Ես տկար եմ և ո՛չ կա-
րեմ առնել, և մայրն իմ անփոյթ արարեալ է զինէն.
զի յորժամ ծնայ ես յարգանդէ մօր իմոյ, բազում
ցաւօք և հեծութեամբ ծնայ. եւս առաւել ի սաստկ
և ի դառն տանջանայն՝ լուծեալ քակտեցան անդամք
մարմնոյ իմոյ, և ջիլք ոսկերաց իմոց մաշեալք փտե-
ցան. և եղէ ես ամենայն անձամբս վիրաւորեալ՝ որ-
պէս և տեսանես։ Ասէ Յիսուս. Են իմաստուն բժիշկք,
որ գիտեն դեղ առնել մահու և կենաց. արդ, եթէ
կամիս՝ նա լինի քեզ բժշկութիւն։ Ասէ ուրուկն. Ի
տղայութենէ մինչեւ ցայսօր ո՛չ եմ հանդիպեալ բժշկի,
և ո՛չ եմ լուեալ եթէ զայսպիսի վտանգ ի մարդկանէ
բժշկեալ։ Ասէ Յիսուս. Ո՛չ ասացի քեզ եթէ են ճար-
տար բժիշկք՝ որ ի մահուանէ ի կեանս դարձուցանեն։
Ասէ ուրուկն. Եւ ո՞ր դեղով կարէ մարդ որ այսպիսի
ցաւս բժշկել։ Ասէ Յիսուս. Այլ բանիւ միայն լինի,
և ոչ դեղով։ Իբրեւ լուաւ պատանին զարմացաւ յոյժ,
և ասէ. Այդ իսկ են սքանչելիք, զի՞արդ լինի որ ա-
ռանց դեղոյ ցաւ բժշկի։ Ասէ Յիսուս. Իցեն բժիշկք
հաստատուն, որ կարեն ճանաչել զցաւս մահու և կե-
նաց։ Ասէ ուրուկն. Եւ դու տղայ երեւիս քան զիս,
ուստի գիտես զայդ ամենայն իմաստութիւնդ։ Ասէ
Յիսուս. Լուեալ եմ և գիտեմ։ Ասէ ուրուկն. Տեսեա՞լ
ես աչօք քո որ բժշկեցաւ մարդ յայսպիսի ցաւոցս։ Ա-
սէ Յիսուս. Սակաւիկ մի հմուտ եմ գործոյն, որդի բժշկի։
Ասէ ուրուկն. Ապա իրաւի՞ ասես՝ եթէ հմուտ եմ գոր-
ծոյն։ Ասէ Յիսուս. Զամենայն ցաւ կարող եմ բժշ-

կել բանիւ միայն, զոր տեսեալ եմ և ուսեալ ի հօրէ իմմէ։ Ասէ ուրուկն. Եւ յո՞ր աշխարհ է հայրն քո, և ո՞ կարէ ստանալ։ Ասէ Յիսուս. Որում վարձս տացես և զգին բժշկութեան անձին քում, և նա տարցէ ըզքեզ առաջի հօր իմոյ, և ողջացուսցէ զքեզ[1]։ Ասէ ուրուկն. Զի՞նչ է վարձն քո զոր խնդրես յինէն։ Ասէ Յիսուս. Դիւրին է քեզ քառեակ[2] մի դահեկան և ակունս պատուականս։ Իբրեւ լուաւ զայս ուրուկն՝ բարկ ծիծաղեցաւ, և ասէ. Կենդանի է Տէր որ ոչ լուեալ եմ զանուն դոցա, բայց լուր. գիտեմ որ տղայ երեւիս հասակաւ, և ամենայն ինչ քեզ դիւրին, և որդի հօր մեծատան՝ արքունեաց տոհմէ, և մենք աղքատ գոլով՝ քեզ խաղ և ծաղր երեւիմք. ուստի՞ է ինձ այդ ամենայն մեծութիւնդ զոր ասացեր։ Ասէ Յիսուս. Ընդէ՞ր այդպէս բարկացար. և ես յաղագս բարեմտութեան սիրոյ քո ասացի քեզ զայդ։ Ասէ պատանին. Բազում անգամ փորձեալ են զիս, և քեզ այլ յայտնի՝ որ ո՛չ ինչ ունիմ, բայց միայն զգեստս որ ընդ անձամբ իմով իցէ, և զաւուր կերակուր՝ զոր պատրաստէ Աստուած ինձ և մօրն իմոյ։ Ասէ Յիսուս. Բայց այդու որպիսի՛ լինի քեզ բժշկութիւն, զի դատարկաձեռն ես։ Ասէ ուրուկն. Աստուած հոգասցէ։ Ասէ Յիսուս. Գիտեմ որ կարող է Աստուած առնել զամենայն՝ որք հաւատով խնդրեն ի նմանէ. բայց այդու ո՞րպէս լինի քեզ բժշկութիւն, զի աղքատ ես։ Ասէ ուրուկն. Կարի զարմացեալ եմ ընդ քեզ՝ որ այդպիսի՛ յաճախ խօսիւք ձանձրացուցեր զիս։ Ասէ Յիսուս. Սակաւիկ մի գիտեմ ի գործոց օրինաց։ Ասէ ուրուկն. Թուի ինձ՝ եթէ բազում անգամ ընթերցեալ ես ի պատուիրանացն Աստուծոյ, զի՞նչ պարտ է առնել ինչ աղքատաց և կարօտելոց։ Ասէ Յիսուս. Ողորմութիւն և սէր ցուցանել առ ամենայն ոք։ Ասէ ուրուկն. Բարիոք ասացեր, և արդար ետուր ինձ զպատասխանին. արդ, արա՛ ինձ ողորմութիւն՝ նոյնպէս դու, և այն՝ որ տուօղն է բա-

1. Յօր. էր զձեզ, ուղղեցաք զքեզ։
2. Յօր. էր քառառակ, ուղղեցաք քառեակ։

րեաց՝ Նա հատուսցէ քեզ։ Իբրեւ ետես Յիսուս, զի զարտասուս հեղեալ լայր՝ գթացաւ ի նա, եւ ասէ. Ես արարից քեզ ողորմութիւն. եւ նոյնժամայն ձգեաց զձեռն Յիսուս, եւ կալաւ զնա ի ձեռանէ, եւ ասէ. Ե՛լ եւ յոտն կաց՝ եւ ե՛րթ խաղաղութեամբ ի տուն քո։ Եւ զայս ասացեալ Յիսուսի՝ առժամայն յարուցեալ եւ խոնարհեալ երկիր եպագ նմա, եւ ասէ. Տէր Աստուած արասցէ՛ քեզ ողորմութիւն որպէս եւ դու ինձ արարեր։ Եւ ասէ Յիսուս. Ե՛րթ ի խաղաղութիւն, եւ մի՛ ումեք ասասցես զոր ինչ արարի քեզ։ Ասէ ուրուկն. Եթէ ոք հարցանիցէ ցիս՝ ո՞ բժշկեաց զքեզ, զի՞նչ ասացից։ Ասէ Յիսուս. Այսպէս ասասցես ցնոսա, եթէ մանուկ մի որդի բժշկի՝ ընդ անցանել ի ճանապարհին՝ տեսեալ գթացաւ յիս, եւ արար ինձ ողորմութիւն։ Եւ ելեալ բժշկեալն երկիր եպագ Յիսուսի, եւ գնաց ուրախութեամբ առ մայրն իւր։ Եւ իբրեւ ետես զնա մայրն՝ խնդութեամբ ճիչ բարձեալ, եւ ասէ ցորդին. Ո՞ բժշկեաց զքեզ։ Ասէ որդին. Որդի բժշկի մեծատան հանդիպեցայ, նա բժշկեաց զիս բանիւ միայն։ Իբրեւ լուաւ մայրն եւ այլ ոք ի տեղւոյն, ժողովեցան ի վերայ մանկանն, եւ հարցանէին զնա. Ո՞ւր է բժիշկն այն որ բժշկեաց զքեզ։ Ասէ մանուկն. Ո՛չ գիտեմ, զի պատուէր ետ ինձ, եթէ ումեք մի՛ ասասցես եթէ զի՛նչ արարի քեզ։ Եւ որք լսէին ի հեռաստանէ զեղեալ գործն, զարմանային, եւ ասէին. Ո՞ւմ է մանուկն այն որ այսպիսի շնորհս գիտութեան ունի, նշանս մեծամեծս գործէ. եւ բազումք հաւատացին յանուն նորա, եւ ցանկային տեսանել՝ եւ ո՛չ կարէին տեսանել, զի զանց արարեալ էր Յիսուս։

## ԳԼՈՒԽ ԻԵ.

*Վասն հրեշտակին ազդ առնելոյ Յովսեփայ գնալ ի քաղաքն Նազարէթ։*

Եւ յաւուր միում ի տեսլեան գիշերին՝ հրեշտակ Տեառն երեւեալ Յովսեփայ, և ասէ ցնա. Արի՛, առ զմանուկդ և զմայրն իւր և երթ[1] ի քաղաքն Նազարէթ, և բնակեսջի՛ր անդ, և մի՛ ելանիցես անտի. այլ շինեսցե՛ս տուն, և կացցե՛ս անդ ժամանակս բազումս, և մինչեւ այլ արասցէ՝ Տէր Աստուած ի բարութեան. և զայս ասացեալ հրեշտակին գնաց ի նմանէ։ Եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ էառ զմանուկն և զմայրն իւր, և եկն ի քաղաքն Նազարէթ ի տուն իւր, յորում առաջին բնակեալ կային անդ, և կացեալ անդ զամս ութ և տասն. և Յիսուս էր ամաց երկոտասանից[2], որ և լինի երեսուն ամ։

Յաւուր երկրորդի ելեալ Յիսուս ի Նազարեթէ՝ երթայր նստէր յանցս ճանապարհի, տեսանէր երկու պատանեակք որ գային և վիճէին ընդ միմեանս բռնութեամբ, և մարտուցեալ հարկանէին զմիմեանս. իբրեւ տեսին զՅիսուս՝ լռեցին ի խօսելոյ. և մատուցեալ երկիր պագանէին նմա. և հրամայեաց Յիսուս նստել նոցա, և նոքա նստան։ Եւ Յիսուս ասէ ցնոսա. Ո՛ տղայք, ընդէ՞ր այդչափ բարկութեամբ լցեալ էք, զի՞նչ բաժանում ունիք ի միջի ձերում՝ որ այդպիսի բռնութեամբ հարկանէք զմիմեանս։ Ասէ մի ոմն ի նոցանէ, որ կրտսերն էր. Զի ոչ է աստ դատաւոր՝ որ առնէ մեզ իրաւունս։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է անունն ձեր։ Ասէ

1. Յոր. Էր։
2. Յոր. Երկոտասնից։

կրտսերն. Անուն իմ Մաղաքիա Լոչի, և նորա անունն Միքիա, և մեք համաշունչ եղբարք եմք՝ միմեանց հարազատ։ Ասէ Յիսուս. Ապա ընդէ՞ր այդչափ նախատանօք անարգէք զմիմեանս և թշնամութեամբ։ Ասէ Մաղաքիա ցՅիսուս. Աղաչեմ զքեզ մանուկ դու, լո՛ւր ինձ, և ես ասացից քեզ. եղբայրս այս աւագագոյն է քան զիս, և ես կրտսեր գոլով քան զնա, և նա ջանայ անիրաւութեամբ զրկել զիս, և ես ո՛չ կամիմ. արդ, արա՛ դու այսօր ի միջի մերում զարդար դատաստան։ Ասէ Յիսուս. Ասացէք ինձ զպատճառն տրտմութեան ձերոյ, թէ ո՞րպիսի իցէ։ Ասէ Միքիա. Թո՛ւր ինձ թէ որդի դատաւորի իցես, ի տանէ արքունեաց մեծաց։ Ասէ Յիսուս. Բարիոք ասես։ Ասէ Միքիա. Աստուած հատուսցէ քեզ և ծնողաց քոց զվարձս, զոր առնես այսօր խաղաղութեամբ ընդ իս և ընդ եղբայրն իմ իրաւունս։ Ասէ Յիսուս. Ո՛ կացոյց զիս դատաւոր կամ բաժանօղ, և ո՞րպէս արարից ձեզ իրաւունս. նայիմ ի ձեզ՝ որ ոչ կամիք հնազանդիլ հրամանաց իմոց։ Ասեն եղբարքն. Մի՛ այդպէս ասասցես, և զմեզ յանդիմաներ. տղայ և անգէտ համարիս զմեզ. մենք հմուտ եմք դըպրութեան և աստուածային օրինացն, բայց ի քէն ուսանիլ կամիմք։ Ասէ Յիսուս. Յառաջ դի՛ք ուխտ վըկայութեան որ ոչ ստէք զմիմեանս, այլ զոր հրամայեմ ձեզ զայն առնէք։ Ասեն մանկունքն միաբան. Վկայութեամբ օրինացն Աստուծոյ, և երդմամբ պատուիրանաց նորա՝ լսեմք հրամանաց քոց՝ որպէս ի դրանէ արքունեաց։ Ասէ Յիսուս. Ասացէ՛ք ինձ զճշմարիտն, զի լուայց ի ձէնջ։ Ասէ Մաղաքիա. Մենք միմեանց եղբայր ենք տղայ, և մնացաք որբ ի ծնողաց. հարքն մեր թողլին մեզ ժառանգութիւն, և այլք յափշտակութեամբ կալան զհայրենիս մեր. և մեք վիճեմք ընդ միմեանս, զի անիրաւութեամբ ջանայ զրկել զիս եղբայրն իմ, և ես ո՛չ կամիմ։ Ասէ Յիսուս. Յորժամ վախճանեցան ծնօղքն ձեր, ո՞ւմ պատուէր արարին զձեզ, որ եղեւ վերակացուն՝ մինչեւ հասաք ի զգաստութիւն։ Ասեն տղայքն. Ոչ ոք ի մէնջ կարէ յիշել զծնօղսն մեր։ Ասէ Յիսուս. Ապա ընդէ՞ր զրկէք զմի-



Digitized by Google

մեանս։ Ասէ Մաղաքիա. Եղբայր իմ ջանայ զրկել զիս, եթէ ես մեծ իցեմ։ Ասէ Յիսուս. Ո՛չ այդպէս, եթէ կամիք լսել ինձ՝ խաղաղութիւն արարէք ի միջի ձերում, և սիրով բաժանեցէք զինչս ձեր։ Ասէ Միքիա ցՅիսուս. Ո՜ մանուկ դու, գիտեմ որ բարիոք ասես վասն սիրոյ, բայց ոչ այդպիսի դատաստանդ՝ զոր առնես. այլ լուր զոր ասեմ քեզ. ես կատարեալ հասակաւ մեծ էի քան զդա յորժամ ծնողքն մեռան, և դա փոքր էր, և ես բազում աշխատութեամբ ջանացայ առնուլ զհայրենիսն. քանզի աւերեալ էր և խոպանացեալ. և ես միայն էի վաստակեալ. և դա ո՛չ գիտէ։ Ասէ Յիսուս. Եղբայր քո է և տղայ, վասն սիրոյ մինչև ցայսօր ընկալեր զդա և սնուցեր. արդ մի՛ զրկեր, այլ ե՛րթ բաժանեա՛ զինչս ձեր ո՛րպէս և կամիս. լերո՛ւք սիրով և խաղաղութեամբ ընդ միմեանս. և խաղաղութիւն Աստուծոյ եղիցի ընդ ձեզ և ի վերայ ձեր։

Եւ նոցա հնազանդեալ կամացն Յիսուսի երկիր պագին նմա, և զիրկս արկեալ եղբարցն համբուրեցին զմիմեանս, և ասեն Յիսուսի. Որդի արքայի, որ արարեր խաղաղութիւն ի միջի մերում, և զսէրն Աստուծոյ ընկալաք միջնորդութեամբ քո, Աստուած մեծացուսցէ զանձն քո և զանուն քո սուրբ ընդ ամենայն երկիր. աղաչեմք զքեզ, մանուկ դու, օրհնեա՛ զմեզ։ Ասէ Յիսուս. Երթա՛յք խաղաղութեամբ, և սէրն Աստուծոյ հանգիցէ ի ձեզ։ Եւ զայս ասացեալ Յիսուսի երկիր պագին նմա, և յարուցեալ գնացին ի տունս իւրեանց։ Եւ Յիսուս եկն ի քաղաքն Նազարէթ առ մայրն իւր. և տեսեալ մայրն զորդին իւր, և ասէ. Յո՞. երթաս զօրն ամենայն, և ո՛չ գիտեմ՝ եթէ զի՞նչ եղեւ քեզ, և երկընչիմ ի քէն որ դու միայն ի հեռաւոր տեղիս շըրջիս։ Ասէ Յիսուս. Զի՞նչ խնդրէք յինէն, զի ո՛չ գիտէք պարտ է յայսմ հետէ շրջիլ և տեսանել զգրեալսն վասն իմ. զի այն իսկ առաքեցայ։ Ասէ Մարիամ. Որդեակ՝ զի դեռ տղայ հասակաւ ես և ո՛չ կատարեալ. այլ մի՛ երթայցես ի տեղի ուրեք, զի մի՛ գուցէ չար ինչ հանդիպիցէ քեզ։ Ասէ Յիսուս. Մայր իմ, դժուարին իրս խորհիս անմտութեամբ, զի ես զամենայն լի-

նեղոցն գիտեմ։ Ասէ Մարիամ. Մի՛ տրտմիր զոր ինչ ասացի քեզ. քանզի բազում ցնորք պաշարեն զիս, և ո՛չ գիտեմ զի՞նչ արարից։ Ասէ Յիսուս. Զի՞նչ խորհիս առնել վասն իմ։ Ասէ Մարիամ. Վասն այնորիկ հոգամ, որ ամենայն արուեստ փութացայք զքեզ ի տըղայութեան առնել, և դու ո՛չ արարեր, և ո՛չ հնազանդեցար, և արդ կատարեալ հասակաւ եղեր, զի՞նչ կամիս առնել, և ո՞րպէս կամիս վարել զկեանս աշխարհի։ Զայս իբրև լուաւ Յիսուս, զայրացեալ յոգի իւր, ասէ ցմայրն իւր. Կարի անմտութեամբ բան խօսիս, և ո՛չ իմանաս զնշանս և զգործսն զոր առնեմ առաջի քո, և զոր տեսանես աչօք քո և անհաւատալի ես, որ այսչափ ժամանակս ընդ ձեզ եմ. զամենայն սքանչելիսն իմ տեսանէք զոր ինչ առնեմ, ա՛ծ զմտաւ, և համբերեա՛ սակաւիկ մի, և տեսանես զամենայն զգործս կատարեալ. զի այժմ չեւ է լցեալ ժամանակ իմ, բայց դուք հաստատուն կացէք յիս։ Եւ զայս ասացեալ Յիսուսի վաղվաղակի գնաց ի տանէն։

## ԳԼՈՒԽ ԻԶ.

**Վասն բազում բժշկութեանց՝ զոր կատարեաց Յիսուս ի քաղաքն և ի գիւղն և յայլ տեղիս տեղիս, զոր առնէր բժշկութիւն Յիսուս։**

Եւ յաւուր միում ելեալ Յիսուս գնաց, մեկուսի շրջէր առ սահմանօքն Գալիլեացւոց. և գնացեալ ի գիւղ մի, որում անուն էր Բուրբորոն. և հանդիպեցաւ այր մի երեսուն ամաց, յոյժ նեղեալ էր ի խստութենէ ցաւոց, և անկեալ դնէր ի մահիճս. և իբրև ետես զնա Յիսուս, գթացաւ ի նա, և ասէ ցնա. Այր դու, յորմէ՞ ազգէ ես։ Ասէ այրն. Ես ազգաւ Ասորի եմ, ի յեր-

Digitized by Google

կրէն Ասորեստանեաց։ Ասէ Յիսուս. Իցէ՞ քեզ հայր և մայր։ Ասէ այրն. Այո, և ծնօղք իմ հանեին զիս ի բնակութենէ իւրեանց, և ես շրջիմ ընդ ամենայն տեղիս՝ խնդրել կերակուր օր ըստ օրէ. այլ տեղի և բնակութիւն ո՛չ ունիմ։ Ասէ Յիսուս. Եւ ո՞րպէս կարացեր գալ յաշխարհէն քումմէ։ Ասէ այրն. Երբեմն վարձս տալով, և երբեմն վասն վարձու բերէին։ Ասէ Յիսուս. Վասն որո՞յ եկիր յաշխարհս յայս։ Ասէ այրն. Վասն ողորմութեան և պէտս մարմնոյ իմոյ։ Ասէ Յիսուս. Եթէ համբերես չարչարանացդ, և յետոյ հանգիստ գտանես։ Ասէ այրն. Եթէ կարեմ և եթէ ո՛չ համբերեմ, և զամենայն խնդութեամբ ընդունիմ։ Ասէ Յիսուս. Զո՞ր Աստուած պաշտես։ Ասէ այրն չաստուածսն Փաթթեա։ Ասէ Յիսուս. Ապա իրաւի ես, որ այդպէս անձամբ կաս։ Ասէ այրն. Ի ծնողաց իմոց զայս եմ լուեալ, որք ասէին՝ թէ այն է չաստուածն Ասորեստանեայց որ կարող են առնել զինչ որ կամին մարդիկք։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է անուն քո։ Ասէ այրն. Քիրամ է։ Ասէ Յիսուս. Եթէ կամիս զբժշկութիւնս անձին քում՝ փախիր ի մոլորութենէդ այտի։ Ասէ Քիրամ. ո՞րպէս հաւատայց քեզ, զի տղայ երեւիս, և ես կատարեալ եմ։ Ասէ Յիսուս. Եթէ կարող է պաշտօն քո բանիւ միայն կեցուցանել զքեզ։ Ասէ Քիրամ. Դու գիտես արդեօք եթէ գոյ այլ Աստուած, որ կարող է մարդոյ կենդանութիւն շնորհել։ Ասէ Յիսուս. Եթէ հաւատաս բոլորով սրտիւ, և խոստովանիս՝ եթէ գոյ Աստուած երկնի և երկրի, որ ստեղծ զամենայն աշխարհս և զամենայն մարդիկք, կարող է նա բժշկել զքեզ։ Ասէ Քիրամ. Ես զայդ ոչ եմ լուեալ։ Ասէ Յիսուս. Այո՛, բայց միայն հաւատա, և կեցցէ անձն քո։ Ասէ Քիրամ. Ո՞րպէս հաւատամ։ Ասէ Յիսուս. Եթէ հաւատամ, գոյ Աստուած ի վերայ արարիչ ամենայնի, և յՈրդի Նորա միածին և ի սուրբ Հոգին այն, Երրորդութիւն և մի Աստուածութիւն կատարեալ։ Ասէ Քիրամ. Զոր ինչ ասացեր՝ հաւատամ։ Ասէ Յիսուս. Զե՞ս ուրուք յայտնեալ զանձն քո, զի ողջացուսցեն զքեզ։ Ասէ Քիրամ. Ո՞ բժիշկ կարէ ի նեղութենէ աստի ա-

կատել: Ասէ Յիսուս. Դիւրին է որում վարձս տացես: Ասէ Քիրամ. Ես տնանկ գոլով՝ ոչ ինչ ունիմ տալոյ, և ձրի ոչ ոք առնէ ողորմութիւն: Ասէ Յիսուս. Ասես դու՝ եթէ ես ի հեռաւոր աշխարհէ եմ եկեալ, և ընդ բազում գաւառս շրջեալ ես, և առեալ ողորմութիւն. ընդէ՞ր ստութեամբ ասես, եթէ ո՛չ ունիմ վարձս տալոյ: Ասէ Քիրամ. Աղաչեմ զքեզ, մանուկ, զոր ինչ ասացից քեզ այն է՝ որ ո՛չ ունիմ ինչ տալոյ, բայց միայն օր ըստ օրէ զաւուր կերակուրն, և զպէտս՝ որ սփածեալ[1] ունիմ. և Յիսուս եառես զնա որ արտասուէր, ասէ ցնա. Այր դու, խնդրեա՛ յինէն. զի՞նչ առնեմ քեզ: Ասէ Քիրամ. Զոր ինչ կամքդ իցէ՝ զայն արա՛, և շնորհեա՛ ինձ ողորմութիւն: Եւ Յիսուս ձգեաց զձեռն իւր, կալաւ զնա և ասէ. Արի՛, յոտն կաց, և երթ ի խաղաղութիւն: Եւ նոյն ժամայն բժշկեցաւ ի յախտիցն, և անկեալ լալով առ ոտն Յիսուսի աղաչէր զնա, և ասէր. Տէր, եթէ կամիս՝ գամ զկնի քո աշակերտիլ քեզ: Եւ ասէ ցնա Յիսուս. Երթ խաղաղութեամբ ի տուն քո, և պատմեա՝ զոր ինչ միանգամ արար քեզ. և նա երկիր եպագ Յիսուսի, և գնաց յաշխարհն իւր:

## ԳԼՈՒԽ ԻԷ.

*Վասն մարգարէիցն աւանդութեան զգրեալսն կատարելոյ, և օրինացն՝ զոր առնէր Յիսուս:*

Եւ Յիսուս դարձեալ զօրութեամբ Հոգւոյն գնաց ի քաղաքն Նազարէթ, և շրջէր հանապազ ի ծածուկ տեղիս, և որք տեսանէին[2], զարմանային և ասէին. Տե-

1. Յօր. ծփեալ էր՝ ուղղեցաք սփածեալ:
2. Յօր. տանէին էր՝ ուղղեցաք տեսանէին:

սանէք զմանուկն Յիսուս զորդի ծերոյն, թէ որպիսի զգաստ և իմաստուն երեւի մեզ։ Ասեն ոմանք. Բարիոք զոր ասէք։ Եւ Յիսուս տեսեալ զգործս անհաւատութեան նոցա, ո՛չ յայտնի ցուցանէր զինքն։

Եւ եղեւ ի մերձենալ տօնի մեծի, կամեցաւ Յիսուս երթալ յԵրուսաղէմ. և ի գնալն՝ ի ճանապարհին հանդիպեցաւ ծեր մի ալեւոր՝ որ երթայր. և հաստատեալ էր ի վերայ երկու տախտակի՝ փոփոխելով զտախտակսն՝ անկանէր յայս կոյս և յայն կոյս. և էր վտանգեալ[1] ի յաչացն և ի լսելեացն։ Իբրեւ ետես զնա Յիսուս զարմացաւ, և ասէ ցնա. Բարի երթաս, ծեր դու հնացեալ։ Ասէ ծերն. Բարի եկիր մանուկ որդի մեծի միածին որդի անդրանիկ։ Ասէ ցնա Յիսուս. Նիստ աստ և հանգիր սակաւ մի, և ապա երթիցուք զճանապարհս մեր։ Ասէ ծերն. Որդեակ, արարից զհրամանս քո։ Իբրեւ նստան՝ սկսաւ հարցանել ցնա Յիսուս. Ասա՛ ինձ ծեր դու, զի՞նչ է անուն քո, և կամ յորմէ՞ յազգէ ես դու, և կամ յո՞ր երկրէ եկեալ ես աստ։ Ասէ ծերն. Անուն իմ Բաղդասար է, և ես ազգաւ Եբրայեցի եմ ի յաշխարհէն Հնդկաց։ Ասէ Յիսուս. Ասա զի՞նչ խնդրես։ Ասէ ծերն. Ես որդի էի մեծատան իշխանի, և հայրն իմ հմուտ էր բժշկութեան արուեստի, և ինձ ուսոյց զգործն իւր. և ես տկար եմ մարմնով և կամիմ երթալ յԵրուսաղէմ մուրալ և ապրիլ։ Ասէ Յիսուս. Ասես՝ եթէ որդի բժշկի եմ, ընդէ՞ր ո՛չ կարես ողջացուցանել զանձն քո։ Ասէ ծերն. Մինչեւ մանուկ էի՝ առնէի զբժշկութիւնն, իսկ յորժամ հասաւ փորձութիւնս ի վերայ իմ, և յամենայն զօրութենէ տկարացայ, և ոչ կարեմ առնել ինչ։ Ասէ Յիսուս. Ի մանկութեա՞ն ժամանակի՝ թէ ի ծերութեանդ եկն ի վերայ քո տկարութիւնդ։ Ասէ ծերն. Երեսուն ամաց էի, որ եկն ի վերայ իմ ցաւս այս, և առ հասարակ դողայ ամենայն մարմին իմ։ Իբրեւ լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ ՝ցնա. Ո՞րպէս առնէիր զբժշկութիւնն։ Ասէ ծերն. որպէս է ցաւն նոյն-

1. Յօր. էր վտանգ, ուղղեցաք վտանգեալ։

պէս է դեղն։ Ասէ Յիսուս. Կարող էիր որ զմեռեալն յարուցանէիր, զկաղն գնալ առնէիր, զբորոտն սրբել. զդեւս հանել և զամենայն հիւանդութիւն բժշկել, ո՛չ դեղով այլ բանիւ։ Իբրեւ լուաւ զայս ծերն՝ զարմացաւ, և ծիծաղելով ասէ. Կարի զարմացուցեր զիս, զի այդ հիանալի գործ է, և աննման ի մարդկանէ։ Ասէ ցնա Յիսուս. Զի զարմանաս զոր ասեմ։ Ասէ ծերն. Դու տղայ երեւիս ինձ. ո՞րպէս կարես գիտել զայդ ամենայն։ Ասէ Յիսուս. Ո՛չ եթէ յումեքէ տեսեալ և ուսեալ, այլ ծանօթ եմ ի գործոյն։ Ասէ ծերն. Եթէ այն է զոր ասես դու, ապա յԱստուծոյ իցէ տուեալ, և ո՛չ ի մարդկանէ։ Ասէ Յիսուս. Բարիոք ասես։ Ասէ ծերն. Թուի ինձ եթէ հմուտ ես յարուեստ բժշկութեան։ Ասէ Յիսուս. Կարող է առնել զայդ ամենայն Հայրն իմ։ Ասէ ծերն. Ամենայն աշակերտ ի վարդապետէն ուսանին, և որդի ի հօրէ, արդ աղաչեմ զքեզ արա ինձ ողորմութիւն, և շնորհեսցէ քեզ Տէր ժամանակս և կեանս ընդ երկայն աւուրս։ Ասէ Յիսուս. Ծեր դու, բարիոք ասես, բայց ո՛չ կարեմ ձրի առնել, այլ տո՛ւր ինձ վարձս ըստ աշխատութեան։ Ասէ ծերն. Եւ զի՞նչ են վարձս քո զոր խնդրես յինէն։ Ասէ Յիսուս. Դիւրին է քեզ, ոսկի և արծաթ, այլ ինչ և իցէ ի յարկս գրոց։ Իբրեւ լուաւ, ծիծաղեցաւ ծերն, և յետոյ ի միտս իւր եկեալ ասէ. Զի՞նչ արարից զի մանուկս այս խարէութեամբ ծաղր առնէ զիս։ Դարձեալ ասէ ծերն ցՅիսուս. Մանուկ դու, որ ծաղր առնես զիս ի ծերութեան իմոյ. աղքատին իրս տան մանաւանդ ծերոյն, և ո՛չ այպն առնեն։ Ասէ Յիսուս. Յառաջ կարի յոյժ գովեցեր զիս, և այժմ պարսաւես։ Ասէ ծերն. Քանզի կարի դառնացուցեր զիս։ Ասէ Յիսուս. Մի՛ այդպէս բարկացուցաներ զիս, զի ես տղայ գոլով ցանկամ խօսակից լինել ընդ քեզ։ Ասէ ծերն. Է՞ր չես հարցաներ բան իմաստութեան՝ որ օգտիս յինէն. արդ ասա՛ ինձ. ուստի՞ է այդ մեծութիւնդ՝ զոր խնդրես յինէն։ Ասէ Յիսուս. Ո՞չ ասացեր՝ եթէ մեծատան որդի եմ ես իշխանի, և թագաւորական տոհմէ։ Ասէ ծերն. Զոր ինչ ասացի ո՛չ է ստութեամբ, ունէի բազում ինչ,

Digitized by Google

բայց յորժամ եհաս տկարութիւնս, ամենայն ինչ պակասեցաւ յինէն։ Ասէ Յիսուս. Լա՞ւ համարիս զմեծութիւն գանձուց քոց, եթէ այժմ առողջութիւն մարմնոյ քո։ Ասէ ծերն. Լաւ էր ինձ՝ եթէ աղքատի որդի էի մուրացիկ, և ո՛չ մարմնովս տկար։ Ասէ Յիսուս. Եթէ կամիս՝ տուր ինձ վարձս աշխատութեան իմոյ։ Ասէ ծերն. Մի՛ այդպէս աշխատ առներ զիս յայսպիսի յաճախ խօսիւքդ. քանզի ո՛ւր կայիր որ հանդիպեցար ինձ իբրեւ զորոգայթ և զփոթորակ։ Ասէ Յիսուս. Զի՞նչ առաւել խօսեցայ, և կամ զո՞ր խրատ ուսայ ի քէն։ Ասէ ծերն. Վասն Աստուծոյ սիրոյն մի՛ տրտմեցուցաներ զիս, զի կարի տկար եմ ամենայն մարմնովս։ Ասէ Յիսուս. Մի՛ տրտմիր. համբերեա՛ սակաւիկ մի, և այլ ո՛չ ունիմ զրոյց ընդ քեզ, այլ գթամ ի վերայ քո, զոր ունիմ կարողութիւն օգնել քեզ։ Ասէ ծերն. Ասա՛ ըզհրամանս քո։ Ասէ Յիսուս. Տո՛ւր ինձ սակաւիկ մի վարձս ըստ աշխատութեան իմոյ, և ես բժշկեցից ըզքեզ։ Ասէ ծերն. Աստուած տացէ քեզ բազում վարձ աշխատութեան քո, բայց աղաչեմ զքեզ, լա՛ւ է ինձ մեռանիլ քան թէ իցեմ կենդանի։ Ասէ Յիսուս. Չէ՛ դժուարին քո բժշկութիւնդ։ Ասէ ծերն. Ոչինչ ունիմ առ իս՝ բայց միայն կտոր մի հաց և երկու լումայս։ Ասէ Յիսուս. Այդ ի մեծատանց ընդ աւելորդօքն ելանէ։ Ապա բարկացեալ ծերն յոյժ և լալագին, ասէ. Զի՞նչ լինիցիմ արդեօք ի սմանէ, քանզի բազում անգամ ձանձրացոյց զիս։ Ասէ Յիսուս. Ծեր, մի՛ բարկանար, այլ համբերեա՛ սակաւ մի, զի կեցցէ անձն քո։ Ասէ ծերն. Որչափ համբերեցի քեզ և ո՛չինչ ողորմութիւն գտայ ի քէն։ Զայս իբրեւ ասաց ծերն լալագին, ասէ Յիսուս. Յո՞ երթաս։ Ասէ ծերն. Ի քաղաքն յԵրուսաղէմ, մուրանալ հաց, և թէ գաս զկնի իմ, տաց զկէս ընչից իմոց ի քեզ, զինչ յաջողէ Աստուած։ Ասէ Յիսուս. Զո՞ր Աստուած պաշտես։ Ասէ ծերն. Զհայրենի Աստուածն։ Ասէ Յիսուս. Ապա իրաւի գայցէ քեզ այդ նեղութիւնդ. եթէ կամիս կատարեալ լինել, թո՛ղ զհայրենի պաշտօնն քո, որ և ապրիս հոգւով և մարմնով։ Ասէ ծերն. Եւ ո՞րպէս կարացից հա-

Digitized by Google

ւատալ բանից քոց: Ասէ Յիսուս. Բազում անգամ փորձել զիս և ո՛չինչ օգտել կարես: Իբրեւ լուաւ ծերն, զմտաւ ածեալ, ասէ. Երկնչիմ՝ եթէ մանուկս այս խաբէութեամբ պատրէ զիս: Ասէ Յիսուս. Ծեր դու, զոր ինչ հարցի քեզ՝ տո՛ւր ինձ պատասխանի: Ասէ ծերն. Տարակուսեալ եմ և ո՛չ գիտեմ զի՞նչ արարից, և կամ զի՞նչ տաց առ այդմ բանիդ պատասխանի. Թուի ինձ՝ եթէ յԱստուծոյ առաքեցար առ իս, և ես կարծեմ՝ եթէ դու ես Տէր և քննիչ խորհրդոց մարդկան. արդ յայտնեա՛ ինձ զքեզ: Ասէ Յիսուս. Հաւատա՞ս, եթէ գոյ Աստուած արարիչ ամենայնի, և Որդի Նորա միածին և սուրբ Հոգին այն, Երրորդութիւն և մի Աստուածութիւն: Ասէ ծերն. Այո՛ հաւատամ. և Յիսուս եդ զձեռն իւր ի վերայ ծերոյն, և ասէ. Արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ, ո՛ղջ լեր ի տանջանաց քոց: Եւ առժամայն բժշկեցաւ ծերն, և անկեալ առ ոտն Յիսուսի խոստովանէր զյանցանս իւր: Եւ ասէ Յիսուս. Թողութիւն[1], ե՛րթ խաղաղութեամբ, և Տէր եղիցի ընդ քեզ: Ասէ ծերն. Աղաչեմ զքեզ, զի՞նչ է անուն քո, ասա՛ ինձ: Ասէ Յիսուս. Զի՞նչ փոյթ է հարցանել քեզ զանուն իմ, այլ ե՛րթ խաղաղութեամբ: Եւ ծերն խոնարհեալ երկիր եպագ Յիսուսի, և գնաց խաղաղութեամբ յԵրուսաղէմ: Եւ իբրեւ տեսին Երուսաղեմացիքն զծերն բժշկեալ, ասեն. Ո՞ բժշկեաց զքեզ: Ասէ ծերն. Որդի բժշկի մի հանդիպեցայ ի ճանապարհին, և միով բանիւ բժշկեաց զիս: Ասեն սմա. Ո՞ւր է բժիշկն այն: Ասէ ծերն. Ո՛չ գիտեմ. զի Յիսուս խոյս ետ ի տեղւոջէ անտի. և գնաց ի Նազարէթ, և յայտնեաց զգործն՝ զոր արար նմա:

1. Յօր. Թողութեան էր ուղղեցաք Թողութիւն:

## ԳԼՈՒԽ ԻԸ.

*Վասն դատաւորութեան զոր առնէր ի մէջ երկուց զինւորաց։*

*Եւ եղեւ ի հնգետասաներրորդի յաւուրն, խորհէր Յիսուս՝ սակաւ մի յայտնել զանձն մարդկան. և եղեւ ի գնալն իւրում ի ճանապարհին, հանդիպեցան նմա արք երկու զինուորք՝ որ ի գնալն իւրեանց վիճէին ընդ միմեանս, և կամէին արիւն հեղուլ։ Իբրեւ ետես ըզնոսա Յիսուս ի հեռաստանէ, հասանէր անդ առ նոսա, և ասէր. Ո՛ զինուորք, ընդէ՞ր այդչափ բարկութեամբ լցեալ էք, և կամիք զմիմեանս սպանանել. և նոքա այնչափ զայրացեալ էին ի սիրտս իւրեանց, և ո՛չ ետուն նմա պատասխանի։ Իբրեւ եկին ի տեղի մի և հանդէպ աղբեր ջրոց, և նստան հանդէպ ջրոյ, և բազում անարգանօք սպառնային ընդ միմեանս ի ձեռն որոգայթից. և Յիսուս նստեալ ի մէջ նոցա ունկն դնէր բանիցն։ Իսկ միոյն ի նոցանէ՝ որ կրտսերագոյն էր, և ի միտս իւր եկեալ ասէր, եթէ նա աւագագոյն է՝ և ես նուաստ եմ և կրտսեր, պա՛րտ է ինձ խոնարհիլ. վա՜յ ինձ, և ապա ընդէ՞ր տրտմութեամբ բարկացուցի զնա. կամիմ հաճութեամբ խոնարհիլ նմա. ապա հայեցեալ զինուորն՝ ետես զՅիսուս հեզութեամբ նստեալ, և ասէ ցՅիսուս. Մանուկ դու, ուստի՞ գաս կամ յո՞ երթաս, և կամ զի՞նչ է անուն քո։ Ասէ Յիսուս. Եթէ ասիցեմ, ոչ կարես ճանաչել զիս։ Ասէ զինուորն. Իցէ՞ քեզ հայր կամ մայր կենդանի։ Ասէ Յիսուս. Այո՛, կենդանի է հայրն իմ և անմահ է։ Ասէ զինուորն. Եւ ո՞րպէս անմահ է. Ասէ Յիսուս. Ի սկզբանէ անմահ է, կենդանի, և մահ նմա ո՛չ տիրէ։ Ասէ*

Digitized by Google

զինուորն. Ո՞վ կացցէ կենդանի, և մահ նմա ոչ տիրէ, որ հայրն քո միայն անմահ: Ասէ Յիսուս. Ո՛չ կարես իմանալ կամ հասու լինել: Ասէ զինուորն. Ո՞վ կարէ տեսանել զնա: Ասէ Յիսուս. Եւ ոչ ոք: Ասէ զինուորն. Ո՞ւր իցէ հայրն քո: Ասէ Յիսուս. Ցերկրէս ի վեր է քան զերկինս: Ասէ զինուորն. Եւ դու ո՞րպէս կարես գնալ առ նա: Ասէ Յիսուս. Ես անդ էի և աստ եմ և ընդ նմա եմ: Ասէ զինուորն. Ոչ կարեմ իմանալ զբանդ, զոր ասես: Ասէ Յիսուս. Անպատմելի է և անճառելի: Ասէ զինուորն. Ապա ո՞վ կարէ հասու լինել: Ասէ Յիսուս. Եթէ զայն հարցանես՝ յայտ արարից քեզ: Ասէ զինուորն. Աղաչեմ զքեզ, ասա՛ ինձ: Ասէ Յիսուս. Ես անհայր յերկրի եմ, և անմայր յերկինս: Ասէ զինուորն. Ո՞րպէս ծնար կամ ո՞րպէս սնար: Ասէ Յիսուս. Առաջին ծնունդն ի Հօրէ է՝ յառաջ քան զյաւիտեանս, և երկրորդ ծնունդն ի յերկրէ աստի է: Ասէ զինուորն. Եւ ո՞րպէս, ո՞վ ոք ետես, եթէ զծնեալն ի հօրէ դարձեալ ծնանի ի մօրէ: Ասէ Յիսուս. Ո՛չ այդպէս խորհրդածի: Ասէ զինուորն. Քանի՞ հայր աստ է քեզ, և կամ քանի մայր: Ասէ Յիսուս. Ո՞չ ասացի քեզ եթէ մի է հայրն իմ, և մայր անդ ոչ գոյ. և մի է մայրն իմ, և հայր աստ ո՛չ գոյ: Ասէ զինուորն. Առաջինն ասես, եթէ ի Հօրէ ծնեալ եմ առանց մօր, և զերկրորդ ծնունդն՝ ի մօրէ առանց հօր: Ասէ Յիսուս. Բարիոք ասես: Ասէ զինուորն. Այդ են սքանչելիք, ասա՛ ինձ՝ ո՞ւմ որդի կոչիս: Ասէ Յիսուս. Հօր միածին և որդի մօր, և ինքն ժառանգ ամենայնի: Ասէ զինուորն. Ո՞չ հայր քո զմայր քո տեսեալ է, ապա ո՞րպէս ընծայեցար յորովայնի մօր և ծնար: Ասէ Յիսուս. Բանիւ միայն, և ո՛չ կարծեօք մտաց՝ որ ի նմանէ: Ասէ զինուորն. Ո՞րպէս կարիցես զմիտս հօր և մօր քո հաճեցուցանել: Ասէ Յիսուս. Դիւրին է: Ասէ զինուորն. Առ հայր քո ո՞րպէս գնաս, և կամ առ մայր քո ո՞րպէս մտաս: Ասէ Յիսուս. Ես առ հայր իմ յերկինս, և առ մայր աստ եմ բնակեալ, և ընդ նմա եմ յաւիտեան: Ասէ զինուորն. Կարի զարմանալի է բանդ զոր ասես: Ասէ Յիսուս. Եւ զի՞նչ խնդրես զոր հար-

Digitized by Google

ցանես, զոր ո՛չ կարես իմանալ։ Ասէ զինուորն. Յաղագս այնորիկ հարցանեմ զքեզ, մանուկ, զի սպասաւոր կացուցի առաջի մեր, յետոյ իմացայ, որ և որդի մեծատան Թագաւորական տոհմէ ես. Աստուած փառաւորեսցէ զքեզ ընդ ամենայն տեղիս, և ունել ժառանգութիւն հօր քո։ Ասէ Յիսուս. Օրհնեալ եղիցիս դու, բայց պատմեա՛ ինձ, ընդէ՞ր վիճիք ընդ միմեանս։ Ասէ զինուորն. Ո՛ պատանի, զամենայն ինչ ասացից քեզ, և արասցես դու այսօր արդար իրաւունս ի միջի մերում։ Ասէ Յիսուս. Այո՛, պատմեա՛ ինձ։ Ասէ զինուորն. Մեք ի մոգուց յաշխարհէ եմք, ազգաւ ի Թագաւորական տոհմէ, և մեք եկաք զկնի Թագաւորացն՝ որ եւ եկին ի Բեթղեհէմ քաղաքն զօրօք և ընծայիւք ի պատիւ Նորածին արքային Իսրայելացւոց։ Եւ իբրեւ նոքա գնացին յաշխարհն իւրեանց, և մեք եկաք ի քաղաքն յԵրուսաղէմ, և սիրովն Աստուծոյ եղաք ընկերք և եղբարք միմեանց. և եդաք դաշինս վասն միաբանութեան, երդուեալ արարեալ, մինչեւ ցմահ ո՛չ մեկնիլ ի միմեանց. այլ զոր ինչ Աստուած յաջողէ մեզ՝ բաժանեսցուք սիրով հաւասար. և ի հասանելն մեզ զինուորութեան ի դրան արքունեաց առն գլխաւորի մեծի, և առաքեաց զիս մեծն իմ արքայն հրովարտակաւ ի հեռաւոր յաշխարհ. և ես կացի անդ աւուրս բազումս, և ընկալան սիրով և պատուով որպէս օրէն է արքունեաց առնել, և պարգեւ տալ Թղթաբերին որպէս արժանն է։ Շնորհիւն Աստուծոյ դարձեալ եկի ուրախութեամբ, և զոր ինչ շահեցայ՝ ոչինչ ծածկեցի ի նմանէ, և կամիմ բաժանել։ Եւ դա ընկերս իմ գնացեալ զհետ զօրաց հեծելոց առեալ[1] ինչս բազում եկն ի տուն իւր, և խնդրեմ ի դմանէ բաժանել ընդ իս ինչս զոր առեալ է ի զինուորութենէն. և դա ո՛չ կամի բաժանել, և զիւր իրաւունքն չարաչար խնդրէ յինէն. արդ զի՞նչ հրամայես, զի արարից։ Ասէ Յիսուս. Եթէ կամիք լսել ինձ, և իրաւամբք առնէիք, մի՛ ատէք զմիմեանս, և մի՛ մոռանայք զուխտն ձեր. այլ զոր խոս-

1. Յօր. էր առնել, մեք ուղղեցաք առեալ։

տացեալ էք կատարել, զնոյն արարէք· բաժանեցէք զինչս ձեր հաւասար, որպէս օրէնն էր, և որպէս երդուեալ էք ի պատուիրանն Աստուծոյ· մի՛ ստութեամբ խօսիք առաջի Աստուծոյ, և մի՛ անիրաւութեամբ զրկէք զմիմեանս, եթէ կամիք կեալ ընդ միմեանս սիրով։ Ասէ միւս ընկերն, որ էր աւագն· Ո՛ մանուկ, ո՛չ այդպէս զոր առնես դատաստան և իրաւունս· ես ի տեղի մահուան գնացի, ի բազում ահ և երկիւղ անկայ, և մեծաւ նեղութեամբ կարացի դառնալ ի տուն իմ, և դա մեծաւ իշխանութեամբ գնաց ի մէջ արքունեաց, և տրօք բազմօք եկն ի տուն իւր· պա՛րտ է նմա ինձ տալ բաժին, և ես ո՛չ նմա։ Ասէ Յիսուս· Ոչ գիտես զի՞նչ խօսիս· եթէ ի գնալն կամ ի դառնալն հասեալ էր ի թշնամեաց պէս պէս նեղութիւն, զի՞նչ էիր արարեալ դորա բաժինն։ Դարձեալ ասէ· Եթէ սիրով կամիք բաժանել, յայտնի արարէք զխորհուրդս ձեր։ Եւ զայս ասացեալ Յիսուս լռեաց։

Ապա յարուցեալ զինուորն այն՝ որ և կրտսերն էր՝ անկեալ առ ոտն ընկերին և ասէ· Թողութիւն արա՛ ինձ եղբայր, քանզի յոյժ տրտմեցուցի զքեզ· արդ արա՛ որպէս կամիս· բաժանեցայց այլ ո՛չ կարեմ ի միասին կեալ, զի յոյժ մեծացաւ անձն քո, և եղեր աթոռակից թագաւորաց· և ես աղքատ և ունայն յընչից, այլ կամաւ քո զի՞նչ տացես[1] զայն առից։ Եւ Յիսուս հայեցեալ ի նոսա, գթացաւ, մանաւանդ վասն խոնարհութեան կրտսեր ընկերին։ Եւ որ աւագն էր՝ սրտմտօղն էր, զի տնանկի որդի էր· և որ կրտսերն էր՝ խոնարհ էր, քանզի մեծատան որդի էր։ Ասէ Յիսուս ցկրտսերն· Զոր առաջ ասացեր ինձ, եթէ զկնի մոգուցն եկի ի Բեթղեհէմ, տեսե՞ր աչօք քո զայն նորածին արքայն՝ որ ծնաւ։ Ասէ կրտսերն· Այո՛, տեսի աչօք իմովք և երկիր պագի նմա։ Ասէ Յիսուս· Եւ ո՞րպէս կարծեցեր ի նմանէ· կամ ո՞րպէս հաւատացեր ի նա։ Ասէ զինուորն· Այն բանն մարմնով առաքեալ յԱստուծոյ, և առաջնորդութեամբ աստեղբն եկայք

1· Յօր էր տաց ուղղեցաք տացես։

տեսանել զնա, ծնեալ ի կուսէն և բազմեալ ի յայրին։ Ասէ Յիսուս. Լուեալ եմ ես զնմանէ եթէ կենդանի իցէ։ Ասէ զինուորն. Զայդ ո՛չ գիտեմ, բայց յորժամ Հերովդէս խաբեցաւ ի մոգուցն, լուաք զնմանէ՝ եթէ եսպան զնա. և այլք ասացին, եթէ Հերովդէս վասն Նորա կոտորեաց զմանկունսն Բեթղեհեմի. ոմանք ասացին, թէ հայր և մայր Նորա առեալ գնացին փախստական ի յԵգիպտոս։ Ասէ Յիսուս. Բարիոք ասացեր. բայց լուեալ եմ վասն Նորա, եթէ կենդանի է. ապա ոմանք ասեն ո՛չ էր այն, այլ խաբեբայ և մոլորեցուցիչ էր։ Ասէ զինուորն. Մի՛ այդպէս ասեր զնմանէ ըղհայհոյութիւն՝ զոր ո՛չ գիտես. զի որք տեսին զնա, ասէին՝ եթէ Նա է արքայն Իսրայելի։ Ասէ Յիսուս. Ապա ընդէ՞ր ազգն Իսրայելի ո՛չ հաւատացին ի Նա։ Ասեն զինուորքն. Ո՛չ գիտեմք։ Ասէ Յիսուս. Զի՞նչ են անուանքն ձեր։ Ասեն զինուորքն. Իմ անունն է Խոյրատար, և դորայն՝ Ծոհարտար։ Ասէ Յիսուս. Զո՞ր Աստուած պաշտէք։ Ասեն զինուորքն. Յորժամ եկաք յերկիրս յայս, հրաժարեցաք ի հայրենի չաստուածոց մերոց, և առաք զօրէնն արեգական։ Ասէ Յիսուս. Զի՞նչ կամիք առնել, ասացէք ինձ զայն։ Ասեն Նոքա. Ո՞րպէս կամք քո հրամայեն՝ զայն արա՛. զի այսօր յայտնի երեւեցար դատաւոր ի միջի մերում. զի յորժամ տեսաք զքեզ, չիջան բազում բարկութիւնք մեր, և սէրն Աստուծոյ եկն ի վերայ մեր. և ի գալդ քո առ մեզ՝ կարի ուրախացան սիրտք մեր։ Եւ Յիսուս բաժանեալ հաւասար. և Նոքա արարին ըստ կամացն Յիսուսի, և Յիսուս օրհնեաց զնոսա, և Նոքա գնացին խաղաղութեամբ զճանապարհս իւրեանց։

Digitized by Google

# ԳԻՐՔ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

## Բ. ՕՐԻՆԱԿ

...[1] յառաջ ցանկացաւ աստուածանալ, և Աստուած խորհեցաւ մարդանալ. վասն առաւել գթալոյ իւրոյ մարդասիրութեան։ Եդ Աստուած զուխտ և զերդումն իւր ընդ Նախահայրն՝ միջնորդութեամբ գրեալ և կնքեալ մատամբն իւրով. Եթէ, ի վեց հազարամերրորդի որ վեցերորդի, առաքեմ զմիածին որդին իմ զԲանն Աստուած, որ եկեալ մարմնանայ ի զաւակէ քումէ. և լինի որդին իմ որդի մարդոյ. և զքեզ դարձեալ վերըստին յառաջին փառսն կանգնեցից։ Եւ յայնժամ եղիցիս դու Ադամ անմահացեալ մարմնով. աստուած ընդ աստուածս միաւորեալ իբրև զմի ի մէնջ ճանաչել զբարի և զչար։

Այս էր գիր գրոյն գրեալ, և մատանեաւն Աստուծոյ փակեալ և կնքեալ զոր բերեալ մոգքն մատուցին առաջի Յիսուսի։ Արդ իբրեւ կատարեցին թագաւորքն և իշխանքն և զօրքն ամենայն զուխտս և զխընդրուածս իւրեանց զոր խոստացան առնել, կացեալ նոցա անդ ի յայրն աւուրս երիս։

Խորհեցան թագաւորք ընդ միմեանս և ասեն. Եկայք ամենեքեան միաբան երթիցուք ի յայրն, երկիր պագցուք՝ և՛ խոստովանեսցուք զնա Աստուած, և դարձեալ երթիցուք խաղաղութեամբ զճանապարհս մեր։

1. Իսկզբանէ մինչեւ ցայս վայր պակասէր ի գրչագրին.

Եւ Նոցա հաւանեալ կամացն ամենեցուն, յարուցեալ թագաւորքն, իշխանքն և զօրքն ամենայն՝ մտին ի յայրն, երկի՛ր պագին Յիսուսի, և խոստովան եղեն զնա, եթէ արդարեւ ճշմարիտ Աստուած ես դու. և Որդի Աստուծոյ: Եւ ելեալ Նոցա ամենեցուն ի յայրոյն, ի ձայն մեծ ցնծութեամբ և ուրախութեամբ օրհնէին, գովէին և փառաւոր առնէին զԱստուած:

Եւ ընդ այգն ընդ առաւօտն ի լուսանալ միաշաբաթին, յորում էր տբ՛թ ամսոյ քսան և եօթն, որ ի յունուարի երկոտասան, պատրաստեցին զանձինս իւրեանց դէմ եդեալ գնալ յաշխարհն իւրեանց: Ապա խորհուրդ առեալ Նոցա գնալ ի քաղաքն Երուսաղէմ առ Հերովդէս: Եւ նոյնժամայն եղեւ առ Նոսա բարբառ որ ասէր. Մի՛ երթայք առ Հերովդէս անօրէն բռնաւորն, զի խնդրէ վասն մանկանն սպանանել զդա: Եւ զայս լուեալ թագաւորացն և զօրացն ամենեցուն, գնացին խնդութեամբ ընդ այլ ճանապարհ, ընդ որ առաջնորդեաց Նոցա Տէր յաշխարհն իւրեանց:

Եւ յետ անցանելոյ այս ամենայն եղելոյ՝ որ գործեցաւ, կացեալ Յովսէփ և Մարիամ ի յայրն ի ծածուկ հանդերձ մանկամբն զի մի՛ ոք գիտասցէ: Եւ զամենայն ստացուածս և զինչս գանձուցն զոր բերին մոգքն, տարեալ Յովսեփայ թագուցեալ ի յայրն, և պա.եալ անդ զգուշութեամբ:

Եւ երթեալ Յովսեփայ օր ըստ օրէ հանապազ գաղտ շրջէր ի քաղաք, ի գեղ և յագարակ, և զամեն պէտս կարեաց մարմնոյ իւրեանց անդ պատրաստէին. և ոչ ունէին յումեքէ ահ և երկիւղ մահու, հրամանաւն Աստուծոյ. զի Բեդղեհէմ սակաւ մի հեռագոյն էր ի քաղաքէն Երուսաղեմէ՝ երկոտասան մղոնաւ: Եւ շուրջ զսահմանօքն Նոցա աւերակ էր և անմարդաբնակ: Եւ յորժամ Յովսէփ երթայր վասն կարեաց պիտոյից ի տեղի ուրեք, զՅովսէ զորդին իւր՝ որ էր կրսերագոյն քան զայլ եղբայրսն, որ զկնի հօր իւրոյ եկեալ էր, զնա կացուցանէր տեսուչ և սպասաւոր սրբոյ կուսին Մարիամու:

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԺԲ.

*Վասն տանելոյ զնա ի տաճարն ի քաղաքն Երուսաղէմ ի թլփատել։*

Արդ իբրեւ լցան աւուրք մանկանն ութօրեայ, ասէ Յովսէփ ցՄարիամ. Զի՞նչ արասցուք զմանուկս զայս, զի օրէն է առնուլ ութօրեայ թլփատութիւն։ Ասէ Մարիամ. Կամք քո լիցին, արա՛ որպէս և կամիս։ Եւ յարուցեալ Յովսէփ գնաց ծածուկ ի քաղաքն Երուսաղէմ. և առեալ ընդ իւր այր մի իմաստուն՝ որ էր յոյժ բարի և ողորմած և երկիւղած Աստուծոյ. և էր հմուտ և ծանօթ աստուածային օրինացն, որում անուն էր Յովեել. և եկին ի յայրն անդ ուր մանուկն էր։ Եւ իբրեւ մերձեցուցին զսուրն, ոչ եղեւ ի նմանէ հատումն մարմնոյ, և նոցա զայն տեսեալ՝ հիացան յոյժ, և ասեն. Ահա եկաց արիւն մանկանս այսմիկ. և անուն նորա կոչեցաւ Յիսուս, որ անուանեցաւ յառաջ ի հրեշտակէն։ Եւ կացեալ Յովսէփ և Մարիամ ուրախութեամբ ի յայրն. և մանուկն Յիսուս աճէր և զարգանայր շնորհօք և իմաստութեամբ յԱստուծոյ և ի մարդկանէ. մինչեւ հասեալ նոցա ի գլուխ քառասնօրեայ աւուրն, պահեցին զմանուկն Յիսուս ի թաքըստեան, զի մի՛ ոք գիտասցէ։

Արդ յորժամ գնացին մոգքն յաշխարհն իւրեանց և ոչ դարձան առ Հերովդէս, ապա ի միտս իւր եկեալ Հերովդէս՝ ասէ. Եթէ մոգքն որ գնացին և ոչ եկին այսր՝ վաճառականք էին նոքա, և թագաւորաց մերձակայ և մտերիմ սիրելի. յաղագս այնորիկ ոչ յայտնեցին ինձ զխորհուրդս իւրեանց, այլ երկեան յինէն եթէ առնուցու բազում ինչս ի մէնջ. վասն այնորիկ

ստութեամբ պատճառանօք փախեան յինէն, զի մի՛ չար ինչ արասցէ մեզ։ Եւ զայս ասացեալ Հերովդեայ, յարուցեալ գնաց ի քաղաքէն Երուսաղեմի՝ յերկիրն Հրէաստանի, ի կողմանս Աքքայիայ, և առժամայն մոռացաւ զբանն զոր խորհէր վասն մանկանն՝ առնել չար ինչ։ Եւ քահանայիցն և այլ ժողովրդեանն ամենեցուն անփոյթ արարեալ, մոռացումն եղեւ բանին։

Ապա առեալ Յովսեփայ և Մարիամու գաղտ զմանուկն Յիսուս և այլ ընծայս բազումս, և նուէրս պատարա՛գացն՝ զոր յառաջ ի մոգուցն ընկալեալ էին, և եկեալ նոցա ի քաղաքն Երուսաղէմ. և տարեալ առաջի քահանայիցն մատուցանէին զնա ի տաճարն սրբութեան ըստ օրինի աւանդութեան իւրեանց, զոյգս տատրակաց, և կամ երկուս ձագս աղաւնեաց. զոր և ծերունին Սիմէոն ի գիրկս իւր ընկալեալ զօծեալն, հայցէր ի Տեառնէ զարձակումն և զաւանդումն հոգւոյն՝ արձակիլ ի խաղաղութիւն. զոր և Սիմէոն մարգարէութեամբ հոգւով ասէր վասն Յիսուսի, ի կանգնումն և ի գլորումն բազմաց ի մէջ Իսրայելի։

Արդ յետ կատարման նուիրացն և պատարագացն, առեալ Յովսէփ և Մարիամ զմանուկն Յիսուս, դարձան անդրէն ի քաղաքն ի Բեդղեհէմ. մտեալ նոցա ի յայրն, և կացեալ բազում աւուրս անդ, մինչև ի գլուխ ամի տարւոյն. ոչ յայտնի այլ ի ծածուկ լինէին ի յահէ անօրէն արքային Հերովդեայ։

Արդ իբրեւ եղեւ մանուկն Յիսուս իննամսեայ աւուրբք, զատուցեալ ի ստենէ մօր իւրոյ՝ ո՛չ ինչ ճաշակէր և ոչ կերակրէր իրս ինչ ի ստեանց մօրն, և նոյա զայն տեսեալ՝ զարմացեալ լինէին. հարցանէին զմիմեանս և ասէին. Զի՞նչ է այս որ ոչ ուտէ և ո՛չ ըմպէ, բայց միայն զգուշութեամբ և արթնութեամբ լինի. և ոչ ոք կարէր իմանալ զկամս իւրոյ իշխանութեանն զոր առնէր։ Արդ իբրեւ եղեւ նոցա կատարումն ի Բեդղեհէմ ի գլուխ ամին, մատուցեալ անօրէն այր մի իշխան ի քաղաքէն անտի որում անուն էր Փեգովր, պատմեաց Հերովդեայ անօրէն արքային, եթէ մոգքն զոր առաքեցեր ի Բեդղեհէմ և պատուէր

արարեր նոցա գալ առ քեզ՝ ոչ եկին այսր. այլ գնացեալ գտին զնորածին մանուկն, զոր ասէին եթէ որդի թագաւորի է, և մատուցին նմա զամենայն ինչ և զընծայս իւրեանց զոր ունէին, և ընդ այլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։

## ԳԼՈՒԽ ԺԳ.

### Վասն չարութեանն Հերովդէի և կոտորելոյ զմանկունսն ի Բեդղեհեմ։

Իբրև լուաւ զայս Հերովդէս՝ եթէ խաբեցաւ ի մոգուցն, հրամայեաց կոչել զիշխանսն և զմեծամեծս իւր, և ասէ ցնոսա. Զի՞նչ արասցուք, զի արքն այն խաբէութեամբ զմեզ ծաղր և այպն արարեալ գնացին ի մէնջ փախստեամբ. զի՞նչ եղև մանուկն այն, և կամ ո՞ւր թագուցեալ յինէն տարեալ ի ծածուկ գաղտ, որ ոչ յայտնեցան նոքա ումեք ի մարդկանէ. եկայք առաքեսցուք արս զինաւորս ի Բեդղեհէմ զի գտեալ զնոսա կալցեն, և սպանցեն զնա՝ և զհայր և զմայր նորա։ Ասեն իշխանքն. Ո՜վ արքայ լո՛ւր մեզ. Բեդղեհէմ քաղաք աւերեալ[1] է, և այս բազում աւուրք են որ եղև բանդ այդ. ոչ իցէ նա անդ ի տեղոջն յայնմիկ. այլ գնացեալ փախստեամբ երթիցեն յաշխարհ հեռաւոր։ Զայս ասացեալ նոցա իշխանացն հրամանաւն Աստուծոյ, անփոյթ արարեալ զբանն վասն նորա. ի տեսչութենէ Հոգւոյն սրբոյ ոչ յայտնեցան նոքա ումեք. քանզի նոքա անդ էին բնակեալ։

Իսկ անօրէն անբարիշտն՝ զայրացեալ ի սիրտս իւր՝ ո՛չ գիտէր զի՞նչ առնէր։ Ասեն իշխանքն. Ո՜վ արքայ,

1. Յօր. աւերեալ էր։

մի՛ այդպէս տրտմիր և բարկութեամբ խռովեցուցաներ զմիրտ քո. հրամայեա զոր ինչ կամիս, զի արասցուք։ Ասէ արքայն. Այո, գիտեմ զինչ արարից, այլ դուք միայն պատրաստք լերուք։ Ապա հրամայեաց կոչել արս զօրագլուխս և զպետս գաւառաց. առաքեաց ընդ ամենայն աշխարհս իւրոյ տէրութեանն՝ խնդրել զՅիսուս, և ոչ գտին։ Եւ դարձեալ եկեալ պատմեցին արքային. Եթէ շրջեցաք ընդ ամենայն գաւառս Հրէաստանի, և ո՛չ գտաք զնա։ Ապա հրաման ետ զօրաց իւրոց, ութ և տասն հազարապետութեան՝ ընթանալ ընդ ամենայն աշխարհս իւրոյ տէրութեանն. և պատուէր ետ նոցա, և ասէ. Մի՛ ողորմեսջիք մանկանց տղայոց, և մի՛ լալոյ հարց և մարց իւրեանց. և մի՛ գանձօք և կամ խաբէութեամբ երդման հաւանիցիք, և կամ իրաց կաշառոց ակն ածիցէք. այլ ուր և գտանիցէք զմանկունս տղայս յերկեմենից մինչեւ ի խոնարհ՝ զամենեսեան զնոսա մաշեսջիք ի սուր սուսերի։ Յայնժամ ժողովեցան առ նա զօրապետք և զօրագլուխք հազարք հազարաց, զինուք և սուսերօք. և ելեալ շրջեցան և ցրուեցան ընդ ամենայն տեղիս. և կոտորեցին զամենայն մանկունս զոր գտին ի յութսուն և չորից գեղջէ, ոգիք իբրեւ հազար չորեքհարիւր վաթսուն։ Եւ զայս արարեալ անօրէն բռնաւորին վասն Յիսուսի, թերեւս պատահեսցի նա ընդ նոսա։

Իսկ Յովսէփ և Մարիամ իբրեւ լուան զայս ամենայն, երկուցեալ յահէ անօրինին և ի զօրացն նորա, առեալ Մարիամ զմանուկն Յիսուս՝ պատեաց զնա ի խանձարուրս, և եդ ի մսուր եզանց թաքուցեալ, և նոցա ելեալ գաղտ յաւերակս քաղաքին նստեալ նայէին. և ոչ ոք ի մարդկանէ առ նոսա երեւեալ՝ զանց առնէր։

## ԳԼՈՒԽ ԺԴ.

Վասն դարձեալ չարութեանն Հերովդեայ սպանանել զԶաքարիա վասն Յովհաննու որդոյ նորա։

Իսկ անօրէն բռնաւորն իբրև ոչ կարաց իրացն հնարս գտանել, ապա խնդիր արարեալ առ Զաքարիա վասն Յովհաննու, եթէ որդի նորա միամօր է, նա թագաւորելոց է ի վերայ Իսրայելի. առաքեաց առ նա արս զինաւորս՝ խնդրել զմանուկն Յովհաննէս, և ասէ ցնա. Դու Զաքարիա, լուեալ եմ ի բազմաց որ ասացին ցիս, եթէ որդին քո թագաւորելոց է ի վերայ աշխարհիս Հրէաստանի. ցո՛յց ինձ զնա զի տեսից։ Իսկ Զաքարիա իբրև լուաւ զայս, երկեաւ յանօրէն ամբարշտէն, և ասէ ցնա. Կենդանի է Տէր, ոչ գիտեմ զի՞նչ խօսիս։ Զայս իբրև լուաւ Եղիսաբեթ, առեալ զմանուկն Յովհաննէս, գնաց փախստական ի լեառն յանապատ տեղի, և անդ խնդրէր թագուցանել զանձն մանկանն՝ և ո՛չ կարէր. ապա յոգոց հանեալ լայր դառնապէս, և հեղոյր զարտասուս իւր առաջի Տեառն, և ասէր. Տէր Աստուած հարցն մերոց, Աստուած Իսրայելի, լուր աղաչանաց ծառայիս քո, և արա առ իս ըղգութ մարդասիրութեանդ քո, և փրկեա զանձն իմ ի ձեռաց Հերովդեայ, և յանօրէն չանց կատաղելոց զօրաց նորա. բացցի երկիր և կլցէ զմայրս հանդերձ մանկամբս իմով, և մի հայեսցի աչք իմ տեսանել զմահ մանկանս իմոյ։ Եւ զայս ասացեալ նորա. առժամայն պատառեցաւ լեառն և ընկալաւ զնա և ծածկեաց զմայրն հանդերձ մանկամբն իւրով։ Եւ եկն ամպ մի լուսաւոր և հովանի եղև ի վերայ նոցա, և հրեշտակք Տեառն իջեալ պահէին զնոսա։

Իսկ Հերովդէս կրկին անգամ առաքեաց Նուիրակս առ Զաքարիա, և ասէ. Ասա, ո՞ւր է թաքուցեալ որդին քո, յայտնեա ինձ այժմ զի տեսից։ Ասէ Զաքարիայ. Ես քահանայապետ և սպասաւոր եմ տաճարիս, և տուն իմ ոչ է աստ. այլ ի լեռնակողմն Գալիլեացւոց, և ես ոչ գիտեմ զի՞նչ եղեւ մայրն հանդերձ մանկամբն։ Եւ գնացեալ Նուիրակն պատմեաց արքային զասացեալն։ Դարձեալ առաքեաց Հերովդէս այլ այրս զօրավարս, և ասէ. Երթայք ասացէք ընդ Զաքարիա, եթէ այսպէս ասէ թագաւորն Իսրայելի, թէ տարեալ թագուցեր զորդին քո յինէն և ոչ կամեցար յայտնի ցուցանել ինձ. զի գիտեմ որ մանուկն քո թագաւորելոց է ի վերայ Իսրայելի, մի թէ կարիցէ բանիւք վճարել յինէն, և կամ ստութեամբ պատճառանօք անցուցանել զիս. ոչ այդպէս. այլ եթէ ոչ կամօք տացես ցիս, բռնութեամբ առից զնա և զքեզ ընդ նմին կորուսից։ Ասէ Զաքարիա. Կենդանի է Տէր Աստուած Իսրայելի, որ ո՛չ գիտեմ զմայրն և ոչ զմանուկն նորա թէ զի՞նչ եղեն. և զայս ասացեալ Զաքարիայ, գնացեալ պատմեցին Հերովդեայ։ Իսկ անօրէն բռնաւորն լցեալ ամենայն անիրաւութեամբ, առաքեաց այլ Նուիրակս. Թէ ահա երրորդ անգամ առաքեցի առ քեզ զհրամանս իմ, և դու ոչ լուար ինձ, և ոչ երկեար ի սպառնալեաց իմոց. ո՞չ գիտես եթէ արիւն քո ընդ ձեռամբ իմով իցէ. և ոչ ոք իցէ այն որ փրկելոյն է զքեզ յոր յուսացեալն ես։ Եւ իբրեւ եկեալ պատմեցին զասացեալսն ի Հերովդիէ, պատասխանի ետ Զաքարիա, և ասէ. Գիտեմ որ խնդիր ես դու արեան իմոյ, և կամիս հեղուլ զարիւն իմ անմեղ ի տարապարտուց. այլ թէպէտ և զմարմին իմ դառն մահուամբ կորուսանես, այլ զհոգիս իմ Տէր ընկալցի, այն որ արար և ստեղծ զիս։ Եւ զայս ասացեալ Զաքարիայ, գնացին պատմեցին Հերովդեայ. իսկ անօրէնն ի յառաւել չարութենէ սրտի իւրոյ, ոչ ինչ ետ պատասխանի։

Եւ եղեւ ի նմին հասարակել գիշերոյն, առաքեաց անօրէնն և ամբարիշտն արս զինաւորս, դահիճս, և

մտեալ գաղտ՝ ի տաճարի անդ սպան զԶաքարիա մերձ առ սեղանոյն՝ ի խորանն վկայութեան. և ո՛չ ոք իմացաւ զնա ի քահանայիցն և ի ժողովրդեանն. այլ ի ժամու պաշտաման աղօթիցն սպասեալ մնային, խընդրէին տեսանել զնա և ոչ տեսին։ Ապա ի լուսանալն առաւօտուն՝ քահանայիցն և ամենայն ժողովրդեանն ժողովեալ ի ժամ արձակման աղօթիցն, գալ ողջոյն տալ միմեանց. հարցանէին զմիմեանս և ասէին. Զի՞նչ ինչ եղեւ քահանայապետն Զաքարիա, ո՞ւր իցէ նա. և զարմանային ընդ յամելն նորա անդ. և ասէին, եթէ առանձինն աղօթս մատուցանէ, և կամ տեսիլ իմն ետես ի տաճարին։ Իսկ մի ոմն ի քահանայիցն որում անուն էր Փիլիպպէ, սա համարձակութեամբ եմուտ ի սրբութիւնք սրբութեանցն. և տեսանէր զարիւնն մածեալ առ սեղանոյն Աստուծոյ, և ահա ձայն բարբառոյ գայր ի խորանէ անտի որ ասէր. Եթէ հեղաւ արիւն ամբիծ ի տարապարտուց, և մի՛ ջնջեսցին մեղք որդւոց տանն Իսրայելի՝ մինչեւ եկեսցէ վրէժխնդիրն ամենեցուն։

Իբրեւ զայն տեսեալ քահանայիցն և ամենայն ժողովոյն պատառեցին զհանդերձս իւրեանց, և հող զգլխով արկեալ ասէին. Վա՜յ մեզ և եղուկ անձանց ծնընդոց, և հարց և մարց մերոց՝ որ յայսպիսի կորուստ և ի նախատինս մատնեցաք ամենեքեան։ Եւ մտեալ քահանայիցն ամենեցուն ի խորանի անդ, և տեսանէին զարիւնն մածեալ առ սեմս դրաց սեղանոյն որպէս զքար, և զմարմինն ոչ գտին. զահի հարեալ պատմէին միմեանց զկորուստ անձանց իւրեանց՝ որ գործեցաւ։

Եւ ասէին, զի՞նչ եղեւ մարմին նորա որ ոչ յայտնեցաւ ումեք. շրջեցան ընդ ամենայն տեղիս խնդրել զնա՝ և ոչ գտին։ Կարծէին ամենեքեան ի միտս իւրեանց, եթէ գաղտ ոք գողացաւ զմարմին նորա ի մարդկանէ, և տարեալ ի տեղի ուրեք թաղոյց. և բազում անգամ քննեցին զնա և ոչ իմացան։ Ապա սուգ մեծ առեալ ի վերայ նորա լացին զնա որդիքն Իսրայելի զաւուրս երեսուն։

Digitized by Google

Ապա յետոյ խորհուրդ արարեալ քահանայիցն և ամենայն ժողովրդեանն, կացուցանել քահանայապետ տաճարին. և արարեալ նոցա աղօթս առ Տէր Աստուած, խնդրէին ի Տեառնէ լինել սպասաւոր սրբոյ սեղանոյն. և արկին վիճակ, և ել վիճակ Սիմէոնի ծերունոյն։ Եւ կացեալ նա քահանայապետ տաճարին սակաւ աւուրս ինչ. և ապա վախճանեցաւ բարի խոստովանութեամբ ի Տէր։ Արդ ի գալստեան Փրկչին ի տաճարն մինչև ի Սիմէոնի յաւանդեալ հոգոյն, լինի ամենայն աւուրք կենաց նորա քառասուն օր։ Եւ զկնի այսր ամենայնի կացուցին զայլ ոք առաջնորդ ժողովրդեան տանն Իսրայելի։ Արդ յետ այսր ամենայնի եղելոյս որ գործեցաւ։

## ԳԼՈՒԽ ԺԵ.

*Վասն հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ փախչել յԵգիպտոս։*

Երևեալ հրեշտակ Տեառն Յովսեփայ և ասէ. Առ զմանուկդ և զմայր իւր և փախիր յԵգիպտոս. զի խնդրէ Հերովդէս կորուսանել զմանուկդ։ Զի եկեալ պատմեցին արքային վասն Յիսուսի. եթէ մանուկն այն կենդանի է։

## ԳԼՈՒԽ ԺԶ.

Վասն գնալոյ նոցա փախստեամբ ի Քեբրոն, որ է քաղաք.

Ցարուցեալ Յովսէփ վաղվաղակի առ զմանուկն և զմայր իւր և գնաց փախստական յԱսկողոն քաղաք մեծ, որ անուանեալ կոչի Ասխալան. մերձ առ սահմանօքն ովկիանոսի մեծի ծովու. և անտի ի Քեբրոն, որ է քաղաք. և անդ կացեալ նոցա ի ծածուկ ամիսս վեց: Եւ մանուկն Յիսուս էր ամաց միոյ և ամսոց երից:

Եւ երթայր ինքն հետիոտք ի վերայ երկրի. և գայր խաղալեօք անկանէր ի գիրկս մօր իւրոյ: Եւ նա խանդաղատելով բարձեալ ի վերայ բազկաց իւրոց, գգուէր և գոհանալով փառաւոր առնէր զԱստուած:

Իսկ ոմանք ի քաղաքէն եկեալ պատմեցին Հերովդեայ, եթէ մանուկն Յիսուս աւասիկ ի Քեբրոն քաղաքի է: Առաքեաց դեսպանս գաղտ առ գլխաւորս քաղաքին, զի նենգութեամբ կալցեն զՅիսուս՝ և սպանցեն: Իբրև զայս իմացեալ Յովսեփայ և Մարիամու, պատրաստեցին զանձինս իւրեանց ելանել անտի ի Հրէաստանէ, և գնալ յԵգիպտոս: Եւ ելեալ գաղտ փախստական ի քաղաքէն, գնացին զճանապարհաւն. և բազում օթեւանս արարեալ նոցա զաւուրս եւթն. և ի տեղի ուր և իջեւանս առնէին, մանուկն Յիսուս հանեալ ջուր յաւազանէն[1] տայր ըմպել նոցա, մինչև եկեալ հասեալ նոցա յերկիրն Եգիպտացւոց ի դաշտին Տայանու: Եւ իջեալ ի քաղաք անդր բազում աւուրս օթեւանս առնէին. որում անուն էր քաղաքին՝ Պող-

1. Յօր. էր յ[illegible]ղոյ:

պայս։ Եւ կացեալ նոցա անդ ամիսս վեց․ և Յիսուս էր ամաց երկուց։

Եւ անտի յարուցեալ եկին մօտ առ սահմանս Եգիպտոսի, ի քաղաք մի որ անուանեալ կոչի Խահրէ, մերձ ի Թագաւորանիստ կայեանն, որ է տեղի ապարանից և բերդից․ կարի բարձրաւանդակ, խիստ գեղեցիկ և վայելուչ, նկարեալ ազգի ազգի տեսակօք յօրինեալ, զոր Աղեքսանդր Թագաւորին յառաջ շինեալ էր՝ յաւուրս իւրոյ իշխանութեանն․ և անդ կացեալ ամիս չորք մինչեւ եղեւ Յիսուս ամաց երկուց և ամսոց չորից։ Եւ ելեալ Յիսուս, երթայր և շրջէր ընդ մանկունսն և ընդ տղայս փոքրագոյնս, և ընդ ստնդիայս խաղ արկեալ ընդ նոսա խօսակից լինէր։ Առեալ հանէր զնոսա ի բարձրագոյն տեղիս և յերդ և կամ ի պատուհան, ընդ որ նշոյլք արեգականն մտանէր․ և ասէր․ Ո՛ ոք ի ձէնջ կարիցէ գիրկս արկանել շողից լուսոյն՝ և իջանել աստի ի վայր և ո՛չ վնասել․ և նոքա ասեն․ Ո՛չ ոք ի մէնջ կարիցէ առնել զայդ։ Ասէ Յիսուս․ Հայեցարո՛ւք ամենեքեան և տեսէք․ և գիրկս ածէր Յիսուս զշառաւեղից արեգականն մանրամաղ փոշոյն, այն որ ի ծագել արեւուն ընդ երդսն խաղասցէ․ և գայր իջանէր անարատ և ամբողջ՝ մնալ ի վերուստ մինչեւ ի վայր։ Եւ զայն տեսեալ տղայոցն և մանկանցն ամենեցուն որ անդ էին, երթեալ պատմէին ի քաղաքին զգործն զոր առնէր Յիսուս․ և որք լսէին՝ ամենեքեան հիացեալ զարմանային։

Իսկ Յովսէփ և Մարիամ իբրեւ լսէին զբանս զայս, երկուցեալ նոցա ի քաղաքացեացն՝ վասն մանկանն, զի մի՛ ոք գիտասցէ։ Եւ ելեալ գաղտ ի գիշերի առեալ զմանուկն Յիսուս գնացին փախստեամբ ի տեղւոջէ անտի․ և եկեալ հասեալ նոցա ի քաղաքն յԵգիպտոս, ուր ամենայն բազմութիւնք մարդկան ժողովեալ էին անդ։ Եւ էր քաղաքն այն մեծ կարի յոյժ, բարձր պարսպաւ․ և ընդ մտանելն յառաջին դրանն ի ներս, յայս կոյս և յայն կոյս արարեալ էին Թագաւորքն և իմաստնասէրքն, տլիսմ մի մեծ յամենայն դուռն քաղաքին, որ ի մտանելն և յելանելն ամենայն ոք տե-

Digitized by Google

սանէր զնոսա։ Եւ յորժամ փորձութիւն հասանէր ի թշնամեաց կամ նեղութիւն և աւերում երկրին, յառաջ տլըսմերն քաղաքին հաւասար ամենեքեան ձայն արձակէին, և որք լսէին՝ բազումք ի նոցանէ ճանաչէին և իմանային ի նոցանէ՝ զոր ինչ գալոց էր երկրին այնմիկ։ Եւ էր տլիսմ մի մեծ ի վերայ դրաց պարսպին. երկու առիւծք մեծամեծք երկաթիք և ժանիք նոցա պղընձիք արու և էգ, մինն ընդ աջմէ՝ և միւսն ընդ ահեկէ։ Եւ յերկրորդ դուռն պարսպին՝ այլ գազանք մեծամեծք կաւեղէնք և խեցեղէնք. մին կողմն արջոյ և միւսն ընձու. և այլ գազան մի մեծ եղջերու, քարեղէնք և փայտեղէնք։ Եւ ի յերրորդ դուռն պարսպին երիվար մի պղընձի, և ի վերայ երիվարին թագաւոր մի պղընձի, և ի թագաւորին ձեռն արծիւ մի պղընձի։

Եւ իբրեւ մերձ եղեւ Յիսուս մտանել ընդ դուռն քաղաքին, յանկարծակի գոչեցին գազանքն և ամենայն երէքն միաբան, և երկու առիւծքն գոռոզացեալ բըչային ղօղանջելով. և այլ ամենայն անշունչ պատկերք կռոցն ելեւելս առնէին, և բագինք մեհենիցն զաղաղակ բարձեալ լինէին մինչեւ քաղաքն ամենայն ի հիմանէ շարժեալ, և բնակիչքն և մարդիկն յահէ երկեղին սարսեալ ոչ կարէին կեալ։ Եւ նոյն ժամայն ի գոչել երկուց առիւծուցն հնչեաց արծիւն, խըրխընջեաց երիվարն, ձայն արձակեաց թագաւորն. Եթէ լուարո՛ւք ամենեքեան և տեսէք. թագաւոր ոմն որդի արքայի մեծի զօրօք բազմօք եմուտ ի քաղաքս այս. զգոյշ լերուք միաբան առհասարակ, և պատրաստ կացէք։

Իբրեւ զայս լուան ամենայն բազմութիւնք քաղաքին՝ փութով եկեալ հասեալ լինէին՝ զօրօք և զինուք ի վերայ պարսպացն. հայէին յայս կոյս և յայն կոյս, և ինչ ո՛չ տեսանէին. և ի միտս իւրեանց եկեալ՝ զարմացեալ լինէին, և ասէին. Եթէ զի՞նչ է բարբառ աղաղակիս այսորիկ որ եղեւ առ մեզ. ո՞ ետես, և կամ ո՞ լուաւ՝ եթէ որդի թագաւորի եմուտ զօրօք իւրովք ի քաղաքս յայս։ Յայնժամ շրջեցան նոքա ընդ ամե-

Digitized by Google

նայն տեղիս և ոչ ինչ տեսին յորոց զձայնն լուան. բայց միայն[1] գտին զՅովսէփ և զմանուկն և զՄարիամ ի տան միում՝ ի տեղի իջևանի անդ։ Եւ կալեալ զՅովսէփ տարան յատեան հրապարակին, և ասեն ցնա. Ասա՛ մեզ, ծեր դու. ուստի՞ ես եկեալ, և կամ յորմէ՞ աշխարհէ ես։ Ասէ Յովսէփ. Ես ի յերկրէն Հրէաստանի եմ, ի քաղաքէն Երուսաղեմի։ Ասեն ցնա. Ասա մեզ զճշմարիտն, ե՞րբ եկիր այսր։ Ասէ Յովսէփ. Այս երրորդ օր է ինձ՝ որ եկեալ եմ ի քաղաքս յայս։ Ասեն ցնա. Եւ ո՞չ է տեսեալ քո ի ճանապարհիդ՝ յորում գայիր՝ թագաւոր ումն որդի արքայի, որ զօրօք բազմօք եկն յերկիրս յայս։ Ասէ Յովսէփ. Ոչ եմ տեսել։ Ասեն ցնա. Ապա ո՞րպէս եկիր այսր զբազում ճանապարհս անջրդիս. Հետ ընկերաց գայի տամբ և ընտանեօք իմովք. և երբեմն ես միայն, մանուկն և մայր իւր։ Ասեն բազմութիւնք մարդկան. Գիտեմք որ աղքատ ումն երևիս, ծեր օտարական, հաստատուն և իմաստուն այր. և կամիմք որ հաստատուն քննեմք և իմանամք, մի՛ մեղադիր լինիր մեզ, զի՛ նշան իմն երևեցաւ մեզ, և մեք ամենեքեան հիացեալ զարմանամք։ Եւ զայս ասացեալ նոցա թողին զՅովսէփ և գնացին։

Եւ եղև ի մտանելն Յովսեփայ ի քաղաքն, և հանդիպեցաւ իջևանքն նորա մերձ առ մեհեան կռոցն Ապողոնի. և անդ կեցեալ նոցա ի տան միում՝ զաւուրս բազում։ Եւ յաւուր միում նայեցեալ Յիսուսի, տեսանէր զտուն չաստուածոցն՝ այնպիսի մեծամեծ լայնութեամբ և երկայնութեամբ, և այնչափ բարձր պարըսպաւ՝ իբրև փոքրագոյն քաղաքանիստ մի։ Ասէ Յիսուս ցմայր իւր. Մայր, պատմեա ինձ հաստատուն, զոր ինչ և ասացից քեզ տուր ինձ պատասխանի։ Ասէ ցնա. Ասա՛ ինձ որդեակ, զի՞նչ խնդրես։ Ասէ Յիսուս Զի՞նչ է այն շինուածք բարձրութեան. որ լայնութիւն և երկայնութիւն նորա մեծ իցէ։ Ասէ Մարիամ. Որդեակ, այն է տուն կռոց մեհենից պաշտօն դից անո-

1. Յօր. էր Գ, ուղղեցաք Գայն։

տեաց. չաստուածոց պատկերն Ապողոնի։ Ասէ Յիսուս. Երթամ տեսանեմ զնա, թէ զի՞նչ տեսակ ունի նա, և կամ զի՞նչ նմանութիւն։ Ասէ Մարիամ. Որդեակ, եթէ կամիցիս երթալ անդ, պատրաստ լեր ի մտանելն և յելանելն, զի մի՛ վնասեսցիս։

Եւ յարուցեալ Յիսուս վաղվաղակի գնաց անդ, և եմուտ ի տաճար կռոցն. և հայէր շուրջ զամենեսեան տեսանել զվայելչութիւն տաճարին և շինուածոյն. զի էր նկարօք և ազգի ազգի գեղեցկութեամբ զարդարեալ. զարմացաւ յոյժ, և ել վաղվաղակի արտաքս։ Իբրև տեսին երկու առիւծքն զՅիսուս՝ ի մտանելն և յելանելն ի տաճարէն, գոչեցին սաստիկ և ահագին ձայնիւ, և ամենայն երէք և գազանք միաբան. հնչեաց արծիւն, խրխնջեաց երիվարն, ձայն արձակեաց թագաւորն. Տեսէք ամենեքեան և լուարուք. ահա որդի թագաւորի արքային մեծի եմուտ ի տաճարն Ապողոնի։ Իբրև լուան զայս ամենայն բազմութիւն քաղաքին, ընթացեալ անդր փութով հասանէին. հարցանէին և ասէին. Զի՞նչ է ձայն աղաղակիս այս որ եղև առ մեզ շրջեցան ընդ ամենայն քաղաքն, և ինչ ոչ գտին, բայց միայն զՅիսուս առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ. և կալեալ զնա հարցանէին և ասէին. Մանուկ դու, ո՞ւմ որդի իցես։ Ասէ Յիսուս. Ես պատանեակ եմ ծերոյ միոյ աղքատի, օտարականի, զի՞նչ խնդրէք յինէն. և նոքա թողին զնա և գնացին։ Հարցանէին ցմիմեանս քաղաքացիքն և ասէին. Զի՞նչ է այս նոր սքանչելի և հիանալի իրս զոր տեսանեմք. զձայն աղաղակիս միայն ստուգապէս լսեմք, և զասացեալսն յառաջ ո՛չ կարեմք իմանալ. երկնչիմք եթէ յանկարծակի կորուստ հասցէ մեզ վաղվաղակի՝ ուստի ակն ոչ ունիցիմք։ Եւ զայս ասացեալ նոցա՝ ի տարակուսանս անկեալ լինէին քաղաքն ամենայն։ Իսկ Յիսուս լռութեամբ գնաց առ մայր իւր, և պատմէր զամենայն ինչ զոր ետես և լուաւ ի նոցանէ, և նոքա յոյժ զարմացեալ էին։

Եւ եղև ի կատարել նոցա անդ ի գլուխ ամին, որ էր Յիսուս ամաց երից և ամսոց չորից, յաւուր միում

Digitized by Google

*տօն էր մեծի չաստուածոյն Ապողոնի, և ժողովեցան անդ ամենայն բազմութիւն քաղաքին՝ ի մօտաւորաց և ի հեռաւորաց. եկեալ առ դուրս տաճարի կռոցն բազում ընծայօք և նուիրօք, զոհել զոհ մեծ յանուն դիւաց, յանասնոց և յամենայն չորքոտանեաց. և զխառնելիս և զոհարանսն պատրաստեալ էին. և զսեղան ընթրեացն՝ մերձ յուտել և յըմպել, և ամենայն բազմութիւնք ժողովոյն հաւաքեալ կային առ դրանն. և չքահանայքն ի պաշտօն կռոցն կատարել զտօնն մեծի Ապողոնի։ Իսկ մանուկն Յիսուս ելեալ գնաց ի ծածուկ, և երթեալ մտանէր ընդ նոսա, և նստէր անդ ուր քուրմքն ամենայն ժողովեալ էին և սպասաւորէին մեհենիցն։ Իսկ երկոքին առիւծքն որ էին ի վերայ դրաց պարսպին, իբրեւ տեսին զՅիսուս ի հեռաստանէ՝ որ եմուտ ի տաճարն Ապողոնի գոչեցին առիւծքն միաբան յանկարծակի, և ամենայն երէք և գազանք ընդ նմին հնչեաց արծիւն, խրխնջեաց երիվարն, ձայն արձակեաց թագաւորն, և ասէ. Տեսէ՛ք ամենեքեան և լուարուք. ահա որդի թագաւորի արքային մեծի եմուտ ի տաճարն Ապողոնի։ Զայս իբրեւ լուան ամենայն բազմութիւնք քաղաքին որ անդ էին լցան սըրտմտութեամբ և բարկութեամբ, և դիմեցին առհասարակ ի վերայ միմեանց՝ և կամէին սրով սպանանել զմիմեանս, և ասեն. Զի՞նչ արասցուք զծերն զայն, զի ընդ մտանել նորա ի քաղաքս մեր, ամենայն նշանք և սքանչելիք ի գալստեանն նորա եղեւ։ Մի՞թէ մանուկն այն որ ունի՝ որդի թագաւորի իցէ, և նորա առեալ փախստական եկն յաշխարհս մեր։ Եկայք կալցուք զնա և սպանցուք։*

*Եւ մինչդեռ նոքա զայս խորհել զմտաւ ածէին, և Յիսուս էր անդ ի տաճարն Ապողոնի, հայեցեալ տեսանէր զպատկերն զայն քանդակեալ ոսկով և արծաթով. և գրեալ էր ի վերայ նորա զգիր անուան, եթէ. Սա է Ապողոն աստուած. արարիչ երկնի և երկրի, որ տայ կենդանութիւն ամենայն մարդկան։*

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԺԷ.

*Վասն խորտակելոյ զկուռսն և զդիսն և զքուրմսն Եգիպտացւոց։*

*Եւ առժամայն զայրացեալ Յիսուս յոգի իւր՝ եւ վազվազակի արտաքս ի տաճարէն. և հայեցեալ յերկինս, ասէ. Հայր փառաւորեա՛ զորդի քո, զի և որդի քո փառաւորեսցէ զքեզ։ Եւ ահա ձայն յերկնից որ ասէ. Փառաւոր արարի, և դարձեալ փառաւոր արարից։ Եւ զայս ասացեալ Յիսուսի, անդէն շարժեցաւ տեղին ի նմին ժամու և ամենայն շինուածք տաճարին ի նմին ժամու անկեալ կործանեցան, պատկեր կռոցն Ապողոնի և քրմապետք մեհենիցն, և քահանայք չաստուածոցն՝ ընկղմեալ անդր ի ներքոյ շինուածոյն՝ սատակեցան. և այլ բազմութիւնք քաղաքին որ արտաքոյ էին, փախեան ի տեղւոջէ անտի. և ամենայն կուռք և բագինք դիւացն՝ որ ի քաղաքին էին՝ անկեալ յերկիր կործանեցան, և ամենայն շինուածք և տլիսմ որ շուրջ զքաղաքաւն և զսահմանօքն էին՝ անկեալ խորտակեցան. և փշրեցան անշունչ պատկերք մարդկան, գազանացն և անասնոցն և այլ ամենայն չորքոտանեացն։*

*Յայնժամ դեւք զաղաղակ բարձեալ ասեն. Տեսէք ամենեքեան և ողորմեցարուք մեզ. որ մանկիկ մի փոքրիկ տղահասակ, զմեզ զամենեսեան առհասարակ կործանեաց, և զտեղի բնակութեան մերոյ քակեաց, և զյարկ հանգստեան մերոյ աւերեաց, և զտաճար շինուածոյս մերոյ աղարտեաց. և զպաշտօնեայս մեր չարամահ արարեալ ջնջեաց. արդ կալարուք զնա և չարամահ սատակեցէք։ Իբրեւ լուան զայս ամենայն բազմութիւնք քաղաքին, զլալումն և զողբումն դիւացն, ի*

Digitized by Google

ձայն աղաղակի նոցա դիմեցին ամենեքեան առհասարակ ի տեղի կործանման տաճարին. և սուգ մեծ առեալ լային իւրաքանչիւր ոք զմեռեալս իւրեանց։

Եւ Յիսուս գնացեալ լռութեամբ առ մայրն իւր նստէր ի յանկիւնս տանն։ Եւ կալեալ զՅովսէփ բերին առաջի ատենին, և ասէին. Ասա մեզ. զի՞նչ է կորուստ այս որ եկն ի վերայ մեր՝ ընդ մտանել ձեր ի քաղաքս յայս. ո՞չ յառաջ իսկ ասացաք քեզ, եթէ պատմեա մեզ եթէ զի՞նչ տեսեր ի ճանապարհին և կամ զի՞նչ լուար և դու թաքուցեր ի մէնջ զգործս զայս։ Ահաւասիկ չարամահ սատակեսցուք զքեզ և զորդի քո, և զայնոսիկ որ ընդ քեզ. զի կախարդութեամբ և խաբէութեամբ իւիք կորուսիք զքաղաքս զայս։ Ասա մեզ, ո՞ւր է որդին քո, յայտնեա ամենեցուն, զի գիտասցուք և տեսցուք զնա, որ զաստուածսն մեր կործանեաց, և զպաշտօնեայս մեր խափանեաց, և զքահանայս մեր ընկղմեաց, և բազում ոգիս տարաժամ արարեալ սատակեաց. և ահա ոչ զերծանիք ի ձեռաց մերոց՝ մինչեւ զամենեսեան զձեզ նոյնպէս արասցուք։ Եւ այսպէս բազում հայհոյութեամբ խօսէին ընդ նա։

Եւ Մարիամ անկեալ առ ոտսն Յիսուսի, արտասուելով աղաչէր զնա, և ասէր. Որդեակ իմ Յիսուս, լո՛ւր ինձ աղախնոյ և մօր քո, և մի՛ այդպէս բարկանար ի վերայ մեր, և խռովեցուցաներ զքաղաքս զայս, զուցէ վաղվաղակի թշնամութեամբ կալցեն զքեզ և սպանցեն, և զմեզ դառն մահուամբ կորուսցեն։ Ասէ Յիսուս. Ով մայր իմ, դու ո՛չ գիտես զինչ խօսիս։ Ամենայն դասք երկնային զօրացն անմարմնոց հրեշտակաց սարսեալ դողան յահեղ զօրութենէ փառաց աստուածութեան իմոյ՝ որ զկենդանութիւն և զկեանս շնորհեմ ամենեցուն. և դա Սադայէլ[1] հակառակ իմ եղեալ և ստեղծուածոյ իմոյ, և ըստ իմոյ նմանութեան իշխէ զանձն իւր Աստուած անուանել, և ի մարդկանէ պաշտօն և երկրպագութիւն առնուլ։ Ասէ Մարիամ. Որդեակ իմ, բարիոք ասես. բայց աղաչեմ զքեզ, լո՛ւր

1. Յօր. էր Սատայէլ. ուղղեցաք Սադայէլ.

Digitized by Google

ինձ բարեխօսութեամբ մօր և ծառայի քո, յարո՛ զմեռեալսն զոր կորուսեր. և ամենեքեան որք տեսանիցեն զոքանչելիսն զոր առնես՝ հաւատասցեն յանուն քո. զի ահա տեսանես զծերն որ կալեալ ունին՝ բազում տանջանօք չարչարեն։ Ասէ Յիսուս. Ո՛վ մայր իմ, մի՛ այդպէս բռնադատեր զիս, զի չեւ է հասեալ ժամանակ իմ առնել զայդ։ Ասէ Մարիամ. Աղաչեմ զքեզ, լո՛ւր ինձ, որդեակ, և հայեաց ի նեղութիւն և ի տառապանս աղախնոյ քո, որ պանդուխտ և օտար շրջիմք վասն քո՝ յանծանօթ աշխարհ հեռաւոր։ Ասէ Յիսուս. Յաղագս աղաչանաց քոց արարից զայդ, և զի հաւատասցեն եթէ որդի Աստուծոյ եմ։ Եւ զայս ասացեալ Յիսուսի, յարուցեալ գնաց ի մէջ բազմութեան ժողովոյն։ Իբրեւ տեսին զնա ամենեքեան տղայհասակ, փոքրագոյն, ամաց երից և ամսոց չորից, ասեն ցմիմեանս. Սա՞ է նա որ զտաճար կռոցն քակեաց, և զպատկերն Ապողոնի կործանեաց։ Ասեն. Այո՛, նա է։

Իբրեւ լուան զայս ամենեքեան որ անդ էին, հիացեալ զարմանային ընդ հասակ տղայութեան նորա, և ընդ գործն զոր արար։ Ցարեան ամենեքեան ափշուցեալ՝ և հայէին և ասէին. Զի՞նչ կամիցի առնել դա։ Եւ Յիսուս զայրացեալ յոգի իւր՝ եկն եկաց ի մէջ ատենին՝ ի վերայ մեռելոցն. և առեալ հող ի տեղւոյն՝ ցանեաց ի վերայ նոցա, և ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Ձեզ ասեմ քահանայիցդ ամենեցուն՝ որք աստ անկեալ կայք մեռեալք ի ներքոյ շինուածոյդ, արիք վաղվաղակի ի կորստեան կործանմանէդ և եկայք արտաքս։ Եւ նոյն ժամայն ընդ ասել բանին, յանկարծակի շարժեցաւ տեղին յորում կային անդ, և հողն եռացեալ՝ զվէմսն ի վեր թաւալեցուցանէր. և ամենեքեան յարեան ի մեռելոց կենդանի մարմնով կանգնեցան, և կացին ի վերայ ոտից իւրեանց, ոգիք իբրեւ հարիւր ութսուն և երկու քահանայք։ Իսկ այլ սպասաւորք և քրմապետքն Ապողոնի ոչ յարեան՝ որ էին ոգիք երկերիւր և երկու։ Եւ զայն տեսեալ ամենայն բազմութիւնք մարդկան՝ զոր արար Յիսուս, ահ և դողումն կալաւ զամենեսեան,

և զաճի հարեալ աշէին․ Սա է Աստուած արարիչ երկնի և երկրի՝ որ տայ կենդանութիւն ամենայն մարդկան։ Իսկ քահանայքն ամենեքեան՝ որ յարեան ի մեռելոց, ևկեալ անկանէին առաջի Նորա, և խոստովան լինէին զմեղս իւրեանց, և ասէին․ Արդարև որդի Աստուծոյ ես դու, որ եկիր ի կեցուցանել զմեզ։ Եւ ե՛լ համբաւ սքանչելեաց Նորա ընդ ամենայն երկիրն ընդ այն, և որք լսէին զայն, բազումք ի հեռաստանէ գային ի լուր և ի համբաւ տեսութեան Նորա, և ընդ հասակ տղայութեան Նորա՝ առաւել զարմանային։

Ապա անկեալ բազմութիւնք ժողովոյն առ ոտսն Յիսուսի, աղաչէին զնա յարուցանել զմեռեալս զայնոսիկ՝ որք էին սպասաւորք տաճարի մեհենիցն, և Յիսուս ոչ կամեցաւ։ Եւ կալեալ զՅովսէփ ի մէջ բազմութեան ամբոխին, աղաչէին զնա և ասէին․ Թող մեզ զամենայն յանցանս չարեաց՝ զոր արարաք ընդ քեզ․ և աղաչեա զմանուկն քո, զի յարուցանէ զմեռեալսն որ ի տաճարի անդ են։ Ասէ Յովսէփ․ Թողութիւն արարէք ինձ, զի ո՛չ կարացից բռնադատել զնա․ ապա եթէ ինքնին կամիցի առնել, կամք Տեառն լիցին։

Եւ կայս ասացեալ Նոցա՝ եկն այր մի մեծատուն, և անկեալ երկիր պագանէր Յիսուսի և Յովսեփայ, և ասէր․ Աղաչեմ զձեզ, եկայք ի տուն ծառայիս ձերոյ, և մտեալ ընդ յարկաւ իմով հանգերուք որչափ կամք ձեր լիցին։ Եւ տարեալ զՅովսէփ և զմանուկն և ըզմայր իւր՝ մուծին անդր․ և ամենայն բազմութիւնք քաղաքին գային անդ առ Նոսա մեծաւ սիրով, և պաշտէին զնա բազում յընչից իւրեանց։ Եւ որք նեղեալ լինէին յայսոց չարաց, ի ցաւոց և հիւանդութեանց, անկանէին առաջի Նորա, և Նա բժշկէր զամենեսեան․ և բազում ուրախութիւն լինէր ի քաղաքին յայնմիկ․ և որ շուրջ զսահմանօքն էին, իբրև լսէին զամենայն ինչ որ եղև, ի ձայն մեծ փառաւոր առնէին զԱստուած։ Իսկ Նոցա կացեալ Յովսեփայ[1] անդ ի քաղաքին յայնմիկ աւուրս բազում՝ ի տան առն ուրեմն իշ-

1․ Թերևս պակասէ Մարիամ և Յիսուս։

խանի, որ էր ազգաւ եբրայեցի, անուն նորա Եղիազար. և ունէր որդի մի անուն Ղազարոս, և դստերս...[1] և կեցցէ անձն քո յուսով ի Տէր. և զայս ասացեալ նոցա լռեցին։

Եւ կացեալ նոցա ամիսս երիս, և եղեն Յովսէփ և Եղիազար իբրեւ եղբարք սիրելի և բարեկամք միմեանց. և Մարթա և Մարիամ ընկալեալ զսուրբն Մարիամ և զմանուկն Յիսուս ի տան իւրեանց, իբրեւ զմի անձն և զմի հոգի կատարեալ սիրով։ Եւ Մարթայ առեալ զՂազարոս եղբայր իւր ի բաժնի, և Մարիամ քոյրն Ղազարու զմանուկն Յիսուս սիրէր որպէս զեղբայր իւր, զի էին նոքա հաւասարք միմեանց։

Իսկ Յիսուս իբրեւ ետես զայս ամենայն ինչ՝ որ եղեւ, զայրացեալ յոգի իւր՝ ասէ ցՄարիամ մայր իւր. Տրտում է անձն իմ՝ զոր ինչ արարի ի քաղաքիս յայսմիկ, զի ոչ կամէի յայտնել զանձն իմ, զի մի՛ ոք գիտասցէ, և ահա լուայ աղաչանաց քոց և արարի հրամանս քո։ Ասէ Մարիամ. Եւ ընդէ՞ր մեղադիր լինիս անձանց մերոց. ո՞չ դու եղեր իսկ յառաջ[2] կործանման տաճարին, և ածեր զամենեսեան ի կորուստ և ի մահ։ Եւ մեք վասն այնորիկ աղաչեցաք փրկել զանձինս մեր ի մահուանէ. և ահա զոր ինչ արարեր, և զոր խորհիս առնել՝ կամք քո լիցին։

1. Աստ թուղթ մի անկեալ է ի դրչագրէն։
2. Պակասէ բառն պատճառ։

## ԳԼՈՒԽ ԺԸ.

*Վասն դառնալոյ նոցա հրամանաւ հրեշտակին յերկիրն իւրեանց։*

Ասէ Յիսուս. Արիք գնասցուք աստի յայլ հեռաւոր տեղի, զի մի ոք գիտասցէ։ Ասէ Մարիամ. Որդեակ, կամք քո լիցին։ Ապա ի նոյն տեսլեան գիշերին երեւեալ հրեշտակ Տեառն Յովսեփայ և ասէ. Արի, առ զմանուկդ և զմայր իւր, և եկ յերկիրն Իսրայելի, զի մեռան արքն այնոքիկ որ խնդրէին զանձն մանկանն։ Եւ զարթուցեալ Յովսէփ ի քնոյ անտի, պատմէր Մարիամու զտեսիլն. և իբրեւ լուան ուրախ եղեն։

Իսկ յետ անցանելոյ սակաւ ինչ աւուրց՝ լուեալ Յովսեփայ եթէ Արքեւեղոս թագաւորեաց փոխանակ Հերովդէի հօր իւրոյ, երկեաւ երթալ անդր։ Ապա յարուցեալ Յովսէփ ՚ի գիշերի՝ առ զմանուկն և զմայր իւր, և ել ի քաղաքէ անտի. և գնացեալ ընդ կողմանս հարաւոյ առ ստորոտ լերինն Սինայ. և եկն անցանել նորա ընդ անապատ տեղի ի Քորեբ, մերձ առ սահմանօքն որ յառաջ բանակեալ էին ազգն Իսրայելացւոց. և անդ նոցա իջեւանս արարեալ ի գիշերին յայնմիկ։

Եւ ի վաղիւն յարուցեալ նոցա, եկին անցանել յերկիրն Մովաբու՝ յանդիման Մամբրէի, և բազում օթեւանս արարեալ նոցա ի ճանապարհին. և հասեալ նոցա յԱրաբացւոց քաղաք մի՝ որ անուանեալ կոչի Մալլա Քպիր Մտին, որ թարգմանի Աստուծոյ մեծ քաղաք։ Եւ եղեւ իբրեւ մերձ եղեւ Յիսուս առ սահմանօք քաղաքին, էին անդ բազում բագինք կռոցն դից մեհենից չաստուածոց դիւաց։ Եւ էր ի ճանապարհն լեռն

Digitized by Google

մի յոյժ բարձրագոյն, և ի վերայ նորա տաճար մի մեծ, զարդարեալ ազգի ազգի նկարօք վայելչութեամբ, և պաշտօն դիւաց մեհենից ի ծառայութեան ի սպասու լինէին անդ։ Եւ ժողովեալ նստէին դեւքն յանցս ճանապարհին, խորհէին ընդ միմեանս, և ասէին. Բարիոք կամք մեք աստ ի բնակութիւնս մեր, և ի խաղաղութիւն և ի հանգստեան եմք. բայց լուեալ եմք ի բազմաց՝ թէ որդի ծերոյ միոյ յայտնեալ է, որ զամենայն գործս մեր գաղտնի՝ գիտէ և ճանաչէ, և հալածիչ և թշնամի է ազգիս մերոյ, արդ զի՞նչ լինիմք արդեւք ի նմանէ, կամ յո՞ր աշխարհ երթիցուք փախըստական։ Ասեն դեւքն. Եւ ո՞րպէս կարես գիտել զնա, եթէ նա իցէ, և յումմէ՞ ես լուեալ։ Ասէ միւս դեւն. Դուք ո՛չ գիտէք զնա, ես կարի յոյժ ճանաչեմ զնա յառաջ՝ եթէ ո՞ իցէ։ Ասեն ցնա. Եթէ գիտիցես արդեւք զնա՝ պատմեա՛ մեզ։ Ասէ դեւն. Եւ ընդէ՞ր գիտէք ոչ զնա, նա է որ յերկնից կամարացն ընկեաց զմեզ ի բարձրութենէ անտի, և կործանեալ կորոյս զմեզ զամենեսեան. և այժմ եկեալ է աստ հալածական առնել զմեզ ի մարդկանէ։ Ասեն դեւքն. Եւ ո՞րպէս կարիցես գիտել զնա՝ եթէ գայդ առնէ։ Ասէ դեւն. Ես անդ էի յԵգիպտոս ի տաճարն Ապողոնի՝ յորժամ կործանեաց զնա՝ և զամենայն տուն մեհենիցն. և զպատկեր չաստուածոցն. կորոյս առհասարակ։ Ասեն դեւքն. Վա՜յ մեզ, եթէ նա աստ գայցէ առ մեզ, զի՞նչ լինիցիմք։

## ԳԼՈՒԽ ԺԹ.

*Գալ յերկիրն Արաբիա, խորտակեաց զկուռսն, և կենդանացոյց զմեռեալն։*

*Եւ մինչդեռ զայս խօսէին ընդ միմեանս, յանկարծակի տեսին զՅիսուս զի գայր. ճիչ բարձեալ ասեն. Ահա եկն ի քաղաքս յայս. արիք ելէք ի տեղոջէ աստի և փախերուք. զի ի ձեռաց նորա կործանելոց եմք։ Ասեն դեւքն ցմիմեանս. Զի՞նչ արասցուք զի եկեալ զտանիցէ զմեզ աստ։ Ասէ միւս դեւն. Եկայք ճիչ բարձցուք ի քաղաքս յայս, թերեւս ըմբռնեսցեն զնա և սպանցեն, և մեք խաղաղութեամբ մնասցուք աստ ի բնակութիւնս մեր։ Եւ զայս ասացեալ նոցա, ցրուեցան ընդ ամենայն տեղիս, աղաղակէին և ասէին. Տեսէք ամենեքեան և լուարուք, որդի արքայի մեծի գայ մտանէ զօրօք բազմօք ի քաղաքս յայս։ Եւ զայս լուեալ ամենայն բնակիչք տեղոյն այնորիկ, դիմեցին ամենեքեան առ հասարակ զօրօք և զինուք. և հասանէին առ դրունս քաղաքին. և ելեալ շրջեցան ընդ ամենայն տեղիս և ինչ ոչ տեսին։*

*Իսկ Յիսուս իբրեւ եմուտ ընդ դուռն քաղաքին, և գնացեալ նոցա ի տեղի մի՝ անդ իջեւանս առնէին։ Յանկարծակի շարժեցան ամենայն շինուածք տաճարի դից մեհենիցն, և անկեալ կործանեցան պատկերք կռոցն առհասարակ, և ոչ մնաց ի նոցանէ և ոչ մի։ Իսկ քրմապետքն և պաշտօնեայք կռոցն՝ լցան յիմարութեամբ դիւացն մոլեգնութեամբն, կծէին լալով զանձինս իւրեանց, և ասէին. Վա՜յ և եղուկ անձանց մերոց, որ ի բնակութենէ մերմէ հալածական եղաք. ո՞ գործեաց զգործս զայս, և եղաք ամենեքեան ան-*

Digitized by Google

տէրունչք յաշխարհի։ Եւ այնպէս ողբալով կոծէին զանձինս իւրեանց, և ասէին, բազում քննել և իմանալ, և ո՛չ կարէին ճանաչել զեղեալ գործն և զկորուստն՝ որ եղեւ ի քաղաքին յայնմիկ։

Իսկ Յովսէփ կացեալ ի քաղաքին յայնմիկ աւուրս բազումս, և Յիսուս էր ամաց չորից և ամսոց հնգից։ Եւ յորժամ զարգացաւ մանուկն Յիսուս, ո՛չ դադարէր ի տան ուրեք նստել, այլ ընդ տղայսն և ընդ մանկունսն երթեալ խօսակից լինէր, և նոքա դիմեալ յօժարութեամբ գային առ նա, և հնազանդ լինէին կամաց նորա։ Եւ նա սիրով և քաղցրութեամբ կոչէր զամենեսեան ի հաւանութիւն, և ողոքանօք բանիւ՝ ամենեցուն յառաջագահ ինքն լինէր, և գլուխ մանկանցն։ Եւ զոր ինչ հրամայէր նոցա առնել, կատարէին ըղկամս նորա։ Եւ նա ոչ տայր թոյլ ումեք զմիմեանս հարկանել։ Եւ եթէ ոք ի մանկանցն և ի տղայոցն զմիմեանս վիրաւորէին և գանալից առնէին, սակայն նա ձեռն դնէր և բժշկէր զհարեալն։ Եւ որչափ եւս սիրով կոչէր զամենեսեան, և զտրտմեալսն և զխռովեալսն հաշտեցուցանէր, և ուրախ առնէր, բայց սակայն զինչ վիճոյ պատճառ լինէր ի միջի իւրեանց՝ դընէին ի վերայ Յիսուսի. և երթային լալով առ ծնողսն իւրեանց, և զպատճառ յանցաւորութեան մեղանացն դնէին ի վերայ Յիսուսի։ Գային ծնողքն խնդրել զՅիսուս, և ոչ գտանէին. հարցանէին և ասէին. Ո՞ւր է նա։ Եւ ասեն տղայքն. Ո՛չ գիտեմք։ Ասեն ծնողքն նոցա. Եւ ո՞ւմ պատանեակ իցէ մանուկն այն։ Ասեն. Որդի է նա ծերոյ միոյ պանդխտի օտարականի։ Եւ զայս լուեալ նոցա՝ գնային իւրաքանչիւր ոք ի տունս իւրեանց։

Եւ եղեւ ի միւսում աւուրն, ելեալ Յիսուս գնաց առ մանկունս քաղաքին, ուր ժողովեալ էին տղայքն. և խաղ արկեալ ընդ միմեանս՝ խօսէին և վիճէին։ Եւ Յիսուս տեսեալ զգործս նոցա զոր առնէին ընդ միմեանս, զարմանայր յոյժ ընդ անմեղութիւն բարուց նոցա։ Եւ եղեւ յասել և ի խօսելն նոցա՝ հարկանել զիրար, անդէն եհար մի ումն ձեռամբն, և խաւարեալ

Digitized by Google

կուրացոյց զաջ ակն մանկան միոյ. և նա ճիչ բարձեալ՝ անկաւ ի վերայ երեսաց իւրոց, և արիւնն հոսեալ իջանէր։ Ասէ Յիսուս ցմանուկն. Մի՛ լար, արի յոտն կաց վաղվաղակի, և մի՛ երկնչիր. և Յիսուս մերձեցաւ ի նա, և առժամայն լուսաւորեցաւ աչք նորա, և տեսանէր ուղիղ։ Իսկ մանկանցն և տղայոցն որ անդ էին՝ փութացեալ գնային ի քաղաքն, և պատմէին զգործս զոր արար Յիսուս. և որք լսէին՝ ընթացեալ անդր հասանէին, տեսանել զնա՝ և ոչ գտանէին. զի Յիսուս խոյս ետ և թաքեաւ ի նոցանէ։

Ապա յաւուր միում եկեալ Յիսուս առ մանկունսն և տղայսն՝ որ ի վերնատունն մի ժողովեալ էին, և էր բարձրութիւն նորա կարի մեծ յոյժ, իբրև ձեռամբ ի վերայ քարաձիգ մի. և մանուկ մի նիջէր ի յեզրն ի խելս տանն. և յանկարծակի յափշտակեալ զնա քուն թանձրութեան, անկեալ ի բարձրութենէ անտի ի վայր ի վերայ գագաթանն, հերձաւ գլուխն նորա. և արիւնն հանդերձ ըղեղաւն ցրուեալ ի վերայ վիմին. և նոյն ժամայն սպառեցաւ ոգի նորա ի մարմնոյն։ Եւ զայն տեսեալ մանկանց տղայոցն որ անդ էին, փախեան ի տեղւոջէ անտի։ Եւ բազմութիւն քաղաքին ժողովեալ անդ, ճիչ բարձեալ ասեն. Ո՞մ է պատանեակս այս՝ որ ի բարձրութենէ աստ ի վայր անկեալ մեռաւ։ Եւ նոքա ասեն. Ո՛չ գիտեմք։ Իսկ ծնողացն զայն լուեալ անդր հասանէին, և մանուկն էր ամաց երից և ամսոց չորից։ Եւ ծնողացն կոծ մեծ արարեալ ի վերայ նորա՝ իբրև հարուստ ժամ մի, ապա սկսան քննել և իմանալ, թէ ո՞ արար զվնասն զայն. և ամենեքեան երդմամբ ասէին, եթէ ոչ գիտեմք, ինքնին ի քուն եղեալ՝ ի բարձրութենէ անտի թաւալեալ ի վայր անկաւ։ Ասեն ծնողքն նորա. Ո՛չ այսպէս լեալ հաւատամք ձեզ զոր ասէք։ Ապա յայն....[1] դատաւորն. Ո՛չ վայրապար ինչ իւիք դատապարտեմ զձեզ, այլ իրաւամբ. քանզի ընկերքն որ ընդ քեզ էին՝ նոքա վկայեն վասն քո։ Ասէ Յիսուս. Եւ վասն նոցա ո՞ վկայէ, եթէ ճշմարիտս գի-

1. Թուղթ անկեալ էր ի գրչագրէն։

տեն։ Ասէ դատաւորն. Ինքեանք միմեանց վկայեն որ անմեղք են, և դու ես պարտական մահու։ Ասէ Ցիսուս. Եթէ այլ ոք վկայէ վասն նոցա, թէ անմեղք են՝ յիրաւի է, ապա թէ ինքեանք ի մահուանէ երկուցեալ վկայեն իրաց սուտ են, անիրաւութեամբ առնես զդատաստանս զայս։ Ասէ դատաւորն. Եւ վասն քո ո՞ վկայէ, զի մահապարտ ես։ Ասէ Ցիսուս. Ո՜ դատաւոր, ո՛չ այդպէս է զոր ասեն. այլ օտար ոմն համարեցան զիս պանդուխտ և որդի աղքատի, և վասն այնորիկ եդին ի վերայ իմ զվճիռ մահու. և դու յաղագս մարդահաճութեան՝ զսոսա իրաւ կարծես և զիս սուտ առնես։ Ասէ դատաւորն. Ապա ո՞րպէս արարից։ Ասէ Ցիսուս. Եթէ արդարութեամբ կամիս դատաստան առնել, երկուց կողմանց կացո վկայ զօտար ոք, և ապա ճշմարտութիւն և ստութիւն յայտնի երևի։ Ասէ դատաւորն. Ես զայդ ոչ գիտեմ զոր ասես դու այժմ. այլ վկայութիւն խնդրեմ ի քէն՝ որպէս ի նոցանէ։ Ասէ Ցիսուս. Եթէ ես վկայեմ զանձնէ իմմէ՝ հաւատա՞մ իսկ[1]։ Ասէ դատաւորն. Ո՛չ գիտեմ եթէ ստութեամբ երդնուս և եթէ ճշմարտութեամբ։ Ասէ Ցիսուս. Ապա անիրաւութեամբ առնես զդատաստանդ՝ որ յինէն վկայ խնդրես և ի նոցանէ ոչ։ Ասեն մանկունքն միաբան. Լո՛ւռ լեր, գիտեմք զքեզ արդեւք եթէ ո՛ իցես, որ բազում նեղութիւնս և չարչարանս անցուցեր ընդ մեզ և ընդ այլ մանկունս քաղաքիս. և մեք քեզ ոչ ինչ չար արարաք. և այժմ զայս կրկին չար հասուցեր մեզ. և զամենեսեան ի կորուստ և ի մահ մատնեցեր. և արդ մի՛ բազմախօս լինիր և պատճառեր. ոչ զերծանիս ի ձեռաց մերոց, զի մեք վկայեմք ամենեքեան՝ որ ընդ խաղ արկեալ հարեր զնա, և ի վայր արկեր ի բարձրութենէ անտի, և դու փախեար ի տեղւոջէ անտի։

Ասէ Ցիսուս. Մի՛ այդպէս ստութեամբ խօսիք և պատճառանօք դատապարտէք զիս։ Ասեն մանկունքն միաբան. Զմնասդ դու արարեր, և մեք ամենեքեան վասն քո պատուհասիմք։

1. Միւս օրինակն ունէ ինչ։

Ասէ Յիսուս. Եթէ ճշմարտութեամբ վկայէիք արդեւք՝ ձեզ մեղ ինչ ոչ գոյր, զի անմեղք էք ի գործոյդ այդմիկ: Ասէ դատաւորն. Տեսանե՞ս որչափ վկայօք զքեզ սուտ առնեն, և դու ո՛չ տաս պատասխան: Ասէ Յիսուս. Բազում անգամ խօսեցայ ընդ քեզ վկայօք, և դու բանից իմոց ոչ հաւատացեր, յետոյ ընդ տեսանելն քո հիացեալ զարմանաս: Ասէ դատաւորն. Արդ տեսցուք զվկայութիւն քո թէ ճշմարիտ է: Ասէ Յիսուս. Այո, համբերեա սակաւիկ մի, և ցուցից քեզ: Եւ զայս ասացեալ Յիսուսի՝ զայրացեալ յոգի իւր, եկն եկաց առ մեռեալն, և ի ձայն բարձր աղաղակեաց, և ասէ. Արաբիաս որդի Թամարայ բաց զաչս քո և տես, և պատմեա մեզ եթէ ո եղեւ պատճառ կորստեան քո: Եւ ի նոյն ժամայն յանկարծակի յարեաւ որպէս ի քնոյ զարթուցեալ, նստաւ. հայէր շուրջ զամենեքումբ որք անդ էին, և զամենայն ոք յանուանէ ճանաչէր. և ծնողացն և այլ ազգականացն ամենեցուն խնդութեամբ ճիչ բարձեալ՝ գիրկս արկանէին և համբուրէին զնա, և ասէին. Ո՞րպէս կաս, զի՞նչ եղեւ քեզ: Եւ պատանին ասէ. Ո՛չ ինչ: Ասէ ցնա Յիսուս. Մանուկ դու, ասա ինձ ո՞ եղեւ պատճառ կորստեան քո: Ասէ պատանին. Տէր, ոչ դու ես արեանս իմոյ պարտական, և ոչ տղայքն որ ընդ իս էին, այլ յահէ երկեղին և ի սպառնալեաց մահուանն ասացին զայդ վասն քո. այլ ես ինքնին ի քուն եղեալ՝ անկայ ի բարձրութենէ անտի ի վայր և մեռայ:

Իբրեւ ետես զայս դատաւորն քաղաքին և այլ ամենայն բազմութիւնք ժողովոյն՝ արանց և կանանց, միաբանեալ առ հասարակ, և ասէին. Արդարեւ անմեղ է մանուկս այս, և ո՛չ է սա որդի մարդոյ այլ Աստուած մարմնով յերկրի երեւեալ: Ասէ Յիսուս. Ո՜ դատաւոր հաւատա՞ս վկայութեան իմոյ որ անմեղ եմ. և դատաւորն յահէ երկեղին և յամօթոյ ատենի հրապարակին՝ ո՛չ ինչ տայր պատասխանի: Եւ ամենայն ժողովուրդքն հիացեալ զարմանային ընդ հասակ տղայութեան նորա և ընդ գործն՝ զոր արար: Եւ որք լսէին ի հեռաստանէ գային տեսանել զնա, և զարհուրեալ լինէին ընդ սքանչելի իրս զոր առնէր Յիսուս:

Digitized by Google

Ապա յետ անցանելոյ երից ժամուց, կայր կենդանի մարմնով մանուկն, նստէր և խօսէր ընդ ամենեսեան։ Իսկ Յիսուս դարձեալ ասէ ցպատանեակն Աբարեա. Ննջէ այսուհետև և հանգիր՝ մինչև գայցէ հասարակաց յարութիւն։ Եւ զայս ասացեալ Յիսուսի, անդէն վաղվաղակի եդ պատանեակն զգլուխն ի մահիճս իւր՝ և ննջեաց։ Իբրև տեսին զայս ամենայն բազմութիւնք ժողովոյն, ահիւ մեծաւ սարսեալ երկընչէին և դողային ի նմանէ։

Ապա անկեալ դատաւորին և ամենայն բազմութիւնք մարդկան առ ոտսն Յիսուսի՝ աղաչէին և ասէին. Կենդանացո՛ զմեռեալն զոր յարուցեր։ Եւ Յիսուս ոչ կամեցաւ, այլ ասէ. Ո՛ անիրաւ դատաւոր և օրինաց դատիչ, ո՞րպէս խնդրես յինէն արդար իրաւունս, որ դու և ամենայն քաղաքս միաբանեալ ի վերայ իմ՝ ի զուր դատէիք զիս, և խօսից իմոց ոչ հաւատացիք. և ըզգաստութիւն դոցա վասն իմ ճշմարտութիւն համարէիք. և ես յաղագս այնորիկ յարուցի զդա՝ և վկայ կացուցի ինձ, որ զձեզ զամենեսեան յանդիմանեալ յամօթ արար, և ապա ապրեցայ ես ի ձեռաց ձերոց։ Կարող էի առնել զայդ զոր խնդրէք յինէն՝ եթէ յառաջ լուեալ էիք հրամանաց իմոց. այլ որովհետև և ոչ անսացիք ինձ, և ոչ ես ձեզ լուայց։

Եւ զայս ասացեալ Յիսուսի, ել վաղվաղակի արտաքս և թագեաւ ի նոցանէ. գային ի շուրջ և ոչ գտանէին. և եկեալ անկանէին առ ոտսն Յովսեփայ, աղաչէին զնա, և ասէին. Ո՞ւր է մանուկն քո որ եկեալ յարուցանէ զորդեակն մեր։ Եւ նա ասէ. Ո՛չ գիտեմ։

## ԳԼՈՒԽ Ի.

*Վասն գնալոյ նոցա յերկիրն Ասորեստանեայց, և վասն այլ սքանչելեացն, և յարուցանելոյ զմեռեալն։*

Եւ ի գիշերին յայնմիկ յարուցեալ Յովսէփ ընդ առաւօտն առ զմանուկն և զմայր իւր, և ել ի քաղաքէն, և երթային զճանապարհաւն։ Եւ եկեալ հասեալ նոցա յերկիրն Ասորեստանեայց ի քաղաք մի՝ որ անուանեալ կոչի Շահապրաւ. և Յիսուս էր ամաց հնգից և ամսոց երից։ Եւ եղեւ ի մտանելն նորա ընդ դուռն քաղաքին, և էին անդ բազում աստուածք և բագինք կռոց մեհենից դից. և իբրեւ տեսին զմանուկն Յիսուս զի գայր, դեւքն զաղաղակ բարձեալ ասէին. Գայ մանուկ մի Թագաւորի՝ որդի արքայի մեծի՝ որ խռովեցուցանէ զքաղաքս մեր, և զմեզ հալածական առնէ ի բնակութենէ աստի. եկայք զգոյշ կացէք, և պատրաստք լերուք անձանց ձերոց, և փախիցուք ի նմանէ յայլ հեռաւոր տեղիս՝ ի խորինս և ի քարանձաւս վիմաց, զի մի՛ երեւեսցի մեզ յայտնապէս, և մի՛ կորիցուք։ Իբրեւ լուան զայս քրմապետք մեհենիցն և չքահանայքն և պաշտօնեայքն չաստուածոցն, ձայն տուեալ միմեանց ժողովեցան ի տաճար կռոցն. և ասեն ցմիմեանս. Զի՞նչ է ձայն աղաղակիս՝ որ զարհուրեցուցանէ զմեզ և մեք ոչ գիտեմք։ Եւ ի նոյնժամայն յանկարծակի շարժեցան ամենայն պատկերք կռոցն, և անկեալ յերկիր կործանեցան. և նոցա զայն տեսեալ զաղաղակ բարձեալ. շրջեցան ընդ ամենայն քաղաքն խնդրել՝ և ոչ գտին. դարձան իւրաքանչիւր ոք ի տունս իւրեանց։ Եւ Յովսէփ մտեալ ի քաղաքն անդր, ի տեղի ուրեք իջեւանս արարեալ անդ բնակէր։

Digitized by Google

Եւ շրջէր Յիսուս շուրջ զքաղաքաւն ընդ ամենայն տեղիս. և եկեալ առ տղայսն և առ մանկունսն՝ ուր հաւաքեալն էին. և եկեալ նստէր ի յեզր ջրին ի վերայ աղբերն, և առեալ զհողն արկանէր ի ներս. գայրին մանկունքն ըմպել ջուր, և տեսանէին զաղբիւրն ի յարիւն դարձեալ, և տղայքն նեղեալ ի ծարաւոյն լային: Առեալ զսափորն նոյնժամայն արկանէր յաղբիւրն, և առեալ ջուր տայր նոցա. և առեալ զջուրն յաղբիւրէն՝ դարձեալ ցանէր ի վերայ նոցա, և ամենեցուն նոցա զգեստ հանդերձիցն իբրև արեամբ ներկեալ լինէր. լային տղայքն և անմեղ մանկաւնքն առաջի նորա: Եւ նա քաղցրութեամբ և ողոքանօք կոչէր զամենեսեան, և զձեռն անցուցանէր ի վերայ նոցա, և ասէր. Մի՛ լայք, ահա չիք աղտեղութիւն ի վերայ հանդերձից ձերոց. և տղայքն խնդութեամբ ուրախ լինէին ընդ գործն զոր առնէր Յիսուս:

Եւ եղեւ յաւուր միում ելեալ Յիսուս գնաց առ մանկունս քաղաքին՝ ուր տղայքն միաբան ժողովեալ էին. և խորհուրդ արարեալ նոցա միաբան, ասեն. Եկայք ամենեքեան հաւասար երթիցուք ի տեղի հեռաւոր, և անդ արասցուք որս, զինչ և կարասցուք ըմբռնել. և նոքա ասեն. Այո՛: Եւ յարուցեալ մանկանցն ձայն տուեալ միմեանց՝ ժողովեցան ի մի վայր. և գնացեալ նոցա ի տեղի ուրեք նշանաւոր, և էին բազում տղայք որ յոյժ փոքրագոյնք էին, որ ոչ կարէին գնալ՝ և զկնի ժամանել. այլ գայրին յետոյ մերկ և բոկ. ակն կալեալ զհետ նոցա ի տեղի ուրեք եկեալ հասին: Արդ իբրև կացին նոքա ի դաշտին զօրն ամենայն, և շրջեցան շուրջ զսահմանօքն զայն՝ և ո՛չ ինչ կալան. և էր օրն յաւուրս ամարանի ի տօթ ժամու, և ի տապոյ արեգականն և ի սաստիկ ջերմութենէ օդոյն՝ յոյժ նեղեալ նոցա ի սովոյ և ի ծարաւոյ, անկեալ լինէին. Թուալէին մեծաւ տագնապաւ, իբրև հրով այրեալ և խորովեալ լինէին. և պապաքեալ սիրտք նոցա՝ տոչորեալ և չորացեալ: Եւ ոչ կարէին ժուժկալել և հանդուրժել մարմինք նոցա ի մի տեղի կեալ, յառաւել դառն նեղութեան տանջանացն:

Digitized by Google

Եւ զայն տեսեալ Յիսուսի գթացաւ ի վերայ նոցա, և ձեռն տուեալ ամենեցուն յարուցանէր զնոսա՝ որ անդ անկեալ լինէին, և ասէ ցնոսա. Մի՛ երկնչիք, արիք երթիցուք ի վէմն յայն մեծ որ հանդէպ մեր է՝ բարձրագոյն, և ընդ հովանեաւ նորա հանգիցուք: Եւ իբրեւ գնացին նոքա անդ, և ժողովեցան ի տեղն, ոչ կարէին հանդուրժել սաստիկ տապոյ ջերմութեանն. և բազում այն էին որ անմեղ տղայքն անշնչացեալ լինէին իբրեւ զմեռեալ, և այլք ի նոցանէ զաչս իւրեանց ընդ երկինս պշուցեալ հայէին. իսկ Յիսուս յարուցեալ եկաց ի մէջ նոցա, և անդէն եհար գաւազանաւ ըզվէմն, և նոյնժամայն ջուր բխեալ յանկարծակի ի վիմէն, աղբիւր յորդահոս քաղցր, հով և անուշահամ, և արբոյց զամենեսեան, որ և կայ մինչեւ ցայսօր: Եւ իբրեւ արբին ամենեքեան զջուրն և կենդանացան, յարուցեալ երկիր պագանէին Յիսուսի և համբուրէին զնա: Եւ Յիսուս դարձեալ ձգեաց զձեռն իւր ի վէմն յայն, և ել վաղվաղակի ի ջրոյ անտի ձկունս բազումս, և հրամայեաց ըմբռնել. և ժողովեալ փայտ և այլ խռիւս ինչ, և փայտն առանց կրակի այրէր. խորովեցին, կերան և յագեցան. և առին ձկունս բազում որչափ և պիտոյ էր նոցա բառնալ. և գնացին խնդութեամբ ի տունս իւրեանց: Եւ սկսեալ պատմէին զըսքանչելի գործն զոր արար Յիսուս. և ցուցանէին ի յորսոյ ձկանցն զորս ըմբռնեալ էին. և բազումք հաւատացին ի նա:

Իսկ ի հասանելն երեկորեայ, մանկունքն որ մեծամեծքն էին հասակաւ, կարողքն և զօրաւորքն եկեալ կանխաւ ժամանեցին ի տունս իւրեանց. և որ կրսերագոյնքն էին և տղայքն ի նոցանէ, եկին յետոյ զկնի. իսկ մանուկ մի երից ամաց որ էր ընդ նոսա գնացեալ, ի դաշտի անդ մոլորեցաւ և մնաց զգիշերն ամենայն ինքն միայնացեալ. և ո՛չ ոք ի նոցանէ իմացաւ զնա եթէ զինչ եղեւ: Եւ մանուկն այն ի քուն լինելն զարթեաւ վաղվաղակի, և բացեալ զաչս իւր այսր անդր նայելով՝ ոչ զոք ետես: Ապա սրտաբեկ եղեալ յանկարծակի լայր. և ելեալ զգիշերն ամենայն

Digitized by Google

շրջեցաւ ի դաշտին, և հեռացեալ մոլորեցաւ ի սահմանաց անտի. և կացեալ նորա ի դուրս աւուրս երիս՝ ի սովոյն և ի ծարաւոյն և ի տապոյ արեգականն լըքեալ սպառեցաւ ոգի նորա ի մարմնոյն։ .

Իսկ մանկունքն յորժամ գնացին երեկորեայ ի տունս իւրեանց, ո՛չ ոք զմտաւ ածեալ իմացաւ զնա, մինչեւ ծնողացն ճիչ բարձեալ երեկորեայ եկին առ մանկունսն, հարցանէին, և ասէին. Ո՞ւր է պատանեակն մեր որ զկնի ձեր էր, զի՞նչ եղեւ։ Եւ նոքա ասեն. Ո՛չ գիտեմք։ Ասեն ծնողքն նորա, ընդէ՞ր ոչ գիտէք, զի վաղիւն զկնի ձեր եկեալ ժամանեաց։ Ասեն տղայքն. Գիտեմք որ զկնի մեր էր վաղիւն, և զօրն ամենայն. բայց յետոյ ոչ կարացաք իմանալ եթէ զի՛նչ եղեւ։ Ասեն ծնողքն նորա. Եւ յորո՞ւմ ժամու տեսիք զնա որ ընդ ձեզ էր։ Ասեն տղա՛յքն. Մինչեւ ի հասարակ աւուրն ամենեքեան տեսաք զնա. բայց յորժամ արեգականն ջերմութիւնն նեղեաց զմեզ, ի բազում սոթոյն և ի ծարաւոյն ամենեքեան փախստական եղեալ, մինն ըզմիւսն ո՛չ գիտէր։ Եւ յորժամ մանուկն Յիսուս ժողովեաց զմեզ և ջուր հանեալ ի վիմէն արբոյց մեզ, ո՛չ տեսաք զնա անդ։ Ասեն ծնողք մանկանն. Եւ յորժամ միաբանեալ ժողովեցաք ի մի տեղ, ընդէ՞ր ոչ հարցիք զնմանէ, թէ զի՛նչ եղեւ։ Ասեն ամեն մանկունք միաբան. Ոչ կարացաք յիշել զնա և զմտաւ ածել, մինչեւ ձեր եկեալ հարցիք զնմանէ։

Իսկ ծնողացն յարուցեալ լալով՝ գնացին առ դատաւորն քաղաքին և պատմեցին զամենայն ինչ։ Եւ նա հրամայեաց ժողովել զամենայն մանկունսն որ ընդ նմայն էին, և բերեալ առաջի իւրեանց կացուցանէր. և սկսաւ հարցանել ցնոսա, և ասէ. Ասացէք ինձ, որդեակք իմ, հաւաստեաւ զճշմարիտն, եթէ զի՞նչ եղեւ մանուկն այն։ Ասեն ցնա. Ո՛ դատաւոր լուր մեզ. երեկ վաղիւն մինչ ժողովեալ էաք ամենեքեան մեք միաբան՝ և կամէաք գնալ զճանապարհս մեր, եկին հասին և այլ փոքրագոյն տղայքն որ ընդ նմա էին. և ասացաք մեք, եթէ ի հեռի տեղի գնալոց եմք, և ոչ կամեցան դառնալ. Թողեալ զնոսա անդ գնացաք։ Ասէ

դատաւորն. Եւ յորժամ ժողովեցայք ամենեքեան միաբան ի մի վայր, ետե՞ս զնա ոք ի ձէնջ: Ասեն միաբան. Այո՛, յորժամ ի մի տեղ ժողովեցաք, և զօրն ամենայն ընդ մեզ էր՝ մինչեւ ի հասարակ աւուրն, և յորժամ նեղեցաք ի ծարաւոյն և ի տօթոյն և ի տապոյ ջերմութեան արեգականն, իւրաքանչիւր ոք ըզփախուստ առեալ ի տեղօջէ անտի, ցրուեցաք. և մինն զմիւսն ո՛չ գիտէր, մինչեւ դարձեալ ի տուն եկաք: Ասէ դատաւորն. Ասացէք ինձ զճշմարիտն. գիտէիք դուք յառաջ զնա որ տղայհասակ էր քան զձեզ, և փոքրագոյն. ընդէ՞ր ոչ զնա բարձեալ զկնի ձեր բերիք: Ասեն մանկունքն. Եթէ զօրն ամենայն զկնի մեր շրջեցաւ, այլ ոչ ոք կարաց իմանալ զնա, եթէ ի տեղի ուրեք ննջեալ ի քուն եղեւ, և ոչ տեսաք զնա: Ասէ դատաւորն. Ահա ձեզ ամենեցուն ասեմ միաբան՝ որ աստ ժողովեալ էք. յարուցեալ գնացէք ի տեղի անդ, և շուրջ եկէք զսահմանօքն յորում կայիք. մինչեւ գտանիցէք զմանուկն կենդանի և կամ մեռեալ:

Եւ զայս ասացեալ դատաւորին հրամայեաց գնալ նոցա, և ծնողացն զկնի կնալով, և զօրն ամենայն շըրջեցան ի դաշտին՝ մինչեւ յերեկորեայ, և ոչ գտին զնա. և դարձեալ մանկունքն եկին անդրէն ի տունս իւրեանց: Իբրեւ լուաւ զայս դատաւորն, եթէ ոչ գըտին զմանուկն, հրամայեաց վաղիւն կրկին անգամ կոչել զնոսա. և իբրեւ եկին, ասէ ցնոսա. Զի՞նչ էք եդեալ դուք ի մտի, և կամ զի՞նչ խորհիք առնել. մի՞թէ կարիցէք խաբէութեամբ իւիք պատրել զիս. ոչ այդպէս, այլ ասացէք ինձ, ո՞ եղեւ պատճառ յառաջ գնալոյ ձեզ անդ, և կամ ո՞ կոչեաց զմանուկն զայն՝ և տարաւ ընդ իւր: Ասեն մանկունքն. Գնալն մեր հաւասար ամենեցուն կամօք էր, և զնա ո՛չ ոք կամեցաւ գալ զկնի մեր, այլ ինքն յօժարութեամբ սիրով՝ դիմեալ եկն առ մեզ: Ասէ դատաւորն. Եւ յորժամ նա սրտի մտօք խնդրեաց զձեզ, և այնչափ հեռի էր ճանապարհն, և լալով եկն զկնի ձեր, ընդէ՞ր ոչ ընկալայք զնա և բերիք այսր: Ասեն միաբան. Ի ժամ դառնալոյն մեր ի տուն յերեկորեայ՝ ո՛չ տեսաք զնա ու-

Digitized by Google

րեք, և ոչ զմտաւ ածել ոք կարաց՝ գիտել կամ իմանալ։ Ասէ դատաւորն. Ես զայդ ո՛չ գիտեմ, եթէ զճըշմարիտն ոչ ասէք՝ զամենեսեան զձեզ չարամահ սատակեցից։ Ասեն մանկունքն. Թէպէտ և ազգի ազգի տանջանօք չարչարես զմեզ, մեք այլ ինչ ոչ կարասցուք ասել։

Ապա հրամայեաց դատաւորն մերկացուցանել զնոսա և տանջել բրօք դալարօք։ Եւ իբրեւ հանին զզգեստ հանդերձից իւրեանց, ասեն մանկունքն. Զի՞նչ արասցուք, քանզի գիտեմք ամենեքեան որ անմեղք եմք, և մեր վկայութեանն խօսից ո՛չ հաւատան։ Ասէ մի ոմն ի նոցանէ, և մեք ընդէ՞ր այսպիսի վայրապար դատապարտեալ ի մահ մատնիմք։ Ասեն ցնա, և զի՞նչ խորհիս առնել։ Ասէ պատանին. Գիտէք զՅիսուս որդի ծերոյն Յովսեփայ որ ընդ մեզ էր. և նա եղեւ առաջնորդ ամենեցուն, և զմեզ տարեալ ընդ իւր յայսպիսի յորոգայթ մահու մատնեաց։ Ասեն ընկերքն միաբան. Եւ մեզ զի՞նչ չար արար նա, որ ի տօթոյն և ի ծարաւոյն մեռեալ էաք, և նա ջուր հանեալ ի վիմէ արբոյց և կերակրեաց զմեզ, և ապա կարացաք ի տուն ժամանել։ Ասէ պատանին. Եւ մեք զի՞նչ մեղաք որ ամենեքեան ի մահ մատնիմք։ Ասեն մանկունքն. Դու գիտես, մեք վասն նորա չար ինչ ոչ ասասցուք։ Ասէ պատանին. Եւ վասն մեր մեք գիտեմք զի՛նչ[1] արարաք մահու. այլ եկայք դիցուք զմեղանսն և զմահսն ի վերայ նորա, զի նա անծանօթ և օտար է ի քաղաքէս, և ոչ գիտէք ամենեքեան թէ որպիսի տանջանս և նեղութիւնս կրեալ եմք ի նմանէ, յառաջ զնա դատապարտեսցեն ի մահ, և մեք ազատեսցուք։ Ասեն միաբան. Դու տացես զանձնէ քումէ լինել արեան նորա պարտական։

Իսկ դատաւորն իբրեւ ետես եթէ ոչ տան նմա պատասխանի հրամանեաց դահճացն տանջել զնոսա. և իբրեւ սկսան հարկանել, ճի՛չ բարձեալ ասէ պատանեակն այն. Ո՛ դատաւոր, ընդէ՞ր անմեղութեամբ դատես ըզ-

1. Թերեւս չէ ոչ ինչ արարած մահու արժանի։

մեզ։ Ասէ դատաւորն. Եթէ անմեղք էք զոր ասէք, յայտնեցէք այժմ զմահապարտն, և դուք ազատեսցուք։ Ասէ պատանին. Մանուկ մի որդի ծերոյ օտարականի, նա եղեւ առաջնորդ ամենեցուն, և զմեզ զամենեսեան տարեալ ընդ իւր կամէր առհասարակ կորուսանել։ Եւ զմանուկն զայն գիտեմք ամենեքեան որ առ մեզ էր, և զկնի մեր շրջէր. և յետոյ տարեալ ընդ իւր զօրն ամենայն, երկոքեան միայնացեալ գնային ի մէնջ հեռի, և այլ ոչ գիտեմք եթէ զի՞նչ արար զնա։ Ասէ դատաւորն. Եւ ո՞ւր է նա։ Ասեն միաբան. Աւասիկ ի քաղաքի աստ է։ Ասէ դատաւորն. Եւ յառաջ ընդէ՞ր ոչ ծանուցիք ինձ վասն նորա ասել։ Ասէ պատանին. Մե՛ղք համարեցաք ասել ինչ զնմանէ, զի յոյժ աղքատ է և մուրացիկ։ Ասէ դատաւորն. Նա է որ մեղապարտն դատի և ոչ անմեղն։ Ապա հրամայեաց դատաւորն կոչել զնա և իբրեւ գնացին ոչ գտին զՅիսուս. ապա կալեալ զՅովսէփ բռնութեամբ բերեալ կացուցանէին առաջի նորա։ Եհարց դատաւորն և ասէ. Ասա ինձ ծեր դու, ուստի՞ ես եկեալ ի քաղաքս յայս, և կամ յո՞ երթաս։ Ասէ Յովսէփ. Ես ի հեռաւոր աշխարհէ եմ եկեալ, և շրջիմ օտար և պանդուխտ յերկրի։ Ասէ դատաւորն. Եւ ո՞ւր է մանուկն քո, և կամ զի՞նչ եղեւ նա որ ընդ մտանելն ձեր ի քաղաքս յայս, այսպիսի վնաս մահու գործեցիք։ Ասէ Յովսէփ. Եւ զի՞նչ չար արարաք մեք ումեք։ Դատաւորն. Եւ դու ո՞չ գիտես որ մանուկն քո տարեալ է զամենայն փոքունս և զտղայս քաղաքիս կամէր կորուսանել, և մի պատանեակն ո՛չ եկն։ Արդ ասա ինձ ո՞ւր է նա, և կամ զի՞նչ արար զմանուկն մեր։ Ասէ Յովսէփ. Ես զայդ ոչ գիտեմ, ո՛չ զգնալն և ոչ զդառնալն ուրեք։ Ասէ դատաւորն. Այդպիսի պատքառանօք ոչ զերծանիք ի ձեռաց իմոց, մինչեւ զմանուկն կենդանի առ մեզ բերիցէք։ Ասէ Յովսէփ. Որչափ եկեալ եմ ի քաղաքիս յայսմիկ ոչ ուրեք ելել եմ. և ոչ զսահման տեղոյս տեսեալ և կամ իմացեալ։ Ասէ դատաւորն. Ե՛րթ հարց, քննեա և իմացիր զընակութիւն տեղեացս այսմիկ։ Ասէ Յովսէփ. Ո՛ դատա-

Digitized by Google

ւոր, լուր ինձ աղաչեմ զքեզ. մանկունք քաղաքիս և բնակիչք մարդկան հաստատուն գիտեն. հրամայեա նոցա շրջել, զի թերևս գտցեն։ Ասէ դատաւորն. Առաքեցի յառաջ զմանկունսն և զծնողսն պատանւոյն, և շրջեցան ընդ ամենայն տեղիս, և ոչ գտին։ Ասէ Յովսէփ. Ապա ո՞րպէս հրամայես ինձ, զի արարից։ Ասէ դատաւորն. Ա՛ռ զմանուկն քո առաջի քո, և երթ շրջեա ընդ ամենայն սահմանս՝ ընդ որ ցուցանէ քեզ. և որչափ կարիցես հեռագոյն գնալ. գտանիցես զմանուկն մեռեալ կամ կենդանի։ Ասէ Յովսէփ. Ես ծեր եմ և մանուկն կարի տղայ է փոքրագոյն, զիա՞րդ կարացից գնալ հեռի շրջել զօրն ամենայն մինչև յերեկոյ։ Ասէ դատաւորն. Երթ, մի՛ երկնչիր, գուցէ վաղվաղակի գտանիցէք զնա ի տեղի ուրեք թագուցեալ։ Ասէ Յովսէփ. Ո՛վ դատաւոր հրամայեա մանկանցն այնոցիկ գալ շրջել զկնի մեր, զի գիտասցուք թէ ո՞ւր իցէ։ Ասէ դատաւորն. Այո՛ ես արարից զայդ, բայց ծնողք մանկանն զկնի քո գան։ Եւ զայս լուեալ Յովսէփ ի դատաւորէն երկի՛ր եպագ, և գնաց տրտմութեամբ ի տուն իւր և պատմեաց Մարիամու զգործն որ եղեւ, և տրտմեցան յոյժ։

Եւ ի վաղիւն ընդ առաւօտն՝ յարուցեալ Յովսէփ առ զմանուկն Յիսուս առաջի իւր, և գնացեալ ի քաղաքէն հեռի իբրև երկոտասան մղոնաւ. և գտին զնա մեռեալ ի դաշտի անդ՝ ի ջերմութենէ տապոյ արեգականն, իբրև հրով այրեալ և խորովեալ էր ամենայն մարմին նորա, և սևացեալ զգեստ հանդերձից նորա ճենճոյ և ի ճարպոյ անտի, և որդամբ լցեալ եռացեալ և հոտեալ, և լուծեալ էր ամենայն յօդուածք մարմնոյ նորա։

Եւ զայն տեսեալ ծնողացն, ճիչ բարձեալ ի վերայ նորա անձամբ զանձինս իւրեանց քարկոծ առնէին. և պատեալ զմարմին նորա կտաւօք, առեալ լալով բերին առ դուռն քաղաքին, և ամենայն բազմութիւն քաղաքին ելին ընդ առաջ նորա. կոծ մեծ արարեալ ի վերայ նորա ապաշաւէին զնա։ Եւ իբրև ժամ մի անցանէր, ասեն ծնողք մանկանն. Ո՛չ ևս դիցուք ընդ-

սա ի գերեզմանի մինչեւ զորդի ծերոյն չարամահ սատակեսցուք, և զհայրն և զմայրն նորա մեծապէս տանջեսցուք և սպանցուք։ Ասէ դատաւորն. Բարիոք ասէք։

Յայնժամ հրամայեաց դատաւորն կացուցանել զՅիսուս ի մէջ ատենին՝ և զՅովսէփ ընդ նմին։ Ասէ դատաւորն. Յիսուս մանուկ դու, ընդէ՞ր արարեր զմնասս զայս, և կորուստ ածեր ի վերայ մեր և ի վերայ քաղաքիս։ Ասէ Յիսուս. Ո՛ դատաւոր, մի՛ այդպէս առներ գործ անիրաւութեան՝ զոր չէ արժան ասել և կամ լսել ումեք։ Ասէ դատաւորն. Ապա ո՞րպէս արարից ձեզ ի մէջ երկոցունց դատ և իրաւունս։ Ասէ Յիսուս. Եթէ արդարութեամբ և յիրաւի առնես դատաստանդ քո՝ ճշմարիտ է. ապա եթէ ոչ առնես, մեծամեծ մեղս գործես։ Ասէ դատաւորն. Մի՛ այդպէս առներ պատասխանի, և զմեզ յանդիմաներ առաջի ամենեցուն, ոչ ստութեամբ առնեմ՝ այլ իրաւամբք։ Ասէ Յիսուս. Եւ ո՞վ ոք վկայէ վասն իմ եթէ ես արարի զմնասս զայս։ Ասեն մանկունքն միաբան. Այո՛, դու եղեր առաջնորդ ամենեցուն, և զմեզ տարեալ ընդ քեզ կամէիր կորուսանել։ Ասէ Յիսուս. Դուք վկայէք միմեանց որ անմեղք էք և յիրաւի խօսիք. և ես զնոյն վկայեմ որպէս և դուք որ ոչ եմ պարտական արեան մանկանն այնմիկ։ Ասեն մանկունքն. Մի՛ այդպէս բազմախօս լինիր և զմեզ զամենեսեան սուտ առներ իբրեւ զքեզ, զի գիտեմք կարի արդեւք և ստուգիւ ճանաչեմք՝ թէ որպէս զամենայն մանկունս հալածական առնէիր. և յետոյ զայս ամենայն փորձութիւնս և զհարուածս ածեր ի վերայ մեր, զի՞նչ արասցուք զքեզ։ Ասէ դատաւորն. Ա՞յս է մանուկն այն զոր լուեալ է իմ, եթէ որդի ծերոյ միոյ ալեւորի բազում առաչօք իւրս գործէ ի քաղաքիս։ Ասեն. Այո, նա է։ Ասէ դատաւորն. Ապա յիրաւի՞ վկայէք զդմանէ եթէ և մահապարտ է։ Ասէ Յիսուս. Ո՛ դատաւոր, կարի՛ յոյժ զարմանամ ընդ ասել բանիդ քո որ այդպիսի ստութեան բանից դոցա հաւատաս. և զիս թշնամութեամբ և արհամարհանօք այպն առնես։

Ասէ դատաւորն. Մի՛ այդպէս հակառակ խօսիր, և

զմեզ անիրաւ դատաւոր կարծես. ես ո՛չ բռնութեամբ հարցանեմ զայս և ոչ սպառնալեօք, այլ իրաւամբ։

Ասէ Յիսուս. Եթէ ճշմարտութեամբ առնէիր զբանդ և արդարութեամբ, յառաջ վկայութեամբ ստուգիւ քննէիր, և ապա օրինօք դատէիր։ Ասէ դատաւորն. Եւ ո՞րպէս քննեցից զայդ և իմացայց՝ որ զդոցանէ ասես և զքենէ եթէ անմեղք եմք. ապա ո՞ գործեաց զվնասն զայն։ Ասէ Յիսուս. Ես զանձնէ իմէ վկայեմ որ ոչ գոյ յիս անիրաւութիւն, և ոչ բան ստութեան. և ամենայն ոք զանձնէ իւրմէ ինքն վկայէ, եթէ արդար և ճշմարիտ է։ Ասէ դատաւորն. Կարի ձանձրացուցեր զիս յաճախ խօսելով, մի վկայ բեր անձին քում, և ես հաւատացից քեզ։ Ասէ Յիսուս. Զվըկայութիւն դոցա ընդունիս, որ զինէն խօսին ապիրատութիւն, և իմոյ ճշմարտութեան բանիցս ո՞չ հաւատաս. բայց յետոյ եթէ տեսանիցես զվկայութիւն իմ յամօթ լինիս։ Ասէ դատաւորն. Արա՛ որպէս և կամիս։

Եւ զայս ասացեալ, զայրացեալ Յիսուս յոգի իւր, եկն եկաց ի վերայ մեռելոյն, և ի ձայն մեծ աղաղակեաց, և ասէ. Ամովնիայ որդի Նարուհէ, արի՛ յոտն կաց վաղվաղակի, բաց զաչս քո և տես, թէ ո՞ եղեւ պատճառ կորստեան քո։ Եւ յանկարծակի մանուկն յարուցեալ նստաւ, և հայէր շուրջ զամենեքումբք տեսանել զնոսա։ Իսկ ծնողացն և այլ ծանօթիցն ամենեցուն ճիչ բարձեալ ի վերայ մանկանն, ի գիրկս առեալ նոցա խնդութեամբ՝ համբուրէին զնա լալով մեծաւ, և ասէին. Որդեակ, ո՞ կենդանացոյց զքեզ։ Եւ նա մատամբն ցուցանէր եթէ մանուկն Յիսուս որդի ծերոյն։ Եւ զայն տեսեալ դատաւորին և ամենայն բազմութիւնք ժողովոյն, զահի հարեալ ասէին. Արդարեւ Աստուած է սա մարմնով, և կամ Որդի Աստուծոյ, որ այսպիսի զօրութիւնք ի ձեռաց սորա եղեւ, և ամենեքեան անկեալ երկիր պագանէին նմա և հարցանէին զնա, և ասէին. Որդեա՛կ պատմեա մեզ ո՞ եղեւ պատճառ մահու կորստեան քո։ Ասէ մանուկն. Ոչ ոք. քանզի ամենեքեան անմեղ են։ Եւ զՅիսուս մի՛ դա-

Digitized by Google

տապարտէք, զի ոչ է նա պարտական արեան իմոյ, այլ ես ինքնին կամօք իմօք գնացի զհետ նոցա. և իմ ի քուն եղեալ ի գիշերին յայնմիկ՝ զարթեայ և գնացեալ մոլորեցայ, և ի սովոյն և ի ծարաւոյն սպառեցաւ ոգի իմ ի մարմնոյ իմմէ, և այլ ոչ գիտեմ եթէ զինչ եղեւ ինձ. բայց միայն այս զոր տեսանէք զիս։ Ասէ Յիսուս. Ո՛ դատաւոր անիրաւ, հաւատա՞ս վըկայութեան իմոյ որ անմեղ եմ՝ զոր տեսանես աչօք քովք՝ որ մեռեալն վկայէ ինձ։ Եւ դատաւորն յամօթ եղեալ, ո՛չ իշխէր խօսել։

Եւ կացեալ մանուկն կենդանի իբրեւ ժամս վեց՝ մինչեւ ամենայն բազմութիւնն քաղաքին արանց և կանանց գային տեսանել զնա, և հիացեալ ամենեցուն զարմանային։ Ապա դարձեալ Յիսուս ի մեռեալն, ասէ ցնա. Ամոմնիայ որդի Նարուհէ, ննջեա՛ այսուհետեւ և հանգիր, մինչեւ եկեսցէ հասարակաց յարութիւն։

Եւ զայս ասացեալ Յիսուսի, եդ պատանեակն ըզգլուխն ի մահիճս իւր և ննջեաց. և զայն տեսեալ նոցա ամենեցուն, ահ կալաւ զնոսա, և երկեան երկեղ մեծ։ Եւ Յիսուս կամեցաւ ելանել արտաքս, և նոքա անկեալ աղաչէին զնա և ասէին. Կենդանացո՛ զմեռեալն զոր յարուցեր։ Եւ Յիսուս ասէ. Ոչ, եթէ լուեալ էիք յառաջ բանից իմոց և հաւատացեալ էիք վկայութեան իմոյ, կարէի արդեւք առնել ձեզ զայդ զոր խնդրէք. իսկ որովհետեւ ոչ լուայք ինձ և ոչ հաւատացիք բանից իմոց, այլ ամենեքեան դատապարտեցիք զիս անմեղութեամբ եթէ մահապարտ է. և ես զայդ յարուցի յաղագս վկայելոյ ինձ, և ապա զերծայ ի ձեռաց ձերոց։ Եւ զայս ասացեալ Յիսուսի եղեւ ի նոցանէ աներեւոյթ. և զՅովսէփ հանեալ ի բանդէն արձակեցին։ Գային ամենեքեան առ Յովսէփ լալով և աղաչանօք խնդրէին զնա, թէ ո՞ւր է մանուկն քո որ եկեալ յարուցանէ զորդեակն մեր. և Յովսէփ ասէ. Կենդանի է Տէր, ոչ գիտեմ։

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԻԱ.

*Եկեալ յերկիրն Քանանու առնէր սքանչելիս ի ծածուկ, և կենդանացոյց զմեռեալն։*

Եւ ի գիշերին յայնմիկ ի մերձենալ առաւօտուն, առեալ Յովսէփ զմանուկն և զմայր իւր, եւ գնաց փախըստեամբ ի քաղաքէ անտի, և նոքա ոչ իմացան եթէ զինչ եղեւ։ Եւ եկեալ հասեալ նոցա անդ ի յերկիրն Քանանու՝ ի քաղաք մի որ անուանեալ կոչի Մադիամ. և Յիսուս էր ամաց վեցից և ամսոց երից։

Եւ իբրեւ մերձեցան առ սահմանօք քաղաքին, էր ի ճանապարհին յայնմիկ բագին մի մեծ յոյժ կարի բարձր՝ կռոց մեհենից, և դեւք բազում ժողովեալ էին անդ, և քուրմք դից չաստուածոցն սպասաւորէին նոցա։ Իբրեւ տեսին Յիսուս ի հեռաստանէ զի գայր, ասէին ցմիմեանս. Տեսանէ՞ք զմանուկն զայն՝ որ դիմեալ զօրութեամբ առ մեզ գայցէ։ Ասէին ոմանք. Ո՞ իցէ նա։ Ասէին դեւքն. Սա է նա որ ի յերկնից բարձրութենէ անտի ի վայր անկեալ կործանեաց զմեզ, և այժմ եկեալ է մեծաւ յաղթութեամբ՝ զամենեսեան զմեզ փախստական առնել. եկայք ճիչ բարձցուք ի քաղաքիս յայսմիկ, թերեւս կարասցեն ըմբռնել զնա և սպանցեն. և մեք կայցցուք հանգստեամբ ի տեղի հանգստեան բնակութեան մերոյ։ Եւ զայս ասացեալ նոցա, ժողովեալ լինէին սեւագունդ զօրք լեգեհոն դասուցն։ Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ Յիսուս՝ մտանել Յիսուս ընդ դուռն քաղաքին, ճիչ բարձեալ նոցա և աղաղակ մեծ ի քաղաքին. Տեսէք ամենեքեան և ողորմեցարուք մեզ, թագաւոր ոմն որդի արքայի հզօրի եմուտ ի քաղաքս յայս։ Եւ զայն լուեալ զօրացն դի-

Digitized by Google

ւացն ամենեցուն, փախեան ի տեղոջէ անտի, և ամենայն պատկերք կռոցն և տուն մեհենիցն՝ որ էին ի քաղաքին յայնմիկ՝ ամենեքեան առհասարակ անկեալ կործանեցան։ Եւ բազմութիւնք մարդկան որք անդ էին, հասեալ լինէին ի տաճար կռոց մեհենիցն, և տեսանէին զչինուածս և զպատկերս չաստուածոցն եղծեալ և ապականեալ, և ոչ մնաց ի տեղւոջ յայնմիկ բագինք դիւաց, այլ ամենայն անկեալ յերկիր խորտակեցան և փշրեցան։ Եւ զայս տեսեալ նոցա զաղաղակ բարձեալ լինէին, և էր լալիւն մեծ ի քաղաքին յայնմիկ, և ո՛չ գիտէին եթէ զինչ արասցեն։ Շրջեցան ընդ ամենայն տեղիս խնդրել զոք՝ և ոչ տեսին. բայց միայն զՅովսէփ, զմանուկն և զՄարիամ. հարցանէին զՅովսէփ և ասէին. Տէր դու, ուստի՞ գաս և կամ յո՞ երթաս։ Ասէ Յովսէփ. Աղքատ ծեր եմ պանդուխտ, և շրջիմ ի տեղոյ ի տեղ ընտանեօք իմօք։ Ասեն ցնա. Ո՞չ ես տեսել զոք ի ճանապարհիդ՝ մինչ գայիր, եթէ թագաւոր ոմն զօրօք բազմօք երեւեցաւ քեզ։ Ասէ Յովսէփ. Ո՛չ եմ տեսել։ Իբրեւ լուան զայս ամենեքեան՝ զարմացան յոյժ, և դարձեալ գնացին իւրաքանչիւր ի տունս իւրեանց։ Եւ Յովսէփ իջեալ ի տան միում օթեւանս առնէր բնակութեան. և կացեալ նոցա անդ ամիսս ինն։

Եւ եղեւ ի շրջելն Յիսուսի ի քաղաք անդր, տեսանէր զտղայսն և զմանկունսն ուր ժողովեալ լինէին. դիմեալ երթայր առ նոսա յօժարութեամբ, սիրով։ Իբրեւ տեսանէին զնա մանկունք քաղաքին, որ գայր ի հեռաստանէ, ասէին ցմիմեանս. Ահա գայ մանուկ մի օտարական, և փութով եկեալ հասեալ առ մեզ ժամանէ, եկայք փախստական արասցուք զնա։ Ասեն միաբան. Եւ զի՞նչ չար կամիցի առնել մեզ, քանզի տղայհասակ է իբրեւ զմեզ մանուկ գոլով։ Եւ եկն Յիսուս և նստաւ ի մէջ նոցա։ Ասէ ցմանկունսն. Զիա՞րդ, և ընդէ՞ր նստեալ կայք աստ միաբան լռելեայն, զի՞նչ խորհուրդ զմտաւ ածեալ առնել կամիք այսօր։ Ասեն տղայքն. Ո՛չ ինչ։ Ասէ Յիսուս. Ո՞ ոք ի ձէնջ կարիցէ առնել խաղ ինչ։ Ասեն մանկունքն. Մեք ինչ ո՛չ գի-

Digitized by Google

տեմք առնել ինչ՝ բայց միայն զի տեսցուք։ Ասէ Յիսուս. Հայեցարուք ամենեքեան և տեսէք։ Եւ նոքա պշուցեալ հայէին ի նա, եթէ զի՞նչ կամիցի առնել։ Եւ առեալ Յիսուս զկաւն ի ձեռին իւրում ճնճղուկ առնէր և փչեալ թռուցանէր ընդ երկինս, և ասէր. Արիք հասիք ամենեքեան և կալարուք զճնճղուկքն. և տղայքն ի վեր նայեցեալ ընդ օդս, զի թռուցեալ երթային ձայն արձակելով. և նոցա զայն տեսեալ ամենեցուն հիացեալ զարմանային ընդ գործն Յիսուսի։ Ապա դարձեալ առեալ նորա հող յերկրէ՝ և ցանէր ընդ օդս երկնից, և ճանճք և մժղեխ լինէր. և լցեալ առ հասարակ զքաղաքն ամենայն, և բազում նեղութիւն հասուցանէր անդ մարդոյ և անասնոյ։ Դարձեալ առեալ նորա ի ձեռին զաւազն՝ մեղու առնէր և պիծեկ, և ցանէր ի վերայ տղայոցն. և անկեալ ի գըլուխն և ի պարանոցն ի հանդերձսն և ի ծոցսն մտեալ խայթէր. և նոցա ճիչ բարձեալ լային և փախստական լինէին։ Եւ Յիսուս վասն հաճութեան սրտից նոցա կոչէր զնոսա ողոքանօք առաջի իւր, և զձեռն անցուցանէր ի վերայ վիրաց տղայոցն, և ասէր. Ահա մի լայք չիք վէր ի վերայ անդամոց ձերոց։ Եւ նոքա լուռ լինէին։

Իսկ քաղաքացիքն և այլ բնակիչք տեղացն, իբրև տեսին զնշանսն և զսքանչելիսն որ եղեւ, ասէին ցմիմեանս. Զի՞նչ էր ճանճս և մժղեխս որ եկն ի վերայ մեր, և պատեաց զքաղաքս զայս։ Ասեն տղայքն. Պատանեակ մի որդի ծերոյ ալեւորի օտարականի, նա առնէ զգործս զայս։ Ասեն միաբան. Ո՞ւր է նա։ Ասեն տղայքն. Ո՛չ գիտեմք քանզի Յիսուս խոյս ետ անտի, և թագեաւ ի նոցանէ։ Եւ որք լսէին զայս ամենայն զոր առնէր Յիսուս, ցանկանային տեսանել զնա և ասէին. Ուրեմն գործդ այդ Աստուծոյ իցէ և ոչ մարդոյ։

Եւ եղեւ յետ երից աւուրց անցանելոյ, յարուցեալ Յիսուս երթայր ի ծածուկ ընդ մէջ քաղաքին, և ունկն դնէր բանից մարդկանցն ասացելոցն զնմանէ. և ասէին զնմանէ, եթէ ո՞ ետես օտար մանուկ մի ի քաղաքիս

յայսմիկ որդի ծերոյ միոյ ալեւորի, որ ամենեքեան վըրկայեն վասն նորա, եթէ զօրութիւն և աքանչելիս նոր առնէ նա։ Այսպիսի ոչ կարեն առնել աստուածքն. երկնչիմք եթէ ի ձեռաց սորա կորնչին աստուածքն մեր, յորժամ եմուտ դա ի քաղաքս մեր։ Կէպքն ասէին. Այո՛ բարիոք ասէք. կարող է առնել նա զինչ և կամի։ Եւ զայն լուեալ Յիսուսի, դարձաւ լռութեամբ և եկն ի տուն իւր, և թագուցանէր զանձն իւր ի մարդկանէ, զի մի ոք իմասցի զայն։

Եւ յետ անցանելոյ բազում աւուրց, յարուցեալ Յիսուս գնաց առ տղայսն և առ մանկունսն ուր ժողովեալ էին ի մի վայր, և իբրեւ տեսին զնա ամենեքեան որ անդ էին, գային խնդութեամբ ընդ առաջ նորա՝ երկիր պագանէին նմա տղայքն, և ասէին. Բարիոք եկիր մանուկդ Յիսուս, որդի ծերոյ պատուականի, ասա մեզ ընդէ՞ր անյայտ եղեալ ի մէնջ պակասեցար աւուրս բազումս, և ոչ եկիր այսր. և մեք ամեն...[1] լալով անդր հասանէին. և կոծ մեծ առնէին ի վերայ նորա. և մանուկն էր ամաց եօթանց։ Եւ իբրեւ անցանէր ժամ մի, հարցանէին ծնողք մանկանն, ո՞ւմ է պատանեակն այն որ քարամբ հարեալ սպան զտղայս մեր։ Ասեն ամենեքեան. Ո՛չ գիտեմք։ Իսկ ծնողացն բարձեալ զմեռեալս տանէին ի տունս իւրեանց, և գնացեալ առ դատաւոր քաղաքին՝ պատմեցին նմա զամենայն. և նա հրամայեաց սպառնալեւք ածել զմանկունսն առաջի իւր. և իբրեւ եկին եհարց ցնոսա դատաւորն և ասէ. Ո՛ մանկունք և տղայք, մեծամեծք և փոքունք՝ որ աստ ժողովեալ էք ի տեղի հրապարակիս. տեսէք ամենեքեան և հայեցարուք և խնայեցէք ի հասակ տղայութեան ձերոյ. մի՛ կարծէք եթէ խեղճմտութիւն ինչ անկանի ի սիրտս իմ վասն լալոյ արտասուաց ձերոց՝ արձակել զձեզ, և կամ բարեխօսութեամբ ումեք կաշառաց ակն ածեալ, և ազատել զձեզ, որպէս և դուք իսկ կարծէք. ո՛չ այդպէս, այլ չարաչար տանջանօք վիրաւորել զձեզ ազգի ազգի

1. Թուղթ անկեալ էր ի գրչագրէն։

հարուածովք և կոտամահ արարից զձեզ։ Մի՛ կարծէք յանձինս ձեր, եթէ ես որդի մեծատան եմ, և միւսն, եթէ ես որդի աղքատի, ողորմեսցի դատաւորն ում և կամեսցի։ Այլ երդուեալ ի զօրութիւն աստուածոց իմոց, և ի փառս թագաւորի կայսեր, որ զամենեսեան զձեզ այսօր հաւասար դատեցայց։ Ասացէք ինձ ո՞ք ի ձէնջ սպան զմանուկն զայն, զի դուք ամենեքեան գիտէք որ անդ էիք։ Ասեն միաբան. Ո՛ դատաւոր, լո՛ւր մեզ և տես, թէ որպէս մեք երդմամբ միմեանց վկայեմք որ անմեղք եմք։ Ասէ դատաւորն. Ո՞չ յառաջ ասացի ձեզ և այժմ. դարձեալ ասեմ, ոչ սպառնալեօք, այլ ողոքանօք խօսիմ ընդ ձեզ, մի՛ զմեղապարտն թագուցանէք, և դուք ընդ նմա մեռանիք և և ոչ ինչ օգտիք։ Ասեն մանկունքն. Ո՛ դատաւոր, զոր գիտեմք հաւաստեաւ ճշմարիտն ասեմք, և զոր ոչ կարիցեմք իմանալ, ստութեամբ զի՞արդ զանմեղ ոք մատնեսցուք ի մահ։ Ասէ դատաւորն. Չարաչար խըրատեցից զձեզ, և ապա դառն մահուամբ կորուսից եթէ ոչ յայտնէք ինձ զստոյգն։ Ասեն մանկունքն միաբան առաջի կամք քո ժողովեալ աստ. զոր ինչ հրամայես մեզ և գիտեմք զայն ասասցուք։

Իսկ դատաւորն ի նմին ժամու բարկացեալ, հրամայեաց մերկացուցանել զնոսա, և դալար փոկովք հարկանել զմարմինս նոցա։ Իսկ այն որ սպանողն էր մանկանն, երկուցեալ ի դատաւորէն՝ ճիչ բարձեալ ասէ. Ո՛ դատաւոր արձակեցէք զիս ի կապանաց աստի, և ես ցուցից քեզ զսպանող մանկանն։ Եւ հրամայեա̀ց դատաւորն լուծանել զնա, և քաղցրութեամբ և ողոքանօք կոչել առաջի իւր, և ասէ ցնա. Ասա ինձ ստուգիւ և կարգաւ զամենայն զի գիտացից։ Ասէ պատանին. Լո՛ւր ինձ դատաւոր, ես անդ էի նստել բացագոյն ի հեռաստանէ. և տեսի զմանուկն Յիսուս զորդի ծերոյն Յովսեփայ օտարականի, որ ընդ խաղ արկեալ քարամբ եհար սպան զնա, և ինքն փախեաւ ի տեղոջէ անտի։ Ասէ դատաւորն. Ասա ինձ հաւաստեաւ՝ և նա ընդ ձե՞զ էր յորժամ մեռաւ մանուկն, և վըկայէք ամենեքեան վասն նորա որ նա գործեաց զայդ։

Digitized by Google

յայտնիկ որդի ծերոյ միոյ այեւորի, որ ամենեքեան վըկայեն վասն նորա, եթէ զօրութիւն և սքանչելիս նոր առնէ նա։ Այսպիսի ոչ կարեն առնել աստուածքն. երկնչիմք եթէ ի ձեռաց սորա կործանին աստուածքն մեր, յորժամ եմուտ դա ի քաղաքս մեր։ Կէսքն ասէին. Այո՛ բարիոք ասէք. կարող է առնել նա զինչ և կամի։ Եւ զայն լուեալ Յիսուսի, դարձաւ լռութեամբ և եկն ի տուն իւր, և թագուցանէր զանձն իւր ի մարդկանէ, զի մի ոք իմասցի զայն։

Եւ յետ անցանելոյ բազում աւուրց, յարուցեալ Յիսուս գնաց առ տղայսն և առ մանկունսն ուր ժողովեալ էին ի մի վայր, և իբրեւ տեսին զնա ամենեքեան որ անդ էին, գային խնդութեամբ ընդ առաջ նորա՝ երկիր պագանէին նմա տղայքն, և ասէին. Բարիոք եկիր մանուկդ Յիսուս, որդի ծերոյ պատուականի, ասա մեզ ընդէ՞ր անյայտ եղեալ ի մէնջ պակասեցար աւուրս բազումս, և ոչ եկիր այսր. և մեք ամեն...[1] լալով անդր հասանէին. և կոծ մեծ առնէին ի վերայ նորա. և մանուկն էր ամաց եօթանց։ Եւ իբրեւ անցանէր ժամ մի, հարցանէին ծնողք մանկանն, ո՞ւմ է պատանեակն այն որ քարամբ հարեալ սպան զտղայս մեր։ Ասեն ամենեքեան. Ո՛չ գիտեմք։ Իսկ ծնողացն բարձեալ զմեռեալս տանէին ի տունս իւրեանց, և գնացեալ առ դատաւոր քաղաքին՝ պատմեցին նմա զամենայն. և նա հրամայեաց սպառնալեւք ածել զմանկունսն առաջի իւր. և իբրեւ եկին եհարց ցնոսա դատաւորն և ասէ. Ո՛ մանկունք և տղայք, մեծամեծք և փոքունք՝ որ աստ ժողովեալ էք ի տեղի հրապարակիս. տեսէք ամենեքեան և հայեցարուք և խնայեցէք ի հասակ տղայութեան ձերոյ. մի՛ կարծէք եթէ խեղճմտութիւն ինչ անկանի ի սիրտս իմ վասն լալոյ արտասուաց ձերոց՝ արձակել զձեզ, և կամ բարեխօսութեամբ ումեք կաշառաց ակն ածեալ, և ազատել զձեզ, որպէս և դուք իսկ կարծէք. ո՛չ այդպէս, այլ չարաչար տանջանօք վիրաւորել զձեզ ազգի ազգի

1. Թուղթ անկեալ էր ի գրչագրէն։

Digitized by Google

հարուածովք և կատամահ արարից զձեզ։ Մի՛ կարծէք յանձինս ձեր, եթէ ես որդի մեծատան եմ, և միւսն, եթէ ես որդի աղքատի, ողորմեսցի դատաւորն ում և կամեսցի։ Այլ երդուեալ ի զօրութիւն աստուածոց իմոց, և ի փառս թագաւորի կայսեր, որ զամենեսեան զձեզ այսօր հաւասար դատեցայց։ Ասացէք ինձ ո՞ ոք ի ձէնջ սպան զմանուկն զայն, զի դուք ամենեքեան գիտէք որ անդ էիք։ Ասեն միաբան. Ո՛ դատաւոր, լո՛ւր մեզ և տես, թէ որպէս մեք երդմամբ միմեանց վկայեմք որ անմեղք եմք։ Ասէ դատաւորն. Ո՞չ յառաջ ասացի ձեզ և այժմ. դարձեալ ասեմ, ոչ սպառնալեօք, այլ ողոքանօք խօսիմ ընդ ձեզ, մի՛ զմեղապարտն թագուցանէք, և դուք ընդ նմա մեռանիք և ոչ ինչ օգտիք։ Ասեն մանկունքն. Ո՛ դատաւոր, զոր գիտեմք հաւաստեաւ զճշմարիտն ասեմք, և զոր ոչ կարիցեմք իմանալ, ստութեամբ զի՞արդ զանմեղ ոք մատնեսցուք ի մահ։ Ասէ դատաւորն. Չարաչար խըրատեցից զձեզ, և ապա դառն մահուամբ կորուսից եթէ ոչ յայտնէք ինձ զստոյգն։ Ասեն մանկունքն միաբան առաջի կամք քո ժողովեալ աստ. զոր ինչ հրամայես մեզ և գիտեմք զայն ասասցուք։

Իսկ դատաւորն ի նմին ժամու բարկացեալ, հրամայեաց մերկացուցանել զնոսա, և դալար փոկովք հարկանել զմարմինս նոցա։ Իսկ այն որ սպանողն էր մանկանն, երկուցեալ ի դատաւորէն՝ ճիչ բարձեալ ասէ. Ո՛ դատաւոր արձակեցէք զիս ի կապանաց աստի, և ես ցուցից քեզ զսպանող մանկանն։ Եւ հրամայեա՛ց դատաւորն լուծանել զնա, և քաղցրութեամբ և ողոքանօք կոչել առաջի իւր, և ասէ ցնա. Ասա ինձ ստուգիւ և կարգաւ զամենայն զի գիտացից։ Ասէ պատանին. Լո՛ւր ինձ դատաւոր, ես անդ էի նստել բացագոյն ի հեռաստանէ. և տեսի զմանուկն Յիսուս զորդի ծերոյն Յովսեփայ օտարականի, որ ընդ խա՛ղ արկեալ քարամբ եհար սպան զնա, և ինքն փախեաւ ի տեղւոջէ անտի։ Ասէ դատաւորն. Ասա ինձ հաւաստեաւ՝ և նա ընդ ձե՞զ էր յորժամ մեռաւ մանուկն, և վըկայէք ամենեքեան վասն նորա որ նա գործեաց զայդ։

Ասեն ամենեքեան միաբան․ Այո՛ նա արար։ Ասէ դատաւորն․ Եւ յառաջ ընդէ՞ր ոչ ծանուցիք ինձ յորժամ եկիք աստ։ Ասեն մանկունքն․ մեղս համարեցաք մատնել զնա, զի որդի աղքատի է և օտարի։ Ասէ դատաւորն․ Զի՞նչ արժան է առնել, զանմեղն դատել օրինօք, զմահապարտն արձակել։

Յայնժամ հրամայեաց դատաւորն բռնութեամբ ածել զՅիսուս առաջի իւր։ Եւ իբրեւ գնացին՝ ոչ գտին զնա, բայց միայն զՅովսէփ բերեալ կացուցին առաջի նորա։ Եհարց դատաւորն և ասէ ցնա․ Ասա ինձ ծեր դու․ ուստի՞ ես եկեալ ի քաղաքս այս, և կամ ե՞րբ եկիր այսր։ Ասէ Յովսէփ․ Ես ի յերկրէ հեռաստանէ եմ ի քաղաքէն Երուսաղեմի, և կամիմ որ բնակիմ ուրեք։ Ասէ դատաւորն․ Եւ աստ զի՞նչ խորհիս առնել։ Ասէ Յովսէփ․ Կամիմ որ բնակիմ տամբ և ընտանեօք իմօք ի տեղիս յայս։ Ասէ դատաւորն․ Եւ ընդ մտանելն քո ի քաղաքս յայս բազում չարեւք յայտնեցեր զանուն քո․ եթէ յամենայն տեղի այդպիսի գործ արարեալ էք, յաղագս այնորիկ ի տեղւոջէ ի տեղի վայրապար շրջիս․ բայց այժմ կատարումն եհաս ձեզ առ մեզ՝ յաղագս չար ժամանակի գործոց ձերոց։ Ասէ Յովսէփ․ Ո՛ դատաւոր, մի՛ այդպէս զըրպարտեր զմեզ անմեղութեամբ, առանց վկայից դատել զմեզ՝ զոր ո՛չ գիտեմք։ Ասէ դատաւորն․ Ո՞ւր է մանուկն քո, բեր փութով կացո առաջի իմ։ Ասէ Յովսէփ․ Եւ զի՞նչ կամիս հարցանել ցնա, պատմեա՛ ինձ։ Ասէ դատաւորն․ Եւ դու ո՞չ գիտես եթէ զի՞նչ գործեաց նա աստ։ Ասէ Յովսէփ․ Ո՛չ գիտեմ։ Ասէ դատաւորն․ Արդ հայեա՛ց աչօք քո և տես, և մի՛ այլ ինչ հարցաներ ցիս։ Ասէ Յովսէփ․ Զայդ ոչ առնէր մանուկն Յիսուս։ Ասէ դատաւորն․ Զվնաս գործէք, և կամիք փախստեամբ զերծանել ի մահուանէ։

Եւ հրամայեաց դատաւորն զգուշութեամբ պահել զՅովսէփ ի բանդի, և առաքեաց նուիրակս ընդ ամենայն քաղաքն խնդրել զՅիսուս՝ և ո՛չ գտին․ և եկեալ պատմեցին դատաւորին, եթէ շրջեցաք ընդ ամենայն տեղիս, և ոչ ոք իմացաւ զնա ուրեք և ետես և կամ

Digitized by Google

ծանեաւ։ Ապա հրամայեաց դատաւորն ածել զՅովսէփ առաջի իւր, զի չարչարեսցէ. և իբրև եկն, եհարց ցնա դատաւորն. Ասա ինձ ծեր դու, ո՞ւր տարեալ թագուցեր զմանուկն քո, և ոչ կամեցար յայտնել ինձ զի տեսից։ Ասէ Յովսէփ. Յառաջ ասացի քեզ՝ և այժմ դարձեալ ասեմ, եթէ ես այր ծեր եմ ալեւոր և տկար, և նա մանուկ է և տղայհասակ. ես զիա՞րդ կարացից գիտել զնա թէ ու՛ր իցէ։ Ասէ դատաւորն. Այո՛ գիտես, բայց թագուցեալ ես զնա ի տեղի ուրեք։ Ասէ Յովսէփ. Մի՛ ի զուր դատապարտես զիս վասն նորա, քանզի մեղք են քեզ։ Ասէ դատաւորն. Յաղագս ծերութեան ալեաց քոց խնայեցի քեզ, մինչև զմանուկն քո ըմբռնեալ ի հաւանութիւն ածից։ Եւ իբրև զայս խօսէր դատաւորն. ինքն իսկ Յիսուս եկաց առաջի նորա, և ասէ. Ո՛ դատաւոր, լցեալ ամենայն անիրաւութեամբ և բարկութեամբ, ի զուր դատես զամենայն ոք, և կամիս որ անմեղութեամբ հեղուս զարիւն արդար ի տարապարտուց, ասա՛ ինձ, զի՞նչ խնդրես յինէն։ Ասէ դատաւորն. Ընդէ՞ր այդպէս զայրացեալ խօսիս ընդ իս բան հակառակութեան, զոր ոչ է քեզ պարտ տալ ընդդէմ իմ այդպիսի պատասխանի։ Ասէ Յիսուս. Ո՛չ վայրապար ինչ բանս ասացի, այլ ճշմարտութեամբ քննեա՛, և ապա զարդարն իմասցիս։ Ասէ դատաւորն. Ո՛չ այլ ինչ ունիմ հարցանել ցքեզ, այլ ասա ինձ, դո՞ւ արարեր զվնասդ զայդ, եթէ այլ ոք։ Ասէ Յիսուս. Ես զայդ ո՛չ գիտեմ. բայց դո՞ւ ասես զինէն, եթէ այլք ասացին քեզ։ Ասէ դատաւորն. Լուայ ի բազմաց որք ասէին, եթէ արդարև նա եղև պատճառ մահուան մանկանն այնորիկ։ Ասէ Յիսուս. Ասա՛ ինձ, ո՛ դատաւոր, տեսի՞լ աչացն է ստուգագոյն թէ լսողութիւն ականջացն։ Ասէ դատաւորն. Տեսութիւն կարի հաստատուն է, և վկայ ոչ է պիտոյ ի մէջ։ Ասէ Յիսուս. Եւ զոր ոչն տեսեալ ես ստուգագոյն, ընդէ՞ր հաւատաս առանց վկայից։ Ասէ դատաւորն. Բարիոք ասես նոցա վկայութեանն ոչ հաւատամ. ցո՛յց ինձ զվկայութիւն քո, զի տեսից։ Ասէ Յիսուս. Եթէ ես վկայեմ զանձնէ իմմէ հաւատա՞ս։ Ասէ դատաւորն.

Ո՞րպէս հաւատամ զի ոչ ունիս զոք որ վկայէ զքէն։ Ասէ Յիսուս. Եթէ վկայութիւն իմ ոչ ընդունիս, նոցա խօսիցն և սուտ երդմանցն ընդէ՞ր հաւատաս։ Ասէ դատաւորն. Զի բազումք են որ վկայեն միմեանց, և ըզքեզ սուտ առնեն։ Ասէ Յիսուս. Մի՛ այդպէս առներ դատաստան. Բեր զայլ ոք վկայ կացո՛ նոցա, և ապա զստութիւն երկուց կողմանցն կարասցես ճանաչել։ Ասէ դատաւորն. Մի բան առաջի եդեալ կայ ձեզ պատասխանի. երդնուլ օրինօք առանց միջնորդութեան, և կամ վկայօք իրաւանալ ի դատաստանի։ Ասէ Յիսուս. Ես զայդ ո՛չ գիտեմ. մի՛ սպառնալեօք և անիրաւութեամբ ասես ցիս, և մի՛ բռնութեամբ և հակառակութեամբ խօսօք պատասխանի առնես։ Ասէ դատաւորն. Ո՛չ վայրապար իւիք դատեմ զքեզ թշնամութեամբ, և ո՛չ ակն առեալ ումեքէ կաշառօք զրպարտեմ զքեզ. դու զանձնէ քումէ վկայես որ անմեղ ես, և նոքա զնոյն, ապա զխնաս մահու ո՞ գործեաց։ Ասէ Յիսուս. Կարծես զիս եթէ տղայհասակ և անգէտ, ես ոչ գիտեմ զդատաստանն որպէս իցէ։

Յայնժամ դատաւորն մեծաւ սպառնալեօք հրամայեաց կոչել զամենայն մանկունսն առաջի իւր, և ասէ ցնոսա. Ասացէք ինձ զճշմարիտն զի գիտացից. դո՞ւք արարիք զխնասն զայն մահու, եթէ մանուկն Յիսուս։ Ասեն միաբան. Ո....[1] անէ պեղեալ գործն ըսքանչացեալ հիանային յոյժ և ամենեքեան երկնչէին ի նմանէ։ Եւ Յիսուս ասէ ցնա. Ո՛ անիրաւ դատաւոր և դատիչ օրինաց մահու արժանի, իրաւամբ և արդարութեամբ դատեցեր զիս. ահա յամօթ եղեր դու և այնոքիկ որ քեզ օրէնս և վկայութիւնս համարէին, և այժմ դուք եղերուք ծաղր և նախատինս ամենեցուն։ Գիտէի և ես արդեւք զայն որ գործեաց զխնաս մահու, և ես ոչ կամեցայ յայտնել՝ մինչեւ մեռեալն յարուցեալ վկայեաց զինէն։

Եւ դատաւորն և ամենայն բազմութիւնք մարդկան ոչ ինչ կարէին տալ պատասխանի։ Եւ կացեալ մա-

1. Թուղթ անկեալ է ի գրչագրին։

նուկն կենդանի մինչեւ յիններորդ ժամն աւուրն յորում ամենեքեան գային տեսանել զնա՝ յարուցեալ ի մեռելոց։ Եւ ապա դարձեալ ասէ Յիսուս ցմեռեալն. Նաւուղ, որդի Նաւուրի ննջէ այսուհետեւ և հանգիր. մինչեւ գայցէ վրէժխնդիրն ամենեցուն որ առնէ արդար դատաստան։

Եւ զայս ասացեալ Յիսուսի, եդեալ զգլուխն ի մահիճ ննջեաց. և զայն տեսեալ ամենայն բազմութիւն մարդկան յահէ անտի անկեալ լինէին որպէս մեռեալ, երկնչէին հայել ի նա. այլ յոյժ զարհուրեալ դողային ի նմանէ, և ընդ հասակ տղայութեան նորա առաւել զարմանային։

Եւ Յիսուս կամեցաւ ելանել արտաքս յամբոխէն, և նոքա աղաչէին զնա և ասէին. Կենդանացո զմեռեալն զոր յարուցեր. և Յիսուս ոչ կամեցաւ առնել. այլ ասէ. Եթէ յառաջ հաւատացեալ էիք բանից, և լուեալ վկայութեան իմոյ, կարող էի առնել զայդ ամենայն զոր խնդրէք. Իսկ յորժամ դուք միաբանեալ անիրաւութեամբ զիս դատէիք և սուտ վկայօք հայհոյութեամբ թշնամանէիք. և ես յաղագս այնորիկ զնա յարուցեալ վկայ կացուցի ինձ վասն յանդիմանութեան ձերոյ, և ապա ապրեցայ ի մահուանէ։ Եւ զայս ասացեալ Յիսուսի թագեաւ ի նոցանէ, և զՅովսէփ հանեալ ի բանդէն արձակեցին։ Եւ բազումք գային խնդրել զՅիսուս, և ոչ գտանէին։ Աղաչէին ըզՅովսէփ, և ասէին. Ո՞ւր է մանուկն քո որ եկեալ յարուցանէ զպատանեակն մեր։ Եւ նա ասէ. Ո՛չ գիտեմ։

Եւ ի վաղիւն ընդ առաւօտն յարուցեալ Յովսէփ ա՛ռ զմանուկն և զմայր իւր, և ելեալ ի քաղաքէն՝ երթային զճանապարհաւն. և Յիսուս էր ամաց վեցից և ամսոց մետասանից։ Եւ եկեալ հասեալ նոցա ի գեղ մի որ անուանեալ կոչի Յայէլ։ Եւ անդ իջեւանս արարեալ նոցա բազում աւուրս։ Եւ յաւուր միում Յովսէփ և Մարիամ խորհուրդ արարեալ նոցա ընդ միմեանս, և զմտաւ ածեալ վասն Յիսուսի, եթէ զի՛նչ արասցուք զսա, զի այսպիսի նեղութիւն մեծ և հարուածս կրեմք վասն սորա ի մարդկանէ՝ յամենայն քաղաքս և ի

Digitized by Google

գեօղ, և երկնչիմք եթէ բռնութեամբ ի ծածուկ կալ-ցեն զնա և սպանցեն, և զմեզ ընդ նմին կորուսցեն։ Ասէ Յովսէփ. Եւ զի՞նչ խորհիս առնել վասն Նորա՝ զոր հարցանես և քննես։ Ասէ Մարիամ. Տեսանես աՀա զարգացեալ եղեւ հասակաւ՝ և հանապազ զԻւրովի շրջի, և ի տուն ոչ դադարէ կեալ, եթէ կամք քո լիցի տայցուք զդա ի գործ արուեստի դպրութեան. զի ի հնազանդութիւն և ի խրատու կացցէ վարդապետի, և վարժի ամենայն ուսման և գիտութեան աստուածային օրինացն. և լիցի ի խաղաղութիւն կեանս մեր։ Ասէ Յովսէփ. Այո՛ բարիոք ասես. եղիցին կամք քո զոր հրա-մայես և որպէս հաճոյ թուի քեզ առնել։ Ասէ Մարիամ. Երկնչիմ եթէ ոչ դադարէ ուրեք ուսանիլ ինչ, զի կարի ճարտար է և հասու ամենայն իմաստութեան, և ոչ հնազանդի վարդապետի ումեք կալ ի հրամանի։ Ասէ Յովսէփ. Մի՛ երկնչիր և մի հոգար վասն դորա, զի բազում սքանչելեօք էր տեսիլ դորա. և մեծ զարմա-նալեաց երեւումն դորա, և սքանչելի և զարհուրելի և հիանալի էր գործդ դորա. և մեք յաղագս այնորիկ շրջիմք օտար և պանդուխտք ընդ ամենայն երկիր, մինչեւ այց արասցէ Տէր Աստուած մեր, և կատարեսցէ զուխտս և զխնդրուածս սրտից մերոց ի բարի։ Ասէ Մարիամ. Ես յոյժ նեղեալ եմ վասն դորա յամենե-ցուն, և յետոյ ո՛չ գիտեմ թէ զի՛նչ լինելոց է։ Ասէ Յովսէփ. Բարիոք ասացեր, բայց յետոյ ընդ փորձու-թեան Աստուած և զելն արասցէ, մի՛ տրտմիր։ Եւ զայս ասացեալ Նոյա լռեցին։

## ԳԼՈՒԽ ԻԲ.

*Եկեալ նոցա յերկիրն Իսրայեղի և տալ զԹիտոս յուսումն դպրոցեան։*

Եւ եղեւ յաւուր միում ընդ այգն ընդ առաւօտն առեալ Յովսէփ զմանուկն և զմայր իւր, և եկեալ հասեալ նոցա յերկիրն Իսրայէղի, ի քաղաք մի որ անուանեալ կոչի Բոդորոսոն, և ի տան միում իջեւանս արարեալ բնակէին։ Եւ էր ի քաղաքին յայնմիկ Թագաւոր մի բարեպաշտ, ազգաւ եբրայեցի, որ անուանեալ կոչի Բարէյեսու. այր բարի և ողորմած և մարդասէր։ Եւ իբրեւ լուաւ Յովսէփ զնմանէ՝ խորհեցաւ տեսանել զնա. հարցանէր ցբնակիչս տեղւոյն և ցքաղաքացիսն, եթէ զի՞նչ բնութեամբ արդեօք իցէ Թագաւորդ ձեր։ Ասեն ցնա ամենեքեան. Բարիոք է։

Յայնժամ յարուցեալ Յովսէփ յաւուր միում գնաց ի դուռն արքունական պաղատին, և ծանուցեալ դռնապանին՝ յայտնեաց զխորհուրդս իւր, և ասէ ցնա. Ո՛ պատուական այր սիրելի և մտերիմ Թագաւորին, աղաչեմ զքեզ լուր ինձ, բան ինչ ունիմ հարցանել ցքեզ, զի ասասցես ինձ։ Ասէ դռնապանն. Ասա՛, ծեր։ Ասէ Յովսէփ. Լուեալ եմ զԹագաւորէդ ձեր, եթէ բարի է և ողորմած յոյժ աղքատաց՝ և օտարաց սիրելի. և ես յօտար աշխարհէ եկեալ եմ տամբ և ընտանեօք, և կամիմ որ բնակիմ ի տեղիս յայս։ Աղաչեմ զքեզ հրամայեա ինձ մտանել և տեսանել, և բան ինչ լսել ի բերանոյ նորա։ Ասէ դռնապանն. Բարիոք ասես, բայց համբերէ սակաւ մի, մինչեւ ծանուցից դորա արքունեացն մուծանել զքեզ անդր. քանզի գիտես զհրամանս և զկամս Թագաւորացն, որ օրէն է ծանուցանել. և

ապա առնել զհրամայեալսն։ Ասէ Յովսէփ. Այո՛, բարիոք ասես։

Յայնժամ ծանուցեալ դռնապանին մերձակայից Թագաւորին, և հրամայեցին զՅովսէփ մուծանել ի ներքս։ Եւ իբր...[1] եթէ կայ ի քաղաքիս յայսմիկ վարդապետ ուսուցիչ տղայոց. որ ամենայն շնորհաց և գիտութեան հասու լինի, տայց զմանուկն իմ յուսումն դպրութեան որ վարժի ամենայն իմաստութեամբ գրոց՝ աստուածային մեծի օրինացն և պատուիրանացն։ Ասէ արքայն. Այո՛, ես արարից զկամս քո. բայց հրամայեա՛ բերել զմանուկն առաջի իմ, զի տեսից թէ կարող իցէ նա մտանել ի յուսումն դպրութեան. ապա տայց զնա ի վարդապետն իւր։ Եւ յարուցեալ Յովսէփ, երկիր եպագ խնդութեամբ առաջի արքային և գնաց ի տուն իւր. և ասէ. Ուրախ լե՛ր Մարիամ, մայր Յիսուսի, հանդերձ միածնաւ որդւովդ քո, զի Թագաւորն որ ի քաղաքիս աստ է յոյժ բարեպաշտ է և ողորմած, և ուրախացաւ ընդ գնալն իմ առ ինքն. և ընդ գալն մեր ի տեղիս յայսմիկ. և մեծաւ սիրով և պատուով ընկալաւ զմեզ, որպէս արժան է մեծունեաց ընդունել զոք. և խոստացաւ տալ մեզ ինչս բազումս որպէս և կամեսցի ինքն, և պատուէր ետ ի քաղաքիս յայսմիկ ընդունել զմեզ ոչ իբրեւ զօտար կամ զանծանօթ հեռաւոր, այլ իբրեւ զսիրելի և զբարեկամ ամենեցուն, և հրամայեաց տալ զմանուկս մեր յուսումն դպրութեան։ Արդ եթէ կամք լիցի քո՝ տարայց զնա առաջի արքային. զի հրամանաւ իւրով տացէ զնա ի վարդապետն իւր։ Իբրեւ լուաւ զայս Մարիամ զոր ինչ խօսեցաւ Յովսէփ և պատմեաց, տրտմեցաւ յոյժ, և երկուցեալ ի Թագաւորէն եթէ նենգութեամբ խնդրէ զմանուկն տեսանել. զի առցէ զնա ի գերութիւն ծառայութեան. և արտասուելով ասէ. Ընդէ՞ր ծանուցեր յառաջ արքային՝ եթէ որդի ունիմ այսպիսի անուն գեղեցիկ։ Ասէ Յովսէփ. Մի՛ երկնչիր, կենդանի է Տէր Աստուած որ ոչ նենգութեամբ խնդրէ զմանուկդ, այլ կամի տալ

1. Թուղթ անկեալ է ի գրչագրէն։

Digitized by Google

զդա յուսումն դպրութեան հրամանօք իւրօք ի վարդապետն իւր։ Ասէ Մարիամ. Դո՛ւ գիտես, ահա այժմ ի քեզ տաց զորդին իմ. դարձեալ յետոյ ի քէն խընդրեցից զդա։ Ասէ Յովսէփ. Բարիոք ասես։ Ասէ Մարիամ. Եթէ կամիցիս տանել զմանուկն առաջի արքային, ա՛ռ զմանուկդ և տար մինչեւ ի դուռն արքունական, որպէս և կամիս. և յորժամ կամիցիս մտանել, յառաջ հա՛րց, փորձեա, քննեա վասն մանկանն, և ապա տարցես և ածցես առաջի արքային։ Ասէ Յովսէփ. Այո՛, բարիոք ասացեր, կամք քո լիցին։ Յայնժամ յարուցեալ Յովսէփ առ զմանուկն Յիսուս՝ և եկն առաջի արքային, և խոնարհեալ երկիր եպագ նմա։ Ասէ արքայն. Բարի եկիր տղայ՝ նորածին մանուկ, որդի հօր մեծի արքայի։

Եւ հրամայեաց թագաւորն կոչել զվարդապետն ամենեցուն, զուսուցիչն տղայոց՝ որում անուն էր Գամաղիէլ։ Եւ իբրեւ եկն առաջի արքային՝ յոյժ սիրով ընկալաւ զնա, եդ առաջի նոցա սեղան, կերան և արբին և ուրախ եղեն։ Եւ մատուցեալ արքայն ասէ ցԳամաղիէլ. Ո՛ վարդապետ բարի, ուսուցիչ օրինացն Աստուծոյ, կամի՞ս զի առցես զմանուկս այսպի յուսումն դպրութեան, և ուսուցանես նմա զամենայն բան գիտութեան հանճարոյ, որպէս և դու իսկ կամիս և կարի քաջ գիտես. և զամենայն պէտս մարմնոյ կարեաց քոց յարքունուստ առցես՝ զոր ինչ և պիտոյ իցէ քեզ։ Ասէ Գամաղիէլ. Ո՞ւմ է պատանեակս այս գեղեցիկ։ Ասէ արքայն. Որդի է մեծատան առն ումեմն իշխանի, հարազատ ի թագաւորական տոհմէ. և ծերդ այդ վերակացու է մանկանս այսմիկ զոր տեսանես։ Ասէ ցարքայն՝ Գամաղիէլ. Այո՛, արարից զկամս քո զոր հրամայես. բայց մանուկս այս կարի յոյժ տղահասակ է, և զօրութիւն մտացն ո՛չ կարէ յառաջ իմանալ զբանն, զի չեւ է կատարեալ հաստատուն իմաստութեամբն։ Ասէ արքայն. Արա՛ որպէս և կամիս, եթէ կարող իցէ՝ զի տեսցուք։ Ասէ Գամաղիէլ. Կամք քո լիցին։ Յայնժամ յարուցեալ Յովսէփ վաղվաղակի՝ երկիր եպագ արքային և այլոցն ամենեցուն, և առեալ

զմանուկն Յիսուս գնաց ուրախութեամբ ի տուն իւր, և պատմեաց Մարիամու զոր լուաւ յարքայէն, և ուրախ եղեն։

Եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ, առ զմանուկն Յիսուս առաջի իւր, և եկն առ Գամաղիէլ ուր բազմութիւն աշակերտացն ժողովեալ էին։

Եւ իբրեւ ետես Յիսուս զվարդապետն իւր, խոնարհեալ երկիր եպագ նմա։ Ասէ վարդապետն. Բարի եկիր Նորատունկ արմատ ի յորթոյ ցեղէ բարունակ շառաւիղ, քաղցրահամ պտուղ, ողկոյզ ծաղկեալ։ Զայս ասացեալ Գամաղիէլի, իբրեւ ետես զՅիսուս հոգւով ծանեաւ թէ ո իցէ։ Եւ ապա դարձեալ Գամաղիէլ առէ ցՅովսէփ. Ո՛ պատուական ծեր, ասա՛ ինձ քո՞ է մանուկս այս եթէ այլում իցէ։ Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէր որ յԱստուծոյ տուեալ է սա ինձ որդի, ոչ ըստ մարմնոյ, այլ ըստ հոգւոյ։

Ասէ Գամաղիէլ. Քանի՞ ամաց իցէ մանուկս այս, պատմեա՛ ինձ։ Ասէ Յովսէփ. Եօթն ամաց իցէ մանուկս այս։ Ասէ Գամաղիէլ. Յայլ վարդապետ ուրուք տուեա՞լ ես զսա յուսումն կամ յայլ գործ արուեստի։ Ասէ Յովսէփ. Ո՛չ եմ տուեալ։ Ասէ Գամաղիէլ. Եւ այժմ զի՞նչ խորհիս առնել զդա։ Ասէ Յովսէփ. Ըստ հրամանի արքային, և ըստ հաճութեան կամաց քոց՝ եկի այսր, լուեալ ինձ զասացեալն ի քէն։ Ասէ Գամաղիէլ. Բարի՛ եկիր պատուական ծեր դու, այժմ արարի մեծարանս երեսաց քոց, և յոյժ պատկառեալ ամօթով խօսիմ ընդ քեզ՝ և առաջի քո. բայց լուր ինձ և ես զճշմարիտն ասացից քեզ. տեսանեմ այժմ զմանուկն քո, և յայտնի երեւի ինձ ըստ գեղոյ նմանութեան պատկերի իւրոյ՝ որ ո՛չ ունի դա պէտս կարեաց ուսման աւելի ինչ, լսել յումեքէ կամ իմանալ. զի դա ամենայն շնորհօք և իմաստութեամբ լցեալ է, և հոգին սուրբ միշտ բնակեալ է յաւիտեան, և ի դմանէ է անմեկնելի։ Ասէ Յովսէփ. Ասա՛, և զի՛նչ արարից զդա՝ եթէ ոչ ինչ բան գրոյ ուսեալ օգտի ի վարդապետէ։ Ասէ Գամաղիէլ. Տուր զդա յայլ գործ ձեռաց արուեստի՝ լինել որպէս և դու կամեցիս առնել։

Digitized by Google

Եւ զայս լուեալ Յովսեփայ տրտմեցաւ յոյժ, և անկեալ լալով առ ոտս Գամաղիելի՝ արտասուելով աղաչէր զնա, և ասէր. Վարդապետ բարի, երկայնամիտ լեր առ իս սակաւիկ մի՝ և համբերէ, մի՛ իբրև զօտար և պանդուխտ համարիր զիս, և անտես առներ. այլ բուռն հար զմանկանէս զայսմանէ յօժարութեամբ սրտիւ, և զոր ինչ շնորհք գիտութեան յԱստուծոյ հասցէ ի վերայ դորա՝ այնպէս եղիցի, և ես զվարձս աշխատութեան կրկին հատուցից քեզ: Եւ Գամաղիէլ ասէ. Այո՛, ես արարից զկամս քո:

Յայնժամ վարդապետին առեալ զտախտակն ի ձեռանէ մանկանն, և ասէ. Գրեցից գիրս երկոտասան, եթէ բաւական իցէ և կարող լինիցի ճանաչել զբանն և խելամուտ լինել, և զայլն եւս բաւանդակ գրեցից: Ասէ Յովսէփ. Արա՛ որպէս և կամք լինի հրամանաց քոց առնել զայդ: Եւ Գամաղիէլ սկսեալ յառաջ հանել զգիրն, և ասէ ցՅիսուս. Արի, յոտն կաց, նայեա ի նա և տե՛ս զգիր գրոյն թէ ո՛րպէս իցէ:

Եւ Յիսուս յարուցեալ եկաց յաջակողմն վարդապետին իւրոյ, և սկսաւ յառաջ նկատել զմեկնութիւն բանին, և ապա զգիրն. և իբրև գրեաց վարդապետն գիրս երկոտասան՝ և ետ ցմանուկն Յիսուս. և նա խոնարհեալ երկիր եպագ նմա, և առեալ զտախտակն ի ձեռանէ նորա: Ասէ Գամաղիէլ. Ահա որդեակ, լուր ինձ, խոնարհեա և ունկն դիր, և լուէ զասացեալս յինէն, և ի միտ ա՛ռ և զոր խրատ տամ քեզ՝ ընթերցիր: Եւ Յիսուս լռութեամբ ասէ ցնա. Այո՛, վարդապետ, բարիոք ասես, բայց այժմ հրամայեա ինձ խօսել առաջի քո զի գիտացից: Իսկ Գամաղիէլ իբրև սկսաւ յառաջ զգիր անուանն ասել, ասէ Յիսուս. Ո՜ վարդապետ. զիա՞րդ այդպէս խօսիս, զի զոր ասես ո՛չ գիտեմ. այլ իմն բան թուի ինձ և օտարոտի և ոչ կարեմ իմանալ: Ասէ Գամաղիէլ. Եւ ընդէ՞ր, որդեակ, այդպէս ասիցես զայդ. հայեա՛ց և տես աչօք քովք և իմացիր և ծանիր զբանն: Ասէ Յիսուս. Այո՛, վարդապետ հրամայեա ինձ այժմ խօսել ի կարգի, զի լուայց ի քէն և տեսից: Եւ Գամաղիէլ սկիզբն արա-

Digitized by Google

րեալ յառաջին գրոյն ասել զանուանսն ի կարգի։ Ասէ Յիսուս. Ո՜ վարդապետ, ո՞չ այդպէս խօսի անուանք գրոյդ՝ զոր ասես։ Ասէ Գամաղիէլ. Ապա ասա՛, ո՞րպէս։ Ասէ Յիսուս. Յառաջ ինձ նախ զմեկնութիւն գրոյն ասա, և ապա զանունն։ Ասէ Գամաղիէլ. Այս է ըսկիզբն անուանց գրոյն զոր տեսանես շարայարմարեալ ընդ միմեանս։ Ասէ Յիսուս. Բարիոք ասես, զգիրս ճանաչեմ, բայց զմեկնութիւն անուանցն ասա ինձ։ Ասէ Գամաղիէլ Զո՞ր մեկնութիւն։ Ասէ Յիսուս. Զգրոյդ որ ի կարգի իցէ գրեալ միւսն ընդ միոյն։ Ասէ Գամաղիէլ. Եւ գիրն զի՞նչ ունի յինքեան թարգմանութիւն, ինքն միայն ասել ինչ և կամ լսել։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է որ առաջի գիրն այլ կերպարանս ունի յինքեան, և միւսն այլ տեսակ, և միւսն այլ նմանութիւն. և ոչ են հաւասար միմեանց ձեւքն և օրինակն, այլ և այլ են անուանք բաժանեալ ի միմեանց։ Ասէ Գամաղիէլ. Այն յաղագս տեսութեան աչացն է որ կարէ նկատել, հայել և ճանաչել, և ապա միտքն իմանի։ Ասէ Յիսուս. Բարիոք ասացեր զայդ, բայց զոր հարցանեմ զնոյն պատմեա ինձ. գիտեմ որ ամենայն ըստ կարգի սահմանեալ է գիրն որ զմեկնութիւն խորհըրդոյն յինքեան ցուցանէ հաստատուն մի ըստ միոյ գրոյ։ Ասէ Գամաղիէլ. Առաջին վարդապետքն և իմաստունքն ոչ ինչ կարացին ասել բան ումեք, յաւել ըստ տեսութեան գրոյն և զանունն։ Ասէ Յիսուս. Գիտեմ արդեօք զոր ինչ ասես յառաջ, բայց ես յաղագս մեկնութեան գրոյն հարցանել կամիմ և ուսանել ի քէն։ Ասէ վարդապետն. Ասա՛ ինձ որդեակ, ո՞րպէս ասես, զայդ ոչ գիտեմ։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է գիրն, և կամ զի՞նչ է բանն և կամ զի՞նչ է հեգքն։ Ասէ Գամաղիէլ. Ասա՛ որդեակ, զայդ ոչ կարեմ իմանալ։

Իբրեւ լուաւ զայս Յովսէփ՝ զայրացաւ ի սիրտս իւր, և ասէ ցնա. Որդեակ, մի՛ այդպէս պատասխանի տար վարդապետին քում. յառաջ ուսիր զբանն և ապա իմացիր։ Եւ զայս ասացեալ Յովսեփայ գնաց լռութեամբ ի տուն իւր, և պատմեաց Մարիամու վասն Յիսուսի զոր ետես և լուաւ ի նմանէ. և տրտմեցաւ յոյժ, և

Digitized by Google

ասէ ցնա. Տեսանես զոր ինչ յառաջ ասացի քեզ, եթէ ո՛չ հնազանդի ումեք ուսանել ինչ։ Ասէ Յովսէփ. Մի՛ տրտմիր, զոր ինչ կամք Տեառն լիցի՝ այնպէս եղիցի։ Իսկ Յովսէփ յորժամ ելեալ ի վարդապետէ անտի և եթող զմանուկն Յիսուս ի տեղի անդր, առեալ լռութեամբ զտախտակն սկսաւ ընթեռնուլ. յառաջինն ըզգիրն, և յերկրորդ զբանն, և յերրորդ զհեգքն. և եդ զտախտակն առաջի իւր։ Եւ ասէ. Վարդապե՛տ, այժմ ծանեայ զգիրս զայս զոր գրեցեր. ա՛ռ գրեա և զայլ գիրն բաւանդակ, զի ընթերցից։ Եւ Գամաղիէլ յոյժ հիացեալ ընդ զօրութիւն մտաց նորա, առեալ ըզտախտակն ի ձեռանէ մանկանն, և զայլ գիրն ես գրեաց ի կարգի։

Եւ Յիսուս երկիր պագեալ վարդապետին իւրոյ, և առեալ զտախտակն նոյնպէս ընթերցաւ, զառաջինն զգիրն, և յերկրորդն զբանն, և յերրորդ զհեգքն. և եդ զտախտակն առաջի իւր. և ասէ ցնա. Վարդապետ, կատարեցե՞ր զամենայն գիր գրոյն զոր սկսար առնել։ Ասէ Գամաղիէլ. Այո՛ որդեակ, այդ է անուանքն թուով համարեալ ի կարգի։ Ասէ Յիսուս. Վարդապե՛տ, զամենայն զոր ինչ գրեցեր ինձ և ծանուցեր՝ ուսայ և գիտեմ զամենայնն. արդ աղաչեմ զքեզ, վարդապետ բարի, գրեա՛ և այլ ինչ բան իմաստութեան և հանճարոյ, զի ուսայց ի քէն։ Ասէ Գամաղիէլ. Այո՛, ես արարից զկամս քո. բայց հրամայեա՛ ինձ գիր անուան մեկնութեան գրոյն զի գիտացից։ Ասէ Յիսուս. Եթէ կարիցես իմանալ և ճանաչել զասացեալ բանն ի մէնջ՝ զոր խօսիմ ես, սակաւ մի ծանուցից քեզ։ Ասէ Գամաղիէլ. Ասա՛ համարձակութեամբ ինձ, զի լուայց և գիտացից զմեկնութիւն գրոյն, եթէ ո՛րպէս իցէ։ Ասէ Յիսուս. Դո՛ւ ես վարդապետ Իսրայելի և զայդ ո՛չ գիտես։ Ասէ Գամաղիէլ. Զոր ինչ լուեալ եմ և ուսեալ ի նախնեաց և ի հարց անտի գիտեմ. այլ յաւել բան իմաստութեան ո՛չ ճանաչեմ։ Ասէ Յիսուս. Ինձ հրամայես գիր ուսանիլ ի քէն և ընթեռնուլ, և դու զմեկնութիւն բանի հանճարեղութեան մտաց՝ ո՛չ իմանաս։ Ասէ Գամաղիէլ. Եւ գիրն զի՞նչ խօսի յին-

Digitized by Google

քեան բան՝ առանց այլ գրոյ լծակցութեան։ Ասէ Յիսուս. Գիրն խորհուրդ ունի յինքեան, և ամենայն կարգաւ գիր մեկնութիւն ցուցանէ խորհրդածութեամբ։ Ասէ Գամաղիէլ. Գիտեմ որ յառաջ գիրն է և ապա բանն, և ապա հեգքն։ Ասէ Յիսուս. Բարիոք ասես, գիրն յինքեան անուն Աստուած Թարգմանի, և բանն որ ի գրէն ծնունդս առնու և մարմնանայ, Բանն Աստուծոյ. և հեգքն որ մեկնի և յայտնի ի գրոյն և ի բանէն, Հոգին սուրբ որ յերրորդութենէն մինն ընդ միոյն գիրն լծակցեալ բան յղացեալ ի միտսն ծնունդ առնու և մարմնանայ, և ապա յայտնեալ վկայի բանն ասացեալ։

Իբրև լուաւ զայս Գամաղիէլ զարմացաւ յոյժ, և հիացեալ ընդ զօրութիւն մտաց նորա և ընդ շնորհս գիտութեան նորա զոր ասէր. և Գամաղիէլ հայեցեալ ի Յիսուս և ասէ ցնա. Ասա ինձ, որդեակ, ո՞ւր ես ուսեալ զայդ ամենայն իմաստութիւն, կամ յումմէ՞ լըւար. կարծեմ եթէ շնորհք Հոգւոյն սրբոյ միացեալ է ընդ քեզ, տեղի տայ իմանալ և ճանաչել զամենայն։ Ասէ Յիսուս. Վարդապետ, աղաչեմ զքեզ, ասա՛ զոր յառաջ խորհեցար ուսանել ինձ բան իմաստութեան հանճարոյ, զի գիտացից։ Ասէ Գամաղիէլ. Որդեակ, լուռ լեր, մի՛ այդպէս աշխատ առներ զիս. զի յայսմհետէ ինձ պարտ է աշակերտիլ քեզ, զի նոր իմն ըսքանչելի երևեցար առաջի մերում՝ զոր երբեք ոչ է իմ լուեալ և կամ տեսեալ ի մարդկանէ։

Իբրև լուան զայս մանկունքն և տղայքն ամենայն՝ որ ի դպրութեան ժողովեալ էին աշակերտել անդ, ասեն ցնա. Վարդապետ, աղաչեմք զքեզ, հան արձակեա զդա ի մէնջ, զի երթիցէ խաղաղութեամբ ի տուն իւր. քանզի բազում խօսօք զմեզ ամենեսեան առհասարակ զարմացոյց։ Ասէ Գամաղիէլ. Որդեակք իմ, եթէ կարէիք արդեւք լսել և իմանալ զասացեալ բանն ի դմանէ՝ զոր ասէ, ո՛չ վայրապար իրս խօսի և ոչ ստութեան բանս բարբառի, այլ զճշմարիտն և զարդարն պատմէ, զի ի զօրութենէ շնորհաց հոգւոյն և յառաւել իմաստութենէն որ տուեալ է դմա ի վե-

Digitized by Google

բուստ. և երանի որ փառաց և մեծութեան դորա կարիցէ հասու լինել։ Եւ ապա Գամաղիէլ դարձեալ ասէ ցՅիսուս. Որդեակ, աղաչեմ զքեզ լո՛ւր ինձ, ասա զմեկնութիւն գրոյն կարգաւ, զի թերևս կարացից իմանալ։ Ասէ Յիսուս. Ո՛ վարդապետ, ասացից քեզ. և ոչ կարես իմանալ և ճանաչել զմեկնութիւն գրոյն որ ունի յինքեան զձեւն և զտեսակն, զօրինակն և զկերպարանն և զնմանութիւն, և զխորհուրդն որ ծածկեալ է յաւիտեան ի տեսութենէ մտաց մարդկան, մինչև այց արասցէ Տէրն ամենեցուն, այն՝ որ քննիչ է խորհըրդոց ամենայն տեղիս, զոր այժմ սակաւ տեսանես և լսես յինէն զասացեալն. բայց ոչ կարասցես իմանալ և ճանաչել զիս, թէ ո՛ իցեմ, բայց յետոյ լուեալ քո տեսցես զիս և գիտասցես։

Իբրև լուաւ զայս Գամաղիէլ, զոր ինչ ասաց ցնա Յիսուս, երկեաւ ի նմանէ, և ասէ. Արդարև որդի Աստուծոյ է սա և ոչ որդի մարդոյ, այլ Աստուած երևեալ մեզ մարմնով յերկրի. կարծեմ եթէ սա է Քրիստոսն զոր մարգարէքն խօսեցան վասն գալստեան դորա, ի յետին ժամանակին յայտնելոց էր նա։

Զայս իբրև ասաց Գամաղիէլ, հրամայեաց կոչել զՅովսէփ. և իբրև եկն, ասէ ցնա Գամաղիէլ. Ասա ինձ, ծեր դու, զի՞նչ ասացից և զի՞նչ խօսեցայց վասն մանկան որդոյ քո Յիսուսի՝ զոր լուայ ի նմանէ, և յիրաւի ասացեր եթէ ոչ է նա որդի իմ ըստ մարմնոյ՝ այլ ըստ հոգոյ։ Եւ դա ո՛չ բնութեամբ մարմնեղէն մարդ տեսութեամբ, այլ իբրև զանմարմին հոգեղէն և հրեղէն. ո՞չ իսկ ես յորժամ տեսի զնա ասացի. Եթէ ոչ ունի դա կամք յօժարութեան մտօք ուսանել ինչ. զի դա ամենայն զօրութեամբ և շնորհօք լցեալ է։ Ասէ Յովսէփ ցմանուկն. Ասա՛ ինձ որդեակ, զի՞նչ արարից զքեզ, և կամ առ ո՞ տարեալ յանձն արարից զքեզ ուսանիլ, որ ո՛չ հնազանդիս վարդապետի ումեք. քանի չարչարանս և նեղութիւնս հասուցանես մեզ ընդ ամենայն տեղիս. յո՞ երթայց, առ ո՞ գնացից, առ ո՞ հաւանեսցիս ուրեք դադարել, պատմեա ինձ։ Ասէ Յիսուս. Ընդէ՞ր այդչափ զայրացեալ ես և բարկացեալ

ի վերայ իմ, և անմեղութեամբ ի զուր դատես զիս. զի՞նչ արարի ցայժմ զոր ասես դու. զոր հրամայէ ասել ինձ՝ գիտեմ, և զոր հարցանեմ. ո՛չ տայ պատասխանի։ Ասէ Յովսէփ. Ես յաղագս խրատու և իմաստութեան ետու զքեզ ուսանել, և դու դարձեալ խրատ տաս վարդապետին քում։ Ասէ Յիսուս. Զոր ոչն գիտէիր՝ ուսայ, և զոր գիտեմ՝ ոչ ինչ փոյթ է ինձ ուսանել։ Ասէ Գամաղիէլ. Լուեա՛, որդեակ, ի խօսելոյ. և մի՛ այդչափ յանդիմաներ զմեզ. երթ խաղաղութեամբ ի տուն քո, և Տէր առաջնորդեսցէ քեզ յամենայն բարութիւն։ Եւ ի նոյն ժամայն յարեաւ Յիսուս վաղվաղակի, ա՛ռ զտախտակն ի ձեռին իւրում, և խոնարհեալ երկիր եպագ նմա, և ասէ. Վարդապետ բարի, Աստուած հատուսցէ քեզ զվարձս վաստակոց զոր շնորհք գիտութեան ի քէն ընկալայ։ Ասէ Գամաղիէլ. Երթ որդեակ ուրախութեամբ զճանապարհս քո, և Տէր կատարեսցէ զխորհուրդս սրտի քո ի բարի։

Եւ Յիսուս եկեալ խնդութեամբ երթայր առ մայր իւր, և ցուցանէր զգիրն զոր գրեալ էր վարդապետն իւր, և ասէր, եթէ ահա ուսեալ եմ զամենայն ինչ և կատարեալ, և ո՛չ պիտոյ է ինձ այլ գրել և ընթեռնուլ։ Ասէ Մարիամ. Որդեակ, ո՛րպէս ուսա՞ր այսօր զամենայն ինչ գրով և կատարեցեր ի ժամուս յայսմիկ։ Ասէ Յիսուս. Այո՛, ուսայ և գիտէի արդեւք յառաջ բազում՝ բանս՝ զոր վարդապետն իմ ոչ կարէր բանիւք պատասխանի տալ ինձ։ Ասէ Մարիամ. Որդեակ, գիտէի արդեւք որ ոչ հնազանդէիր ումեք վարդապետի առնել ինչ։ Եւ զայս ասացեալ Մարիամու լռեաց։

Եւ յորժամ ել Յիսուս ի վարդապետէ իւրմէ և գնաց, և Յովսէփ տրտմեալ վասն մանկանն ի տարակուսանս եղեալ հոգայր, և ասէ ցԳամաղիէլ. Ասա՛ ինձ վարդապետ, կի՞նչ արարից զմանուկն զայն։ Ասէ Գամաղիէլ. Դու գիտես, արա զի՛նչ և կամիս։ Ասէ Յովսէփ. Տրտում եմ վասն նորա մինչեւ ի մահ։ Ասէ Գամաղիէլ. Եւ ո՞չ իսկ յառաջ ասացի քեզ՝ յորժամ տեսի զնա, եթէ տուր յայլ արուեստ իմաստութեան գործոյ, զի ուսանիցի. և դու ոչ լուար ինձ։ Ասէ Յով-

ռէփ. յո՞ր արուեստ տաց զնա: Ասէ Գամաղիէլ. Ուսո՛ նմա զարուեստ հիւսնութեան քո՛ զոր առնես: Ասէ Յովսէփ. Բարիոք ասացեր: Եւ յարուցեալ Յովսէփ երկիր եպագ նմա: Ասէ ցնա Գամաղիէլ. Տէր դու, մի՛ տրտմիր, երթ լռութեամբ ի տուն քո, և Աստուած հոգասցէ վասն նորա զամենայն ինչ՝ զոր խնդրես:

Եւ իբրև գնաց ի տուն իւր. և ետես զմանուկն Յիսուս նստեալ և տախտակն ի ձեռին իւրում: Ասէ ցնա Յովսէփ. Որդեակ, ուսա՞ր զամենայն ինչ և կատարեցե՞ր: Ասէ Յիսուս. Այո՛, ուսեալ եմ զամենայն ինչ և կատարեալ, և կամիմ լինել վարդապետ տղայոց: Ասէ Յովսէփ. Գիտեմ որ ոչ կամիս ուսանել ինչ, եկ արա զարուեստ հիւսնութեան, զկոփ, զտաշ, զձեւ և զօրինակ՝ որպէս և ցուցից քեզ: Ասէ Յիսուս. Այո՛ ես արարից, բայց յառաջ հրամայեա և ծանո զիս զի գիտացից: Եւ Յովսէփ սկիզբն էր արարեալ՝ շինել թագաւորին տախտս գեղեցիկս, մեծ վանդակաւ քանդակեալ, նկարօք զարդարեալ, և մի բազրոտան փայտն պակասէր՝ և ո՛չ գոյր. և Յովսէփ մտաւած[1] եղեալ ասէր, եթէ զի՞նչ արարից: Ասէ Յիսուս. Զի՞նչ խորհել ես առնել զայդ: Ասէ Յովսէփ. Եւ քեզ զի՞ փոյթ է. ա՛ռ զտուրն և կոփեա զբազրոտդ զայդ, կարգաւ՝ ի վերուստ մինչև ի վայր. և արասցես զդա ուղղորդ չորեքկուսի, քառաձեւ: Ասէ Յիսուս. Այո՛, ես արարից զոր հրամայես. բայց պատմեա՛ ինձ եթէ զի՞նչ կամիս առնել զդա, որ այդպիսի հնարօք ձեւացուցանես զդա լարիւ կարկնաձեւ չափով: Ասէ Յովսէփ. Երիցս անգամ հարցանես ցիս, զի ոչ կարիցես ճանաչել և իմանալ զգործս զայս. այլ արա զհրամայեալսն զոր ցուցից քեզ: Ասէ Յիսուս. Ես յաղագս այնորիկ հարցանեմ և քննեմ, զի ուսայց զճշմարիտն: Ասէ Յովսէփ. Կամիմ յաղագս թագաւորին տախտ շինել արքունական, և մի բազրոտան փայտն պակաս իցէ: Ասէ Յիսուս. Ցոյց ինձ զի տեսից: Եւ Յովսէփ ասէ. Այս իսկ է փայտն որ եդեալ կայ առաջի քո: Ասէ Յիսուս. Ո՞ր-

1. Գուցէ մտաւորն:

չափ թզաւ իցէ երկայնութիւն սորա։ Ասէ Յովսէփ. Երկոտասան թիզ պիտոյ է միւս կողմանն՝ նոյնպէս և միւսոյն։ Ասէ Յիսուս. Ո՞րչափ է երկայնութիւն դորա։ Ասէ Յովսէփ. Հնգետասան թիզ։ Ասէ Յիսուս. Բարիոք ասացեր. լո՛ւր, և արա զգործդ զոր առնես, և մի՛ երկմտիր։ Եւ Յիսուս առեալ զտապարն ի ձեռինն, և եհար երիցս անգամ զփայտն՝ որ էր հնգետասան թիզ, և եհատ սրով ընդ մէջն և բաժանեաց զնա ընդ երկուս մասունս, և եդ սուրն ի վերայ փայտին և նստաւ։ Ասէ Մարիամ. Որդեակ, կատարեցե՞ր զգործդ զոր սկսար առնել։ Ասէ Յիսուս. Այո՛ կատարեցի։ Եւ զայս ասացեալ Յիսուսի, զայրացեալ յոգի իւր ասէ ցմայր իւր. Ընդէ՞ր այդչափ մեծաբանեալ էք ի վերայ իմ, և յամենայն գործ բռնադատէք զիս արկանել. զի՞նչ արդեւք պիտոյ է ինձ ուսանել, և կամ ձեզ զի՞ փոյթ է հոգալ վասն իմ, որ այդչափ տրտմութեամբ լցեալ էք և խռովեալ։ Եւ զայս ասացեալ Յիսուսի լըռեաց։

Իսկ Յովսէփ դարձեալ ի յետս կոյս, տեսանէր ըզփայտն ընդ երկուս մասունս հատեալ, ասէ. Որդեակ, զի՞նչ է այս զոր արարեր այսպիսի մեծ վնասու գործ։ Ասէ Յիսուս. Եւ զի՞նչ արարի, ասա ինձ։ Ասէ Յովսէփ. Միւս փայտ պակասէր, և միւսոյն կար ի յաւել, ընդէ՞ր այսպիսի հատեր զփայտն որ ոչ լինիցի երկոցունց կողմանցն։ Ասէ Յիսուս. Եւ զի՞նչ վնաս արարի. միւս փայտ պակասէր՝ զոր ասես, և միւսոյն կար ի յաւել. վասն այնորիկ հատի ընդ մէջն, զի երկոցունց կողմանցն լինիցի։ Ասէ Յովսէփ. Այդ ո՞րպէս իցէ։ Ասէ Յիսուս. Մի՛ յաղագս այդորիկ տրտմիր, ա՛ռ զերկուց կողմանց բազրոտն և չափէ զմի մի ի նոցանէ՝ և իմասցիս։ Եւ առեալ զմի փայտն չափեաց և էր թիզս երկոտասան, դարձեալ չափեաց և զմիւս այլ փայտն նոյն չափով, և ո՛չ ինչ եղեւ պակասութիւն փայտին, այլ զհնգետասան թիզ փայտն՝ թիզ քսան և չորս, երկոտասան երկոտասան թիզս՝ հատեալ ի միմեանց։ Եւ Յովսէփ զայն տեսեալ զարմացաւ յոյժ և երկեաւ ի նմանէ։ Զայս արարեալ Յիսուս նշանս

Digitized by Google

առաջի Յովսեփայ և Մարիամու մօր իւրոյ։ Եւ ինքն ել վազվազակի ի տանէ անտի, և գնաց առ մանկունս քաղաքին ուր ժողովեալ էին։

Իբրեւ տեսին զնա ամենեքեան, գային խնդութեամբ ընդ առաջ նորա, և անկեալ երկիր պագանէին նմա, հարցանէին զնա և ասէին. Ո՛ բարի մանուկդ Յիսուս, ասա մեզ այսօր զի՞նչ արասցուք։ Ասէ Յիսուս. Եթէ լսէք ինձ և հնազանդ լինիք հրամանաց իմոց՝ զոր ինչ ասացից ձեզ՝ բարիոք առնէք։ Ասեն միաբան. Այո՛, մեք ամենեքեան առաջի քո հաւանեալ եմք, և լսող բանից հրամանաց քոց՝ որպէս և կամիս։ Ասէ Յիսուս. Մի՛ զոք բռնութեամբ հարկանէք, և մի՛ ումեք չարի չար հատուցանէք. այլ սիրով ընկերք լերուք և եղբարք միմեանց, և ապա ես ինքն եկեալ հաճութեամբ սրտիւ եղէց ընդ ձեզ։ Եւ նոքա զիրկս արկեալ համբուրէին զնա, և ողջոյն տուեալ, փարէին զնովաւ և ուրախ լինէին։ Եւ էր անդ պատանեակ մի երկոտասանամեայ, և յառաւել ցաւոց գլխոյն, և ի սաստիկ նեղոյն՝ լոյս աչացն պակասեալ էր. և ոչ կարէր համարձակ գնալ՝ եթէ ոչ ոք կալեալ զձեռանէ նորա առաջնորդէր նմա։ Եւ Յիսուս հայեցեալ ի նա՝ գթացաւ ի վերայ նորա, եդ զձեռն իւր ի վերայ գլխոյ նորա, և փչեաց ընդ ունկն նորա. և նոյն ժամայն բացան աչք նորա և տեսանէր ուղիղ։ Իսկ տղայքն որ անդ էին, իբրեւ տեսին զեղեալ գործն, ճիչ բարձեալ մանկանցն երթային ընդ մէջ քաղաքին, և ցուցանէին զնշանս սքանչելեացն որ եբաց զաչս կուրին, և գային բազումք ի քաղաքէն տեսանել զնա՝ և ոչ գտանէին, զի Յիսուս խոյս տուեալ ի մարդկանէ անյայտ լինէր, զի մի՛ ոք տեսցէ։

Իսկ յետ անցանելոյ աւուրց ինչ՝ առեալ Յովսէփ զտախտն զոր արար՝ շինեալ և նկարեալ, տարեալ եդ առաջի արքային, և խոնարհեալ երկիր պագանէր նմա։ Իբրեւ ետես արքայն զգործս ձեռաց իւրոց, զոր առեալ էր՝ հաճեցաւ և ուրախ եղեւ։ Եւ ասէ ցնա. Բարի՛ եկիր առ մեզ, պատուական ծեր, սիրով և ուրախութեամբ խնդա այսուհետեւ և ուրախ լեր ընդ մեզ.

Digitized by Google

և կաց հաստատուն և միամիտ ի տեղիս յայս, և ես հանեցուցից զմիտս քո, և զքեզ ուրախ արարից։ Եւ եդեալ առաջի իւրեանց սեղան, կերան, արբին և ուրախ եղեն։ Եւ հրամայեաց արքայն տալ նմա ինչս ստացուածոց ի պէտս կերակրոյ որչափ և բաւական իցէ· և նա առեալ խնդութեամբ գնաց ի տուն իւր։ Ապա ի միում աւուր հրամայեաց Թագաւորն հրաւիրել և կոչել զՅովսէփ հարկօք՝ ի ժամու ճաշոյ ընթրեացն, և այլ իշխանայք և մեծամեծք ընդ նմին։ Եւ իբրեւ կերան, արբին և զմայլեցան, և ուրախ եղեն, ասէ Թագաւորն ցՅովսէփ· Տէր դու, խնդիրս ինչ ունիմ զի արասցես դու։ Ասէ Յովսէփ· Հրամայեա արքայ զկամս քո զի՞նչ արարից։ Ասէ արքայն· Կամիմ զի շինեսցես ինձ ապարանս գեղեցիկս, վերնատուն մի բարձր, և մեծ յոյժ· և զլայնութիւն և զերկայնութիւն նորա միաչափ արասցես· և շուրջ զնովաւ գահոյս աթոռս և բազմականս, և ի չորից կողմանց դրունս երկբացիկս, և զարդարեսցես զնա նկարօք քանդակեալ վայելչութեամբ· և զսիւնագլուխս նորա արասցես յամենայն կերպարանս ի նմանութիւն կենդանեաց, և զկտի և զտաշ նորա սրբաքերս արասցես վանդակաւ· և զել և էջ նորա սանդղաձեւ արասցես բեւեռապինդ գամօք, և զոր ինչ հանճարեղութիւն մտաց նկարակերտից ի նմա արասցես, և զքանակ փայտից սեռիցն քառակուսի արասցես· զտեսակն զձեւն և զօրինակն և զնմանութիւն, և զգումբեթ երկնիցն ի վերոյ քաղելով գործեսցես, ի նմանութիւն տաճարի յօրինեալ հաստատեսցես, որպէս և դու իսկ կարի քաջ գիտես, որպէս վայել է Թագաւորաց առնել· և զամենայն պէտս մարմնոյ, և զվարձս աշխատանաց քոց կրկին հատուցից քեզ ուրախութեամբ· մի՛ երկնչիր։ Ասէ Յովսէփ· Այո՛ արքայ՝ ես արարից զհրամանս քո որպէս և կամիս՝ ուրախ լեր· բայց հրամայեա բերել զփայտն ի յանփուտ փայտից առաջի իմ, զի տեսից· և արս զօրաւորս և գործակալս և հմուտ արուեստի, որ գիտեն առնել տաշ և կոփ զոր ցուցից նոցա· և զամենայն ինչ պատուական առնել։ Ասէ արքայն· Այո՛, ես արարից զամենայն՝ որ ինչ պիտոյ իցէ։

Digitized by Google

Եւ զայս ասացեալ յարուցեալ Յովսէփ, երկիր եպագ արքային, և գնաց ուրախութեամբ ի տուն իւր: Եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ եկն առ թագաւորն և երկիր եպագ նմա: Ասէ արքայն. Ահա պատուական, արարի[1] զոր ինչ հրամայեցեր առնել, ամենայն ինչ պատրաստ է: Ասէ Յովսէփ. Կամք քո լիցին:

Ապա յարուցեալ թագաւորն ա՛ռ ընդ իւր սուս իշխանս և մեծամեծս, և Յովսէփ ընդ նմա. և գնացին ի տեղի մի վայելուչ և գեղեցիկ, որ էր մարգագոյն սահման և ջրաժողով, և բազում ակունս աղբիւրաց բխէր անտի, և բլուր մի բարձրագոյն յեզր ջրին: Եւ հրամայեաց թագաւորն անդ ցուցանել նմա զգիրս տաճարին: Եւ առեալ Յովսէփ զլար ճարտարութեան ի ձեռին իւրում, և չափեաց զերկայնութիւն և զլայնութիւն հաւասար՝ որպէս և հրամայեաց նմա արքայն: Եւ ասէ Յովսէփ. Ո՛վ արքայ, հրամայեա բերել քարագործս՝ զի արկցէ անդ հիմն խորագոյն, և շինեսցեն անդ տուն հաստատուն ամրագոյն, լայնութեամբ պարսպաւ որչափ կամք քո լիցին բարձրութիւն տանն, և ապա զշինուած տաճարին ի վերայ նորա արարից: Ասէ արքայն. Այո՛, և զայն եւս արարից: Եւ իբրև հրամայեաց արքայն կատարել զգործն զոր ասաց Յովսէփ. և ապա սկսեալ նորա չափեաց զլայնութիւն և զերկայնութիւն փայտիցն, զձեւն և զօրինակն կոփեալ տաշեաց, զոմանս քառակուսի, և զոմանս բոլորքանդակ: Եւ սկիզբն արարեալ շինութեան ի վերայ հիման սեղւոյն: Եւ իբրև կամեցաւ ձգել ի վերոյ ըզպարզունակն՝ մի փայտն ձեւացեալ կարի կարճ եղեւ, և փոքրագոյն և ոչ հասանէր: Եւ տրտմեցաւ Յովսէփ և ո՛չ գիտէր զի՛նչ առնէր, այլ ի տարակուսանս եղեալ զմտաւ ածէր, և յոյժ ամաչէր ի թագաւորէն. եթէ զի՞նչ արարից, զի այլ փայտ ոչ գոյ աստ: Եւ նոյնժամայն եկեալ թագաւորն և ետես զՅովսէփ նստեալ տրտում. ասէ արքայն: Ընդէ՞ր յոյժ խռովեալ ես և նստիս դատարկ: Ասէ Յովսէփ. Տե՛ս, թէ ինչ վնաս

1. Յօր. արա՛ էր ուղղեցաք արարի:

գործեցաւ սաստ՝ որ բազում աշխատութեամբ և մեծաւ ջանիւ կատարեցի զամենայն գործ հաստատուն, և ապա զփայտս զայս բազում հնարօք կազմեալ, և այժմ թերի և պակաս եղեւ։ Ասէ թագաւորն. Մի՛ ամաչեր յինէն, և մի՛ տրտմիր, ես այլ փայտ տաց բերել լաւագոյն։

Զայս իբրեւ խօսէր թագաւորն ցՅովսէփ, եկն Յիսուս և եկաց ի մէջ նոցա, և խոնարհեալ երկիր եպագ արքային։ Ասէ արքայն. Բարի եկիր գեղեցիկ մանուկ, հօր միածին որդի անդրանիկ։ Ասէ Յիսուս. Ընդէ՞ր տրտում նստեալ կայք աստ դատարկ և պարապորդ։ Ասէ արքայն. Ո՛ մանուկ դու, ամենայն ինչ գործ կատարեալ եղեւ՝ որպէս և տեսանես իսկ, և մի ինչ պակասէ։ Ասէ Յիսուս. Ո՞ր գործ։ Ասէ արքայն. Հայեաց և տես աչօք քովք զքանդակ փայտիդ՝ որ կարճ է և փոքրագոյն, և ոչ հասանէ, և այլ փայտ ոչ գոյ։ Ասէ Յիսուս ցՅովսէփ. Բուռն հար զատանէ փայտիդ և պինդ կալջիր։ Եւ թագաւորն հայեցեալ ի Յիսուս ասէ. Զի՞նչ կամիս առնել։ Եւ թուէր նմա եթէ ընդ ծաղր ինչ խաղ արկեալ կամիցի առնել։ Եւ Յիսուս կալեալ զմի տուտն փայտին, և ասէ ցՅովսէփ քարշել ուղորդ, զի մեկնեսցի պակասութիւն փայտիդ և կեցցէ՛. և թուէր յաչս ամենեցուն ծաղր գործել։ Եւ Յովսէփ հաւանեալ կամացն Յիսուսի՝ ձգեաց զձեռն իւր և կալաւ զատանէ փայտին։ Եւ Յիսուս ասէ. Պինդ կալ և քարշէ զփայտդ, զի երկայնասցի. և արար Յիսուս առժամայն զփայտն յաւել թիզս երիս։ Իբրեւ ետես արքայն զոր արար Յիսուս, զարմացաւ յոյժ և երկեաւ ի նմանէ, և երկիր եպագ Յիսուսի. և համբուրեաց զնա, և զգեցոյց զնա զգեստ արքունական. թագ կապեաց ի գլուխ նորա, և ծիրանեօք զարդարեաց զնա, և մեծաւ պատուով առաքեաց զնա առ մայր իւր։

Եւ Յովսէփ կատարեաց զամենայն գործ շինուածոյն զոր առնէր. և տեսեալ արքայն յոյժ ուրախ եղեւ, և շնորհեաց նմա բազում ինչս ոսկոյ և արծաթոյ, և այլ մարմնական կարեաց պիտոյից՝ զոր ինչ և հաճոյ թուե-

Digitized by Google

ցաւ նմա. և արձակեաց զնա խաղաղութեամբ ի տուն իւր: Իսկ մանուկն Յիսուս երթեալ շրջէր հանապազ ընդ տղայսն և ընդ փողոցս քաղաքին՝ տեսանել ըզնոսա: Եւ մանկունքն որ գային առ նա՝ մեծաւ սիրով ողջոյն տային նմա, և զոր ինչ հրամայէր նոցա՝ փութով զայն կատարէին:

Եւ եղեւ յաւուր միում ելեալ Յիսուս երթայր ընդ մէջ քաղաքին՝ լռութեամբ ի ծածուկ, զի մի՛ ոք գիտասցէ: Եւ պատանեակ մի ետես զնա յանկարծակի և ծանեաւ, և բուռն հարեալ յետոյ կալաւ զնա, և ճիչ բարձեալ ասէ. Ահա տեսէք ամենեքեան, այս է մանուկն Յիսուս՝ որդի ծերոյն, որ այսպիսի զօրութիւն և սքանչելիս առնէ. և դեւն հարեալ զնա անդէն վաղվաղակի զարկաւ զգետնի, և Յիսուս եղեւ ի նմանէ աներեւոյթ. և պատանին այն այնչափ լլկեալ եղեւ յայսոց չարաց՝ որ անկեալ եղեւ իբրեւ զմեռեալ ըզժամս երիս: Եւ ծնողացն հասեալ անդ լալով մեծաւ և երկիւղիւ, յարուցին զնա, և շրջեցան ընդ ամենայն քաղաքն խնդրել զՅիսուս, և ոչ գտանէին: Ապա գնացեալ լալով առ ծերունին Յովսէփ, զի եկեալ Յիսուս բժշկեսցէ զմանուկն յայսոց չարաց: Ապա իբրեւ ծանեաւ Յիսուս զխորհուրդս նոցա՝ եթէ զանձին իւրոյ զփրկութիւն խնդրէ, անդէն ի նմին աւուր յայտնեաց Յիսուս զանձն իւր մանկանն այնմիկ, և նորա անկեալ առ ոտսն Յիսուսի խնդրէր զթողութիւն մեղաց իւրոց. և Յիսուս եդ ձեռն ի վերայ նորա և բժշկեաց զնա:

Եւ եղեւ յետ բազում աւուրց ինչ անցանելոյ, ելեալ Յիսուս գնաց ըստ սովորութեան իւրում ի տեղի խաղու, ուր մանկունք ժողովեալ էին անդ. իբրեւ տեսին զնա ամենեքեան՝ յոյժ ուրախութեամբ սիրով ընկալեալ ընդունէին զնա մեծաւ պատուով:

Ասէ Յիսուս. Զի՞նչ զմտաւ ածեալ խորհիք առնել այսօր: Ասեն. Եկայք արասցուք զքեզ և Զինոն զորդի թագաւորին զօրագլուխ ի վերայ մեր. և բաժանեսցուք զմանկունս հաւասար յերկոցունց կողմանց, միւս դասն քեզ, և միւսն՝ որդւոյ թագաւորին. և ելցուք

հաւասար ի խաղ գնդին, և տեսցուք եթէ որ կողմն յաղթէ և զգունդն ի դարէ ի դար վարէ։ Ասէ Յիսուս. Բարիոք ասէք, և ամենեցուն հաւանեալ երկոցուն կողմանցն։

Եւ էր ի տեղւոջն յայնմիկ հին աշտարակ մի մեծ յոյժ՝ բարձր պարսպաւ, և մանկունք քաղաքին հանապազ առաջի նորա ժողովեալ լինէին ի տեղի խաղու։ Ասէ Յիսուս. Եւ զի՞նչ խորհել ես այժմ և կամիս առնել արդ՝ որպէս հաճոյ թուի քեզ։ Ասէ Զինոն. Եկայք կրկին անգամ բաժանեսցուք զողայս և զմանկունս միաբան, և ապա ելցուք հաւասար ի խաղ գնդին։ Ասէ Յիսուս. Արա՛ որպէս և կամիս. և Զինոն ժողովեալ զմանկունսն և զողայսն առաջի իւր, և բաժանեաց զնոսա յերկուս դասս, և ապա ելին յառաջ հարկանել զգունդն։ Եւ իբրև Զինոն առեալ զառաջնոյ տանէր զխաղն, և յանկարծակի ճոկանովն հարեալ զգունդն, թռեալ վերացաւ և բարձրացաւ յոյժ գունդն, և անկաւ ի վերայ աշտարակին, որ էր դժուարին կարի ելն և էջն։ Եւ ելեալ Զինոն որդի թագաւորին զի առցէ զգունդն. և Սաւուղ որդի Զաքարիայ մեծատան՝ ել վաղվաղակի փութով զկնի նորա, և երկոքումբք ձեռամբն հարեալ յետոյ ճոկանովն զծոծրակն նորա, և ընկեաց զնա ի վայր ի բարձրութենէ անտի՝ և մեռաւ. և փախեաւ ինքն և ամենայն ընկերքն որ անդ էին, և Յիսուս ընդ նոսա, թագեաւ ի նոցանէ և եղև աներևոյթ։ Ապա ճիչ բարձեալ ի քաղաքին յայնմիկ ընդ ամենայն տեղիս և առէին. Տեսէք ամենեքեան և լուարուք, զի ահա մանկունքն սպանին անդ զորդի թագաւորին։ Իբրև լուան զայս ամենայն բնակիչք մարդկան, միաբանեալ առհասարակ անդր հասանէին, թագաւորն, իշխանք, մեծամեծք, գլխաւորք, աւագանիք, զօրագլուխք և զօրապետք և զօրքն ամենայն, ազգայինքն և ծանօթքն, ծառայքն և աղախնայքն, արք և կանայք, մերձաւորք ի մօտաւորաց և հեռաւորաց՝ որք լսէին՝ ընթացեալ փութով անդր հասանէին լալով և կոծելով, սուգ մեծ առեալ ողբային ի վերայ նորա. և մանուկն Զինոն՝ էր

Digitized by Google

ամաց ինունց և ամսոց երից. և իբրեւ անցանէր ժամ երեք լալոյ, սգոյ և կոծանաց, ապա խնդիր արարեալ Թագաւորին՝ և այլ զօրացն ամենեցուն՝ քննել և հարցանել զմիմեանս, եթէ ո՛ գործեաց այսպիսի վնաս մահու կորստեան։ Ասեն միաբան. Ո՛չ ոք գիտէ զայս գործս որ եղեւ՝ եթէ ոչ մանկունք քաղաքիս՝ որ անդ ժողովեալ էին։ Եւ ապա հրամայեաց Թագաւորն բառնալ զորդի իւր և տանել ի պաղատն արքունական։ Եւ առաքեաց ժողովել զամենայն մանկունս քաղաքին ի մեծէ մինչեւ ի փոքունս, և բերեալ կացուցանէին առաջի իւր։ Եւ իբրեւ եկին, սկսաւ Թագաւորն յառաջ ողոքանօք խօսել ընդ նոսա, և ասէ. Ասացէք ինձ որդեակք իմ և մանկունք իմ. ո ի ձէնջ արար զվնասն զայն. գիտեմ որ կամաւ ոչ արարիք, այլ յանգիտութենէ եղեւ։ Ասեն միաբան. Ո՛ Թագաւոր, բարիոք ասես։ Բայց ո՞ ոք ի մէնջ իշխէր առնել զայդ գործ անիրաւութեան՝ սպանանել զորդի Թագաւորի, և մատնել զանձն յանհնարին մահ և ի կորուստ։ Ասէ արքայն. Յառաջ ասացի ձեզ ողոքանօք լսել ինձ, և այժմ դարձեալ կրկին անգամ զնոյն ասացից. մի՛ բարկութեամբ և ցասմամբ մեծաւ զայրացուցանէք զսիրտ իմ. զի այժմ ո՛չ ունիք յինէն ահ և երկիւղ մահու, այլ զճշմարիտն ասացէք. ո՞ արար զգործն զայն, և զորդին իմ տարաժամ դառնամահ արարեալ կորոյս, եթէ ոք զնա յայտնի ցուցանէ ինձ, հաւասար մեծութեան իմոյ աթոռակից արարից զնա, և զազգայինս նոյնպէս պատուով փառաւոր արարից իշխանութեամբ։ Ասեն տղայքն. Ո՛ Թագաւոր բարիոք ասես զոր հրամայեցեր. բայց զոր ինչ հարցանես մեզ ստուգապէս զնոյն ասասցուք՝ որ ո՛չ գիտեմք թէ ո՛ մանուկ արար։ Ասէ Թագաւորն. Մի յերկոցունց կայ առաջի ձեր, ընտրեցէք ի ձէնջ զկեանս առաւել քան զմահ, և մի՛ տարաժամ մեռանիք. երկերո՛ւք ի չարչարանաց և ի դառն նեղութեանց զոր ածելոց եմ ի վերայ ձեր, և ի վերայ հարց և մարց ձերոց. ասացէ՛ք հաւաստեաւ զճշմարիտն, զի մի մահու մեռանիցիք։ Եւ նոքա ասեն. ամենեքեան առաջի քո եմք, զոր ինչ առնել կամիս՝ կամք քո լիցի։

Digitized by Google

Յայնժամ հրամայեաց արքայն հանել զամենն մանկունսն արտաքոյ դրանն, և բերեալ անդ բազում գանձս ոսկւոյ և արծաթոյ և դնել առաջի իւր. և հրամայեաց դահճապետին բերել զսուրն պողովատիկ և շողացուցանել ի վերայ մանկանցն որք մտանէին անդ առնուլ ի գանձէն: Եւ ասէ արքայն. Որ ոք անմեղ իցէ՝ մտցէ առցէ ի գանձէն և արտաքս ելցէ և ոչ երկիցէ ի սրոյն: Եւ իբրև զամենայն մանկունսն մի մի մտանել առեալ նոցա անահ ի գանձէն և ելեալ նոցա ի տեղւոջէ անտի և ոչ երկեան ի սրոյն: Եւ իբրև եմուտ այն որ սպանողն էր մանկանն, և ետես զսուրն շողացեալ ի ձեռն դահճին. առժամայն ահ և դողումն կալաւ զնա, և երկուցեալ ի սրոյ անտի, ոչ կարէր կալ ի վերայ ոտից իւրոց. այլ անդէն զարկաւ զգետնի:

Ասեն ցնա. Ասա մեզ. Ընդէ՞ր երկեար: Ասէ մանուկն. Համբերեցէք ինձ առ սակաւ մի, զի ուժ առեալ զօրացայց. և նոքա թողլ ետուն և ասեն. Ասա մեզ մի՛ երկնչի՞ս[1] ի տեսութենէ սրոյն: Ասէ մանուկն. Այո՛, յոյժ երկնչիմ եթէ սպանանէք զիս: Ասէ արքայն ցդահճին. Ած անդրէն զսուրն ի պատեանս իւր, զի մի՛ երկիցէ. և իբրև անց ժամ մի, յարուցեալ ասէ. Այո՛ արքայ, գիտէի ես յառաջ սպանող[2] որդւոյ քո եթէ ո՛ էր. բայց խեղճ համարէի ասել զնա քեզ անուամբ: Ասէ արքայն. Ասա Որդեակ, մի՛ երկնչիր, զի լաւ է որ մահապարտն մեռանի՝ քան անմեղն: Ասէ մանուկն այն. Ո՛ թագաւոր, զմանուկն քո՝ մանուկն Յիսուս եսպան որդի ծերոյն:

Իբրև լուաւ զայս արքայն, հիացեալ զարմացաւ յոյժ, և հրամայեաց կոչել զՅիսուս բռնութեամբ առաջի իւր. և իբրև գնացին ամենեքեան ոչ գտին զնա, բայց միայն զՅովսէփ, և բերեալ կացուցին առաջի ատենին. խոնարհեալ երկիր եպագ արքային: Ասէ արքայն. Տէր դու, բարիոք արարեր դու մեզ այսօր բարի փոխարէն՝ զոր մեք ձեզ արարաք, յաղագս ընդունելութեան սիրոյ ձերոյ կրկին հատուցիք մեզ:

1. Յօր. էր՝ Վ Խրխնչէր:
2. Յօր. պակասէր բառս սպանող:

Digitized by Google

Ասէ Յովսէփ. Ո՛ արքայ, աղաչեմ զքեզ, մի՛ հաւատար ումեք վայրապար բանից ասացելոց, և մի՛ անմեղութեամբ բարկանար ի վերայ մեր, և ի զուր դատեր զմեզ, զի չեմք պարտական արեան որդւոյ քո։ Ասէ արքայն, Գիտէիր յառաջ զբարս անձնիշխանութեան կամաց քոց, և զընութիւն անհնազանդութեան որդւոյ քո, և եկիր այսր առնուլ հրաման յառաջապատրաստ լինել, որ զոր ինչ կամք քո լինէր՝ զայն կատարէիր։ Ասէ Յովսէփ. Ո՛ արքայ, մի՛ այդպէս սըտութեան բանից հաւատար, և մի՛ առանց ուրուք վըկայից յանդիմաներ զմեզ, զի զոր ասես՝ ո՛չ գիտեմք։ Ասէ արքայն. Ո՞ւր է մանուկն քո, բեր կացո առաջի իմ զի տեսից։ Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէր, որ ոչ գիտեմ։ Ասէ արքայն. Բարիոք ասես, զվնաս մահու գործէք և դուք փախստական լինիք ի տեղւոջէ անտի։ Եւ հրամայեաց թագաւորն զգուշութեամբ պահել ըզՅովսէփ, և ասէ. Գնացէք շրջեցարուք ընդ ամենայն քաղաքս, մինչեւ գտանիցէք զմանուկն Յիսուս, կալարուք զնա և զգուշութեամբ բերէք առաջի իմ։ Եւ գնացեալ շրջեցան ընդ ամենայն տեղիս խնդրել զՅիսուս, և ոչ գտին. և եկեալ պատմեցին արքային։

Ասէ արքայն ցմեծամեծս իւր. Զի՞նչ արասցուք ըզծերն զայն. զի զմայրն հանդերձ մանկամբն փախուցեալ է, և ո՛չ գտին զնա։ Ասեն իշխանքն. Հրամայեա ածել զծերն զայն առաջի մեր՝ և չարչարել, զի նա գիտէ զմանուկն և զմայր իւր։ Ասէ արքայն. Այո, բարիոք ասէք. ոչ եդից զորդի իմ ի գերեզմանի, և ո՛չ ինչ ճաշակեցից՝ մինչեւ զարիւն մանկանն այնմիկ ընդ արեան որդւոյ իմոյ փոխանակեցից։ Եւ մինչդեռ զայս խօսէր արքայն և զմտաւ ածէր վասն Յովսեփայ, և խորհէր ի միտս իւր թէ որով մահուամբ կորուսից զնա, ինքն իսկ Յիսուս եկն եկաց առաջի արքային, և խոնարհեալ երկիր պագանէր նմա։ Ասէ արքայն. Բարի եկիր մանուկդ Յիսուս, դահիճ և սպանող որդւոյ իմոյ։ Ասէ Յիսուս. Ո՛ արքայ, ընդէ՞ր այդչափ զայրացեալ ես, և սիրտ քո լցեալ է բարկութեամբ և սրտմտութեամբ և բռնութեամբ, և այլագունեալ ե-

րեսաք երեւիս ինձ. մի՛ այդպէս խօսիր անիրաւու-
թեամբ, զոր ոչ է արժան թագաւորաց և մեծամեծ
արքունեաց դատել զոք առանց վկայից: Ասէ արքայն.
Ասա ինձ ապա ո՞րպէս է բանս, որ բազում վկայիւք
եդին ի վերայ քո զվճիռ մահու: Ասէ Յիսուս. Յառաջ
քննեա՛, հա՛րց, փորձեա և իմացիր, և ապա արդարու-
թեամբ և իրաւամբք դատեա զամենայն ոք. և եթէ ես
արժանի եմ մահու՝ որպէս և օրէն է դատաւորաց առ-
նել զի՛նչ և կամիցին՝ արա՛ և դու: Ասէ արքայն. Մի՛
այդպէս բազմախօսութեամբ զմեզ յիմարեցուցանէր,
այլ զհաւաստիւն ասա՝ եթէ ո՛րպէս եղեր պատճառ
կորստեան որդոյ իմոյ: Ասէ Յիսուս. Եթէ հաւատաս
բանից իմոց, և լսես վկայութեան իմոյ զոր ասեմ, ան-
մեղ եմ ես ի գործոյդ յայդմիկ. և եթէ ի զուր կա-
միցիս դատել զիս, բե՛ր վկայ, կացո՛ առաջի իմ զի
տեսից: Ասէ արքայն. Այո՛, բարիոք ասես: Եւ նոյն-
ժամայն հրամայեաց վկայ կացուցանել զպանող որ-
դոյն իւրոյ. և երբեւ եկն, ասէ արքայ. Ասա՛ ինձ մա-
նուկ դու, ո՞րպէս վկայես վասն Յիսուսի: Ասէ մա-
նուկն. Այո՛, արքայ, ես վկայեմ զնմանէ հաւաստեաւ,
լուր ինձ և ես ասացից քեզ, բայց հրամայեա ինձ համ-
արձակ խօսել առաջի քո:

Ասէ արքայն. Ասա: Ասէ մահապարտն զՅիսուս. Եւ
ո՞չ իսկ տեսի զքեզ երէկ ի գունդ խաղին, և ունէիր
զճոկանն ի ձեռին քում, և ելեր ընդ նմա ի բարձրու-
թիւն պարսպին առնուլ զգունդն, և երկու ձեռամբդ
յետոյ հարեր զծոծրակ նորա, և ի բարձրութենէ աշ-
տարակին ի վայր ընկեալ սպաներ և փախեար ի տե-
ղւոջէ անտի: Ասէ Յիսուս. Բարիոք ասացեր: Իբրեւ
լուաւ զայս թագաւորն և իշխանքն և մեծամեծքն որ
ընդ նմա էին, և այլ ամենայն բազմութիւն ժողովոյն,
ասեն զՅիսուս. Առ այդ բանի զի՞նչ տայցես պատաս-
խանի: Ասէ Յիսուս. Եւ յօրէնս ձեր զի՞նչ է գրեալ
վասն այդորիկ: Ասեն միաբան. Յօրէնս մեր գրեալ
է, եթէ որ հեղու զարիւն մարդոյ՝ փոխանակ արեան
նորա հեղցի արիւն նորա: Ասէ Յիսուս. Բարիոք ա-
սէք: Ասէ արքայն. Հրամայեա ինձ՝ զի՞նչ արարից ըկ-

քեզ և կամ որո՛վ մահուամբ կորուսից։ Ասէ Յիսուս. Դու ես դատաւոր ամենեցուն, և ընդ իս զի՞ հարցանես զայդ։ Ասէ արքայն. Այո՛, գիտեմ արդարեւ և առնեմ զի՛նչ և կամիմ, բայց զճշմարիտն հարցանեմ որ արդարութեամբ և իրաւամբք դատեմ, զի մի՛ դատեցայց։ Ասէ Յիսուս. Եթէ կամիս օրինօք հարցանել ցիս վասն այդորիկ, անիրաւ դատաստան առնես և ոչ գիտես։ Ասէ արքայն. Եւ ընդէ՞ր։ Ասէ Յիսուս. Եւ զայդ ո՞չ գիտես եթէ ամենայն մահապարտ և յանցաւոր սուտ երդնու, որ երկնչի ի մահուանէ. և սոքա որ ի միմեանց վերայ վկայեն և երդնուն՝ կարի քաջ գիտեն զմեղապարտն թէ ո՛ իցէ։ Ասէ արքայն. Եթէ չես մեղապարտ՝ ընդէ՞ր այդչափ խօսօք յաճախ պատասխանի առնես, և զքեզ իրաւ համարիս և զնոսա սուտ առնես։ Ասէ Յիսուս. Գիտեմ և ես արդեւք սակաւիկ մի զպատճառ վնասուն, թէ ո՛ իցէ. բայց իւրաքա՛նչիւր ոք գործն առնէ և վկայէ յետոյ անձին իւրոյ, եթէ ո՛ իցէ պարտական մահու։ Ասէ արքայն. Զայդ ոչ գիտեմ զոր ասես. եթէ կամիս որ ճշմարտութեան բանից քոց հաւատամ, բե՛ր վկայ կացո անձին քում, և դու ազատ լինիջիր։ Ասէ Յիսուս. Եթէ արդարութեամբ խօսէին զբանն, ինքեանք գիտեն և վկայեն զանձնէ իմմէ որ անմեղ եմ։ Ասէ արքայն. Ինքեանք անձանց իւրեանց վկայութիւն տան և ոչ վասն քո։ Ասէ Յիսուս. Յաղագս այնորիկ սուտ վկայեն անիրաւութեամբ և երդնուն որ միմեանց բարեկամք են, և ես օտար և պանդուխտ, և անծանօթ ի քաղաքէս. և ո՞վ է սիրելի և բարեկամ ինձ՝ որ արդարութեամբ քննէ և իմանայ զարդար դատաստանն։ Ասէ արքայն. Կարի յաճախ ձանձրացացեր զիս, և ես ոչ կարեմ հանդուրժել սգոյ և կոծանացս և լալոյս։ Ասէ Յիսուս. Եւ զի՞նչ խնդրես յինէն զի արարից. ահաւասիկ մատնեալ եմ բազում վկայօք և անկեալ ի ձեռս քո. արա՛ ըզկամս հրամանաց քոց զոր և խորհիս առնել դու յիս։ Ասէ արքայն. Ընդէ՞ր այդչափ հակառակ խօսիս, ես զստոյգն հաւաստեաւ լսել կամիմ և իմանալ ի բերանոյ քումէ, եթէ վասն որո՞յ պատճառանօք բարու-

Digitized by Google

թեան մերոյ առ քեզ՝ չար ինչ հատուցիք մեզ։ Ասէ Յիսուս. Եթէ զայդ բանդ հաւաստեաւ քննել կամիս և իմանալ, ապա արդարեւ ճշմարիտ է դատաստան քո։ Ասէ արքայն. Որո՞յ դատաստան է արդար. որ վկայութի՞ւն ունի՝ թէ ոչ։ Ասէ Յիսուս. Որոյ վկայութիւն արդար լինի, դատաստան ճշմարիտ է։ Ասէ արքայն. Եւ որ զանձնէ իւրմէ ինքն վկայէ, պարտ է նմա առնել դատաստան եթէ ոչ։ Ասէ Յիսուս. Ո՛չ։ Ասէ արքայն. Ապա դու զի՞ վկայես զանձնէ քումէ եթէ անմեղ եմ։ Ասէ Յիսուս. Ո՛ արքայ, ասեմ քեզ եթէ յինէն վկայութիւն խնդրես, բե՛ր զայլ ոք վկայ կացո նոցա, և ապա լաւն և վատթարն ճանաչի թէ ո՛րպէս իցէ։ Ասէ արքայն. Օրէն է դատաւորաց առանց վկայից ոչ դատել զոք. Նոյնպէս և դու բեր վկայ կացո անձին քում՝ որպէս և նոքա, և ես հաւատամ։ Պատասխանի ետ Գամաղիէլ և ասէ. Ո՛ թագաւոր, աղաչեմ զքեզ լուր ինձ. արդարեւ անմե՛ղ է մանուկս այս, մի՛ ի զուր դատեր զդա անիրաւութեամբ։ Ասեն ամենայն բազմութիւնք ժողովոյն. Աշակերտ լեալ է նա քո՝ վասն այնորիկ այդպէս խօսիս վասն դորա։ Դարձեալ ասէ արքայն ցՅիսուս. Ո՞րպէս իրաւամբ դատեցից զքեզ, և կամ ո՞րպէս տանջանօք չարչարեցից զքեզ, և կամ որո՞վ մահուամբ կորուսից զքեզ։ Ասէ Յիսուս. Ընդէ՞ր այդպէս մեծաւ սպառնալեօք ահ արկանես, և կամ յաճախ կրկին բանիւք հարցանես ցիս. զի՞նչ ասացից քեզ, և կամ զի՞նչ խօսեցայց. եթէ աւանդութեամբ օրինօք դատես զիս, քեզ մեզ ինչ ո՛չ գոյ, ապա եթէ իշխանութեամբ և բռնութեամբ և առանց իրաւանց և դատաստանի ի մահ մատնես, մեծ դատաստան ընկալցիս ի Տեառնէ։ Ասէ արքայն. Բազում անգամ ներեցի քեզ համբերութեամբ՝ և դու ոչ երկեար յինէն, և ոչ ի սպառնալեաց իմոց զարհուրեցար. և այժմ յոյժ արտմեալ եմ մինչեւ ի մահ աշխատ առնել զիս. տո՛ւր ինձ վկայութեամբ պատասխանի, և դու զերծիր ի մահուանէ։ Ասէ Յիսուս. Ասա արքայ. զի՞նչ հրամայես ինձ առնել, ասա՛, ես զնոյն արարից։ Ասէ արքայն. Այժմ ողորմիմ քեզ, և խնայեմ ի հասակ

Digitized by Google

տղայութեան քո, և գթամ ի վերայ քո, զի որդի մեծատան իցես. և ես ոչ եւս կարեմ ժուժկալ լինել գթոյ որդոյ իմոյ աղետի։ Արդ, որդեակ, հայեաց ի քեզ և մի՛ ածեր զարիւն քո ի վերայ իմ և ի վերայ անձանց տանց և ընտանեաց. յայտնեա ինձ զճըշմարիտն, եթէ դո՞ւ իցես և եթէ այլ ոք իցէ։ Ասէ Յիսուս. Բազում անգամ ասացի քեզ և ոչ լուար ինձ և ոչ հաւատայցեր բանից իմոց. ես զանձնէ իմէ վըկայեմ և ոչ այլ ոք, և որ մահապարտն է՝ նա գիտէ։ Պատասխանի ետուն ամենայն մանկունքն, և ասեն. Ո՛ արքայ, լուր մեզ, գիտեմք զդա թէ ո՛ իցէ, և կարի քաջ ճանաչեմք, և ամենայն քաղաքացիքս վկայեն զմէնջ որ զամենայն մանկունս քաղաքիս ուր......[1] վաղվաղակի բաց զաչս քո և տես ո՞ է մանուկն այն որ սպան զքեզ։ Եւ յանկարծակի յարուցեալ որպէս ի քնոյ զարթուցեալ՝ նստաւ. և հայէր շուրջ և զամենեսեան տեսանէր, և զարմանայր ընդ բազմութիւն ժողովոյն որ անդ էր։ Եւ զայն տեսեալ ծնողացն, արանց և կանանց, մեծի և փոքու ճիչ բարձեալ լալով և խնդութեամբ գիրկս ածեալ համբուրէին, և ասէին. Որդեա՛կ, զի՞նչ եղեր դու, և կամ ո՞րպէս կաս։ Ասէ մանուկն. Բարւոք կամ։ Եհարց ցնա Յիսուս և ասէ. Պատանեա՛կ դու, ասա՛ ինձ, ո՞ եղեւ պատճառ կորըստեան մահուան քո։ Ասէ Զինոն. Տէր, դու ո՛չ ես արեան իմոյ պարտական, այլ Աբբիոն որդի Զաքարիայ մեծատան. նա ճոկանովն յետոյ եհար զգլուխ իմ, և ի բարձրութենէ անտի ի վայր անկեալ մեռայ։

Իբրեւ լուաւ զայս թագաւորն և այլ ամենայն բազմութիւն ժողովոյն, ահիւ մեծաւ տագնապեալ լինէին, և ամենեցուն երկուցեալ ի նմանէ՝ զարհուրէին և ասէին. Օրհնեալ Տէր Աստուած Իսրայելի որ առնէ հատուցումն և իրաւունս մարդկան զուրդար դատաստան. արդարեւ մանուկս այս Աստուած է և կամ առաքեալ է նորա։ Եւ Յիսուս ասէ ցարքայն. Ո՛ ամենաչար թագաւոր Իսրայելի, այժմ հաւատաս վկայու-

1. Աստանօր թուղթ անկեալ էր ի գրչագրէն։

թեան իմոյ որ անմեղ եմ։ Ահա ես վկայեցի զինէն՝ որ չեմ արեան որդւոյ քո պարտական. կարծէիր զինէն եթէ կախարդութիւն իմն առնէի արդեւք. ահա տես աչօք քովք զորդի քո՝ որ յարուցեալ վկայեաց զինէն, և զձեզ զամենեսեան յամօթ արար. այժմ ասացի քեզ յառաջ և կրկին և կրկին պատուէր արարի թէ՝ տես արքայ, մի՛ խաբիր ի բանից ստութեան, և մի՛ անմեղ մանկանց տղայոցդ հաւատար, և դու ոչ լուար ինձ. այժմ ապաշաւես չատ՝ դու և ամենայն քաղաքացիքդ, և ո՛չ ինչ օգտիք յինէն։ Պատասխանի ետ Գամագիէլ և ասէ. Ո՛ արքայ, յառաջ ասացի քեզ եթէ լուր ինձ, արդարեւ անմեղ է մանուկս այս, և դու ոչ հաւատացեր բանից իմոց՝ զոր ասացի։

Եւ կացեալ որդի թագաւորին կենդանի, զորն ամենայն նստեալ ի մէջ նոցա, խօսէր ընդ մեծամեծսն և ընդ իշխանսն, և պատմէր նոցա տեսիլ իմն և աքանչելիս մեծամեծս, և ամենեքեան ի մեծէ մինչեւ ի փոքունս եկեալ երկրպագէին որդոյ թագաւորին, և խընդութեամբ ողջոյն տային, մինչեւ ի մերձենալ երեկորեայ՝ հասանել գիշերոյն։ Ապա դարձեալ Յիսուս ասէ ցնա. Զինոն, որդի Բարէյեսու թագաւորի, ե՛լ ի մահիճս քո, ննջեա և հանգիր մինչեւ ի գալուստ արդար դատաւորին։ Եւ զայս ասացեալ Յիսուսի, յարեաւ Զինոն յաթոռոյ իւրմէ, և եդ զգլուխն ի մահիճս իւր և ննջեաց։ Եւ զայն տեսեալ ամենայն բազմութիւնք մարդկան զաքանչելի զգործն զոր արար Յիսուս, յահէ և յերկեղէ անտի՝ անկեալ յերկիր, և եղեն ամենեքեան առ ժամ մի անշնչացեալ որպէս զմեռեալ։ Եւ յարուցեալ ամենեցուն անկանէին առ ոտս նորա լալով և արտասուելով, աղաչէին զնա և ասէին. Կենդանացո՛ զմեռեալն զոր յարուցեր։ Եւ Յիսուս ասէ. Ո՛ թագաւոր, փոխանակ ողոքական և քաղցրութեան բանիցն զոր յինէն լուար և հաւատացեր, նոյնպէս և ես աղաչանաց և բարեխօսութեան ձերոց լուայց ձեզ. որ ոչ ոք ի քաղաքիս յայսմիկ միով բանիւ օգնական եղեւ ինձ, այլ ամենեքեան ժողովեցան ժողովք չարեաց, և ի մահ դատապարտեցին զիս, և ես յառաջ

Digitized by Google

ասացի քեզ ո՛ Թագաւոր, տե՛ս, յետոյ ապաշաւես և ինչ
ո՛չ օգտիս։ Ասէ Թագաւորն. Ես ոչ կարացի իմանալ
և ճանաչել զքեզ, եթէ ո՞ իցէ սա՝ որ մարմնով ի յերկրի
Աստուած երեւեալ՝ ունել իշխանութիւն ամենայնի՝ կե֊
նաց և մահու։ Ասէ Յիսուս. Ես վասն փառաւորու֊
թեան մարդկան ումեք՝ և ո՛չ վասն քո յարուցեալ կեն֊
դանացուցի զմանուկն զայն, այլ վասն այնչափ նեղու֊
թեան և նախատանացն զոր կրեցի ի ձէնջ. վկայ խըն֊
դրեցեր յինէն, և ոչ ոք եղեւ ինձ օգնական, զնա յա֊
րուցեալ վկայ կացուցի ինձ, և եցոյց զմահապարտն
թէ ո՛ր էր սպանողն իւր։ Ասէ արքայն. Լո՛ւր աղա֊
չանաց իմ և ամենայն բազմութեան ժողովոյս՝ և կեն֊
դանացո զորդին իմ։ Ասէ Յիսուս. Ես ի յումեքէ
ոչ երկնչիմ, և մարդկան ումեք չար ինչ ոչ արարի,
և ո՛չ եթէ յաղագս բարերարութեան արարի ես զայդ,
այլ յաղագս իմոյ վկայութեան, որ իմացար և ծանեար
զսպանող որդւոյ քո։ Ասէ Թագաւորն. Մի՛ բարկանար
ի վերայ մեր, և մի՛ հատուցաներ չար ինչ զոր արա֊
րաք քեզ։ Ասէ Յիսուս. Մի՛ այդչափ յաճախեր բա֊
նօք աղերսանօք խօսել ընդ իս, եթէ լուեալ էիր
բանից իմոց, կարող էի առնել քեզ զայդ յաղագս
բարերարութեան քո զոր արարեր մեզ. իսկ յորժամ
ոչ յիշեցեր և ոչ զմտաւ ածեր զգործ սքանչելեացն՝
զոր արարի առաջի քո ի շինուած տաճարին, որ զպա֊
կասութիւն թերութեան փայտին յաւել արարի, ըն֊
դէ՞ր ոչ հաւատացեր ինձ. այլ զամենայն բարութիւն
և պարգեւս ողորմութեանն քո զոր շնորհեցեր մեզ,
այլոց չար խօսօք վկայութեան՝ զամենայն կորուսեր։
Ասէ արքայն. Լո՛ւր ինձ, ո՛չ կարացի արդեւք յառաջ
զմտաւ ածել յառաւել. սգոյն և ի տրտմութենէ ան֊
ձին իմոյ. յոյժ ափշեալ և յիմարեալ եղէ, և ի բազ֊
մութենէ լալոյն և յամբոխէն մտակոյր եղեալ մո֊
ռացայ։ Ասէ ցարքայն Յիսուս. Եթէ պատճառ լեալ
էի կորստեան որդւոյ քո ի քաղաքիս յայսմիկ, մի ոմն
ի նոցանէ տեսեալ էր և վկայել զինէն, եթէ մահա֊
պարտ է. բայց ինքեանք գիտէին զսպանողն եթէ ո՛
իցէ և ոչ յայտնէին, մինչեւ մեռեալն յարուցեալ յա֊
մօթ արար զամենեսեան։

Եւ զայս ասացեալ Յիսուսի, եւ վաղվաղակի յամբոխէն և թագեաւ ի նոցանէ. և զՅովսէփ հանեալ ի բանդէն արձակեցին։ Գային բազումք խնդրել զՅիսուս և ոչ գտանէին. հարցանէին ցմիմեանս և ասէին. Ո՞ ետես զմանուկն Յիսուս զորդին Յովսեփայ, որ եեկեալ յարուցանէ զորդի արքային. շրջէին շուրջ ըզքաղաքաւն և ոչ գտանէին։ Եւ բազումք հաւատային յանուն նորա և ասէին, եթէ մարգարէ ոմն յարեաւ այսօր ի միջի մերում։ Եւ թագաւորն և ամենայն իշխանքն և բնակիչք քաղաքին կրկին սուգ մեծ առեալ ի վերայ մահուան որդոյ թագաւորին, և ընդ գնալն Յիսուսի առաւել յոյժ տրտմեցան։

Եւ ծերունին Յովսէփ և Մարիամ, երկուցեալ յարքայէն և ի զօրացն ամենեցուն՝ եթէ կալցեն զնոսա բռնութեամբ և տարցեն. և ելեալ նոցա ի գիշերին յայնմիկ գնացին գաղտ փախստեամբ ի քաղաքէն, և ոչ ոք իմացաւ զնոսա։ Եւ ի լուսանալն առաւօտուն յերթալն իւրեանց, ակն ածէին վասն մանկանն, զի տեսցեն զնա. և երեւեալ նոցա Յիսուս երթայր լռութեամբ զճանապարհս իւր։ Իբրեւ ետես զնա մայր իւր՝ արտասուելով ասէ. Ահա որդեակ, տեսեր զայդ ամենայն փորձութիւնդ որ եկն ի վերայ մեր, թէ ո՞րպէս վնաս մահու կորստեան եկն ի վերայ մեր, և անմեղութիւն անձին քո փրկեաց զքեզ. քանի՛ցս անգամ ասացեալ է իմ աղերսանօք, եթէ մի՛ երթիցես յանծանօթ և յայլ ազգ օտար՝ որ ոչ ճանաչեն զքեզ, ահա իբրեւ զմահապարտ և զյանցաւոր երկուցեալ ի գիշերի փախստական լինիմք։ Ասէ Յիսուս. Ո՛ մայր իմ, մի՛ տրտմիր, զի եթէ հալածեսցեն ի քաղաքէս յայս, փախիջիք ի միւսն։ Եւ զայս ասացեալ նոցա գնային խաղաղութեամբ զճանապարհս իւրեանց։ Եւ եկեալ հասեալ նոցա ի գեղ մի որ անուանեալ կոչի Բոսորա, և անդ կացեալ նոցա բազում աւուրս. և Յիսուս էր ամաց ութից և ամսոց տասանց։ Եւ Յիսուս մանուկն շրջէր զսահմանօք անտի, և ժողովէին անդ առ նա տղայք և մանկունք միաբան, և խօսէր ընդ նոսա և բազում բանիւք խրատ տայր նոցա քաղցրութեամբ

և ողոքանօք. ընկերաբար կոչէր զնոսա և նստուցանէր ընդ իւր, և ասէր. Մի՛ կռուիք և մի՛ վիճիք ընդ միմեանս. մի՛ ատէք զիրար խռովութեամբ, և մի՛ բարկութեամբ հարկանէք։ Եւ զայն լուեալ տղայոցն և անմեղ մանկանցն՝ ցանկանային հանապազ տեսանել զՅիսուս, և զկնի նորա շրջել։

Եւ յաւուր միում ժողովեալ նոցա, ելեալ գնաց ի հեռաւոր տեղի ուրեք, և մանուկ մի տղայ էր ընդ նոսա եկեալ, որ էր անձամբն խեղ, հաշմանդամ և միակողմանի, և էր գեղեցիկ տեսլեամբն և պատկերօքն վայելուչ, իբրեւ ամաց վեցից. և Յիսուս հայեցեալ ետես զնա, զի ոչ կարէր գնալ զկնի մանկանցն, գթացաւ ի վերայ նորա, կոչեաց զնա առաջի իւր, և ասէ ցնա. Կամի՞ս մանուկ դու, որ այժմ ողջացուցից զքեզ։ Եւ նա հայեցեալ ի Յիսուս, և արտասուեաց և ասէ. Այո՛, կամիմ. բայց ո՞վ բժշկեսցէ զիս։ Ասէ Յիսուս. Մի՛ լար։ Եւ կոչեաց զամենայն մանկունսն որ անդ էին, և ասէ. Առէք զմանուկդ զայդ, մեկնեցէք ի վերայ երկրի, և կալարուք իւրաքանչիւր յոտս և ի ձեռս դորա և պարզ քաշեցէք։ Եւ Յիսուս ելեալ եկաց ի վերայ մանկանն ոտօքն իբրեւ սուղ ժամս ինչ, և իջեալ անտի Յիսուս, ասէ ցնոսա. Թողէք զդա երթալ. Եւ յարուցեալ վաղվաղակի մանուկն գնաց խնդութեամբ ի տուն իւր։ Եւ այլ մանկունքն եկեալ յետոյ զկնի, և պատմեցին ամենեցուն զաքանչելիսն զոր արար Յիսուս. և նա թագեաւ ի նոցանէ զի մի՛ ոք գիտասցէ։ Եւ եկեալ նորա ծածուկ առ մայր իւր և ոչ կամէր յայտնել զանձն իւր, և զայն բազումք հարցանել և քննել զնա և ոչ գտին։

## ԳԼՈՒԽ ԻԳ.

*Եկեալ նոցա ի քաղաքն Տապարի, և տալով զնա յուսումն ներկ(արա)րութեան, և սքանչելեացն որ եղեւ անդ։*

Եւ յարուցեալ Յովսէփ ընդ առաւօտն ա՛ռ զմանուկն և զմայր իւր, և եկեալ հասեալ նոցա ի քաղաքն Տապարի, և անդ իջեւանս արարեալ նոցա առ դուրս տան միոյ՝ որոյ անուն էր տէր տանն այնորիկ Իսրայէլ, որ զամենայն ներկս քաղաքին առնէր ի տան իւր։ Եւ եկեալ այրն այն ետես զՅովսէփ, զՄարիամ և զմանուկն, նստեալ առ դուրս տան իւրոյ յոյժ ուրախ եղեւ։ Եւ ասէ ցնա. Բարի ես եկեալ այր ծեր պատուական, հանդերձ տամբ և ընտանեօք քոյովք. ասա ինձ ուստի՛ գաս, կամ յո՛ երթաս։ Ասէ ծերն. Ես ի հեռաւոր աշխարհէ եմ եկեալ, և շրջիմ պանդուխտ և օտար ընդ ամենայն տեղիս։ Ասէ Իսրայէլ. Եթէ կամիս կեալ ի քաղաքիս յայսմիկ, ես արարից քեզ ընդունելութիւն ի տան իմում՝ որպէս և հաճոյ թուի քեզ։ Ասէ Յովսէփ. Այո՛, եղիցին կամք քո որպէս և խորհիս առնել։ Ասէ Իսրայէլ. Եւ ո՞րպէս կարես աստ կեալ և կամ վաստակել ձեռօք քովք. քանզի ծեր ես։ Ասէ Յովսէփ. Դիւրին. զի ես ամենայն արուեստի հմուտ եմ և գիտակ գործոյ։ Ասէ Իսրայէլ. Ո՞ր արուեստի։ Ասէ Յովսէփ. Հիւսնութեան, փայտկոփութեան, լուծ, հարօր, սայլ և այլ եւս զի՛նչ պիտոյ իցէ ումեք գործ։ Ասէ Իսրայէլ. Բարիոք ասացեր, տեղիս դիւրին է և քաղաքամէջ, և ամենայն շահ և վաճառ լի. և այլ բազում ինչս որ ըստ կամաց քո իցէ։ Եւ դու բարի եկիր հանդերձ տամբ և ընտանեօք քովք, մո՛ւտ ընդ յարկաւ իմով հանգստեան, և կաց

Digitized by Google

հաստատուն ի տեղիս յայս, և ոչ նեղութիւն յումեքէ ի թշնամեաց հասցէ քեզ. և որչափ բնակիս ի տան իմում յամենայն ինչ ձեռնկալու և օգնական եղէց քեզ. և իբրև զհայր պատուական ընդունիմ զքեզ և զորդիդ քո, և ոչ ինչ պակասութիւն լինի քեզ ի տան իմում. և եթէ կամիս և տացես զմանուկն քո առ իս ի յուսումն գործոյ արուեստի իմոյ, ես իբրև զորդի հարազատ մեծաւ պատուով ընդունիմ զնա, և զամենայն շնորհս գիտութեան արուեստի յառաջ ցուցից նմա: Ասէ Յովսէփ. Բարիոք ասես. առ զմանուկդ որպէս և կամիս, և ած զդա ի հաւանութիւն, զի նեղեալ եմ ես ի դմանէ ի բազում ժամանակաց: Ասէ Իսրայէլ. Եւ ընդէ՞ր տրտում է անձն քո ի դմանէ. միթէ չէ՞ լսող և հնազանդ հրամանաց քոց: Ասէ Յովսէփ. Ո՛չ այնպէս է զոր ասես, այլ ի բազում արուեստ փոխեալ է դա և ո՛չ է կատարեալ: Ասէ Իսրայէլ. Եթէ այդ այդպէս է, մի՛ երկնչիր, ես ինքնին հաճեցուցից զմիտս քո և զքեզ ուրախ արարից, զի դեռ տղայս մանկագոյն է՝ և չէ կատարեալ: Ասէ Յովսէփ. Արա՛ որպէս և կամիս, առ փորձեա, իմացիր և տե՛ս եթէ հաճոյ թուի քեզ եղիցին կամք քո որպէս և հրամայես իսկ: Ասէ Իսրայէլ. Քանի՞....[1]: Ասէ Յիսուս. Զո՞ր գործ. Ասէ Իսրայէլ. Զգոյնս գոյնս, և զներփն ներփն ծաղկանց նկարիցն, կարմիր յորդան, կանա՛չ, կապոյտ, կապուաշ, լուրջ, դեղին, ծիրանի, չէկ, թուխ, գորշ, ծաղկաձեւ, վարդագոյն, խայտ, փթիթ, և այլ զանազան տեսակ և կերպս կերպս վայելչութեան՝ զոր ոչ կարեմ պատմել քեզ, զձեւ, զտեսակ, զկերպն, զօրինակն և զնմանութիւն գեղոյն:

Իբրև լուաւ զայս Յիսուս՝ զարմանացաւ յոյժ ընդ զօրութիւն մտաց մարդկան, որ ի զօրութենէ շնորհաց Հոգւոյն սրբոյ այնպիսի շնորհս գիտութեան ելանէ, և ընդ ամենայն տեղիս սփռեալ տարածանի, և լցուցանէ զամենայն ազգ, իբրև զաղբիւր առատ և յորդաբուխ անսպառ: Ապա դարձեալ Յիսուս ասէ ցԻս-

1. Աստանօր թուղթ անկեալ էր ի գրչագրէն:

Digitized by Google

րայէլ· Վարդապետ, գիտե՞ս զիւրաքանչիւր անուանց զտէր ներկիցն ճանաչել, զամենայն ոք որ խնդրէ ի քէն զգոյն և զներկն։ Ասէ Իսրայէլ· Այո՛, գրով կարեմ իմանալ՝ եթէ ում իցէ իրս ինչ գործս այս։ Ասէ Յիսուս· Աղաչեմ զքեզ, վարդապետ, ուսո՛ ինձ զայս ամենայն ինչ՝ զի արարից։ Ասէ Իսրայէլ· Այո՛· եթէ լսես բանից իմոց խրատու, և հնազանդ լինիս հրամանաց իմոց՝ առնել գործ զի՛նչ և կամիմ, զոր ինչ խնդրես յինէն կրկին եւս քան զիս լաւագոյն արասցես։ Եւ Յիսուս խոնարհեալ երկիր պագանէր նմա և ասէր· Այո՛, Վարդապետ, արարից զկամս քո զոր ինչ և հրամայես առնել, բայց յառաջ ծանո՛ ինձ զգործն՝ զի ուսից և գիտացից։ Ասէ Իսրայէլ· Այո՛, բարիոք ասես, բայց այժմ տղայ ես և անգէտ արուեստի, մի՛ ինչ բան առներ յանձնէ քումէ՝ զոր ոչ գիտես· մինչեւ դարձեալ ես եկից առ քեզ փութով, և զդուրս տանն զոր փակեալ եմ և մատնեհրել, մի՛ բացցես· և մի՛ առցես ինչ ի տանէ անտի· այլ դու հաստատուն կաց ի տեղիդ յայդմիկ, և զգուշ լեր, մի՛ երկմտիր և մի՛ տըրտմիր, այլ ուրա՛խ լեր։ Ասէ Յիսուս· Եւ յորո՞ւմ աւուր ակն ունիցիմ գալոյ քո առ իս դարձեալ այսրէն։ Ասէ Իսրայէլ· Եւ քեզ զի՞ է փոյթ հոգալ և հարցանել զայդ վասն իմ· զի յորում ժամու գործն յաջողի՝ որպէս և Տէր ինքն կամեսցի։ Ասէ Յիսուս· Բարիոք ասացեր, երթ խաղաղութեամբ զճանապարհս քո, և ուրախութեամբ դարձիր ի տուն քո։ Յայնժամ յարուցեալ Իսրայէլ գնաց ի քաղաքէ անտի։ Եւ մանուկն Յիսուս յարեաւ վաղվաղակի և բացեալ զդուրս տանն, առեալ զամենայն ներկս քաղաքին եդ ի կարաս մի որ առնէր կապոյտ, և խփեալ զկարասն և փակեալ զդուրս տանն, և ելեալ գնաց ըստ սովորութեան իւրում ի տեղի խաղու ուր մանկունք քաղաքին ժողովեալ էին· և որ ընդ նա զօտամարտեալ լինէր՝ զամոլաջեղսն կարճեցուցանէր· և տղայքն անկեալ լինէին ի վերայ երեսաց իւրեանց, լային և ո՛չ կարէին յառնել, և նա ձեռն դնէր և հաստատէր զնոսա· փչէր ընդդէմ երեսաց տղայոցն՝ և զաչսն կուրացուցանէր, և դարձեալ

ձեռն ածէր և լուսաւորէր զնոսա։ Առեալ զփայտն ի ձեռին իւրում, ձգէր ի մէջ տղայոցն և օձ լինէր, և զամենեսեան փախստական առնէր. և զոր հարեալ վիրաւորէր, ձեռն ածեալ բժշկէր։ Ածէր զմատունս ի լսելիս տղայոցն, և զականջսն խլացուցանէր, դարձեալ փչէր և ի լսողութիւն ածէր։ Առեալ զքարն ի ձեռն՝ փչեալ բորբոքէր զնա իբրև զկայծակն հրոյ, և ձգէր առաջի տղայոցն, այրեալ կիզէր զհողն իբրև զխուփ չորացեալ, և դարձեալ առնոյր զքարն ի ձեռին իւրում, ի յառաջին բնութիւն փոխարկեալ դարձուցանէր։

Առեալ զմանկունսն և զտղայսն՝ միաբանեալ երթային յեզր ծովուն, և առեալ զգունդն և զճոկանն ի ձեռին իւրում՝ իջեալ երթայր անթաց ոտիւք ի վերայ ալեաց ջրին՝ իբրև ի վերայ սառուցեալ պաղի, խաղալեօք[1] հարկանէր զգունդն։ Եւ զայն տեսեալ տղայոցն և մանկանցն ամենեցուն՝ ճիչ բարձեալ նոցա և աղաղակ մեծ, և ասէին. Տեսէք ամենեքեան զմանուկն Յիսուս, զի՞նչ առնէ ի վերայ ալեաց ծովուն։ Իբրև լուան բազմութիւնք քաղաքին, ամենեքեան հասեալ լինէին անդ յեզր ծովուն, և տեսանել զգործն զայն սքանչելի, հիացեալ զարմանային։

Իսկ ծերունոյն Յովսեփայ զայն լուեալ՝ փութացեալ անդր հասանէր, և ասէ ցնա. Որդեակ, զի՞նչ է գործդ այդ զոր առնես. զի վարդապետն քո զամենայն ինչ որ ի տանն հաւաքեալ էր ի քաղաքէս, զամենայն՝ վստահութեամբ յանձն արարեալ է քեզ, և պահապան կացոյց զքեզ տան իւրում, զի մի՛ ինչ պակասութիւն լինիցի անդ, և դու անփոյթ արարեալ ես. տես որդեակ, աղաչեմ զքեզ լուր ինձ, զի զոր ինչ պակասութիւն իւրաց լինի անդ՝ ի քէն խնդրէ զամենայն։ Ասէ Յիսուս. Բարիոք ասես. բայց ես զամենայն ինչ գործ արարեալ եմ և կատարեալ. զոր վարդապետն իմ պատուէր և խրատ ետ ինձ առնել՝ զայն արարի, և այժմ սպասեալ մնամ գալստեան նորա՝ զի եկեալ տեսցէ զգործ արուեստի իմոյ զոր ցուցից նմա. և քեզ զի՞

1. Յօր. եղեալ էր խաղալիք։

փոյթ է հոգալ վասն այդորիկ։ Եւ Յովսէփ իբրեւ լուաւ զբանս զայս՝ ո՛չ իմացաւ եթէ զի՛նչ խօսեցաւ ընդ նմա։

Եւ իբրեւ եկն նա ի տուն առ մայր իւր, և Մարիամ նայեցեալ ընդ Յիսուսի, ասէ· Որդեակ, արարե՞ր զամենայն հրամանս վարդապետին քո առնել զոր ինչ պատուիրեաց քեզ։ Ասէ Յիսուս· Այո՛, զամենայն ինչ արարեալ եմ և զամենայն գործ կատարեալ, և ոչ մի ինչ պակասէ ի տանէ անտի· զի՞նչ խնդրէք յինէն։ Ասէ Մարիամ· Տեսանեմ զքեզ որ այս երրորդ օր է, որ ոչ ոք զանց արարեալ իցէ մերձ առ դրօք տանն այնմիկ տեսանել զնա· ընդէ՞ր կամիս զմեզ ի կորուստ և ի մահ մատնել։ Ասէ Յիսուս· Լուեա ի խօսելոյ այտի, ես զամենայն պատուէր զոր ասաց վարդապետն իմ՝ գիտեմ· և զամենայն ինչ կարգաւ ճանաչեմ՝ զոր խրատ ետ ինձ և ծանոյց ուսայ զամենայն, և արարեալ եմ զամենայն ինչ գործ՝ զոր ասաց ինձ։ Ասէ Մարիամ· Որդեակ, դու գիտես։

Եւ մինչ դեռ զայս խօսէր Յիսուս, հայեցեալ տեսանէր զվարդապետն իւր զի գայր· յարուցեալ խընդութեամբ գնաց ընդ առաջ նորա, և խոնարհեալ երկիր եպագ նմա։ Ասէ Իսրայէլ· Որդեակ, ո՞րպէս կաս, ուրա՛խ ես, բարւո՛ք ես։ Ասէ Յիսուս· Այո՛, բարւոք կամ։ Եւ դարձեալ ասէ Յիսուս· Վարդապետ, ո՞րպէս եղեւ քեզ յերթալդ և ի դառնալդ քում։ Ասէ Իսրայէլ· Բարւոք, որպէս և կամք Տեառն լիցին։ Ասէ Յիսուս· Բարի վարդապետ, բարի եկիր խաղաղութեամբ ի ճանապարհէդ քումէ· Աստուած հատուսցէ քեզ զվարձս վաստակոց քոց, որպէս և դու ինձ արարեր· զի ահա ուսայ ի քէն զամենայն գործ արուեստի, զոր ինչ և խրատ ետուր ինձ գիտեմ ես զամենայնն, և զոր խորհէիր կատարել զգործն։ Ասէ Իսրայէլ· Զո՞ր գործ։ Ասէ Յիսուս· Զոր ինչ խրատ ետուր ինձ և ուսուցեր՝ զայն արարի։ Եւ Իսրայէլ զբանս զայսոսիկ ոչ իմացաւ զոր ինչ ասաց նմա Յիսուս· մինչեւ մերձ եղեւ ի դուռն տանն և ետես զփակն և զկնիքն, զի բացեալ էր, տրտմեցաւ յոյժ· և մտեալ ի ներքս հայեցաւ յանկիւնս տանն և ո՛չ ինչ ետես։ Ապա ճիչ բարձեալ ա-

սէր. Ո՞ւր է ներկ քաղաքիս որ ի տուն աստ ժողովեալ կայր: Ասէ Յիսուս. Եւ ո՞չ յառաջ իսկ ասացի քեզ յորժամ եկի ընդ առաջ քո, եթէ զգործն զոր խորհէիր առնել՝ կատարեալ եմ: Ասէ Իսրայէլ. Ա՞յս էր գործն զոր արարեալ ես, որ զամենայն ներկս քաղաքիս հաւաքեալ ես ի կարաս մի կապոյտ: Ասէ Յիսուս. Եւ զի՞նչ չար արի քեզ՝ որ այդպէս բարկացեալ ես, որ ի բազում հոգոց և յաշխատութեանց հանգուցի ըզքեզ: Ասէ Իսրայէլ. Ա՞յս է հանգիստն որ բազում խըռովութիւն և սրտմութիւն ածեր ի վերայ իմ, և վընաս և կորուստ անձին իմոյ, տուգանս և կռիւս. յիրաւի ասաց ծերն այն, եթէ ոչ կարես ածել զդա ի հաւանութիւն. արդ, զի՞նչ արարից զքեզ՝ որ զայսպիսի մեծամեծ վնասս գործեցեր ի տան իմում, որ ոչ իմ իցէ գործս այս և ներկս, այլ ամենայն քաղաքիս: Ո՞ւմ իրաց սրդեւք կարացից վճար առնել ումեք. և կամ բ՞ւ իւիք խօսօք ամենեցուն համարս տաց պատասխանի: Վա՜յ ինձ, զի՞նչ էր գործս այս՝ որ եղեւ ընդ իս անիրաւութեամբ:

Զայս ասէր Իսրայէլ, և լալով կոծէր զանձն իւր, և ասէր. Զի՞նչ արարից և կամ զի՞նչ խօսեցայց վասն սորա. և ապա դարձեալ Իսրայէլ ասէ ցՅիսուս. Ասա ինձ, ընդէ՞ր այսպիսի աւեր և քակումն ածեր ի վերայ տան և ընտանեաց իմոց, տուգանս և կռիւս: Ասէ Յիսուս. Եւ ընդէ՞ր այդչափ զայրացեալ ես յոյժ և տրտում է անձն քո. զի՞նչ պակասութիւն ընչից իրաց արարի ի տան քում: Յորժամ զգործ իմաստութեան լուայ ի քէն, և խրատ առեալ զրանն իմացայ, զոր ասացեր ուսայ ի քէն զամենայնն. զի՞նչ այլ եւս պիտոյ է ինձ ի քէն հարցանել բան ինչ և կամ լսել. զի յորժամ քննեցի յառաջ զքեզ և ծանեայ, ոչ կարացի համբերել գործոյն, արարի զկամս քո՝ որպէս և դու իսկ խորհէիր առնել զնոյն: Ասէ Իսրայէլ. Եւ ո՞չ եւս կրկին անգամ պատուիրեցի քեզ չառնել, և ոչ մի ինչ իրս մինչեւ եկից ես: Ասէ Յիսուս. Այո՛, բարիոք ասես .....[1] Կո-

1. Աստանօր թուղթ անկեալ էր ի գրչագրէն:

չեաց զՅովսէփ և զՄարիամ առաջի իւր, և ասէ ցնոսա. Ասացէք, զի՞նչ իցէ գործս այս որ արար մանուկն ձեր ի տան իմում, որ զամենայն ներկս քաղաքիս ժողովեալ էի ի տան իմում, և զտան դուռն փակեալ էի զգուշութեամբ, և պատուէր տուի նմա մի՛ բանալ և մի՛ ինչ առնուլ ի տանէ. և ահա տեսէք ամենիքեան, եթէ զի՛նչ վնաս գործեալ իցէ դա. որ զամենայն ներկս քաղաքին ժողովեալ է ի կարաս մի կապոյտ։

Արդ, զի՞նչ չար արարի ձեզ. և զի՞նչ պակասութիւն և վնաս իրաց գտիք յինէն, այլ իբրեւ զեղբայր սիրելի և ծանօթ և ազգային ժողովեցի զձեզ ի տան իմում. և իբրեւ զհայր պատուական՝ մեծաւ սիրով ընկալայ զձեզ, և դուք այսպիսի կորուստ և բարկութիւն ածիք ի վերայ իմ և ի վերայ տան և ընտանեաց իմոց։ Զի՞նչ տաց պատասխանի վասն գործոյս այսմիկ առնել. ահա հինգ հարիւր դահեկանի պարտապան եմ վճարել յարքունուստ։ Արդ, դուք ինքնին տացէք ընդ անձին իմոյ համարս և պատասխանի ամենայն ումեք։

Եւ զայս ասացեալ Իսրայէլ, լալով կոծէր զանձն իւր։ Ասէ Մարիամ ցՅիսուս. Որդեակ, զի՞նչ էր գործտ այդ՝ զոր արարեր ի քաղաքիս յայսմիկ, և ածեր այսպիսի կորուստ մեզ և չարիս մեծամեծս. պատմեա մեզ, ընդէ՞ր արարեր զայդ. ահա մատնիս դու ի գերութիւն և ի ծառայութիւնն, և մեք ընդ քեզ ի կորուստ և ի մահ. ո՞ւր իցէ մեզ աստ հինգ հարիւր դահեկան վճարել յարքունուստ, ասա մեզ։ Ասէ Յիսուս. Եւ զի՛նչ չար արի ձեզ՝ որ ամենիքեան ժողովեալ էք ի վերայ իմ, և ի զուր դատէք զիս. եկայք տեսէք ամենիքեան զգործս զայս և իմացարուք։ Եւ գնացեալ Յովսեփայ և Մարիամու՝ տեսին զնշանսն և զսքանչելիսն զոր արար Յիսուս. զարմացեալ՝ ընդ միտս իւրեանց հիանային յոյժ. և դարձեալ լռութեամբ գնացին ի տունս իւրեանց։

Իսկ Իսրայէլ յորժամ ետես զգործն Յիսուսի և ծանեաւ, խնդութեամբ լի եղեւ, բայց երկնչէր յայտնել զբանն, զի մի՛ ոք գիտասցէ։ Եւ Իսրայէլ արտմտեալ վաղվաղակի լցեալ բարկութեամբ կրճտէր զատամունս

Digitized by Google

իւր ի վերայ Յիսուսի, և մրմռեալ իբրեւ զգազան՝ կամեցաւ հարկանել զնա: Եւ Նա ասէ. Վարդապե՛տ, զի՞ է, զի այդչափ բարկութեամբ լցեալ ես, զի՞նչ արդեւք տեսեր յիս գործ անիրաւութեան: Զայս իբրեւ լուաւ Իսրայէլ՝ ընթացեալ վաղվաղակի առ զկոփիչն զի հարցէ զնա: Եւ Յիսուս փախստեամբ ել ընդ դուռն տանն՝ և ձգեաց վարդապետն զկոփիչն զկնի Յիսուսի, և եհար զգետին: Եւ Յիսուս դարձեալ առ զկոփիչն և եհար ի տեղին, և նոյն ժամայն փայտն արմատացաւ և տերեւ արձակեաց, և ոստս յարմատոյ անտի, և եղեւ ծառ կանաչ ծաղկեալ, և եբեր պտուղ որ կայ մինչեւ ցայսօր յայտնի երեւեալ ամենեցուն: Եւ ինքն Յիսուս փախըստեամբ ել ընդ դուռն քաղաքին, և ընթացեալ անկաւ ի ծովն և երթայր անթաց ոտօք ի վերայ ալեաց ջրոյն:

Եւ Իսրայէլ ճիչ բարձեալ երթայր ընդ մէջ քաղաքին, և ասէր. Տեսէք ամենիքեան, և ողորմեցարուք, զի փախեաւ մանուկն Յիսուս, և տարաւ զամենայն ինչ որ ի տան իմում էր: Եկայք փութով հասիք զկնի Նորա և կալարուք զնա: Եւ ելեալ զհետ Նորա ամենայն բազմութիւն քաղաքին՝ կալեալ զանցս և զկիրճըս ճանապարհաց՝ խնդրէին ընդ ամենայն տեղիս զմանուկն Յիսուս և ոչ գտանէին: Իսկ այլք ոմանք որք եկեալ էին և տեսեալ զնա՝ վկայէին զնմանէ, եթէ յորժամ ել Նա ընդ դուռն քաղաքիս, տեսաք զնա ի հեռաստանէ յանկարծակի՝ որ ի ծով անկեալ, և այլ ոչ գիտեմք եթէ զի՞նչ եղեւ:

Եւ եկեալ անդ բազմութիւն՝ շուրջ պատեալ զափն ծովուն, խնդրէին տեսանել զնա՝ և ոչ գտին. և ինքն ելեալ ի ծովէն նստէր ի վերայ վիմին ի նմանութիւն տղայի: Գային հարցանել ընդ Նա քաղաքացիքն, և ասէին. Մանուկ դու, ո՞չ ես տեսել զՅիսուս զորդին Յովսեփայ: Ասէ մանուկն. Ո՛չ գիտեմ: Դարձեալ լինէր ի նմանութիւն երիտասարդի: Հարցանէին ցնա, և ասէին. Պատանեակ դու. ո՞չ ես տեսեալ զորդի ծերոյն: Ասէ պատանին. Ոչ եմ իմացեալ: Դարձեալ լինէր ի նմանութիւն ծերոյ: Գային հարցանէին զնա, և ա-

սէին· Ալեւոր, ո՞չ ես տեսեալ զորդի ծերունոյն։ Ասէ· Ո՛չ գիտեմ։ Իսկ բազմութիւնք մարդկանն իբրեւ ոչ գտին զՅիսուս, դարձեալ անդրէն՝ պատմեցին ի քաղաքն, եթէ շրջեցաք ընդ ամենայն տեղիս՝ և ոչ գտաք զմանուկն Յիսուս։ Ապա կալեալ զՅովսէփ բերեալ կացուցին առաջի ատենին, ի խոշտանգանս արկեալ չարչարէին զնա, և ասէին· Ո՞ւր է մանուկն քո բեր կացո առաջի մեր· զի այսպէս խաբէութեամբ և առաչօք պատրեաց զմիտս մեր, և յափշտակեալ տարաւ զատացուածս մեր՝ որ ի տան առն այնորիկ էր։ Եւ Յովսէփ լռութեամբ կայր, և ոչ ինչ տայր պատասխանի։ Ապա հրամայեաց դատաւորն քաղաքին պահել զնա զգուշութեամբ զի մի՛ փախիցէ։

Եւ Իսրայէլ գնաց մեծաւ տրտմութեամբ ի տուն իւր, և եկն ի տեղին յայն՝ ուր ձգեալ էր զկոփիչն՝ զի առցէ· և իբրեւ ետես զփայտն, զի արմատացեալ էր, և տերեւ արձակեալ, զարհուրեալ դողացաւ յոյժ, և ասէ ցմիտս իւր· արդարեւ որդի Աստուծոյ է նա և կամ առաքեալ ի նմանէ։ Եւ յարուցեալ անտի Իսրայէլ եմուտ ի տուն իւր· և բացեալ զկարասն, եգիտ զամենայն ներկս քաղաքին ի մի տեղ ժողովեալ ի կարաս մի՝ որ առնէր կապոյտ։ Եւ իբրեւ սկսաւ հանել զամենայն կարգաւ, թուով՝ ո՛չ ինչ պակասութիւն լինէր իւրաց ումեք ի համարոյն, այլ տեսանէր զգիր անուանցն ի վերայ միոյ միոյ զգեստուցն· զնշանն և զգիրն, և զիւրաքանչիւր տեսակն և զվայելչութիւն պայծառութեան գեղոյն՝ զոր պատուէր առեալ էր նորա ներկել ըստ նմանութեան տեսոյն, և ներկն յօրինեալ երեւէր։ Եւ ի միտս իւր եկեալ Իսրայէլ, զարմանայր կարի յոյժ, եթէ զիա՞րդ, և կամ ո՞րպէս կարաց յառաջ իմանալ և ճանաչել, եթէ զի՞նչ տեսակ գեղոյ խնդրէր տէր իւրին զներկն և զգոյնն և զնմանութիւնն· և կամ ո՞րպէս կարաց հաճեցուցանել նա զամենայն միտս մարդոյ։

Ապա յարուցեալ Իսրայէլ ի գիշերին յայնմիկ գնաց յեզր ծովուն, և նստեալ հանդէպ վիմին որ էր առափն ծովուն, լայր զգիշերն ամենայն, և ողբ առեալ

հառաչանօք կոծէր զանձն իւր, և ասէր. Մանուկդ Յիսուս, որդի Հօր մեծի արքայի հզօրի, ողորմեաց ինձ յոյժ մոլորեալ անձին իմոյ եղկելոյ, և մի՛ անտես առներ զիս յաղագս անգիտութեան իմոյ, զի մեղայ քեզ. և ոչ յառաջ իմացայ և ծանեայ՝ եթէ դու ես Տէր Աստուած և փրկիչ անձանց մերոց. այժմ յայտնեա ինձ զքեզ ի գիշերիս յայսմիկ՝ զի տեսից. քանզի յոյժ ցանկայ անձն իմ, և փափաքի սիրտ իմ՝ տեսանել զքեզ և լսել բարբառ ի բերանոյ քումէ: Եւ նոյն ժամայն երեւեալ նմա Յիսուս նոյն նմանութեամբ կերպարանօքն՝ որպէս զառաջինն, և ասէ ցնա. Վարդապե՛տ, զի՞նչ խնդրես որ այդչափ նստեալ լաս և ողբաս զգիշերս ամենայն: Ասէ Իսրայէլ. Տէր ողորմեա՛ ինձ, և լուր աղաչանաց ծառայիս, և մի՛ անտես առներ զխնդրուածս իմ. Թող զամենայն յանցանս իմ զոր արարի առ քեզ յանգիտութեան, և օրհնեա՛ զիս: Ասէ ցնա Յիսուս. Օրհնեալ եղիցիս դու և ամենայն ինչ որ ի տան քո իցէ. Թողեալ լիցին քեզ մեղք քո, երթ ի խաղաղութիւն. և Տէր եղիցի ընդ քեզ յաւիտեան. և զայս ասացեալ Յիսուսի, եղեւ ի նմանէ աներեւոյթ: Եւ Իսրայէլ անկեալ յերկիր՝ հող զգլխովն արկեալ կոծէր քարամբք զանձն իւր, և ասէր. Աւա՜ղ իմոյ յիմարութեանս, զի յոյժ մոլորեալ եղէ. և ոչ գիտացի յառաջ եթէ զի՛նչ արարի:

Եւ ապա յարուցեալ անտի Իսրայէլ՝ ի գիշերի գնաց տրտմութեամբ ի տուն իւր, և ոչ գիտէր զի՛նչ առնէր: Եւ ի վաղիւն յարուցեալ ընդ առաւօտն, գնաց ընդ մէջ քաղաքին, անդ՝ ուր բազմութիւնք մարդկան ժողովեալ էին, և ասէ ցնոսա. Լուարուք ինձ ամենիքեան, և ունկն դիք բանից իմոց, եթէ որպիսի հիանալի զարմացումն պաշարեալ ունի զմիտս իմ, որ ոչ է իմ երբեք լուեալ ուրուք, և ոչ տեսեալ զգործն զոր արար Յիսուս ի տան իմում: Եկայք տեսէք ամենիքեան զսքանչելիս մեծամեծս, և երկերո՛ւք: Ասեն ցնա միաբան. Պատմեա՛ մեզ այժմ զի՛նչ եղեւ քեզ: Պատասխանի ետ Իսրայէլ. Յաւուր միում մինչդեռ նստեալ կայի ես ընդ ձեզ ի մէջ ատեան հրապարակին, և յա-

րուցեալ անտի գնացի ի տուն իմ, և տեսի անդ ծեր մի ալեւոր նստեալ առ դրան իմում, և մանուկ մի և մայր իւր ընդ նմին. և հարցեալ քննեցի զամենայն ինչ զնմանէ. և նա յայտնեաց ինձ զխորհուրդ սրտի իւրոյ, եթէ կամիմ աստ բնակել. և ես իսկ և իսկ արարի մեծարանս և ընդունելութիւն ի տան իմում. և ետ ցիս զմանուկն իւր յուսումն գործոյ արուեստի իմոյ, և առեալ զներկս քաղաքիս ժողովեցի ի տան իմում և փակեալ իմ զդուրս տանն, մատանեաւ իմով կնքեցի զնա, և եդի զմանուկն ի պահեստի զգուշութեամբ պահել զդուրս տանն մինչեւ եկից ես, .......[1] Եւ Յովսէփ դարձեալ լռութեամբ եկն ի տուն իւր և պատմեաց Մարիամու զամենայն գործն Յիսուսի զոր լուաւ և ետես. և նոքա յոյժ մտախռով եղեալ ընդ միմեանս՝ ասեն. զի՞նչ արդեւք կամիցի լինել մանուկս այս, որ այսպիսի դառն նեղութիւն և չարչարանս կրեմք վասն դորա, և ոչ գոյ մեզ տեղի ուրեք հանգիստ և դիւրութիւն: Ասէ Յովսէփ. Մի՛ տրտմիր, Աստուած հոգասցէ զպէտս մարմնոյ մերոյ, որպէս և ինքն կամեսցի: Եւ զայս ասացեալ նոցա, նոյնժամայն եկն Իսրայէլ. և անկեալ առ ոտսն Յովսեփայ և Մարիամու՝ խնդրէր զթողութիւն յանցանաց իւրոց, և խոստովան լինէր զմեղս իւր զոր յանգիտութեանն մեղաւ: Եւ ասէ Յովսէփ. Երթ խաղաղութեամբ ի տուն քո, և Տէր առաջնորդեսցէ քեզ յամենայն բարութիւն: Եւ զայս ասացեալ, Իսրայէլ յարուցեալ գնաց ի տուն իւր: Եւ Յովսէփ և Մարիամ երկուցեալ ի դատաւորէն և յայլոցն ամենեցուն, փակեալ զդուրս տանն, զգուշութեամբ երթեալ կացեալ նոցա մինչեւ ցառաւօտն:

1. Աստանօր թուղթ անկեալ էր ի գրչագրէն:

## ԳԼՈՒԽ ԻԴ.

*Եկեալ Նոցա ի քաղաքն Արիմաթայ, արար սքանչելիս և կենդանացոյց մեռեալս։*

Եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ առ զՄարիամ և ելեալ ի քաղաքէն տրտմութեամբ գնային զճանապարհաւն. և ի գնալն իւրեանց ակնարկէին վասն Յիսուսի զի տեսցեն. և նոյնժամայն երեւեալ Նոցա մանուկն Յիսուս՝ երթայր խաղաղութեամբ զհետ Նոցա։ Եւ եկեալ հասեալ Նոցա յերկիրն Գալիլեացւոց ի քաղաք մի՝ որ անուանեալ կոչի Արեմաթայ. և Նոցա իջեւանս արարեալ՝ բնակէին ի տան միում. և Յիսուս էր ամաց տասնից և ամսոյ միոյ։ Եւ շրջէր հանապազ ընդ որ երթային ի քաղաք և ի գեղ՝ առ՝ մանկունսն, ուր ժողովեալ լինէին ի տեղի ուրեք. և յարուցեալ գնայր զկնի Նոցա։ Իբրեւ տեսին զնա ամենայն մանկունքն և անմեղ տղայքն, հարցանէին ցնա և ասէին. Ասա, մեզ, պատանեակ դու, ուստի՞ ես եկեալ ի քաղաքս յայս։ Ասէ Յիսուս. Ես ի հեռաւոր երկրէ եմ, և յանծանօթ և յանտես աշխարհէ։ Ասեն մանկունքն. Պատմեա մեզ, ո՞ւր իցէ հայրենի բնակութիւն քո։ Ասէ Յիսուս. Ասացից ձեզ և ո՛չ կարէք իմանալ, զի՞ հարցանէք զիս։ Ասեն մանկունքն. Ասա մեզ. գիտիցե՞ս արդեւք բան ինչ ասել և ուսուցանել մեզ։ Ասէ Յիսուս. Եւ զի՞նչ խնդրէք յինէն. և զոր ասեմ ոչ գիտէք։ Ասեն մանկունքն. Եւ զոր ինչ կամիս ասել մեզ՝ ասա, զի մեք ամենիքեան անգէտ եմք և անիմաստ, և գիտեմք որ ամենայն իրաց հասու երեւիս մեզ և իմաստուն և խօսուն։ Ասէ Յիսուս. Բարիոք ասէք. գիտեմ զամենայն ինչ և հաստատեալ եմ, և կարող եմ

Digitized by Google

առնել զի՛նչ և կամիմ. բայց դուք իբրև զաղքատ իմն համարիք զիս, աղքատ և տնանկ գոլով։ Ասեն տղայքն միաբան. Մի՛ այդպէս ասեր զայդ ամենայն ինչ, այլ իբրև զեղբայր և զընկեր՝ սիրով ընդունիմք զքեզ, և մեք ամենեքեան առաջի քո եմք հնազանդ, արա որպէս և կամիս։ Ասէ Յիսուս. Արիք երթիցուք յայլում տեղւոջ։ Յայնժամ յարեան մանկունքն միաբան, ձայն տուեալ միմեանց ժողովեցան ի մի վայր։ Եւ էր ի տեղւոջն յայնմիկ վէմ մի մեծ կարի բարձր յոյժ. և Յիսուս եկաց առաջի նորա, և հրամայեաց վիմին խոնարհեցուցանել զգլուխ իւր. և Յիսուս ելեալ նստէր ի վերայ նորա. և լեռն բարձրեալ ընդունէր զնա՝ իբրև ժամ մի. և տղայոցն ճիչ բարձեալ շուրջ զքարիւն պատեալ, ի վեր ակնարկեալ՝ նայէին առ Յիսուս։ Եւ ապա դարձեալ հրաման տուեալ վիմին խոնարհեցուցանել զգլուխ իւր, և Յիսուս իջեալ անտի երթայր առ տղայսն և առ մանկունսն որ անդ էին։ Եւ զայն տեսեալ նոցա ամենեցուն՝ ընթացեալ անդ ի քաղաքն՝ պատմէին. և որք լսէին զասացեալսն ի նոցանէ, գային տեսանել զնա. և Յիսուս գնացեալ ի նոցանէ փախստական լինէր։

Իսկ ոմն երիտասարդ ականատես եղեալ ի հեռաստանէ եկն գաղտ յետոյ՝ և ըմբռնեաց զնա. և կալեալ զՅիսուս սպառնալեօք տանէր առաջի իւր. և Յիսուս դարձեալ ընդդէմ երիտասարդին՝ փչեաց ընդ երեսս նորա, և առ ժամայն խաւարեցան աչք նորա։ Եւ նա ճիչ բարձեալ աղաղակեաց և ասէ. Մանուկդ Յիսուս, ողորմեա՛ ինձ։ Եւ նոյնժամայն Յիսուս եդ ձեռն ի վերայ նորա, և բժշկեաց զնա. և երիտասարդն թողեալ զՅիսուս՝ փախեաւ ի նմանէ, և ոչ ումեք ինչ ասաց զոր արար Յիսուս։

Եւ եղեւ ի միւսում աւուրն ժողովեալ էին մանկունք քաղաքին ի վերայ աղբերն ի յեզր ջրհորին՝ ուր ամենայն քաղաքացիքն գային առնուլ ջուր։ Եկն Յիսուս լռութեամբ և եկաց ի մէջ նոցա. և նոքա իբրև տեսին զնա՝ ուրախ եղեն։ Եւ Յիսուս ասէ. Զի՞նչ գործէք աստ՝ որ ամենեքեան միաբան ժողովեալ էք ի

յեզր ջրոյդ առ ափն ջրհորիտ։ Ասեն մանկունքն. Եկ աստ, և նիստ ընդ մեզ այսօր ի միջի մերում։ Ասէ Յիսուս. Այո՛, ահաւասիկ կամ ի տեղիս ընդ ձեզ՝ զի՞նչ խնդրէք։ Եւ նոյնժամայն ընդ խօսելն Յիսուսի, երկու մանկունք խաղային լրբութեամբ յեզր ջրոյն. և եղեւ ի վիճելն նոցա և ի տարաբերելն և ի հարկանելն զմիմեանս, միւսն յանկարծակի լցեալ բարկութեամբ, հարեալ բռամբն զդէմ երեսաց նորա, և ընկեաց զնա ի խորութիւն ջրհորին. և մանուկն այն խեղդամահ եղեալ մեռաւ. և ինքն փաստական եղեալ ի տեղւոջէ անտի։ Եւ այլ մանկունքն որ ժողովեալ էին անդ, իբրեւ տեսին զեղեալ գործն որ եղեւ՝ վաղվաղակի թողին զնա ամենիքեան և գնացին, և ոչ ումեք ինչ ասացին։ Եւ Յիսուս յարուցեալ անտի լռութեամբ գնաց ի տուն իւր։ Զօգան՝ որք եկին ի քաղաքէ անտի ի ջրհորն առնուլ ջուր. իբրեւ արկին զսափորն ի ներս, տեսին զմեռեալ մանուկն զի գայր ի վերայ ջրին, ճիչ բարձեալ ասեն. Տեսէք, ո՞ւմ է պատանեակն այն որ խեղդեալ գայ ի վերայ ջրոյն։ Իսկ բազմութիւն մարդկան իբրեւ լուան զայս, դիմեցին ամենիքեան առհասարակ, և եկին անդ. և մտեալ հանին զպատանին մեռեալ։ Եւ ծնողացն լուեալ զայն՝ լալով անդր հասանէին, և զանձինս իւրեանց քարկոծ առնէին իբրեւ ժամ մի. և էր մանուկն այն տըղահասակ և տեսլեամբն գեղեցիկ, իբրեւ ամաց եօթանց։

Ապա յետ այնչափ լալոյ և սգոյ կոծանացն՝ խնդիր արարեալ ծնողացն քննէին զմանկունսն և հարցանէին, եթէ ո՞ գործեաց զկորուստն զայն՝ և զմանուկն մեր տարաժամ խեղդամահ արար. և իբրեւ ոչ գտանէին, ապա դատաւոր մի էր ի քաղաքին յայնմիկ, գնացին ծնողքն լալով պատմեցին նմա զամենայն ինչ։ Ապա հրամայեաց ժողովել զամենայն մանկունս քաղաքին, և բերեալ կացուցանէր առաջի իւր։ Եւ իբրեւ եկին, եհարց ցնոսա և ասէ. Ասացէք ինձ որդեակք և մանկունք իմ. ո՞ ընկեաց զպատանեակն զայն ի ջրհորն յայն և եսպան։ Ասեն միաբան. Մեք ոչ գիտեմք։ Ասէ

դատաւորն. Այո՛ գիտէք, և կամիք պատճառանօք իւիք յինէն թագուցանել. մի՛ առնէք զայդ որ անմեղն ընդ մեղապարտն դատի, և յետոյ ո՛չ ինչ բարութիւն գըտանէ. այլ եթէ ոք յայտնէ ինձ զճշմարիտն, զոր ինչ խնդրէ յինէն տայց նմա, իշխանութիւն և մեծութիւն և այլ ինչս բազումս: Ասացէք ինձ որդեակք, ոչ ինչ ահ ունիք յինէն մահու, և եթէ յանգիտութեան արարիք և կամ ակամայ՝ ձեզ մեղ ինչ ոչ գոյ. զճշմարիտն ասացէք ինձ հաւաստեաւ և մի՛ ստութեամբ: Ասեն միաբան. Եթէ բանից մերոց հաւատաս, և խօսից մերոց լսես և ունկն դնես, մեք զարդարն ասասցուք քեզ: Ասէ դատաւորն. Ասացէք: Ասեն մանկունքն. Մեք ոչ եղաք նմա պատճառ մահու կորստեան, այլ ինքն յանպատրաստութենէ անտի ընկաւ, և մեք ոչ կարացաք հանել զնա: Ասէ դատաւորն. Եւ յորժամ տեսիք զնա յանկարծակի անկեալ ի ջրհորն՝ նոյնժամայն ընդէ՞ր ոչ ճիչ բարձեալ աղաղակեցէք, որ կենդանի չնչով էին հանել զմանուկն: Ասեն մանկունքն. Զի ո՛չ ոք ի մէնջ մնաց անդր, այլ ամենիքեան թողին զնա և փախեան: Ասէ դատաւորն. Ո՛չ այդպէս է զոր ասէք, եթէ ինքն ակամայ անկեալ էր ի ջրհորն, ամենիքեան ճիչ բարձեալ էիք, և ամենեցուն յայտնեալ. բայց յորժամ դուք արարիք զայդ՝ յահէ անտի փախայք և ոչ ումեք ինչ ասացիք զայն. կարծէիք եթէ այդպիսի ստութեամբ պատճառանօք զերծանէիք ի մահուանէ. ո՛չ այդպէս: Ասեն մանկունքն. Եթէ զմեզ զամենեսեան կամիս հաւասար դատել՝ դու գիտես, կամք քո լիցի. զի ամենայն ոք զանձնէ իւրմէ վկայէ որ անմեղ է, և որ մահապարտն է, նա գիտէ զգործն զոր արարեալն է. արդ մեք ընդէ՞ր վասն նորա դատիմք: Ասէ դատաւորն. Եթէ գիտէի եթէ ո՛ արար զվնասն զայն, ես ոչ դատէի զանմեղն որպէս զմեղապարտն, այլ վասն այնորիկ դատեմ զամենեսեան հաւասար, զի որ անմեղն է և գիտէ զմեղապարտն....[1] մինչեւ զսպանող մանկանն յայտնապէս ցուցանեն ինձ. և նոքա լուռ լի-

1. Ստանօր թուղթ անկեալ էր ի գրչագրին:

նէին։ Յայնժամ հրամայեաց դատաւորն բուռն հարկանել ի նոսա և ընկենուլ զնոսա կապանօք ի ջրհորն։ Իսկ այն որ սպանողն էր, ճիչ բարձեալ ասէ. Մի՛ արկանէք զիս ի խորութիւն ջրհորիդ, ես ցուցից թէ ո արար զայն։ Եւ իբրեւ թուլացուցին զձեռն նորա ի կապանաց անտի, ասէ պատանեակն այն. Ո՞ւր է մանուկն Յիսուս որդի ծերոյ օտարականի, նա գործեաց զվնասն զայն, և երկուցեալ փախեաւ ի տեղւոջէ անտի։ Ասէ դատաւորն. Եւ նա յառաջ ընդ ձե՞զ էր՝ յորժամ անդ էիք դուք։ Ասեն միաբան. Այո՛։ Ասէ դատաւորն. Եւ յառաջ ընդէ՞ր ոչ ասացիք յորժամ եկիք այսր։ Ասեն մանկունքն. Եւ դու ոչ հրամայեցեր գալ նմա աստ, մեք զիա՞րդ կարէաք մատնել զնա քեզ, զի նա աղքատ էր և որդի օտարի։ Ասէ դատաւորն. Եւ դուք ընդէ՞ր անմեղ մեռանիք և զուր, և նա որ մահապարտն է ազատի։ Ասեն մանկունք. դու գիտես։

Յայնժամ հրամայեաց դատաւորն ածել զՅիսուս առաջի իւր. իբրեւ գնացին խնդրել զնա և ոչ գտին, բայց միայն զՅովսէփ կալեալ բռնութեամբ՝ բերեալ կացուցին առաջի իւր։ Եհարց ցնա դատաւորն և ասէ. Ծեր դու, ուստի՞ ես եկեալ ի քաղաքս յայս, և կամ յո՛ երթաս։ Ասէ Յովսէփ. Ես ի հեռաւոր երկրէ եկեալ եմ աստ, և կամիմ որ բնակիմ ուրեք։ Ասէ դատաւորն. Եւ ո՞ւր է մանուկն քո որ այսպիսի վնաս մահու գործէ ի քաղաքիս յայսմիկ։ Ասէ Յովսէփ. Ես ոչ գիտեմ զնա. զի՞նչ խնդրէք ի նմանէ։ Ասէ դատաւորն. Եւ դու ո՛չ գիտես զայդ. ամենայն բնակիչք քաղաքիս լուեալ են. և դուք որ զվնաս մահու գործեալ էք՝ ո՞չ գիտէք։ Ասէ Յովսէփ. Կենդանի և Տէր՝ որ ոչ գիտեմ զի՞նչ ասես։ Ասէ դատաւորն. Այո՛, գիտես և թաքուցեալ ես յինէն, կարծէք եթէ վայրապար խօսիւք զերծանիք ի մահուանէ. ո՛չ այդպէս, այլ զքեզ և զմանուկն քո տարաժամ կորուսից եթէ ոչ յայտնես ինձ զնա եթէ ո՛ւր իցէ արդեւք։ Ասէ Յովսէփ. Ո՛ դատաւոր, մի՛ այդպէս ի զուր դատես զմեզ անմեղութեամբ, զի մանուկն այն այդպիսի վնաս մահու ո՛չ գործէ։ Ասէ դատաւորն. Բարիոք ասես, եթէ

այդպիսի արդար և անմեղ իցէ, ընդէ՞ր երկուցեալ փախչի ի մահուանէ։ Ասէ Յովսէփ. Ես զայդ ոչ գիտեմ. ինքնին եկեալ տացէ պատասխանի ընդ անձին իւրում։ Ասէ դատաւորն. Ես յաղագս այնորիկ քննել կամիմ և հարցանել զքեզ. և դու ոչ արժան համարիս տալ ինձ պատասխանի. բայց ասեմ քեզ՝ ոչ ելանել ի բանդէն, մինչև մանուկն քո փութով վաղվաղակի առ իս եկեսցէ։

Եւ իբրև զայս խօսէր դատաւորն՝ ինքն իսկ Յիսուս եկաց ի մէջ ատենին, և ասէ ցնոսա. Զո՞ խնդրէք։ Եւ նոքա ասեն, զՅիսուս զորդի ծերոյն։ Ասէ Յիսուս. Ես եմ։ Ասէ դատաւորն. Ասա ինձ, ե՞րբ ես եկեալ ի քաղաքս յայս։ Ասէ Յիսուս. Բազում աւուրք են ինձ աստ ի քաղաքիս յայսմիկ։ Ասէ դատաւորն. Ասա՛ ինձ մանուկ դու, ո՞ եղև պարտական արեան մանկանս այսմիկ, և տարաժամ արարեալ՝ կորոյս զայնպիսի անմեղ տղայ։ Ասէ Յիսուս. Ես զայդ ոչ գիտեմ զոր հարցանես ցիս, հարց ընդ մանկունս քաղաքիս որ անդ էին, նոքա գիտեն ամենիքեան թէ ո՛ իցէ։ Ասեն ծնօղք մանկանն. Զտղայս մեր խեղդամահ արարեալ կորուսեր, և դարձեալ ասես, եթէ ո՛չ գիտեմ։ Ասէ Յիսուս. Եւ եթէ այլ ոք եղև արեան դորա պարտական, ի զուր անմեղութեամբ ընդէ՞ր դատէք զիս։ Ասէ դատաւորն. Մի՛ այդպէս ստութեամբ պատճառեր, զի ամենիքեան վկայեն զքէն որ մահապարտ ես դու։ Ասէ Յիսուս. Նոքա զանձնէ իւրեանց ստութեամբ վկայեն՝ որ անմեղ են. ես արդարութեամբ վկայեմ վասն անձին իմոյ՝ որ ոչ եմ պատճառ մահու կորստեան դորա։ Ասէ դատաւորն. Երդուիր օրինօքն Տեառն և վկայութեամբ պատուիրանաց նորա, և ես հաւատամ բանից քոց՝ եթէ անմեղ ես։ Ասէ Յիսուս. Եւ ընդէ՞ր[1] ստութեամբ խօսիս առաջի Աստուծոյ, և ո՛չ երկնչիս, զի՞արդ հրամայեն օրէնքն ումեք երդնուլ ստութեամբ կամ ճշմարտութեամբ։ Ասէ դատաւորն. Զի՞նչ մեղս է երդնուլ անմեղութեամբ և փրկիլ ի մահուանէ։ Ասէ

1. Յօր. ընդ էր, ուղղեցաք ընդէ՞ր։

Յիսուս․ Այդպիսի օրինօք վարիս, յաղագս այնորիկ առնես դատաստան անիրաւութեան։ Ասէ դատաւորն․ Ասա ինձ, զի՞նչ արարից իրաւունս ի միջի ձերում․ դու զքեզ յանձնէ իրաւ կարծես, և նոքա վկայութեամբ զանձինս իւրեանց անմեղ համարին․ ապա ո՞ գործեաց զվնասն։ Ասէ Յիսուս․ Դո՛ւ գիտես, դատաւոր ես կարգեալ ի քաղաքիս այսմիկ, զմեզապարտն արձակես և զանմեղն դատապարտես․ բարիոք և արդարութեամբ առնես։ Ասէ դատաւորն․ Ապա զի՞նչ արարից, տո՛ւր ինձ պատասխանի։ Ասէ Յիսուս․ Եթէ արդարութեամբ և օրինօք վարէիր, բարիոք առնէիր, բայց ոչ առնես քննութիւն և իրաւունս ի դատաստանի։ Ասէ դատաւորն․ Ես այնոցիկ առնեմ դատաստան արդար՝ զոր լսեմ և իմանամ, նոքա բազում են, և քեզ ոչ ոք իցէ մարդ որ վկայէ։ Ասէ Յիսուս․ Զայդ արդար ասացեր․ ես աղքատ եմ, օտար և անծանօթ, և նոքա բարեկամք միմեանց են․ և ինձ ո՞ ոք վկայէ․ քանզի նոքա ճանաչեն իսկ զմահապարտն որպէս և ես գիտեմ՝ եթէ ո՛ գործեաց։ Ասէ դատաւորն․ Եթէ կարիցես ճանաչել արդեւք և իմանալ վկայօք, պատմեա ինձ զի գիտացից։ Ասէ Յիսուս․ Զանձին իմոյ վկայութիւն ոչ առնուս, եթէ զայլ ոք ասացից քեզ՝ ո՛չ հաւատաս։ Ասէ դատաւորն․ Ո՛չ անիրաւ դատեմ զքեզ և կամ օտար համարիմ․ եթէ աղքատ ես, ծանր վնաս է ինձ․ այլ զճշմարիտն և զհաստատունն կամիմ իմանալ։ Ասէ Յիսուս․ Եթէ զմտաւ ածէիր զխիղճն և զշշումն սրտի քո, ո՛չ վայրապար անիրաւութեամբ դատէիր զոք․ բայց գիտես որ կաշառօք և ընչիւք ոչ օգտիս յինէն, յաղագս այնորիկ առնես անիրաւ դատաստան։ Ասեն մանկունքն միաբան․ Ո՛ դատաւոր, ո՛չ կարես դմա խօսիւք պատասխանի առնել, լուռ լեր, և մեք յայտնի ասասցուք քեզ զդմանէ։ Ասէ Յիսուս․ Զի՞նչ կամիք ասել զինէն։ Ասեն մանկունքն․ Գիտեմք զքեզ արդեւք որչափ եկեալ ես ի քաղաքիս յայսմիկ, բազում հալածանս և նեղութիւնս ածեր ի վերայ մեր, և առ ո՛չ ինչ համարէիր զմեզ․ և մեր անփոյթ արարեալ ասէաք, եթէ աղքատ է և որդի ծերոյ օտարի, և այժմ

այսպիսի վնաս մահու գործեցեր ի քաղաքիս յայսմիկ, և զմեզ զամենեսեան ի մահ մատնեցեր։ Արժան էր սպանանել զքեզ, և կամ քարկոծ առնել։ Ասէ դատաւորն. Սա՞ է մանուկն այն զոր լուեալ եմ եթէ պատանեակ մի նոր եկեալ ի քաղաքիս որդի ծերոյ որ խաբէութեամբ և առ աչօք իրս գործէ։ Ասեն միաբան. Այո՛, նա է։ Ասէ դատաւորն. Ապա յիրաւի վկայէք զդմանէ, եթէ այդպէս իցէ։ Ասէ Յիսուս. Գիտեմ որ ամենայն բազմութիւն քաղաքիս վասն իմ ժողովեալ էք. և կամիք ստութեամբ և անիրաւութեամբ դատապարտել զիս և ի մահ մատնել. բայց յետոյ դուք յամօթ լինիք, և ոչ ինչ օգտիք։ Ասէ դատաւորն. Մի՛ այդպէս բազում խօսօք զամենեսեան առ ոչ ինչ համարիս. բեր կացո վկայութիւն զանձնէ քումէ, և դու զերծիր ի տանջանաց։ Ապա եթէ ոչ համարիս զվկայութիւն նոցա և ոչ զհրամանս արքունեաց և զիրաւունս դատաւորաց, դառն մահուամբ կորուսից զքեզ։ Ասէ Յիսուս. Եթէ զվկայութիւն անձին իմոյ ընդունիս, ես արդարեւ անմեղ իցեմ։ Ասէ դատաւորն. Ո՞րպէս ասես, վկայութիւն ոչ ունիս, և զքեզ իրաւ համարիս։ Ասէ Յիսուս. Եւ եթէ վկայ կացուցանեմ անձին իմոյ, հաւատա՞ս։ Ասէ դատաւորն. Այո՛։ Ասէ Յիսուս. Սակաւ մի համբերեա այժմ և տեսցես, և ես ցուցից քեզ։ Եւ զայս ասացեալ Յիսուսի, զայրացեալ յոգի իւր եկն եկաց ի վերայ մեռելոյն, և ի ձայն բարձր աղաղակեաց, և ասէ. Յովնաթան, որդի Երերայ[1], արի՛ յոտն կաց վաղվաղակի. բա՛ց զաչս քո և պատմեա մեզ, ո՛ է մանուկն այն որ ընկեաց զքեզ ի խորութիւն ջրհորին՝ և մեռար։ Եւ նոյնժամայն ընդ ասել բանին՝ յարեաւ Յովնաթան՝ որպէս ի քնոյ զարթուցեալ, նստաւ. և բացեալ զաչս իւր հայէր յամենեսեան, և զամենայն ոք յանուանէ ճանաչէր և խօսէր ընդ նոսա։ Իսկ ծնողքն և այլ ազգայինքն բազումք յարանց և ի կանանց որ անդ էին ժողովեալ՝ ճիչ բարձեալ, ի գիրկս իւրեանց[2] խնդութեամբ առեալ

1. Ձեռն 104 ունի՝ Բերբերայ։ 2. Ձեռ. իւր էր, եղաք իւրեանց։

համբուրէին զնա, հարցանէին ցնա և ասէին. Ասա՛ մեզ, զի՞նչ եղեւ քեզ: Եւ նա ասէ. Ո՛չ ինչ. բարիոք կամ: Ասեն ցնա. Ասա՛ մեզ ո՞վ կենդանացոյց զքեզ. և նա մատամբն ցուցանէր զՅիսուս որդի ծերոյն Յովսեփայ: Ասէ ցնա Յիսուս. Պատանի դու ո՞ եղեւ պատճառ կորըստեան քո: Ասէ Յովնաթան. Տէր, ո՛չ ես դու արեան իմոյ պարտական, այլ Աբբիւրոն որդի Իսաքարա...[1] զոր յարուցեր: Եւ Յիսուս ոչ կամեցաւ. ասէ ցնոսա. Եթէ յառաջ լուեալ էիք վկայութեան իմոյ, և հաւատացեալ էիք բանից իմոց, կարէի արդեւք առնել զայդ ձեզ, իսկ որովհետեւ ոչ հաւատացիք ինձ, և ոչ ոք ի ձէնջ բանիւք իւիք քաղցրութեամբ խօսեցաւ վասն իմ, այլ ամենեքեան իբրեւ զմահապարտ և զյանցաւոր՝ անմեղութեամբ ի զուր դատեցիք, առանց իրաւանց. իսկ արդարութիւն անձին իմոյ՝ փըրկեաց զիս ի մահուանէ: Եւ զայս ասացեալ Յիսուսի, եղեւ ի նոցանէ աներեւոյթ. և զՅովսէփ հանեալ ի բանդէն արձակեցին:

Գային լալով ծնողք մանկանն խնդրել զՅիսուս, և ոչ գտանէին. աղաչէին զՅովսէփ, և ասէին. Ո՞ւր է մանուկն քո որ զմեռեալն մեր կենդանացուցանէ: Եւ նա ասէ. Ո՛չ գիտեմ: Եւ զայս ասացեալ նոցա գնացին: Եւ Յովսէփ դարձեալ լռութեամբ եկն ի տուն իւր, և պատմեաց Մարիամու զգործն զոր արար Յիսուս:

Եւ եղեւ ընդ այգն ընդ առաւօտն առեալ Յովսէփ զմանուկն և զմայր իւր, և ելեալ ծածուկ ի քաղաքէ անտի, երթային լռութեամբ զճանապարհս իւրեանց: Ասէ ցնա մայր իւր. Որդեակ, ընդէ՞ր այդպէս փախըստական լինիս ի մարդկանէ, ո՞չ գիտես եթէ զոր առնես ինչ ամենեցուն՝ ոչ թագչի և ծածկի իբրս ինչ ի տեսութենէ մարդկան, այլ համբաւի յամենեցուն լսելիս: Ասէ Յիսուս. Ո՛ մայր իմ, լուռ լեր, և երթ խաղաղութեամբ զճանապարհս քո, և զոր ինչ գործն յաջողի՝ ի ժամուն յայնմիկ զայն արարից:

1. Աստանօր յօրինակին թուղթ անկեալ էր:



Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԻԵ.

*Վասն գնալոյ Նոցա յերկիրն Գալիլեացւոց և զոր առնէր ընդ տղայսն Եբրայեցւոց և զսքանչելի գործոյն։*

Եւ եկեալ Նոցա հասեալ յերկիրն Գալիլիացւոց ի լեռնակողմն Հրէաստանի, յանդիման լերինն Կարմեղայ, որ անուանի Արտեւան՝ յորոյ վերայ քաղաքն Նոցա շինեալ էր, որ կոչի Սարոն։ Եւ կացեալ Նոցա անդ զամիսս վեց, և Յիսուս էր ամաց մետասանից և ամսոց երից։

Եւ շրջէր Յիսուս շուրջ զսահմանօք քաղաքին, և երթեալ նստէր ընդ տղայսն և ընդ մանկունսն ուր ժողովեալ լինէին, և խօսէր ընդ նոսա բազում բանիւք և իմաստութեամբ. և նոքա ոչ կարէին իմանալ զնա եթէ զի՞նչ խօսի։ Ապա առեալ Յիսուսի տանէր զնոսա յեզր ջրհորին ուր ամենայն քաղաքն գային առնուլ ջուր, և առեալ զսափորն ի ձեռանէ տղայոցն՝ հարեալ ընդ միմեանս զարկուցանէր և կոտորէր և արկանէր ի ջրհորն։ Գային տղայքն լալով շուրջ զջրհորովն և հայէին տեսանել ի ներս, և ոչ իշխէին մանկունքն յահէ ծնողացն երթալ ի տունս իւրեանց։

Եւ զայն տեսեալ Յիսուսի, ողոքանօք կոչէր զնոսա առաջի իւր, և ասէր. Համբերեցէք, մի՛ լայք, այժմ ես տայց զսափորն ի ձեզ զոր խնդրէք։ Եւ հրաման տուեալ ջրին, և ալիք ջրին բարձրացեալ առ ափն ջրհորին, զսափորն ջրով լցեալ անարատ ի վեր բարձեալ մատուցանէր, և տղայքն խնդութեամբ առեալ տանէին ի տունս իւրեանց, և երթեալ իւրաքանչիւր ոք պատմէին միմեանց զգործն՝ զոր արար Յիսուս։

Եւ ապա Յիսուս առեալ զմանկունսն և զտղայսն

տարեալ կացուցանէր զնոսա առաջի բարձրաբերձ ծառոյն, և հրաման տայր տնկոյն խոնարհեցուցանել ըզճուղս իւր յերկիր. և ինքն ելեալ նստէր ի վերայ, և ծառն բարձրացեալ ի վեր զծայրսն իւր՝ բարձրացուցանէր զնա ի վեր։ Եւ կացեալ նորա անդ իբրև ժամ մի. աղաչէին զնա մանկունքն, և ասէին. Տուր հրաման ի վեր ելանել մեզ, և գալ առ քեզ։ Ասէ Յիսուս. Եկայք փութով առ իս վաղվաղակի որ կարող էք. և նոքա ելանէին խնդութեամբ առ Յիսուս։ Եւ դարձեալ հրաման տայր Յիսուս, և ծառն զճուղն ի վայր խոնարհեցուցանէր, և մանկունքն ի վայր իջեալ երթային ընդ Յիսուսի. և ծառն դարձեալ բարձրացեալ ի վերայ արմատոյ իւրոյ, ի տեղի իւր հաստատէր։

Եւ եղև յաւուր միում ժողովեալ էին մանկունքն և տղայքն ի մի վայր, և Յիսուս էր ընդ նոսա. և էր պատանեակ մի մեծ հասակաւ՝ իբրև ամաց երկոտասանից, և էր նա վիրաւորեալ ամենայն անձամբն, և ախտ ցաւոց և հիւանդութեան զայրացուցեալ էր ըզմարմին նորա, և էր ուրուկ՝ խիստ բորոտ և լուսնոտ, և ձեռաց և ոտից ծայրք մատանցն՝ ի յոստոյ և յարմատոյ հատեալ էր, և դէմք երեսաց նորա այլագունեալ ի տեսութենէ կերպարանաց մարդկան, և ո՛չ կարէր յառնել և գնալ, այլ արտաքոյ փողոցին անկեալ լինէր, և ո՛չ իշխէր ի չէն և կամ ի տեղի ուրեք մտանել, այլ յամենայն մարդկան հալածական լինէր։ Իբրև ետես զնա Յիսուս. գթացաւ ի վերայ նորա, կոչեաց զնա առաջի իւր, և ասէ ցնա. Ցոյց ինձ զանձն քո զի տեսից։ Եւ պատանին հանեալ զգեստ հանդերձի իւրոյ՝ մերկացաւ։ Եւ հրամայեաց մանկանցն մերկ[1] տարածել ի վերայ երկրի, և առեալ հող ցանեաց ի վերայ նորա, և ասէ ցնա. Զի՞նչ կոչի անուն քո։ Եւ նա ասէ. Յովէլ։ Եւ Յիսուս ձգեաց զձեռն իւր ի վերայ նորա, և ասէ. Արձակեալ ես ի հիւանդութենէ քումէ։ Եւ առ ժամայն լուծեալ մերկա-

1. Յօր. Վ՞ն։

ցաւ մորթ մարմնոյ իւրոյ, և հաստատեցան ջիլք և զօդուածք ոսկերացն, և եղեւ մարմին նորա ողջ և անարատ իբրեւ տղայի մատաղատունկ։ Եւ նա յարուցեալ լալով անկաւ առ ոտսն Յիսուսի, երկիր պագանէր նմա. և գնացեալ խնդութեամբ ի տուն իւր։ Եւ ճիչ բարձեալ մանկանցն և տղայոցն զկնի նորա, պատմէին զսքանչելի գործն զոր արար Յիսուս։ Եւ ընթացեալ ընդ ամենայն տեղիս խնդրել զՅիսուս և ոչ գըտանէին, և որք լսէին ի հեռաստանէ՝ ցանկանային տեսանել զնա։

## ԳԼՈՒԽ ԻԶ.

*Եկեալ ի գեղն Եմաւուս և բժշկէր զհիւանդսն։*

Եւ զայն տեսեալ Յովսեփայ և Մարիամու, առեալ զմանուկն Յիսուս ի գիշերի՝ գնացին փախստեամբ, և եկեալ հասեալ նոցա ի գեղ մի որում անուն էր Եմաւուս։ Եւ ի լինել նոցա անդ ի տան միում իջեւանս արարեալ բնակէին։ Եւ Յիսուս էր ամաց մետասանից և ամսոց իննուց։ Եւ շրջէր Յիսուս հանապազ ընդ գաւառս և ընդ շէնս նոցա, և տեսանէր զբնակութիւն աշխարհին այնմիկ յորում էին անդ։

Եւ եղեւ յաւուր միում անցանել նորա ընդ գեղ մի որում անուն էր Եփթաիայ, և ի ճանապարհին հանդիպեցաւ նմա պատանեակ մի, որ էր ամաց իննետասանից։ Եւ էր նա ամենայն անձամբն վիրաւորեալ յոյժ ի բազում ցաւոց. և յառաւել նեղութենէ մարմնոյն և ի դառն տանջանացն անկեալ կայր, և ոչ կարէր յառնել կամ ընթանալ ոտիւք, այլ սողալով երթայր՝ զանձն ընդ երկիր քարշելով. զի էր ուրուկ խեղ և հաշմանդամ և միակողմանի։ Եւ եկեալ նըս-

տեալ ինքն միայնացեալ յանցս ճանապարհին, և որք անցանէին առ նովաւ՝ խնդրէր առնուլ ի նոցանէ ողորմութիւն։ Իբրև ետես զնա Յիսուս ի հեռաստանէ եկեալ առաջի նորա՝ զանց առնէր։ Ասէ պատանին այն. Մանուկ դու, լո՛ւր ինձ վասն յիշատակի ծնողաց քոց և տղայութեանն հասակի քո, և արա՛ ինձ ողորմութիւն, և Աստուած հատուսցէ քեզ վարձս բարեաց առատապէս։ Ասէ Յիսուս. Ես իբրև զքեզ աղքատ եմ և տնանկ, գոլով որդի ծերոյ միոյ օտարականի. զի՞նչ արդեւք արարից քեզ ողորմութիւն։ Ասէ պատանին. Ո՛ մանուկ դու, մի՛ պատճառեր. եթէ մնացեալ իցէ քեզ կտորակ մի հացիկ, և կամ լումայ ինչ առ քեզ ի պահեստի ուրեք, շնորհեա ինձ սակաւիկ մի ի քէն պարգեւք բարութեան, զի տեսանեմ զքեզ այժմ՝ որ թէպէտ և տղայհասակ իցես քան զիս, բայց թուի ինձ եթէ մեծատան որդի իցես դու, հարազատ ի յարքունեաց տոհմէ, քանզի կերպարանքդ քո յայտ առնէ զքեզ՝ որ ոչ ես որդի աղքատի։ Աղաչեմ զքեզ մի՛ թագուցաներ զքեզ յինէն, զի փառաւոր և շնորհօք երեւիս ինձ, պայծառ վայելչութեամբ, և կերպարանք երեսաց քոց՝ յոյժ գեղեցիկ է։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է անուն քո, և կամ յորմէ՞ ազգէ իցես, պատմեա ինձ։ Ասէ պատանին. Ի ցեղէն Յուդայի, և անուն իմ Եբեր կոչի. և ես ի տեղոջէ յայսմանէ եմ, ի գեղջէ՝ որ կոչի Նփթաիայ։ Ասէ Յիսուս. Եւ աստ զի՞նչ խնդրես, որ միայնացեալ նստիս ի ճանապարհիս։ Ասէ պատանին. Աղքատ եմ յոյժ և տընանկ գոլով և վտանկ մարմնով, և յաղագս այնորիկ նստիմ հանապազ աստ խնդրել ի մարդկանէ ողորմութիւն։ Ասէ Յիսուս. Եւ իցէ՞ քեզ աստ հայր կամ մայր որ սպասաւորէ քեզ։ Ասէ պատանին. Այո՛, բայց յորժամ ծնայ ես՝ հայրն իմ առ ժամայն վախճանեցաւ, և մայրն իմ կենդանի է այժմ, և նա ծառայէ ինձ որպէս և կամի։ Ասէ Յիսուս. Եւ ո՞րպէս։ Ասէ պատանին. Տեսանես զիս որ այսպէս վտանկ եմ և ոչ կարեմ կանգնել. և իբրև երեկոյ լինի, գայ մայր իմ և բարձեալ տանի զիս ի տուն իմում, և

Digitized by Google

հանգուցանէ ի մահիճս իմ. և ի վաղիւն բերեալ զիս աստ նստուցանէ, և որք անցանեն առ ճանապարհաւն՝ և քաղցրութեամբ հային յիս՝ արտասուեն ինձ ողորմութիւն. և զոր տացէ Աստուած աւուրն կերակուր ժողովեցից՝ մինչև գայցէ մայրն իմ տանել զիս. և ըսպասաւորէ ինձ. և այնիւ կերակրիմ հանապազօր։ Ասէ Յիսուս. Եւ ընդէ՞ր ոչ ես յայտնել զանձն քո բժշկի ումեք՝ զի ողջացուսցէ զքեզ։ Ասէ պատանին. Ես տըկար եմ մարմնով և ոչ կարեմ յառնել, և մայրն իմ անփոյթ արարեալ է զինէն. զի յորժամ ծնայ ես յարգանդէ մօր իմոյ, բազում ցաւօք և հեծութեամբ սնայ, և ի սաստիկ նեղոյն և յառաւել տանջանացն՝ լուծեալ քակտեցան ամենայն անդամք մարմնոյ իմոյ, և ջիլք ոսկերաց իմոց մաշեալ փտեցան. և եղէ վիրաւորեալ ամենայն անձամբ իմով, որպէս և տեսանես իսկ։ Ասէ Յիսուս. Են ճարտար և իմաստուն բժիշկք որ գիտեն առնել դեղ կենաց և մահու. արդ եթէ կամիս զկեանս և զփրկութիւն՝ լինի քեզ բժշկութիւն։ Ասէ պատանին. Ի տղայութենէ մինչև ցայժմ ոչ եմ ումեք հանդիպեալ բժշկի, և ոչ լուեալ յումեքէ. և ոչ տեսեալ որ զայսպիսի վտանգս կարող իցէ մարդ դեղով ողջացուցանել։ Ասէ Յիսուս. Յառաջ ասացի քեզ, և այժմ դարձեալ զնոյն ասեմ, են ճարտար բժիշկք՝ որ ի մահուանէ ի կեանս դարձուցանեն։ Ասէ պատանին. Եւ ո՞ր դեղով կարէ մարդ այսպիսի ցաւ բժշկել։ Ասէ Յիսուս. Այդ բանիւ միայն լինի և ոչ դեղով։ Իբրև լուաւ պատանին, զարմացաւ յոյժ, և ասէ. Այդ են սքանչելիք, զի՞արդ մարթի այդ լինել, որ բժիշկ առանց դեղոյ ցաւ բժշկէ։ Ասէ Յիսուս. Այո՛, իցեն բժիշկք հաստատուն՝ որ կարեն ճանաչել զցաւ մահու և կենաց։ Ասէ պատանին. Եւ դու տղայ երևիս քան զիս, ուստի՞ գիտես զայդ ամենայն իմաստութիւն։ Ասէ Յիսուս. Լուեալ եմ և տեսեալ կարի յոյժ, և գիտեմ հաստատուն՝ որ այդ այդպէս է։ Ասէ պատանին։ Ասա՛ ինձ, մանուկ դու, տեսեա՞լ ես աչօք քոյովք կոր ասես որ բժշկեցաւ մարդ յայսպիսի ցաւոցս։ Ասէ Յիսուս. Այո՛, և ես սակաւիկ մի գործոյ ա֊

բուեստիդ հմուտ եմ և որդի բժշկի։ Ասէ պատանին. Ապա յիրաւի՞ ասես որ գիտակ ես գործոյն։ Ասէ Ցիտուս. Այո՛, զամենայն ցաւ կարող եմ բժշկել բանիւ միայն զոր տեսեալ եմ և ուսեալ ի հօրէ իմմէ։ Ասէ պատանին. Եւ յո՞ր աշխարհ է հայրն քո, և ո՞ կարէ տանել զիս առաջի նորա։ Ասէ Ցիտուս. Այր զվարձս տայցես և զգինս բժշկութեան անձին քո՝ նա տարցէ զքեզ առաջի հօր իմոյ, և ողջացուսցէ զքեզ։ Ասէ պատանին. Եւ զի՞նչ է վարձն քո զոր խնդրես յինէն։ Ասէ Ցիտուս. Դիւրին քուռ[1] մի դահեկան, և այլ ոսկի և արծաթ քոյին չափ կշռով, և ակունս պատուականս լուսատու և մարգարիտս գեղեցիկս և մեծագինս։ Իբրեւ լուաւ զայս պատանին, բարկ ծիծաղեցաւ, և ասէ. Կենդանի է Տէր, որ ոչ իմ երբեք լուեալ իցէ զանուանս զայդ. և դու օրհնեալ լիցիս մանուկ, որ ասացեր զայդ վայելչութեան անուանքդ. բայց ո՞վ մանուկ, լո՛ւր ինձ. գիտեմ որ տղայ երեւիս ինձ հասակաւ, և ամենայն ինչ քեզ դիւրին, և սիրտդ յուրախութիւն և ի խնդութիւն, և ես մարմնով առողջ և անարատ. և որդի հօր մեծատան, ազատի յարքունեաց տոհմէ, ............[2] գիտեմ ի գրոց օրինաց։ Ասէ պատանին. Բազում անգամ ընթերցեալ և լուեալ ի պատուիրանացն Աստուծոյ, զի՞նչ պարտ է առնել նեղելոյն և կարօտելոյն։ Ասէ Ցիտուս. Ողորմութիւն և մարդասիրութիւն ցուցանել առ ամենայն ոք։ Ասէ պատանին. Բարւոք ասացեր, և արդարութեամբ ետուր պատասխանի. արդ արա նոյնպէս և դու, և այն՝ որ տուողն է ամենայն բարեաց, նա հատուսցէ քեզ զողորմութիւն իւր առատապէս։ Եւ հայեցեալ ի նա Ցիտուս քաղցրութեամբ, ետես զի յարտասուս եղեալ լայր. գթացաւ ի վերայ նորա, և ասէ. Այո՛, ես արարից քեզ ողորմութիւն. և ձգեաց Ցիտուս զձեռն իւր՝ կալաւ զնա, և ասէ. Ցոտն կա՛ց և երթ խաղաղութեամբ ի տուն քո։ Եւ զայս ասացեալ,

1. Այսպէս էր յօրինակին, գուցէ բուռն կամ քառ? = քառորդ։
2. Թուղթ անկեալ էր ի գրչագրին։

առ ժամայն յարեաւ վաղվաղակի պատանին, և խոնարհեալ երկիր եպագ նմա, և ասէ. Տէր Աստուած արասցէ քեզ ողորմութիւն որպէս և դու ինձ արարեր: Եւ Յիսուս ասէ. Ե՛րթ խաղաղութեամբ ի տուն քո. և մի՛ ումեք ինչ ասասցես զոր արարի քեզ: Ասէ պատանին. Ապա եթէ ոք հարցանիցէ զիս՝ եթէ ո՛ բժշկեաց զքեզ, զի՞նչ տայց նոցա պատասխանի: Ասէ Յիսուս. Եթէ հարցանիցեն զքեզ. ա՛յսպէս ասասցես ցնոսա. թէ մանուկ մի որդի բժշկի, ընդ անցանելն ի ճանապարհիս գթացաւ յիս, և արար ինձ ողորմութիւն: Եւ զայն ասացեալ Յիսուսի, յարուցեալ մանուկն գնաց ուրախութեամբ ի տուն իւր: Եւ մայր նորա իբրև ետես զնա, խնդութեամբ ճիչ բարձեալ ասէ. Որդեակ. ո՞ բժշկեաց զքեզ: Եւ պատանին ասէ. Որդի բժշկի մեծատանն ողջացոյց զիս բանիւք: Իբրև լուան զայն բնակիչք տեղւոյն այնմիկ, ժողովեցան ի վերայ նորա հարցանէին զնա և ասէին. Ո՞ր է այն որ բժշկեաց զքեզ: Ասէ. Ես ո՛չ գիտեմ, զի պատուէր ետ ինձ թէ մի՛ ումեք ասիցես զոր ինչ արարի քեզ: Իսկ Յիսուս դարձեալ խաղաղութեամբ գնաց ի տուն իւր, և ոչ յայտնեաց ումեք զբանն զի մի՛ համբաւեսցեն զնմանէ ընդ ամենայն տեղիս: Եւ որք լսէին ի հեռաստանէ զեղեալ գործն, զարմանային և ասէին. Ո՞վ է մանուկն այն՝ որ այսպիսի շնորհս գիտութեան ունի, և նշանս մեծամեծս գործէ. և բազումք հաւատային յանուն նորա և ցանկանային տեսանել զնա:

Եւ եղև յաւուր միում չորրորդ աւուրն, ի տեսլեան գիշերոյ հրեշտակ Տեառն երևեալ Յովսեփայ և ասէ ցնա. Արի առ զմանուկդ և զմայր իւր, և եկ ի քաղաքն Նազարէթ և բնակիցես անդ՝ և մի՛ ելանիցես ի տեղոջէ անտի, այլ շինեսցես քեզ ի նմա տուն և յարկ բնակութեան, և հանկիցես ի նմա ժամանակս բազումս, մինչև այց արասցէ Տէր Աստուած ժողովրդեան իւրում ի բարութիւն, և կատարեսցէ զուխտն և զերդումն իւր սուրբ՝ զոր խոստացաւ առնել ծառայից իւրոց. Եւ զայս ասացեալ հրեշտակն գնաց ի նմանէ:

Digitized by Google

## ԳԼՈՒԽ ԻԷ.

*Եկեալ դարձեալ ի քաղաքն Նազարեթ և առնէր բժշկութիւնս ի ժաժուկ ի տեղիս տեղիս։*

Եւ ի վաղիւն յարուցեալ Յովսէփ առ զմանուկն և զմայր իւր, և եկն ի Նազարէթ քաղաք՝ ի տան իւրում՝ յորում բնակեալ էր սուրբ կոյսն Մարիամ, անդ՝ ուր զաւետիս Հոգւոյն սրբոյ ընկալաւ ի հրեշտակէն. և կացեալ Նոցա ի քաղաքի անդ ամս ութ և տասն, և Յիսուս էր ամաց երկոտասանից յորժամ եկն ի Նազարէթ, որ լինի ամս երեսուն։

Եւ եղեւ յաւուր միում երկրորդումն, ելեալ Յիսուս ի քաղաքէն Նազարեթէ և Նստէր յանցս ճանապարհին. և տեսանէր երկու պատանեակք որ գային և վիճէին ընդ միմեանս բանութեամբ, և մարտ եդեալ հարկանէին զիրար։ Եւ իբրեւ մերձ եղեն Նոքա առ Յիսուս, և տեսին զՆա՝ լռեցին ի խօսելոյ. և մատուցեալ երկիր պագին Նմա, և Նա հրամայեաց Նոցա Նստել։ Եւ իբրեւ բազմեցան Նոքա իւրաքանչիւր ի տեղւոջ, խօսեցաւ ընդ Նոսա Յիսուս և ասէ. Ո՛ տղայք և անմիտ մանկունք, ընդէ՞ր այդչափ բարկութեամբ լցեալ էք և զայրացեալ և տրտմութեամբ խռովեալ. զի՞նչ բարժանումն ընչից իրաց ունիք ի միջի ձերում որ այդպէս բանութեամբ հարկանէք զմիմեանս։ Ասէ մին ի Նոցանէ՝ որ կրտսերագոյնն էր. Զի ոչ ոք աստ դատաւոր ի միջի մերում որ առնէ արդար իրաւունս։ Ասէ Յիսուս. Եւ զի՞նչ է անուն ձեր, և կամ զի՞նչ սիրով ընկերք էք միմեանց։ Ասէ կրտսերն. Անուն իմ Մաղաքիա կոչի, և Նորա Միքիա, և եմք համաշունչ եղբարք միմեանց հարազատ։ Ասէ Յիսուս. Ո՛ ան-

Digitized by Google

միտք, և ընդէ՞ր այդչափ նախատանօք անարգէք ըզմիմեանս թշնամութեամբ։ Ասէ Մաղաքիա՝ այն որ կրտսերն էր. Աղաչեմ զքեզ մանուկ դու, լո՛ւր ինձ և ես ասացից ձեզ. եղբայրս իմ աւագագոյն է քան զիս, և ես կրտսեր գոլով քան զնա՝ և նա ջանայ անիրաւութեամբ զրկել զիս, և ես ոչ կամիմ. արդ արա դու այսօր ի միջի մերում զարդար դատաստանն։ Ասէ Յիսուս. Ասացէք ինձ զպատճառ տրտմութեան ձերոյ թէ ո՛րպէս իցէ։ Ասէ Միքիա. Թուի ինձ եթէ որդի դատաւորի իցես դու, ի տանէ արքունեաց մեծաց։ Ասէ Յիսուս. Այո՛, բարիոք ասես։ Ասէ Միքիա. Աստուած հատուսցէ քեզ և ծնողաց քոց զվանձս վաստակոց քոց, զոր առնես այսօր ընդ մեզ դու խաղաղութիւն։ Ասէ Յիսուս. Եւ ո՞ կացոյց զիս ձեզ դատաւոր և կամ բաժանող ի միջի ձեր, և կամ ո՛րպէս արարից ձեզ իրաւունս և դատաստան, զի ոչ հնազանդիք հրամանաց իմոց։ Ասեն մանկունքն միաբան. Մի՛ այդպէս ասիցես, և զմեզ տղայ և անգէտ համարիս, մեք հասու եմք դպրութեան աստուածային օրինացն. և գիտեմք զամենայն ինչ, բայց ի քէն ուսանել կամիմք բանս իմաստութեան խրատու, զի գիտասցուք։ Ասէ Յիսուս. Յառաջ ուխտ և վկայութիւն դիք ինձ որ ոչ ստէք միմեանց, այլ զոր հրամայեմ ձեզ առնէք։ Ասեն միաբան. Վկայութեամբ օրինացն Աստուծոյ առաջի քո, և երդմամբ պատուիրանաց նորին, որ այնպէս լսեմք հրամանաց քոց՝ որպէս ի տանէ արքունեաց։ Ասէ Յիսուս. Ասացէք ինձ զճշմարիտն հաւաստեաւ, թէ ո՛րպէս իցէ զի լուայց։ Ասէ Մաղաքիա. Մանուկ դու, լո՛ւր ինձ. Մեք միմեանց եղբարք եմք....[1] և ծնողքն մեր վախճանեցան, և մեք տղայք և որբք մնացաք. հարքն մեր թողին մեզ ժառանգութիւն, և այլք յափշտակութեամբ

1. Ասուի և անդր, որպէս յայտնի իսկ տեսանի՝ ի նշանակեալ կիտիցդ, ի տեղիս տեղիս եղծեալ էր և բրդզգեալ գրչագիրն, ուստի և անընթեռնլի. ուրանօր ըստ կարգի բանից ինչ մարթ էր լրացուցանել զթերին, եդաք զայնս այլատարազ տառիւք, ըստ օրինակին տպագրելոյ յէջն 113-4։

կալան զհայրենիս մեր, և յորժամ հասաք.... դատաստանաւ և իրաւամբք կալաք զժառանգութիւնս մեր. այժմ ես և եղբարտ իմ վիճիմք ընդ միմեանս, զի անիրաւութեամբ ջանայ զրկել զիս, և ես ոչ կամիմ։ Արդ ասա, որպիսի՞ դատաստան և իրաւունք է ի միջի մերում։ Ասէ Յիսուս. Յորժամ վախճանեցան ծնողքն ձեր, ո՞ւմ պատուէր արարին ունել զժառանգութիւն, և կամ ո՞րպէս յանձն արարին զձեզ ումեք վերակացու լինել ի վերայ ձեր՝ մինչեւ հասայք ի զգաստութիւն։ Ասեն մանկունքն. Ո՛չ ոք ի մէնջ կարիցէ յիշել զծնողսն մեր, զի կարի խիստ տղայք եաք և անգէտ։ Ասէ Յիսուս. Ապա ընդէ՞ր զրկէք զմիմեանս՝ եթէ այդպէս իցէ։ Ասէ Մաղաքիա. Եղբայրտ իմ ջանայ ագահութեամբ զրկել զիս՝ եթէ աւագագոյն եմ։ Ասէ Յիսուս. Ոչ այդպէս, այլ եթէ կամիք լսել ինձ և խաղաղութիւն արկանել ի միջի ձերում, ոչ էք հեռի.... և օտար ի միմեանց, այլ եղբարք հարազատք, մի ագահութեամբ զրկէք զմիմեանս, այլ սիրով բաժանեցէք զինչս ձեր՝ որպէս արժան է։ Ասէ Միքիա. Մանուկ դու, գիտեմ որ բարիոք առնես վասն մերոյ սիրոյ և ուրախութեան, բայց ոչ է այդպէս դատաստան՝ որպէս առնես, այլ լուր ինձ. Ես կատարեալ հասակաւ մեծ էի քան զեղբարս իմ՝ յորժամ ծնօղք մեր վախճանեցան, և դա փոքր և տգէտ ամէն իրաց. և ես բազում աշխատութեամբ և ջանիւ ապա կարացի առնուլ զհայրենիսն, քանզի աւերեալ էր և խոպանացեալ....։[1]

1. Մինչև ցայս վայր ունէր գրչագիրն։

Digitized by Google

# ՀԱՏԱԿՈՏՈՐՔ

## Ի ԳՐՈՑ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

### Ա

### ՅԻՇԱՏԱԿ ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՒ ՈՎՍԱՆՆԱՅԻ ԾՆՈՒՆԴ ՄԱՐԻԱՄՈՒ ԿՈՒՍԻՆ ԵՒ ԾՆՈՒՆԴ ՓՐԿՉԻՆ[1]

Եւ էր Յովակիմ մեծատուն յոյժ և մատուցանէր Տեառն կրկին զպատարագ իւր ամենայնի։ Եւ ասէ Յովակիմ. Յաւելուած պատարագի իմոյ, եղիցի ամենայն ժողովրդեան քաւութիւն և թողութիւն մեղաց։

Մերձենայր օր Տեառն մեծ, և մատուցանէին որդիքն Իսրայելի զպատարագս իւրեանց։ Կայր ընդ նոսա և Ռուբէն և ասէր. Չէ ձեզ նախ պարտ մատուցանել զպատարագս. վասն զի զաւակ ոչ (էք) յարուցեալ ի մէջ Իսրայէլի։ Տրտմեցաւ Յովակիմ, և ոչ անգանէր յակն կնոջ իւրում, և երթայր առ երկոտասան ազգն Իսրայելի, եթէ միայն ես ոչ յարուցի զաւակ։

Եւ յիշէր զնահապետն Աբրահամ՝ եթէ ի ծերութեանն ետ նմա Տէր Աստուած զաւակ զԻսահակ, և տրտմէր Յովակիմ և ոչ անգանէր յակն կնոջ իւրոյ, և գնայր

1. Այդ խորագիր եդեալ էր ցանկող հառընթերին. իսկ խորագիր գրչագրին՝ գրեալ կարմրադեղով՝ է այս, Յաղագս ծննդեան Ովհաննայի, Մարեմայ և ծննդեան, Մարեմայ ծնողի Տեառն, ևն։

լալով յանապատ՝ և անդ հարկանէր գլխորան իւր, և պահէր պահս զքառասուն տիւ և զքառասուն գիշեր: Եւ դնէր ի սրտի իւրում՝ ոչ մերձենալ ի կերակուր, մինչև հայեսցի յիս Տէր Աստուած, և եղիցի ինձ աղօթք իմ ի կերակուր և պահք իմ ինձ ըմպելի:

Եւ կին նորա յերկուս ողբս ողբայր և երկուս կոծս կոծէր և ասէր. Լացից զայրութիւն[1] իմ, և ողբացից զանզաւակութիւն իմ:

Մերձենայր օր Տեառն մեծ, և ասէ Նաժիշտն իւր. Մինչև յե՞րբ տառապեցուցանես զանձն քո, ահա մերձ է օր Տեառն, մեծ է և ոչ է արժանի ձեզ սգալ, և չէ ինչ պատշաճ խօսել զայս ընդ քեզ, զի աղախին քո եմ և նկարագիր արքունական: Եւ ասէ ցնա Ովսաննա. Ի բաց գնա յինէն, զայդ ոչ արարից, զի Տէր Աստուած իմ տառապեցոյց զիս. և ասէ. Միթէ զայդ խորամանկեմ ընդ քեզ, և եկիր առ իս հաղորդ առնել զիս մեղաց քոց:

Տայր պատասխանի աղախին և ասէ ցնա. Զի՞նչ ես ասելի քան զայդ անիծեցից զքեզ՝ որով լուար ինձ, զի փակեաց[2] Տէր զարգանդ քո առ ի չտալոյ պտուղ որովայնի քո: Եւ տրտմեցաւ յոյժ. և մերկանայր յիւրմէ զհանդերձ սգոյ, և լուանայր զգլուխ իւր և ագանէր հանդերձս հարսնութեան. և յիններորդ ժամու աւուր իջանէր ի դրախտ իւր, և տեսանէր անդ ծառ մի դարնընդեմ[3] և նստէր ի ներքոյ նորա և խնդրէր ի Տեառնէ իւրմէ և ասէր. Աստուած հարցն մերոց, լուր խնդրուածաց իմոց, և օրհնեա զիս որպէս օրհնեցեր զարգարն զՍառա և ետուր նմա զորդի զՍահակ:

Որպէս հայէր Ովսաննայ յերկինս, տես անդ ծառ՝ ու բուն մի ի ծառն դարնիա. ողբայր առանձին և ասէր. Վա՜յ ինձ թշուառելոյս. յորմէ՞ արգանդէ ելի ես. ես միայն յանէծս ծնեալ եմ՝ ի մէջ որդւոց Իսրայելի. թշնամանեցին զիս և հանին ի տաճարէն Աստուծոյ

1. Յօր. ղարտայաթեան:

2. Յօր. փրկեաց:

3. Այլ օրինակք ունին դաբնեդեայ կամ դափնեդեայ:

իմոյ. Թշուառացեալ ո՞ւմ նման եմ ես. զի և նոցա զաւակ գոյ առաջի քո Տէր:

Վա՜յ ինձ, և ո՞ւմ նման եմ ես, և ոչ ջրոց. քանզի ալիք խաղաղք և ցած օրհնեն զքեզ. Վա՜յ ինձ, և ո՞ւմ նման եմ ես, և ոչ երկրի. զի երկիր բերէ զպտուղ ի ժամու իւրում, և առաջի քո օրհնեն զքեզ Տէր:

Եւ ահա հրեշտակ Տեառն կայր առաջի և ասէ ցնա. Լուաւ Տէր ձայնի խնդրուածաց քոց[1], և ահա յղացիս և ծնցիս, և այն լիցի զաւակ ընդ ամենայն երկիր: Լնու բարութեամբ Ովաննայ, ասէր. Տէր Աստուած իմ, թէ ծնանիմ արու և էգ, տամ պատարագ[2]. և ասէր Յովակիմ եղիցի պաշտօնեայ Տեառն զամենայն աւուրս կենաց իւրոյ:

Եւ ահա գային առ նա հրեշտակ երկու, և ասէ ցնա. Այր քո Յովակիմ, գայ հրեշտակօք իւրով: Ահա հրեշտակ Տեառն իջանէր առ Յովակիմ և ասէր ցնա. Յովակիմ Յովակիմ. լուաւ Տէր խնդրուածաց քոց, էջ աստի, և կին քո յղասցի և ծնցի: Եւ անդէն վաղվաղակի իջանէր Յովակիմ, և կոչէր առ ինքն զհովիւսն իւր և ասէ ցնոսա. Ածէք ինձ այսօր որոջս տասն սուրբ և սպիտակս, և եղիցի քահանայից և ծերոց ժողովրդեանն:

Եւ ահա գայր Յովակիմ հօտիւք իւրովք, և կին նորա Ովանա կայր առ դրօքն, տեսանէր զՅովակիմ՝ զի գայր հօտիւքն. ընթանայր Ովաննայ և անկանէր զպարանոցաւն[3], և ասէր. Այժմ գիտացի՝ թէ Տէր Աստուած իմ օրհնեաց զիս յոյժ, զի այրին ոչ է այրի, և անժառանգն ոչ է անժառանգ: Եւ հանգչէր Յովակիմ յաւուր յայնմիկ ի տան իւրում. և ի վաղիւն մատուցանէր զպատարագ իւր. և հայէր այն քահանային վի եղանէր ի սեղանոյն և ոչ կային մեղք նմա: Եւ ասէր Յովակիմ. Ի տաճարին Տեառն արդարացեալ, և գայր ի տուն իւր: Եւ լնոյր Ովաննա ամիսս վեց. և յամսեանն ութերրորդի

1. Յօր. էր՝ իմոց.
2. Յօր. եղեալ էր՝ պատարագ իւր:
3. Յօր. եղեալ էր՝ զպարանոց իւր, իսկ և անկանէրն յաւելեալ ի մէնջ:

ծնանէր և ասէր. Զի՞նչ ծնեայ: Եւ ասեն էգ մանուկ: Եւ ասէր Ովսաննա. Մեծացաւ անձն իմ յաւուրս յայսմիկ. և առնոյր զնա ի կողմն իւր և լուանայր և սրբէր զնա. և լցան աւուրք իւր, և տայր նմա ստին և կոչէր զանուն մանկանն Մարիամ: Օր ըստ օրէ աճէր մանուկն և զօրանայր:

Իբրեւ լնոյր նորա ամիսք վեց, թոյլ տայր նմա մայրն՝ զի թեւակոխեսցէ առ ինքն գալ. փոխէր քայլս՝ և երթայր և գայր ի գիրկս մօր իւրոյ. բառնայր զնա մայրն ի գիրկս իւր՝ և ասէր. Կենդանի է Տէր Աստուած իմ, որ ոչ կոխեսցես դու զերկիր մինչեւ յօր տանելոյ ըզքեզ ի տաճար Տեառն. և առնէր սրբութիւն ի սենեկի իւրում, և պիղծ ինչ և անսուրբ անդ ոչ մտանէր. և կոչէր զդստերսն Երուսաղեմի առ իւր՝ ուսուցանել զնա:

Եւ իբրեւ լնոյր տարի մանկանն, տայր[1] ուրախութիւն մեծ Յովակիմ, և զմանուկն մատուցանէր քահանայիցն, և օրհնէին զնա և ասէին. Աստուած հարց մերոց, օրհնեա զմանուկս զայս օրհնութեամբ որ ոչ անցանէ: Եւ էառ զնա մայր իւր յաղօթից տանէ իւրմէ, տայր ստին, օրհնէր զնա և ասէր. Օրհնեցից զՏէր Աստուած իմ, զի այց արար ինձ և եբարձ զնախատինս թշնամեաց իմոց, և ետ ինձ պտուղ արդարութեան: Ո պատմեսցէ[2] որդոցն Իսրայելի, թէ Ովսաննա՝ մանուկ ստնդեայ ունիցի և հանգուցանիցէ[3] զնախատինս օրհնութենէ. և ինքն ելանէր և պաշտէր զնա, և յորժամ լինէր ընթերց[4] իջանէր և փառաւոր առնէր զՏէր Աստուած Իսրայէլի. և մանուկն լնոյր[5] զամիսս իւր. և յորժամ լնոյր[6] մանկանն ամս երկու, ասէ Յովակիմ ցկին իւր. Տարցուք զմանուկ ի տաճարն Տեառն, և հատուցից զխոստումն Տեառն զոր խոստացաք, մինչ առաքեաց մեզ Տէր, և ընդունայն լինիցի պատարագ Տեառն: Եւ ասէ Ովսաննա. Կացցուք և մնասցուք մինչեւ յեր-

1. Իմա՛ տանէր:
2. Յօր. պատմեցին:
3. Յօր. անուանեցի և հանգուցանէ:
4. Իմա՛ ընթրեաց ժամ:
5. Յօր. լոյր:
6. Յօր. լոյր:

Digitized by Google

բորդ ամ. միթէ գուցէ խնդրեսցէ զհայր կամ զմայր: Եւ ասէ Յովակիմ. Այսպէս եղիցի: Եւ իբրեւ լինէր մանուկն երեմեան, ասէ Յովակիմ. Կոչեցէք զանարատ դստերսդ Իսրայելի և առցեն իւրաքանչիւր լապտերս[1] բորբոքեալս, և մի՛ ոք ի նոցանէ դարձցի յետս և գերեցէ[2] զսիրտ մանգանն ի տաճարէ Տեառն. և առեալ զմանուկն ընդունէր զնա և ասէր. Մեծացոյց Տէր զանուն քո ընդ ամենայն ազգն Իսրայելի մինչեւ ի վաղջան աւուրց, և յայտնեաց Տէր զփան իւր որդւոցն Իսրայելի: Եւ նստուցանէր յերկրորդ աստիճան սեղանոյն, և տայր նմա Տէր Աստուած շնորհս, և օրհնէր զամենայն տուն Իսրայելի. և պար առեալ կաքաւէր ոտիւք իւրովք. և ելանէին հայր և մայր նորա փառաւորելով և օրհնելով զԱստուած, զի ոչ անձկայր ի նոսա մանուկն:

Էր Մարիամ ի տաճարն Տեառն. իբրեւ զաղաւնի[3] զարգանայր, և ընդունէր կերակուր ի հրեշտակաց: Իբրեւ լինէր երկոտասանամեայ, խորհուրդ արարին քահանայապետքն և ասէին. Ահա Մարիամ եղեւ երկոտասանամեայ ի տաճարին Տեառն Աստուծոյ, զի՞նչ արասցուք զնա, մի՛թէ գուցէ զտաճարն Տեառն Աստուծոյ մերոյ[4]: Եւ ասեն քահանայքն ընդ Զաքարիայ. Դու ես կարգեալ ի սեղան Տեառն, մուտ ի սրբութիւն և արա աղօթս վասն նորա: Եւ ահա հրեշտակ Տեառն իջանէր և ասէր ընդ Զաքարիա. Ե՛լ արտաքս և ժողովեա զամենայն ամուրիս[5] ժողովրդեան քո, և բերցեն իւրաքանչիւր գաւազանս, և զոր ցոյց քեզ Տէր՝ նմա եղիցի կոյսդ ի կին[6]:

Եւ ելանէր քարոզն ընդ ամենայն գաւառն Հրէաստանի և հարկանէր փող, և ընթանային ամենեքեան

1. Յօր. լապտերաւն:
2. Յօր. գերեւեցէ:
3. Յօր. պտկասէր զաղաւնի, եղաւ ըստ միւս օրինակին:
4. Այդպէս էր յօրինակին:
5. Յօր. եղեալ էր տասուրս:
6. Յօր. մարթ էր ընթեռնուլ՝ կոյս տիկին:

առհասարակ․ ընգենոյր և Յուսէփ զուրակն[1] յինքենէ, գայր պատահէր․ և նոցա թողեալ ամենեքեան առ քահանայապետն, և առեալ ընդ ինքեան զգաւազան իւրեանց, և մտեալ կային ի տաճարին յաղօթս։ Եւ իբրեւ յերկարէր զաղօթս, առնոյր զգաւազանսն ելանէր արտաքս, և տայր իւրաքանչիւր նոցա, և ոչ գոյր ի նոսա նշան․ իսկ զվերջին տայր Յուսեփու, և ահա ելանէր աղաւնի մի սպիտակ ի գաւազանէն, և կայր ի վերայ գլխոյն Յուսեփու․ և ասեն քահանայքն ընդ Յուսէփ․ Դու ժառանգեսցես զկոյսդ, առ զդա քեզ ի պահպանութիւն։ Դիմադարձ լինէր Յուսէփ և ասէր․ Ես ծեր եմ և դա կուսան է։ Եւ ասեն քահանայքն ընդ Յուսէփ․ Երկի՛ր դու ի Տեառնէ Աստուծոյ քումէ, յիշեա զՏէր Աստուածն որպէս արար Դադանայ Կորխայ և Աբիրոնի, որպէս պատառեցաւ երկիր և եկուլ զնոսա, և հուր ի բանակս նոցա վառեցաւ, վասն դիմադարձութեան նոցա․ երկի՛ր Յուսէփ, մի՛ յանկարծակի չար ինչ[2] լինիցի տան քում։ Երկնչեաց Յուսէփ, և առնոյր ի պահպանութիւն անձին իւրոյ։ Եւ ասէ ցնա Յուսէփ․ Մարիամ, առի զքեզ ի տաճարէ Տեառն, և թողում ի տան իմում, և երթամ շինեմ շինուածս իմ և եկից առ քեզ։

Լինէր խորհուրդ քահանայից առ միմեանս և ասեն․ Արասցուք վարագոյր տաճարին Տեառն։ Եւ քահանայապետն․ Կոչեցէք ինձ կուսանս ութ յազգէն Դաւթի․ և երթային պաշտօնեայքն՝ գտանէին ութ։ Եւ յիշէր քահանայն զՄարիամ՝ թէ էր յազգէն Դաւթի, և էր սուրբ․ և երթային պաշտօնեայք, տանէին զնա ի տաճարն Տեառն։ Եւ ասէր քահանայն․ Արկէք զվիճակս՝ թէ ո՞վ ի ձէնջ մանիցէ ինձ զանապական ոսկին, զբեհեզն և զծիրանին և զկապուտակն և զկարմիրն։ Եւ ելանէր կարմիրն և ճշմարիտ ծիրանին Մարիամու վիճակս․ և առեալ տանէր ի տուն իւր։ Յայնմ ժամանակի դադարեալ էր Զաքարիայ ի խօսից․ և կայր ընդ նմա Սա-

1․ Յօր․ վրիպակաւ եղեալ էր՝ զուարան։
2․ Յօր․ պակասէր չար ինչ։

նուիէլ[1] ի տաճարի Տեառն, մինչեւ դարձեալ խօսեսցի Զաքարիա։

Իսկ Մարիամ եդեալ զկարմիրն զոր ունէր ի ձեռին իւրում, բարձեալ սափոր և արտաքս ընոյր ջուր. և ահա բարբառ լինէր և ասէր. Ողջոյն ընդ քեզ Մարիամ, լի շնորհօք Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս. և նա դարձեալ յաջ և յահեկ՝ թէ ուստի իցէ ողջոյնս։ Եւ սարսեալ դողութեամբ գայր մտանէր ի տուն իւր, դնէր զսափորն, առնոյր զծիրանին և զկարմիրն և նստէր յաթոռ իւր։ Եւ ահա հրեշտակն Տեառն կայր առ նմա և ասէր ցնա. Մի երկնչիր Մարիամ, զի գտեր զշնորհս Աստուծոյ, յղասցիս. ի բանին Նորա ածէր զմտաւ Մարիամ՝ թէ յղացայց և ծնայց որպէս զայլ կին. Եւ ահա հրեշտակն Տեառն կայր առ նա, և ասէր. Ո՛չ այդպէս Մարիամ, այլ Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ, և զօրութիւն Բարձրելոյն հովանի լիցի քեզ. որ ծնանելոց է ի քէն սուրբ՝ կոչեսցի անուն Նորա Յիսուս. և նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց։ Եւ ասէ Մարիամ. Կամ առաջի քո աղախին, եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ նիւթէր զծիրանին ոսկեթել[2] կարմրին և տայր ի քահանայն. և օրհնէր զնա քահանայն և ասէր. Մարիամ, մեծացոյց Տէր զանուն քո, և եղիցի օրհնեալ յամենայն ազգաց Իսրայելի։ Եւ ուրախ լինէր Մարիամ և երթայր առ Եղիսաբէթ։ Եւ ընթանայր առ դուռն և բանայր նմա և ասէր. Ուստի՞ է ինձ այս զի եկեսցէ մայր Տեառն առ իս. և ասաց. Խաղաց մանուկն յորովայնի իմում։ Եւ Մարիամ մոռանայր զամենայն բանս՝ զոր խօսեցաւ ընդ նմա Գաբրիէլ հրեշտակ Տեառն. զաչս յերկին համբառնայր Մարիամ, և ասէր. Ո՞վ Տէր, զի ազգ և ազինք երանեն։ Եւ մնայր առ Եղիսաբէթ իբրեւ ամիսս երիս։

Եւ օր ըստ օրէ աճէր մանուկն, և թագուցանէր զանձն յորդոցն Իսրայելի. և երեւեցաւ տասնամեայ յորժամ լինէր նմա ասէ[3]։ Գայր Յովսէփ ի շինուածոյ իւրմէ և

1. Իմա՛ Սպասել։
2. Յոր. Ելանել։
3. Այդպէս յօրինակին։

մտանէր ի տուն իւր, և գտու զՄարիամ յղի ծանրա-
ցեալ. և իբրև տեսանէր զնա այնպէս, բախէր զճակատ
իւր և ընկենոյր զինքն յերկիր, և լայր դառնապէս և
ասէր. Որո՞վ երեսօք հայեցայց առ Տէր Աստուած իմ,
զի՞նչ գործեցից վասն աղջկան, և զի կոյս առի զդա ի
տաճարէ Տեառն Աստուծոյ իմոյ և ոչ պահեցի զսա սուրբ.
Ո՞վ որսացաւ զիս, ո՞վ է որ գործեաց զչարիս ի տան
իմում. ո՞վ է որ գերեաց զկոյսս զայս յինէն. միթէ
առ իս կատարեցաւ ճառ պատմութեան Ադամայ. որ-
պէս Ադամ ի փառաւորութեան իւրում էր, և գայր
օձն և գտանէր զԵւա միայն և խաբէր զնա. միթէ
այնպէս եղեւ ինձ: Եւ յառնէր Յուսէփ ի սգոյ իւրմէ.
կոչէ զՄարիամ առ ինքն և ասէ ցնա. Երթ պաշտօ-
նեայ Աստուծոյ, զի՞նչ գործեցեր զայդ, մոռացար զը-
Տէր Աստուած քո, տառապեալ, և խոնարհեցուցեր
զանձն քո, որ սնեալն էիր ի սրբութիւն սրբոց: Եւ լայր
տրտմութեամբ դառնապէս, և ասէր. Վասն զի սուրբ
եմ ես՝ որ զայր ոչ գիտեմ: Տայր պատասխանի Յով-
սէփ և ասէր. Ապա յղութիւնս ուստի՞ է: Իսկ Մա-
րիամ ասէր. Կենդանի (է) Տէր Աստուած, զի ոչ գիտեմ
ուստի՞ է ինձ այս: Իբրև լսէր (յոր. լայր) Յուսէփ, եր-
կընչէր յոյժ, և լռեալ դադարէր, և խորհէր ի մտի իւրում,
թէ զի՞նչ արասցէ զնա. և ասէր. Եթէ թագուցանեմ զդա՝
մեղս առնում և գտանիմ հակառակ օրինացն Տեառն,
և եթէ յայտնեցից զսա որդոցն Իսրայելի, երկնչիմ՝ մի՛
թէ հրեշտակն Տեառն է՝ որ է ի սմա, և գտանիմ մատ-
նիչ մահու ամբիծ արեան. զի՞նչ արարից, գաղտ ար-
ձակեցից զնա յինէն:

Եւ մերձենայր գիշեր, և հրեշտակ Տեառն երեւէր
նմա և ասէր. Մի՛ երկնչիր ի կուսէդ. որ ի դմա ծնա-
նելոց է՝ ի Հոգւոյն սրբոյ է, ծնցի որդի և կոչես-
ցես զանուն նորա Յիսուս. Նա փրկեսցէ զժողովուրդ
իւր ի մեղաց իւրեանց: Եւ յառնէր Յովսէփ ի քնոյ
իւրմէ, և փառաւոր առնէր զՏէր Աստուած Իսրայելի,
որ ետ նմա այնպիսի շնորհս. և պահեաց զկոյսն:
Գայր Աննա դպիր և ասէ ցնա. Յուսէ՛փ, ընդէ՞ր ոչ
երեւեցար մեզ այսօր ի ժողովրդեանն: Եւ ասէ ցնա

Digitized by Google

Յովսէփ. Վասն զի վստահեալ էի ի ճանապարհի և հանգեալ զմի օր։ Դարձեալ յայնկոյս՝ և տեսանէր զՄարիամ յղի ծանրացեալ, երթայր առ քահանայն և ասէր. Նո՛ւր ինձ, որում դու վկայեցեր անօրինեցաւ յոյժ։ Եւ ասէ քահանայն. Զի՞նչ է այդ։ Եւ նա տայր պատասխանի և ասէր. Զի այդ կոյսդ զոր առեր ի տաճարէն Տեառն, պղծեաց զնա, գողացաւ հարսանիսն՝ և ոչ յայտնեաց որդոցն Իսրայելի։ Ասէ ցնա քահանայապետն. Զի գիտիցես եթէ ուստի՛ (°) եմ, առաքեա՛ զպաշտօնեայն Տեառն, և գտցես զի ծանրացեալ է կոյսն։ Երթային պաշտօնեայքն և գտին որպէս ասացնոցա Աննաս դպիրն, և ածին զկոյսն ի տաճարն և կացուցին զնա ի տաճարին, և ընդ նմա զՅովսէփ։ Ասէ ցնա քահանայապետն. Զի՞ արարեր զայդ՝ զի վշտացուցեր զանձն քո, մոռացար զՏէր Աստուած քո՝ որ սնեալ էիր ի սրբութիւն սրբութեանց, և ընդունէիր կերակուր ի ձեռն հրեշտակին։ Իբրեւ լսէր Մարիամ զբարբառ նոցա, եթէ ընդէ՞ր գործեցեր զայդ, լայր դառնապէս և ասէր. Կենդանի է Տէր Աստուած իմ, սուրբ եմ ես ի սմանէ։ Ասէ քահանայապետն. Մի՛ ստեր այլ զճըշմարիտն ասա ինձ. Գողա(ցա)ր զհարսանիսն քո և ոչ յայտնեցեր որդոցն Իսրայելի, ոչ խոնարհեցուցեր ըզգլուխ քո ընդ ձեռամբ իմով, զի օրհնէր զաւակ քո ընդ ամենայն երկիր։ Եւ Յովսէփ լուռ կայր յատենին։ Ասէ ցնա քահանայն. Տո՛ւր ի բաց զկոյսդ զոր առեր ի տաճարէն Տեառն։ Ասէ Յուսէփ. Կենդանի է Տէր Աստուած իմ, զի ոչ գիտեմ զդա. և լնոյր արտասուօք։ Եւ ասէ քահանայն. Արբուցից զջուրն յանդիմանութեան ձեզ, և Տէր յանդիմանեսցէ զմեղս ձեր առաջի աչաց ձերոց։ Եւ առեալ արբուցանէր Յովսէփու և Մարիամու, և առաքէր ի լեառնակողմն. և գային իջանէին ողջանդամ. և զարմանայր ամենայն ժողովուրդն, իբրեւ տեսանէին զնոսա՝ զի ոչ յայտնեցան մեղք նոցա։ Եւ ասէ ցնոսա քահանայն. Որովհետեւ ոչ յայտնեաց զմեղս ձեր, և ոչ ես դատեմ զձեզ. և արձակեաց զնոսա։ Եւ առնոյր Յուսէփ զՄարիամ և երթայր ի տուն իւր։

Digitized by Google

Եւ հրաման եղ (յ)Աւգոստոս կայսերէ աշխարհագիր առնել որչափ իցեն ի Բեդղահէմ և յամենայն ի Հըրէաստանի։ Ասէ Յովսէփ. Ես գիտեմ զորդիս իմ, բայց վասն աղջկանս այս՝ զի՞նչ արարից զսա. թէ կին գրեցից՝ ամաչեմ. թէ դուստր՝ գիտեն ամենայն որդիքն Իսրայելի՝ զի ոչ գոյ իմ դուստր. և ասէ. զի և այս ոչ է[1]. Տէրն արասցէ զինեւ որպէս և կամեսցի։ Եւ վարձեաց Յովսէփ զգրաստ իւր և նստուցանէր ի վերայ իւր զՄարիամ. և Մանուիէլ որդին Յովսեփու երթայր զհետ Մարիամայ, և գնացին իբրեւ երիս մղոնս։ Դառնայր Յովսէփ և տեսանէր զՄարիամ տըրտմեալ, և ասէր ի մտի իւրում, թերեւս ծանր[2] ինչ իցէ վասն յղութեանն. և դառնայր միւսանգամ և տեսանէր զնա ծիծաղել. և ասէ ցնա Յովսէփ. Մարիամ, զի՞նչ է այդ՝ զի տեսանեմ զերեսս քո երբեմն տխուր և երբեմն ծիծաղել։ Պատասխանի ետ Յովսէփայ և ասէ Մարիամ. Երկուս ժողովս տեսանեմ, մինն սգոյ, և մինն ցնծութեան և ուրախութեան։ Իբրեւ կային ի մէջ ճանապարհին՝ ասէ Մարիամ ընդ Յովսէփ. Իջո՛յ զիս յիշոյս, քանզի որ յիս է՝ ճեպէ զիս զգնալ։ Եւ դարձեալ ասէ. Իջո՛յ զիս վաղվաղակի։ Եւ ընթացեալ իջուցանեն զնա։ Եւ ասէր. Յո՞վ տարայց զքեզ և ծածկեցից, զի տեղիս անապատ է։ Եւ եգիտ այր մի և մուծանէր զնա ի ներս, և կացուցանէր առ նմա զորդին իւր, և ինքն ելանէր ի խնդիր մանկաբարձի յերկիրն Եբրայեցւոց ի Բեդղեհեմ։

Ես Յովսէփ գնայի և համբառնայի զաչս իմ ի վեր յերկինս, և տեսանէի ընդ օդսն կացեալ, և զթռչունս դադարեալ, և տեսանէի կուժ[3] մի՝ զի կայր, և կաւագործն անդ կողմեալ, և եդեալ այս[4] իւրեանց ի բերան և ծամէին. իբրեւ ոչ ծամէին և բառնային մերձեցուցանել առ բերանն՝ և ոչ մերձեցուցանէին. և ամենեցուն զերեսս ի վայր արկեալ հայէին և

1. Յոր. էր՝ այս ոչ է։
2. Յոր. եղեալ էր ծաղր։
3. Յօրինակին եղեալ էր կոյր։
4. Այդպէս էր յօրինակին։

Digitized by Google

տեսանէին հօտս՝ զի դադարէին և ոչ գնային. և համբառնային[1] հովիւքն զգաւազանն հարկանել զհօտս իւրեանց. և զձեռս իւր բարձրագոյնս համբառնայր և հայէր հեղեղատ մի գետոյ դադարեալ. և տեսանէի ուլս ճարակաւորս[2] եդեալ զբերանս իւրեանց առ ափն գետոյն. և ոչ ինչ ճարակէին: Եւ տեսանէի կին մի՝ զի իջանէր ի լեռնամէջ, պատահեցաք միմեանց և ողջունեցաք. հարցանէր ցիս և ասէր. Ո՞վ այր դու, յո՞վ երթաս, և ո՞վ է որ է ծնել ի յայրին: Եւ ասեմ. Մարիամ՝ որ նստեալ էր ի տաճարին վիճակեցաւ ինձ ի կնութեան, և ոչ է իմ կին, այլ ի Հոգին սուրբ է յղացեալ: Ասէ ցնա կինն. Զայդ արդա՞ր ասացեր: Եւ ասէ Յովսէփ. Ե՛կ և տես:

Եւ երթայր ընդ նմա մանկաբարձն, գային երկուքն ի դուրս այրին, և ամպ լուսաւոր հովանի լինէր ի վերայ այրին: Եւ ասէ մանկաբարձն. Մեծացաւ անձն իմ յաւուրս յայսմիկ, և տեսի աչօք իմովք նոր սքանչելիս, զի փրկութիւն ետ Աստուած Իսրայէլի: Եւ վաղվաղակի անդէն սիւնս լուսոյ բարձրացաւ ի յայրէ անդի, և լոյս մեծ երեւեցաւ յայրին, որում չկարէին աչք ի նա հայել, կամ հանդուրժել. և յետ միոյ յայրին[3], լոյսն դարձեալ ի մի կողմն մերժէր, մինչեւ երեւեցաւ մանուկն. զի առնէր մանուկն ստինս և կերակրէր. և զաղաղակ բարձեալ մանկաբարձն՝ և ասէր յայրէ անդի, արդարացեալ (°). և պատահէր կնոջ միում որում անունէր Սողոմէ. և ասէ. Զոր տեսեալ եմ պատմեմ քեզ. Կոյս մի ծնաւ, զարմանք են ի վեր քան զամենայն բնութիւն: Եւ ասէ Սողոմէ. Կենդանի է Տէր Աստուած իմ, եթէ ոչ երթայց ստուգեցից և տեսանեմ աչօք, ոչ հաւատամ՝ եթէ կոյս ծնաւ: Եւ մտանէր ի ներքս մանկաբարձն և ասէր. Մարիամ. Զսպետ զքեզ, զի Սողոմէ կամի տեսանել զքեզ: Եւ զաղաղակ բարձեալ ասէ. Վա՜յ

1. Յոր. եղեալ էր՝ գործանային:
2. Յոր. ճարակոց յորս:
3. Անշուշտ՝ ժամու մը կամ վայրկեանի:

Digitized by Google

լիցի մեղաց իմոց, և թերեհաւատութեան, զի փորձեցի զԱստուած կենդանի. և ահա ձեռք իմ հրով վառեալք անգանին յինէն։ Եւ իջեալ ի ծունր՝ աղաչէր զԱստուած և ասէր. Աստուած հարցն մերոց, յիշեա զիս՝ զի զաւակ Աբրահամու եմ ես՝ Սահակայ, Յակոբայ. մի խայտառակեր յորդոցն Իսրայելէ, այլ տուր զիս աղքատաց, զի դու գիտես զի զտեսչութիւն անուան քո կատարեցի, և զվարձս իմ լիով ունիմ ի քէն։

Եւ ահա հրեշտակ Տեառն կայր և ասէր. Սողոմէ, Սողոմէ. լուաւ Տէր խնդրուածաց քոց, ձգեա զքեզ ի մանուկդ, և եղիցի փրկութիւն մեղաց։ Եւ բառնայր Սողոմէ զմանուկն և ասէ. Սա ծնաւ Իսրայելի թագաւոր։ Յայնժամ ասէ. Թագաւորք մոգուց ... և տեսանեն ... ի յերկրպագութիւն ... յորժամ ութերրորդ պահուն եղեւ, քանզի ցան ... գային յարեւելից, և ասէին. Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից. զի տեսաք զաստղն յարեւելս և եկաք երկիր պագանել[1]։

Իբրեւ լուաւ արքայն Հերոդէս խռովեցաւ յոյժ, և առաքեաց զսպասաւորս իւր առ մոգս, և զքահանայապետսն պահէր ի տան դատաստանի, և ասէ. Ո՞ւր է որ գրեցաւ առ ձեզ վասն Քրիստոսի, որ ծնեալ է։ Եւ փորձէր զմոգսն, և ասէ ցնոսա. Զի՞նչ տեսայք դուք։ Ասեն. Տեսաք զաստղն՝ զի ծնաւ ի մէջ Իսրայելի, և եկայք երկիր պագանել նմա։ Եւ ասէ Հերովդէս արքայն. Երթայք ստուգեցէք, եթէ գտանիցէք՝ ասացէք ինձ՝ որ գամ երկիր պագանեմ նմա։

Իբրեւ ելան մոգքն ընդ առաջ, ահա աստղն զոր տեսին յարեւելից, գայր և առաջնորդէր նոցա, մինչեւ գայր յայրն և կախէր ի գլուխ մանկանն. և տեսանէին զնա մոգքն առ մայր իւր Մարիամ. և եհան ձգեաց ի վերայ ոսկի և զմուռս և երկիր պագանէին նմա. այլ հրաման էին առեալ ի հրեշտակէն, այլ մի եւս դառնալ ի Հրէաստան, յայլ ճանապարհ գնացին յաշխարհն իւրեանց։ Յայնժամ իմացաւ Հերովդէս թէ խաբեցաւ ի

1. Այս տուն յօրինակին թէեւ գրեալ էր միայար, այլ թերի գոլով իմաստիցն եղաք զկէտսն։

մոգուցն. բարկացաւ սրտմութեամբ, և ասէ ցնոսա. Կոտորեցէք զմանկունսդ որ ի Հրէաստանի է և յամենայն սահմանս նոցա՝ յերկեմենից մինչ ի խոնարհ: Իբրև լուաւ Մարիամ՝ եթէ Հերովդէս կոտորէ զմանգունս, յայնժամ փաթութեաց զմանուկն և եդիր ի մսուր յանբանից: Լուէր Եղիսաբէթ՝ եթէ Յովհաննէս խնդրի, առեալ զնա ելանէր յանապատն, և խնդրէր խնդիր յԱստուծոյ և ասէր վասն պահպանութեան, և չգտան դադարք. յոգոց հանէր Եղիսաբէթ և ասէր. Լեառն Տեառն, ընկալ զմանուկս մարբն. և անդէն պատառեալ լեառն, և ընդունէր զնոսա: Իսկ Հերովդէս խնդրեաց զՅովհաննէս և առաքեաց զպաշտօնեայս առ սեղանն Տեառն, (առ) Զաքարիայ, ասէ. Ո՞ւր է որդին քո. ո՞ւր թագուցեր զնա: Եւ ասէ. Պաշտօնեայ եմ ես, և կամ ի տաճարի Աստուծոյ, ո՞րպէս գիտիցեմ ուր է որդին իմ: Երթային պաշտօնեայքն և պատմէին նմա: Եւ զայրացեալ բարկանայր յոյժ Հերովդէս, և ասէ. Որդի[1] նորա թագաւորելոց (է) ի վերայ Իսրայելի: Առաքէ զնա երկրորդ անգամ Հերովդէս, և ասէ. Ասա ինձ ո՞ւր է որդին քո: Եւ նա տայր պատասխանի և ասէր. Ոչ գիտեմ ո՛ւր իցէ: Եւ երթային պատմէին նոյնպէս: Եւ առաքեաց առ նա երրորդ անգամ, և ասէ. Ո՞չ գիտես թէ արիւն քո ընդ ձեռամբ իմով լինիցի: Երթային պաշտօնեայքն և ասէին քահանային զբանս զայսոսիկ: Եւ ասէ Զաքարիայն. Վկայ է ինձ Աստուած, եթէ սպանէք զիս, զոգիս իմ Տէր ընդունի, զի զարիւն արդար հեղուք առ դրան խորանիս և սեղանոյս:

Եւ (ի) ժամու ողջունին գային առ միմեանս քահանայքն և ասէին. Ընդէ՞ր ոչ պատահեաց մեզ Զաքարիայ ըստ սովորութեան օրհնութեան. և կային և մնային Զաքարիայի ողջուն տալ նոցա ի ժամ աղօթիցն՝ փառաւորել զԲարձրեալն. և յամել նորա՝ զարմանային ամենեքեան. մի ոմն ի նոցանէ մտանէր ի սրբութիւնն, և տեսանէր առ սեղանն մածեալ զարիւն. և ձայն լուեալ՝ Զաքարիա սպանաւ, և ոչ ջնջեսցի ա-

1. Յօր. եղեալ էր՝ ղէ՞ղ է:

րիւնն, մինչեւ եկեսցէ վրէժխնդիրն։ Եւ իբրեւ լսէր, երկնչէր յոյժ եղեալ պատմէր որդոցն Իսրայէլի զոր ետեսն և լուաւ։ Դարձեալ մտանէին այլքն, և տեսանէին՝ զարիւն մածեալ առ սեղանոյն. իբրեւ տեսանէին պատառէին զհանդերձ իւրեանց վերուստ մինչ ի վայր. և մարմին նորա ոչ գտաւ, բայց արիւն նորա իբրեւ զքար մածեալ (կայր). և զարհուրեալ ելանէին արտաքս. և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

## Բ

## ՄԵԾԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՒՑԻՆ ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՒ ԱՆՆԱՅԻ ԾՆՕՂԱՑՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Ի թուոյ պատմութեանց երկոտասան ազգին էր Յովակիմ, մեծատուն յոյժ, և մատուցանէր կրկնակի ընդպատարագս իւր, և ասէր ի մտի իւրում՝ Յովակիմ. Յաւելուլ Աստուած պատարագին իմոյ[1], եղիցի ամենայն ժողովրդեանն, և թողութիւն Տեառն Աստուծոյ՝ ի քաւութիւն ինձ։

Մերձենայր օր Տեառն մեծի, և մատուցանէին որդիքն Իսրայէղի զպատարագս իւրեանց։ Կայր ընդդէմ նորա Ռոբէն և ասէր. Ո՛չ է քեզ պարտ նախ մատուցանել զպատարագսն, վասն զի զաւակ ոչ յարուցեր ի մէջ Իսրայէղի։ Տրտմէր Յովակիմ յոյժ և ոչ անկանէր յակն կնոջն իւրոյ, և երթայր առ երկոտասան ազգն Իսրայէղի. և՝ թէ ես միայն ոչ արարի զաւակ ի մէջ ժողովրդեանն։ Քննէր և տեսանէր զարդարսն՝ զի արարին զաւակ ի մէջ Իսրայէղի։

Եւ յիշէր զնահապետն զԱբրահամ, եթէ ի ծերու-

1. Այսպէս էր օրինակին։

Digitized by Google

թեան իւրում ետ Նմա զորդին իւր զԻսահակ. և տըրտմէր Յովակիմ յոյժ, և ոչ անկանէր յակն կնոջ իւրոյ, այլ գնայր յանապատն՝ և անդ հարկանէր զխորանն իւր, և պահէր պահս զքառասուն տիւ և զքառասուն գիշեր։ Եւ դնէր Յովակիմ և Աննա ի մտի իւրում և ասէր. Ոչ մերձեցայց ի կերակուր և յըմպելի՝ մինչև հայեսցի յիս Տէր Աստուած իմ. և եղիցի ինձ աղօթք իմ կերակուր և ըմպելի։

Իսկ կին Նորա Աննա երկուս ողբս ողբայր, և երկուս կոծս կոծայր։ Կոծեցայց, ասէ, զայրութիւնս իմ և ողբացայց զանզաւակութիւնս իմ[1]։ Մերձենայր օր Տեառն, և ասէ ցնա Յութենէ նաժիշտն իւր. Մինչև յե՞րբ տառապեցուցանես զանձն քո. ահա մերձեցաւ օր Տեառն մեծի, և ոչ է արժան քեզ սգալ. ա՛ռ յինէն զայս բարձս իսկ, զի ետ ինձ տիկինն գործս, զի չէ ինձ արժան կրել զայն, քանզի աղախին քոյ եմ, զի նկարագիր է արքունական։ Եւ ասէ ցնա Աննա. Ի բաց գնա յինէն, զայդ ոչ արարից[2], և Տէր Աստուած տառապեցոյց զիս յոյժ. միթէ խորամանկ ետ քեզ խրատ՝ և եկիր հաղորդել զիս մեղաց քոց։

Տայ պատասխանի Յութենէ աղախինն իւր և ասէր ցնա. Զի՞նչ եւս աւելի քան զայդ անիծեցից զքեզ. վասնզի լուար ինձ՝ զի արգել փակեաց Տէր զարգանդ քո, առ ի չտալոյ պտուղ որովայնի քո. և տրտմէր յոյժ Աննա։ Եւ մերկանայր յիւրմէ զհանդերձս սգանաց և լուանայր զգլուխն իւր և ագանէր հանդերձս հարսնութեանն։ Եւ յիննն ժամու աւուրն իջանէր ի դրախտն իւր, և տեսանէր ծառ մի դափնիդեայն, և նստէր ի ներքոյ նորա։ Եւ խնդրէր յԱստուծոյ և ասէր. Աստուած հարցն մերոց, օրհնեա զիս և լուր խնդրուածոց իմոց, որպէս լուար և օրհնեցեր զարգանդն Սառայի, և ետուր նմա զորդի զԻսահակ։

Եւ իբրև հայէր Աննա յերկինս, տեսանէր բուն մի

1. Յօր. վրիպակաւ եղեալ էր զայրութիւնս և ողբացայց զանզաւակութիւնս և զանզաւակութիւնս իմ։

2. Յօր. եղեալ էր, է բայց գնեալ յինէն զայդ ոչ արարի։

Digitized by Google

ձագուց ի ծառն դարնիդեայն. և ողբայր զողբս առանձին Աննա և ասէր. Վա՜յ է ինձ, և եղուկ եմ ես թշուառականս. ո՞ ծնաւ զիս, յորմէ՞ յարգանդէ ելի ես, զի ես միայն յանէծս ծնեալ առաջի որդւոցն Իսրայելի. զի թշնամանեցին և անարգեցին զիս, և ի բաց հանին զիս ի տաճարէ Տեառն Աստուծոյ իմոյ: Թշուառական եմ ես, ո՞ւմ նմանիցեմ ես. և ոչ թռչնոց երկնից, (զի և նոցա) զաւակ է առաջի քո, Տէր: Վա՜յ է ինձ, թէ ո՞ւմ նմանեցայ ես. (և) ոչ գազանաց երկրի նմանեցայ ես, զի և նոցա զաւակ գոյ առաջի քո Տէր: Վա՜յ է ինձ, թէ ո՞ւմ նմանեցայ ես. չնմանեցայ ես և անասնոց կենդանեաց, քանզի և անասնոց զաւակ գոյ առաջի քո, Տէր: Վա՜յ է ինձ, և ո՞ւմ նմանեցայ ես. զի և ջուրս ժառանգս ունին առաջի քո Տէր, քանզի ալիքն խաղաղք ցնծան և ցածք են, և ձկունքն օրհնեն զքեզ Տէր: Եղո՜ւկ եմ ես, վա՜յ է ինձ. ո՞ւմ նմանեցայ ես, և ոչ երկրի, զի և երկիր բերէ զպտուղ իւր ի ժամու, և ըզքեզ, Տէր, օրհնեն: Եւ ահա հրեշտակ Տեառն կայր առաջի նորա, և ասէ ցԱննա. Լուաւ Տէր Աստուած խնդրուածոց քոց. դու յղասցիս և ծնցիս որդի էգ, և անուանեսցես ի զաւակ քո՝ ընդ ամենայն երկիր: Եւ լնոյր ուրախութեամբ Աննա, և ասէր. Կենդանի է Տէր Աստուած իմ, թէ ծնեաց արու կամ էգ, տարայց մատուցից զնա պատարագ Տեառն Աստուծոյ, թէ եղիցի և ծնայց: Եւ անդէն վաղվաղակի իջանէր Յովակիմ. և կոչէր Յովակիմ զհովիւսն իւր առ ինքն և ասէր. Ածէք ինձ այսր որոջս տասն սպիտակս սուրբս, և եղիցին տասնեքին Տեառն Աստուծոյ իմոյ. և ածէք ինձ որթս երկոտասան սուրբս և սպիտակս, և եղիցին քահանայիցն և ծիրակուտ որդւոցն Իսրայելի. և քօշս հարիւրս, և քօշքն եղիցին ամենայն ժողովրդեանն:

Եւ ահա Յովակիմ գայ(ր) հօտիւքն իւրովք. և կին նորա կայր առ դրանն նորա, և տեսանէր զՅովակիմ զի գայր հօտիւքն իւրովք. և ընթացաւ ընդ առաջ, և կախեցաւ զպարանոցէ նորա, և ասէ ցնա. Այժմ գիտացի թէ Տէր Աստուած օրհնեաց զիս յոյժ, զի այրին ոչ է այսուհետեւ այրի, և անժառանգն՝ ոչ է

անժառանգ։ Եւ հանգչէր Յովակիմ յաւուրն յառաջնում ի տան իւրում, և ի վաղիւն անդր մատուցանէր զպատարագն իւր, և ասէր. թէ Աստուած քաւեսցէ զիս, և Պետեղոմն քահանայն յայտնեսցէ ինձ. և մատուցանէր զպատարագն, և հայէր ընդ Պետեղոմն քահանային՝ զի ելանէր ի վերայ սեղանւոյն Տեառն. ոչ ինչ կային մեղք ի նմա։ Եւ ասէր Յովակիմ. Այժմ գիտացի՝ եթէ Տէր Աստուած օրհնեաց զիս և եթող զամենայն զմեղս իմ։ Եւ իջանէր Յովակիմ և Աննա ի տաճարէ Տեառն արդարացեալ, և գայր ի տուն իւր։ Եւ լնուին Աննայի ամիսք եօթն, և ի յամսեանն եօթներորդի ծնանէր և հարցանէր ցմանկաբարձն՝ թէ զի՞նչ է ծնեալդ։ Եւ նա ասէ թէ՝ Էգ մանուկ է։ Եւ ասէ ցնա Աննա. Մեծացուցէ անձն իմ զՏէր յայսմ աւուր. և առնէր զնա ի կողմն. և իբրև լնուին աւուրքն, լուանայր և սրբէր զնա յաղտոյ իւրոյ. տայր ստին մանկանն և կոչէր զանուն նորա Մարիամ, և օր ըստ օրէ աճէր մանուկն և զարգանայր։

Եւ իբրև լցաւ նորա ամիսք վեց, թողլ տայր մայրն զի թեւակոխեսցէ առ ի գնալ։ Եւ իբրև կոխեաց եօթն քայլ, գայր անկանէր ի գիրկն մօրն իւրոյ, և առեալ զնա մայրն ի գիրկսն, և ասէր. Կենդանի է Տէր Աստուած մեր, որ ոչ կոխեսցես զերկիր՝ մինչև տարայց[1] զքեզ ի տաճար Տեառն. և առնէր սրբութիւն Աննա ի տան իւրում և սենեկի. և պիղծ և աղտեղի անդր ոչ հմուտ։ Եւ կոչեաց զսուրբ դստերս Եբրայեցւոց՝ առ ի սբօսացուցանել զնա։

Եւ իբրև լցաւ առաջին տարին մանկանն, առնէր ուրախութիւն մեծ Յովակիմ և Աննա, և կոչէր ըզքահանայս և զհայրապետսն և զդպիրսն և զծերակոյտսն և զամենայն ժողովսն Իսրայելի։ Եւ առեալ մատուցանէր Յովակիմ զմանուկն քահանայապետիցն և օրհնէին զնա և ասէին. Աստուած հարց մերոց, օրհնեա՛ զմանուկս զայս, և շնորհեա՛ սմա անուանի լինել յաւիտենական յամենայն ազգս. և ասէր ամենայն ժո-

1. Յոր. տարեայց,

ժողովրդն[1]. Եղիցի, եղիցի։ Եւ մատուցանէր զնա քա-
հանայապետիցն և օրհնէին զնա և ասէին. Աստուած բարձրութեան, հայեաց ի մանուկս յայս, և օրհնեա զսա օրհնութեամբ որ ոչ անցանէ. Եւ առնոյր զնա մայրն իւր յաղօթից տանէն իւրոյ, և տայր նմա ստինս, և ասէր. Օրհնեցից[2] օրհնութեամբ զՏէր Աստուած իմ, զի այց արար և եբարձ զնախատինս իմ յինէն, և զթշնամանիս իմ. և ետ ինձ Տէր Աստուած պտուղ արդարութեան յայսմ[3] աւուր առաջի նորա։ Ո՞ պատմեսցէ որդւոցն Իսրայելի, թէ Աննա՝ մանուկ ստնդիայ ունի։ Եւ հանգուցանէր զնա օրհնութեամբ ի տան, (և) ինքն ահիւ ելանէր և պաշտէր զնա. և յորժամ զրաւ[4] լինէր ընթրեացն, իջանէին ուրախութեամբ և փառաւոր առնէին զԱստուածն Իսրայելի։ Եւ իբրև եղև մանուկն երկու ամաց, ասէր Յովակիմ ցկինն իւր. Ե՛կ տարցուք զսա ի տաճար Տեառն՝ զի հատուսցուք զխոստմունս զոր խոստացաք, մի՛թէ առաքեսցէ առ մեզ Տէր, և անընդունելի լիցի պատարագս մեր։ Եւ ասէ Աննա. Կացցուք և յերկրորդ եւս ամս, մի՛թէ խընդրեսցէ յանկարծ զհայր կամ զմայր իւր։ Եւ ասէ Յովակիմ. Ամէն, այդպէս եղիցի։ Եւ իբրև լինէր երրորդամեայ մանուկն՝ ասէր Յովակիմ. Կոչեսցուք ըզդստերս Եբրայեցւոցն և առցեն իւրաքանչիւր ղամբարս, և լուցեալ բորբոքեսցին, և մի՛ դարձցի ոք ի նոցանէ յետս և գերեսցէ սիրտ իւր ի տաճարէ Տեառն։ Եւ զմանուկն քահանայն առեալ ի գիրկս իւր և ասէր. Մեծացոյց Տէր Աստուած զանուն քո ընդ ամենայն երկիր ի վաղճան աւուրց քոց, և յայտնեսցէ Տէր Աստուած զբան իւր որդւոցն Իսրայելի։ Եւ նստուցանէր զնա յերրորդ աստիճանի սեղանոյն, և տայր նմա Տէր Աստուած շնորհս, և օրհնէր զնա տունն Իսրայելի, և պար առեալ կաքաւէր ոտիւք իւրովք։ Եւ իջանէին հայր և մայր նորա փառաւորելով զՏէր, զի ոչ անձկայր մանուկն ի նոսա։

1. Յոր. ժողովրդեան։
2. Յոր. էր՝ օրհնէր։
3. Յոր. եղեալ էր ձայն։
4. Յոր. էր գըաւոր։

Եւ էր Մարիամ ի տաճարին Տեառն իբրեւ զաղաւնի յերամոյ, և ընդունէր կերակուր ի ձեռանէ հրեշտակին։ Եւ իբրեւ լինէր երկոտասանամեայ ի տաճարին Տեառն, խորհուրդ առնէին. Ահա եղեւ Մարիամ երկոտասանամեայ, զի՞նչ արասցուք զնա։ Եւ ասէին քահանայապետքն ցԶաքարիաս. Դու ես կարգեալ առ սեղանն Տեառն, մուտ ի սրբութիւն, և աղօթս արա վասն նորա, և զոր ինչ յայտնեսցէ քեզ Տէր Աստուած, զայն արասցուք։ Եւ առնոյր քահանայն զերկոտասան զանգակն և մտանէր ի սրբութիւն սրբոցն, և առնէր աղօթս վասն նորա։ Եւ ահա հրեշտակ Տեառն իջանէր և ասէր. Զաքարիա՛, ե՛լ արտաքս և ժողովեա զամենայն անմայրիս (ամուրիս) ժողովրդեան քո. և բերցեն իւրաքանչիւր զգաւազան, զի զոր ցուցցէ Տէր Աստուած՝ նմա եղիցի կին։

Եւ ելանէին քարոզքն ընդ ամենայն երկիրն Հրէաստանի, և հարկանէր փողն Տեառն, և ընթանային ամենեքեան առ հասարակ. ընկենոյր Յովսէփ զուրագն յինքենէ և գայր հասանէր առ նոսա։ Եւ ժողովեալ ամենեքին առ քահանայս՝ առեալ ընդ իւրեանս զգաւազանս իւրեանց. և առեալ ընդունէր զգաւազանսն, մտեալ կայր ի տաճարն յաղօթսն. առնոյր զգաւազանսն և ելանէր արտաքս, և տայր իւրաքանչիւր նոցա՝ և ոչ գոյ(ր) ի նոսա նշան. իսկ զվերջին տայր Յովսեփայ, և ահա ելանէր աղաւնի մի ի գաւազանէն, և կայր ի վերայ գլխոյն Յովսեփայ։ Եւ ասէր քահանայն ցՅովսէփ. Դու ժառանգեսցես զկոյսն Տեառն. ա՛ռ զդա ի քեզ ի պահպանութիւն։ Դիմադարձ լինէր Յովսէփ և ասէր. Որդիս ունիմ և ծեր եմ, և սա կուսան և յայր հասեալ. մի՛ յանկարծակի այպն առնիցեն զիս որդիքն Իսրայելի։ Ասէ քահանայն ցՅովսէփ. Երկի՛ր ի Տեառնէ Աստուծոյ, և յիշեա՛ց որչափ արար Դադանայ և Կորխայ և Աբիրոնի. և ո՛րպէս պատառեցաւ երկիր և ընկլան ամենեքեան զպատիժն պատուհասի, վասն դիմադարձութեանց։ Եւ արդ երկի՛ր դու Յովսէփ, և մի՛ յանկարծ լիցի այդ ի տան քում։ Երկնչէր Յովսէփ և առնոյր զնա պահպանութեամբ։ Եւ ասէր Յովսէփ ցՄա-

Digitized by Google

րիամ. Առի զքեզ ի տաճարէն Տեառն, և թողում ըզքեզ ի տան իմում, և ես երթամ շինեմ զշինութիւն իմ և եկից առ քեզ. և Տէր պահեսցէ զքեզ։

Լինէր խորհուրդ քահանայից ընդ միմեանս և ասէին. Արասցուք և վարագոյր մի տաճարին Տեառն։ Եւ ասէ քահանայն. Կոչեցէք ինձ կուսանս ութ ի յազգէ Յուդայ Դաւթի. և երթային պաշտօնեայքն խնդրել, և գտանէին եօթն։ Եւ յիշէր քահանայն զՄարիամ թէ էր յազգէն Դաւթի, և էր սուրբ յԱստուծոյ. և երթային պաշտօնեայքն և ածէին զնա և մուծանէին ի տաճարն Աստուծոյ։ Եւ ասէր քահանայն. Արկէք ինձ վիճակս թէ ո՛ ի ձէնջ մանեսցէ ինձ զանապական ոսկին և զբեհեզս և զկապուտակս և զճշմարիտ ծիրանի և ըզկարմիրսն։ Եւ ելանէր ճշմարիտ վիճակն՝ ծիրանին և կարմիրն՝ Մարիամու, և առեալ երթայր ի տուն իւր առ ի մանել։

Յայնմ ժամանակի դադարեալ էր Զաքարիա, և կայր ընդ նմա Սամուէլ մինչև դարձեալ խօսէր Զաքարիաս։ Մարիամ առեալ զկարմիրն մանէր, և ի ձեռին իւրում բարձեալ սափոր՝ և երթայր յաղբիւրն լնուլ ջուր։ Եւ ահա լինէր նմա բարբառ. Լի շնորհօք, Տէր ընդ քեզ, օրհնեալ ես դու ի կանայս։ Եւ նա դարձեալ հայէր յաջ և յահեակ տեսանել՝ թէ ուստի՞ եղև ձայնն։ Սարսեալ և դողացեալ՝ դնէր և հանգուցանէր զսափորն, և առնոյր ի ձեռն զծիրանին, և նստէր առ ի մանել։ Եւ ահա հրեշտակ Տեառն կայր առ նմա, և ասէր ցնա. Մի՛ երկնչիր Մարիամ, զի գտեր շնորհս յԱստուծոյ. դու յղասցիս և ծնցիս որդի։ Ի բանէ նորա ածէր զմտաւ Մարիամ՝ և ասէր. Յղացայց ես որպէս զամենայն կին։ Եւ ահա մերձենայր հրեշտակն և ասէր ցնա. Ոչ այդպէս Մարիամ. Հոգին սուրբ եկեսցէ ի քեզ. զի որ ծնանելոցն է ի քէն՝ սուրբ կոչեսցի, որպէս և ի Հոգւոյն սրբոյ ծնեալն՝ սուրբ Աստուծոյ բարձրելոյ. և կոչեսցես զանուն նորա Յիսուս, և նա փրկեսցէ զժողովուրդս իւր ի մեղաց իւրեանց։ Եւ ասէ Մարիամ. Ահաւասիկ կամ աղախին Տեառն, եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ առեալ նիւթէր զծիրանին և ըզ-

Digitized by Google

կարմիրն, և տարեալ մատուցանէր քահանային, և քահանայն օրհնէր զնա, և ասէր ցՄարիամ. Մեծացոյց Տէր զանուն քո, և եղիցիս օրհնեալ յամենայն յազգս երկրի։

Ուրախ լինէր Մարիամ, և երթայր առ ազգականն իւր Եղիսաբեթ, և բախէր զդուրսն. և իբրև ընթանայր առ ազգականն իւր Եղիսաբեթ և բախէր ըզդուրսն, ընթանայր առ դուրս և բանայր նմա։ Եւ ասէ. Ուստի՞ իցէ ինձ այս՝ զի եկեսցէ մայր Տեառն իմոյ առ իս։ Եւ ահա խաղայր մանուկն յորովայնի նորա։ Իսկ Մարիամ մոռանայր զբանս զոր խօսեցաւ ընդ նմա Գաբրիէլ, զաչս ի վեր ամբառնայր և ասէր. Ո՜վ Տէր իմ և Աստուած իմ, ո՞վ իցեմ ես, զի ամենայն ազգ և ազինք երանիցեն ինձ։ Եւ մնայր առ Եղիսաբեթ ամիսս երիս. և օր ըստ օրէ աճէր որովայն իւր, և թաքուցանէր զինքն յորդոցն Իսրայելի. և էր չորեքտասանամեայ յորժամ լինէր աւետիքն։ Եւ ապա գայր Յովսէփ ի շինուածութեանց իւրոց, և մտանէր ի տուն իւր և գտանէր զՄարիամ ծանրացեալ։ Եւ իբրև տեսանէր, անդէն բախէր զկուրծս իւր, և ընկենոյր զինքն ի յերկիր և լայր տրտմութեամբ դառնապէս և ասէր. Որո՞վ երեսօք հայեցայց առ Տէր Աստուած իմ. զի՞նչ գործեցից ես վասն այս աղջկան, զի կոյս առի զսա ես ի տաճարէն Տեառն Աստուծոյ իմոյ, և ոչ պահեցի զսա սուրբ. ո՞վ իցէ որ որսացաւ զիս. ո՞վ իցէ որ զչարիս զայս արար ի տան իմում. միթէ առ ի՞ս կատարեցաւ ճառ պատմութեանն Ադամայ, որ էր լի փառօք և գայր օձն գտանէր զԵւայ միայն և խաբէր. ա՛յսպէս եղև ինձ։

Եւ յառնէր Յովսէփ յերկրէն և ի քըրձէն յոր անկեալ կայր, և ասէր ցՄարիամ. Փոյթ պաշտօնեայդ Աստուծոյ, զի՞նչ արարեր զայդ, մոռացար զԱստուած քո, տառապեալդ խոնարհեցուցեր զանձն քո, որ սնեալդ էիր ի սըրբութիւն սրբոցն։ Իսկ նա լայր դառնապէս և ասէր. Քանզի սուրբ եմ և զայր ոչ գիտեմ։ Տայր նմա պատասխանի և ասէր. Իսկ յղութիւն քո ուստի՞ է։ Ասէ Մարիամ. Կենդանի է Տէր Աստուած իմ, թէ գիտեմ ես թէ ուս-

տի է ինձ այս։ Իբրեւ լսէր Յովսէփ՝ երկնչէր յոյժ և լռեալ դադարէր, և խորհէր ի մտի իւրում, թէ զի՞նչ արարից զսա. մեղս առնեմ, թէ թագուցից զսա՝ գըտանեմ հակառակ օրինացն Աստուծոյ. եթէ յայտնեցից որդւոցն Իսրայելի՝ երկնչիմ։ Ո՞վ գիտէ՝ եթէ հրեշտակական իցէ որ ի նմանէ. և գտանիմ մատնիչ մահու անբիծ արեան. զի՞նչ արարից. գաղտ արձակեցից զսա յինէն։

Իսկ ի մերձեալ գիշերւոյն, ահա հրեշտակ Տեառն երեւեցաւ նմա և ասէր. Յովսէփ, մի՛ երկնչիր վասն կուսիդ, զի որ ի դմանէ ծնելոցն է, ի Հոգւոյն սրբոյ է. ծնցի քեզ որդի, և կոչեսցես զանուն նորա Յիսուս. Նա փրկեսցէ զժողովուրդ իւր ի մեղաց իւրոց։ Յառնէ Յովսէփ ի քնոյ իւրմէ, և փառաւորէր զԱստուածն Իսրայելի, որ ետ նմա զայնպիսի շնորհն. և զկոյսն պահեաց։ Գայր առ նա Անանիաս դպիրն և ասէ ցնա. Յովսէփ, ընդէ՞ր ոչ երեւեցար մեզ ի ժողովրդեանն։ Եւ ասէր ցնա Յովսէփ. Վասն զի աշխատ եղէ ի ճանապարհէն և հանգեայ։ Եւ դառնայր յայսկոյս Անանիաս դպիրն՝ և տեսանէր զՄարիամ ծանրացեալ յղութեամբ։ Եւ երթայր առ քահանայսն և ասէր ցնոսա. Լուարուք ինձ. Յովսէփ որում դուք վկայեցէք, անօրինեցայք յոյժ։ Եւ ասէր քահանայն. Զի՞նչ իցէ։ Եւ նա տայր պատասխանի. Զկոյսն զոր ա՛ռ ի տաճարէն Տեառն, ոչ պահեաց զնա սուրբ։ Եւ ասեն քահանայքն. Եւ Յովսէփ զայն (ոչ) գործէր։ Զի գիտասցես եթէ ոչ ասեմ (սուտ), առաքեա՛ ըզպաշտօնեայս, և գիտասցեն զկոյսն յղի ծանրացեալ։ Երթային պաշտօնեայքն և գտանէին զնա յղի, որպէս ասաց Անանիաս։ Եւ ածեն զկոյսն ի տաճարն, և կացուցանեն զնա ի դատաստանի, ընդ նմին և զՅովսէփ։ Ասէ քահանայն ցՄարիամ. Զի՞ արարեր զդա, Մարիամ, զի վըշտացուցեր զայրն քո, մոռացար զՏէր Աստուած քո. որ սնեալ էիր ի սրբութիւն սրբոց, և ընդունէիր կերակուր ի ձեռաց հրեշտակաց։ Իսկ նա զայս լսէր՝ լայր դառնապէս և ասէր. Կենդանի է Տէր Աստուած իմ, զի սուրբ եմ ես առաջի նորա, և զայր բնաւ ոչ

Digitized by Google

գիտեմ։ Ասէ քահանայն ցՅովսէփ. Զի՞ արարեր զայդ։ Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէր Աստուած, զի սուրբ եմ ես ի նմանէ։ Եւ ասէ քահանայն. Մի՛ ասեր սուտ, այլ զճշմարիտն ասա. գողացար զհարսանիս քո և ոչ յայտնեցեր որդոցն Իսրայէղի, և ոչ խոնարհեցուցեր զգլուխ քո ընդ ձեռամբ իմով, որպէս զի օրհնեսցի զաւակ քո ընդ ամենայն երկիր։ Եւ Յովսէփ լուռ եւեթ կայր։ Եւ լնոյր արտասուօք քահանայն և ասէր ցՅովսէփ. Արբուցից ձեզ (զ)ջուրն յանդիմանութեան Տեառն, և Տէր յայտնեսցէ զմեղս ձեր առաջի աչաց մերոց։ Եւ առեալ քահանայն զՅովսէփ, արբուցանէր զնա, և առաքէր ի լեառնակողմն, և գայր իջանէր ողջանդամ։ Արբուցանէր և Մարիամու, նոյնպէս իջանէր նա ողջանդամ, և զարմանայր ամենայն ժողովուրդն՝ իբրեւ ոչ յայտնէ՛ին մեղք նոցա։ Եւ ասէ ցընոսա քահանայն, թէ Տէր Աստուած ոչ յայտնեաց զմեղս ձեր. և ապա արձակէր զնոսա։ Առնոյր Յովսէփ զՄարիամ, և երթայր ի տունն իւր ուրախութեամբ, և փառաւոր առնէր զԱստուածն Իսրայէղի։

Հրաման լինէր յԱւգոստոս կայսերէ, աշխարհագիր առնել և աշխարհամար, թէ ո՛րչափ իցեն ի Բեթղահէմ Հրէաստանի։ Եւ ասէր Յովսէփ. Ես գիտեմ զորդիսն իմ, վասն աղջկանս այս զի՞նչ արարից. ո՞րպէս գրեցից զսա կին ինձ. թէ գրեցից՝ ամաչեմ. և թէ դուստր, գիտեն ամենայն որդիքն Իսրայէղի, զի և ոչ այդպէս է։ Այս է օր Տեառն, արասցէ որպէս և կամի։

Եւ հանդերձէր Յովսէփ զգրաստն իւր, և նստուցանէր զՄարիամ ի վերայ նորա, և գայր Սիմոն որդին Յովսեփու՝ որ երթայր զկնի Մարիամու։ Եւ իբրեւ երթային մղոնս երիս, գնայր Յովսէփ և տեսանէր զՄարիամ տրտում, և ասէր ի միտ իւրում՝ թերեւս ծանր ինչ եղեւ վասն յղութեան. և դարձեալ միւսանգամ դառնայր ի նա, և տեսանէր զնա զի ծիծաղէր։ Եւ ասէր Յովսէփ. Զի՞նչ է Մարիամ, երբեմն տեսանեմ զերեսս քո զուարթ, և երբեմն տեսանեմ տրտում և տխուր։ Տայր պատասխանի Մարիամ և ասէր ցՅովսէփ. Երկուս ժողովս տեսանեմ ես, զմինն

Digitized by Google

սգով, և զմիւսն ուրախութեամբ։ Եւ իբրև գնացին զմէջ ճանապարհի՝ ասէր ցՅովսէփ. Իջո՛ զիս յիշոյս, զի որ յիսն կայ՝ ճեպէ զիս գնալ։ Ասէ Յովսէփ. Ո՞ւր կամիս թէ տարայց զքեզ։ Դարձեալ ասէ ցնա Մարիամ. Իջո՛ փաղփաղակի, քանզի ճեպէ զիս իջուցանել արագարագ։ Եւ ասէ ցնա. Յո՞ տարայց զքեզ և ծածկեցից, զի տեղիս անապատ է։ Եւ ապա գտանէր այր մի, և մուծանէր զնա անդ, և կացուցանէր առ նմա զորդին իւր, և ինքն ելանէր ի խնդիր մանկաբարձի հեբրայեցւոյ՝ երկիրն Բեթղահեմի։

Ես Յովսէփ գնայի և համբառնայի զաչս իմ յերկինս ի վեր. տեսանէի զհոյլս ընդարմացեալս և զթռչունս երկնից՝ դադարեալս. հայէի յերկիր՝ և տեսանէի կուժ[1] մի զի կայր և կաւագործ կողմանեալս[2], և եդեալ զձեռս իւրեանց ի վերայ բերանոյն իւրեանց՝ և ծամէին. իբրև ոչ ծամէին՝ բառնային և մատուցանէին ի բերանս իւրեանց։ Այլ ամենեցուն զձեռս ի վեր համբարձեալ հայէին և տեսանէին հօտ վարեալ, զի գնային և կային. և համբառնայր հովիւն զգաւազանն իւր հարկանել զհօտն զայն, և զձեռն իւր բարձրագոյն համբառնայր։ Ահա և հեղեղատ մի գետոյ, և տեսանէի ուլս ճարակաւորս՝ եդեալ զբերանս իւրեանց առ ափն գետոյն, և ոչ ինչ ճաշակէին։ Եւ տեսանէի կին մի՝ զի իջանէր ի լեռնէ միոջէ, և պատահեալ՝ ողջոյն տայաք միմեանց։ Հարցանէր ցիս և ասէր. Ո՛ այր դու, յո՞ երթաս։ Եւ ասեմ ցնա. Մանկաբարձ հեբրայեցի խնդրեմ։ Տայր պատասխանի և հարցանէր ցիս. Ո՞վ է ծնեալ յայրին։ Եւ ասեմ. Մարիամ է՝ որ սնեալն է ի տաճարին Տեառն, և վիճակեցաւ ինձ ի կնութիւն, և ոչ է իմ կին, այլ ի Հոգւոյն սրբոյ յղացեալ։ Եւ ասէ ցիս մանկաբարձն. Զայս ճշմարիտ ասացեր։ Եւ ասեմ ցնա. Ե՛կ և տես։ Եւ գայր ընդ իս մանկաբարձն, և երթայաք և կայաք երկոքինս առ դուրս այրին։ Եւ ահա ամպ լուսաւոր հովանի կայր ի վերայ

1. Յօրինակի եղեալ էր չոյր։
2. Յօր. եղեալ էր՝ չաւ— գործաչողմանեալս։

այրին։ Եւ ասէ մանկաբարձն. Մեծացաւ անձն իմ՝ զի տեսի այսօր աչօք իմովք զքանչելիս, յայսմ աւուրս. զի փրկութիւն ետ Տէր Աստուած որդւոցն Իսրայելի։ Եւ վաղվաղակի ծնունդն երեւէր, և ամպն հեռանայր յայրէ անտի, և լոյս մեծ երեւէր յայրն, որում ոչ կարէին հայել ի նա աչօք իւրեանց։

Եւ յետ միոյ վայրկենի լուսոյն, դարձեալ ի մի կողմն մերժէր՝ մինչեւ երեւէր մանուկն, և գայր առնոյր ստին ի մօրէն իւրմէ ի Մարիամայ։ Եւ զաղաղակ բարձեալ մանկաբարձն և ասէր. Մեծ է օրս այս, զի տեսիլս նորս տեսի։ Եւ ելանէր արտաքս մանկաբարձն յայրէ անտի, և պատահէր կնոջ միոյ՝ որում անուն էր Սողոմէ. և ասէր ցնա. Նոր տեսիլս տեսի, և նոր իրս պատմեմ քեզ այսօր. կոյս ոմն ծնաւ, որ զարմանք իմ են, որ ի վեր քան զամենայն մարդկեղէն բնութիւնս։ Եւ ասէ ցնա Սողոմէ։ Կենդանի է Տէր Աստուած մեր, եթէ ոչ երթայց[1] և տեսից և ստուգեցից եթէ կոյս ծնաւ։ Եւ մտանէ ի ներքս մանկաբարձն և ասէ ցՄարիամ. Զսպեա զքեզ. եթէ ոչ փորձութիւնք կան վասն քո։ Մերձենայր Սողոմէ, զի տեսցէ և փորձեսցէ։ Եւ յանկարծակի զաղաղակ բարձեալ և ասէր. Վա՜յ լիցի մեղաց իմոց և թերահաւատութեանս, զի փորձեցի զԱստուած կենդանի, ահա ձեռք իմ հրով վառեալ անկանի յինէն. անկանէր ի կունձս, աղաչէր և ասէր. Աստուած, Աստուած հարցն մերոց, օրհնեա՛ զիս, յիշեա զի զաւակ Աբրահամու եմ և Սահակայ և Յակոբայ։ Մի՛ խայտառակեր զիս ընդ որդիսն Իսրայելի, այլ տուր զիս խոնարհաց և աղքատաց, զորս դու Տէր գիտես՝ զի տեսչութեամբ և անուամբ քո կատարէի։ Եւ ահա հրեշտակ Տեառն կայր և ասէ. Սողոմէ՛, լուաւ Տէր խնդրուածաց քոց, ձգեա զձեռն քո ի մանուկդ և բարձ ի վեր, և եղիցի քեզ ի փրկութիւն և յուրախութիւն։ Եւ իբրեւ առնոյր Սողոմէ զմանուկն ի վեր՝ և ասէր. Սա է թագաւոր ծնեալ ի մէջ Իսրայելի։ Եւ ահա ելանէր մանկաբարձն յայրէն արդարացեալ։

1. Յօր. յաւելու աստ՝ և դարձեցէց։

Եւ ապա բարբառ լինէր և ասէր, Սողոմէ՛, Սողոմէ, մի՛ ումեք յայտնեսցես զոր տեսեր այսօր զզարմանալիսդ. մինչեւ եկեսցէ մանուկն յԵրուսաղէմ. զի ահա պատրաստեալ է ելանել Յովսէփ ի Հրէաստանէ: Քան զի գային մոգք յարեւելից և ասէին. Ո՞ւր ծնաւ Թագաւորն Հրէից. և ասէին, թէ Տեսաք զաստղ Նորա յարեւելս և եկաք երկիր պագանել Նմա: Եւ իբրեւ լուաւ Հերովդէս արքայ, խռովեցաւ յոյժ, և առաքեաց սպասաւորս իւր առ մարգարէսն և առ քահանայսն, և պահէր զնոսա ի տան[1] դատաստանի. և ասէր. Ո՞ւր գրեցաւ վասն Քրիստոսի՝ որ ծնեալն է: Ասեն ցնա. Ի Բեթղահէմ Հրէաստանի, այսպէս գրեալ է: Եւ փորձէր դարձեալ զմոգսն և ասէր. Զի՞նչ Նշան տեսէք ի վերայ ծնելոյն Թագաւորին: Եւ Նոքա ասեն, թէ՝ Տեսաք աստղ լուսաւոր ի մէջ այլոց աստեղաց. և կոյս աղջիկ մի՝ ի մէջ վարսաւոր աստեղն Նստեալ, ունելով մանուկ Թագաւոր ի գիրկս իւր, և եկաք երկիր պագանել Նմա: Եւ ասէ ցնոսա Հերովդէս արքայ. Երթայք խնդրեցէք, և յորժամ գտանիցէք՝ ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագանիցեմ Նմա:

Եւ իբրեւ ելին մոգքն արտաքս, ահա աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդէր Նոցա, մինչեւ եկեալ եկաց ուր էր մանուկն: Եւ իբրեւ եկին յայրն, կայր աստղն ի վերայ գլխոյ մանկանն: Եւ տեսանէին զնա մոգքն, զի կայր առ մօր իւրում Մարիամայ, որպէս և յաստեղն երեւէր: Եւ ապա հանէին ի քրձից իւրեանց ոսկի և կնդրուկ և զմուռս, մատուցանէին Նմա: Եւ այսպէս հրաման առեալ ի հրեշտակէն այլ մի՛ եւս մտանել ի Հրէաստան, այլ զի ընդ այլ ճանապարհ գնասցեն (յօր. գնացին) յաշխարհն իւրեանց:

Յայնժամ իմանայր Հերովդէս թէ խաբեցաւ ի մոգուց, բարկացաւ սրտմտութեամբ, և առաքէր սպանանել, և ասէ ցնոսա. Կոտորեցէ՛ք զմանկտին յերկեմենից մինչեւ ի խոնարհ: Իսկ իբրեւ լսէր Մարիամ եթէ կոտորեն մանկունս, պատէր զմանուկն իւր ի

1. Յօր. տաղ:

խանձարուրս և դնէր զնա ի մսուր եզանց։ Լսէր և Եղիսաբեթ՝ եթէ Յովաննէս խնդրի. առեալ զՅովաննէս ելանէր յանապատն, և խնդրէր տեղի՝ թագուցանել և ոչ գտանէր։ Յայնժամ յոգոց հանեալ Եղիսաբէթ և ասէր. Լեառն Տեառն, ընկա՛լ զմայրս մանկամբս հանդերձ։ Եւ անդէն վաղվաղակի պատառէր լեառն, և ընդունէր զնոսա. և էր նոցա լոյս, զի հրեշտակ Տեառն էր որ պահէր զնոսա։ Իսկ Հերովդէս խնդրէր զՅովաննէս և առաքէր սպասաւորս ի սեղանն Տեառն առ Զաքարիաս և ասէր, եթէ՝ Ո՞ւր թագուցեր զորդին քո։ Տայր պատասխանի նոցա Զաքարիաս և ասէր. Ես պաշտօնեայ եմ Աստուծոյ և կամ (ի) տաճարիս Տեառն. ես ո՞րպէս գիտեմ՝ թէ ո՞ւր է որդին իմ։ Երթային պաշտօնեայքն Հերովդէի և պատմէին նմա զամենայն։ Զայրացեալ Հերովդէս ասէ. Որդին նորա թագաւորելոց է ի վերայ Իսրայելի։ Առաքէ առ նա երիցս անգամ. Ասա՛ ինձ, ո՞ւր է որդին քո, մի՛թէ ո՞չ գիտիցես, եթէ արիւն քո ընդ հզօր ձեռամբ իմով է։ Երթային պաշտօնեայքն և պատմէին քահանայապետին զհատագուն[1] ցասումն։ Ասէր Զաքարիաս. Վկայ եմ ես Աստուծոյ. եթէ հեղուք զարիւն իմ, ոչ գիտեմ, զոգիս իմ Տէր ընկալցի, զի արիւն արդարոյ հեղուք առ դրան սեղանոյս։ Եւ ընդ արշալոյսն սպանին Զաքարիաս, և ոչ իմանային որդիքն Իսրայելի, թէ ո՛րպէս սպանաւ։ Այլ ի ժամ ողջունի գան ժողովլին քահանայքն առ միմեանս, և ոչ պատահէր նոցա Զաքարիաս ըստ սովորութեան. և կացեալ մնային քահանայքն և ակն ունէին Զաքարիայի, ողջոյն տալ նմա ի ժամ աղօթից, առ ի փառաւորել զԲարձրեալն։ Եւ ի յամել նորա զարհուրէին ամենեքին, ողբային և կոծային։ Եւ մըտանէր մի ոմն ի նոցանէ՝ ի սրբութիւն, և գտանէ առ սեղանն արիւն մածեալ, և ձայն բարբառոյ գայր, եթէ՝ Զաքարիաս սպանաւ, և ոչ ջնջեսցի արիւնն նորա՝ մինչեւ եկեսցէ վրէժխնդիրն։ Եւ իբրեւ լուէր զբանս զայս, երկընչէր, և ելեալ պատմէր որդւոցն Իսրայելի, զոր ետեսն

1. Իմա՛ խստագոյն։

և լուսաւ։ Համարձակեալ մտանէին և այլքն եւս, տեսանէին զեղեալսն, և զարիւնն առ դրանն սեղանոյն։ Իբրեւ տեսանէին՝ պատառէին զհանդերձս (յոր. զանձինս) իւրեանց, զի այնպէս տեսին, զի արիւնն մածեալ կայր, և մարմինն ոչ գտանէր ուրեք։ Եւ զարհուրեալ ելանէին արտաքս, և լսէին ամենայն ազգ ժողովուրդն՝ և սգային զնա աւուրս երիս։ Եւ յետ աւուրց երից՝ խորհուրդ առնէին, թէ զո՞ կացուսցեն ի տեղւոյ Զաքարիայի. և ելանէր վիճակն Սիմէոնի։ Եւ նա էր հրաման առեալ ի Հոգւոյն սրբոյ, ոչ տեսանել զմահ՝ մինչեւ տեսցէ զՔրիստոս մարմնով։

## Գ

## ՅԱՂԱԳՍ ԾՆՆԴԵԱՆ ԱՄԵՆԱՍՐԲՈՒՀԻՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵՒ ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼ ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ Ի ԾՆՕՂԱՑ ԻՒՐՈՑ Ի ՅՈՎԱԿԻՄԱՅ ԵՒ ՅԱՆՆԱՅԷ. Ի ՊԱՏՄՈՒԹԵՆԷ ԳՐՈՑ Ս. ՅԱԿՈԲԱՅ ԵՂԲՕՐ ՏԵԱՌՆ

Ի թուոյ և ի տոհմէ երկոտասան ազգաց Իսրայելի էր Յովակիմ, այր բարեպաշտ և երկիւղած յԱստուծոյ, և մեծատուն յոյժ. հատուցանէր կրկին զընծայսն Աստուծոյ։

Եւ մերձեցաւ օր Տեառն մեծ, և մատուցանէին որդիքն Իսրայելի զընծայս Տեառն, ընդ նոսին և Յովակիմ։ Եւ եկաց ընդդէմ Յովակիմայ՝ Ռուբիմ քահանայապետն, և ասէ. Չէ՛ պարտ յառաջ ընծայս մատուցանել քեզ Աստուծոյ, վասնզի ոչ գոյ քեզ զաւակ ի մէջ Իսրայելի։ Եւ Յովակիմ տրտմեցաւ յոյժ, և դարձաւ տրտմեալ ի տաճարէ Տեառն, և ոչ երեւեցոյց Աննայի կնոջ իւրում, այլ գնաց յանապատ և

կանգնեաց անդ զխորան իւր։ Եւ պահեաց զքառասուն օր, և ասէր ցանձն իւր. Ոչ իջանեմ ի տուն իմ, և ոչ կերայց և ոչ արբից, մինչև այց արասցէ ինձ Տէր Աստուած իմ, և աղօթք իմ լինիցին ինձ կերակուր և արտասուք իմ ըմպելի։

Իսկ Աննա ամուսինն իւր, երկուս ողբս ողբայր և երկուս կոծս կոծէր, և ասէր ցանձն իւր. Լացից զայրութիւնս իմ։ Եւ զգեցաւ Աննա հանդերձ սգոյ, և յիններորդ ժամու աւուրն՝ էջ ի դրախտ իւր, և նըստաւ ընդ ծառովն դափնիտեայ, և յաղօթս եկաց առ Աստուած, և ասէ. Տէր Աստուած հարցն իմոց, յիշեա զտառապանս իմ և օրհնեա զիս, որպէս օրհնեցեր զարգանդն Սառայի, և ետուր նմա զաւակ զԻսահակ։ Եւ էր պշուցեալ ընդ երկինս և լայր. և ետես ի ծառին դափնիտեայ երկու բոյնս ճնճղկաց. և ողբայր մեծապէս և լայր. Վա՜յ ինձ, թէ ո՞վ ծնաւ զիս, կամ ո՞ր մայր երկնեաց. զի յանէծս ծնեալ եղէ ի մէջ Իսրայելի, և անկոսնելի եղէ և նախատինս՝ ի տաճարին Տեառն Աստուծոյ իմոյ։ Վա՜յ ինձ, ո՞ւմ նմանեցայ ես, և ոչ թռչնոց երկնից նմանեցայ ես. զի և թռչունք ձագս հանցեն առաջի քո Տէր։ Վա՜յ ինձ, թէ ո՞ւմ նըմանեցայ ես, և ոչ անբանից կենդանեաց նմանեցայ ես. զի և այն ծննդականք են առաջի քո, Տէր։ Վա՜յ ինձ, թէ ո՞ւմ նմանեցայ ես. և ոչ ջրոյ նմանեցայ ես. զի և ջուրքս այս զեռունս բերցեն առաջի քո, Տէր, և ձկունք օրհնեն զքեզ։ Վա՜յ ինձ, թէ ո՞ւմ նմանեցայ ես. և ոչ երկրի նմանեցայ ես. զի երկիր զպտուղ իւր մատուցանէ ի ժամանակս իւր՝ որդւոց մարդկան, և օրհնեն զքեզ Տէր։

Եւ նոյն ժամայն հրեշտակ երեւեցաւ Աննայի և ասէ. Աննա, Աննա, լուաւ Տէր աղօթից քոց, և ահա յղասցիս մանուկ, և ելցէ անուն նորա ընդ ամենայն երկիր։ Եւ ասէ Աննա. Կենդանի է Տէր Աստուած իմ, եթէ ծնայց արու կամ էգ՝ մատուցից զնա ընծայ Տեառն Աստուծոյ, և լիցի պաշտօնեայ զաւուրս կենաց իւրոց։ Եւ այլ եւս երկու հրեշտակք երեւեցան Աննայի և ասեն. Ահա Յովակիմ այր քո գայ և բերէ զկնի զհօ-

Digitized by Google

վիւս իւր։ Քանզի հրեշտակ Աստուծոյ էջ առ նա և ասաց. Յովակիմ, լուաւ Աստուած աղօթից քոց, էջ ի տուն քո, և Աննա կին քո յղասցի։ Եւ ասէ ցհովիւս իւր. Առէք ինձ որոջս տասն անարատս և ամբիծս, և լինիցին յանուն Տեառն Աստուծոյ իմոյ։ Եւ ասէ. Առէք ինձ երկոտասան զուարակս փափուկս և գեղեցիկս, և լինիցին քահանայիցն և ծերոց. և բերէք ինձ հարիւր նոխազս և լինիցի ամենայն ժողովրդեանն։ Եւ տեսեալ Աննա զՅովակիմ զի գայր, ընթացաւ ընդ առաջ նորա, և ասէ. Այժմ գիտացի զի ողորմեցաւ ինձ Տէր Աստուած և օրհնեաց զիս յոյժ, և ոչ եւս իցեմ այրի և ոչ անզաւակ։ Եւ հանգեաւ զօրն զայն Յովակիմ, և վաղիւն մատոյց զընծայս իւր և ասէ. Այժմ ծանեայ ճշմարտապէս, որ քաւիչն իմ Աստուած քաւեաց զիս և եթող զամենայն յանցանս իմ։ Եւ էջ Յովակիմ ի տանէ Տեառն արդարացեալ ի տուն իւր։

Եւ յղացաւ Աննա և աւետիս մատուցանէր դստերացն Իսրայէղի։ Եւ յորժամ լցան աւուրք, ծնաւ, և եհարց զմանկաբարձն. Զի՞նչ իցէ ծնեալդ։ Եւ նա ասէ. Դուստր։ Եւ ասէ Աննա. Մեծ եղեւ հոգի իմ յայսմ աւուր։

Եւ ի կատարել ըստ կարգի աւուրց Աննայի, և լուացաւ. տայր ստին մանկանն, և անուանեաց զանուն նորա՝ Մարիամ։ Եւ յորժամ եղեւ վեցամսեայ, կանգնեցաւ Մարիամ յոտս իւր, և քայլեաց քայլս եւթն, և դարձաւ անդրէն ի գիրկս մօրն։ Եւ ասէ Աննա. Կենդանի է Տէր Աստուած, զի ոչ կոխեսցէ զերկիր՝ մինչեւ տարայց զդա ի տուն Տեառն։ Եւ արար սրբութիւն Աննա ի սենեկի իւրում, և ոչ ինչ պիղծ կամ զազիր մուծանէր ի սենեակն։ Եւ կոչէր զդստերս Եբրայեցւոցն՝ զանարատ կուսանս, և մուծանէր ի ներքս ի սենեակն անդր առ Մարիամ։

Եւ յորժամ եղեւ տարեկան, արար Յովակիմ ընդունելութիւն մեծ, և կոչեաց զքահանայս և զդպիրս և զծերս և ժողովուրդն Իսրայէղի։ Եւ առաջի ամենեցուն մատոյց զմանուկն ի ձեռս քահանայապետին, և օրհնեաց զնա և ասէ. Աստուած հարցն մերոց, օրհնեա զտղայս

զայս, և տուր սմա անուն՝ լինել անուանի յամենայն ազգս յաւիտենից։ Եւ ասացին ամենայն ժողովուրդքն. Եղիցի, եղիցի։ Եւ դարձեալ մատուցին զողջոյն առ քահանայսն, և օրհնեցին զնա և ասեն. Աստուած, որ ի բարձունս ես, նայեա ի մանուկս յայս, օրհնեա զսա քոյին օրհնութեամբ որ ոչ անցանէ։ Եւ ասացին ժողովուրդքն. Եղիցի։ Եւ առեալ մայրն ի գիրկս իւր, տարաւ ի մաքրեալ սենեակն իւր, և օրհնեաց զԱստուած և ասէ. Երգ(եց)ից Տեառն Աստուծոյ իմոյ նոր օրհնութիւն. վասն զի այց արար ինձ, և բարձ յինէն ըզնախատինս որ ի թշնամեաց իմոց, և ետ ինձ պտուղ արդարութեան յիշատակ առաջի իւր։ Ո՞վ պատմեսցէ որդւոցն Ռուբենի՝ եթէ Աննա յամլութենէ ազատեցաւ։ Եւ ուրախացեալ քահանայքն և ծերքն և ամենայն ժողովուրդքն, և օրհնեցին զամենօրհնեալ մանուկն Մարիամ, և գնացին յարկս իւրեանց՝ փառաւորելով զԱստուած։

## Դ

## ՎԱՍՆ ԱՒԵՏԱՒՈՐ ՀՐԵՇՏԱԿԻՆ ԵՒ ՔԱՐՈԶԵԼՈՅ ԶՅՂՈՒԹԻՒՆ Ս. ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

Յայնժամ եղեւ առ նա բարբառ հրեշտակին, որ ասէր ցնա. Ուրախ լեր, կոյս Մարիամ։ Յանկարծակի զարհուրեցաւ և երկեաւ յոյժ, և հայեցեալ նորա յայսկոյս և յայնկոյս, և ոչ զոք տեսանէր. զմտաւ ածէր, և ասէր. Ուստի՞ իցէ ձայնս այս առ իս։ Եւ առեալ զսափորն գնայր վաղվաղակի փախստեայ մտանէր ի տուն իւր, և զդուրս տանն փակեալ զգուշութեամբ և կնքեալ, և ինքն լռութեամբ նստէր ի տուն իւր. և

ընդ միտս իւր հիացեալ զարմանայր, և ասէր. Զի՞նչ է ողջոյնս այս, որ տուաւ ինձ. ո՞վ ոք ճանաչէր զիս և գիտէր յառաջագոյն, թէ ո՛ իցեմ. և կամ ո՞ ուրեք եմ տեսեալ զնա, որ այսպիսի բանս խօսեցաւ ընդ իս: Եւ զայս ամենայն զմտաւ ածէր և դողայր: Եւ նոյն ժամայն յարուցեալ եկաց յաղօթս, և ասէ. Տէր Աստուած հարցն մերոց, Աստուած Իսրայելի, հայեաց ողորմութեամբ քո ի ծառայս քո, և խոնարհեա յաղաչանս իմ և ի խնդրուածս սրտի իմոյ, և լուր տառապեալ աղախնոյ քո, որ ի քեզ յուսով ապաւինիմ. մի՛ տար զիս ի փորձութիւն թշնամւոյն և ի պատրանս բանսարկուին, այլ փրկեա զիս յորոգայթէ որսողին, զի ի քեզ Տէր յուսացեալ եմ, և զկուսութիւնս իմ առ քեզ ամբողջ պահեսցես, Տէր Աստուած իմ. և քեզ փառք յաւիտեանս. ամէն:

Եւ զայս ասացեալ Մարիամու՝ արտասուելով գոհանայր զՏեառնէ: Եւ կացեալ նորա ժամս երիս, և առեալ ի ձեռն իւր մանէր զկարմիրն: Եւ հրեշտակ Տեառն եկաց առ նա դրօքն փակելովք, և երեւէր նմա անմարմին իբրեւ մարմնաւոր տեսլեամբ, և ասէր. Ուրախ լեր Մարիամ, կոյս անարատ, աղախին Տեառն: Եւ Մարիամու տեսեալ զհրեշտակն, երկեաւ յոյժ, և զարհուրեալ ոչ կարէր փախստական լինել: Ասէ ցնա հրեշտակն. Մի՛ երկնչիր Մարիամ, օրհնեալդ ի կանայս, ես եմ Գաբրիէլ հրեշտակապետն, որ առաքեցայ յԱստուծոյ, խօսել և աւետարանել քեզ զայդ, զի յղասցիս և ծնցես որդի, Հօր բարձրելոյն, և նա եղիցի մեծ թագաւոր ի վերայ ամենայն երկրի: Ասէ Մարիամ. Զի՞նչ խօսիս, և զի՞նչ ասես, պատմեա ինձ: Ասէ հրեշտակն. Զոր ասացի քեզ և լուար յինէն. Ընկալ ըղհրաւէր պատգամաց իմոց, զոր յառաջ խօսիմ ընդ քեզ, և ուրախ լեր: Ասէ Մարիամ. Նոր իրս զարմանալիս լսեմ ի քէն, և հիացեալ զարհուրիմ, եթէ ծընայց որպէս զամենայն կին. զիա՞րդ լինիցի այդ. զի զայր ոչ գիտեմ:

Ասէ հրեշտակն. Ո՛վ սուրբ կոյս Մարիամ. մի՛ այդպէս կարծեր և իմանար զգործդ զայդ, զոր ասեսդ. ոչ

Digitized by Google

այդպէս իցէ. զի ոչ ես ի մարդկանէ, և ոչ յարենէ և ոչ (ի) կամաց առն, այլ ի զօրութենէ Հոգւոյն սրբոյ, որ ընդ քեզ բնակեսցէ և ընդ քեզ եղիցի, որպէս և ինքն կամեսցի։ Ասէ Մարիամ. Ծանր և օտարոտի թուի ինձ բանդ՝ զոր ասես, և ես ոչ հանդուրժեմ և ժուժկալ լինիմ բանից քոց՝ զոր ասես. և ընդ խօսելդ քո զարմանամ, և ընդ ասելդ կարի խիստ հիանամ. զի անդէպ է խորհուրդդ, և աննման գործք սքանչելեացդ քոց՝ զոր ասես ինձ և լսեմ ի քէն. զարհուրեալ սոսկայ անձն իմ ի քէն և դողայ, և միտք իմ ի տարակուսանս անկեալ կայ, և ոչ գիտեմ թէ այդ բանիցդ զի՞նչ տաց պատասխանի։ Ասէ հրեշտակն. Ընդէ՞ր զարհուրի անձն քո և դողայ։ Ասէ սուրբ կոյսն. Զիա՞րդ լուայց քեզ արդեօք, և կամ հաւատացից բանից քոց, որ ոչ եմ լուեալ զբանդ զայդ ի մարդկանէ, և ոչ իմացեալ իսկ՝ զոր ասեսդ։ Ասէ հրեշտակն. Ես բանս ճշմարտութեան բարբառիմ և խօսիմ ընդ քեզ հաւաստեաւ և ոչ վայրապար, և ոչ յանձնէ ինչ ըղմտածութիւն ասացից քեզ, այլ զոր լուայ ի Տեառնէ և առաքեցայ յԱստուծոյ՝ աւետարանեմ քեզ զայդ. և դու զբանս իմ ստութիւն համարիս։ Երկէ՛ր ի Տեառնէ և լո՛ւր ինձ զոր ասացից քեզ։

Ասէ սուրբ կոյսն Մարիամ. Ոչ թէ վայրապար համարիմ զբանս քո, այլ զարհուրեալ եմ յոյժ և հիացեալ զարմանամ. եթէ զոր երկինք և երկիր ոչ բաւանդակեալ զաստուածութիւնն պարածածկեալ, և ամենայն դասք երկնային զօրացն ոչ իշխէին հայել և տեսանել զփառս նորա, և զիա՞րդ կարացից համբերել և բառնալ զնա մարմնով ի գիրկս իմ, և ձեռամբս շօշափել զնա. անհնարին է բանդ, և անհաս է խորհո՛ւրդդ, և զարմանալի գործդ, և ի վեր քան զամենայն տեսութիւն մտաց մարդկան՝ քննել զնա և իմանալ. մի՛թէ պատրական բանիւ հաւանեցուցանե՞լ կամիս զմիտս իմ. ո՛չ այդպէս իցէ։ Ասէ հրեշտակն. Ո՛վ երանելի սուրբ կոյս, լուր ինձ զոր ինչ ասացից քեզ. Մովսէս ի լերինն սինէական՝ ո՛րպէս ականատես եղեալ Աստուծոյ, և մորենին հրով վառեալ լինէր, և ոչ այ-

սել և աւետարանել քեզ։ Ասէ Մարիամ. Այո՛, հաւատամ բանից քոց և լսեմ հրամանացդ՝ զոր ասացեր ցիս, որ յիրաւի այդպէս է. բայց լո՛ւր ինձ զոր խօսիմս ընդ քեզ, մինչեւ ցայսօր պահեալ եմ զանձն իմ սրբութեամբ և արդարութեամբ առաջի քո քահանայապետիցն և ժողովրդեանն, վիճակեալ ի Յովսեփայ կնութիւն. և այժմ եդեալ է զիս պահեստի ի տան իմում, զգուշութեամբ պահել զանձն իմ մինչեւ առցուք զպսակն օրհնութեան ընդ կուսանոսն և ընդ ամուսինս. արդ եթէ գայցէ և տեսանիցէ զիս յղի ծանրացեալ, զի՞նչ ասացից նմա. եթէ հարցանէ ցիս ուստի՞ է յղութիւնդ այդ, զի՞նչ առ այդ բանիցդ ասացից պատասխանի։ Ասէ հրեշտակն. Ո՜վ երանելի կոյս, լռեա ի խօսելոյ այդի և ի միտ առ զասացեալս իմ. զի ոչ ի մարդկանէ է գործդ այդ, և ոչ յումեքէ բանս այս՝ որ խօսիմս ընդ քեզ. այլ Տէր է որ առնէ քեզ զայդ, նա փրկեսցէ զքեզ յամենայն նեղութեանց փորձանացն։ Ասէ Մարիամ. Եթէ ճշմարիտ է բանդ այդ զոր ասես, և հաճեցաւ Տէր խոնարհել յաղախին և ի ծառայս իւր, եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ գնաց ի նմանէ հրեշտակն։ Եւ նոյն ժամայն ընդ ասել բանին և ի խոնարհել սրբոյ կուսին, Բանն Աստուած եմուտ յունկն լսելեաց ի ներքս, և սրբեցաւ խորհուրդ բնութեան մտացն մարմնոյ արտաշնչականի՝ հանդերձ ամենայն զգայութեանցն անդամօքն, մաքրեցաւ որպէս զոսկի ի հուրն, և եղեւ տաճար սուրբ և բնակարան աստուածութեանն իւրոյ. և յայնժամ եղեւ սկիզբն յղութեան սրբոյ կուսին։ Զի յորժամ հրեշտակն աւետարանեաց Մարիամու՝ ի նիսան ամսոյ էր հնգետասան, որ է յապրիլի վեց, յաւուր չորեքշաբաթու և յիններորդ ժամու աւուրն. և նոյնժամայն հրեշտակն ընթացաւ և գնաց ի կողմանս Պարսից, և աւետիս ետ մոգուցն թագաւորաց՝ գալ նոցա յերկրպագութիւն նորածին մանկանն. և նոցա առաջնորդեալ աստեղըն՝ զօրացն ամենեցուն, զամիսս ինն։

Ապա եկեալ հասեալ ժամանակ ծննդեանն սրբոյ կուսին. քանզի յայնժամ թագաւորն Պարսից զօրա-

Digitized by Google

ւոր էր քան զամենայն թագաւորսն Պարսկաց, որ էին յաշխարհին յարեւելից։ Նոքա՝ որք էին թագաւորք Մոգուցն, եղբարք երեք. առաջինն՝ Մելքոն, որ ունէր զիշխանութիւն Պարսից. երկրորդն՝ Գասպար, որ ունէր զիշխանութիւն Հնդկաց. երրորդն՝ Պաղտասար, որ ունէր զիշխանութիւն երկրին Արաբացոց. Նոքա միաբանեալ հասին ի ծնունդ սրբոյ կուսին, փութացեալ հասեալ ժամանեցին։

Իսկ մոգուցն կրկին անգամ հարցանէին ցՅովսէփ և ասէին. Ո՞ պատուական ծեր, պատմեա մեզ զճշմարիտն ստուգութեան, եթէ գիտիցեմս արդեւք զի տեսցուք։ Եւ Յովսէփ մատամբն ցուցանէր զայրն ի հեռաստանէ. և մոգուցն խնդութեամբ հասեալ ի դուռն այրին, և տեսին զմանուկն յանբանից մսուրն. և անկեալ երկիր պագանէին նմա թագաւորքն և իշխանքն և մեծամեծքն և այլ ամենայն զօրքն. և բազմութիւն ժողովոյն բերեալ մատուցանէին իւրաքանչիւր զնուէրս առաջի նորա։

Եկն յառաջ Գասպար թագաւորն Հնդկաց, և բացեալ զնարդոս մեծագինս, զտաշխ և զկասիայն, զկինամոնն, զկնդրուկն և զայլ ծխանելիսն անուշահոտութեան իւղոց[1] և խնկոց. և առժամայն հեղաւ հոտ անուշութեան, ելից զայրն՝ (յ)որում նստեալ էին անդ։ Իսկ Բաղտասար թագաւորն Արաբացոց բացեալ զգանձս մեծութեան իւրոյ, տարեալ մատուցանէ առաջի նորա՝ ոսկի և արծաթ և ականս պատուականս, և մարգարիտս գեղեցիկս շափիւղայ։ Իսկ Մելքոն թագաւորն Պարսից, բերեալ զմուռն ընդ հալուէսն, ըզբեհեզս և ծիրանիս և զայլ կտաւսն պատանաց։ Իբրեւ մատուցանէին իւրաքանչիւր զընծայս իւրեանց՝ ի պատիւ թագաւորին Իսրայելի, յայնժամ յարուցեալ թագաւորքն և իշխանքն ի յայրէն, գնացին առանձինն նոցա բացուստ մեկուսի, երեքեանն միաբանեալ նըստէին, հարցանէին ընդ միմեանս և ասէին։

Ո՞ զարմանալի գործս՝ զոր տեսաք աչօք մերովք այս-

1. Յօր. Իւղոյ։

սել և աւետարանել քեզ։ Ասէ Մարիամ. Այո՛, հաւատամ բանից քոց և լսեմ հրամանացդ՝ զոր ասացեր ցիս, որ յիրաւի այդպէս է. բայց լո՛ւր ինձ զոր խօսիմս ընդ քեզ, մինչեւ ցայսօր պահեալ եմ զանձն իմ սրբութեամբ և արդարութեամբ առաջի քո քահանայապետիցն և ժողովրդեանն, վիճակեալ ի Յովսեփայ կնութիւն. և այժմ եդեալ է զիս պահեստի ի տան իմում, զգուշութեամբ պահել զանձն իմ մինչեւ առցուք զպսակն օրհնութեան ընդ կուսանսն և ընդ ամուսինս. արդ եթէ գայցէ և տեսանիցէ զիս յղի ծանրացեալ, զի՞նչ ասացից նմա. եթէ հարցանէ ցիս ուստի՞ է յղութիւնդ այդ, զի՞նչ առ այդ բանիցդ ասացից պատասխանի։ Ասէ հրեշտակն. Ո՜վ երանելի կոյս, լռեա ի խօսելոյ այդի և ի միտ առ զասացեալս իմ. զի ոչ ի մարդկանէ է գործդ այդ, և ոչ յումեքէ բանս այս՝ որ խօսիմս ընդ քեզ. այլ Տէր է որ առնէ քեզ զայդ, նա փրկեսցէ զքեզ յամենայն նեղութեանց փորձանացն։ Ասէ Մարիամ. Եթէ ճշմարիտ է բանդ այդ զոր ասես, և հաճեցաւ Տէր խոնարհել յաղախին և ի ծառայս իւր, եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ գնաց ի նմանէ հրեշտակն։ Եւ նոյն ժամայն ընդ ասել բանին և ի խոնարհել սրբոյ կուսին, Բանն Աստուած եմուտ յունկն լսելեաց ի ներքս, և սրբեցաւ խորհուրդ բնութեան մտացն մարմնոյ արտաշնչականի՝ հանդերձ ամենայն զգայութեանցն անդամօքն, մաքրեցաւ որպէս զոսկի ի հուրն, և եղեւ տաճար սուրբ և բնակարան աստուածութեանն իւրոյ. և յայնժամ եղեւ սկիզբն յղութեան սրբոյ կուսին։ Զի յորժամ հրեշտակն աւետարանեաց Մարիամու՝ ի նիսան ամսոյ էր հնգետասան, որ է յապրիլի վեց, յաւուր չորեքշաբաթու և յիններրորդ ժամու աւուրն. և նոյնժամայն հրեշտակն ընթացաւ և գնաց ի կողմանս Պարսից, և աւետիս ետ մոգուցն թագաւորաց՝ գալ նոցա յերկրպագութիւն նորածին մանկանն. և նոցա առաջնորդեալ աստեղբն՝ զօրացն ամենեցուն, զամիսս ինն։

Ապա եկեալ հասեալ ժամանակ ծննդեանն սրբոյ կուսին. քանզի յայնժամ թագաւորն Պարսից զօրա-

ուր էր քան զամենայն թագաւորսն Պարսկաց, որ էին յաշխարհին յարեւելից։ Սոքա՝ որք էին թագաւորք Մոգուցն, եղբարք երեք․ առաջինն՝ Մելքոն, որ ունէր զիշխանութիւն Պարսից․ երկրորդն՝ Գասպար, որ ունէր զիշխանութիւն Հնդկաց․ երրորդն՝ Պաղտասար, որ ունէր զիշխանութիւն երկրին Արաբացոց․ Նոքա միաբանեալ հասին ի ծնունդ սրբոյ կուսին, փութացեալ հասեալ ժամանեցին։

Իսկ մոգուցն կրկին անգամ հարցանէին ցՅովսէփ և ասէին․ Ո՞ պատուական ծեր, պատմեա մեզ զճշմարիտն ստուգութեան, եթէ գիտիցեմս արդեւք զի տեսցուք։ Եւ Յովսէփ մատամբն ցուցանէր զայրն ի հեռաստանէ․ և մոգուցն խնդութեամբ հասեալ ի դուռն այրին, և տեսին զմանուկն յանբանից մսուրն․ և անկեալ երկիր պագանէին նմա թագաւորքն և իշխանքն և մեծամեծքն և այլ ամենայն զօրքն․ և բազմութիւն ժողովոյն բերեալ մատուցանէին իւրաքանչիւր զնուէրս առաջի Նորա։

Եկն յառաջ Գասպար թագաւորն Հնդկաց, և բացեալ զնարդոս մեծագինս, զտաշխ և զկասիայն, զկինամոնն, զկնդրուկն և զայլ ծխանելիսն անուշահոտութեան իւղոյ[1] և խնկոց․ և առժամայն հեղաւ հոտ անուշութեան, ելից զայրն՝ (յ)որում նստեալ էին անդ։ Իսկ Բաղտասար թագաւորն Արաբացոց բացեալ զգանձս մեծութեան իւրոյ, տարեալ մատուցանէ առաջի Նորա՝ ոսկի և արծաթ և ականս պատուականս, և մարգարիտս գեղեցիկս շափիւղայ։ Իսկ Մելքոն թագաւորն Պարսից, բերեալ զմուռն ընդ հալուէսն, ըզբեհեզս և ծիրանիս և զայլ կտաւսն պատանաց։ Իբրեւ մատուցանէին իւրաքանչիւր զընծայս իւրեանց՝ ի պատիւ թագաւորին Իսրայելի, յայնժամ յարուցեալ թագաւորքն և իշխանքն ի յայրէն, գնացին առանձինն նոցա բացուստ մեկուսի, երեքեանն միաբանեալ նըստէին, հարցանէին ընդ միմեանս և ասէին։

Ո՞ զարմանալի գործս՝ զոր տեսաք աչօք մերովք այս–

1․ Յօր․ Իղիւղոյ։

սել և աւետարանել քեզ։ Ասէ Մարիամ. Այո՛, հաւա-
տամ բանից քոց և լսեմ հրամանացդ՝ զոր ասացեր
ցիս, որ յիրաւի այդպէս է. բայց լո՛ւր ինձ զոր խօ-
սիմս ընդ քեզ, մինչեւ ցայսօր պահեալ եմ զանձն իմ
սրբութեամբ և արդարութեամբ առաջի քո քահանա-
յապետիցն և ժողովրդեանն, վիճակեալ ի Յովսե-
փայ կնութիւն. և այժմ եդեալ է զիս պահեստի ի
տան իմում, զգուշութեամբ պահել զանձն իմ մինչեւ
առցուք զպսակն օրհնութեան ընդ կուսանսն և ընդ
ամուսինս. արդ եթէ գայցէ և տեսանիցէ զիս յղի
ծանրացեալ, զի՞նչ ասացից նմա. եթէ հարցանէ ցիս
ուստի՞ է յղութիւնդ այդ, զի՞նչ առ այդ բանիցդ ա-
սացից պատասխանի։ Ասէ հրեշտակն. Ո՛վ երանելի
կոյս, լուեա ի խօսելոյ այդի և ի միտ առ զասացեալս
իմ. զի ոչ ի մարդկանէ է գործդ այդ, և ոչ յումեքէ
բանս այս՝ որ խօսիմս ընդ քեզ. այլ Տէր է որ առնէ
քեզ զայդ, նա փրկեսցէ զքեզ յամենայն նեղութեանց
փորձանացն։ Ասէ Մարիամ. Եթէ ճշմարիտ է բանդ այդ
զոր ասես, և հաճեցաւ Տէր խոնարհել յաղախին և ի
ծառայս իւր, եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ գնաց ի
նմանէ հրեշտակն։ Եւ նոյն ժամայն ընդ ասել բանին
և ի խոնարհել սրբոյ կուսին, Բանն Աստուած եմուտ
յունկն լսելեաց ի ներքս, և սրբեցաւ խորհուրդ բնու-
թեան մտացն մարմնոյ արտաշնչականի՝ հանդերձ ա-
մենայն զգայութեանցն անդամօքն, մաքրեցաւ որպէս
զոսկի ի հուրն, և եղեւ տաճար սուրբ և բնակարան
աստուածութեանն իւրոյ. և յայնժամ եղեւ սկիզբն
յղութեան սրբոյ կուսին։ Զի յորժամ հրեշտակն աւե-
տարանեաց Մարիամու՝ ի նիսան ամսոյ էր հնգետասան,
որ է յապրիլի վեց, յաւուր չորեքշաբաթու և յիններ-
րորդ ժամու աւուրն. և նոյնժամայն հրեշտակն ընթա-
ցաւ և գնաց ի կողմանս Պարսից, և աւետիս ետ մո-
գուցն թագաւորաց՝ գալ նոցա յերկրպագութիւն նո-
րածին մանկանն. և նոցա առաջնորդեալ աստեղըն՝
զօրացն ամենեցուն, զամիսս ինն։

Ապա եկեալ հասեալ ժամանակ ծննդեանն սրբոյ
կուսին. քանզի յայնժամ թագաւորն Պարսից զօրա-

ւոր էր քան զամենայն թագաւորսն Պարսկաց, որ էին յաշխարհին յարեւելից։ Սոքա՝ որք էին թագաւորք Մոգուցն, եղբարք երեք. առաջինն՝ Մելքոն, որ ունէր զիշխանութիւն Պարսից. երկրորդն՝ Գասպար, որ ունէր զիշխանութիւն Հնդկաց. երրորդն՝ Պաղտասար, որ ունէր զիշխանութիւն երկրին Արաբացոց. Նոքա միաբանեալ հասին ի ծնունդ սրբոյ կուսին, փութացեալ հասեալ ժամանեցին։

Իսկ մոգուցն կրկին անգամ հարցանէին ցՅովսէփ և ասէին. Ո՞ պատուական ծեր, պատմեա մեզ զճշմարիտն ստուգութեան, եթէ գիտիցեմս արդեւք զի տեսցուք։ Եւ Յովսէփ մատամբն ցուցանէր զայրն ի հեռաստանէ. և մոգուցն խնդութեամբ հասեալ ի դուռն այրին, և տեսին զմանուկն յանբանից մսուրն. և անկեալ երկիր պագանէին Նմա թագաւորքն և իշխանքն և մեծամեծքն և այլ ամենայն զօրքն. և բազմութիւն ժողովոյն բերեալ մատուցանէին իւրաքանչիւր զնուէրս առաջի Նորա։

Եկն յառաջ Գասպար թագաւորն Հնդկաց, և բացեալ զնարդոս մեծագինս, զտաշխ և զկասիայն, զկինամոնն, զկնդրուկն և զայլ ծխանելիսն անուշահոտութեան իւղոց[1] և խնկոց. և առժամայն հեղաւ հոտ անուշութեան, ելից զայրն՝ (յ)որում նստեալ էին անդ։ Իսկ Բաղտասար թագաւորն Արաբացոց բացեալ զգանձս մեծութեան իւրոյ, տարեալ մատուցանէ առաջի Նորա՝ ոսկի և արծաթ և ականս պատուականս, և մարգարիտս գեղեցիկս շափիւղայ։ Իսկ Մելքոն թագաւորն Պարսից, բերեալ զմուռն ընդ հալուէսն, ըզբեհեզս և ծիրանիս և զայլ կտաւսն պատանաց։ Իբրեւ մատուցանէին իւրաքանչիւր զընծայս իւրեանց՝ ի պատիւ թագաւորին Իսրայելի, յայնժամ յարուցեալ թագաւորքն և իշխանքն ի յայրէն, գնացին առանձինն նոցա բացուստ մեկուսի, երեքեանն միաբանեալ նըստէին, հարցանէին ընդ միմեանս և ասէին։

Ո՜ զարմանալի գործս՝ զոր տեսաք աչօք մերովք այս-

1. Յօր. Իւղելոյ։

սել և աւետարանել քեզ։ Ասէ Մարիամ. Այո՛, հաւատամ բանից քոց և լսեմ հրամանացդ՝ զոր ասացեր ցիս, որ յիրաւի այդպէս է. բայց լո՛ւր ինձ զոր խօսիմս ընդ քեզ, մինչև ցայսօր պահեալ եմ զանձն իմ սրբութեամբ և արդարութեամբ առաջի քո քահանայապետիցն և ժողովրդեանն, վիճակեալ ի Յովսեփայ կնութիւն. և այժմ եդեալ է զիս պահեստի ի տան իմում, զգուշութեամբ պահել զանձն իմ մինչև առցուք զպսակն օրհնութեան ընդ կուսանսն և ընդ ամուսինս. արդ եթէ գայցէ և տեսանիցէ զիս յղի ծանրացեալ, զի՞նչ ասացից նմա. եթէ հարցանէ ցիս ուստի՞ է յղութիւնդ այդ, զի՞նչ առ այդ բանիցդ ասացից պատասխանի։ Ասէ հրեշտակն. Ո՜վ երանելի կոյս, լռեա ի խօսելոյ այդի և ի միտ առ զասացեալս իմ. զի ոչ ի մարդկանէ է գործդ այդ, և ոչ յումեքէ բանս այս՝ որ խօսիմս ընդ քեզ. այլ Տէր է որ առնէ քեզ զայդ, նա փրկեսցէ զքեզ յամենայն նեղութեանց փորձանացն։ Ասէ Մարիամ. Եթէ ճշմարիտ է բանդ այդ զոր ասես, և հաճեցաւ Տէր խոնարհել յաղախին և ի ծառայս իւր, եղիցի ինձ ըստ բանի քում։ Եւ գնաց ի նմանէ հրեշտակն։ Եւ նոյն ժամայն ընդ ասել բանին և ի խոնարհել սրբոյ կուսին, Բանն Աստուած եմուտ յունկն լսելեաց ի ներքս, և սրբեցաւ խորհուրդ բնութեան մտացն մարմնոյ արտաշնչականի՝ հանդերձ ամենայն զգայութեանցն անդամօքն, մաքրեցաւ որպէս զոսկի ի հուրն, և եղև տաճար սուրբ և բնակարան աստուածութեանն իւրոյ. և յայնժամ եղև սկիզբն յղութեան սրբոյ կուսին։ Զի յորժամ հրեշտակն աւետարանեաց Մարիամու՝ ի նիսան ամսոյ էր հնգետասան, որ է յապրիլի վեց, յաւուր չորեքշաբաթու և յիններորդ ժամու աւուրն. և նոյնժամայն հրեշտակն ընթացաւ և գնաց ի կողմանս Պարսից, և աւետիս ետ մոգուցն թագաւորաց՝ զալ նոցա յերկրպագութիւն նորածին մանկանն. և նոցա առաջնորդեալ աստեղըն՝ զօրացն ամենեցուն, զամիսս ինն։

Ապա եկեալ հասեալ ժամանակ ծննդեանն սրբոյ կուսին. քանզի յայնժամ թագաւորն Պարսից զօրա-

ւոր էր քան զամենայն թագաւորսն Պարսկաց, որ էին յաշխարհին յարեւելից: Սոքա՝ որք էին թագաւորք Մոգուցն, եղբարք երեք. առաջինն՝ Մելքոն, որ ունէր զիշխանութիւն Պարսից. երկրորդն՝ Գասպար, որ ունէր զիշխանութիւն Հնդկաց. երրորդն՝ Պաղտասար, որ ունէր զիշխանութիւն երկրին Արաբացոց. Նոքա միաբանեալ հասին ի ծնունդ սրբոյ կուսին, փութացեալ հասեալ ժամանեցին:

Իսկ մոգուցն կրկին անգամ հարցանէին զՅովսէփ և ասէին. Ո՞ պատուական ծեր, պատմեա մեզ զճշմարիտն ստուգութեան, եթէ գիտիցեմս արդեւք զի տեսցուք: Եւ Յովսէփ մատամբն ցուցանէր զայրն ի հեռաստանէ. և մոգուցն խնդութեամբ հասեալ ի դուռն այրին, և տեսին զմանուկն յանբանից մսուրն. և անկեալ երկիր պագանէին Նմա թագաւորքն և իշխանքն և մեծամեծքն և այլ ամենայն զօրքն. և բազմութիւն ժողովոյն բերեալ մատուցանէին իւրաքանչիւր զնուէրս առաջի Նորա:

Եկն յառաջ Գասպար թագաւորն Հնդկաց, և բացեալ զնարդոս մեծագինս, զտաշխ և զկասիայն, զկինամոնն, զկնդրուկն և զայլ ծխանելիսն անուշահոտութեան իւղոց[1] և խնկոց. և առժամայն հեղաւ հոտ անուշութեան, ելից զայրն՝ (յ)որում նստեալ էին անդ: Իսկ Բաղտասար թագաւորն Արաբացոց բացեալ զգանձս մեծութեան իւրոյ, տարեալ մատուցանէ առաջի Նորա՝ ոսկի և արծաթ և ականս պատուականս, և մարգարիտս գեղեցիկս շափիւղայ: Իսկ Մելքոն թագաւորն Պարսից, բերեալ զմուռն ընդ հալուէսն, ըզբեհեզս և ծիրանիս և զայլ կտաւսն պատանաց: Իբրեւ մատուցանէին իւրաքանչիւր զընծայս իւրեանց՝ ի պատիւ թագաւորին Իսրայելի, յայնժամ յարուցեալ թագաւորքն և իշխանքն ի յայրէն, գնացին առանձինն նոցա բացուստ մեկուսի, երեքեանն միաբանեալ նըստէին, հարցանէին ընդ միմեանս և ասէին:

Ո՜ զարմանալի գործս՝ զոր տեսաք աչօք մերովք այս֊

1. Յօր. Եղեւոյ:

պիսի աղքատ և տնանկ գոլով յամենայն ընչից. ոչ տուն և յարկ և կամ տեղի հանգստեան, այլ անապատ և անմարդաբնակ վայրի, որ ոչ գոյ նոցա պէտք և ոչ ծածկոյթ անձանց իւրեանց: Զի՞նչ էր գալ մեզ ի հեռաստանէ տեսանել և ճանաչել զդոսա. ասա ցմեզ զճշմարիտն, զի՞նչ սքանչելիք տեսաք անդ, եկայք պատմեսցուք միմեանց՝ եթէ զի՞նչ է այս որ երեւեցաւ մեզ:

Ասեն միաբան եղբարքն. Այո՛, բարւոք[1] ասէք: Ասեն ցԳասպար Թագաւորն Հնդկաց. Յորժամ զկնդրուկն տարեալ մատուցանէիր առաջի նորա, ո՞րպէս տեսեր զնա: Ասէ Գասբար. Ես զնա մարմնով որդի Աստուծոյ տեսի՝ բազմեալ յաթոռ փառաց, և զօրք անմարմինք սպասաւորէին նմա: Ասեն ցնա. Բարւոք է: Դարձեալ ասեն ցԲաղտասար Թագաւորն Արաբացոց. Եւ դու յորժամ զանձն մատուցանէիր, ո՞րպէս տեսեր ըզնա: Ասէ. Ես մարմնով որդի մարդոյ տեսի զնա, նըստեալ ի վերայ գահոյից, և զօրք բազմութեան առաջի նորա, որք անկեալ երկիր պագանէին նմա: Ասեն ցնա. Եւ դու բարւոք տեսար: Ասէ Մելքոն. Ես մարմնով տեսի զնա ի չարչարանս մեռեալ, դարձեալ յարուցեալ կենդանացեալ. Ասեն ցնա. Եւ դու բարւոք ասացեր: Զայս իբրեւ լուան Թագաւորքն ի միմեանց, և ի հիացումն եղեալ զարմանային և ասէին. Զի՞նչ է այս նոր սքանչելի իրս՝ որ տեսաք և ցուցաւ մեզ, զի նման միմեանց ոչ էին վկայութիւնքս, հաւատալի գործս՝ զոր աչօք մերովք իսկ տեսաք և ականջօք լուաք:

Եւ վաղիւն յարուցեալ Թագաւորքն ասեն ցմիմեանս. Եկայք միաբան երթիցուք ի այրն, և տեսցուք զի՞նչ յայտնի երեւի մեզ: Եւ գնաց Թագաւորն Հնդկաց Գասպար, եմուտ ի այրն և ետես զմանուկն ի յանբանից մսուրն. և խոնարհեալ երկիր եպագ, և ետես զտեսիլն երկրորդ Թագաւորին Արաբացոց Բաղտասարայ, այն՝ որ յառաջն ետես զնա մարմնով որդի մարդոյ, մարմնաւոր Թագաւոր յայտնեցաւ նմա: Եւ իբրեւ եւ Գասպար

1. Յօր. յաւելու է:

Թագաւորն Հնդկաց, եկեալ պատմեաց նորա՝ (եթէ) զառաջին տեսիլն՝ ոչ տեսի (յօր. եռես), այլ զքոյդ Բաղտասար զոր ասացեր։ Եւ ապա դարձեալ եմուտ Թագաւորն Արաբացւոց Բաղտասար, ետես զՔրիստոս բազմեալ ի գիրկս մօր իւրոյ. խոնարհեալ երկիր եպագ նմա, և զառաջին տեսիլն ոչ ետես՝ զոր որդի Թագաւորի ծանեաւ։ Ասէ. Տեսի զնա որպէս Թագաւորն մօգուց, մարմնով մեռեալ ի չարչարանս և դարձեալ յարուցեալ իսկ և կենդանի։ Եւ գնաց պատմեաց այլ եղբարցն, թէ զառաջին տեսիլն ոչ տեսի՝ այլ զՄելքոն Թագաւորին՝ որ պատմեաց մեզ։ Յայնժամ յարուցեալ Թագաւորն մօգուց Մելքոն, եմուտ ի յայրն, և ետես զՔրիստոս բազմեալ ի վերայ գահոյիցն. խոնարհեալ երկիր եպագ նմա, և զառաջին տեսիլն ոչ ետես որ մեռեալ էր և դարձեալ կենդանի ետես զնա. այլ զոր Գասպար Թագաւորն ետես զնա մարմնով Աստուած ծնեալ ի կուսէն։ Եւ Մելքոն եւ վաղվաղակի՝ խնդութեամբ պատմեաց այլ Թագաւորացն, եթէ զառաջին տեսիլն ոչ տեսի՝ այլ զքոյդ տեսի Գասպար, տեսի զնա Աստուած բազմեալ յաթոռ փառաց։ Զայս տեսեալ Թագաւորացն ամենեցուն, գնացեալ նոցա առանձինն, միաբան նստան պատմել զտեսիլն զոր ծանեան և իմացան։ Ասեն եղբարքն ցմիմեանս. Եկայք գնասցուք ի տեղի հանգստեան մերոյ, և վաղիւն դարձեալ երրորդ անգամ գնասցուք ի յայրն հաւաստեաւ ստուգեսցուք զբանս, եթէ ճշմարիտ է զոր Տէր եցոյց մեզ։

Եւ գնացեալ ի բնակութիւնս իւրեանց, կացեալ խնդութեամբ մինչեւ ցառաւօտն. և ի վաղիւն յարուցեալ գնացին մինչեւ ի դուռն այրին, և մտեալ Թագաւորացն մի ըստ միոջէ, տեսանէին զտեսիլն նոյնպէս՝ որպէս յառաջ տեսին. և խնդացին յոյժ և պատմեցին միմեանց որպէս ծանուցաւ նոցա. և նոքա նոյնպէս ցնծութեամբ սրտիւ ուրախ լինէին՝ և եկեալ խնդութեամբ մեծաւ՝ սիրով պատմեցին զօրացն ամենեցուն, թէ արդարեւ ճշմարիտ Աստուած է նա և որդի Աստուծոյ, որ ըստ իւրաքանչիւր նուիրացն՝ զոր մատուցաք նմա, զնոյն տեսիլ կերպարա-

նեցաւ մեզ, և զողջոյնն մեր և զպատիւ սիրով և խաղաղութեամբ ընկալաւ ի մէնջ։ Եւ հաւատացին թագաւորքն և իշխանքն և ամենայն զօրաց բազմութիւնքն, և ժողովն (յօր. ժողովոյն) որ եկեալ էին անդ։

Եւ դարձեալ Մելքոն թագաւորն առեալ զգիր կտակին՝ զոր ունէր ընդ ինքեան պահեալ՝ յառաջին նախահարց անտի, զոր յառաջն ասացաք, և տարեալ մատուցանէր առաջի մանկանն և ասէր. Ահա նամակ գրոյս՝ զոր փակեալ և կնքեալ ետուր մեզ ի պահեստի ի նախահարց անտի. և ա՛ռ ընթերցի՛ր զգիրդ հաւաստեաւ՝ զոր գրեալ ես մատամբ ձեռին քո։ Եւ գիր գրոյն զոր գրեալ էր և փակեալ կնքեալ կայր ի պահեստի, զոր մոգքն ոչ համարձակեցան բանալ զգիրն, և տալ ընթեռնուլ ումեք քահանայից կամ ժողովրդեանն Հրէից կամ այլ ումեք լսել. զի ոչ էին նոքա արժանի լինել որդի արքայութեան, զի խաչեցողք և ուրացողք լինելոց էին Փրկչին Հրէայքն։

Արդ այս է գիր գրոյն՝ զոր գրեալ կայր և պահեալ հրամանաւն Աստուծոյ։ Զի յետ ելանելոյն Ադամայ ի դրախտէն, և Կայէնի սպանել(ոյն) զԱբել, սուգ առեալ Ադամայ ի վերայ որդւոյ իւրոյ, առաւել քան զելանելն իւր ի դրախտէն. ետ Տէր Աստուած զՍէթ որդի մխիթարութեան, զի յառաջ ցանկացաւ աստուածանալ և Աստուած խոնարհեցաւ մարդանալ վասն առաւել գթոյ իւրոյ մարդասիրութեանն. ետ Տէր Աստուած զերդումն իւր ընդ նախահայրն, միջնորդութեամբ գրեալ և կնքեալ մատամբն իւրով՝ եթէ ի վեց հազարերորդ ամի աւուր վեցերորդի[1], առաքեմ զմիածին որդին իմ զԲանն Աստուած, որ եկեալ մարմնանայ ի զաւակէ քումմէ և լինի որդին իմ որդի մարդոյ, և զքեզ դարձեալ յառաջին փառսն կանգնեսցէ։ Եւ յայնժամ եղիցիս դու Ադամ՝ անմահացեալ մարմնով, աստուած ընդ Աստուած միաւորեալ, իբրեւ զմի ի մէնջ՝ ճանաչել զբարի և զչար։ Այս է գիրն (յօր. գրոյն) գրեալ և մատանեաւն Աստուծոյ փակեալ, զոր բերեալ մոգքն առաջի Յիսուսի մատուցին։

1. Յոր. ՁՌ ամ Երրորդի ատուր Զ Երրորդի։

Արդ իբրեւ կատարեցին թագաւորքն և իշխանքն և զօրքն ամենայն զխնդրուած իւրեանց, զոր խոստացաւ առնել. կացեալ նոցա անդ աւուրս երեք՝ խորհեցան ընդ միմեանս թագաւորքն և ասեն. Եկայք միաբան երթիցուք ի յայրն, երկիր պագցուք և խոստովանեսցուք զնա Աստուած, և դարձեալ երթիցուք զճանապարհս մեր խաղաղութեամբ։

Ցարուցեալ թագաւորքն և իշխանքն և զօրքն ամենայն և մտին ի յայրն, երկիր պագին Յիսուսի և խոստովան եղեն զնա Աստուած, եթէ ճշմարիտ Աստուած ես դու և որդի Աստուծոյ։ Եւ ելեալ նոցա ամենեցուն ի յայրէն և ի ձայն մեծ ցնծութեամբ և ուրախութեամբ փառաւոր առնէին զԱստուած։ Եւ ընդ այգ ընդ առաւօտն ընդ լուսանալ միաշաբաթուն, որում էր տրէտ ամսոյ քսան և հինգ և յունվարի երկոտասան, պատրաստեցին զանձինս իւրեանց դէմ եդեալ գնալ յաշխարհն իւրեանց[1]։

Ապա խորհուրդ առեալ նոցա գնալ առ Հերովդէս ի քաղաքն Երուսաղէմ. և նոյն ժամայն եղեւ առ նոսա բարբառ որ ասէր. Մի՛ երթայք առ Հերովդէս անօրէն բռնաւորն, զի խնդիր է վասն մանկանդ սպանանել զդա։ Եւ զայս լուեալ թագաւորացն և զօրացն ամենեցուն, և գնացին ընդ այլ ճանապարհ՝ զոր Տէր առաջնորդեաց ի յաշխարհն իւրեանց, և Քրիստոսի փառք յաւիտեանս. ամէն։

1. Իմաստ բանից թերի է։

## Ե

## ԳԱԼՈՒՍՏ ՄՈԳՈՒՑՆ ՅԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍԻ*

*Ի թագաւորութեան Հռոմայեցւոց Աւգոստոս կայսեր՝ քառասուն և երեք, և Աբգարու Հայոց և Ասորոց՝ քսան և մի, և Հերովդէի Հրէից արքայի՝ երեսուն և ութ. Տէրն մեր Յիսուս օծեալն ծնաւ ի Բեդղեհէմ Հրէաստանի։*

*Եւ ահա մոգք յարեւելից ելեալ եկին յերկրպագութիւն Նորածին մանկանն, և եկեալ հասեալ նոցա ի քաղաքն յԵրուսաղէմ զամիսս ութ. բայց գիտել պարտ է թէ ոյք էին սոքա։ Ոմանք ասեն՝ թէ յորդոցն Աբրահամու էին՝ ի Քետուրական ցեղէն. և այլ(ք)՝ թէ թագաւորքն Արաբայ և Սաբայ, ըստ վկայելոյն Դաւթեայ։ Այլ երեք էին. առաջինն՝ թագաւորն Պարսից Մելքոն, երկրորդ՝ թագաւորն Հնդկաց Գասպար, երրորդ՝ թագաւորն Արաբացւոց Բաղդասար. և գլուխ զօրաց նոցա կարգեալ իւրաքանչիւր հազարաց հազարապետս, արս երկոտասան, որոց անուանքն են այսոքիկ. Բարխուրիդայ, Դադմուշայ, Բարդիմշայ, Շահարանայ, Խորինայ, Դդմիշայ, Դիշբուղայ, Խամառայ, Շաւուրշայ, Աքշիրայ, Շահուրայ, Շամիրամ։*

*Իսկ հրեշտակ Տեառն՝ յորժամ զաւետիսն ետ սրբոյ կուսին, նոյն ժամայն և մոգուցն ազդեաց՝ գալ յերկրպագութիւն Նորածին մանկանն. և աստեղբն առաջնորդութեամբ եկեալ հասեալ նոցա մօտ ի քաղաքն*

* Խորագիրդ եդաւ ի մէնջ, գրչագիրն ունէր այսպէս. Քաղուց ԻԹ. և յաւանէլարէ Զ. Ծննդեան է և Յայտնութեան Տեառն Աստուծոյ մերոյ, (է) ... Կուսին Մարիամայ։ ՅԱդամայ մինչև ի Ծննդեանն Քրիստոսի ԵՌ. ՃՂԼ. ամ է։

Digitized by Google

յԵրուսաղէմ իբրեւ ամիսս ութ, հանդերձ զօրօքն իւրեանցն։ Եւ իջեալ նոցա շուրջ զքաղաքաւն զաւուրս երիս, զի աստղն որ առաջնորդէր նոցա՝ ծածկեցաւ լոյս նորա։ Եւ ասեն ցմիմեանս թագաւորքն. Զի՞նչ արասցուք այժմ, կամ ընդ ո՞ր ճանապարհ երթիցուք զոր ոչ գիտեմք։

Իսկ իբրեւ ետես արքայ Հերովդէս զայնքան բազմութիւն հեծելոցն՝ բանակեալ շուրջ զքաղաքաւն, երկեաւ յոյժ ի նոցանէ, և ի միտս իւր եկեալ ասէր ցնախարարս իւր. Զի՞նչ արասցուք, զի արքն այնոքիկ բռնագլուխք և խիստք երեւին։ Եւ ասեն ցնա իշխանքն. Ո՛վ արքայ, հրամայեա զգուշութեամբ պահել զքաղաքս, զի մի՛ գաղտնիւք կամ բռնութեամբ առցեն զքաղաքս զայս։ Եւ ասէ արքայն. Այո, բարիոք ասէք, ես արարից զայդ։ Ապա ընտրեաց արս երիս իմաստունս և հանճարեղ և ասէ. Գնացէք և ստուգեցէք զնոսա լռութեամբ, և հարցէք ուստի՞ գան կամ յո՞ երթան։ Եւ յարուցեալ գնացին առ նոսա երեք արքն և ասեն. Ո՛վ արք պատուականք և թագաւորք մեծամեծք, ասացէք մեզ զպատճառ գալստեան ձերոյ աստ, եթէ յորմէ՞ աշխարհէ եկեալ էք, և կամ յո՞ երթայք։ Ասեն Մոգ(ք)ն. Մեք ի հեռաւոր երկրէ եմք, ի բուն աշխարհէն Պարսից, և կամիմք վաղիւն գնալ զճանապարհն մեր։ Ասեն դպիրքն. Ասացէք մեզ զճշմարիտն, այս երրորդ օր էր՝ որ արտաքոյ քաղաքիս իջեւանս արարեալ էք, և մուտ և ել առ մեզ ոչ արարիք. զի՞նչ արդեօք մարդիք իցէք։ Եւ ասեն Մոգ(ք)ն. Եւ զի՞ փոյթ է ձեզ՝ որ աստ եկեալ էք քննել զմեզ և իմանալ, զի պէտք կարեաց ոչ ունիմք խնդրել ի ձէնջ։ Ասեն դպիրքն. Ընդիր և պատուական ազգ երեւիք, և թագաւորք մեծամեծք, և մինչ առ մեզ սիրով և խաղաղութեամբ եկեալ էք, և թագաւորն մեր աստ ի քաղաքիս է, և տեսանէ զձեզ (որ) այդքան բազմութեամբ աստ բանակեալ էք, և ցանկայ տեսանել զձեզ։ Ասեն մոգ(ք)ն. Եւ զի՞նչ խնդրէ արքայն ձեր, և կամ լսել ինչ, զի ոչ ինչ փոյթ ունիմք զումեքէ հարցանել և կամ քննել։ Ասեն դպիրքն. Այս երրորդ օր է՝ որ արտաքոյ քաղա-

քիս իջեալ էք, և ոչ գիտեմք եթէ բռնութեամբ եկեալ էք աստ, եթէ խաղաղութեամբ և եթէ այլազգ ինչ. զի յորմէհետէ դուք աստ բանակեալ էք, հուտ անուշութեան բուրմամբ խնկոց ելանէ ի ձէնջ, և լցուցանէ զքաղաքս մեր. մի՛ թէ մեծագին վաճառականք էք գին և ծախ առնել։ Ասեն մոգքն. Ոչ այդպէս որպէս և կարծէքդ, այլ միայն զճանապարհն խնդրեմք։ Ասեն դըպիրքն. Զո՞ր ճանապարհ։ Ասեն մոգքն. Ընդ որ Տէրն առաջնորդեաց մեզ մինչև աստ, և դարձեալ ուղղեսցէ զգնացս մեր ի բարի՝ որպէս և ինքն կամեսցէ։

Ցարուցեալ դպիրքն մտին ի քաղաքն, և ասեն. Ո՞վ արքայ, արք գլխաւորք են սոքա և կարի ծանր և դժուարին, որ ի բազում անգամ հարցափորձեալ մեզ զնոսա՝ և ոչ ասացին զճշմարիտն. արդ եթէ կամիս իմանալ զմիտս նոցա, չիջո զարամտութիւն քո և կոչեա զնոսա սիրով և պատուով, և յետոյ եթէ պակասութիւն ինչ գտցես ի նոսա կամ վնաս, կամք քո եղիցին։ Եւ զայս լուեալ Հերովդէս ի մեծամեծաց իւրոց, և հրամայեաց սիրով կոչել զնոսա։ Եւ իբրև եկին՝ յարուցեալ արքայն ել ընդ յառաջ նոցա և համբուրեալ զմիմեանս և նստաւ։

Ասէ արքայն. Ո՞վ արք պատուականք և իշխանք փառաւորք, ասացէք մեզ թէ՝ յաղագս որո՞յ իրաց եկեալ էք աստ, և կամ ուստի՞ էք և յո՞ր ազգէ։ Ասեն մոգքն. Մեք ի Պարսից եկեալ եմք՝ յարևելից, որ բուն ազգաւ Մոգք կոչիմք. եկաք աստ աստեղըն առաջնորդութեամբ, և աստղն որ առաջնորդեաց մեզ մինչև աստ, ծածկեցաւ լոյս նորա յաչաց մերոց, և խափանումն եղև ճանապարհին յորում գնայեաք։ Ասէ Հերովդէս. Եւ զի՞նչ խնդրէք, որ այդչափ բազում ընչիւք և զօրօք շրջիք յաշխարհէ յաշխարհ։ Ասեն Մոգքն. Լըւեալ է մեր՝ թէ որդի արքայի ծնանի յաշխարհն Հրէաստանի և եկեալ եմք երկրպագանել նմա։ Իբրև լըւաւ Հերովդէս՝ զարհուրեցաւ յոյժ, և ասէ. Յումէ՞ լուայք զայդ, և կամ ո՞վ պատմեաց ձեզ զոր ասէքդ։ Եւ նոքա ասեն. Հրեշտակ Տեառն բարձրելոյն, և աստղն որ և առաջնորդէր մեզ. տեսանէաք ի մէջ

Digitized by Google

աստեղն աղջիկ մի վարսաւոր կոյս, և ի գիրկս իւր ունէր զնորածին արքայն։

Յայնժամ հրամայեաց ձեռն արկանել ի նոսա բռնութեամբ, և յանկարծակի շարժեցաւ ապարանք տանն, յորում նստեալ էին, և չորից կողմանց սիւնք խախտեցան, և ամենայն շինուածք ապարանիցն անկեալ կործանեցան, և բազմականքն փախեան արտաքս։ Զայն տեսեալ մեծամեծացն և նախարարացն Հրէից, անգեալ առ ոտս Հերովդէի աղաչէին զնա և ասէին. Արձակեա զնոսա խաղաղութեամբ զի երթիցեն զճանապարհս իւրեանց։ Եւ հաւանեալ անօրէն արքայն բանիցս այսոցիկ։ Եւ դարձեալ ասէ ցնոսա սիրով. Ասացէք ինձ զճշմարիտն, զի՞նչ կամիք զի արարից ձեզ։ Ասեն մոգքն. Մեզ ոչ ինչ պիտոյ է ի քէն՝ բայց միայն զայս ասացէք մեզ, յորէնս ձեր ո՞րպէս ընթեռնուք։ Ասէ Հերովդէս. Զի՞նչ ունիք հարցանել զօրինաց մերոց։ Եւ ասեն մոգքն. Ո՞ւր ծնանի Քրիստոս արքայն Հրէից։ Իբրեւ լուաւ զայս արքայն Հերովդէս, խռովեցաւ և ամենայն Երուսաղէմ ընդ նմա. և ժողովեալ զամենայն քահանայապետսն և զդպիրսն, և հարցանէր ցնոսա, թէ ո՞ւր ծնանիցէ Քրիստոսն։ Եւ նոքա ասեն. Ի քաղաքի Դաւթի ի Բեթղեհէմ Հրէաստանի։ Եւ ասէ Հերովդէս ցմոգսն. Երթայք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք, փութով ազդարասջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագից նմա։ Զայս ասէր ամբարիշտն՝ զի եկեալ նենգութեամբ ըսպանցէ զմանուկն։

Եւ նոյն ժամայն յարուցեալ մոգուցն՝ գնացին զճանապարհն իւրեանց. և աստղն զոր տեսին, առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց ի վերայ այրին՝ ուր է մանուկն Յիսուս։ Եւ նոքա խնդութեամբ լցեալ, իջեալ յերիվարաց իւրեանց, և հարին զփողս և զձնծղայս, զքնարս և զտաւիղս և զամենայն երգս նըւագարանաց հարկանէին. և թագաւորքն և իշխանքն և այլ ամենայն բազմութիւնք զօրացն՝ պար առեալ կաքաւէին և ի ձայն մեծ ցնծութեան և ուրախութեան, օրհնէին և փառաւոր առնէին զԱստուած՝ որ արժանաւորեաց տեսանել զպատիւ աւուրն այնորիկ։

Digitized by Google

Իսկ զայն տեսեալ Յովսեփայ և Մարիամու, երկուցեալ փախեան ի յայրէ անտի. և մնաց մանուկն Յիսուս միայն բազմեալ ի մսուրն անբանից։ Իբրև տեսին հեծեալքն, ասեն ցնոսա. Ընդէ՞ր զարհուրեալ փախստ(ակ)ան լինիցիք ի մէնջ, զի և մեք մարդիք եմք իբրև զձեզ։ Ասէ Յովսէփ. Ուստի՞ էք դուք, և կամ ո՞ր աշխարհէ եկեալ էք, և կամ զի՞նչ խնդրէք աստ։ Ասեն մոգքն. Մեք յարևելից եկեալ եմք՝ բազում ընծայիւք և պատարագօք, և կամիմք տեսանել զնորածին արքայն Հրէից և երկիր պագանել նմա. արդ ցուցէք մեզ զմանուկն Նորածին։ Զայս իբրև լուաւ Մարիամ, դարձեալ խնդութեամբ եմուտ ի յայրն, և նստաւ անդ գոհութեամբ։ Իսկ մոգքն բերեալ մատուցանէին իւրաքանչիւր ոք զնուէրս առաջի Նորա։ Եկն նախ Գասպար թագաւորն Հնդկաց, և բացեալ զնարդոսն մեծագին և զտաշխն և զկասիայն, զկինամոնն, զխունկն և զկնդրուկն և զանուշահոտ իւղունս. և առժամայն հեղաւ և բուրեաց հոտ անուշութեան և անմահութեան։ Իսկ Բաղտասար թագաւորն Արաբացւոց, բացեալ զգանձս մեծութեան, և մատուցանէր առաջի Նորա ոսկի, արծաթ և ակունս պատուականս։ Իսկ Մելքոն թագաւորն Պարսից, բերեալ զմուռս և հալէս, բեհեզս և ծիրանիս և զկտաւս պատանացն։

Եւ իբրև մատուցին իւրաքանչիւր ոք զընծայս իւրեանց, ի պատիւ Նորածին արքային Իսրայելի. մեկուսացեալ ի յայրէ անտի, նստան և հարցանէին զմիմեանս. եթէ զի՞նչ նշան աքանչելեաց տեսանէք անտ, եկայք պատմեսցուք։ Ասեն ցթագաւորն Հնդկաց. Յորժամ զկնդրուկն մատուցանէիր առաջի Նորա, ո՞րպէս տեսեր զնա։ Ասէ Գասպար. Ես զնա որդի Աստուծոյ տեսի, մարմնով բազմեալ ի յաթոռ փառաց, և զօրք անմարմին հրեշտակաց սպասաւորէին նմա։ Եւ ասեն ցնա. Բարիոք ասացեր։ Դարձեալ ասեն ցթագաւորն Արաբացւոց. Յորժամ զգանձս մատուցեր առաջի Նորա ո՞րպէս տեսեր զնա։ Ասէ Բաղտասար. Ես տեսի զնա որդի արքայի՝ նստեալ ի վերայ բարձրութեան գահոյից, և զօրք բազում առաջի Նորա, որք անկեալ երկիր պա-

գանէին նմա։ Եւ ասեն ցնա. Եւ դու բարիոք ասացեր։ Դարձեալ ասեն ցԹագաւորն Պարսից. Եւ դու յորժամ զմուռն մատուցանէիր առաջի նորա, ո՞րպէս տեսեր ըզնա։ Ասէ Մելքոն. Ես տեսի զնա ի չարչարանս մեռեալ, և դարձեալ կենդանի։ Եւ ասեն ցնա. Եւ դու բարիոք ասացեր։ Եւ ասեն ցմիմեանս. Զի՞նչ է այս նոր աքանչելիս որ երեւեցաւս մեզ, որ նման միմեանց ոչ են վկայութիւնքս։ Եւ զգիշերն ամենայն կացեալ խընդութեամբ մինչեւ ցառաւօտն։

Եւ ի վաղիւն ասեն ցմիմեանս. Եկայք միւսանգամ դարձցուք ի յայրն և տեսցուք, եթէ այլ նշան ցուցանէ՞ մեզ այսօր։ Եւ գնացեալ յառաջ Թագաւորն Հնդկաց Գասպար եմուտ յայրն և ետես զմանուկն բազմեալ յանբանից մըսուր. և խոնարհեալ երկիր եպագ նմա, և ետես տեսիլն արքային Արաբացւոց, որ յառաջն մարմնով Աստուած ետես, նոյն ժամայն որդի մարմնաւոր թագաւորի երեւեցաւ նմա. և առժամայն ել Թագաւորն Հնդկաց, և պատմեաց նոցա՝ թէ զառաջին տեսիլն ոչ տեսի՝ այլ ըզքոյն Բաղտասար, զոր պատմեցեր մեզ։ Եւ ապա եմուտ Թագաւորն Արաբացւոց, և ետես զՑիսուս բազմեալ ի գիրկս մօր իւրոյ, և անկեալ երկիր եպագ նմա, և զառաջին տեսիլն ոչ ետես, այլ ետես զնա որպէս և Թագաւորն մոգուց Մելքոն, մարմնով մեռեալ ի չարչարանս և յարուցեալ ի մեռելոց. և նոյնժամայն ել արտաքս, և ասաց նոցա, թէ՝ զառաջի տեսիլն ոչ տեսի, այլ զքոյն Մելքոն։ Եւ ապա եմուտ Թագաւորն Պարսից Մելքոն, և ետես զՑիսուս բազմեալ ի վերայ գահոյից և երկիր եպագ նմա, և զառաջին տեսիլն ոչ ետես, այլ ետես զնա մարմնով Աստուած ի կուսէ ծնեալ. ել վաղվաղակի խնդութեամբ, և գնաց պատմեաց Թագաւորացն և զօրացն, եթէ արդարեւ ճշմարիտ Աստուած է նա՝ որ ըստ իւրաքանչիւր պատարագացն՝ զոր մատուցաք նմա՝ զնոյն տեսութեան կերպարանաց երեւցաւ մեզ։ Եւ դարձեալ ասեն ցմիմեանս. Եկայք երրորդ անգամ դարձցուք հաւաստեաւ, և ապա երթիցուք զճանապարհս մեր։ Յայնժամ յարուցեալ Թագաւորքն, միահետ մտին ի յայրն և տեսին զմա-

Digitized by Google

նուէն բազմեալ ի գիրկս մօր իւրոյ, և երկիր պագին նմա: Եւ տեսին երեք թագաւորքն նոյնպէս դարձեալ զմիմեանց տեսիլն, երկեան յոյժ: Եւ կացեալ նոցա անդ աւուրս երիս՝ մեծաւ խնդութեամբ օրհնէին և փառաւոր առնէին զԱստուած: Եւ ապա խորհուրդ առեալ նոցա գնալ առ Հերովդէս և պատմել նմա. և նոյն ժամայն եղեւ առ նոսա ձայն ի վերուստ որ ասէր. Ո՛չ է ձեզ փոյթ երթալ առ Հերովդէս, այլ գնացէք խաղաղութեամբ յաշխարհն ձեր: Եւ զայս լուեալ նոցա՝ գնային ընդ այլ ճանապարհ յաշխարհն իւրեանց, փառաւորելով զմարմնացեալն Աստուած՝ ընդ Հօր և ընդ Հոգւոյն սրբոյ[1]:

## Զ

## ՑԱՂԱԳՍ ՄՈԳՈՒՑ ԹԱԳԱՒՈՐԱՑ ԹԷ ՈՐՊԷՍ ԵԿԻՆ ԶՕՐՕՔՆ ԻՒՐԵԱՆՑ ՅԵՐՈՒՍԱՂԷՄ

Ահա մոգ(ք) յարեւելից եկին, որք ելեալ էին յաշխարհէն իւրեանց բազում զօրօք. և եկեալ հասին ի քաղաքն Երուսաղէմ ամիս ութ, և էին թագաւորք երեք: Առաջինն՝ մոգուց թագաւորքն Պարսից, որում անունն Մելքոն. երկրորդն՝ թագաւորքն Հնդկաց, որում անունն էր Գասպար. երրորդ՝ թագաւորքն Արաբացոյց, որում անուննն էր Բաղդասար, և գլուխ զօրաց նոցա

1. Աստանօր ի գրչագրին գոյ էջ մի եւս, յորում կարճառօտ բանիւք պատմէ, որ ինչ անցք անցին ընդ Յիսուս՝ յօրէ անտի Թլփատութեանն մինչև ցօր մահուն. յիշատակէ և զկոտորած մանկանցն Բեթղահեմի և ասէ լինել «Թըւով Ռ. Դ. Ճ. ԿԲ. ի ՋԴ.? գեղջէ. և այրեաց Հերովդէս չառ գրեանս ի Հրէիցն, և ինքն անկեալ յախտս չարաչար, մինչ զի յիւրոց ձեռացն սատակեցաւ»:

Digitized by Google

կարգեալ ի վերայ զօրաց հազարապետս՝ արք երկոտասանք. անուանք նոցա այսոքիկ են. առաջին՝ Բարհուրիդայ, երկրորդն Դադիմիշայ, երրորդն՝ Բարդիմիշայ, չորրորդն՝ Շահայպանայ, հինգերորդ՝ Խորինա, վեցերորդ՝ Դըդմիշայ, եօթներորդ՝ Դիշպուղայ, ութերորդ՝ Խումարայ, իններորդ՝ Շարուրայ, տասներորդ՝ Իսպանայ, մետասաներորդ՝ Շահուրայ, երկոտասան՝ Շամիրամ։ Իսկ զօրքն հեծելոցն՝ որք ընդ նոսա էին, արք թուով իբրեւ երկոտասան հազար, զի ի վերայ իւրաքանչիւր հազարաց՝ իշխան կարգեալ գլուխ և պետ հազարաց, իբրեւ հազարապետ ի վերայ նոցա։ Սոքա ամենեքեան հրամանաւն Աստուծոյ խորհուրդ արարեալ ժողովեցան ի միասին։

Եւ հրեշտակ Տեառն յորժամ աւետարանէր սուրբ կուսին, նոյն ժամայն գնացեալ ազդեաց մոգուցն գալ յերկրպագութիւն նորածին մանկանն. և աստեղըն առաջնորդութեամբ եկեալ հասեալ նոցա մօտ ի քաղաքն Երուսաղէմ, հանդերձ զօրօքն իւրեանց ամիսս ութ. և իջեալ նոցա շուրջ զքաղաքաւն՝ կացին անդ աւուրս երիս՝ զորս յառաջն ասացաք։ Առաջին թագաւորն Մելքոն՝ ունէր զմուռս և հալուէս, բեհեզս և ծիրանիս, և այլ կտաւս պատանաց (յոր. պատռանեաց), և զգիրս՝ զոր մատամբն Աստուծոյ գրեալ էր և կնքեալ։ Երկրորդ թագաւորն Գասպար, ունէր ընծայս ի պատիւ մանկանն, զնարդոսն մեծագին, զտաշխսն և զկասիայն։ Երրորդ թագաւորն Բաղդասար, ունէր գանձս բազում, ոսկի, արծաթ, ականս պատուականս, շափիւղա մեծագինս և գեղեցիկս։

Եւ իբրեւ նոքա եկին ի քաղաքն Երուսաղէմ, և աստղն որ առաջնորդէր նոցա, ծածկեցաւ լոյս նորա առժամայն. և ապա այնուհետեւ դարձեալ զտեղի առին բազմութիւն զօրացն հեծելոց։ Եւ ասէին ընդ միմեանս թագաւորքն. Զի՞նչ արասցուք այժմ, կամ յո՞ երթիցուք ի ճանապարհն ուրեք զոր ոչ գիտեմք, զի Տէր առաջնորդեաց մինչեւ ցայս վայր և եկաք, և աստղն՝ որ առաջնորդէր և երթայր առաջի մեր՝ անյայտ եղեւ ի մէնջ և պակասեաց։ Ապա ասեն ցմիմեանս մոգ(ք)ն.

Digitized by Google

Եկայք հարց(ց)ուք վասն մանկանն՝ և ստուգեսցուք եթէ ո՞ւր իցէ, և ապա երթիցուք զճանապարհն մեր։ Ասեն միաբան. Այո՛, Բարիոք ասէք։

Եւ իբրեւ ետես Հերովդէս զբազմութիւն զօրաց հեծելոց, որ շուրջ զքաղաքաւն բակ առեալ էին, երկեաւ յոյժ ի նոցանէ, և ի միտս իւր եկեալ ասէր, Զի՞նչ են սոքա՝ որ աստ եկեալ են բազում զօրօք և մեծաւ բազմութեամբ, և ոչ ոք ի նոցանէ առնէ մուտ և ել առ մեզ. և գլխաւորքն նոցա այնպէս կարի յաղթողք են և զօրաւորք, որ ոչ եկին սիրով առ մեզ տեսանել զմեզ։ Եւ ապա հրամայեաց արքայն կոչել զիշխանս և զմեծամեծս իւր, և խորհուրդ արարեալ ընդ միմեանս (յոր. միմեանց) ասէին. Զի՛նչ արասցուք ընդ նոսա, զի արք (յոր. զիարդ) հզօրք են։ Ասեն ցնա իշխանքն. Ո՜վ արքայ, հրամայեա զգուշութեամբ պահել զքաղաքս, զի մի՛ գաղտնիւք կամ բռնութեամբ առցեն զքաղաքս զայս։ Ասէ արքայն. Բարւոք ասէք։ Եւ ասեն իշխանքն. Ո՜վ արքայ, հրամայեա զօրացդ ամենեցուն որք են աստ զինուորք, զգուշանալ քաղաքիս, և ի վաղիւն հրամայեսցես արանց իմաստնոց՝ ստուգութեամբ (յոր. ստուգբեամբ) քննել զնոսա, եթէ զի՞նչ արդեօք (յոր. արդարք) մարդիք իցեն նոքա։ Եւ ասէ արքայն. Այո՛, ես արարից զայդ։ Ապա ի վաղիւն հրամայեաց կոչել արս երիս իմաստնասէրս և հանճարեղս, որք էին հմուտ ամենայն իմաստութեամբ խօսիցն. և առաքեաց առ նոսա և ասէ. Երթայք հարցէք զնոսա իմաստութեամբ քննեցէք զնոսա ծածուկ մտօք և լռութեամբ, և իմացարուք զնոսա, թէ ուստի՞ գան կամ յո՞ երթան։

Եւ նոյն ժամայն յարուցեալ գնացին առ նոսա երեք արքն՝ և ասեն ցնոսա. Ո՜վ արք պատուականք և թագաւորք մեծամեծք, ասացէք մեզ զպատճառս գալըստեան ձերոյ աստ, եթէ յո՞րմէ աշխարհէ եկեալ էք, և կամ յո՛ երթայք։ Եւ ասեն մոգ(ք)ն. Զի՞նչ խնդրէք ի մէնջ, որ այդպէս եկեալ էք հարցանել զմեզ. մեք ի հեռաւոր երկրէ եկեալ եմք, ի բուն աշխարհէն Պարսից, և կամիմք վաղիւն գնալ զճանապարհն մեր։ Աս

երրորդ օր է որ արտաքոյ քաղաքիս իջեւանս արա-
բեալ էք, և մօտ և ել առ մեզ ոչ առնէք․ զի՞նչ ար-
դեօք մարդիկք իցէք։ Եւ ասեն մոգ(ք)ն․ Եւ ձեզ զի՞
և փոյթ է՝ որ աստ եկեալ էք քննել զմեզ և իմանալ,
զի ոչ պէտս կարեաց ունիմք խնդրել ինչ ի ձէնջ։ Ա-
սեն իշխանքն․ Պատուական և ընտիր ազգ երեւիք, և
թագաւորք մեծամեծք, և առ մեզ սիրով և խաղաղու-
թեամբ եկեալ էք․ և թագաւորն մեր աստ ի քաղա-
քիս է և տեսանէ զձեզ զօրօք՝ որ իջեալ բնակեալ էք
աստ, և ցանկայ տեսանել զձեզ և լսել բան ինչ ի
ձէնջ, և դուք ոչ կամեցարուք սիրով գալ առ մեզ․ և
նա առաքեաց զմեզ առ ձեզ մեծաւ պատուով քննել
և իմանալ զխորհուրդս ձեր՝ եթէ զի՞նչ խնդրէք։ Ասեն
մոգ(ք)ն․ Եւ զի՞նչ խնդրէ ի մէնջ արքայն ձեր, տեսանել
զմեզ և կամ լսել, զի ոչ ինչ կարեաց փոյթ ունիմք
զումեքէ հարցանել կամ լսել և քննել։ Ասեն իշխանքն․
Ասացէք մեզ զճշմարիտն․ այս երրորդ օր է որ արտա-
քոյ քաղաքիս իջեալ էք, և ոչ գիտեմք եթէ բռնու-
թեա՞մբ եկեալ էք աստ, եթէ խաղաղութեամբ եթէ
այլազգ ինչ։ Ասեն մոգ(ք)ն․ Յաշխարհէն մեր մինչեւ
ցայսօր սիրով եկաք աստ ամենեքեան և ոչ բռնու-
թեամբ հարցանէք զմեզ։ Եւ ասեն իշխանքն․ Հրա-
մանաւ արքային մերոյ եկեալ եմք աստ, և ցանկամք
տեսանել զձեզ, և լսել զբարբառ ի բերանոյ ձերմէ․
զի որչափ դուք աստ էք իջեալ, հոտ անուշութեան
բուրմամբ խնկոց ելանեն ի ձէնջ, և լցուցանէ զքաղաքս
մեր․ մի՞թէ մեծագին վաճառականք էք և այլ մեծա-
մեծաց սիրելի, և յամենայն ծաղկանց հոտ անուշու-
թեան ելանէ և լնու զքաղաքըս մեր։ Ասեն մոգքն․ Ոչ
այդպէս է զոր կարծէք, այլ մեք ոչ ինչ ունիմք իրս վա-
ճառաց, բայց միայն զճանապարհն խնդրեմք։ Ասեն
իշխանքն․ [Զո՞ր ճանապարհ։ Ասեն մոգքն][1]․ Ընդ
որ Տէրն առաջնորդեսցէ մեզ, նա ուղղեսցէ զգնացս
մեր ի բարի՝ որպէս և ինքն կամեսցի։ Ասեն իշ-
խանքն․ Մի՛ թագուցանէք ի մէնջ զխորհուրդս ձեր․

1․ Փակագծեալդ պակասէր յօրինակին։

Digitized by Google

զի ոչ երբեք ելանէք ի քաղաքէս աստի, եթէ ոչ հրամանաւ արքային մերոյ, այլ ասացէք զհրամանս ձեր սիրով և ոչ բռնութեամբ։ Ասեն մոգ(ք)ն. Թէպէտ եւ բազում անգամ հարցանէք զմեզ, մեք զխորհուրդս սրտից մերոց ոչ կարեմք յայտնել ձեզ։

Իբրեւ լուան զայս իշխանքն՝ և որք անդ էին, ասեն. Ոչ իւիք արդեօք իցեն սոքա՝ եթէ ոչ լրտեսք, և կամին որ բնակեալ են ուրեք և խնդրեն տեղի գտանել։

Ապա յարուցեալ իշխանքն դարձան ի քաղաքն Երուսաղէմ, և եկեալ պատմեցին արքային Հերովդէի, և ասեն. Արքայ, բռնագլուխք են նոքա և կարի ծանր և դժուարին, որ բազում անգամ քննեցաք զնոսա՝ սիրով և աղաչանօք, և ոչ յայտնեցին ումեք զխորհուրդս նոցա։

Յայնժամ արքայն Հերովդէս լի եղեւ բարկութեամբ, և հրամայեաց մեծաւ սպառնալեօք կոչել զնոսա առաջի իւր։ Ասեն իշխանքն և մեծամեծքն քաղաքին. Ո՜վ արքայ, մի՛ առներ զայդ բան, զի տէր ի բազում գաւառաց եկեալ են այսր սիրով, և մի՛ ինչ առներ դոցա չար, և իմասցիս զխորհուրդս նոցա. այլ կոչեա զնոսա սիրով և պատւով՝ որպէս և արժան և օրէն է թագաւորաց առնել, և յետոյ եթէ պակասութիւն ինչ գտցես ի նոսա կամ վնաս, կամք քո եղիցին։

Եւ զայս լըւեալ արքային Հերովդէի ի մեծամեծաց իւրոց, չիջաւ սակաւ մի սրտմտութիւն նորա, և հրամայեաց սիրով կոչել զնոսա։ Եւ իբրեւ եկին առ արքայն, խոնարհեալ երկիր պագին նմա, համբուրեցին զմիմեանս և նստան։

Ասէ արքայն. Ո՛վ արք պատուականք և մեծամեծք, ասացէք մեզ՝ յաղագս որո՞յ իրաց եկեալ էք դուք աստ յերկրէ հեռաստանէ, և շրջիք ընդ ամենայն տեղիս։ Եւ ասեն մոգ(ք)ն. Մեք ի Պարսից աշխարհէն եկեալ եմք, որ բուն (յօր. բուռն) ազգաւ Մոգք կոչիմք (յօր. կոչին). և հրամանաւն Աստուծոյ և առաջնորդութեամբ նորին միաբանեալ եկաք աստ. և աստղն որ առաջնորդեաց մեզ, այժմ ծածկեցաւ լոյսն նորա յաչաց

մերոց և մեզ խափանումն եղեւ ճանապարհիս՝ յորում գնայաք։ Ասէ Հերովդէս. Եւ զի՞նչ խնդիր ունիք, որ այդչափ բազմութեամբ զօրօք շրջիք յաշխարհէ յաշխարհ։ Ասեն մոգքն. Մեք յաղագս այնորիկ եկաք աստ և կամիմք հարցանել զքեզ, զի լուեալ եմք յաշխարհն մեր, եթէ որդի թագաւորի ծնաւ յաշխարհն Հրէաստանի, և եկաք տեսանել զնա և երկիր պագանել նմա։

Իբրեւ լուաւ Հերովդէս, զարհուրեցաւ յոյժ և երկ(ե)աւ ի բանէն՝ զոր մոգքն ասացին։ Ասէ Հերովդէս. Եւ յորմէ՞ լուեալ զայդ՝ որ ասէք, և կամ ո՞վ պատմեաց ձեզ զայդ։ Եւ ասեն մոգքն. Մեր վկայութեամբ բանիցն ոչ հաւատայք, զոր ստուգիւ լուաք և իմացաք։ Ասէ Հերովդէս. Յորմէ՞ ստուգիւ ունիք զվկայութիւնն զայն՝ զոր դուք միայն գիտէք և ոչ այլ ոք։ Ասեն մոգքն. Մեք ի նախնեաց անտի մերոց ունիմք զվկայութիւնս՝ գրով կնքեալ և պահեալ. և բազում ժամանակս սպասեալ միային հարքն մեր ազգէ յազգ և որդւոց յորդիս իւրեանց, մինչեւ եկեալ ասացեալ բանն առ մեզ կատարեցաւ. և ապա հրամանաւն Աստուծոյ յայտնեալ՝ եկաք ի տեղիս այս՝ զոր Տէր եցոյց մեզ։ Ասէ Հերովդէս. Ցուցէք ինձ զնշանն զոր ունիք զի տեսից։ Եւ ասեն մոգքն. Զոր յանուն նորա խոստացեալ ես կատարել, անհնար է բանալ և ցուցանել ումեք։ Ասէ Հերովդէս. Մի՛ ծածկէք յինէն զխորհուրդս ձեր, զի ես ի բանիցդ յայդմիկ ոչ գիտեմ զոր ասէքդ։ Եւ ասեն մոգքն. Այդ իսկ են սքանչելիք որ դու բնաւ ոչ գիտես։ Ասէ Հերովդէս. Ոչ ոք ի մէնջ լուեալ է զայդ, և ոչ հաւաստեաւ կարեմք իմանալ։ Ասեն մոգքն. Մեք ի հեռաստանէ լուեալ եմք և գիտեմք, և դուք ի մօտոյ ո՞չ գիտէք և ո՛չ իմանայք։ Ասէ Հերովդէս. Ասէք եթէ գիր ունիմք մատամբն Աստուծոյ գրեալ և կնքեալ և պահեալ, տո՛ւք ի քահանայսդ զի ընթեռնուն։ Ասեն մոգքն. Մեզ չէ օրէն բանալ զնա և տալ ումեք. զի որ գրեաց և փակեաց՝ նա բանայ և պատմէ մեզ։ Ասէ Հերովդէս. Ուստի՞ է գիրն այն՝ որ ազգն ձեր միայն ունի։ Ասեն մոգքն. Այլ ազգ ոչ է լուեալ և ոչ գի֊

տէ, բայց միայն ազգն մեր, որ գրով ունիմք զվկայութիւնն զայն մատամբն Աստուծոյ գրեալ գիր։ Իբրեւ լուաւ զայն անօրէն բռնաւորն, զայրացեալ ի միտս իւր ասէր. Ոչ թողից զձեզ աստի ելանել՝ մինչեւ ցուցանէք զամենայն ինչս ձեր զոր ունիք։

Յայնժամ հրամայեաց արքայն ձեռս արկանել ի նոսա բռնութեամբ. և յանկարծակի շարժեցաւ ապարանքն տանն՝ յորում նստեալ կային, և չորից կողմանց սիւնքն խախտեալ, և ամենայն շինուածքն ապարանիցն անկեալ կործանեցան. և բազմութեամբ ժողովոյն՝ որ արտաքոյ անդր էին, փախեան ի տեղւոջէ անտի. և որ ի ներքոյ շինուածոյն էին, անկեալ սատակեցան, և մեռան յաւուրն յայնմիկ՝ որդիք եօթանասուն և երկուք՝ ընդ մեծամեծս և փոքունս։ Եւ զայն տեսեալ քաղաքացիքն և ամենայն բազմութիւն մարդկան, անկեալ առ ոտս Հերովդէի, աղաչէին և ասէին. Արձակեա զնոսա խաղաղութեամբ, զի երթիցեն զճանապարհս իւրեանց։ Նոյնպէս և Արքաղէոս որդին իւր, աղաչէր զհայր իւր արձակել զնոսա խաղաղութեամբ։ Եւ անօրէն բռնաւորն հաւանեալ կամաց որդւոյ իւրոյ՝ արձակեաց զնոսա։ Եւ հրամայեաց սիրով կոչել զնոսա և ասէր. Ասացէք ինձ զճշմարիտն, զի՞նչ խնդրէք յինէն զի արարից ձեզ։ Ասեն մոգքն. Մեզ ոչ ինչ պիտոյ է ի քէն, բայց միայն զայն. յօրէնս ձեր ո՞րպէս ընթեռնուք, ասասցէք։ Ասէ Հերովդէս. Զինչ ունիք հարցանել զոր ասէք։ Եւ ասեն մոգքն. Ո՞ւր ծնանի Քրիստոս արքայն Հրէից։ Իբրեւ լըւաւ զայս անօրէնն Հերովդէս, խռովեցաւ և ամենայն Երուսաղէմ ընդ նմա. և ժողովեալ զամենայն քահանայսն և զդպիրսն, և հարցանէր ցնոսա. Թէ ո՞ւր ծնանի Քրիստոս։ Եւ նոքա ասեն. Ի քաղաք Դաւթի ի Բեթղահէմ Հրէաստանի։ Եւ ասէ Հերովդէս ցմոգսն. Երթայք ըստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք, փութով ազդ արասջիք ինձ, զի և ես եկեալ երկիր պագանեմ նմա (յօր. պագանեղ). զայս ասէր անօրէնն, զի եկեալ նենգութեամբ սպանցէ զմանուկն։

Եւ մոգուցն նոյնժամայն յարուցեալ երկիր պագին

Հերովդէի և ամենայն քաղաքին Երուսաղեմի, և գնացին զճանապարհն իւրեանց։ Եւ աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա մինչեւ եկեալ եկաց ի վերայ այրին ուր է(ր) մանուկն Յիսուս։ Եւ նոքա խնդութեամբ հասեալ ի քաղաքն Բեդղահէմ, և իջեալ իւրաքանչիւր ոք յերիվարէ իւրոյ, և հասեալ յանկարծակի ի տեղին, և զփողս իւրեանց և ձնծղայս, զքնարս և զտաւեղս և զերգս նուագարանացն հարկանէին. և թագաւորքն և իշխանքն և այլ ամենայն բազմութիւն զօրացն, պար առեալ կաքաւէին և ի ձայն մեծ ցնծութեամբ օրհնէին և փառաւոր առնէին զԱստուած, որ արժանի եղեն տեսանել զպատիւ աւուրն այնորիկ ըզմեծի խորհրդոյն։

Իսկ զայն տեսեալ Յովսեփայ և Մարիամու, երկուցեալ ի թագաւորացն և ի զօրացն ամենեցուն, փախեան յայրէ անտի. և մանուկն Յիսուս միայն մնաց յայրին, բազմեալ յանբանից մսուր։ Իբրեւ տեսին զնոսա իշխանքն և մեծամեծքն, ասեն ցնոսա. Ընդէ՞ր զարհուրեալ երկնչիք ի մէնջ, զի մեք արգեօք մարդիկք եմք իբրեւ զձեզ։ Ասէ Յովսէփ. Ուստի՞ էք դուք, կամ յո՞ր աշխարհէ եկեալ էք աստ, որ այդպէս բազում զօրօք եկեալ էք։ Եւ ասեն մոգքն. Մեք ի հեռաւոր աշխարհէ եմք եկեալ, ի Պարսից, բազում ընծայիւք և պատարագօք, և ցանկամք տեսանել զարքայն Հրէից և երկիր պագանել նմա. արդ եթէ գիտիցէք արդեօք զճշմարիտն՝ ասացէք մեզ, թէ ո՞ւր իցէ մանուկն նորածին՝ թագաւորն Իսրայելի։ Զայս իբրեւ լուաւ Մարիամ, դարձաւ խնդութեամբ և եմուտ ի յայրն, և առեալ զմանուկն իւր և ուրախութեամբ սրտիւ լցեալ գոհութեամբ օրհնէր զԱստուած և լռութեամբ նստէր անդ։ Իսկ մոգքն դարձեալ կրկին անգամ հարցանէին զՅովսէփ և ասեն. Ո՛ պատուական ծեր, պատմեա մեզ զճշմարիտն և ստուգութեամբ՝ եթէ գիտե՞ս արդեօք զնա։ Եւ Յովսէփ մատամբ ի հեռաստանէ ցուցանէր զայրն։ Եւ մոգուցն խնդութեամբ հասեալ ի դուրս այրին, և տեսին զմանուկն բազմեալ յանբանից մսուր, և անկեալ երկիր պագանէին նմա թա-

զաւարքն, իշխանքն և ամենայն զօրքն. և բերեալ մատուցանէին իւրաքանչիւր զնուէրս առաջի Նորա։

Եկն նախ Գասպար Թագաւոր Հնդկաց, և բացեալ ըզնարդոսն մեծագինս և զտաշխան և զկասիայն և զկինամոնն և զկնդրուկն և զայլ ծխանելիսն և զանուշահոտութիւն իւղոցն. և առժամայն հեղաւ և բուրեաց հոտ անուշութեան և անմահութեան, և ելից զայրն յորում էին անդ։ Իսկ Բաղդասար Թագաւորն Արաբացոց՝ բացեալ զգանձն մեծագին իւր, և տարեալ մատուցանէր առաջի Նորա ոսկի, արծաթ, ականս պատուականս, մարգարիտս գեղեցիկս։ Իսկ Մելքոն Թագաւորն Պարսից՝ բերեալ զմուռս և զհալուէս, զբեհեզս և զծիրանիս և զկտաւս պատանացն։ Եւ իբրև մատուցին իւրաքանչիւր ոք զընծայս իւրեանց ի պատիւ արքային Նորածին Թագաւորին Իսրայելի, յայնժամ ելեալ Թագաւորքն յայրէն, գնացեալ նոցա առանձինն բացուստ նստեալ մեկուսի ի հեռաստանէ. և նոցա միաբանեալ հարցանէին զմիմեանս և ասէին, եթէ՝ զի՞նչ նշան ըսքանչելեաց տեսէք անդ, եկայք պատմեսցուք, եթէ ճշմարի՞տ է բանս այս որ եղեւ։ Եւ ասեն. Այո՛, բարիոք ասէք։ Եւ հաւանեալ կամաց նոցա, ասեն ցԹագաւորն Հնդկաց. Յորժամ (յոր. յորում) զկնդրուկն տարեալ մատուցանէ(ի)ր առաջի Նորա, ո՞րպէս տեսեր զնա։ Ասէ Գասպար. Ես զնա մարմնովն որդի Աստուծոյ տեսի, բազմեալ յաթոռ փառաց, զօրք անմարմնոց հրեշտակացն ըսպասաւորէին Նմա։ Եւ ասէին ցնա. Բարիոք ասացեր։ Դարձեալ ասեն ցԹագաւորն Պարսից. Յորժամ զմուռն մատուցանէ(ի)ր առաջի Նորա, ո՞րպէս տեսեր զնա։ Ասէ Մելքոն. Ես մարմնով տեսի զնա ի չարչարանս մեռեալ, և դարձեալ յարուցեալ և կենդանի։ Եւ ասեն ցնա. Եւ դու բարիոք ասացեր։ Դարձեալ ասեն ցԹագաւորն Արաբացւոց. Յորժամ զգանձն մատուցեր առաջի Նորա, ո՞րպէս տեսեր զնա։ Ասէ Բաղդասար. Ես զնա մարմնով տեսի որդի արքայի, նստեալ ի վերայ բարձրութեան աթոռոյ գահոյից, և զօրք բազում անկեալ երկիր պագանէին առաջի Նորա։ Եւ ասեն ցնա. Եւ դու բարւոք ասացեր։

Digitized by Google

Իբրեւ լուան զայս թագաւորքն, ի հիացումն եղեալ զարմանային և ասէին ցմիմեանս. Զի՞նչ է այս նոր սքանչելիս զոր տեսանեմք, որ երեւեցաւ մեզ. և նման միմեանց ոչ են վկայութեանց հաւատալի գործ, զոր աչօք մերովք իսկ տեսանեմք: Ապա դարձեալ կրկին անգամ խորհուրդ արարին ընդ միմեանս և ասեն. Եկայք այսօր երթիցուք ի բնակութիւնս մեր, և վաղիւն երկրորդ անգամ դարձցուք ի յայրն և ստոյգ և հաւասար քննեսցուք զայս, եթէ ճշմարիտ է. և ասեն միաբան. բարւոք ասէք: Եւ յարուցեալ թագաւորքն գնացին ի տեղի իջեւանի իւրեանց, և զգիշերն ամենայն կացեալ խնդութեամբ մինչեւ ցառաւօտն: Եւ ի վաղիւն յարուցեալ թագաւորքն ասեն ցմիմեանս. Եկայք միւսանգամ դարձցուք ի յայրն, և տեսցուք թէ այլ նշան ցուցանէ՞ մեզ այսօր: Եւ գնացեալ յառաջ թագաւորն Հնդկաց Գասպար, և եմուտ յայրն, և ետես զմանուկն բազմեալ յանբանից մսուր, և խոնարհեալ երկիր եպագ նմա. և ետես զերկրորդ տեսիլն, թագաւոր(ի)ն Արաբացոց՝ որ յառաջ մարմնովն Աստուած ետես, նոյնժամայն որդի մարմնաւոր թագաւորի՝ որ երեւեցաւ նմա. և ել թագաւորն Հնդկաց և պատմեաց նոցա՝ եթէ զառաջինն տեսիլն ոչ տեսի, այլ զքոյդ, Բաղդասար, զոր ասացեր մեզ: Եւ ապա դարձեալ եմուտ թագաւորն Արաբացւոց Բաղդասար, և ետես զՅիսուս բազմեալ ի գիրկս մօր իւրոյ, և խոնարհեալ երկիր եպագ նմա, և զառաջին տեսիլն ոչ ետես, որդի թագաւորի ծնեալ, այլ ետես զնա որպէս թագաւորն մոգուցն Մելքոն, մարմնովն մեռեալ ի չարչարանս, և դարձեալ յարուցեալ ի մեռելոց. և խոնարհեալ երկիր եպագ նմա, գնաց և պատմեաց նոցա, թէ զառաջին տեսիլն ոչ տեսի՝ այլ զքոյդ, Մելքոն: Յայնժամ յարուցեալ թագաւորն Պարսից Մելքոն, եմուտ յայրն, և ետես զՅիսուս բազմեալ ի վերայ գահոյից, և խոնարհեալ երկիր եպագ նմա, և զառաջինն ոչ ետես, որ մեռեալ և դարձեալ կենդանի, այլ ետես զնա մարմնով Աստուած ի կուսէն ծնեալ: Եւ վաղվաղակի խնդութեամբ, և գնաց պատմեաց թագաւորացն

Digitized by Google

և հզօրացն, եթէ արդարեւ ճշմարիտ Աստուած է Նա, և կամ որդի Աստուծոյ. որ ըստ իւրաքանչիւր նուիրանացն զոր մատուցաք Նմա, զնոյն տեսութիւն կերպարանացն երեւեցաւ մեզ, և զողջոյն սիրոյ և զպատիւն խաղաղութեամբ ընկալաւ ի մէնջ։ Եւ հաւատային թագաւորքն և իշխանքն և ամենայն զօրքն բազմութեամբ ժողովոյն որ էին անդ։

Եւ ապա դարձեալ թագաւորն մոգուց Մելքոն՝ առեալ զգիրն կտակին՝ զոր ունէին ընդ ինքեանս պահեալ յառաջին նախահարցն, և տարեալ մատուցին առաջի մանկանն և ասէին. Ահա նամակն քո՝ զոր կնքեալ ետուր ի պահեստի նախահարցն մերոց. առ բաց և կարդա զգիրս քո, զի ձեռագիր անուան քո է։ Եւ գիր գրոյն զոր գրեալ էր և կայր ի պահեստի, այս է, զոր և մոգքն ոչ արժան համարեցան բանալ և տալ ընթեռնուլ ումեք ի քահանայիցն, և կամ ի ժողովրդենէն լսել ուրուք. զի ոչ էին նոքա արժանի լինել ժառանգ արքայութեան երկնից, զի խաչողքն և ուրացողքն լինելոց էին նոքա։

Այս է գիր գրոյն զոր կնքեալ և պահեալ կայր հրամանաւն Աստուծոյ։ Զի յետ (յօր. զհետ) ելանելոյն Ադամայ ի դրախտէն և Կայենի սպանեալ զԱբէլ, սուգ առեալ Ադամայ ի վերայ մահուան որդւոյ իւրոյ. քանզի յետ ելանելոյն Ադամայ ի դրախտէն ետ Տէր Նմա որդի զՍէթ, որ թարգմանի մխիթարութեան որդի. զի Ադամ յառաջ ցանկացաւ աստուածանալ և Աստուած խոնարհեցաւ յետոյ մարդանալ, և զնա աստուածացուցանել վասն առաւել գթոյն իւրոյ մարդասիրութեանն։ Եդ Աստուած զուխտն իւր և զերդումն ընդ Ադամայ, միջնորդութեամբ գրոյն որ գրեալ և կնքեալ էր մատամբն իւրով, եթէ ի վեց հազարերորդ ամին, (աւ)ուր վեցերորդի, սկիզբն լինելութեան քո, առաքեմ զմիածին որդին իմ զԲանն Աստուած, որ եկեալ մարմնանայ ի զաւակէ քումմէ, և լինի որդին իմ որդի մարդոյ, և զքեզ յառաջին փառսն դարձուցանեմ վերստին. և յայնժամ եղիցիս դու Ադամ, իբրեւ զմի ի մէնջ, անմահ մարմնով ընդ Աստուած միաւորեալ։ Այս է գիրն առաջին գրեալ մատամբն

Աստուծոյ և կնքեալ զոր Ադամ ետ ի Սէթ, և Սէթ յորդիսն իւր, և յորդոց յորդիսն մինչև ի Նոյ, և Նոյ ետ ի Սէմ, և Սէմ ետ յորդիսն իւր, և որդիքն յորդիս իւրեանց՝ մինչև ցԱբրահամ, և Աբրահամ ետ ի Մելքիսեթեկ քահանայապետն, և Մելքիսեդեկ ետ ի Կիւրոս թագաւորն Պարսից, և նա եդ ի սենեկի, պահեալ զգուշութեամբ մինչև ի Մոգսն. զոր բերեալ մոգքն մատուցանէին առաջի Յիսուսի Քրիստոսի:

Արդ իբրև կատարեցին թագաւորքն և զօրքն ամենայն զուխտսն իւրեանց և զխնդրուածս, և կացեալ նոցա անդ զաւուրս երիս, խորհեցան ընդ միմեանս թագաւորքն և ասեն. Ոչ է պարտ անփոյթ առնել զուխտն մեր, զի վասն այնորիկ աստ եկեալ եմք ամենեքեան, զի կատարեսցուք. եկայք երրորդ անգամ դարձցուք ի յայրն և ստուգեսցուք հաւաստեաւ և ապա երթիցուք զճանապարհն մեր. և ասեն միաբան. այո՛:

Յայնժամ յարուցեալ թագաւորքն մտին ի յայրն և տեսին զմանուկն բազմեալ ի գիրկս մօր իւրոյ. ողջոյն տուեալ նմա և երկիր պագին: Եւ տեսին երեք թագաւորքն, զմիմեանց տեսիլն ստուգիւ, և երկեան յոյժ, և ուրախութեամբ և խնդութեամբ երկիր պագին Տեառն Յիսուսի. և ելեալ յայրէ անտի և կացին մինչև ի վաղիւն՝ և ուրախութեամբ մեծաւ օրհնէին զԱստուած: Եւ առաւօտին ընդ լուսանալն, յութերորդումն աւուրն, ի յունուարի վեցն, երկոտասան հազար զօրքն և իշխանքն հանդերձ թագաւորօքն պատրաստեցին զանձինս իւրեանց դիմեալ գնալ յաշխարհն իւրեանց: Ապա խորհուրդ առեալ գնալ առ Հերովդէս և պատմել նմա. և նոյնժամայն ելեալ առ նոսա ձայնն ի վերուստ՝ որ ասէր. Ոչ է ձեզ փոյթ երթալ առ Հերովդէս անօրէնն, այլ գնացէք սիրով և խաղաղութեամբ յաշխարհն ձեր: Եւ զայս լուեալ թագաւորացն և զօրացն ամենեցուն, երկրպագեալ նմա և գնացին ի տունս իւրեանց, ընդ այլ ճանապարհ. փառաւորելով զմարմնացեալն Աստուած՝ ընդ Հօր և սուրբ Հոգւոյն. այժմ և միշտ և՛:

Digitized by Google

# Է

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԳԱԼՍՏԵԱՆ ՄՈԳՈՒՑ ԹԱԳԱՒՈՐԱՑՆ
## ՅԵՐԿՐՊԱԳՈՒԹԻՒՆ ՆՈՐԱԾԻՆ ԹԱԳԱՒՈՐԻՆ

Ահա մոգք յարեւելից եկին հասին յԵրուսաղէմ, թագաւորք երեք. մինն՝ Պարսից թագաւորն Մելքոն, և միւս՝ թագաւորն Հնդկաց Գասպար, և երրորդ՝ թագաւորն Արաբացոց Պաղդասար։ Եւ գլուխ զօրացն նոցա՝ արք երկոտասան հազարայք, հազարապետք՝ որոց անուանքն են այսոքիկ. Առաջին՝ Բարխուրիդայ[1], և միւսն՝ Դադմիշայ, երրորդն՝ Բարդիմշա[2]. չորրորդն՝ Շահայպանայ[3], հինգերորդն՝ Խորինա[4], վեցերորդն՝ Դրդմուշա[5], եօթներորդն՝ Դիշպահայ, ութերորդն՝ Խամարայ, իններորդն՝ Շաւուրա[6], տասներորդն՝ Իսպանայ, մետասաներորդն՝ Շահուրի[7], երկոտասաներորդն՝ Շամիրամ։ Իսկ զօրքն հեծելոցն՝ որք ընդ նոսա էին, արք թուով իբրեւ երկոտասան հազար։

Սոքա ամենեքեան հրամանաւն Աստուծոյ խորհուրդ արարեալ ժողովեցան ի միասին. քանզի հրեշտակ Տեառն յորժամ աւետարանեաց[8] կուսին զյղանալ Բանին, նոյն ժամայն գնացեալ նոցա ազդեաց զալ յերկրպագութիւն նորածին մանկանն։ Եւ աստեղբն առաջնորդութեամբ եկեալ հասեալ նոցա՝ մօտ ի քաղաքն յԵրուսաղէմ հանդերձ զօրօքն իւրեանց յամիսս ութ, և իջեալ շուրջ

1. Բ. օր. Բարհարիդայ։
2. Բ. օր. Բարդիժա։
3. Բ. օր. Շախապանայ։
4. Բ. օր. Խորինեա։
5. Բ. օր. Դրդամշա։
6. Բ. օր. Շամուրայ։
7. Բ. օր. Շահուրայ։
8. Բ. օր. աւետարանեաց, չունի Բանին։

զքաղաքաւն, կային աւուրս երիս անդ. քանզի աստղն որ առաջնորդեաց նոցա մինչեւ անդ, ծածկեցաւ առ ի նոցանէ։ Եւ ասեն ցմիմեանս թագաւորքն. Զի՞նչ արասցուք այժմ, կամ յո՞ երթիցուք ի ճանապարհ զոր ոչ գիտեմք. զի Տէր առաջնորդեաց մեզ մինչեւ ցայս վայր, և աստղն ծածկեցաւ ի մէնջ։

Իսկ Հերովդէս արքայ իբրեւ ետես զնոսա, խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա։ Եւ կոչեցեալ զիշխանսն իւր և զմեծամեծսն և ասէ ցնոսա. Զի՞նչ արասցուք արանցս այսոցիկ, զի կարի բռնաւորք երեւին, զի ահա յորմէհետէ իջեալ են շուրջ զքաղաքաւ՝ մուտ և ել ոչ առնեն առ մեզ։ Ասեն իշխանքն. Արքայ, հրամայեա զօրաց մերոց զգուշանալ քաղաքիս, և յղեա առ նոսա արս իմաստունս, խաղաղութեամբ հարցանել զնոսա և իմանալ, ուստի՛ գան և կամ յո՛ երթան։ Ասէ Հերովդէս[1]. Այո՛, բարիոք ասէք, ես արարից զայդ։ Եւ ի վաղիւն յղեաց առ նոսա արս երիս՝ ճարտարախօսս և իմաստունս, որ եկեալ հարցին զնոսա և ասեն. Ո՛վ արք փառաւորք և մեծաշուք թագաւորք, յորմէ՞ աշխարհէ եկեալ էք, և կամ յո՞ երթայք։ Ասեն մոգքն. Զի՞նչ խնդրէք ի մէնջ որ այդպէս եկեալ էք հարցանել զմեզ։ Ասեն դպիրքն. Թագաւորն մեր ի քաղաքի աստ է, և կամի տեղեկան(ալ)[2]՝ թէ զի՞նչ խնդրէք դուք այդչափ բուռն զօրօք, զոր ունիքդ յանծանօթ երկրիս։ Ասեն մոգքն. Մեք ի հեռաւոր երկրէ եկեալ եմք՝ ի բուն աշխարհէն Պարսից, և կամիմք վաղիւն գնալ զճանապարհն մեր։ Ասեն իշխանք Հրէից. Ասացէք մեզ զճշմարիտն և մի՛ թագուցանէք ի մէնջ զխորհուրդս ձեր. այս երրորդ օր է որ արտաքոյ քաղաքիս օթեվանս արարեալ էք, և մուտ և ել առ մեզ ոչ արարէք[3]. զի՞նչ արդեւք մարդիկ իցէք։ Ասեն մոգքն. Եւ զի՞ փոյթ է ձեզ որ եկեալ էք քննել զմեզ և իմանալ. մեք ոչ ինչ պէտս ունիմք կարեաց խնդրել ինչս ի ձէնջ։

1. Բ. օր. արքայ։
2. Բ. օր. տեղեկանալ ձեզ։
3. Բ. օր. առնէք։

Digitized by Google

Ասեն դպիրքն. Պատուական և ընտիր ազգ երեւիք, թագաւորք մեծամեծք և իշխանք փառաւոր, և մինչ առ մեզ սիրով և խաղաղութեամբ եկեալ էք, և թագաւորն մեր եւս կամի տեսանել զձեզ, որ այդքան զօրօք իջեալ և բնակեալ էք աստ, և կամի խօսել և լսել զբանս ինչ ի ձէնջ, և դուք ոչ կամեցարուք սիրով գալ առ նա. և առաքեաց սիրով[1] զմեզ առ ձեզ իմանալ զխորհուրդս ձեր [թէ զինչ խնդրէք: Ասեն մոգքն][2]. Զի՞նչ խնդրէ արքայն ձեր տեսանել զմեզ և կամ լսել ինչ, զի ոչ ինչ փոյթ ունիմք զումեքէ հարցանել և քննել: Ասեն դպիրքն. Ասացէք մեզ զճշմարիտն, այս երեք օր է որ արտաքոյ քաղաքիս բնակեալ էք, և ոչ գիտեմք թէ բռնութեամբ եկեալ էք աստ, և թէ խաղաղութեամբ և թէ այլազգ ինչ: Ասեն մոգքն. Ցաշխարհէն մերմէ մինչեւ աստ խաղաղութեամբ եկեալ եմք և ոչ բռնութեամբ, և զի՞որդ նենգութեամբ հարցանէք զմեզ: Ասեն դպիրքն. Հրամանաւ արքային մերոյ եկեալ եմք աստ, և կամիմք իմանալ զխորհուրդս սրտից ձերոց. զի յորմէ հետէ դուք աստ բնակեալ էք, հոտ անուշ խնկոց բուրէ ի ձէնջ և լցուցանէ զքաղաքս մեր. մի՞թէ մեծագոյն վաճառական էք, և այլ մեծամեծ թագաւորաց սիրելի, որ յամենայն ծաղկանց հոտոց վայելչութեանց ելանէ և լնու զքաղաքս մեր. մի՞թէ կամի՞ք ի տեղի ուրեք գին և ծախ առնել: Ասեն մոգքն. Ոչ այդպէս է զոր կարծէքդ. մեք իրս չունիմք վաճառելոյ, այլ միայն զճանապարհն խնդրեմք: Ասեն դպիրքն. Զո՞ր ճանապարհ: Ասեն մոգքն. Ընդ որ Տէրն առաջնորդեսցէ մեզ և ուղղեսցէ զգնացս մեր ի բարի, որպէս և ինքն կամեսցի: Ասեն դպիրքն. Մի՛ թագուցանէք ի մէնջ զխորհուրդս ձեր, այլ ասացէք զկամս սրտից ձերոց սիրով և ոչ բռնութեամբ: Ասեն մոգքն. Թէպէտ եւ բազում անգամ հարցանէք զմեզ, մեք զխորհուրդս սրտից մերոց ոչ կարեմք յայտնել ձեզ:

Եւ յարուցեալ իշխանքն Հրէից, դարձան ի քա-

1. Բ. օր. Փծուռ պատառով:  2. Յաւելեալ յ'Բ. օրինակէն:

ղաքն և ասեն ցՀերովդէս. Արքայ, բռնագլուխ են նոքա և կարի ծանր և դժուարինք, որ բազում անգամ քննեցաք[1] զնոսա սիրով և աղաչանօք[2], և ոչ յայտնեցին մեզ զխորհուրդս իւրեանց։ Յայնժամ բարկութեամբ լի եղեւ Հերովդէս, և հրամայեաց մեծ[3] սպանալեօք կոչել զնոսա առաջի իւր։ Ասեն իշխանք. Ո՜վ արքայ, մի՛ առներ զբանդ, այլ կոչեա զնոսա սիրով և պատուով, որպէս արժան է թագաւորաց առնել. և յետոյ եթէ ննգութիւն ինչ գտցես ի նոսա՝ կամք քո եղիցին։ Եւ հրամայեաց Հերովդէս սիրով կոչել զնոսա։ Եւ յորժամ եկին՝ եւ ընդ առաջ նոցա Հերովդէս, և նոքա երկիր պագին նմա, և գիրկս արկեալ համբուրեցին զմիմեանս և նստան։ Ասէ ցնոսա Հերովդէս. Ո՛վ արք փառաւորք և մեծամեծ իշխանք, ասացէք մեզ, թէ՝ վասն որո՞յ իրաց եկեալ էք աստ յերկրէ հեռաստանէ։ Ասեն մոգքն. Մեք յարեւելից եկեալ եմք ի Պարսից աշխարհէն, որ բուն ազգաւ Մոգ կոչիմք. և հրամանաւն Աստուծոյ միաբանեալ եկաք աստ. և աստղն՝ որ առաջնորդեաց մեզ մինչ յայս տեղիս՝ ծածկեցաւ ի մէնջ. և մեք խափանեցաք ի ճանապարհէն մերմէ յոր և գնայաք։ Ասէ արքայ. Եւ զի՞նչ խնդիրք ունիք՝ որ այդքան բազում զօրօք և ընչիւք հրջիք յաշխարհէ յաշխարհ։ Ասեն մոգքն. Մեք վասն այնորիկ եկաք աստ՝ զի հարցանեմք զձեզ, թէ ո՞ւր ծնանի արքայն Իսրայելի. զի լուաք յաշխարհն մեր, թէ՝ ի Հրէաստանի ծնանի, և եկաք տեսանել զնա և երկիր պագանել[4]։ Իբրեւ լուաւ զայն Հերովդէս՝ զարհուրեցաւ յոյժ, և երկեաւ ի բանէն զոր ասացին մոգքն։ Ասէ Հերովդէս. Յումէ՞[5] լուայք, և կամ ո՞վ պատմեաց զայդ։ Ասէ մոգքն. Մեք ի նախահարցն անտի ունիմք զվկայութիւնս զայս գրով կնքեալ և պահեալ, և բազում ժամանակս սպասեալ Ձային հարքն մեր յազգէ ազգ և որդւոյ յորդիս մինչեւ ե-

1. Բ. օր. հարցափննեցաք։
2. Բ. օր. խաղաղութեամբ։
3. Բ. օր. չունի մեծ։
4. Բ. օր. յաւելու՝ նմա։
5. Յօր. յումմէ, իսկ Բ յորմէ՞։

կեալ ասացեալ բանն առ մեզ կատարեցաւ. և ապա հրամանաւն Աստուծոյ յայտնեալ, եկաք ի տեղիս յայս՝ զոր Տէր[1] եցոյց մեզ։ Ասէ Հերովդէս. Ցուցէ՛ք ինձ զնշանս զոր ունի՛ք զի տեսից։ Ասէն մոգքն. Զոր յանուն Նորա խոստացեալ եմք կատարել՝ անհնար[2] է բանալ և ցուցանել ումեք։ Ասէ Հերովդէս. Մի՛ ծածկէք յինէն զխորհուրդս ձեր, զի ես ի բանիցդ ոչ գիտեմ զոր ասէքդ։ Ասեն մոգքն. Այդ իսկ են աքանչելիք՝ զոր դուք բնաւ ոչ գիտէք։ Ասէ Հերովդէս. Ոչ ոք է լուեալ ի մէնջ զայդ, և ոչ հաւաստեաւ կարեմք իմանալ։ Ասեն մոգքն. Ի հեռաստանէ լուեալ եմք և գիտեմք, և դուք ի մօտոյ ո՞չ գիտէք։ Ասէ Հերովդէս. Ասէք եթէ գիր ունիմք մատամբն Աստուծոյ գրեալ և կնքեալ[3], տո՛ւք ի քահանայքդ զի ընթեռնուցուն։ Ասեն մոգքն. Չէ օրէն բանալ զայն և տալ ումեք ընթեռնուլ, զի որ գրեաց և փակեաց՝ նա բանայ և պատմէ մեզ։ Ասէ արքայն Հերովդէս. Ուստի՞ է գիրն այն՝ զոր դուք միայն ունիք։ Ասեն մոգքն. Այլ ազգ ոչ գիտէ և ոչ է լուեալ, բայց միայն ազգն մեր, որ գրով ունիմք զվկայութիւնն զայն գրեալ մատամբ Աստուծոյ։ Ասէ Հերովդէս ցասմամբ և[4] բարկութեամբ. Ո՛չ թողից զձեզ եղանել աստի՝ մինչեւ ցուցանէք զամենայն ինչս ձեր զոր ունի՛ք։ Եւ հրամայեաց ունել զնոսա։

Յայնժամ շարժեցաւ ապարանն յորում նստէին, և սիւնքն անկեալ կործանեցան և ամենայն ժողովուրդն փախեան ի տեղւոջէն անտի և բլաւ տունն այն և եսպան ոգիս եօթանասուն և երկու. և զայն տեսեալ իշխանացն Հրէից՝ անկան առ ոտս Հերովդէի, և աղաչէին զնա և ասէին. Արձակեա զնոսա խաղաղութեամբ, զի երթիցեն զճանապարհն իւրեանց։ Այլ և Արքեղայոս որդին Հերովդէի՝ աղաչէր զհայրն իւր[5] արձակել ըզնոսա խաղաղութեամբ։ Եւ ապա Հերովդէս արձակեաց

1. Բ. օր. չունի՝ Տէր։
2. Բ. օր. անհնարին։
3. Բ. օր. չունի՝ և կնքեալ։
4. Բ. օր. չէ։
5. Բ. օր. չունի՝ իւր։

Digitized by Google

զնոսա սիրով և ասաց. Ասացէք ինձ՝ զճշմարիտն, զի՞նչ խնդրէք յինէն, զի արարից ձեզ։ Ասեն մոգքն. Մեզ ոչ ինչ է պիտոյ ի քէն, բայց միայն զայս ասացէք մեզ, յօրէնսն ձեր ո՞րպէս[1] ընթեռնուք։ Ասէ Հերովդէս. Զի՞նչ ունիք հարցանել և լսել[2]։ Ասեն մոգքն. Ո՞ւր ծնանի Քրիստոս արքայն Հրէից։ Իբրև լուաւ զայս արքայ Հերովդէս, խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա. և ժողովեալ զամենայն քահանայս և զդպիրսն և հարցանէր ցնոսա, թէ ո՞ւր ծնանի Քրիստոսն։ Եւ նոքա ասեն. Ի քաղաքի Դաւթի ի Բեթղահէմ Հրէաստանի։ Ասէ Հերովդէս ցմոգսն. Երթայք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք, փութով ազդ ինձ արասջիք, զի և ես եկեալ երկիր պագից նմա։ Զայս ասէր անօրէնն՝ զի եկեալ նենգութեամբ՝ սպանցէ զմանուկն։

Եւ մոգուցն նոյնժամայն[3] յարուցեալ երկիր պագին Հերովդէի և գնացին զճանապարհն իւրեանց. և աստղն զոր տեսին յարեւելս՝ առաջնորդեաց նոցա, մինչեւ եկեալ եկաց[4] ի վերայ՝ ուր էր մանուկն Յիսուս։ Եւ իջեալ յերիվարացն, հնչեցուցին զփողսն և զձընծղայսն, զտաւեղսն և զքնարսն, և զերգարանս[5] նուագարանացն հարկանէին. և թագաւորքն և իշխանք և այլ ամենայն բազմութիւնք զօրացն՝ պար առնէին[6] կաքաւէին, և ի ձայն մեծ ցնծութեան և ուրախութեան օրհնէին և փառաւոր առնէին զԱստուած, որ արժանի արար զնոսա տեսանել զպատիւ աւուրն այնորիկ։

Եւ զայն տեսեալ Յովսեփայ և Մարիամու՝ երկուցեալ ի նոցանէ, և փախեան յայրէ անտի, և մնաց միայն մանուկն Յիսուս յայրին բազմեալ յանբանից մսուր։ Իսկ մոգքն ասեն ցնոսա. Ընդէ՞ր զարհուրեալ երկնչիք և փախստական լինիք ի մէնջ, զի և մեք արդեւք[7] մարդիկք եմք իբրեւ զձեզ։ Ասէ Յովսէփ. Ուս-

1. Բ. օր. զի՞նչ։
2. Բ. օր. դնէ՝ զո՞ր առնել։
3. Բ. օր. չունի։
4. Բ. օր. չունի։
5. Բ. օր. Երգս։
6. Բ. օր. պար առնել։
7. Բ. օր. արդեանք։

Digitized by Google

կեալ ասացեալ բանն առ մեզ կատարեցաւ. և ապա հրամանաւն Աստուծոյ յայտնեալ, եկաք ի տեղիս յայս՝ զոր Տէր[1] եցոյց մեզ։ Ասէ Հերովդէս. Ցուցէ՛ք ինձ զնշանս զոր ունիք զի տեսից։ Ասէին մոգքն. Զոր յանուն Նորա խոստացեալ եմք կատարել՝ անհնար[2] է բանալ և ցուցանել ումեք։ Ասէ Հերովդէս. Մի՛ ծածկէք յինէն զխորհուրդս ձեր, զի ես ի բանիցդ ոչ գիտեմ զոր ասէքդ։ Ասեն մոգքն. Այդ իսկ են աքանչելիք՝ զոր դուք բնաւ ոչ գիտէք։ Ասէ Հերովդէս. Ոչ ոք է լուեալ ի մէնջ զայդ, և ոչ հաւատեաւ կարեմք իմանալ։ Ասեն մոգքն. Ի հեռաստանէ լուեալ եմք և գիտեմք, և դուք ի մօտոյ ո՞չ գիտէք։ Ասէ Հերովդէս. Ասէք եթէ գիր ունիմք մատամբն Աստուծոյ գրեալ և կնքեալ[3], տո՛ւք ի քահանայքդ զի ընթեռնուցուն։ Ասեն մոգքն. Չէ օրէն բանալ զայն և տալ ումեք ընթեռնուլ, զի որ գրեաց և փակեաց՝ Նա բանայ և պատմէ մեզ։ Ասէ արքայն Հերովդէս. Ուստի՞ է գիրն այն՝ զոր դուք միայն ունիք։ Ասեն մոգքն. Այլ ազգ ոչ գիտէ և ոչ է լուեալ, բայց միայն ազգն մեր, որ գրով ունիմք զվկայութիւնն զայն գրեալ մատամբ Աստուծոյ ։ Ասէ Հերովդէս ցասմամբ և[4] բարկութեամբ. Ո՛չ թողից զձեզ ելանել աստի՝ մինչեւ ցուցանէք զամենայն ինչս ձեր զոր ունիք։ Եւ հրամայեաց ունել զնոսա։

Ցայնժամ չարժեցաւ ապարանն յորում նստէին, և սիւնքն անկեալ կործանեցան և ամենայն ժողովուրդն փախեան ի տեղւոյէն անտի և բլաւ տունն այն և եսպան ոգիս եօթանասուն և երկու. և զայն տեսեալ իշխանացն Հրէից՝ անկան առ ոտս Հերովդէի, և աղաչէին զնա և ասէին. Արձակեա զնոսա խաղաղութեամբ, զի երթիցեն զճանապարհն իւրեանց։ Այլ և Արքեղայոս որդին Հերովդէի՝ աղաչէր զհայրն իւր[5] արձակել ըզնոսա խաղաղութեամբ։ Եւ ապա Հերովդէս արձակեաց

1. Բ. օր. չունի՝ Տէր։
2. Բ. օր. անհնարին։
3. Բ. օր. չունի՝ և կնքեալ։
4. Բ. օր. ևս։
5. Բ. օր. չունի՝ իւր։

Digitized by Google

զնոսա սիրով և ասաց. Ասացէք ինձ՝ զճշմարիտն, զի՞նչ խնդրէք յինէն, զի արարից ձեզ: Ասեն մոգքն. Մեզ ոչ ինչ է պիտոյ ի քէն, բայց միայն զայս ասացէք մեզ, յօրէնսն ձեր ո՞րպէս[1] ընթեռնուք: Ասէ Հերովդէս. Զի՞նչ ունիք հարցանել և լսել[2]: Ասեն մոգքն. Ո՞ւր ծնանի Քրիստոս արքայն Հրէից: Իբրև լուաւ զայս արքայ Հերովդէս, խռովեցաւ, և ամենայն Երուսաղէմ ընդ նմա. և ժողովեալ զամենայն քահանայս և ըդպիրսն և հարցանէր ցնոսա, թէ ո՞ւր ծնանի Քրիստոսն: Եւ նոքա ասեն. Ի քաղաքի Դաւթի ի Բեթղահէմ Հրէաստանի: Ասէ Հերովդէս ցմոգսն. Երթայք ստուգեցէք վասն մանկանն, և յորժամ գտանիցէք, փութով ազդ ինձ արասջիք, զի և ես եկեալ երկիր պագից նմա: Զայս ասէր անօրէնն՝ զի եկեալ նենգութեամբ՝ սպանցէ զմանուկն:

Եւ մոգուցն նոյնժամայն[3] յարուցեալ երկիր պագին Հերովդէի և գնացին զճանապարհն իւրեանց. և աստղն զոր տեսին յարևելս՝ առաջնորդեաց նոցա, մինչև եկեալ եկաց[4] ի վերայ՝ ուր էր մանուկն Յիսուս: Եւ իջեալ յերիվարացն, հնչեցուցին զփողսն և զձընծղայսն, զտաւեղսն և զքնարսն, և զերգարանս[5] նուագարանացն հարկանէին. և թագաւորքն և իշխանք և այլ ամենայն բազմութիւնք զօրացն՝ պար առնէին[6] կաքաւէին, և ի ձայն մեծ ցնծութեան և ուրախութեան օրհնէին և փառաւոր առնէին զԱստուած, որ արժանի արար զնոսա տեսանել զպատիւ աւուրն այնորիկ:

Եւ զայն տեսեալ Յովսեփայ և Մարիամու՝ երկուցեալ ի նոցանէ, և փախեան յայրէ անտի, և մնաց միայն մանուկն Յիսուս յայրին բազմեալ յանբանից մսուր: Իսկ մոգքն ասեն ցնոսա. Ընդէ՞ր զարհուրեալ երկնչիք և փախստական լինիք ի մէնջ, զի և մեք արդեւք[7] մարդիկք եմք իբրև զձեզ: Ասէ Յովսէփ. Ուս-

1. Բ. օր. զի՞նչ:
2. Բ. օր. դնէ՝ զո՞ր ասէ:
3. Բ. օր. չունի:
4. Բ. օր. չունի:
5. Բ. օր. նոյն:
6. Բ. օր. դար առնել:
7. Բ. օր. արդեամբք:

տի՞ էք դուք, կամ յո՞ր աշխարհէ եկեալ էք, և կամ զի՞նչ խնդրէք աստ, որ այդպէս բազում զօրօք եկեալ էք։ Ասեն մոգքն. Մեք ի հեռաւոր աշխարհէ եկեալ եմք՝ յարեւելից, և ցանկամք տեսանել զարքայն Հրէից, և երկիր պագանել նմա. արդ եթէ գիտէք արդեւք զճշմարիտն ասացէք մեզ թէ ո՞ւր ծնանի մանուկն՝ արքայն Իսրայելի։ Զայս իբրեւ լուաւ Մարիամ՝ դարձեալ խնդութեամբ եմուտ ի յայրն ուրախութեամբ սրտիւ, և առեալ զմանուկն ի գիրկս իւր, և նստաւ։ Եւ մոգքն դարձեալ կրկին անգամ հարցանէին ցՅովսէփ և ասէին. Ո՛ պատուական ծեր, ցոյց մեզ զմանուկն նորածին։ Եւ Յովսէփ մատամբն ի հեռաստանէ ցուցանէր զայրն։

Եւ Մարիամ դիեցոյց զտղայն, և դարձեալ եդ ի մսուրն անբանից, և մոգուցն խնդութեամբ հասեալ ի դուրս այրին՝ և մտեալ տեսին զմանուկն բազմեալ յանբանից մսուր, և անկեալ երկիր պագանէին նմա թագաւորք և իշխանքն և ամենայն զօրքն։ Եւ բացեալ մատուցանէին իւրաքանչիւր ոք զնուէրս ընծայիւք[1] առաջի նորա։

Եկն նախ Գասպար թագաւորն Հնդկաց, և բացեալ զնարդոսն մեծագին և զստաշխն և զկասիայն և զկինամոնն և զկնդրուկն և զայլ ծխանելիսն և զանուշահոտութիւն իւղոցն, որ առ ժամայն հեղաւ և բուրեաց հոտ անուշութեան և անմահութեան խնկոցն[2], և ելից զվայրս ամենայն։ Իսկ Բաղդասար թագաւորն Արաբացոց՝ բացեալ զգանձս մեծութեան իւրոյ, և տարեալ մատուցանէր առաջի նորա ոսկի և արծաթ և ականս պատուականս և մարգարիտս գեղեցիկս և մեծագինս։ Իսկ Մելքոն՝ թագաւորն Պարսից՝ բացեալ[3] զմուռս և հալւէս, բեհեզս և ծիրանիս և կտաւս պատանաց։ Եւ իբրեւ մատուցին իւրաքանչիւր ոք զընծայս իւրեանց ի պատիւ մանուկ թագաւորին՝ նորընծայ արքային Իսրայելի, ելեալ[4] թագաւորք յայրէն և գնացեալ ի բացուստ

1. Բ. օր. ընծայէց։ 
2. Բ. օր. չունի։ 
3. Բ. օր. բերեալ։ 
4. Բ. օր. [illegible] ելեալ։

նստէին առանձին[1] և հարցանէին զմիմեանս և ասէին, թէ զի՞նչ նշան սքանչելեաց տեսէք անդ ի յայրին[2]։ Եւ ասեն ցթագաւորն Հնդկաց. Յորժամ զկնդրուկն մատուցեր[3] առաջի նորա, ո՞րպէս տեսեր զնա։ Ասէ Գասպար. Ես զնա մարմնով որդի Աստուծոյ տեսի, բազմեալ յաթոռ փառաց, և զօրք անմարմին հրեշտակացն սպասաւորէին նմա։ Եւ ապա[4] ասեն ցթագաւորն Պարսից. Եւ դու արքայ Մելքոն, յորժամ ըզզմուռն մատուցեր առաջի նորա, ո՞րպէս տեսեր զնա։ Ասէ Մելքոն. Ես մարմնով զնա որդի Աստուծոյ տեսի ի չարչարանս, մեռեալ և թաղեալ, և դարձեալ յարուցեալ և կենդանի յերկինս համբարձեալ։ Եւ ապա ասեն ցթագաւորն Արաբացոյ Բաղդասար. Դու արքայ Բաղդասար, յորժամ զգանձն մատուցեր առաջի նորա՝ ո՞րպէս տեսեր զնա։ Ասէ Բաղդասար. Ես մարմնով տեսի զնա որպէս զորդի արքայի՝ նստեալ ի վերայ բարձրութեան աթոռոյ գահոյից, և զօրք բազմութեան մարդկան առաջի նորա, որք անկեալ երկիր պագին նմա։

Իբրև լուան թագաւորքն զասելս միմեանց, ի հիացումն եղեալ զարմանային և ասէին ցմիմեանս. Զի՞նչ է այս նոր սքանչելիքս զոր[5] տեսաք։ Եւ զայն օր գընացեալ յիջաւանս իւրեանց, և կացին խնդութեամբ մինչև ցառաւօտն։ Եւ ի վաղիւն միւսանգամ մտին[6] ի յայրն. և մտեալ[7] յառաջ թագաւորն Հնդկաց Գասպար, և տեսեալ զմանուկն եդեալ յանբանից մսուր, և խոնարհեալ երկիր եպագ նմա, և ետես զտեսիլն[8] Բաղդասար(այ)։ Եւ ելեալ արտաքս ասաց թէ զառաջինն տեսիլն իմ ոչ տեսի, այլ զքոյն, արքայ Բաղդասար։ Եւ

1. B. օր. գնացեալ նոցա առանձինն ի բազմաց նստեալ մեկուսի ի հեռաստանէ։
2. B. օր. յաւելու. Եկայք պատմեսցուք, եթէ ճշմարիտ է բանս այս որ եղեւ։
3. B. օր. տարեալ մատուցեր։
4. B. օր. դարձեալ։
5. B. օր. յաւելու՝ այսօր։
6. B. օր. դարձան։
7. B. օր. գնացեալ։
8. B. օր. զնէ՝ և տեսեալ զերկրորդ տեսիլն։

ապա մտեալ թագաւորն Արաբացոց Բաղդասար, և ետես զՑիսուս բազմեալ ի գիրկս մօր իւրոյ, և խոնարհեալ երկիր եպագ նմա. և ելեալ արտաքս ասաց, թէ զառաջին տեսիլն ոչ տեսի, այլ զքոյն արքայ Մելքոն, չարչարեալ և մեռեալ ի խաչի: Եւ ապա եմուտ թագաւորն Պարսից Մելքոն, և ետես զՑիսուս բազմեալ (ի վերայ) գահոյից: Եւ խոնարհեալ երկիր եպագ նմա. և ել վաղվաղակի խնդութեամբ և պատմեաց նոցա թէ զառաջին տեսիլն իմ ո՛չ տեսի, այլ զքոյդ արքայ Գասպար. և ասէր, Արդարեւ ճշմարիտ Աստուած է սա և որդի Աստուծոյ, որ ըստ իւրաքանչիւր նուիրացն՝ զոր մատուցաք նմա յառաջն, զնոյն տեսութիւն կերպարանացն երեւեցոյց մեզ: Եւ ապա դարձեալ թագաւորն Մելքոն՝ առեալ մատոյց զգիր կտակին առաջի մանկանն, և ասէ. Ահա նամակն՝ զոր կնքեցեր և ետուր ի պահեստի նախահարցն մերոց. ա՛ռ բաց և ընթերցիր զգիր քո, զի ձեռագիր անուան քոյ է: Եւ գիր գրոյն այս էր՝ զոր ետ Աստուած Ադամայ ընդ մխիթարութեան որդւոցն Սեթայ, զի տրտմութիւն յոյժ տիրեաց Ադամայ յետ մահուան Հաբելի ի Կայենէ. այլ զի և ետես զԿայէն պատուհասեալ յԱստուծոյ, և ի վերայ պատուիրանազանցութեանց իւր՝ Ադամ՝ և զրկելոյն[1] յանմահական կենացն, և արտաքսելոյն ի փառակենցաղ դրախտէն, յաւելան աղէտք և կսկիծ որդւոյն[2]՝ որ ետես զԱբէլ սպանեալ, և զԿայէն պատուհասեալ եօթն պատժօք, առաւել տրտմեցաւ և ի սուգ մտաւ Ադամ, և ոչ մերձենայր յԵւայ ամուսնութեամբ: Ապա յետ երկերիւր և քառասուն ամաց ելանելոյն Ադամայ ի դրախտէն, յղեաց առ նա մարդասէրն Աստուած զհրեշտակ իւր և ասաց մերձենալ յԵւայ. և ետ Աստուած Ադամայ զՍէթ որդի մխիթարութեան: Ետ և զգիրն զայն գրեալ մատամբ Աստուծոյ՝ ուխտ Ադամայ, թէ ի վեց հազար ամին, և ի վեցերորդ օրին և ի վեցերորդ ժամին, առաքեմ ըզ-

1. Բ. օր. պատուիրանազանցութեան իւրոյ Ադամայ զրկելոյն:
2. Բ. օր. որդւոցն:

միածին որդին իմ զԲանն Աստուած, որ եկեալ մար֊մնանայ ի զաւակէ քումէ, և լինի որդի իմ՝ որդի մարդոյ, ձր զքեզ դարձեալ[1] յառաջին փառսն կանգնէ; վերըս֊տին չարչարանօք խաչին իւրոյ. և յայնժամ եղիցիս դու, Ադամ, իբրև զմի ի մէնջ, մաքուր հոգւով և ան֊մահ մարմնով ընդ Աստուած միաւորեալ։

Այս է գիրն առաջին գրեալ մատամբն Աստուծոյ և կնքեալ, զոր Ադամ ետ ի Սէթ, և Սէթ յԵնովս, և Ենովս ետ յորդիսն իւր, և այնպէս[2] անցաւ յորդւոց յորդիս մինչև ի Նոյ, և Նոյ ետ ի Սէմ, և Սէմ ետ յորդիսն իւր, և որդիք՝ յորդիս իւրեանց մինչև ցԱբրահամ, և Աբրահամ ետ ի Մելքիսեդեկ քահա֊նայն, և Մելքիսեդեկ ետ յայլ ոք, և այլք ի յայլ, մինչ որ եհաս ի Կիւրոս Թագաւորն Պարսից. և նա եդ ի սենեկի պահեալ զգուշութեամբ, մինչև ի Մոգսն, զոր բերեալ մոգքն մատուցին[3] Յիսուսի Քրիստոսի։

Արդ իբրև կատարեցին Թագաւորքն և զօրքն ամենայն զուխտն և զխնդրուածսն իւրեանց, և կացեալ անդ նոցա զաւուրս երիս խորհեցան ընդ միմեանս և ասեն. Ոչ է պարտ անփոյթ[4] առնել զուխտն մեր, եկայք եր֊րորդ անգամ դարձցուք ի յայրն, երկիր պագցուք մանկանն և ստուգեսցուք հաւաստեաւ, և ապա եր֊թիցուք զճանապարհն մեր։ Եւ յարուցեալ մտին ի յայրն միաբան[5], և տեսին զմանուկն բազմեալ ի գիրկս մօր իւրոյ, և երկիր պագին նմա։ Եւ դարձեալ տե֊սին երեք Թագաւորքն ստուգիւ զմիմեանց տեսիլն, երկեան յոյժ և ահիւ մեծաւ[6] երկիր պագին նորա֊ծին մանկանն. և ելեալ ի յայրէ անտի, զայն օր կա֊ցին շուրջ զայրիւն մինչև ի վաղիւն, ուրախութեամբ և ցնծութեամբ[7] օրհնէին, և փառաւոր առնէին զԱս֊տուած։ Եւ առաւօտին ընդ լուսանալն յութերորդումն

1. Բ օր. չունի։
2. Բ. օր. այն.
3. Բ. օր. յաւելու՝ առաքելի։
4. Յօր. փոյթ, եղաք ըստ Բ օր։
5. Բ. օր. յաւելու՝ և օրհնեցին զԱստուած։
6. Բ. օր. յաւելու՝ և խնդութեամբ։
7. Բ. օր. յաւելու՝ ծածուկ։

աւուրն յունուարի՝ ելին ի ճանապարհ թագաւորքն, կամեցան գնալ առ Հերովդէս և պատմել նմա։ Եւ երեւեալ նոցա հրեշտակ Աստուծոյ[1] և ասաց. Ոչ է ձեզ փոյթ գնալ առ նենգաւորն Հերովդէս[2], այլ ընդ այլ ճանապարհ գնացէք դուք յաշխարհս ձեր։ Եւ նոքա այնպէս գնացին յիւրաքանչիւր տեղիս, փառաւորելով զտղայացեալն Աստուած, ընդ Հօր և ընդ ամենասուրբ Հոգւոյն։

## Ը

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՓԱԽՍՏԵԱՆ ՏԵԱՌՆ ՅԵԳԻՊՏՈՍ Ի ՀԵՐՈՎԴԷ

Եւ երեւեցաւ հրեշտակ Տեառն Յովսեփայ, և ասէ. Արի՛, ա՛ռ զմանուկդ և զմայր իւր և փախիր յԵգիպտոս. զի խնդիր է Հերովդէս վասն մանկանդ՝ կորուսանել զդա։ Եւ յարուցեալ Յովսէփ՝ վաղվաղակի, առ զմանուկն և զմայր իւր, և գնաց փախստական ի Քեբրոն (յօր. Քեբբոն) քաղաք, մերձ առ ափն Ովկիանոս ծովուն, և անդ կացեալ ամիսս վեց ի ծածուկ։ Եւ մանուկն Յիսուս երթայր հետի (յօր. հեռի) ոտիւք ի վերայ երկրի, և գայր անկանէր խաղալով ի գիրկս մօր իւրոյ. և նա խանդաղատելով բարձեալ ի վերայ բազկաց իւրոց, գգուէր և գոհանայր զԱստուծոյ Իսրայելի։ Եւ Հերովդէս լուաւ եթէ մանուկն Յիսուս ի Քեբրոն քաղաքի է, խնդիր արարեալ խաբէութեամբ, զի նենգութեամբ սպանցէ զմանուկն։ Եւ Յովսէփ իմացեալ զայն, ելեալ գաղտ ի քաղաքէն, և գնացին փախստական յԵգիպտոս։ Եւ ի ճանապարհին օթեվանս

1. Բ. օր. Տեառն։ 2. Բ. օր. յաւելու՝ և պատմել նմա։

Digitized by Google

արարեալ զաւուրս եօթն. և ի տեղին ուր իջաւանս առնէին, մանուկն Յիսուս ջուր հանէր յաւազանէն, և տայր ըմպել նոցա, մինչև եկեալ հասեալ նոցա ի դաշտին Տայանու, որ անուանեալ կոչի քաղաքն այն Պուլպաս. և անդ օթեվանս արարեալ բազում աւուրս։

Եւ անտի յարուցեալ գնացին ի սահմանս Եգիպտոսի, ի քաղաք մի որ անուանեալ կոչի Խարհէ, ի Թագաւորանիստ կայանս՝ ի պաղատն արքունական, որ էր տեղի ապարանից և բերդից, կարի բարձրաւանդակ և վայելուչ նկարեալ և յօրինեալ, զոր Աղէքսանդր Թագաւորն շինեալ էր։ Եւ կացեալ նոցա անդ աւուրս բազում, և մանուկն Յիսուս էր տարւոյ միոյ և ինն ամսոյ։ Եւ երթայր խաղայր ընդ փոքրագոյն մանկունս, և ցուցանէր նոցա հրաշս և սքանչանս։ Եւ Յովսէփ և Մարիամ լուեալ զայն և երկուցեալ ի քաղաքացեացն վասն մանկանն, զի մի՛ ոք գիտասցէ ըզնա։ Եւ ելեալ գաղտ գիշերի առեալ զմանուկն Յիսուս և գնացին ի քաղաքէն։ Եւ երթեալ հասին ի քաղաքն Եգիպտոս. և էր քաղաքն մեծ յոյժ և կարի բարձր պարսպեալ։

Եւ ընդ մտանել դրանն՝ յայսկոյս և յայնկոյս արարեալ էին Թագաւորքն և իմաստունք՝ զարմանալիս մեծամեծս յամենայն դրունս քաղաքին. որ ի մտանելն և յելանելն ամենայն ոք տեսանէր զնոսա, և յորժամ փորձութիւն հասանէր նոցա ի թշնամեաց և կամ նեղութիւն մեծ ի վերայ աշխարհին այնմիկ, յառաջագոյն ձայն արձակէին, և ազդ առնէին ի քաղաքին, և որ լսէին ոմանք՝ բազումք ի սոցանէ ճանաչէին և իմանային զոր ինչ գալոց էր ի վերայ քաղաքին։ Եւ այլ իմաստս արուեստից սահմանեալ են ի վերայ դրաց պարսպին, զոր արարեալ էր յառաջն արքայն Աղէքսանդր. երկու առիւծք մեծամեծք պղնձիք արու (և) էգ, մինն ընդ աջմէ, և միւս յահեկէ։ Եւ յերկրորդ դուռն քաղաքին երէվայրի (յօր. երեւայիև), այլ գազանս մեծամեծս, մի կողմն արջոյ և միւս ընձու, և գազան միեղջերու, ահեղ և զարմանալի յոյժ։

Digitized by Google

Եւ յերրորդ դուռն պարսպին երիվար մի պղնձի, և ի վերայ նորա Թագաւոր մի պղնձի, և ի ձեռն Թագաւորին՝ արծիւ պղնձի։ Եւ իբրեւ մօտեցաւ Յիսուս մտանել ընդ դուռն քաղաքին, յանկարծակի գոչեցին գազանք ամենայն և երեքն միաբան, և երկու առիւծքն գռռացեալ ղօղանջեցին ահագին և զարմանալի գոչմամբ, և անշունչ պատկերք և բագինք կռոցն՝ ելեւելս առնէին զմիմեամբք ի գոչելն, և զաղաղակ բարձեալ ամենեցուն մինչեւ ի հիմանց շարժեալ քաղաքին։ Եւ նոյնժամայն՝ ի գոչել առիւծուցն, հնչեաց և արծիւն, խրխնջեաց երիվարն, ձայն արձակեաց Թագաւորն. եթէ, լուարուք ամենեքին և տեսէք. Թագաւոր ոմն մեծի արքայի որդի, եմուտ ի քաղաքս յայս զօրօք բազմօք. զգոյշ կացէք միաբան առհասարակ և պատրաստեցէք։

Զայս իբրեւ լուան ամենայն բազմութիւն քաղաքին, փութով անդր հասին զօրօք և զինուք ի վերայ պարսպաց քաղաքին. և հայէին յայսկոյս յայնկոյս և ոչ ինչ տեսանէին. և ի միտս եկեալ զարմանային, եթէ զի՞նչ էր բարբառս այս որ եղեւ այսօր։ Հարցանէին զմիմեանս և ասէին. ո՞վ ետես զայս կամ ո՞վ լուաւ։ Եւ ասեն ամենեքին. Ոչ ոք գիտէ զայս։ Եւ շրջեցան ընդ ամենայն քաղաքն և ոչ զոք տեսին, բայց միայն զՅովսէփ և զՄարիամ և զմանուկն Յիսուս։ Եւ կալան զՅովսէփ և տարան յատեան հրապարակին, և ասեն ցնա. Ասա՛ մեզ, ո՞վ ծեր դու, ուստի՞ եկեալ ես, կամ յորմէ՞ աշխարհէ ես։ Ասէ Յովսէփ. Յերկրէն Հրէաստանէն եմ, ի քաղաքէն Երուսաղեմէ։ Եւ ասեն ցնա. Ասա մեզ զճշմարիտն. Ե՞րբ եկիր աստ։ Ասէ Յովսէփ. Երեք օր է որ եկեալ եմ ի քաղաքս։ Ի ճանապարհին յորում գայիր տեսա՞ր արդեօք Թագաւոր՝ որդի արքայի զօրօք բազմօք։ Եւ ասէ Յովսէփ. Ոչ եմ տեսեալ։ Ասեն ցնա. Ապա ո՞րպէս եկեր աստ զբազում ճանապարհս անջուր։ Ասէ Յովսէփ. Զհետ ընկերաց գայի, և երբեմն ես միայն և մանուկս և մայրն իւր։ Եւ ասեն ցնա. Աղքատ ոմն երեւիս և ծեր և օտարական, ապա հաստատուն և

իմաստուն ես, և կամիմք հաւաստեաւ քննել զքեզ, և իմանամք, զի նշան իմն երեւեցաւ մեզ այսօր, և մեք ամենեքին հիացեալ զարմանամք։ Եւ զայս ասացեալ նոցա թողին զՅովսէփ և գնացին։ Եւ եղեւ յորժամ մտին նոքա ի քաղաքն՝ հանդիպեցաւ իջաւան նոցա մերձ առ մեհեանն կռոցն Ապողոնի։ Եւ զայն տեսեալ Յիսուսի՝ ասէ ցմայր իւր. Պատմեա ինձ զոր ինչ հարցից քեզ։ Եւ ասէ մայրն. Որդեակ իմ, զի՞նչ կամիս։ Ասէ Յիսուս. Զի՞նչ է այն շինուածքն՝ որ կարի բարձրագոյն է, և մեծ է լայնութիւն և երկայնութիւն պարսպին։ Ասէ Մարիամ. Որդեակ, այն տուն է կռոց նոցա, և մեհեան աստուածոց Ապողոնի։ Ասէ Յիսուս. Երթամ տեսանել զնա, թէ զի՛նչ տեսակ ունի կամ նմանութիւն յինքեան։ Եւ ասէ Մարիամ. Որդեակ, եթէ կամիցիս երթալ, պատրաստ լեր ի մտանել և յելանելն՝ զի մի՛ վնասեսցիս։

Եւ Յիսուս յարուցեալ վաղվաղակի գնաց անդր, և եմուտ ի տաճար կռոցն՝ տեսանել զվայելչութիւն շինուածոցն և զյարկ բնակութեան տեղեացն, որ բազում նկարիւք ազգի ազգի գեղեցկութեամբ զարդարեալ էր. և ել վաղվաղակի արտաքս։ Եւ ի տեսանելն երկու առիւծուցն զՅիսուս՝ ի մտանելն և յելանելն ի տաճարն, գոռացին սաստիկ ձայնիւ, և հնչեաց արծիւն, խրխնջեաց երիվարն, ձայն արձակեաց թագաւորն. Տեսէք ամենեքեան և լուարուք. ահա թագաւոր, որդի արքայի եմուտ ի տաճարն Ապողոնի։ Զայս ամենայն իբրեւ լուաւ բազմութիւն քաղաքին, ընթացան փութանակի անդր, հարցանէին և ասէին. Զի՞նչ է ձայն աղաղակիս այսմիկ որ եղեւ. և զոք ոչ գտին անդ՝ բայց միայն զՅիսուս՝ առ դուրս արտաքոյ ի փողոցի անդ, և կալեալ զնա հարցանէին և ասէին. Մանուկ դու, ո՞ւմ պատանեակ ես։ Ասէ Յիսուս. Որդեակ եմ ծերոյ օտարականի. զի՞նչ խնդրէք յինէն։ Եւ նոքա թողին զնա և գնացին։ Հարցանէին ընդ միմեանս քաղաքացիքն և ասէին. Զի՞նչ է այս նոր սքանչելիքս զոր տեսանեմք, զձայն աղաղակիս միայն ստուգապէս լսեմք, և

Digitized by Google

զասացեալսն յառաջ ոչ իմանամք, երկնչիմք՝ եթէ վաղվաղակի կորուստ հասանէ անձանց յանկարծակի ուստի ակն ոչ ունիցիմք։ Եւ զայս ասացեալ նոցա՝ ամենեքեան տարակուսեալ կային։ Եւ յորժամ գնաց Յիսուս ի տուն, պատմեաց Մարիամու մօր իւր՝ զամենայն ինչ զոր լուաւ և ետես, և նոքա զահի հարեալ երկնչէին։

Եւ յետ անցանելոյ բազում աւուրց, յաւուր միում տօն էր մեծ չաստուածոյն Ապողոնի, և ժողովեցան անդր բազմութիւն քաղաքին, հեռաւորաց և մերձաւորաց, եկեալ առ դուրս տաճարի կռոցն՝ բազում ընծայիւք, զոհս մատուցանէին յանուն դիւացն, յանասնոցն և ի թռչնոց և յամենայն չորքոտանեաց, առ ի կատարել զտօնն Ապողոնի։ Եւ մանուկն Յիսուս երթայր ի ծածուկ՝ մտանէր ընդ նոսա ի տաճարն. և նոքա զսեղանս ընթրեաց պատրաստեալ էին յուտել և ի յըմպել. իսկ երկու առիւծքն որ էին ի վերայ դրանց պարսպին՝ ի մտանել Յիսուսի գոռացին յանկարծակի ահագին ձայնիւ, խրխնջեաց երիվարն, հնչեաց արծիւն, ձայն արձակեաց թագաւորն. Ահա որդի արքայի մեծի եմուտ ի տաճարն Ապողոնի։ Զայս իբրեւ լուան բազմութիւն քաղաքին՝ լցան բարկութեամբ և ասեն. Զի՞նչ արասցուք զծերն զայն, զի ընդ մտանելն նորա ի քաղաքս այս՝ ամենայն մեծամեծ նշանքս եղեն. միթէ մանուկն որ նա ունի որդի թագաւորի՞ իցէ, և նա առեալ փախստական եկն յաշխարհն մեր. եկայք սպանցուք զնա։ Մինչդեռ նոքա զայս խորհէին. և Յիսուս էր ի տաճարի անդ, տեսանէր զպատկերս դիցն քանդակեալ ոսկւով և արծաթով և գրեալ ի վերայ նորա զգիր անուանն, թէ՝ Սա է աստուածն Ապողոնի, որ տայ կենդանութիւն երկրի և ամենայն մարդկան։

Եւ առժամայն զայրացեալ Յիսուս յոգի իւր, ել վաղվաղակի արտաքս, և հայեցաւ յերկինս, և անդէն շարժեցաւ տեղին, և ամենայն շինուածք տաճարին ի հիմանէ անկեալ կործանեցան, և պատկերք կռոցն խորտակեցան, և քրմապետք մեհենիցն մնացեալ ի ներ-

քոյ շինուածոցն սատակեցան, և այլ բազմութիւնք քաղաքին որ արտաքոյ էին՝ փախեան ի տեղւոջէն, և դեւք զաղաղակ բարձին և ասէին. Տեսէք որ մանուկ մի փոքրիկ զմեզ զամենեսեան կորոյս, առ հասարակ կործանեաց, և զտեղի բնակութեան մեր քակեաց, և զյարկ հանգստեան մերոյ աւերեաց, և զպաշտօնեայսն մեր չարաչար մահուամբ սատակեաց. արդ կալարուք զնա և չարաչար մահուամբ սպանանեցէք : Իբրև լուան բազմութիւն քաղաքին զլալումն և զողբումն դիւացն, դիմեցին առհասարակ ի վերայ Յովսեփայ, և կալեալ զնա ածին յատեանն, և ասեն. Ասա՛ մեզ, ո՞ւր է մանուկն քո, որ զչաստուածս մեր կործանեաց և բազում քահանայս չարամահ սատակեաց. և ահա ոչ զերծիք ի ձեռաց մերոց, մինչև կենդանացուց(ան)էք զամենայն, և եթէ ոչ, սպանցուք զձեզ : Եւ Յովսէփ ասէ. Կենդանի է Տէր՝ որ ոչ գիտեմ զբանդ զայդ : Եւ նոքա չարաչար դատէին զՅովսէփ և նախատէին. և Մարիամ անկեալ առ ոտսն Յիսուսի աղաչէր և ասէր. Որդեակ, լուր ինձ, և մի՛ այսպէս բարկանար դոցա և խռովեցուցաներ զքաղաքս զայս, գուցէ վաղվաղակի նենգութեամբ սպանցեն զքեզ և զմեզ կորուսցեն : Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Ո՜վ մայր իմ, ո՞չ գիտես զինչ խօսիս. ամենայն դասք երկնային զօրացն դողան և սարսեն ի զօրութենէ աստուածութեան իմոյ, և սատանայ հակառակ ինձ և ընտեղծուածոյ իմոյ՝ անչափ հպարտացեալ ի զօրութիւն չարութեան իւրոյ, որ ըստ անուան իմոյ զանձն իւր աստուածս անուանեալ, և ի մարդկանէ պաշտօն և երկրպագութիւն առնու : Ասէ Մարիամ. Որդեակ իմ, աղաչեմ զքեզ, լո՛ւր ինձ և յարո՛ զմեռեալսն զայնոսիկ, զի ահա զծերն զայն վասն քո կալեալ և բազում տանջանօք չարչարեն : Ասէ Յիսուս. Մի՛ այսպէս բռնադատեր զիս, զի չեւ է հասեալ ժամանակ իմ՝ առնել զայդ զոր ասեսդ : Ասէ Մարիամ. Լուր որդեակ, աղաչեմ զքեզ, հայեաց ի նեղութիւնս մեր և ի տառապանս, պանդուխտ և օտար շրջիմք յանծանօթ երկիր հեռաւոր : Եւ ասէ Յիսուս. Յաղագս աղաչանաց

քոց արարից զայդ։ Եւ զայս ասացեալ Յիսուսի՝ գնաց եկաց ի մէջ հրապարակին։ Եւ իբրեւ տեսին զնա այնպէս տղահասակ՝ իբրեւ երից ամաց և չորից ամսոց, ասէին ցմիմեանս. Սա՞ է նա՝ որ զտաճար կռոցն քակեաց։ Եւ ասեն. Այո, սա է։ Եւ հիացեալ զարմանային ընդ հասակ տղայութեան և ընդ գործն զոր արար, և յար ի նա պշուցեալ հայէին, և ասէին, զի՞նչ կամիցի լինել սա։ Եւ Յիսուս զայրացեալ յոգի իւր՝ եկն եկաց ի մէջ ատենին, ի վերայ մեռելոցն. և առեալ հող յերկրէ ցանեաց ի վերայ նոցա և ի ձայն բարձր աղաղակեաց և ասէ. Ձեզ ասեմ ամենեցուն որք աստ անկեալ կայք մեռեալ ի ներքոյ շինուածոյս. արիք վաղվաղակի՝ կորստեան կործանմանէդ, և եկայք արտաքս։ Եւ նոյնժամայն շարժեցաւ տեղին, և հողն եռացեալ՝ զվէմսն թաւալեցուցանէր։ Եւ մեռեալքն յարեան կենդանի մարմնով, կանգնեցան և կացին ի վերայ ոտից իւրեանց, ոգիք հարիւր ութսուն, և երկու քահանայք։ Իսկ այլ սպասաւորքն և քրմապետք Ապողոնի ոչ յարեան. որք էին ոգիք հարիւր և ութ։ Եւ տեսեալ ամենայն բազմութեանն զոր արարն Յիսուս, զահի հարեալ զարմանային և ասէին. Արդարեւ սա է արարիչն երկնի և երկրի, որ տայ կենդանութիւն ամենայն մարդկան։ Եւ քահանայքն որք յարեան ի մեռելոց, եկեալ անկանէին առաջի նորա, խոստովանէին զմեղս իւրեանց և ասէին. Արդարեւ որդի Աստուծոյ ես դու և փրկիչ աշխարհի, որ եկիր կեցուցանել զմեզ։ Եւ աղաչէին զնա բազմութիւնքն յարուցանել զմեռեալսն զայնոսիկ, և Յիսուս ոչ կամեցաւ յարուցանել զնոսա։ Եւ այնուհետեւ տարեալ զՅովսէփ և զՄարիամ և զմանուկն Յիսուս ի վերնատունն մի պայծառ և վայելուչ, և անդ ահիւ և դողութեամբ պաշտէին զնա յընչից իւրեանց։

Բ

# ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ՊԻՂԱՏՈՍԻ

## ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՔ ՈՐ ԵՂԵՆ ՎԱՍՆ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՌԱՋԻ ՊՈՆՏԱՑԻՈՅ ՊԻՂԱՏՈՍԻ ԻՇԽԱՆԻ ՀՐԷԱՍՏԱՆԻ

Յամս ութուտասներորդի իշխանութեանն կայսեր թագաւորին Յունաց Տիբերեայ[1], և Հերովդիայ որդւոյ Հերովդի՝ որ էր թագաւոր Գալիլէացւոց, իննուտասներորդի իշխանութեան նորա, և յառաջ քան զութ կաղանդացն առնու, որ է քսան և հինգերորդ Հռոմայ[2], յառաջ Բարեղոնի, ի չորրորդ ամին իւրոյ, և երկուց առաջնորդացն քահանայապետիցն Հրէից՝ Աննայի և Կայիափայ։ Եւ որ ինչ յետ խաչին և չարչարանաց Տեառն, և[3] պատմեաց Նիկոդիմոս գեղեալ իւրն՝ քահանայապետիցն և այլոց Հրէիցն, Աննայի և Կայիափայ և Սիմէոնի, և Դովդայէ[4], Յուդաս, Ղեւի, Նեփթաղիմ, Աղեքսանդրոս, և Յարիոս[5], և այլք ի Հրէիցն, եկին առաջի Պիղատոսի, ամբաստանէին զամենայն վասն բազում գործոցն չարեաց։ Գիտեմք զՅիսուս

1. Բ. օր. չունի Տիբերեայ։
2. Բ. օր. Հռովմայ։
3. Բ. օր չունի և։
4. Բ. օր. դնէ՝ Դովլայէ։
5. Բ. օր. չունի և Յարիոս։

որդի Յովսեփայ հիւսանն, ի Մարիամայ ծնեալ, և ասէ զինքենէ որդի Աստուծոյ և թագաւոր. և ոչ միայն զայդ, այլ և զշաբաթսն լուծանէ, և զհայրենի կրօնս մեր քակել կամի: Ասէ ցնոսա Պիղատոս. Զի՞նչ է որ գործէնն և քակել կամի: Ասեն ցնա Հրէայքն. Օրէնս ունիմք՝ ի շաբաթու չբժշկել ումեք, բայց նա զկաղս և զգլորեալս և զկոյրս և զանդամալոյծս և զբորոտս և զդիւահարս առողջացոյց ի շաբաթու՝ չար գործովք: Ասէ ցնոսա Պիղատոս. Որո՞վ գործովք չարեօք: Ասեն. Կախարդ է և Բեեղզեբուղաւ իշխանացն դիւաց հանէ զդեւս. և է ամենայն ինչ սմա հնազանդ: Ասէ ցնոսա Պիղատոս. Այդ չէ անսուրբ հոգւով հանել զդեւս, այլ աստուծոյն Ասկղիպպաւ: Ասեն Հրէայքն ցՊիղատոս. Աղաչեմք զքո մեծութիւնդ, զի եկեսցէ կացցէ առաջի ատենիդ, և լուիջիք նմա: Կոչեաց առ ինքն Պիղատոս զՀրէայսն, և ասէ ցնոսա. Զիա՞րդ կարեմ ես այր իշխան՝ զթագաւորս հարցանել: Ասեն ցնա. Մեք չասեմք զնմանէ թէ թագաւոր է, այլ ինքն ասէ զինքենէ: Կոչեաց Պիղատոս զնուիրակն, և ասէ. Հեզութեամբ մուծ Յիսուս: Իբրև ել նուիրակն արտաքս և ծանեաւ զնա, երկիր եպագ նմա, և առեալ զփակեղն ձեռամբն իւրով տարածեալ[1] ի գետին, ասէ. Տէր, ի վերայ այսմիկ գնայ և մուտ ի ներքս, զի կոչէ զքեզ իշխանն: Եւ իբրև զայն տեսին Հրէայքն՝ զոր արար նուիրակն, աղաղակեցին Պիղատոսի և ասեն. Ընդէ՞ր դահճաւ ոչ մուծեր ի ներքս, այլ նուիրակաւ: Քանզի նուիրակն յորժամ ետես զնա, երկիր եպագ նմա. և զփակեղն զոր ունէր ի ձեռին՝ տարածեաց ի գետինն, և ասէ[2] ցնա. Տէր, կոչէ զքեզ իշխանն: Կոչեաց զնուիրակն Պիղատոս, և ասէ ցնա. Զի՞նչ գործեցեր զայդ: Ասէ ցնա[3] նուիրակն. Յորժամ առաքեցաք յԵրուսաղէմ առ Աղեքսանդր, տեսի զնա՝ զի նստէր ի վերայ գրաստու, և մանկտի Հրէիցն աղաղակէին ունելով ոստս ի ձեռս իւրեանց, և այլք տարածանէին

1. Բ. օր. տարածեալ է ձեռ- 2. Բ. օր. և ասաց:
նէ... այսորէն:

զհանդերձս իւրեանց առաջի դորա[1], և ասէին. Փառք ի բարձունս. օրհնեալ* որ գաս յանուն Տեառն։ Աղաղակեցին Հրէայքն և ասեն ցնուիրակն. Հրէից մանկըտին հրայերէն աղաղակէին, իսկ քեզ ուստի՞ հռոմայերէնդ։ Ասէ նուիրակն. Հարցի զոմն ի Հրէից անտի, և ասացի. Զի՞նչ աղաղակէին հրայերէն[2]։ Եւ նա թարգմանեաց ինձ։ Ասէ ցնա Պիղատոս. Զիա՞րդ աղաղակէին հրայերէն։ Ասէ ցնա. Փառք ի բարձունս։ Ասէ ցնոսա Պիղատոս. Եթէ դուք վկայէք ձեզէն ըզբարբառն որ ի մանկտւոյն ասացաւ, զի՞նչ մեղաւ նուիրակն. իսկ նոքա լռեցին։ Ասէ իշխանն ցնուիրակն[3]. Ե՛լ, որպէս և կամիս ած զնա ի ներքս։ Ել նուիրակն, և արար ըստ առաջին օրինակին։ Ասէ ցՅիսուս. Տէր, մուտ, զի իշխանն կոչէ զքեզ։ Իբրև եմուտ Յիսուս, դրօշակիրքն ունէին զդրօշքն. և խոնարհեցուցին դրօշքն զգլուխս իւրեանց և երկիր պագին Յիսուսի։ Եւ տեսեալ Հրէիցն՝ առաւել աղաղակէին դրօշակրացն։ Իսկ Պիղատոս ասէ ցՀրէայսն. Ո՞չ զարմանայք, զիա՞րդ խո-

* Գ. օր. Ցեղափոխութեանս պակասաւոր է ի սկզբան և առնու սկիզբն այսպէս.

... Աստուծոյ, օրհնեալ որ գաս յանուն Տեառն։ Աղաղակեցին քահանայքն և ասեն ցնուիրակն. Հրէից մանկըտին և հրէարէն ասէին, իսկ դու հռոմ՝ զայն ուստի՞ գիտացեր։ Ասէ ցնոսա նուիրակն. Հարցի զոմն և ասաց ինձ զամենայն զոր ասէի։ Ասէ Պիղատոս ցքահանայսն. Զիա՞րդ աղաղակէին Հրէայքն։ Եւ նոքա ասեն. Փառք ի բարձունս Աստուծոյ։ Ապա զի՞նչ մեղաւ նուիրակն. և նոքա լռեցին։ Ասէ ցնուիրակն՝ Պիղատոս. Ե՛րթ որպէս և կամիս ած զնա ի ներքս։ Եւ ելեալ Ստեփաննոս արար ըստ առաջին օրինակին։ Իբրև եմուտ Յիսուս ի ներքս, դրօշակիրքն կային և ունէին զդրօշս ի ձեռին իւրեանց։ Իբրև մտանէր Յիսուս, խոնարհեցուցին դրօշքն զգլուխս իւրեանց. զայն տեսեալ Հրէիցն՝ առեալ աղաղակեցին առ դրօշակիրքն սաստիւ։ Ասէ Պիղատոս. Ո՛չ զարմանայք, թէ զիա՞րդ խոնարհեցան դրօշքն և երկիր պագին Յիսուսի,

1. Բ. օր. նորա։

2. Բ. աղաղակէին հրէերէն։

3. Բ. օր. Ապա ասէ ցնուիրակն։

Նարհեցուցին դրօշքն զգլուխս իւրեանց՝ և երկիր պագին Ցիսուսի, այլ աղաղակեցէք դրօշակրացդ, իբրեւ թէ[1] դոքա խոնարհեցուցին և երկիր պագին։ Ասեն Հրէայքն ցՊիղատոս. Մեք տեսաք որպէս խոնարհեցուցին դրօշակիրքն, երկիր պագին Ցիսուսի։ Կոչեաց իշխանն զդրօշակիրքն[2], և ասէ ցնոսա. Զի՞ այդպէս արարէք։ Ասեն ցնա. Մեք արք հեթանոսք եմք, և մեհենաց[3] ծառայք, զիա՞րդ երկիր պագանեմք նմա. քանզի մինչդեռ ունէաք զդրօշքն, խոնարհեցան և երկիր պագին նմա։ Ասէ Պիղատոս ցժողովուրդն. Ընտրեցէ՛ք դուք ի ձէնջ արս կարողս և հզօրս, և թող նոքա ունիցին[4] զդրօշսն, և տեսանեմք թէ յինքեա՞նց խոնարհին։ Եւ ընտրեցին ծերք Հրէիցն արս երկոտասանս, հզօրս և կարողս, և վեցիւ վեցիւ ետուն ունել զդրօշակսն. և կացին առաջի[5] իշխանին։ Ասէ Պիղատոս ցնուիրակն. Հան զդա արտաքոյ քան զապարանս և մոյծ

և դուք դրօշակրա՞ցն սաստէք։ Ասեն Հրէայքն. Խոնարհեցուցին զդրօշսն։ Ցայնժամ կոչեաց Պիղատոս զդրօշակիրսն և ասէ ցնոսա. Զի՞ արարէք զայն։ Ասեն դրօշակիրքն. Մեք արք հեթանոսք եմք և մեհենից ծառայք, ոչ այդպէս արարաք կամ երկրպագեցուցաք. այլ մեք մինչ ունէաք զդրօշսն, ինքեանք խոնարհեցան և երկիր պագին նմա։ Ասէ Պիղատոս. Ընտրեցէք դուք ի ձէնջ արս հզօրս և ուժեղս, զի նոքա ունիցին զդրօշսն։ Ցայնժամ ընտրեցին արս երկոտասան ուժեղս և կարողս, և ետուն ունել վեց վեց զդրօշսն։ Կոչեաց զՍպեկուլատորն Պիղատոս, և ասէ. Հան զՑիսուս արտաքս յապարանիցս, և դարձեալ մոյծ ի ներքս։ Եւ ասաց Պիղատոս ցդրօշակիրսն. Երդնում յարեւ և ի բախտն կայսեր, զի եթէ խոնարհեցուց(ան)էք զդրօշսն ի մտանելն Ցիսուսի, գլխատեմ զձեզ։ Եւ հրամայեաց Պիղատոս կրկին անգամ մըտանել Ցիսուսի։ Եւ արար նուիրակն ըստ առաջին օրինակին, և աղաչէր զՑիսուս գնալ ի վերայ փակեղանն և

1. Բ. օր. աղաղակեցէք զդրօշակիրսդ իբր թէ:
2. Բ. օր. դրօշակիրսն:
3. Բ. օր. մեհենեաց:
4. Ց օր. եղեալ էր ունին. ուղղեցաք ըստ Բ. օրինակին:
5. Բ. օր. յաւելու ափնի:

այսրէն որպէս և դու կամիս: Եւ ելին արտաքս քան զապարանսն Յիսուս և Նուիրակապետն: Կոչեաց առ ինքն իշխանն զարսն որ զդրօշսն ունէին, և ասէ ցնոսա. Երդուեալ եմ[1] ի կայսր, զի եթէ խոնարհեսցին դրօշքն ի մտանելն Յիսուսի, գլխատեցից զձեզ: Եւ հրամայեաց իշխանն[2] մտանել կրկին անգամ: Եւ աբար. Նուիրակապետն ըստ առաջին կերպարանին, և բազում աղաչէր զի գնասցէ ի վերայ փակեղանն Յիսուս և մտցէ: Իսկ իբրեւ եմուտ, դարձեալ խոնարհեցան դրօշքն յինքեանց՝ և երկիր պագին Յիսուսի: Իբրեւ ետես Պիղատոս, յահի եղեալ[3] կամեցաւ յառնել յաթոռէն. և մինչդեռ նա զմտաւ ածէր զյառնելն, կինն նորա առաքեաց առ նա և ասէ. Ո՛չ ինչ կայ քո և առնդ[4] այդորիկ. քանզի բազում ինչ չարչարեցայ վասն դորա ի գիշերիս յայսմիկ: Իսկ Պիղատոս կոչեաց զամենայն Հրէայսն և ասէ ցնոսա. Գիտէ՞ք զի կին իմ աստուածապաշտ է, և Հրէայ է[5] իբրեւ զձեզ: Ասեն ցնա[6]. Այո, գիտեմք: Ասէ ցնոսա Պի-

մտանել յապարանսն: Իբրեւ եմուտ Յիսուս՝ դարձեալ խոնարհեցան դրօշքն և երկիր պագին նմա: Իբրեւ ետես Պիղատոս, զահի հարաւ և կամեցաւ ելանել յապարանէն: Յայնժամ կինն իւր առաքեաց առ Պիղատոս և ասաց. Ոչ ինչ կայ քո և առն այնորիկ արդարոյ. քանզի բազում անցք անցին ընդ իս յերազի վասն նորա: Եւ Պիղատոս ասաց Հրէիցն. Եւ գիտէ՞ք, զի կինն իմ աստուածապաշտ է, յազգէդ ձերմէ՝ և խառն ընդ ձեզ է. ահա առաքեաց առ իս և ասէ. Չկայ ինչ քեզ ընդ արդարոյն այնորիկ, քանզի չարչարեցայ յանուրջս վասն նորա: Ասեն Հրէայքն. Ո՞չ ասացաք թէ կախարդ է, և ահա երազ ետ տեսանել կնոջ քո: Եւ ասէ Պիղատոս ցՅիսուս. Տեսանե՞ս զի՞նչ դոքա վկայեն զքէն, զի՞նչ տաս պատասխանի: Ասէ Յիսուս. Եթէ ոչ ունէին իշխանութիւն՝ ոչ ինչ խօսէին. քանզի իւրաքանչիւր ոք բերանոյ իւրոյ ունի իշխանութիւն, եթէ բարիս խօսի և եթէ չար: Ասեն քա-

1. Բ. օր. դնէ՝ եմ:
2. Բ. օր. չունի իշխանն:
3. Բ. օր. յահէ եղեւ:
4. Բ. օր. յաւելու արդարոյ:
5. Բ. օր. յաւելու նա:
6. Բ. օր. չունի ցնա:

ղատոս. Ահա առաքեաց կին իմ առ իս՝ և ասէ. Ոչ ինչ
կայ քո և առնդ արդարոյդ այդորիկ։ Իսկ Հրէայքն ե-
տուն պատասխանի և ասեն ցՊիղատոս. Ո՞չ ասացաք
յառաջագոյն քեզ՝ եթէ կախարդ է. ահաւասիկ ետ
երազ տեսանել կնոջ քո։ Իսկ Պիղատոս կոչեաց ըզ-
Յիսուս և ասէ ցնա. Զի՞նչ սոքա վկայեն վասն քո,
ո՞չ ինչ խօսիս։ Իսկ Յիսուս ասէ՝ եթէ, Ոչ ունէին իշ-
խանութիւն ոչ խօսել[1] զբարի և զչար. և ինքեանք
տեսցեն։ Պատասխանի ետուն ծերքն[2] և ասեն ցՅիսուս.
Զի՞նչ տեսցուք, նախ զի ի պոռնկութենէ ծնեալ ես, և
երկրորդ անգամ՝ զի ի ծննդեան քում Բեթղեեմացոց
կոտորածն եղեւ. երրորդ անգամ, զի հայր քո Յովսէփ
և մայր քո Մարիամ յԵգիպտոս փախստական եղեն,
վասն զի չունէին համարձակութիւն ի մէջ ժողովըր-
դեանն։ Ասեն ոմանք ի ժողովրդեննէն[3] որք կային անդ՝
ի Հրէից երկիւղածք. Մեք չասեմք թէ ի պոռնկութենէ
ելեալ[4] է. այլ գիտեմք զի խօսեցաւ Յովսեփայ զմայր
դորա զՄարիամ, և ոչ է ծնեալ ի պոռնկութենէ։ Ասէ

•

հանայքն ցՅիսուս. Զի՞նչ խօսիս, մեք վկայեմք չարեաց
քոց. Նախ. զի ի պոռնկութենէ ծնեալ ես, և ի ծննդեան
քո մանկունքն կոտորեցան. և հայրն քո Յովսէփ և մայրն
քո Մարիամ յԵգիպտոս փախստական եղեն, զի ոչ ունէին
համարձակութիւն ի մէջ ժողովրդեանն բնակել։

Յայնժամ ոմանք ի Հրէից որ անդ կային, արք եր-
կիւղածք, յառաջ կացեալ ասէին. Մեք չասեմք թէ ի
պոռնկութենէ է ծնեալ, զի գիտեմք զմայրն դորա զՄա-
րիամ. Ասէ Պիղատոս ցայնոսիկ որ ասէին՝ թէ ի պոռնը-
կութենէ է ծնեալ և կախարդ է. Բանդ ձեր չէ ճշմա-
րիտ զոր ասէքդ։ Աննա ասէ. Մեք ամենեքեան ասեմք՝
թէ ի պոռնկութենէն է ծնեալ և կախարդ է և դու ո՛չ
հաւատաս մեզ, այլ նոցա՝ որ են աշակերտք նորա,
և են որդիք հեթանոսաց։ Պատասխանի ետուն բա-
րեկամքն Յիսուսի և ասեն. Մեք չեմք որդիք հեթա-

1. Բ. օր. ունի այսպէս. Եթէ ոչ ունէին իշխանութիւն, ոչ խօսէին. փոխանակ իւրաքանչիւր ոչ իշխանութիւն ունի բերանոյ իւրոյ խօսել զբարի և զչար։
2. Բ. օր. յաւելու՝ Հրէից։
3. Բ. օր. չունի ի ժողովրդեննէն։
4. Բ. օր. ծնեալ է։

Պիղատոս ցՀրէայսն՝ որք ասէին զնմանէ, թէ ի պոռնկութենէ ծնեալ է. Այդ բանդ ձեր չէ ճշմարիտ, զի հարսանիք լեալ են, որպէս դոքա ասեն ազգակիցք ձեր։ Ասեն ցՊիղատոս Աննա և Կայիափա. Ամենայն բազմութիւնքս աղաղակեմք թէ ի պոռնկութենէ ծնեալ է և կախարդ է, և ոչ հաւատաս. այլ սոքա եկք են, և աշակերտք սորա են։ Ասեն ցնա. Հեթանոսաց որդիք են ծնեալ։ Ասէ Պիղատոս ցԱննա և ցԿայիափա. Զի են եկք, և այժմ եղեն Հրէայք։ Պատասխանի ետուն այնոքիկ որք ասէին թէ չէ ի պոռնկութենէ ծնեալ, Ղազարոս և Ազդերիոս, Անդրոնիկոս[1], Յանով-պոս և Զէրաս, Սանուէլ[2], Իսահակ, Փենէես[3] և Կրոս-պոս և Յուդաս. Մեք պանդուխտք չեմք եղեալք, այլ որդիք Հրէից եմք և զճշմարիտն խօսիմք. քանզի ի հարսանիսն Մարիամու և Յովսեփու երթեալ եմք։ Կո-չեաց Պիղատոս զերկոտասան արսն՝ որք ասէին թէ չէ ի պոռնկութենէ ծնեալ. և ասէ ցնոսա. Երդմնե-դուցանեմ զձեզ ի կեանս կայսեր, թէ ճշմարի՞տ է զոր ասէքդ, թէ չէ ի պոռնկութենէ ծնեալ։ Ասեն

նոսաց՝ այլ Հրէից, և խօսիմք զճշմարիտն։ Ասէ ցնոսա Պիղատոս. Երդմնեցուցանեմ զձեզ ի բախտն և ի փրկու-թիւն կայսերն, թէ ճշմարի՞տ է զոր ասէքդ։ Եւ նոքա ա-սեն. Օրէնս ունիմք և ոչ երդնուլ ի տարապարտուց, զի մեղք են. դոքա երդնուն ի բախտ կայսեր, թէ չէ այս-պէս զոր ասեմք։ Ասէ Պիղատոս ցԱննայ և Կայիափայ. Ահա զինչ ունիք տալոյ պատասխանի, զի սոքա այսպէս ա-սեն։ Ասէ Կայիափա. Դոքա երկոտասանքդ հաւատալի՞ են քեզ։ Յայնժամ հրամայեաց Պիղատոս զբազմութիւնն ար-տաքս հանել՝ բայց ի բարեկամացն Յիսուսի։ Եւ դարձեալ ասէ ցնոսա. Թէ ճշմարի՞տ է զոր նոքա ասեն, թէ ոչ։ — Ոչ է ճշմարիտ՝ այլ սուտ. զի նախանձ ունին ընդ նմա վասն բժշկութեան զոր առնէր ի շաբաթու։ Ասէ Պիղատոս. Ապա վասն բարի գործոց կամին սպանանել զսա։ Զայս ասաց Պիղատոս, և ել արտաքս քան զապարանս և ասէ ցՀրէայսն. Վկայ ունիմ զարեգակն, զի ես պատճառ մա-հու ոչ գտանեմ ի մարդս յայս։ Պատասխանի ետուն

1. Բ. օր. դնէ՝ Ղազարէոս, Աս-տերիոսի, Անդրոնիկոս։
2. Բ. օր. Սամուէլ։
3. Բ. օր. Փենեհես։

ցՊիղատոս. Օրէնս ունիմք չերդնուլ ի տարապարտուց զի մեղք են. դոքա երդուիցեն ի բախտ կայսեր, թէ չէ այդպէս[1] որպէս ասացաքդ. և մեք պարտապան լիցուք մահու: Ասէ Պիղատոս ցԱննա և ցԿայիափա. Զունիք ինչ պատասխանի տալ առ այս: Ասեն Աննա և Կայիափա ցՊիղատոս. Սոքա երկոտասանքս հաւատալիք են՝ եթէ չէ ծնեալ ի պոռնկութենէ, և մեք ամենայն բազմութիւնքս ասեմք, եթէ ի պոռնկութենէ ծնեալ և կախարդ է. և ասէ վինքենէ որդի Աստուծոյ և թագաւոր, ո՞չ հաւատամս մեզ:

Հրամայեաց Պիղատոս զբազմութիւնն արտաքս հանել, բայց յերկոտասանիցն[2]՝ որք ասէին թէ չէ ծնեալ ի պոռնկութենէ. և զՅիսուս հրամայեաց մեկուսի կացուցանել. և ասէ ցնոսա. Վասն որո՞յ վնասու կամին սպանանել[3]: Ասեն ցՊիղատոս. Նախանձ ունին զի ի շաբաթու բժշկութիւնս առնէ: Ասէ Պիղատոս. Ապա ուրեմն վասն բարի գործոց կամին[4] սպանանել զնա: Ել արտաքս քան զապարանս[5] և ասէ ցնոսա.

քահանայքն և ասեն. Ըստ օրինաց մերոց մահապարտ է: Ասէ Պիղատոս. Զի՞նչ չար արարեալ իցէ սմա վասն մահու: Ասեն քահանայքն. Թէ չէր չարագործ, ապա ոչ մատնէաք զսա քեզ: Ասէ Պիղատոս. Առէք ի ձեզ և ըստ օրինիդ դատեցարուք զնա: Ասեն հրէայքն. Մեզ չէ արժան սպանանել զոք: Ասաց Պիղատոս. Ձեզ չասաց Աստուած սպանանել զոք, և ի՞նձ ասաց: Զայս ասաց Պիղատոս և դարձեալ եմուտ յապարանսն, և ասէ ցՅիսուս առանձինն. Դո՞ւ ես թագաւորն հրէից: Ասէ Յիսուս. Ի քէ՞ն ասես դու զայդ, և թէ այլք ասացին քեզ զինէն: Ասէ Պիղատոս: Միթէ ես հրեա՞յ իցեմ, ազգն քո և քահանայապետք մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ չար արարեր: Ասէ Յիսուս. Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէս. եթէ յաշխարհէ աստ էր թագաւորութիւն իմ, պաշտօնեայք իմ մարտնչէին, զի մի մատնեցայց հրէից. այլ այժմ արքայութիւն իմ չէ աստի: Ասէ Պիղատոս. Ապա եթէ այդ

1. Բ. օր. այդ այդպէս:
2. Բ. օր. բայց յերկոտասան արանցն:
3. Բ. օր. յաւելու Յիսուս:
4. Յօր. պակասէր խօսքն, եդաք ըստ Բ. օրինակին:
5. Բ. օր. յաւելու Պիղատոս:

Digitized by Google

Վկայ ունիմ զարեգակն, զի ոչ ինչ մեղս գտանեմք յաւնդ յայդմիկ[1]: Պատասխանի ետուն Հրէայքն և ասեն ցՊիղատոս. Եթէ չէր մահապարտ[2], ապա ոչ մատնէաք զնա քեզ: Ասէ ցնոսա Պիղատոս. Առէք զնա դուք, և ըստ օրինաց ձերոց դատեցարուք: Ասեն ցնա Հրէայքն. Մեզ չէ արժան սպանանել զոք: Ասէ Պիղատոս ցՀրէայսն. Ձեզ չասաց Աստուած սպանանել զոք, ի՞նձ ասաց: Դարձեալ եմուտ Պիղատոս յապարանսն և կոչեաց զՅիսուս առանձինն, և ասէ ցնա. Դո՞ւ ես Թագաւորն Հրէից: Պատասխանի ետ Յիսուս և ասէ ցՊիղատոս. Յանձնէ՞ ասես զայդ, եթէ այլ ոք ասաց քեզ վասն իմ: Պատասխանի ետ Պիղատոս և ասէ ցՅիսուս. Միթէ և ես Հրէա՞յ եմ. ազգն քո և քահանայապետքն մատնեցին զքեզ ինձ. զի՞նչ գործեալ է քո: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Եթէ յաշխարհէ աստի յայսմանէ էր թագաւորութիւն իմ, պաշտօնեայքն իմ հնարէին զի մի՛ մատնեցայց Հրէից, այլ այժմ արքայութիւն իմ չէ աստի: Ասէ ցնա Պիղատոս. Եթէ այդ այդպէս իցէ, ուրեմն դու թագաւո՞ր ես: Պատասխանի ետ Յիսուս. Դու ասես թէ թագաւոր եմ. այլ ես ի դոյն իսկ ծնեալ եմ, և վասն այնորիկ եկի, զի ամենայն որ իցէ ի ճշմարտութենէ, լուիցէ ձայնի իմում: Ասէ ցնա[3] Պիղատոս. Զի՞նչ է

այդպէս իցէ, թագաւոր ոմն ես դու: Պատասխանի ետ Յիսուս և ասէ. Դու ասես թէ թագաւոր եմ. բայց ես յայդ իսկ ծնեալ եմ և ի դոյն իսկ եկեալ եմ յաշխարհ, զի վկայեցից ճշմարտութեանն, և ամենայն որ ի ճշմարտութենէ է լսէ բարբառոյ իմոյ, և ամենայն որ ի ճըշմարտութիւն իցէ՝ յերկնից է: Ասէ Պիղատոս. Յերկրի ո՞չ գոյ ճշմարտութիւն: Ասէ Յիսուս. Տես դու թէ զի՞նչ է ճշմարտութիւնն. ճշմարտութիւն ասեմ, թէ զի՞արդ քննի յամենեցունց, որոց ունին իշխանութիւն ի վերայ երկրի:

1. Բ. օր. զի ոչ է ինչ մեղս գըտանեմ յառնս յայս:
2. Բ. օր. Եթէ չէր սա չարագործ. եւայլն:
3. Բ. օր. չունի ցնա:

ճշմարտութիւնն։ Ասէ ցնա Յիսուս. Ճշմարտութիւնն յերկնից է։ Ասէ ցնա Պիղատոս. Իսկ ի յերկրի ո՞չ գոյ ճշմարտութիւն։ Ասէ ցնա Յիսուս. Տես դու զճշմարտութիւնն, ճշմարտութիւն ասեմ, զիա՞րդ քննի յայնցանէ որք ունին իշխանութիւն ի վերայ երկրի։

Իսկ Պիղատոս[1] թողեալ զՅիսուս ի ներքս յապարանսն, ել առ Հրէայսն և ասէ ցնոսա։ Ես և մի ինչ մեղս ոչ գտանեմ ի նմա։ Ասեն ցնա Հրէայքն. Ասաց թէ կարող եմ կտաճարդ զայդ քակել և յերիս աւուրս կանգնել զդա. որ ի քառասուն և վեց ամ շինեցաւ, նա ասէ թէ քակեմ զսա և զերիս աւուր կանգնեմ զդա։ Ասէ ցնոսա Պիղատոս. Զո՞ր տաճար։ Ասեն Հրէայքն. Զոր Սողոմոն շինեաց։ Դարձեալ ասէ ցնոսա Պիղատոս։ Անպարտ եմ ես յարենէ առնդ արդարոյդ այդորիկ. դուք գիտէք։ Ասեն ցնա Հրէայքն. Արիւն դորա ի մեզ և յորդիս մեր։

Կոչեաց Պիղատոս զծերսն և զքահանայապետսն և զՂեւտացիսն և ասէ ցնոսա գաղտ. Մի՛ այդպէս առնէք, զի ամբաստանութիւն ձեր ոչ առնէ զայրն արժանի մահու, այլ չարախօսութիւնդ ձեր վասն բժշկութեան է և վասն լուծանելոյ զշաբաթս։ Ասեն ծերքն

Յայնժամ եթող զնա Պիղատոս յապարանսն, և ինքն ել առ Հրէայսն և ասէ ցնոսա. Ես և ոչ մի ինչ գտանեմ մեղս ի սա։ Ասեն Հրէայքն. Մեք լուաք ի դմանէ, զի ասէր թէ կարող եմ քակել զտաճարս զայս և յերիր աւուր կանգնեցից՝ առանց ձեռագործի։ Ասէ Պիղատոս. Զո՞ր տաճար։ Ասեն Հրէայքն. ԶՍաւղաւմոնին՝ զոր Զաւրաբաբէլ շինեաց ի քառասուն և ի վեց ամս։ Դարձեալ ասէ Պիղատոս ցնոսա. Անպարտ եմ ես յարենէ առն արդարոյդ այդորիկ. դուք գիտէք։ Պատասխանի ետուն Հրէայքն և ասեն. Արիւն դորա ի գլուխս մեր և յորդւոց մերոց։

Կոչեաց Պիղատոս զծերս Հրէից և ասաց նոցա գաղտ. Մի այդպէս ասէք, զի ոչինչ խօսիք դուք վասն նորա եթէ արժանի է մահու. այլ չարախօսութիւն ձեր վասն բժշկութեան նորա իցէ, զի զշաբաթս լուծանէ։ Ասեն

1. Բ. օր. Իսկ Պեղատոս։

և քահանայապետքն և Ղեւտացիքն ցՊիղատոս. Զկայսըր եթէ հայհոյէ ոք արժանի՞ է մահու, թէ ո՛չ: Ասէ Պիղատոս. Արժանի է մահու: Հրաման ետ ապա Հրէից ելանել արտաքս քան զապարանսն: Կոչեաց զՅիսուս և ասէ. Զի՞նչ արարից քեզ: Ասէ Յիսուս ցՊիղատոս. Ա՛յդպէս տուաւ: Ասէ Պիղատոս ցըՅիսուս. Ո՞րպէս տուաւ: Ամենայն[1] մարգարէքն յառաջագոյն քարոզեցին վասն մահուանս այսորիկ և վասն յարութեան իմոյ, և Հրէայքն ստունգանեցին որք լուանն: Ասէ ցնա Պիղատոս. Զի՞նչ է աւելի մեծ հայհոյութիւն քան զայս լսել: Եւ ասէ ցՀրէայսն. Այդ բանդ հայհոյութիւն է. առէք զդա և տարէք[2] ի ժողովս ձեր, և դատեցարուք ըստ ձերոց օրինաց: Ասեն Հրէայքն ցՊիղատոս. Յօրէնս մեր գրեալ է, եթէ այր առն մեղիցէ ինչ, արժանի է ձաղանաց քառասուն միոյ[3] պակաս, իսկ որ զԱստուած հայհոյէ, ՝քարկոծելով քարկոծեսցի: Ասէ ցնոսա Պիղատոս. Առէք զդա դուք, և որո՛վ օրինակաւ կամիք, արարէք: Ասեն ցՊիղատոս. Արժանի է ի խաչ ելանել: Եւ հայեցեալ դատաւորն յամբոխն որ շուրջ զնովաւ կային Հրէայքն, ետես զի բազումք ի նոցանէ արտասուէին, և ասէ. Ոչ ամենքեան.

ծերքն. Եթէ ոք զկայսրն հայհոյէ՝ արժանի՞ է մահու թէ ոչ: Ասէ Պիղատոս. Արժանի է մահու: Ասեն Հրէայքն. Իսկ սա զԱստուած հայհոյեաց: Դարձեալ եմուտ յապարանս Պիղատոս, և ասէ ցՅիսուս. Զի՞նչ արարից զքեզ: Ասէ Յիսուս. Այդպէս տըւաւ, զի մարգարէքն յառաջ քարոզեցին վասն մահուան իմոյ և յարութեան: Իսկ իբրեւ լըւան Հրէայքն զայս, ասեն ցՊիղատոս. Զի՞նչ աւելի հայհոյութիւն պէտք են քան զայս: Ասէ ցնոսա Պիղատոս. Առէք զդա և տարէք ի ժողովուրդս ձեր, և դուք ձեզէն դատեցարուք: Ասեն Հրէայքն. Ի խաչ հանել զդա արժան է. զի գրեալ է՝ եթէ որ ոք մեղիցէ առն ինչ, արժան է ձաղանաց, այլ որ զԱստուած հայհոյէ քարկոծելոյ է արժանի. զի վասն այսորիկ մեռանի սա, զի ասէ զինքն որդի Աստուծոյ և Թագաւոր:

1. Բ. օր. Ասէ Յիսուս ամենայն, եւայլն:
2. Բ. օր. պարայք:
3. Բ. օր. միոյ:

նեքեան[1] բազմութիւնս՝ կամին ընդ մեռանել դորա: Ասեն քահանայապետքն. Վասն այսորիկ եկաք ամենայն բազմութիւնս միաբան՝ զի մեռցի: Ասէ ցնոսա Պիղատոս. Վասն է՞ր մեռանի: Ասեն ցնա[2] Հրէայքն. Զի ասաց զինքենէ թէ որդի Աստուծոյ է, և թագաւոր Հրէից:

Նիկոդեմոս այր Հրէայ, եկաց առաջի Պիղատոսի և ասէ. Աղաչեմ զիշխանութիւնդ քո, հրամայեա ասել ինձ սակաւ բանս: Ասէ Պիղատոս. Ասա՛: Ասէ Նիկոդեմոս[3] Ես ասացի ծերոցդ և քահանայիցդ և Ղեւտացոցդ և ամենայն բազմութեան ժողովրդեանդ, թէ զի՞ քննէք զայրդ. բազում նշանս արար և փառաւորեալս, զոր ոչ այլ ոք արար, և ոչ առնել ոք կարէ. Թոյլ դուք դմա, և մի՛ չար ինչ առնէք. զի եթէ Աստուծոյ են նշանքդ զոր առնէ՝ կեցցէ[4]: Քանզի և Մովսէս առաքեցաւ յԱստուծոյ[5] յԵգիպտոս, և արար նշանս բազումս զոր ասաց նմա Աստուած. Արաջիր, ասէ, առաջի Փարաւոնի արքային Եգիպտացոց: Եւ էին անդ ծառայք Փարաւոնի Յանէս և Յամբրէս. արարին և նոքա նշանս զոր արար Մովսէս, այլ ոչ զամենեսեան. և ունէին զնոսա Եգիպտացիքն իբրև զաստուածս՝ զՅանէսն և զԱմբրէսն. և վասն

Յայնժամ Նիկոդիմոս եկաց առաջի Պիղատոսի և ասաց. Ասացի ես քահանայիցդ և ամենայն ժողովրդդեանդ, թէ զի՞ քննէք, զի այրդ այդ բազում նշանս արար, թո՛յլ տուք դմա և մի՛ չար առնէք. զի թէ յԱստուծոյ է նշանն զոր առնէ՝ կեցցէ, և թէ ի մարդկանէ է՝ քակեսցի: Քանզի Մովսէս առաքեցաւ յԵգիպտոս յԱստուծոյ, և արար նշանս բազումս զոր ասաց նմա. և էին նշանագործք փարաւոնի երկու՝ Յանէս և Յամբրէս սուտ խաբեբայք, և նոքա եւս արարին նշանս զոր արար Մովսէս, այլ ոչ զամենայն. և ունէին ամենայն Եգիպտացիքն իբրև զաստուած, և զի չէր նշանն յԱստուծոյ, կորեան երկոքին և որք ի նոսա հաւատացին:

1. Բ. օր. ամենայն:
2. Բ. օր. չունի ցնա:
3. յօր. վրիպակաւ եղեալ էր՝ ասէ ցնոսա Պիղատոս. ուղղեցաք ըստ Բ. օր:
4. Բ. օր. յաւելու՝ ապա թէ ի մարդկանէ է քակեսցի:
5. Բ. օր. չունի յԱստուծոյ:

Digitized by Google

զի զնշանս զոր արարին չէր յԱստուծոյ, խափանեցան և կորեան և նոքա և որք հաւատացին նոցա: Եւ այժմ Թոյլ տուք առնդ այդորիկ, քանզի չէ արժանի մահու: Ասեն ցՆիկոդեմոս Հրէայքն. Դու աշակերտ եղեալ ես դորա, վասն այսորիկ և բանից դորա օգնես: Ասէ ցնոսա Նիկոդեմոս. Միթէ իշխա՞նդ աշակերտեալ[1] է դորա, և զբան դորա առնէ. մի՞թէ վայրապա՞ր կարգեաց կայսրն Տիբերիոս[2] ի վերայ պիտոյից այսորիկ: Եւ մռմռէին Հրէայքն և վերայ Նիկոդեմոսի, և կրճտէին զատամունս իւրեանց: Ասէ ցնոսա Պիղատոս. Զի՞ կրճտէք զատամունս ի վերայ դորա զի զճշմարիտն լուայք: Ասեն Հրէայքն ցՆիկոդեմոս. Զճշմարտութիւն դորա առցիր և զբաժին դորա: Ասէ Նիկոդեմոս. Ամէն, եղիցի եղիցի. ըստ բանի ձեր առից որպէս ասացէքդ: Այլ ոմն ի Հրէից անտի յառաջ մատուցեալ, աղաչէր զիշխանն բանս[3] ասել: Եւ ասէ իշխանն. Ասա՛, զոր ինչ կամիս[4]: Ասէ այրն. Ես երեսուն և ութ ամ ի մահիճս կայի և ի վիշտս[5] չարաչար ցաւոց. և

Եւ այժմ դուք մի՞ ինչ առնիցէք դմա, զի ոչ է արարեալ դմին ինչ մահու արժանի: Ասեն քահանայքն ցՆիկոդիմոս. Դու աշակերտեալ ես դմա և զբան դորա առնես, վասն որոյ և զայդ առնես: Եւ մռմռէին ի վերայ նորա և կրճտէին զատամունս իւրեանց: Ասէ Պիղատոս. Զի՞ բարկանայք ի վերայ դորա առաջի իմ. և բաժին դորա ընդ նմա եղիցի. Ասէ Նիկոդիմոս. Ամէն, եղիցի եղիցի:

Այր ոմն ի Հրէից եկն առաջի Պիղատոսի և ասաց. Ես երեսուն և ութ ամ ի մահիճս կայի, բազում վշտօք անողջանալի. և ի գնալն Յիսուսի ի քաղաքս, բազում դիւահարք և ցաւագարք բժշկէին ի նմանէ: Եւ ես այնպէս անկեալ կայ(ի) Բեդհեզդայ, ուր պատահեաց դա և գթացաւ ի վերայ իմ, և ասաց բանիւ. Արի առ զմահիճս քո և գնայ. և նոյն ժամայն ընդ ասել նորա, յարուցեալ կանգնեցայ, և առեալ զմահիճս իմ գնացի: Ասեն Հրէայքն ցՊիղատոս. Հարց զդա թէ յորո՞ւմ աւուր բժշկեաց: Ասէ

1. Բ. օր. աշակերտ մնալ է:
2. Բ. օր. չունի Տիբերիոս:
3. Բ. օր. խօսել ընդ բան:
4. Բ. օր. զինչ և կամիս:
5. Բ. օր. առ վիշտս:

ի գալն Յիսուսի, բազում գիւղաքարք և ախտաժետք, որ ի պէսպէս ցաւոց անկեալ դնէին, բժշկեցան ի նը-մանէ. երիտասարդք ոմանք ողորմեցան ինձ, բարձին զիս մահճօք և տարան առաջի նորա. և տեսեալ զիս Յիսուսի, գթացաւ և ասաց բանիւ. Արի առ զմահիճս քո և գնայ՝ Բա՛րէ, և ի նոյն ժամայն բժշկեցայ, և բարձի զմահիճս և գնացի: Եւ ասեն Հրէայքն ցՊի-ղատոս. Հա՛րց զդա թէ յորում աւուր բժշկեցաւ: Եւ ասէ բժշկեալն. Ի շաբաթու: Ասեն Հրէայքն ցՊիղա-տոս. Մի՛թէ ո՞չ այսպէս ուսուցաք՝ թէ ի շաբաթու բժշկէ և դեւս հանէ: Եւ այլ ոմն ի Հրէից յառաջ մատուցեալ ասէ. Կոյր ծնեալ էի, զբարբառ միայն[1] լսէի՝ և զերեսս ոչ տեսանէի. և յանցանելն Յիսուսի՝ աղաղակեցի ի բարբառ մեծ. Ողորմեաց ինձ Տէր, ո-ղորմեաց ինձ. և եդ զձեռն իւր ի վերայ աչաց ի-մոց, և իսկոյն տեսի լոյս: Այլ ոմն յառաջ մատու-ցեալ[2] ասէ. Կաղ էի, և ուղղեաց զիս բանիւ[3]: Եւ կին ոմն որում անուն էր Վերոնիս, ի հեռաստանէ աղա-ղակեաց և ասէ. Տեռատես էի երկոտասանամեայ, մերձեցայ ի քղանցս հանդերձի նորա, և դադարեաց բղխումն արեան իմոյ: Ասեն Հրէայքն ցՊիղատոս. Մեք օրէնս ունիմք, կնոջ մարդոյ ոչ երթեալ[4] ի վկայութիւն:

ողջացեալն. Յաւուր շաբաթու: Ասեն Հրէայքն. Զասացաք թէ զշաբաթս լուծանէ և ոչ պահէ: Այլ ոմն ի Հրէիցն յառաջ մատուցեալ ասաց. Ես կոյր էի ի ծնէ, և յան-ցանելն Յիսուսի՝ ետես զիս և լուսաւորեաց զաչս իմ: Այր ոմն ասաց. Ես բորոտ էի և սրբեաց զիս բանիւ: Կին մի անուն Վրոնիկայ ի հեռաստանէ աղաղակեաց և ասէ. Ես արիւնաբեր էի և մերձեցայ ի դրօշակս հանդերձի նորա, առժամայն ցամաքեցայ: Ասեն Հրէայքն. Օրէնս ու-նիմք զկնոջ վկայութիւնն ոչ ընդունել: Այլք ոմանք յա-րանց և ի կանանց ասեն ցՊիղատոս. Զղազարոս ի Բե-թանիա չորեքօրեայ յարոյց ի գերեզմանէն, և ճշմար-տիւ գիտեմք որ այրդ այդ արդար է, և դեւք հնազանդին

1. Բ. օր. չունի միայն:
2. Բ. օր. յառաջ եկեալ:
3. Բ. օր. յաւելու. Այլ ոմն յա-ռաջ եկեալ ասէ. Բորոտ էի և սրբեաց զիս բանիւ:
4. Բ. օր. վերեալ:

Այլ(ք) ոմանք(յ)արանց և(ի) կանանց աղաղակէին. Այրս այս արդար է, և դեւք հնազանդին սմա։ Ասէ Պիղատոս. Եւ ընդէ՞ր վարդապետք ձեր ոչ հնազանդեցան սմա։ Ասեն ցՊիղատոս. Ոչ գիտեմք։ Այլք ասացին. ԶՂազար յարոյց չորեքօրեայ ի մեռելոց։ Ի դողման եղեալ իշխանն, և ասէ ցամենայն բազմութիւն Հրէից. Եւ զի՞ կամիք հեղուլ արիւն ամբիծ։

Կոչեաց Պիղատոս զՆիկոդեմոս և զերկոտասան արսն՝ որք ասէին թէ չէ ծնեալ ի պոռնկութենէ. Ասէ ցնոսա. Զի՞նչ առնեմք, զի խռովութիւն լինի ժողովրդեանս։ Ասեն ցնա. Ո՛չ գիտեմք, դոքա գիտեն։ Դարձեալ Պիղատոս կոչեաց զամենայն բազմութիւն Հրէից և ասէ. Գիտեմ զի սովորութիւն է ձեր ի տօնիս բաղարճակերացս արձակել զմի ոք ի կապելոց ի բանդի, սպանող՝ որում անուն է Բարաբա[1], (և) զդա որ առաջի ձեր կայ (արձակեցից), յորում և ոչ մի ինչ յանցանս գտի ի դմա։ Զո՞վ կամիք զի արձակեցից ձեզ։ Ասեն. զԲարաբայն։ Ասէ ցնոսա Պիղատոս. Իսկ զի՞նչ արարից զՅիսուս՝

դմա։ Յայնժամ զահի հարեալ Պիղատոս և ասէ ցհրէայսն. Զի՞ կամիք հեղուլ զարիւնն ամբիծ. գիտեմ զի սովորութիւն է ձեզ ի տօնիս բաղարճակերաց արձակել զմի ոք ի կապանաց, է ոմն դատապարտեալ սպանող, որոյ անունն է Յեսու Բարաբայ. արդ առէք զնա ի ձեզ, և զո՞ր ինչ կամիք՝ արարէք ընդ նա. և զՅիսուս թոյլ տուք զի արձակեցից, զի ես պատճառ մահու ոչ գտանեմ ի սմա։ Ասեն Հրէայքն. Ոչ զդա՝ այլ զԲարաբայն արձակեա։ Ասէ Պիղատոս. Իսկ զի՞նչ արարից զՅիսուս զանուանեալն Քրիստոս։ Ասեն Հրէայքն. Ի խաչ ելցէ։ Ասէ Պիղատոս. Բարերարին ձերոյ դիմադարձ մի՛ լինիք։ Ասեն Հրէայքն. Որո՞յ բարերարի։ Ասէ Պիղատոս. Այնմ՝ որ ի Փարաւոնի ծառայութենէն ազատեաց զձեզ, և յանապատին կերակրեաց և լորամարգ ի ծովէն ետ ձեզ կերակուր, յապառաժ վիմէն ջուր արբոյց ձեզ. և դուք փոխանակ այնմ ամենայնի բարեաց՝ բարկացուցէք զԱստուած, որ կամեցաւ սատակել զձեզ, և Մովսէս աղաչեաց զնա և ցածոյց զբար-

1. Բ. օր. ունիմ զմի դատա- [illegible] րուամ անուն է Բարաբբա։ պարտեալ է բանդի սպանող, ո-

որ անուանեցաւն Քրիստոս: Ասեն. Ի խաչ ելցէ: Եւ այլք ի Հրէից անտի ասէին. Չես սիրելի կայսեր, քանզի ասաց զինքենէ որդի Աստուծոյ և Թագաւոր. ուրեմն կամիս թէ դա լիցի Թագաւոր, և ոչ կայսր: Յասեաւ Պիղատոս Հրէիցն և ասէ. Հանապազ դիմադարձ կայք բարերարաց ձերոց: Ասեն Հրէայքն. Ո՞ր բարերարաց: Ասէ Պիղատոս. Աստուած ձեր ի խիստ ծառայութենէ փրկեաց զձեզ, և յանապատին կերակրեաց զձեզ մանանայիւ, և ետ ձեզ կերակուր զլորամարգին, և յապառաժ վիմէն արբոյց զձեզ, և եդ ձեզ օրէնս. և ի վերայ այսր ամենայնի, բարկացուցէք զՏէր Աստուած ձեր[1] և ոչ մեռարուք. և այժմ ասէք ցիս, թէ զԹագաւորն ատեմ ես:

Յարեաւ Պիղատոս յատենէ անտի և կամեցաւ ելանել արտաքս: Աղաղակեցին Հրէայքն և ասեն[2]. Մեք Թագաւոր զկայսր գիտեմք և ոչ զՔրիստոս: Քանզի մոգք յարևելից պատարագ բերին նմա, իբրև Թագաւոր՝ ասելով. Թէ դու ես Թագաւոր Հրէից, ապրեցո զմեզ: Եւ իբրև լուաւ Հերովդէս ի մոգուցն թէ կուլթիւն նորա և ոչ մեռայք. և այժմ ծաղր առնէք զիս զի ասեմ Թագաւոր է ձեր: Ասեն Հրէայքն. Մեր Թագաւոր զկայսրն գիտեմք՝ և ոչ զՅիսուս. և դու որ այժմ Թագաւոր ասես, չես բարեկամ կայսեր. զի դա ասէ թէ որդի Աստուծոյ եմ և Թագաւոր:

Յայնժամ յարեաւ Պիղատոս յատենէ անտի, և կամեցաւ ելանել արտաքս: Ասեն Հրէայքն. Յորժամ ծընաւ դա, մոգքն յարևելից եկեալ բերին դմա ընծայս իբրև Աստուծոյ և Թագաւորի ասելով. Թէ դու ես Թագաւոր Հրէից, ապրեցոյ զմեզ: Իբրև լուաւ Հերովդէս, կամեցաւ սպանանել զնա, և հայր և մայր դորա առեալ և փախեան յԵգիպտոս. և Հերովդէս բարկացեալ՝ առաքեաց դահիճս և կոտորեաց զամենայն մանկունսն որ ծնեալ էին ի Բեթղեհէմ և յամենայն սահմանս նորա:

1. Բ. օր. յաւելու՝ և ընդունիցի զորբնկալածոյ, և կանգնեցուսցէ Աստուած տանջել զձեզ, և ողորմեսցի Մովսէս վասն ձեր:
2. Բ. օր. յաւելու ցՊիղատոս:

թագաւոր ծնեալ է, կամեցաւ սպանանել զնա։ Իմացաւ հայր դորա Յովսէփ, և առ[1] զմայր դորա և փախեաւ յԵգիպտոս։ Յայնժամ անպարապ եղեալ Հերովդէի, կոչեցեալ Օգոստոս կայսերբ։ Եւ իբրև դարձաւ անտի, յետ ամի միոջ, ապա հրամայեաց կոտորել զամենայն մանկունս Բեդղահեմի և սահմանաց նոցա, ըստ ժամանակի գալոյ մոգուցն[2]։

Իբրև լուաւ Պիղատոս զայս ի Հրէիցն, յահի եղեալ լռեցոյց զժողովուրդն որք աղաղակէին, և ասէ ցնոսա. Ո՞, զոր խնդրէր Հերովդէս։ Ասեն Հրէայքն. Այո՛, դա է։ Ա՛ռ Պիղատոս ջուր, և լուաց ըզձեռս իւր առաջի ամենեցուն, և ասէ. Անապարտ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտէք։ Դարձեալ աղաղակեցին և ասեն. Արիւն դորա ի մեզ և յորդիս մեր։

Յայնժամ Պիղատոս հրամայեաց վարագոյր ձգել առաջի ատենին ուր նստէին, վճիռ ետ այսպէս. Ազգդ քո ասացին զքէն վասն թագաւորութեանդ. վասն այնորիկ հրամայեմ նախ գաւազանել, ըստ օրինաց բարեպաշտ թագաւորին, և յետ այսր ի խաչ հանիցեն զքեզ։

Յայնժամ առին զնա և տարան ի պարտէզն, ուր և ըմբռնեցան Դեմաս և Գեստաս, երկու չարագործք ընդ նմա։ Իբրև չոգան ի տեղին, մերկացուցին զհանդերձս նորա, և արկին զնովաւ սփա-

Իբրև լուաւ զայս Պիղատոս, առեալ ջուր լուաց զձեռսն և ասաց. Անպարտ եմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտէք. Ասեն Հրէայքն աղաղակաւ. Արիւն դորա ի վերայ մեր և ի վերայ որդւոց մերոց։ Յայնժամ Պիղատոս գան հարեալ զՅիսուս, ետ ի ձեռս նոցա զի խաչեսցի. և նոքա առեալ զՅիսուս և եդին զփայտեայ խաչն ի վերայ ուսոց նորա, և տանէին ի տեղին որ կոչէր Գագաթն, և եբրայեցերէն Գողգոթայ։ Եղեալ

1. Բ. օր. յաւելու կցա և։
2. Բ. օր. Յայնժամ բարկացեալ Հերովդէս հրամայեաց կոտորել զմանկունս Հրէիցն որ ծնեալ էին ի Բեդղեհեմ և յամենայն սահմանս նորա։ Իբրև լուաւ...։

ծանելիս, և պսակ ի փշոց եդին ի գլուխ նորա, և հանին զնա ի խաչ. սոյնպէս և զերկու չարագործսն կախեցին, զԴեմաս ընդ աջմէ և զԳեստաս ընդ ահեկէ։ Իսկ Յիսուս ասէ. Հայր թող սոցա, զի ոչ գիտեն զի՛նչ գործեն։ Եւ բաժանեցին զհանդերձս նորա զինուորքն։ Եւ կայր ժողովուրդն և տեսանէր, և արհամարհէին զնա, քահանայապետքն և իշխանքն ասէին. Զայլս փրկեաց, փրկեսցէ զանձն՝ թէ որդի Աստուծոյ է[1]. այպն առնէին և զինուորքն, մատուցեալ նմա քացախ խառնեալ ընդ լեղի. ասելով՝ թէ դու ես թագաւոր Հրէից, ապրեցո զքեզ։

Յայնժամ յետ հատանելոյ զվճիռն Պիղատոսի, հրամայեաց գրել ի տախտակի՝ յունարէն և դաղմատերէն և եբրայեցերէն, որպէս ասացին Հրէայքն եթէ՝ թագաւոր է Հրէից։ Մի ոմն ի կախելոցն որում անուն էր Գեստաս, ասէ ցնա. Թէ դու ես Քրիստոսն, փրկեա զմեզ և զքեզ։ Պատասխանի ետ ընկերն որում

արտաքս՝ գտին երկուս արս աւազակս, որոց անուանք էին միոյն Դեմաս և միւսոյն Կեստաս. և զնոսա կալեալ տարան ընդ նմա։ Եւ իբրեւ տարան ի տեղին, մերկացուցին զՅիսուս և զգեցուցին կատու, և պսակ ի փշոց եդին ի գլուխ նորա, և ծաղր արարեալ այպանէին զնա. ծածկէին զգլուխն և հարկանէին թէ՝ մարգարէաց մեզ ո՞վ է որ եհարն զքեզ. զայս ինչ գործէին զինուորքն։ Եւ կանայք ոմանք կային ի հեռաստանէ և լային. դարձաւ ի նոսա Յիսուս և ասէ. կանայք, մի՛ լայք ի վերայ (իմ), այլ լացէք ի վերայ անձանց ձերոց և որդւոց. և եկեսցեն աւուրք, որ ասիցեն լերանց թէ՝ անկերուք ի վերայ մեր, և բլրոց թէ ծածկեցէք զմեզ։

Եւ անդ հանին զնա ի խաչ, և զոմն չարագործ յաջմէ և զոմն յահեկէ նորա խաչեցին։ Եւ որք անցանէին հայհոյէին և ասէին. Վա՛հ, որ քակէիր զտաճարն և զերիս աւուրս շինէիր. ապրեցո զանձն քո և էջ ի խաչէդ։ Եւ աւազակն Կեստաս՝ որ յահեկէն էր՝ հայհոյելով ասէր ցՅիսուս. Ո՞չ դու ես Քրիստոսն որդին Աստուծոյ, և թէ նա ես՝ փրկեա զքեզ և

1. Բ. օր. յաւելու ընտրելոյ։

անուն էր[1] Դեմաս, և ասէ ցասմամբ. Ո՞չ երկնչիս դու յԱստուծոյ, զի ի դոյն դատապարտութեան եմք. մեք յիրաւի զի արժանի զոր գործեցաք ընդունիմք. և սաստեաց ընկերին[2]. և ասէ ցՅիսուս. Յիշեա զիս Տէր յորժամ գաս արքայութեամբ քո: Ասէ Յիսուս. Ամէն ասեմ քեզ, այսօր ընդ իս իցես ի դրախտին:

Եւ էր իբրեւ վեց ժամ, և խաւար կալաւ զերկիր մինչեւ ցինն ժամն: Իսկ ի խաւարել արեգականն, պատառեցաւ վարագոյր տաճարին վերուստ ի վայր[3]: Բարբառեցաւ Յիսուս ի ձայն մեծ և ասէ. Հայրաք փիք դրուի, որ թարգմանի, Հայր ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ. և զայս ասացեալ՝ արձակեաց ըզհոգի: Իսկ զեղեալ իրսն իբրեւ եռեւս հարիւրապետն, փառաւորեաց զԱստուած ասելով. Արդարեւ

զմեզ: Իսկ աւազակն Դեմաս, որ յաջմէն էր, սաստեաց ընկերին և ասաց. Ո՞չ երկնչիս դու յԱստուծոյ, զի մեք յարժանեաց կրեմք զպատիժս զայս, իսկ սա մնաս ինչ ոչ գործեաց, այլ զամենայն բարի՝ զոր արար: Եւ դարձաւ առ Յիսուս և ասէ. Յիշեա զիս Տէր, յորժամ գաս արքայութեամբ քով: Ասէ ցնա Յիսուս. Ամէն ամէն ասեմ քեզ, այսօր իցես ընդ իս ի դրախտին: Եւ զինուորքն բաժանեցին զհանդերձս Յիսուսի վիճակաւ: Եւ Յիսուս ասէր. Հայր թող դոցա, զի ոչ գիտեն զինչ գործեն:

Եւ իբրեւ եղեւ վեց ժամ աւուր ուրբաթուն, կալաւ խաւար զամենայն երկիր մինչեւ ցինն ժամ. զի արեգակն խաւարեցաւ և վարագոյր տաճարին ցելաւ ընդ մէջ յերկուս մասունս. և յիններորդ ժամուն գոչեաց Յիսուս ի ձայն մեծ և ասաց. Եղի եղի լամայ սափաք թանի. այս ինքն՝ Աստուած Աստուած իմ, ընդէր թողեր զիս: Եւ դարձեալ ասաց թէ՝ Ծարաւի եմ: Յայնժամ մի ոմն առեալ քացախ և լեղի՝ որ կայր խառնեալ, և սպունգաւ մատոյց ի բերան նորա: Յայնժամ ասաց Յիսուս. Ամենայն ինչ կատարեալ է: Զայս իբրեւ ասաց փառաւորեաց զԱստուած և ասաց՝ Յաղափիկ դրոյի, այս ինքն՝ ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. և առ ժամայն արձակեաց զհոգին:

Իսկ հարիւրապետն որ կայր ի վերայ, իբրեւ եռես

1. Բ. օր. յորջորջէր:
2. Բ. օր. յաւելու խորամ:
3. Բ. օր. չունի վերուստ ի վայր. այլ ունէ՝ յերկուս:

այրս այս որդի Աստուծոյ է. և ամենայն ժողովուրդն որ եկեալ էին ի տեսանել, բախէին զկուրծս իւրեանց և դառնային։ Իսկ հարիւրապետն իմացոյց զեղեալս իշխանին. լուեալ իշխանն և կինն իւր, և տրտմեցան յոյժ. ոչ կերան և ոչ արբին յաւուրսն յայնոսիկ։ Եւ[3] Պիղատոս ածեալ[1] զՀրէայսն առ ինքն, և ասէ ցնոսա. Տեսէ՞ք որ ինչ եղեւ։ Ասեն նոքա ցիշխանն. Նուաղումն արեգականն ըստ սովորութեան իւրում եղեւ։ Կային ամենայն ծանօթքն Յիսուսի ի հեռաստանէ, և կանայք որ զհետ եկեալ էին ի Գալիլեէ տեսանել զայն։

Եւ ահա այր մի Յովսէփ[2], քաղաքապետ, այր արդար և բարեգործ. սա չէր հաւանեալ կամաց և գործոց նոցա. և էր ի քաղաքէ Հրէից, որում անուն էր Արեմաթեմ[3]. որ և իսկ ակն ունէր արքայութեան Աստուծոյ։ Սա մատուցեալ առ Պիղատոս խնդրեաց զմարմինն Յիսուսի, և իջուցեալ ի խաչէն, պատեաց սուրբ կտաւովք, և եդ զնա ի կոփածոյ գերեզմանի, յորում չէր զոք եդեալ։

եթէ փառաւորեաց զԱստուած և արձակեաց զոգին. աղաղակեաց և ասէ. Արդարեւ որդի Աստուծոյ էր սա։ Եւ ծանոյց զայս հարիւրապետն Պիղատոսի։ Իբրեւ լուաւ զայս Պիղատոս և կինն իւր, տրտմեցան յոյժ։ Կոչեաց Պիղատոս զՀրէայսն և ասաց. Տեսէք զի՞նչ եղեն։ Ասեն Հրէայքն. Նուաղումն արեգականն ըստ սովորութեան իւրում եղեւ։

Եւ աղաչեցին Հրէայքն զՊիղատոս, զի խորտակեսցեն զբարձս նոցա զի մեռցին, և մի՛ մնասցեն մարմինք նոցա ի խաչին մինչեւ ի շաբաթն։ Եկին զինուորքն և խորտակեցին զբարձս աւազակացն աստի և անտի, իբրեւ եկին առ Յիսուս տեսին զի այն ինչ մեռեալ էր, և ոչ խորտակեցին զբարձս նորա, այլ մի ոմն ի զինուորացն տիգաւ խոցեաց զկողս նորա, և ել վաղվաղակի արիւն և ջուր։ Եւ որ տեսեան վկայեաց ճշմարտապէս, թէ որդի Աստուծոյ էր Յիսուս. որում փառք յաւիտեանս. ամէն։

1. Բ. օր. Եւ Պիղատոս ածել։
2. Բ. օր. Եւ այր մի որում անուն էր Յովսէփ։
3. Բ. օր. Յարիմաթեմ։

Լուան Հրէայքն, եթէ զմարմինն Յիսուսի խնդրեաց Յովսէփ. խնդրէին զնա և զերկոտասան արսն՝ որք ասէին թէ չէ ծնեալ ի պոռնկութենէն և զՆիկոդեմոս և զայլ ընկերսն նորա, որք առաջի Պիղատոսի զբարի գործս նորա պատմէին: Ամենեցուն նոցա թաքուցեալ, բայց[1] միայն Նիկոդեմոս յայտնեցաւ, զի իշխան էր Հրէից: Ասէ ցՀրէայս. Ի՞բր մտէք ի ժողովս: Ասեն ցնա Հրէայքն. Դու զի՞[2] մտեր ի ժողովս, զի պատմակից նորա էիր, ընդ նմա՛[3] բաժին քո յաւիտեան: Ասէ Նիկոդեմոս. Ամէն: Նոյնպէս և Յովսէփ յայտնեցաւ, և ասէ. Զի՞ տրտմեցարուք զինէն, զի խնդրեցի զմարմինն Յիսուսի. ահա ի հասարակաց գերեզմանի եդի զնա պատեալ ի մաքուր կտաւս, և վէմ մի թաւալեցուցի ի գերեզմանին[4]. և դուք ոչ բարիոք գործեցէք վասն արդարոյն այնորիկ, և ոչ զղջացարուք ի խաչելն զնա, այլ տիգաւ հարէք զկողս նորա:

Յայնժամ կալան Հրէայքն զՅովսէփ, և հրամայեցին պահել զնա, և ասեն. Գոհացիր զի ժամս չէ ինչ պահանջել. քանզի շաբաթն լուսանայր. գիտասջիր՝ զի և թաղման անգամ ոչ լինէիր արժանի, այլ տայաք զմարմինս քո թռչնոց երկնից և գազանաց երկրի: Ասէ ցնոսա Յովսէփ. Այս բանք Գողիաթու ամբարտաւանի են, որ նախատեաց զԱստուած կենդանի և զսուրբն Դաւիթ. ասաց Աստուած ի ձեռն մարգարէին. Իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից ասէ Տէր: Այս անթլփատ մարմնով և թլփատեալ սրտիւ, առեալ ջուր լուաց[5] առաջի արեգական ասելով, անպարտեմ ես յարենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտէք: Եւ դուք պատասխանի ետուք Պիղատոսի[6] ասելով. Արիւն դորա ի մեզ և յորդիս մեր: Եւ այժմ երկնչիմ՝ թէ գուցէ հասանիցէ ձեզ բարկութիւն, և կամ[7] յորդիս ձեր, որպէս

1. Բ. օր. չունի բայց:
2. Բ. օր. զի՞րդ:
3. Յօր. նորա:
4. Բ. օր. դրան գերեզմանին:
5. Բ. օր. լուացաւ:
6. Բ. օր. չունի Պիղատոսի:
7. Բ. օր. չունի՝ կամ:

դուք ասացէք: Եւ լուեալ Հրէայքն զբանս զայսոսիկ, դառնացան յանձինս իւրեանց: Ցայնժամ արգելին զնա ի բանդ, յորում ոչ գոյր ի նմա պատուհան. և պահապանս կացուցին առ դրանն, և կնքեցին զդուռն, ուր արգելեալ էին զՅովսէփ: Իսկ ի շաբաթուն, ժամանադիր արարին ժողովրդապետքն և Ղեւտացիքն, զի ամենեքին միաբան գայցեն ի ժողովրդարանն[1] ի միաշաբաթւոջն: Եւ կանխեալք ընդ առաւօտն ամենայն բազմութիւնքն ի ժողովանոցն, խորհէին թէ որով մահուամբ սպանցեն զնա: Եւ նստեալ յատենին, հրամայեցին ածել զնա մեծաւ անարգանօք. և բացեալ զդուրսն ոչ զոք գտին անդ: Հիացան ամենայն ժողովուրդքն և զահի հարան, զի զկնիքն գտին[2] ողջ, և պահապանքն կային առ դուրսն, և զբանալին ունէր Կայիափա. և ոչ եւս իշխեցին ձեռն արկանել յայնոսիկ, որք խօսեցան առաջի Պիղատոսի զՅիսուսէ: Եւ մինչ նոքա ժողովեալ էին և զարմանային վասն Յովսեփայ, եկին ոմանք ի զօրականաց անտի, զորս կացուցեալ էր Հրէից ի Պիղատոսէ, պահել զգերեզմանն Յիսուսի, զի մի եկեալ աշակերտք նորա գողասցեն զնա: Պատմեցին քահանայապետիցն և ծերոց ժողովրդեանն զոր ինչ եղեւն: Պատասխանի ետուն քահանայապետքն, թէ ո՞րպէս եղեւ շարժումն: Ասեն. Մինչ դեռ պահէաք մեք, տեսաք զհրեշտակ Տեառն զի իջանէր յերկնից, և թաւալեցոյց զվէմն ի դրաց գերեզմանէն. և էր տեսիլն նորա իբրեւ զփայլակն և հանդերձ[3] նորա սպիտակ իբրեւ զձիւն. և յահէ նորա եղաք իբրեւ զմեռեալս. և լուաք զբարբառ հրեշտակին որ ասէր ցկանայսն, որ կային առ գերեզմանին Յիսուսի, եթէ, Մի՛ երկնչիք, զՅիսուս խաչելեալն խնդրէք. չէ աստ, այլ յարեաւ որպէս ասացն. եկայք տեսէք զտեղին՝ ուր կայր[4]. և երթայք ասացէք աշակերտացն, եթէ ահա յառաջանայ քան զձեզ ի Գալիլիա և անդ տե-

1. Բ. օր. ժողովարանն:
2. Բ. օր. գտան:
3. Բ. օր. զհերս:
4. Բ. օր. ուր եդին զնա. և եր- բեալ...:

նիցէք զնա. ահա ասացի ձեզ։ Ասեն Հրէայքն ցզինուորսն, Ընդ ո՞ր կանայս խօսէր։ Ասեն. Ո՛չ գիտեմք ո՞ր էինն։ Ասեն Հրէայքն. Եւ զի՞նչ ժամ էր։ Ասեն զինուորքն. Ի հասարակ գիշերի։ Ասեն Հրէայքն. Ընդէ՞ր ոչ կալարուք զնոսա։ Ասեն զինուորքն ցՀրէայսն. Իբրեւ զմեռեալս եղաք յահէն, չունէաք ակն տեսանել զլոյս տուընջեան։ Ասեն Հրէայքն. Կենդանի է Տէր, ոչ հաւատամք ձեզ։ Ասեն զինուորքն. Այնչափ նշանս տեսէք յառն յայնմիկ և ոչ հաւատացէք նմա, մեզ զի՞արդ հաւատայցէք. բայց զայդ բարիոք երդուարուք թէ՝ կենդանի է Տէր։ Ասեն դարձեալ զինուորքն ցՀրէայսն. Լուաք մեք թէ որ խնդրեաց զմարմինն Յիսուսի, արգելիք զնա ի տուն մի, և զդուրսն փակեցիք և կնքեցիք մատանեաւ, և իբրեւ բացէք զդուրսն, ոչ գտէք զնա։ Արդ տուք դուք զՅովսէփ՝ և մեք տամք զՅիսուս։ Ասեն Հրէայքն ցզինուորսն. Մեք տամք զՅովսէփ, դուք տուք զՅիսուս։ Ասեն զինուորքն ցՀրէայսն. Նախ դուք տուք զՅովսէփ, և մեք տամք զՅիսուս։ Ասեն Հրէայքն. Յովսէփ ի քաղաքն իւր գնաց ի յԱրեմաթեմ։ Ասեն զինուորքն. Եւ Յիսուս որպէս լուաք ի հրեշտակէն որ զվէմն թաւալեցոյց, եթէ յառաջանայ քան զձեզ ի Գալիլեայ։ Իբրեւ լուան Հրէայքն զբանս զայս, երկեան յոյժ և ասեն, գուցէ լուր լիցի բանս այս, և ամենեքեան խոտորեսցին ի Յիսուս։ Եւ խորհուրդ արարին հանդերձ ծերովքն, արծաթ յոյժ ետուն զօրականացն և ասեն. Ասասջիք թէ մինչ մեք ի քուն էաք, եկին աշակերտքն նորա և գողացան զնա. և եթէ լուր լիցի առ դատաւորն, մեք հաճեսցուք զնա և զձեզ անհոգս արասցուք։ Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս ուսանն. և ել համբաւս այս ի Հրէից մինչեւ ցայսօր։

Փիլիմոնն քահանայ և Ադդաս[1] վարդապետ և Եգիաս Ղեւտացի իջին ի Գալիլեէ յԵրուսաղեմ, և պատմեցին ժողովրդապետացն զի տեսին զՅիսուս և զմետասան աշակերտսն նորա, զի նստէր ի վերայ լերին, որում անուն

1. Բ. օր. Ադդա։

Digitized by Google

էր Սամբեղէք: Եւ ասէր աշակերտաց իւրոց. Երթայք յաշխարհ[1] և քարոզեցէք ամենայն արարածոց զոր տեսէքն, որք հաւատան կեցցեն, և որք ոչ հաւատան դատապարտեսցին: Եւ[2] նշանք (որ) զհետ հաւատացելոցն երթիցեն այս ինչ. Յանուն իմ դեւս հանէք, և ի լեզուս նորս խօսեսցին. և եթէ մահացու դեղ ինչ արբցեն, մի՛ վնասեսցէ զնոսա. և հիւանդի ձեռս դիցեն, և բարի լինիցի նոցա:

Եւ մինչդեռ[3] Յիսուս խօսէր ընդ նոսա[4], տեսաք զնա վերացեալ[5] յերկինս: Եւ ասեն քահանայապետքն և դպիրքն: Տուք փառս Աստուծոյ Իսրայելի և տուք խոստովանութիւն նմա. զի զայդ զոր լուաք և տեսէք՝ ստուգութեամ՞բ է: Ասեն արքն. Կենդանի է Տէր Աստուած հարցն մերոց, Աստուած Աբրահամու, Սահակայ և Յակովբայ, զի զայս լուաք ի նմանէ, և տեսաք զի վերացաւ յերկինս: Ասեն քահանայապետքն. Վասն այ՛դորիկ եկիք պատմել մեզ, թէ եկիք հատուցանել զաղօթս ձեր: Ասեն ցնոսա արքն. Եկաք հատուցանել զուխտս մեր: Ասեն ծերքն և քահանայապետքն և Ղեւտացիքն ընդ նոսա. Եթէ ուխտեցէք կատարել Աստուծոյ, ընդէ՞ր է շատախօսութիւնդ ձեր զոր բարբանջէք[6] առաջի ամենայն ժողովըրդեանդ: Ասեն Ամբեղէոս[7] քահանայապետ և Ադդաս և Էգիաս Ղեւտացի ընդ ժողովրդապետսն. Եթէ բանքս այսոքիկ զոր խօսեցաքս և լուաք և տեսաք մե՛ղք են, ահաւասիկ առաջի ձեր կամք, որ ինչ հաճոյ է ձեզ արարէք ընդ մեզ: Իսկ նոքա առին զգիրս օրինացն և երդմնեցուցին զնոսա, մի՛ ումեք պատմել զբանս զայսոսիկ. և ետուն նոցա ուտել[8], և արծաթ. և արս երիս առաջնորդս, գնալ[9] նոցա ի Գալիլիայ. և գնացին խաղաղութեամբ:

1. Բ. օր. յաշխարհ խոստովանութեան, և զայս զոր տեսէք զարմեցէք և որք հաւատան:
2. Բ. օր. չունի աստ մինչեւ բարի լինիցի նոցա:
3. Բ. օր. յաւելու՝ զայս:
4. Բ. օր. զնէ ընդ աշակերտսն:
5. Բ. օր. համբարձեալ:
6. Բ. օր. բարբանջեցէք:
7. Բ. օր. Ամբեղէանոս:
8. Բ. օր. յաւելու՝ ըմբել:
9. Բ. օր. գնալոյ:

Digitized by Google

Խորհուրդ արարին Հրէայքն ընդ միմեանս, և արգելին զինքեանս ժողովրդապետքն և քահանայքն ի ժողովրդանոցին. և կոծէին կոծ մեծ և ասէին, թէ՝ զինչ նշան եղեւ այս յԻսրայէլի։ Ասեն[1] Աննա և Կայիափայ. Ընդէ՞ր տրտում էն անձինք մեր, զինուորացն ունիմք հաւատալ, եթէ հրեշտակ Տեառն էջ յերկնից և զվէմն թաւալեցոյց ի գերեզմանէն. և ուստի՞ գիտեմք՝ եթէ աշակերտքն նորա ետուն ոսկի յոյժ զօրականացն և առին զմարմինն[2], և ուսուցին նոցա[3] այսպէս. մինթէ ո՞չ գիտէք թէ չէ արժան[4] հաւատալ անթլփատ[5] բանի ինչ, զի և ի մէնջ առին արծաթ յոյժ. և որպէս ուսուցաք նոցա այնպէս և ասացին։ Յոտն եկաց Նիկոդեմոս ի մէջ հրապարակին և ասէ ցնոսա. Ուղի՛ղ ասացէք զոր ինչ ասացէքն. ամենայն ժողովուրդս ճանաչեն զարսն զայնոսիկ, որ եկին ի Գալիլեէ, զի նոքա են երկիւղածք յԱստուծոյ, արք խաղաղականք, որք ատեն զժպրհութիւնն[6]. Նոքա պատմեցին երդմամբ. տեսաք, ասէ, զՅիսուս, զի նստէր ի լերինն Ամբեղաք[7] մետասան աշակերտօքն իւրովք, զի ուսուցանէր նոցա[8], զոր լուարուք ի նոցանէն, թէ[9] տեսաք զնա վերացեալ[10] յերկինս. և զի ոչ ոք եհարց ցնոսա թէ որո՛վ կերպարանօք վերացաւ. քանզի ուսուցին մեզ գիրքս բանք վասն Եղիայի[11], թէ համբարձաւ յերկինս. և աղաղակէր Եղիսէ ի բարբառ մեծ. և ընկեաց զմաշկեակն ի վերայ նորա. և Եղիսէ առեալ զմաշկեակն Եղիայի, և եհար զՅորդանան, և անց ընդ ցամաք, և եկն յԵրիքով։ Եւ պատահեցին նմա որդիք մարգարէիցն, և ասեն. Ո՞ւր է տէրն քո։ Եւ ասէ. Վերացաւ յերկինս։ Եւ ասեն ցԵղիսէ. զուցէ այս ինչ

1. Բ. օր. ասէ։
2. Բ. օր. յաւելու՝ Յիսուսի։
3. Բ. օր. յաւելու՝ ասել։
4. Բ. օր. չէ պարտ, այլ ի լուսանցս զնէ՝ չէ արժան։
5. Բ. օր. անթլփատացն։
6. Բ. օր. յաւելու՝ և զստահաբեան։
7. Բ. օր. Ամբեղեբ։
8. Բ. օր. զնոսա։
9. Բ. օր. զնէ՝ և։
10. Բ. օր. համբարձեալ։
11. Բ. օր. ուսուցանեն զմեզ գիրք սուրբ վասն Եղիայի։



Digitized by Google

յափշտակեաց զնա, և ընկէց ի լերինս ուրեք[1]։ Այլ մանաւանդ առցուք ընդ մեզ մանկունս մեր, և երթիցուք խնդրեսցուք զնա։ Եւ արգելին անդ զՆղխաէ. և նա ոչ չոգաւ ընդ նոսա։ Եւ նոքա խնդրեցին զնա զերիս աւուրս, և ոչ գտին. և իմացան եթէ ճշմարիտ վերացաւ։ Եւ այժմ լուարուք ինձ, և առաքեսցուք յամենայն սահմանս Իսրայելի, գուցէ յափշտակեցաւ յայսոց Յիսուս, և ընկաւ ի լերինս ուրեք[2]։ Եւ հաճոյ թուեցաւ բանքն առաջի ամենեցուն. և առաքեցին յամենայն կողմանս[3] Իսրայելի խնդրել զՅիսուս, և ոչ գտին. բայց զՅովսէփ գտին յԱրիմաթեմ, և ոչ իշխեցին ունել զնա։ Եկեալ պատմեցին ծերոցն և քահանայապետիցն և Ղեւտացւոյն, եթէ ոչ գտաք զՅիսուս, բայց զՅովսէփ գտաք ի յԱրիմաթեմ։ Եւ իբրև լուան վասն Յովսեփայ[4], ուրախ եղեն և ետուն փառս Աստուծոյ։ Եւ յայնժամ խորհուրդ արարին քահանայապետքն և դպիրքն և Ղեւտացիքն եթէ որո՛վ օրինակաւ կարասցեն տեսանել զՅովսէփ։ Եւ առին տոմս քարտէզ, և գրեցին առ Յովսէփ այսպէս. Խաղաղութիւն ընդ քեզ և ամենայն որ ինչ քո է։ Գիտեմք զի մեղաք առ Աստուած և առ քեզ. և աղօթեմք առ Աստուած Իսրայելի, զի արժանի արասցէ զքեզ գալ առ հարս քո. զի տրտմեցաք ամենեքեան, իբրև բացաք զդուրսն[5] և ոչ գտաք զքեզ. Գիտեմք զի խորհեցաք վասն քո խորհուրդ չար, այլ Տէր ընկալաւ ըզքեզ, և ցրուեաց զխորհուրդս մեր զոր վասն քո խորհեցաք, ո՜վ հայր պատուական Յովսէփ, պատուեալ յաչս մեր և յամենայն ժողովրդեանս։

Եւ ընտրեցին արս եօթն որ սիրէին զՅովսէփ. զոր և ինքն իսկ Յովսէփ գիտէր զնոսա իբրև զբարեկամս։ Եւ ասեն ցնոսա քահանայապետքն. Զգոյշ լերուք, զի[6] յորժամ ընդունիցի զթուղթդ ի ձեռնս և ընթեռնուցու, իմասջիք թէ յօժարէ գալ առ մեզ. ապա եթէ[7]

1. Բ. օր. ուրուք։
2. Բ. օր. ուրուք։
3. Բ. օր. լերինս։
4. Բ. օր. լուան զՅովսեփայ։
5. Բ. օր. զդրունս։
6. Բ. օր. եթէ։
7. Բ. օր. ապ՛ եթէ։

ընդունի զթուղթդ և ոչ կարդայ, իմացիք եթէ (զ)չարեալ է[1] այրն ընդ մեզ. ողջոյն տուք նմա խաղաղութեամբ և դարձարուք առ մեզ: Եւ օրհնեցին զարսն և արձակեցին:

Եւ եկին արքն յԱրիմաթեմ առ Յովսէփ, երկիր պագին նմա և ասեն. Խաղաղութիւն ընդ քեզ և ամենայնի որ ինչ քո է: Եւ նա ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ և ամենայն ժողովրդեանն Տեառն: Եւ մատուցին նմա զթուղթն. և ընկալեալ կարդաց և համբուրեաց զթուղթն, և օրհնեաց զԱստուած և ասաց այսպէս. Օրհնեալ է Տէր որ առաքեաց զհրեշտակս իւր, և ծածկեաց զիս ընդ հովանեաւ թեւոց իւրոց: Համբուրեաց զնոսա Յովսէփ, և եդ առաջի նոցա սեղան. կերան և արբին, և նիրհեցին անդ. և կանխեալ ընդ առաւօտն կացին յաղօթս: Եւ հանդերձեաց Յովսէփ զգրաստ և գնաց[2] ի սուրբ քաղաքն Երուսաղէմ, և պատահեաց ամենայն ժողովրդեանն: Աղաղակէին ամենեքին և ասէին. Խաղաղութիւն ի գալստեանդ քում: Ասէ Յովսէփ ցամենայն ժողովուրդն. Խաղաղութիւն ընդ ձեզ. և ետուն ամենեքին ողջոյն նմա. և զարմանային որք տեսանէին[3]: Եւ ընկալաւ զնա Նիկոդեմոս, և արար ընդունելութիւն նմա: Կոչեաց զԱննայ և զԿայիափա, և զծերսն և զՂեւտացիսն ի տուն իւր. կերան և արբին և ուրախ եղեն Յովսեփաւ հանդերձ: Եւ օրհնէին[4] զԱստուած, և գնացին իւրաքանչիւր ի տունս իւրեանց. բայց Յովսէփ ագաւ ի տան Նիկոդեմոսի:

Եւ ի վաղիւ անդր ուրբաթ էր. կանխեցին քահանայապետքն և Ղեւտացիքն ի տուն Նիկոդեմոսի և ասեն. Խաղաղութիւն ընդ քեզ և ընդ Յովսեփայ. և ողջունեցին զմիմեանս: Եւ առեալ զնոսա Նիկոդեմոսի, տարաւ զնոսա ի պարտէզն իւր. նստան ամենեքին և Յովսէփ ի միջի[5] նոցա. և ոչ ոք իշխէր

1. Բ. օր. ընդդիմարեալ է:
2. Բ. օր. յաւելու՝ ընդ նոսա, և եմուտ:
3. Բ. օր. յաւելու զնա:
4. Բ. օր. օրհնեցին:
5. Բ. օր. ի մէջ:

հարցանել բան ինչ: Յայնժամ ասէ ցնոսա Յովսէփ. Զի՞ է զի կոչեցէք զիս: Եւ նոքա ակնարկեցին Նիկոդեմոսի զի խօսեսցի ընդ Յովսեփու: Յայնժամ ասէ Նիկոդեմոս ցՅովսէփ. Հայր պատուական Յովսէփ, պատուաւորք և վարդապետք ժողովրդեանս կամին[1] հարցանել ընդ քեզ բան ինչ: Ասէ Յովսէփ ցՆիկոդեմոս. Ասասցեն: Եւ առեալ Աննա և Կայիափա զգիր[2] օրինացն, երդմնեցուցանէին[3] զՅովսէփ և ասեն. Տուր փառս Աստուծոյ Իսրայելի, և զոր ինչ հարցանեմք, մի՛ թաքուցաներ ի մէնջ: Ասէ ցնոսա Յովսէփ. Կենդանի է Տէր, եթէ թագուցից ի ձէնջ բան մի: Եւ ասեն. Տրտմեցաք մեծաւ տրտմութեամբ, զի խնդրեցեր զմարմինն Յիսուսի, և պատեցեր զնա սուրբ կտաւովք, և թաղեցեր ի սո՛ւրբ[4] գերեզմանի քում. վասն այնորիկ արգելաք զքեզ ի բանդ. և ի միաշաբաթօջն բացաք զդուրսն և ոչ գտաք[5], և տրտմեցաք յոյժ. և զարմացումն անկաւ ի վերայ ժողովրդեանս մինչեւ ցայսօր: Արդ պատմեսցի մեզ զոր ինչ եղեւն քեզ:

Ասէ Յովսէփ յաւուր ուրբաթու[6] ի տասներորդ ժամու արգելէք զիս ի բանդն. և մնացի զշաբաթ օրն բովանդակ. իբրեւ ի մէջ գիշերի եղեւ, մինչդեռ յաղօթս կայի, կախեցաւ ի չորից անկեանցն իբրեւ զփայլակն լուսոյ առաջի աչաց իմոց. և զահի հարեալ յերկիր անկայ: Բուռն եհար և յարոյց զիս ի տեղւոջէն ուր կայի անկեալ. և խոնաւութիւն ջրոյ անկաւ ի վերայ իմ. և հոտ հարաւ ի քիմս իմ, որպէս զանուշ իւղոյ. և մատուցեալ առ իս համբուրեաց զիս, և ասէ ցիս. Յովսէփ, մի՛ երկնչիր, բա՛ց զաչս քո և տես զիս[7], ո՛վ է որ խօսի ընդ քեզ: Եւ հայեցեալ տեսի զՅիսուս. զահի հարայ և կարծեցի թէ առ աչօք ինչ իցէ. և հրամանս[8] ի պատուիրանաց սկսայ ասել. և նա խօսէր ընդ իս. և դուք գիտէք իսկ, զի թէ[9] տեսիլ ու-

1. Բ. օր. կամեին:
2. Բ. օր. զգիրսն:
3. Բ. օր. երդմնեցուցին:
4. Բ. օր. չունի՝ սուրբ:
5. Բ. օր. յաւելու՝ զտեղ:
6. Բ. օր. շաբաթու:
7. Բ. օր. չունի զիս:
8. Բ. օր. չունի հրամանս:
9. Բ. օր. զնէ միայն՝ եթէ:

մէք պատահեսցի, և լուիցէ զբանս պատուիրանաց, փախչելով փախչի։ Իբրեւ խօսէր ընդ իս, ասացի. Վարդապետ Եղիա։ Եւ ասէ ցիս. Ո՛չ եմ ես Եղիաս։ Եւ ասացի ցնա. Ո՞վ ես դու Տէր։ Եւ ասէ ցիս. Ես եմ Յիսուս, զորոյ զմարմինն խնդրեցեր ի Պիղատոսէ, և պատեցեր սուրբ կտաւովք, և վարշամակաւ պատեցեր[1] ըզգլուխ իմ, և ի նոր գերեզմանի եդեր զիս. և թաւալեցուցեր վէմ մի մեծ ի դուռն գերեզմանին։ Եւ ասացի ցնա. Ե՛կ ցոյց ինձ զտեղին։ Եւ տարաւ զիս ի տեղին յորում եդի ես զնա. տեսի ես զկտաւս Նոր[2], և զվարշամակն որով պնդեցի[3] զգլուխ Նորա. յայնժամ ծանեայ թէ Յիսուս իցէ. և կալեալ զձեռանէ իմմէ, տարաւ զիս յԱրիմաթեմ, և դրաքն փակելովք եմոյծ զիս ի տուն իմ, և հանգոյց յանկողնի իմում. և ասէ ցիս. Խաղաղութի՛ւն ընդ քեզ։ Ապա համբուրեաց զիս և ասէ. Մինչեւ ցքառասուն օր մի՛ ելանել ի տանէ քումմէ. ահաւասիկ ես երթամ առ եղբարս իմ ի Գալիլեա։

Իբրեւ լուան զբանս զայսոսիկ ի Յովսեփայ, քահանայապետքն և դպիրքն և ամենայն ծերակոյտ ժողովրդեանն, եղեն իբրեւ զմեռեալս և անկան ի գետինն, և պահեցին այն օրն մինչեւ ցինն ժամն։ Յայնժամ Յովսէփ և Նիկոդեմոս աղաչեցին զնոսա և ասեն[4]. Արիք կացէք ի վերայ ոտից ձերոց, և ճաշեցէք[5] և հաստատեցէք զանձինս ձեր, զի վաղիւն շաբաթ Տեառն է։ Եւ յարեան և յաղօթս կացին առ Աստուած, և կերան և արբին և գնացին ի տուն իւրեանց։ Եւ ի շաբաթուն նստան ժողովրդապետքն և ծերքն և փարիսեցիքն, վիճէին ընդ միմեանս և ասէին. Զի՞նչ է ցասումն որ եհաս ի վերայ մեր, զի գիտեմք զհայր և զմայր Նորա։ Պատասխանի ետ Ղեւի ընդ վարդապետսն և ասէ[6]. Զծնօղս Նորա գիտեմք, զի երկիւղածք էին

1. Բ. օր. ծածկեցեր:
2. Բ. օր. չունի՝ Նոր:
3. Բ. օր. պատեցի:
4. Բ. օր. աղաչեին զնոսա և ասէին:
5. Բ. օր. ճաշակեցէք:
6. Բ. օր. ունի այսպէս. Պատասխանի ետ Ղեւի վարդապետն և ասէ:

յԱստուծոյ, զուխտսն ոչ խափանէին, և զտասանորդս տային երից ի տարւոջն[1]: Եւ յորժամ մեծ վարդապետն Սիմէոնն ընկալաւ զնա ի գիրկս իւր, ասէ. Արդ արձակես Տէր, զծառայս քո ըստ բանի քում ի խաղաղութիւն, զի տեսին աչք իմ զփրկութիւն քո, զոր պատրաստեցեր առաջի ամենայն ժողովրդեան[2]: Եւ օրհնեաց զնոսա Սիմէոնն, և ասէ ցՄարիամ մայր Նորա. Աւետարանեմ քեզ վասն մանկանս այսորիկ: Եւ ասէ Մարիամ. Բարի է տէր իմ: Եւ դարձեալ ասէ Սիմէոնն. Ահա եղիցի սա ի գլորումն[3] բազմաց ի մէջ Իսրայելի, և ի նշան յանդիմանութեան. և ընդ քո իսկ անձն անցցէ սուր, զի յայտնեսցին ի բազում սրտից խորհուրդք: Ասեն քահանայապետքն ցՂեւի. Զայս բանքս դու զիա՞րդ լուար: Ասէ ցնոսա Ղեւի. Ո՞չ գիտէք զի ի Նմանէ ուսայ զօրէնսն: Ասեն ցնա ծերակոյտն. ԶՀայրն քո կամիմք տեսանել: Յայնժամ կոչեցին զՀայր Նորա և հարցին ցնա: Ասէ ցնոսա. Ընդէ՞ր ոչ հաւատայք որդւոյ իմոյ. ո՞չ գիտէք եթէ երանելի արդարն Սիմէոնն ուսոյց Նմա զօրէնսն: Եւ դարձեալ ասեն ցՂեւի. Ճշմարի՞տ են բանքդ այդ զոր խօսեցար: Ասէ Ղեւի. Աստուած գիտէ ճշմարտութեամբ ասացեալսն: Ասեն ցմիմեանս քահանայապետքն և Ղեւտացիքն. Եկայք առաքեսցուք ի Գալիլեա առ երիս արսն որ եկին և պատմեցին վասն ուսուցանելոյ Նորա զաշակերտսն, և ասասցեն մեզ զիա՞րդ տեսին զնա վերացեալ յերկինս: Եւ հաճոյ թուեցաւ բանն ամենեցուն:

Առաքեցին զերիս արսն որ երթեալ էին ընդ նոսա ի Գալիլեա, թէ ասասջիք[4] վարդապետին Ադդէ[5] և վարդապետին Փեղեսեա[6], և վարդապետին Եգիա. Խաղաղութիւն ընդ ձեզ, և ամենեցուն որ ընդ ձեզ են[7].

1. Բ. օր. յաւելու՝ Եւ յորժամ ծնան զՅիսուս, ածին ի տեղին յոյս, և ողջունէին և պատարագս մատուցին Աստուծոյ:
2. Բ. օր. ժողովրդոց:
3. Բ. օր. յաւելու՝ և է կանգնում:
4. Յօր. առաջէց:
5. Բ. օր. Ադդայէ:
6. Բ. օր. Փեղեսայ:
7. Բ. օր. այժ. յեր են:

հակառակութիւն եղեւ վասն բազում իրաց, վասն այսորիկ առաքեցաք զարսդ զայդ առ ձեզ, զի արժանի լիցուք գալ[1] ձեզ ի սուրբ քաղաքս Երուսաղեմ։ Եւ գնացին արքն ի Գալիլեա, գտին[2] զնոսա զի նստէին և քննէին[3] զօրէնսն․ ողջոյն ետուն նոցա խաղաղութեամբ։ Եւ ասեն նոքա ցայնոսիկ որք եկինն․ Խաղաղութիւն ամենայն ժողովրդեանն Իսրայելի։ Եւ նոքա ասեն․ Խաղաղութիւն է։ Ասեն ցնոսա երթեալքն[4]․ Կոչեն զձեզ ժողովրդապետքն ի սուրբ քաղաքն Երուսաղէմ։ Իբրեւ լուան թէ խնդիր է նոցա ի հրապարակս, յաղօթս կացին առ Աստուած, և բազմեցան հանդերձ արամբքն, կերան և արբին, և յարուցեալ գնացին յԵրուսաղէմ, և ի վաղիւն նստան ի հրապարակին։ Եւ հարցին ցնոսա և ասեն․ Արդարև է, և տեսէ՞ք զՅիսուս, զի նստէր ի լերինն Սամբեղէք, և ուսուցանէր զմետասան զաշակերտսն իւր, և տեսէք զնա վերացեա՞լ յերկինս։ Պատասխանի ետուն և ասեն․ Ճշմարիտ է[5]։ Ասէ Աննա․ Մեկնեցէք զնոսա ի միմեանց։ Ածին նախ զԱդդաս։ Ասէ Աննա․ Ասա մեզ, զիա՞րդ տեսեր զնա վերացեալ յերկինս։ Ասէ Ադդաս․ Մինչդեռ նստէր ի լերինն Սամբեղէք և ուսուցանէր զաշակերտսն իւր, տեսաք զի ամպ հովանի կայր ի վերայ նորա, և ամպն վերացաւ յերկինս․ և աշակերտքն նորա յաղօթս կային անկեալ ի վերայ երեսաց իւրեանց յերկիր։ Կոչեցին զՓելէիոս[6] քահանայն, հարցին ցնա և ասեն․ Զիա՞րդ տեսեր զնա վերացեալ։ Եւ նա զնոյնն ասաց։ Ասեն ժողովուրդքն ընդ միմեանս․ Յօրէնսն Մովսէսի գրեալ է, ի բերանոյ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան։ Ասէ Աբութեան վարդապետն․ Գնաց[7] յօրինակ ըստ Աստուծոյ։ Յայիրայ վարդապետ ասէ․ Եւ զսուրբ[8] Մովսէսի լուաք,

1. Յօր. եղեալ էր գալ առ։
2. Յօր. գտան. ուղղեցաք ըստ Բ. օր։
3. Բ. օր. նստեալ քննէին։
4. Բ. օր. չունի. Ասեն ցնոսա երթեալքն։
5. Բ. օր. յաւելու՝ տեսաք զնա վերացեալ յերկինս։
6. Բ. օր. զՓեղչէոս։
7. Բ. օր. գնա։
8. Բ. օր. զսրբոյն։

Digitized by Google

այլ ոչ տեսաք զնա. քանզի գրեալ է յօրէնս Տեառն. եթէ մեռաւ Մովսէս, և ոք ոչ գիտէ զտեղի նորա մինչեւ ցայսօր։ Ղեւի վարդապետ ասէ. Զի՞ է զի ասաց վարդապետն Սիմէոն. Ահա սա եղեցի ի գլորումն և ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայելի[1], և ի նշան հակառակութեան։ Իսահակ քահանայ ասէ. Գրեալ է ի գիրս օրինացն. Ահաւասիկ ես առաքեմ զհրեշտակ իմ առաջի երեսաց քոց, և պատրաստեսցէ զճանապարհս քո։ Աննաս և Կայիափաս ասեն. Ուղի՛ղ ասացէք. ո՞չ գրեալ է յօրէնսն Մովսէսի եթէ զմահ[2] ոչ ոք ետես։ Այլ Յիսուս եկաց առաջի Պիղատոսի և դատեցաւ. զի տեսաք զնա ապտակեալ և թուք ընկալեալ յերեսս իւր, և պսակ ի փշոց եդեալ ի գլուխ նորա, ի զինուորացն գանեցաւ. վճիռ մահու ընկալաւ ի Պիղատոսէ, և խաչեցաւ ի տեղւոջն Գողգոթայ. և զԳեստաս և զԴեմաս զաւազակս ընդ նմա. և[3] տիգաւ զկողս նորա խոցեաց Ղենկիանոս[4] զինուոր, և զի զմարմին նորա խնդրեաց պատուական հայրն մեր Յովսէփ. և զի յարեաւ որպէս ասեն երեք վարդապետքն, թէ[5] տեսաք զնա վերացեալ յերկինս. և զի Ղեւի վկայեաց, թէ Սիմէոն ասաց. Սա եղիցի ի գլորումն և ի կանգնումն բազմաց ի մէջ Իսրայելի, և ի նշան հակառակութեան։ Եւ դարձեալ ասացին վարդապետքն և ամենայն ժողովուրդքն եթէ՝ Ի Տեառնէ եղեւ այս, և է սքանչելի առաջի աչաց մերոց։ Գիտելով գիտասջիք տունդ Յակովբու, զի գրեալ է թէ՝ Անիծեալ է ամենայն որ կախեալ կայցէ զփայտէ. այլ գիրք ուսուցանեն. Աստուածք որ զերկինս և զերկիր ոչ արարին, կորիցեն։

Եւ պատուէր ետուն ամենայն ժողովրդեանն Իսրայելի քահանայապետքն և Ղեւտացիքն, և ասեն. Անիծեալ լիցի ամենայն այր, որ երկիր պագանիցէ արարածոց և ոչ արարչին։ Եւ ասէ ամենայն ժողովուրդն. Եղիցի եղիցի։ Եւ օրհնեաց ամենայն ժողովուրդն զԱստուած,

1. Բ. օր. չունի՝ ի մէջ Իսրայելէ.
2. Բ. օր. զնինովէայ զմահն։
3. Բ. օր. յաւելու՝ զի։
4. Բ. օր. Ղենգինոս։
5. Բ. օր. չունի՝ թէ։

և ասեն. Օրհնեալ է Տէր Աստուած, որ ետ հանգիստ ամենայն ժողովրդեանն Իսրայելի ըստ ամենայնի զոր խօսեցաւ. և եղիցի Տէր Աստուած ընդ մեզ, որպէս ընդ հարս մեր։ Եւ օրհնելով[1] գնացին ըստ[2] իւրաքանչիւր տունս իւրեանց։

Եւ նոր ժողովուրդք որք ի հեթանոսաց հանցուք զօրհնութիւն և զփառս Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ[3] յաւիտեանս. ամէն։

## ՊԱՏՄՈՒԹԻՒՆ՝

## ՎԱՍՆ ԹԱՂՄԱՆՆ ԵՒ ՅԱՐՈՒԹԵԱՆ

## ՔՐԻՍՏՈՍԻ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԵՐՈՅ[4]

Եւ իբրեւ երեկոյ եղեւ, եկն այր մի մեծատուն[5], որում անունն էր Յովսէփ, որ էր քաղաքապետ. այր բարեգործ և արդար, յազգէն Հրէից, ոչ էր խորհրդակից կամաց նոցա, և ակն ունէր արքայութեան Աստուծոյ։ Սա մատուցեալ առ Պիղատոս և խնդրեաց զմարմինն Յիսուսի. և իջուցեալ ի խաչէն՝ պատեաց կտաւովք և եդ ի գերեզմանի կոփածու, յորում ոք ոչ էր եդեալ։

1. Բ. օր. յաւելու՝ զՏէր։
2. Բ. օր. չունի ըստ. այլ ունէ յիւրաքանչիւր։
3. Բ. օր. այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։
4. Այս Պատմ. Թաղման և յարութեան... է մասն Յիշատակարանաց Պիղատոսի. հմմ. էջ 332, և զի ի գրչագիր մատեանս՝ առանձինն այդու խորագրաւ գտաք գրեալ, ուստի առ ի հեշտ ընծայեցուցանել ընթերցանելեացն՝ ըդհամեմատութիւնս նոցին, պատշաճ համարեցաք կարգել աստանօր առանձինն։
5. Բ. օր. չունի՝ մեծատուն։

Digitized by Google

Լուսն Հրէայքն եթէ զմարմինն Յիսուսի խնդրեաց Յովսէփ և Թաղեաց պատուով, և խնդրէին ունել զնա և զայնոսիկ որք վկայէին առաջի Պիղատոսի՝ բարի գործսն Յիսուսի։ Եւ[1] նոքա ամենեքեան փախուցեալ էին և Թագուցեալ, բայց միայն Նիկոդեմոս յայտնեցաւ՝ վասն զի իշխանն էր Հրէից։ Ասեն ցնա Հրէայքն. Դու զի՞րդ մտեր ի ժողովս, զի յաշակերտաց նորա էիր, և բաժին քո ընդ նմա եղիցի յաւիտեան։ Ասէ Նիկոդեմոս. Ամէն։ Եւ մինչ նոքա զայս ասէին, եկն Յովսէփ յայտնեցաւ և ասէ. Զի՞ տրտմեալ էք և ընդէ՞ր բարկանայք, զի Թաղեցի[2] զմարմինն Յիսուսի. ահա ի հասարակաց գերեզմանի եդի զնա. և դուք ոչ բարւոք արարէք վասն արդարոյն այնորիկ, և ոչ զղջանայք ի խաչել զնա։ Ասեն Հրէայքն. Ոչ է ժամ ասել ընդ քեզ վասն այդորիկ, վասնզի շաբաթ լուսանայ, թէ չէ՝ Թաղելոյ ոչ լինէիր արժանի, այլ տայաք զմարմին քո գէշ Թռչնոց երկնից և գազանաց երկրի։ Ասէ Յովսէփ. Այդ բանդ ամբարտաւանին Գողիաթու նման են, որ նախատեաց[3] զԱստուած կենդանին և զճակատն Իսրայելի. Տեառն է վրէժխնդրութիւն, որպէս մարգարէն ասէ։

*...... ալ էր, այլ զըստոյգն գիտասջիր, զի Թաղելոյ արժանի ոչ լինէիր, այլ տամք զմարմին քո Թռչնոց երկնից և գազանաց երկրի։ Ասէ ցնոսա Յովսէփ. Այս բանքս ամբարտաւանին են Գողիաթու, որ նախատեաց զԱստուած կենդանի և ըզսուրբն Դաւիթ։ Ասաց Աստուած մարգարէին. Իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից, ասէ։

Այս անԹլպատ մարմնով

1. Բ. օր. էոյ։
2. Բ. օր. խնդրեսցի։
3. Բ. օր. Նախատէր։

* Ի Թիւս համարոյ գրչագրաց Պտմ. Թաղմաթթ.. են, կոչեմք զսա Գ. օրինակ. ի սկզբանն Թուղթ անկեալ էր ի գրչագրին։

Պիղատոս առեալ ջուր լուաց զձեռն առաջի ամենեցուն ասելով, թէ՝ Ես անպարտ եմ յարենէ արդարոյդ այդորիկ։ Եւ դուք ասացիք թէ՝ արիւն դորա ի մեզ և յորդիս մեր։ Եւ արդ երկնչիմ ես թէ[1] գայցէ ձեզ բարկութիւն և որդւոց ձերոց, որպէս և դուք ասացէք։ Զայս լուեալ Հրէիցն բարկացան Յովսեփայ, և կալան[2] զնա և արգիլեցին ի տան միում[3], յորում երդիք և պատուհան ոչ գոյր, և փակեալ կնքեցին զդուռն և կացուցին պահապանս առաջի դրանն։

և թլպատեալ սրտիւ, առեալ ջուր լուաց առաջի արեգականն ասելով, Անպարտ եմ յարենէ արդարոյդ այդորիկ, դուք գիտէք։ Եւ դուք պատասխանի ետուք Պիղատոսի, թէ՝ Արիւնդ դորա ի գլուխս մեր և յորդոց մերոց։ Եւ այժմ երկնչիմ գուցէ հասանիցէ բարկութիւն նորա ի ձեզ կամ յորդիս ձեր. որպէս և դուք ասացէքն։ Լսեցին Հրէայքն զբանս զայսոսիկ և սպառնացան յանձինս ձեր. և կալան զՅովսէփ և արգելին ի տուն նսեմ, յորում պատուհան ոչ գոյր. և պահապանքն կային առ դրանն, և զդուռն կնքեցին։

Եւ իբրեւ անց շաբաթն՝ ի միաշաբաթօջն եկին քահանայքն ի միասին, և խնդիր արարին ամենայն ժողովուրդն[4], զի ամենեքեան գայցեն ի ժողովատեղն, զի խորհուրդ արասցեն վասն Յովսեփայ, թէ որո՛վ մահու ըսպանցեն զնա։ Եւ իբրեւ

Իսկ ի շաբաթուն ժամադիր արարին ժողովուրդըն և քահանայապետքն և Ղեւտացիքն. զի ամենեքեան անդր գային ի ժողովելն ի միաշաբաթուն. և կանխեալք ընդ առաւօտն ամենայն բազմութիւն ժողովոցն, խորհէին, թէ որո՛վ մահու

1. Բ. օր. Բե տացէ տայցէ։
2. Բ. օր. կալեալ։
3. Յօր. վրիպակաւ եդեալ էր՝ եարամ։
4. Բ. օր. ժողովրդեան։

ժողովեցան և նստան յատեանն, և հրամայեցին ածել զՅովսէփ, և գնացեալ գտին զդուռն փակեալ զկնիքն ամբողջ[1], և զպահապանս առ դրանն. բացին և ի ներքս զոք ոչ տեսին. յոյժ հիացան և զարհուրեցան, վասնզի բանալին կայր առ Կայափայն։

սպանցեն զնա. իսկ նըստեալք յատենին՝ հրամայեցին ածել զնա բազում անարգանօք, և բացեալ զդուռն ոչ ոք գտին անդ. հիացան ամենայն բազմութիւնն և զահի հարան, զի զկնիքն գտին ողջ, և զփակն ունէր Կայիափա. և ոչ եւս իշխեցին ձեռս արկանել յայնոսիկ՝ որք խօսեցան զՅիսուսէ առաջի Պիղատոսի։

Եւ մինչ նոքա ընդ այն ափշեալ կային և զարմանային, ահա եկին ոմանք ի զօրականացն՝ զոր ի Պիղատոսէ կացուցեալ էին հրէայքն՝ պահապանս գերեզմանին Յիսուսի. Եկայք, ասէին ցնոսա, զի՞ կայք և զի՞ նստիք. յարեաւ ճշմարիտ որպէս յառաջն ասաց. ահա տեսաք զի եղեւ շարժումն մեծ, և հրեշտակ էջ յերկնից և զվէմն թաւալեալ[2] թաւալեցոյց ի գերեզմանէն. և երեւումն հրեշտակին[3]՝ փայլակնաձեւ, հանդերձ նորա սպիտակափայլ իբրեւ զձիւն[4]. և

Եւ մինչ նոքա ժողովեալ էին և զարմանային վասն Յովսեփայ, եկին ոմանք ի զօրականաց անտի, զորս կացուցին պահել զգերեզմանն Յիսուսի, զի մի եկեալ աշակերտաց նորա գողասցեն զնա, և ասասցեն ժողովրդեանն թէ յարեաւ ի մեռելոց. և եկեալ պատմեցին ժողովրդեանն և Ղեւտացւոցն՝ զեղեալ իրսն, որպէս եղեւ շարժումն մեծ. թէ մինչ պահէաք մեք՝ տեսաք ըզհրեշտակն Տեառն իջեալ յերկնից, ի բաց թաւալեցոյց զվէմն ի դրաց գերեզմանէն և նստաւ ի վե-

1. Բ. օր. ողջ։
2. Բ. օր. հոլովեալ թաւալեցոյց։
3. Բ. օր. պատմեցին։
4. Բ. օր. քան զձիւն։

Digitized by Google

մեք ի յահէն եղաք իբրեւ զմեռեալս. լուաք բարբառ ի հրեշտակէն որ ասէր ցկանայսն[1], թէ՝ Զի՞ խնդրէք զկենդանին ընդ մեռեալս. յարեաւ ստոյգ, չէ աստ. եկայք տեսէք զտեղին ուր զմարմինն եդին, և գնացեալ պատմեցէք աշակերտացն ըզյարութիւն նորա: Ասեն Հրէայքն. Ընդ կանա՞յսն խօսէր հրեշտակն: Ասեն զինուորքն. Մեք որպէս մեռեալ էաք և ոչ գիտեմք[2]: Ասեն Հրէայքն. Եւ զի՞նչ ժամ էր: Ասեն զինուորքն. Հաւախօսք էր: Ասեն Հրէայքն. Ընդէ՞ր ոչ կալարուք զնոսա: Ասեն զինուորքն. Մեք որպէս մեռեալ էաք ի յահէն, և չունէաք ակն տեսանելոյ ի լոյս տունջեանն, զիա՞րդ ունէաք զնոսա: Ասեն Հրէայքն. Ոչ հաւատամք ձեզ: Ասեն զինուորքն. Ո՛րչափ նշանս տեսէք[3] յառնէ յայնմանէ, և ոչ

րայ. և տեսիլն էր զինչ փայլակն և հանդերձն սպիտակ՝ նման որպէս ձիւն. և յահէն եղաք որպէս մեռեալս. և լուաք զբարբառս հրեշտակին որ ասէր ցկանայսն՝ որ առ գերեզմանն Յիսուսի, ասէր. Մի՛ երկնչիք, զՅիսուս խնդրէք. նա յարեաւ, եկայք տեսէք զտեղին, և գնացէք աշակերտացն աս(աց)էք թէ յարեաւ, և յառաջ քան զձեզ ի Գալիլեա տեսանիցէք զնա: Ասեն Հրէայքն. Ընդ ո՞ր կանայսն խօսէր: Ասեն. Ոչ գիտեմք: Ասեն Հրէայքն. Զի՞նչ ժամ էր: Ասեն զինուորքն. Մէջ գիշերի: Ասեն Հրէայքն. Ընդէ՞ր ոչ կալարուք զնա: Ասեն զինուորքն. Իբրեւ ըզմեռեալս եղաք յահէն: Ասեն Հրէայքն. Կենդանի է Տէր, ոչ հաւատամք ձեզ: Ասեն զինուորքն ցՀրէայսն. Այնչափ նշանս տեսաք յառն յայնմիկ՝ և ոչ հաւատացէք, մեզ զիա՞րդ հա-

1. Բ. օր. յաւելու՝ որք եկին ի գերեզման նորա:

2. Բ. օր. Ասեն Հրէայքն. Ընդ ո՞ր կանայսն խօսէր հրեշտակն: Ասեն զինուորքն. Ոչ գիտեմք: Ասեն քաղաքք Հրէայքն. Ոչ հաւատամք:

3. Յօր. տեսանէք, ուղղեցաւ ըստ Բ. օր. որ ունի այսպէս. այնչափ նշանս տեսէք:

Digitized by Google

հաւատացէք[1] նմա, մեզ զիա՞րդ հաւատայք: Ասեն Հրէայքն. Դուք սուտ ասէք: Ասեն զինուորքն. Մեք լուաք որ դուք զՅովսէփ ի բանդ արկեալ՝ կնքեցիք զդուռն, և բացեալ զնա[2] ոչ գտայք. արդ դուք տուք զՅովսէփ և մեք տամք զՅիսուս: Ասեն Հրէայքն. Նախ դուք տուք զՅիսուս և մեք տամք զՅովսէփ: Ասեն զինուորքն. Ոչ այդպէս. Նախ դուք տուք զՅովսէփ և ապա մեք տամք զՅիսուս: Ասեն Հրէայքն[3]. Յովսէփ ի քաղաքն իւր իւր: Ասեն զինուորքն. Եւ Յիսուս ի Գալիլեա գնաց, որպէս և հրեշտակն ասաց: Յայնժամ երկեան Հրէայքն և ասեն ցմիմեանս. Գուցէ լուր լիցի բանս այս: Եւ խորհեցան տալ արծաթ զօրականացն, և ասեն. ասասջիք, թէ մեք մինչ ի քուն էաք, եկին աշակերտք և գողացան զնա: Ասեն զինուորքն. Ոչ կարեմք առնել զայդ, գուցէ լուիցէ հաւատայք. քանզի բարիոք իսկ երդուարուք թէ կենդանի է Տէր: Եւ ասեն զինուորքն ցՀրէայսն. Լուաք թէ զայն որ խնդրեաց ըզմարմինն Յիսուսի՝ արգելէք զնա ի տուն մի և ըզդուրսն փակեցիք և կընքեցիք, և իբրեւ բացիք ոչ գտիք զնա. արդ տուք նախ զՅովսէփ, և տամք զՅիսուս: Ասեն Հրէայքն. Յառաջ զՅիսուս տուք: Ասեն զինուորքն. Ոչ, այլ զՅովսէփ: Ասեն Հրէայքն. Գնաց ի քաղաք իւր Յովսէփ: Ասեն զինուորքն ցըՀրէայսն. Եւ Յիսուս որպէս լուաք ի հրեշտակէն հար զվէմն և թաւալեցոյց: Եւ իբրեւ լուան զբանս Հրէայքն երկեան յոյժ և ասեն. Գուցէ լուր լիցի բանս այս և հաւատան ամենեքեան: Եւ առեալ խորհուրդ Հրէիցն, ետուն արծաթ զօրականացն, թէ ասասջիք, աշակերտքն գողացան զնա մինչ ի քուն էաք մեք, և թէ լուր լիցի առ դատաւորն, մեք հա-

1. Յօր. հաւատացայք:

2. Բ. օր. չունի զնա:

3. Յօր. եղեալ էր. Ասեն Հրէայքն. Ընդ որ կանայքն խօսէր հրեշտակ. ուղղեցաք ըստ Բ. օրինակին:

դատաւորն և սպանանիցէ զմեզ: — Այդ ի մեր վերայ. թէ դատաւորն լուիցէ՝ մեք հաճեսցուք զնա, և զձեզ անհոգս արասցուք: Եւ նոքա առեալ զարծաթն և համբաւեցին թէ գողացան զնա. և է զրոյցս այս ի մէջ Հրէից մինչեւ ցայսօր: Իսկ համբաւ յարութեան Յիսուսի ոչ ծածկեցաւ՝ այլ սփռեալ տարածեցաւ ընդ ամենայն երկիր:

Եւ եղեւ գալ Ադդաս վարդապետի, Փիլիմոն քահանայի[1] և Եդիաս Ղեւտացի ի Գալիլեէ յԵրուսաղէմ, որք պատմէին ժողովրդեանն ասելով, թէ տեսաք զՅիսուս և զմետասան աշակերտսն Նորա նստեալ ի լերինն Սաբեղէք, և լուաք զի ասէր աշակերտացն. թէ, Գնացէք ընդ ամենայն տիեզերս[2], և քարոզեցէք զաւետարանն իմ, և մկրտեցէք զամենայն հեթանոսս: Եւ ամենայն որ հաւատայ և մկրտի՝ կեցցէ, և որ ոչ

ճեսցուք և զձեզ անհոգս արասցուք: Եւ նոցա առեալ զարծաթն, արարին որպէս և ուսանն, և ել համբաւ մինչեւ ցայսօր:

Եւ Փիլիմոն քահանայ և Ադդաս վարդապետ և Եդիաս Ղեւտացի իջին ի Գալիլէէ յԵրուսաղէմ, և պատմեցին ժողովրդապետացն. զի տեսին զՅիսուս նստէր ի լերինն Սաբեղայ, և ասէր աշակերտացն. Երթայք քարոզեցէք զաւետարանն արարածոց. որ հաւատայ՝ կեցցէ, որ ոչ՝ դատապարտեսցի. և յանուն իմ դեւս հանէք, և ի վերայ հիւանդաց ձեռս դիք, և բարի լինիցի նոցա: Մինչդեռ զայս խօսէր, տեսաք վերացեալ յեր-

1. Բ. օր ունի այսպէս. Եղեւ իջանել ի Գալիլէէ յԵրուսաղէմ, Ադդա առաքելոյ և Փիլիմոն քահանայի:

2. Բ. օր. ընդ ամենայն աշխարհս տիեզերաց:

Digitized by Google

հաւատայ դատապարտեալ պարտաւորի. յանուն իմ դեւս հանէք և ղամենայն ցաւս փարատեցէք ի մարդկանէ: Եւ մինչդեռ զայս խօսէր Յիսուս, տեսաք զի վերացաւ յերկինս: Ասեն Հրէայքն: Տուք փառս Աստուծոյ, այդ զոր ասէքդ՝ ոչ է ճշմարիտ: Եւ նոքա ասեն. Կենդանի է Տէր Աստուածն Իսրայելի, զի զոր ասեմք՝ ճշմարիտ է: Ասեն Հրէայքն. Վասն այնորիկ եկեալ էք զի պատմէք մեզ[1]: Ասեն նոքա. Վասն պատմելոյ եկաք: Ասեն Հրէայքն. Մի՛ շատ ասէք. յուխտ եդեալ էք, կատարեցէք և գնացէք: Եւ նոքա ասեն. Թէ բանս այս զոր խօսեցաք մեղք են, ահա առաջի ձեր կամք, զոր ինչ հաճոյ է ձեզ արարէք, զի մեք ըստոյգ տեսաք զՅիսուս: Իսկ նոքա առեալ զօրէնսն երդմնեցուցին զնոսա, զի մի՛ ումեք պատմեսցեն ըզբանն զայն: Եւ խորհուրդ առեալ Հրէիցն և կոծ[2] մեծ և ասէին, այլ զի՞նչ աւելի նշանս պիտոյ է մեզ զոր[3] կինս: Ասեն քահանայապետքն և ծերքն. Տուք փառս Աստուծոյ, թող որ պատմեցէքդ լսեցիք և տեսաքդ: Ասեն որք պատմեցին. Կենդանի է Տէր Աստուած, զոր պատմեցաքդ լուաքդ՝ և տեսաք աչօք մերովք զնա յերկինս վերացեալ: Ասեն ժողովուրդքն ցնոսա. Վասն ա՞յդորիկ եկիք պատմել մեզ, թէ եկիք ուխտ կատարել Աստուծոյ: Ասեն ցնոսա. Վասն պատմելոյ ձեզ եկաք մեք: Ասեն ծերքն և քահանայապետքըն. Թէ ուխտեցէք կատարել Աստուծոյ, շատախօսութիւնդ ձեր ընդէ՞ր է, զոր խօսեցարուք առաջի ամենայն ժողովրդեանդ: Ասէ Փիլիմոն քահանայապետն և Ադդաս վարդապետ և Անգէաս և Ղեւտացոց ժողովրդապետք. Թէ բանս զոր խօսեցաք լուաք և տեսաք մեղք են, առաջի ձեր կամք, զոր ձեզ բարի է՝ արարէք: Իսկ նոքա առին զօրէնս և երդմնեցուցին զնոսա, մի՛ ումեք պատմել զբանս զայս. և

1. Բ. օր. յաւելու. Եթէ եկիք ուխտ կատարել Աստուծոյ:

2. Բ. օր. կշծէքն կոծ:

3. Այդպէս ունի և Բ. օրինակն:

եղեւ։ Ասեն Աննա և Կայիափա. Զի՞ տրտմիք, զի մեք զինուորացն չունիմք հաւատալ, թէ հրեշտակ Տեառն էջ և զվէմն թաւալեցոյց. այլ աշակերտքն նորա եկեալ ի գիշերի, և ետուն արծաթ պահապանացն[1], և առին զմարմինն Յիսուսի, և ուսուցին նոցա[2] թէ յարեաւ. և հրեշտակ Տեառն էջ և թաւալեցոյց զվէմն. արդ[3] մի հաւատայք անթլփատիցն բանից[4]. զի որպէս ի մէնջ առին զարծաթն և թողին զբանս իւրեանց, նոյնպէս և յաշակերտացն Յի-

ետ նոցա ուտել և ըմբել. և հանեալ արտաքոյ քաղաքին, ետուն արծաթ և առս երիս ընդ նոսա, և տարան զնոսա ի Գալիլեա խաղաղութեամբ։ Իբրեւ գնացին նոքա ի Գալիլեա, խորհուրդ արարին Հրէայքն ընդ միմեանս, և արգելին զինքեանս ժողովրդապետքն և քահանայքն ի ժողովրդանոցին, և կոծէին կոծ մեծ և ասէին. Վա՜յ մեզ, զի՞նչ նշան եղեւ այս Իսրայեղի։ Ասէ Աննա և Կայիափա. Ընդէ՞ր տըրտում էն անձինք ձեր, զինուորացն հաւատալ, թէ հրեշտակ յերկնից թաւալեցոյց զվէմն ի գերեզմանէն. զի աշակերտքն նորա ոսկի ետուն զօրականացն, և առին զմարմինն Յիսուսի. և նոքա ուսուցին դոցա՝ թէ այսպէս ասասջիք. թէ հրեշտակ Տեառն յերկնից իջեալ և տապալեաց զվէմն, և ասեն մեք ուսուցաք

1. Բ. օր. զօրականացն որք։ պահէին զգերեզմանն։
2. Բ. օր. յաւելու՝ ասել։
3. Բ. օր. չունի՝ արդ։
4. Բ. օր. բանի։





Digitized by Google

սուսի առին արծաթ, և ասեն թէ յարեաւ։ Յոտն եկաց Նիկոդեմոս ի մէջ հրապարակին և ասաց[1]. Ուղիղ ոչ ասէք, ոչ գիտէք զարսն որ եկին ի Գալիլիէ, զի Նոքա են երկիւղածք յԱստուծոյ, և արք երեւելիք[2] և ճշմարիտք, որ ատեն զժպրհութիւն. Նոքա պատմեցին երդմամբ՝ թէ տեսաք զՅիսուս մեծատասան աշակերտօքն Նորա՝ տեալ ի լեառն Սաբեղէք որ[3] ուսուցանէր զՆոսա, և վերացաւ[4] յերկինս. և դուք ո՞չ հարցէք, որո՞վ[5] կերպարանով վերացաւ. զոր օրինակ Եղիա վերացաւ յերկինս, Նոյնպէս և Յիսուս. իսկ Եղիսէ աշակերտն Եղիայի, իբրեւ ետես զի վարդապետն իւր վերանայր յերկինս, աղաղակեաց մեծաւ ձայնիւ. և Եղիա ընկէց զմաշկեակն իւր ի վերայ Եղիսէի. և Եղիսէ եհար զՅորդանան[6] մաշկեկաւն և անց ընդ Նա։ Եւ ասացին որդիք մարգարէիցն. Գուցէ հոհանց ասել Նոցա։ Նիկոդիմոս* ձայնեաց առաջի հրապարակին և ասէ. Ուղիղ ասացէք, ո՞չ գիտէք զժողովուրդ Տեառն. Նոքա պատմեցին երդմամբ զՅիսուսէ՝ զի Նստէր ի լերինն Սաբեղայ և ուսուցանէր՝ զոր լսեցաք ի Նրմանէ. և ասեն տեսաք վերացեալ. և խնդրեցին զերիս աւուրս, և իմացան թէ ճշմարիտ վերացաւ։ Եւ այժմ լսեցէք ինձ

1. Բ. օր. ասէ։
2. Բ. օր. ճշմ։
3. Բ. օր. և։
4. Բ. օր. վերացեալ էր։
5. Բ. օր. Բէ որո՞վ։
6. Յոր. զՅրդանան։

* Յոր. էր՝ Նիկոդիմոս։

Digitized by Google

գին[1] յափշտակեաց զվարդապետն քո, և ընկէց ընդ-նա ի լեառն ուրեք, և ոչ համբարձաւ յերկինս։ Արդ առաքեսցուք յիսուն այր, զի երթեալ խնդրեսցեն զնա[2]. և գնացեալ խնդրեցին զնղիա և ոչ գտին. ապա իմացան թէ ճշմարիտ վերացաւ։

և առաքեսցուք յամենայն լերինս Իսրայեղի լինի յափշտակեցաւ յայսոցն։ Առաքեցին խելագարքն ի խնդրել, և ո՞ւր գտանէին*։

Եւ արդ[3] դուք առաքեցէք ընդ ամենայն լերինս՝ թերևս գտանիցեն զՑիսուս։ Եւ հաճոյ թուեցաւ բանս այս նոցա, և գնացեալ որոնեցին ընդ ամենայն լերինս Իսրայեղի և ոչ գտին զՑիսուս. բայց զՑովսէփ գտին ի գիւղն[4] իւր յԱրիմաթեմ, և ոչ իշխեցին ասել[5] ընդ նմա։ Եւ եկեալ պատմեցին Հրէիցն թէ զՑիսուս ոչ գտաք, բայց զՑովսէփ[6] ի քաղաքն իւր։ Իբրև լուան Հրէայքն վասն Ցովսեփայ, ուրախացան յոյժ[7] և փառս ետուն Աստուծոյ, և գրեցին այսպէս[8]. Խաղաղութիւն ընդ քեզ եղբայր մեր[9] Ցովսէփ. Գիտեմք զի մեղաք Աստուծոյ[10] և քեզ, և դու աղօթս արա առ Աստուածն ամենայնի[11], և արժանի արա զմեզ՝ գալ[12] առ հայր քո և որդիքս[13]։ Քանզի յորժամ բացաք զդուռն և զքեզ անդ ոչ գտաք, տրտմեցաք ամենեքեան. գիտեմք՝ զի խորհեցաք խորհուրդ

1. Բ. օր. հոգին ինչ։
2. Բ. օր. ունի այսպէս. Արդ առաքեսցուք յիսուն այր, և երթեցուք խնդրել զնա։
3. Բ. օր. այժմ։
4. Բ. օր. գաւառն։
5. Բ. օր. յաւելու՝ ինչ։
6. Բ. օր. յաւելու՝ գտաք։
7. Բ. օր. առաքեն եղբն յոյժ։
8. Բ. օր. և գրեցին առ Ցովսէփ այսպէս։
9. Բ. օր. եղբ՝ մեր։
10. Բ. օր. առ Աստուած։
11. Բ. օր. Իսրայէլի։
12. Բ. օր. յաւելու՝ ինձ։
13. Բ. օր. որդւոյ քո։

*. Մինչև ցայս վայր ունէր Գ օրինակն. աստ հանգուցանէ զբանս, այսպիսի ինչ աւարտաբանութեամբ. և Քրիստոսի ամենակալակարողութեանն՝ փառք յմնացելոց և ի սրբոց, ի վերնայնոց և ի ստորնայնոց, ի բոլորաւորեանց, յերկնաւորեանց և յամենայն զօրաւորեանց և յարարածոց եղելոցն ի յաւիտեանս և յաւիտենից։

չար վասն քո, այլ դքեզ Տէր ընկալաւ ըստ կամաց իւրոց, և ցրուեաց զխորհուրդս մեր, ո՜վ հայր պատուական Յովսէփ. ողջ լեր։

Եւ ընտրեցին արս[1] և առաքեցին առ Յովսէփ. և եկեալ առ նա ասեն. Խաղաղութիւն ընդ քեզ և ամենայնի որ ինչ քոյ է։ Ասէ Յովսէփ. Եւ ընդ ձեզ խաղաղութիւն և ժողովրդեան Իսրայելի։ Եւ մատուցին առաջի նորա զթուղթն։ Եւ իբրև ընթերցաւ[2], օրհնեաց զԱստուածն Իսրայելի և ասաց. Օրհնեալ է Տէր որ առաքեաց զհրեշտակ իւր, և ծածկեաց զիս ընդ հովանեաւ թևուց իւրոց[3]։ Եւ ընդ առաւօտն յարուցեալ գնաց ընդ նոսա[4]. և ընկալաւ զնա Նիկոդեմոս ի տանն իւրում, և արար ընդունելութիւն մեծ[5]։ Ասէ Նիկոդեմոս. Տէր Յովսէփ, կամին ժողովուրդս բան ինչ հարցանել ի քէն և ուսանել։ Ասէ Յովսէփ. Պարտ է հարցանել։ Յայնժամ առին Աննա և Կայիափա զօրէնսն, և երդմնեցուցանեն և ասեն[6]. Տուր փառս Աստուծոյ և մատո նմա օրհնութիւն, և մի՛ պահեսցես բան ինչ ի մէնջ։ Ասէ Յովսէփ. Կենդանի է Տէրն՝ որ ոչ պահեմ բան ինչ ի ձէնջ։ Ասեն Հրէայքն. Յոյժ դժուարացաք[7] մեք՝ որ խնդրեցեր զմարմինն Յիսուսի և պատուով եդեր զնա ի գերեզմանի. վասն[8] այնորիկ արգելաք զքեզ ի տանն և փակովք պնդեցաք, և պահապան կացուցաք. և յորժամ բացաք և զքեզ ոչ գտաք, յաւելաւ մեզ տրտմութիւն, և հիացումն անկաւ ի վերայ ժողովրդեանս. արդ պատմեա մեզ զոր ինչ եղև։

Ասէ Յովսէփ. Յուրբաթու մետասան ժամուն ար-

1. Բ. օր. յաւելու՝ Է (Եօթն)։
2. Բ. օր. յաւելու՝ Յովսէփ։
3. Բ. օր. նոց։
4. Բ. օր. յաւելու՝ յԵրուսաղէմ. և ի տեսանելն զնա, ամենեքեան զարմացան և ասեն ընդ նա. Խաղաղութիւն է գալըստեան քում։ Ասէ Յովսէփ. Խաղաղութիւն ընդ ձեզ որդիք Իսրայելի. և համբուրեցին զմիմեանս։
5. Բ. օր. աստանօր ունի և զայս ինչ. Եւ ժողովեցան առ ամենայն Հրէայքն։
6. Բ. օր. երդուեցուցին զՅովսէփ և ասեն։
7. Բ. օր. դժուարեցաք։
8. Բ. օր. վասն որոյ։

Digitized by Google

գելիք զիս անդ, և մնացի ի ներքս զշաբաթ օրն բովանդակ. և ի լուսանալ միաշաբաթին՝ ի մէջ գիշերին՝ մինչ դեռ յաղօթս կայի, կախեցաւ ի չորից անկեանց տանն՝ իբրև զփայլական սաստիկ լուսով[1], և տեսի զՅիսուս առաջի աչաց իմոց[2]. զահի հարայ և անկայ ի վերայ երեսաց իմոց։ Եւ նա բուռն եհար և յարոյց զիս. և խոնաւութիւն ջրոյ անկաւ ի վերայ իմ, և հոտ անուշ դիպաւ ի քիմս իմ, և նա համբուրեաց զիս և ասէ. Մի՛ երկնչիր Յովսէփ, բա՛ց զաչս քո՝ և տես թէ ո՞վ է որ խօսիդ ընդ քեզ։ Եւ իմ հայեցեալ տեսի, և ահա ինքն էր Յիսուս[3], և զահի հարեալ կարծեցի թէ տեսիլ ինչ իցէ։ Եւ նա սկսաւ ուսուցանել ինձ ի պատուիրանաց իւրոց[4]։ Եւ ես ասացի. Ողջաբի Եղիաս[5]։ Եւ նա ասաց. Ոչ եմ Եղիաս։ Եւ ասեմ. Ո՞վ ես դու Տէր։ Եւ նա ասաց. Ես եմ Յիսուս՝ որ զմարմինն իմ խնդրեցեր ի Պիղատոսէ, և սուրբ կտաւօք պատեցեր, և վարշամակ ի վերայ երեսաց իմոց եդեր. և ընդ խօսելն բուռն եհար[6] զձեռանէ իմմէ, և կացոյց զիս արտաքոյ դրանն փակելոյն[7]. և տարեալ եցոյց ինձ զտեղին՝ ուր եդեալ էի զնա։ Եւ տեսի զվարշամակն ծալեալ[8], որ եդեալ էր ի գլուխ նորա՝ զի կայրն անդ, և ապա ծանեայ՝ թէ Յիսուս իցէ։ Եւ առեալ կացոյց զիս ի մէջ տան իմոյ և համբուրեաց զիս, և հանգոյց ի մահիճս իմ, և ասաց[9], թէ՝ Ես երթամ առ եղբարսն իմ ի Գալիլեա։

Իսկ Հրէայքն յորժամ լուան զայս ի Յովսեփայ, ամենեքեան ահիւ մեծաւ ըմբռնեցան, և անկան ի գետնի որպէս զմեռեալս. և Նիկոդեմոս մխիթարէր զգ-

1. Բ. օր. լուսոյ։
2. Յօր. ձերոյ։
3. Բ. օր. դնէ՝ և ահա Յիսուս էր։
4. Բ. օր. դնէ. և նա սկսաւ խօսել ցիս ի պատուիրանացն։
5. Բ. օր. վարդապետ Եղիաս։
6. Բ. օր. աստանօր յաւելու այսպէս. և ձեռն ի վերայ գերեզմանին թաւալեցաւ ցեր. և որ խօսէրն ընդ իս բուռն եհար։
7. Բ. օր. դրանց փակելոցն։
8. Բ. օր. չունի՝ ծալեալ։
9. Բ. օր. յաւելու. մինչև ցքառասուն օր, մի՛ ելանիցես ի տանէ քումմէ. և ես երթամ...։

նոսա և ասէր. Մի՛ տրտմիք և մի՛ զարհուրիք. զի Յիսուս անոխակալ է և անյիշաչար. քաջալերեցարուք և արի՛ք, զի ճաշակեսցուք կերակուր զի զատիկ է և չէ օր տրտմութեան: Եւ նոքա յարուցեալ թախծեալ անձամբ և բեկեալ սրտիւ, գնացին ի տունս իւրեանց[1]: Իսկ հաւատացեալն Յովսէփ և Նիկոդեմոս՝ հետևեցան աշակերտացն Յիսուսի, և մկրտեցան յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ. և քարոզեցին զՔրիստոս[2] Աստուած՝ յարուցեալն ի մեռելոց, և նմա փառք յաւիտեանս. ամէն:

1. Բ. օր. ունի այսպէս. և եկեալ Նիկոդեմոս աղաչէր ըզնոսա և ասէր. Արէ՛ք կացէք ի վերայ ոտից ձերոց, և ճաշակեցէք կերակուր զօրացուցանող, զի զատիկն շաբաթ է և շաբաթ մեծ, և չէ օր տրտմութեան: Եւ յարուցեալ ամաչեցեալ անձամբ և բեկեալ սրտիւ գնացին յիւրաքանչիւր տեղիս:

2. Բ. օր. դնէ՝ քարոզէին ըզՔրիստոս:

# Գ

## ԹՈՒՂԹ ՊԻՂԱՏՈՍԻ

Թուղթ Պիղատոսի դատաւորի, զոր գրեաց յաղագս Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և առաքեաց առ Տիբերոս կայսրն ի Հռոմ։

Ի ժամանակին յայնմիկ, յետ խաչելութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ առ Պոնտացւով Պիղատոսիւ, այն՝ որ ունէր ըղդատաւորական իշխանութիւն Պաղեստինացոց և Փիւնիկեցոց աշխարհին, եղեւ յիշատակարանքս այսոքիկ ի քաղաքին յԵրուսաղեմի. և որ ինչ գործեցաւ ի վերայ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ի ձեռն Հրէիցն՝ զոր ձեռնագրաւ իւրով առաքեաց Պիղատոս, առ կայսրն ի Հռոմ, գրեալ այսպիսի օրինակաւ։

Թուղթ Պիղատոսի[1] դատաւորին առ Տիբերոս[2] կայսրն զոր գրեաց[3]։ Յետ խաչելութեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ։

1. Ն. օր. յաւելու՝ Պոնտացւոյ։
2. Գ. Դ և Ն. օր. Տէբեր։
3. Ն. օր. երեւցեալն Յիսուսէ բն որդւոց խօսիցս։

Ինքնակալ մեծի սեբաստոսիդ, փառաւորի և հզօրի Տիբերիոսի կայսեր, ի Պիղատոսէ՝ որ զարեւելից ունիմ պետութիւն իշխանութեան, խնդալ։

Հարկ եղեւ ինձ ծանուցանել մեծութեանդ քում, վասն որոյ ահ և դողումն անկաւ ի վերայ իմ, ո՜վ ինքնակալ, յաղակս իրացս այսոցիկ, որում ես ինքնին եղէ ականատես, որ ինչ գործեցաւ ի ժամանակին յայնմիկ։ Քանզի դժնդակ իրք պատահեալ՝ զոր և զնոսին պատմեմ քեզ, և աղաչեմ ընդունել զկատարումն և զյայտնութիւն բանիս։

Քանզի յաշխարհիս յայսմիկ, որ ընդ իմով իշխանութեամբ է, է քաղաք մի որ անուանեալ կոչի Երուսաղէմ, ուր և ամենայն բազմու-

Ինքնակալդ սեբաստիայ փառաւորի և մեծի[1] հզօրի Տիբերեայ կայսեր, ի Պիղատոսէ դատաւորէ արեւելից կողմանց Պաղեստինեայ ի Փիւնեկոյ, խընդալ[2]։

Հարկ եղեւ ինձ գրել առ մեծութիւնդ քո զիրս զայս ուստի անկաւ ահ ի վերայ իմ դժնդակ պատահման[3], որում ականատես եղէ ես։

Քանզի է քաղաք մի յիշխանութեանս իմում, որ կոչի Երուսաղէմ, ուր ամենայն բազմութիւնք Հրէից են ժողովեալ[4], ետուն ի

1. Գ. Դ և Ե օր. չունին մեծի։
2. Գ և Դ. օր. դատաւորէ Պաղեստինեայ ի Փիւնիկոյ, խնդալ. իսկ Ե. օր. դատաւորէ արեւելից կողմանս Պաղեստինեայ ի Փիւնիկոյ, արքայ, խնդալ։
3. Գ և Դ. օր. զնեն՝ ի դժնդակ պատահմանէս. իսկ Ե. օր. որ անկաւ, եւայլն։
4. Ե. օր. ժողովեալ էին աստ։

թիւն Հրէից անդ ժողո-
վեալ, ետուն ի ձեռս իմ
զայր մի՝ որ անուանեալ
կոչէր Յիսուս. վասն որոյ
պատուէր ունէին հարքն
նոցա, թէ՝ առաքէ առ
նոսա Աստուած զսուրբն
իւր յերկնից՝ որ և թա-
գաւորնոցա կոչեսցի. զսա
խոստացեալ ի ձեռն կուսի
յերկիր առաքել: Սա ապա
յիմում դատաւորութեանս
եկն ի Հրէաստան, և բա-
զում նշանս սքանչելեաց
արարեալ՝ զոր և պատմեմ
քեզ. իսկ քահանայա-
պետքն նախանձ ընդդէմ
շարժեալ, կալան զնա և
ինձ մատնեցին զնա, և
այլ ընդ այլոյ ասէին մո-
մոլորեցուցիչ զնա, և ընդ-
դէմ օրինացն նմա գոր-
ծեալ. և բազում իրս ար-
ժանի մահու ասելով ըզ-
նմանէ՝ զոր և ոչ միով բա-
նիւ իւիք կարացին զնա
յանդիմանել:

Որ և մի ի հերձուածոցն
այս է, եթէ զշաբաթս ոչ

ձեռս իմ զայր մի՝ ուրում
անուն էր Յիսուս[1]. վասն
որոյ աւետիս ունէին հարք
նոցա, եթէ՝ առաքէ Աս-
տուած զսուրբն յերկնից,
որ և թագաւոր կոչեսցի[2].
զսա խոստացեալ էր ի ձեռն
կուսին յերկիր առաքեալ,
որ յիմում դատաւորու-
թեանս՝ ի Հրէաստանի՝ բա-
զում սքանչելիս արար,
զոր պատմեմ քեզ[3]:

Քանզի մի ի հերձուա-
ծոցն՝ զոր դնէին ի վերայ

1. Գ և Դ. օր. չունին սա-
տի մինչև ցՀրէաստանի:
2. Ե. օր. յաւելու Իսրայելի,
և յարէ այսպէս. զոր խոստացեալ
Աստուածն յերկնից է յետն...:
3. Գ և Դ օր. չունին սատի
ինչև՝ այլ նա ասէ, լուծանէր:
Տես յէջ 362:

*պահէ՝ զոր յոյժ խտիրս համարէին նոքա. այլ նա յաւուր շաբաթու բազում բժշկութիւնս կատարէր, կուրաց տեսանել տայր, զկաղսն գնացուցանէր, ըզմեռեալս յարուցանէր, ըզբորոտսն սրբէր, զանդամալոյծս բժշկէր, զորս ոչ բնաւ ունէին կարողութիւն շարժիլ յանդամոց իւրեանց՝ բայց միայն բարբառոց նոցա լսելի լինել, կամ իբրև զտեսիլ մարմնոյ ինչ երևեալ նոցա, նա տայր զօրութիւն նոնա գնալ և ընթանալ վաղվաղակի. և զայս ամենայն բանիւ բժշկէր, և դարձուցանէր հիւանդս ի տըկարութենէ իւրեանց. որ և այլ զօրաւոր ինչ գործեաց, զոր ոչ ոք կարող է առնել ի չաստուածոցն մերոց. քանզի զայր ոմն օտար, մեռեալ չորեքօրեայ՝ բանիւ միայն յարոյց ի մեռելոց, կոչելով զանունն նորա՝ այն էր, զի ասէին[1] թէ զշաբաթս ոչ պահէ՝ զոր յոյժ մեծարեն սոքա. այլ նա այնու լուծանէր՝ զի զանդամալոյծն առողջացուցանէր, զկոյրս լուսաւորէր, զկաղս գնացուցանէր, խլից լսել տայր և համերց խօսել, այլ և ըզմեռեալս յարուցանէր նա.*

*և[2] զայր մի մեռեալ հոտեալ[3], զկնի չորից աւուրց յանուանէ կոչեաց ի գե-*

1. Ն. օր. չունի զէ ասէին:
2. Ն. օր. այլ և զմեռեալն հոտեալ և նեխեալ՝ զկնի չորից աւուրց յանուանէ կոչեաց զնա ի գերեզմանէն ըստ առողջութեամբ և ամենայն անարատութեամբ, չէրօքն. իսկ Գ և Դ. օր. չունին աստ մինչև (որ) եր էբրև աւուրց եօթանց ճանապարհ: Տես յէջ 364:
3. Ցօր. հոտեալ:

մեռելոյն, որ և մարմինն յորդանց ապականեալ էր և լցեալ առ հասարակ ժանդահոտութեամբ. հրամայէր նմա ընթանալ իբրև աւուրց եւթեանց։

րեզմանէն՝ առողջութեամբ և ամենայն անուշահոտութեամբ, իբրև փեսայ որ ելանէ յառագաստէ իւրմէ, ձեռօքն կապելովք և ոտօքն երիզապնդօք, և երեսօքն վարշամակապատօքն արտաքս եհան ի գերեզմանէն կենդանի։ Եւ զոմանս այսահարս յանապատ տեղիս շրջելով՝ ուտելով զմարմինս իւրեանց՝ ողջացուցեալ բնակիչս քաղաքաց կացուցանէր[1], զօրաւորս և փառաւորս և հաւատարս ի գործ և ի կերակուրս ընդ այլս[2]։ Իսկ զդեւս պեղծս զբնակեալսն ի նոսա[3], յանդունդս առաքէր. և զայր ոմն որ մի կողմն գօսացեալ էր՝ և ոչ գոյր ի նմա նմանութիւն մարդոյ ամենեւին, բանիւ միայն[4] ողջացուցեալ՝ գեղեցիկս ցուցանէր։ Նաեւ կին ոմն արիւնարբուղխ, որոյ ցամաքեալ էր մարմինն և երակք[5], և ան-

1. Ն. օր. յաւելու՝ զոր բանի-միայն համբարձուցանէր։
2. Ն. օր. յաւելու և զայս բնչ. և ի խօսելն զբռնացայց՝ ամենեքեան զգետս երկրպագանէին։
3. Ն. օր. յաւելու՝ զխոր ծովուն։
4. Ն. օր. չունի միայն։
5. Ն. օր. երակք անդին։

կեալ կայր իբրեւ զմեռեալ, զոր բժիշկք[1] աշխարհիս այսրիկ ոչ կարացին բժշկել, քանզի ոչ գոյր[2] ի նմա կենդանութիւն. յորոյ տունն խորհրդեամբ երթեալ Տէրն[3] Յիսուս, և բազում ժողովուրդք զկնի Նորա[4]. և Նորա սակաւ մի շարժեալ զինքն՝ բուռն եհար զհանդերձէ Նորա[5], և այնպէս ողջացեալ կանգնեցաւ որպէս թէ բնաւ չիցէ վտանգեալ[6]. որ իբրեւ զթըշունս երագաթեւս երթայր ի քաղաքն իւր Կափառնաում, (որ) էր[7] իբրեւ աւուրց եօթեանց՝ ճանապարհ։

Զայս[8] ամենայն գործէր Նա ի չաբաթու, և այլ բազում ինչ նշան գոր-

Զայս ամենայն ի մտի ունելով ծանուցի ձեզ, յաղակս այնր՝ զոր ի չաբա-

1. Յոր. բժշկէ, իսկ Ե. օր. բազում բժշկէ ոչ կարացին...։
2. Ե. օր. ոչ կայր կենդանութիւն։
3. Ե. օր. չունի Տէրն։
4. Ե. օր. զհետ նորա. և Նա։
5. Ե. օր. Յիսուսի։
6. Յոր. վտարանդեալ։
7. Ե. օր. որ էր եօթն աւուր ճանապարհ։
8. Ե. օր. զայսպիսի սքանչելիս առնէր Նա. իսկ Գ և Դ գնեն. և զբժշկումն ի մարդկանէ հալածէր, և այլ բազում նշանս և արուեստս արար և սքանչելիս գործելով՝ զոր ոչ է լսեալ մարդոյ յաշխարհի։

Թու կատարեաց Յիսուս, առաւել քան զչաստուածսըն մեր զոր պաշտեմք. եւս բազում նշանս սքանչելեաց զորս գործեաց գրեաթէ[1] վերագոյն իցէ գործեցեալ սքանչելիքս ի Նըմանէ։

Զսա զոր պատմեցի, Հերովդէս և Արքեղայոս և Փիլիպպոս, Աննա և Կայիափայ, մատնեցին ի ձեռս իմ, հանդերձ միաբանութեամբ ամենայն ժողովրըդեանն Հրէից. և յաղագս ոչ կամելոյ իմ հանել զնա ի խաչ, բազում ժխորումն և աղաղակ արարեալ ի վերայ իմ, մինչեւ հրամայեցի ի խաչ հանել ըզնա. բայց նախ քննեալ ստուգութեամբ, ոչ ինչ պատճառս գտի ի վերայ նորա՝ յամենայն չարեացն և մեղանացն՝ զոր ինչ պատմեցին վասն նորա։

Իսկ նա իբրեւ խաչեցաւ, խաւար կալաւ զամենայն տիեզերս ի մէջօրէի. արեգակն խաւարե-

1 - Օրինակն մաշեալ էր. ուստի իմաստ բանիդ մնայ մթին։

ծեաց նա, զոր ոչ էր գործեալ կամ լուեալ մարդոյ յաշխարհի։

Զնա Հերովդէս և Արքեղայոս, Փիլիպպոս, Աննա և Կայիափա մատնեցին ի ձեռս իմ. իբրեւ ոչ կամեցայ խաչել զնա, բազում ժխորումն և աղաղակ արարին ի վերայ իմ. և յոլով արարեալ քննութիւնն, ոչ ինչ վնաս գտի[1] ի նմա. բայց զի և ոչ կարացի հաւանեցուցանել զնոսա, առեալ տարան խաչեցին զնա։

Եւ ահա[2] խաւար կալաւ զամենայն տիեզերս ի մէջօրէի, զի արեգակն և լուսինն և աստեղք մթացան, որ բնաւ ոչ գոյր ի նոսա ճաճանչ[3] լուսոյ[4]. և

1. Յօր. գտան, Ե. օր. գտին։
2. Գ. օր. չունի ահա։
3. Յօր. ճաճանճ. Գ և Դ. օր. չունին։
4. Ե. օր. աստ յաւելու վասն զի ամսոյ լուսաւորութեանն էր, և լուսինն ի ներքին կիսագնդին էր, և հինգ կենդանակերպն բնացեալ էր. և է

ցաւ, և լուսինն ի բաց ետ զլոյս իւր, և հաստակառոյց հիմունք երկրի՝ դողացեալ շարժեցաւ, և տեղին՝ զոր ունէին ինքեանք՝ տաճար սրբութեան, վարագուր նորա պատառեցաւ, և երկիր որոտմամբ հանդերձեալ ի բաց Թեայր, տեսանելով անդունդք դողացեալ պատառեցան ի յահէ փառաց նորա. և[1] յարեան մեռեալք, որպէս և[2] ինքեանք իսկ Հրէայքն վկայեցին, եթէ ահաւասիկ[3] տեսաք զԱբրահամ և զԻսահակ և զՅակոբ հանդերձ երկոտասան նահապետօքն[4], և այլ եւս բազմութիւնք[5]

կոյս կենդանակերպ մտեալ: Եւ յորժամ Յիսուս խաչեցաւ, եր օրն ուրբաթ և ժամն վեցերորդ ի հասարակել աւուրն. և զի խորհրդայինն էր եղանակն և արեգակն ի խոյն էր, և խոյն ի վերին կիսագնդին, և կոյսն ի ներքին կիսագնդին, յորում էր լուսինն. և անդի դարձեալ յղեալ զհետ կենդանակերպն՝ և եկեալ եմուտ ի խոյն. և անցեալ ի ներքոյ արեգակնն, խաւարեցոյց զնա: Այլ և երկիր շարժեցաւ և վէմք պատառեցան ի դողմանէ անդնդոց, որ յահէ փառաց Յիսուսի:

1. Գ. և Դ. օր. և բազում մեռեալք. իսկ Ե. օր. յարեան մեռեալք ի գերեզմանաց:

2. Գ և Դ. օր. չունին ինքեանք իսկ:

3. Ե. օր. չունի ահաւասիկ:

4. Գ. օր. զնէ՝ զՅակոբ երկոտասան նահապետացն. իսկ Դ. օր. զՅակոբ և զերկոտասան նահապետսն:

5. Ե. օր. յաւելու՝ բազմաթեամբ մարգարէիւք իւրեանց, զոր և քրիստոնէք իսկ գիտեն և ճանաչեն զնոսա. քան զի երկնից ժամանակաց յարեան մեռեալքն ի հնոյն հետէ, յԱբրահամու և ի մարգարէից, և յայտնեցան՝ զոր քն-

Digitized by Google

զաՀեղութիւն փառաց նո-
րա, և մեռեալք յարեան,
որպէս և ինքեանք իսկ
Հրէայքն վկայեցին, թէ՝
աՀաւասիկ տեսաք զԱբրա-
Համ և զԻսաՀակ և զՅա-
կոբ Հանդերձ երկոտասան
նաՀապետօքն: Բազում և
այլս զոր ես իսկ տեսի յա-
րուցեալ մարմնով ի մե-
ռելոց, որք զաղաղակ բար-
ձեալ լային յոյժ յաղագս
անօրէնութեանն և չար գոր-
ծոց նոցա զոր արարին,
և վասն մեծի կորստեանն
Հրէից և անիրաւ օրինաց
նոցա:

Եւ մնայր երկիւղ շարժ-
մանն այն՝ վեց ժամէ ա-
ւուրն մինչև ցիննն ժամ:
Եւ իբրև երեկոյ եղեւ՝
միաշաբաթին՝ թնդիւն ե-
ղեալ յերկնից, պայծա-
ռագոյն երեւցան երկինք
եւթնպատիկ քան զամե-

յոյժ, զոր և ես իսկ տե-
սի՝ յարուցեալս ի մեռե-
լոց, որք և լային իսկ յա-
ղագս չար գործոց և անօ-
րէնութեանց նոցա[1]:

Եւ մնայր երկիւղ[2] շարժ-
մանն՝ ի վեց ժամէ ա-
ւուրն մինչև ցիննն ժամն.
և ի խաչէն իջուցեալ՝ թա-
ղեցին զնա և մատանեաւն
իւրեանց կնքեցին զգերեզ-
մանն: Եւ տուն ես զի-
նուորս[3] պաՀապանս գե-

տեսանէ Բաղեսու ևս յընտանեաց
իւրեանց և յազգականաց. յամանց
ես իսկ Պիղատոս տեսի յարուցեալ:

1. Ե. օր. զնէ Հրէիցն որ խա-
չեցին զնա:

2. Ե. օր. ծնոց առ:

3. Գ և Դ. օր. չունին զի-
նուորս. իսկ Ե. օր. ունի այս-
պէս. և եկեալ խնդրեցին յինէն
զօրականս, և ես ետու զզինուորս
պաՀապան գերեզմանին՝ զոր ին-
քեանք կամէին. և զզինուորսն եկեալ
է փողոտացն առատօրէն, այս-

նայն աւուրս, և յերրորդ ժամու գիշերոյն՝ երեւե-ցաւ արեգակն.....[1] ուր երբեք տեսեալ էր ի գիշե-րի լոյս պայծառ առաւել քան զամենայն լուսաւորս, և իբրեւ զաստեղս. որք երեւին յաւուրս ձմերայ-նոյ. այսպէս երեւեցան արք փառաւորագոյնք լու-սապայծառ սգեստիւք, անթիւ բազմութիւնք յոյժ, որոց և ձայն նոցա լսելի լինէր առ ամենեսեան. որք աղաղակէին գոչելով ի ձայն մեծ և ասէին. Յի-սուս խաչեցեալն յարեաւ ի մեռելոց, ելէք ի դժո-րեզմանին, և նոքա այս-պէս ասացին։ Իբրեւ գայր երեկոյ շաբաթուն, յորում լուսանայր միաշաբաթն, թընդիւն եղեւ[1] յերկնից, և երկիրս պայծառացաւ եւթնապատիկ լուսով քան զարեգական[2] աւուրսն. և յերրորդ ժամու գիշերոյն[3] երեւեցան պայծառ լուսով անթիւ բազմութիւնք որք աղաղակէին գոչելով. Յի-սուս Քրիստոս խաչեալ[4] Աս-տուած, յարեաւ Տէր մեր ի մեռելոց, ելէք ի դժոխոցդ որք ըմբռնեալ էք ի ծա-ռայութիւն մահու բանս-արկուին[5] ի խորս ան-

1. Ցոր. եղծեալ էր բառ մի, գուցէ՝ ող [illegible]։

դեռ տասցէն, թէ յերեկոյէ շաբա-թուն՝ յորում միաշաբաթին լու-սանայր։

1. Գ և Դ. օր. եղեալ։
2. Գ և Դ. օր. [illegible] [illegible]. իսկ Ե. օր. չունի ա-[illegible]։
3. Ե. օր. և ի հասանել գի-շերոյն։
4. Գ. Դ և Ե. օր. ունին. Խաչեցեալն (Դ. օր. Թաղեցեալ) Աս-տուած մեր յարեաւ ի մեռելոց։
5. Ե. օր. ասէ մինչև՝ պատ-մեցի ընթերցանութեանդ [illegible]. ո[illegible] ունի այսպէս. արէք ի խո-րոցդ անդնդոց ի բարձունս երկ-նից. արէք, և այլ մի՛ յամէք ի խորս դժոխոցդ. որ կապեալ էք, ելէք, և որք ի խաւարի էք, ելէք և յայտնեցարուք. զի խաչեցեալն Քրիստոս յարեաւ ի մեռելոց և [illegible] յերկինս հրաւէ-

խոց որք ըմբռնեալք էիք ի ծառայութիւն բանսարկուին ի խորս անդնդոց։ Եւ այնպէս միայր պատառուած երկրին՝ որպէս թէ իսկզբանէ լեալ իցէ․ քանզի երեւեցան ամենայն հիմունք աշխարհի։ Իսկ

դընդոց։ Եւ այնպէս բանայր զպատառուած երկրին, որպէս թէ՝ ոչ լեալ իցէ ի սկզբանէ․ քանզի երեւեցան ամենայն հիմունք աշխարհի։ Իսկ զկնի աղաղակելոյ Նոցա և շարժելոյն ի մէջի յարուցե-

րեաց. և յաՀագին շարժմանէն և ի Նոցա ձայնէն այնպէս բանայր զպատառուած երկրին, քանզի երեւեցան հիմունք աշխարհի։ Իսկ զկնի աղաղակելոյն լուսաւոր արանցն, և յարուցեալն ի մեռելոց երեւէր ի մէջի Նոցա. և արդ Տեառն Յիսուսի [illegible] ասելով Արի՛ Ադամ և կանգնեաց ի մեռելոց. արի՛ որ ննջեալդ ի խաւարի որ լուսաւորեաց [illegible] լոյս իմ. արի և զօրացիր որ Նստիս ի խաւարի. արի՛ և զգեցիր զանմահութիւն որ ի սատանայէ մահու Նստեցեր. արի և [illegible], որ [illegible] կայիր յաւիտենականութեան (*) որդե- [illegible]. և զայս ասացեալ վերացաւ յերկինս։ Բայց [illegible] լուսաւոր արանցն [illegible] ի Բարեկամաց իմոց [illegible] ի [illegible], [illegible] Նոցա [illegible] իմոց, զի [illegible] ի [illegible] և [illegible] զայս [illegible], և [illegible] յերկինս։ Եւ [illegible] ամենայն [illegible] լոյսն [illegible]. և [illegible] ի Հրեից [illegible] ի պատառուած երկրին՝ [illegible], [illegible] ի [illegible] ոչ [illegible]։ Եւ զայս ամենայն [illegible] ի [illegible] (այլ) ի [illegible]՝ [illegible], և [illegible] [illegible] [illegible] այլ մեր։



Digitized by Google

յետ աղաղակի նոցա յերկնից, և շրջելոյ նոցա մարմնով ի մէջ յարուցելոցն՝ զոր յարոյց ի մեռելոց, և ի կնքել նորա զդժոխս; ասէ ցնոսա. Ասացէք աշակերտացն նորա, թէ յառաջանայ քան զձեզ ի Գալիլեայ, անդ տեսանիցէք զնա:

Եւ զգիշերն ամենայն ոչ շիջաւ լոյսն անճառելի, և բազումք ի Հրէիցն անկեալ մեռանէին ի պատառուած երկրին՝ որ բացաւ ի ժամուն յայնմիկ, զորս ի վաղուեան աւուրն խնդրէին և ոչ գտանէին, այնք՝ որք հակառակ կային Յիսուսի: Տեսանէի՝ զի յաներեւութից յառնէին զորս ոչ երբեք էր տեսեալ: Եւ ազգ մի միանգամայն՝ որ եղեւ մնացեալ ի ժողովրդեանն Հրէից՝ որք էին յԵրուսաղէմ. իսկ այլք բազումք՝ անկեալ կորեան ի վիհն կորստեան: Արդ յերկիղէն յայնմանէ և ի սքանչելեացն զոր տեսի ի ժամուն յայնմիկ, ի զարմացման եղեալ, գրով ծանուցի ինքնակալութեանդ քում կարգաւ մի ըստ միոջէ որ ինչ եղեւ ի Հրէիցն ի վերայ Յիսուսի. և պատմեցի ստուգութեամբ, առաքելով առաջի տէրութեանդ քո. ողջ լեր:

լոցն ի մեռելոց, կնքեալ Տեառն Յիսուսի զդժոխսն, ասէ ցնոսա. Երթայք ասացէք աշակերտաց իմոց, զի ի Գալիլեայ եկեսցեն և տեսցեն զիս:

Եւ զգիշերն ամենայն ոչ շիջաւ լոյսն, և բազմութիւնք Հրէից անկեալ ի պատառուածն և կորեան, զորս ի վաղիւն խնդրեալ՝ ոչ գտին: Եւ զայս ամենայն՝ ստուգութեամբ ի յահէ սքանչելի տեսլեանն պատմեցի ինքնակալութեանդ քում. ողջ լեր:

Digitized by Google

Եւ իբրեւ հասաւ հրովարտակս այս ի քաղաքն Հռոմայեցւոց, և ընթերցեալ եղեւ առաջի կայսերն, ոչ սակաւուց լինելոյ անդ ի մեծամեծացն Հռոմայեցւոց, ամենեցուն ի զարմացման եղեալ յոյժ՝ ասէին. Թէ յաղագս անօրէնութեանն Պիղատոսի եղեւ խաւարս այս և շարժումնս ընդ ամենայն տիեզերս: Եւ կայսրն բարկացեալ յոյժ, առաքեաց զինուորս ըմբռնել զՊիղատոս, և կապանօք ածել առաջի իւր. իսկ զինուորացն երթեալ բերին զնա ի Հռոմ: Եւ իբրեւ լսելի եղեւ կայսերն՝ գալուստն Պիղատոսի, նստեալ ի տաճարի կռոցն, հանդերձ ամենայն սնկղիտոսօքն և մեծամեծօքն Հռոմայեցւոց և ամենայն զօրօք զինուորացն, և բազմութեամբ խորհրդականացն. և հրամայեաց կացուցանել զՊիղատոս առաջի, և ասէ ցնա. Ընդէ՞ր համարձակեցար գործել այդպիսի իրս յայրն յայն, ո՛վ երիցս թշուառական; և առնել

Իբրեւ եհաս հրովարտակն ի Հռոմ, և ընթերցան առաջի կայսերն, լինելով ընդ նմա բազում ի մեծամեծաց իւրոց. իբրեւ լուան, հիացան և զարմացան. զահի հարան և երկեան յոյժ և ասեն. Ուրեմն չարութիւն Պիղատոսի արար զխաւարն զայն և զշարժումն ամենայն տիեզերաց: Եւ բարկացեալ կայսրն, առաքեաց զինուորս և ետ ածել կապանօք զՊիղատոս ի Հռոմ: Եւ նստեալ կայսրն ի տաճարի կռոցն, սինկղիտոսօքն և ամենայն մեծամեծօքն, և ետ ածել զՊիղատոս առաջի իւր և ասէ ցնա. Երիցս թշուառական, ընդէ՞ր իշխեցեր և յանդգնեցար գործել զայնպիսի իրս յայրն յայն՝ յորդին Աստուծոյ, կորուսանել կամէ(ի)ր զամենայն տիեզերս[1]: Ասէ Պիղատոս. Ո՛վ ինքնակալ, անպարտ եմ ես յարենէ նորա, այլ նախարարքն[2] Հրէից և ամենայն ժողովուրդն եղեն դատապարտողք նորա: Ասէ կայսրն. Ո՞յք են

1. Գ և Դ օր. արարածս:
2. Յօր. Նախահարք, ուղղեցաք ըստ Գ. Դ և Ե օրինակաց:

այսպիսի չարիս և կորուսանել զամենայն տիեզերս։ Եւ Պիղատոսի պատասխանի տուեալ ասէ. Ո՞վ թագաւոր ինքնակալ, անպարտ եմ ես յիրացդ յայդմանէ, այլ Նախարարք և բազմութիւն ժողովրդեանն Հրէից եղեն դատապարտողք Նորա։ Եւ ասէ կայսրն. Եւ ո՞ք էին Նոքա։ Պատասխանի ետ Պիղատոս և ասէ. Հերովդէս և Արքեղայոս և Փիլիպոս, Աննա և Կայիափայ և բազմութիւն ժողովրդեանն և քահանայք։ Եւ կայսրն ասէ. Պարտ էր քեզ պահել զնա զգուշութեամբ, յորժամ ետուն ի ի ձեռս քո, և գրել ծանուցանել մեզ զնմանէ, և ոչ հաւանել կամաց Նոցա, և հանել ի խաչ զայնպիսի այր. արդար, որ այդպիսի բարի Նշանս իցէ գործեալ, որպէս և գրեցեր ի Նամակին քում. եթէ կամաւ իւրով հանդերձեալ էր ելանել ի խաչ, սա ինքն Քրիստոս՝ որ թագաւոր էր Հրէիցն։

Եւ իբրև զայս ասաց

զոր ասեսդ։ Ասէ Պիղատոս. Հերովդէս և Փիլիպպոս, Աննա և Կայիափա և այլ ժողովուրդն ամենայն։ Ասէ կայսրն. Զի՞րդ [1] լըսող եղեր Նոցա։ Ասէ Պիղատոս. Լիրբ են և անհնազանդ իշխանացն ազգըն Հրէից։ Կայսրն ասէ. Պարտ էր քեզ պահել ըզգուշութեամբ զայնպիսի փրկիչն աշխարհի, թէ կամաւ իւրով եկեալ էր ի խաչիլ, և Նա ինքն էր թագաւոր Հրէից՝ Քրիստոս։

Եւ[2] իբրև յիշեաց կայսրն

1. Ե. օր. ունի՝ Եւ դաղի՞րդ։
2. Ե. օր. զՆէ՝ յորժամ լսէր։

կայսրն՝ և յիշեաց զանունն Քրիստոսի, նոյնժամայն ամենայն բազմութիւն կըռոցն և պատկերք աստուածոցն անկեալ կործանեցան և փշրեցան առհասարակ. և ամենայն ժողովուրդն ի յահէն եղեն իբրև զմեռեալսն. և կայսրըն հանդերձ ամենայն սնկղիտոսօքն և ամենայն խորհրդականօքն պակուցեալ ի տեղոջն՝ յորում կային, և այլ ամբոխ բազմութեանն որ կային առաջի կայսերն՝ հանդերձ ամենայն զինուորօքն, ի դողման մեծի եղեալ ի վերայ բանիցն ասացելոց և կորըստեան չաստուածոցն: Իսկ կայսրն հրամայեաց պահել զՊիղատոս զգուշութեամբ, մինչև քննեսցի ստու(գու)թեամբ վասն Յիսուսի:

Եւ ի վաղորդեան աւուրն, նստեալ յատենի՝ հանդերձ ամենայն սնկղիտոսօքն և խորհրդականօքն, սկսաւ հարցանել դարձեալ զՊիղատոս և ասէ. Ասա ինձ զճշմարիտն, ո՞վ երիցս Թշուառական՝

զանունն Քրիստոսի. ամենայն կուռքն անկեալ կործանեցան[1] և եղեն մանր իբրև զփոշի: Եւ կայսրն և ամենայն բազմութիւնն պակեան ահիւ և յարուցեալ դողալով փախեան ի տեղոջէն:

Եւ ի վաղիւն ուշաբերեալ և արարեալ հանդէս, նըստաւ ի Կապետոնիոնն[2]. և ետ ածել զՊիղատոս առաջի, և ասէ. Եղկելի անձն, ահաւասիկ վասն չարեաց քոց կործանեցան դիքն մեր:

1. Գ. օր. յաւելու՝ որ+ էին ի տաճարին:

2. Գ. օր. Կապիտոլիոնն, Դ. օր. Կապիտոլոնն, իսկ. Ե. օր. Կապիտոլին:

Digitized by Google

վասն քոյոյ ամբարշտութեանդ և չար գործոցդ զոր գործեցեր և համարձակեցար ի վերայ Յիսուսի. յայտնի եղեւ աստանօր[1] անօրէնութիւն չարեաց քոց կորստեամբ՝ և կործանմամբ աստուածոցն մերոց։

Արդ ասացես մեզ ստուգութեամբ, թէ՝ ո՞վ իցէ խաչեալն այն որոյ անուամբն միայն կործանեալ կորոյս զաստուածսն մեր ամենայն։ Ասէ Պիղատոս. Գիտես ո՞վ թագաւոր, զի յիշատակարանքն որ վասն նորա՝ ճշմարիտ է, որում և ես իսկ հաւանեցայ ի աքանչելի գործս նորա, եթէ՝ պատուականագոյն և մեծագոյն է քան զաստուածոցն մերոց։ Կայսրն ասէ. Զիա՞րդ, և որպիսի՞

Արդ ասասցես մեզ, ո՞վ էր ահաւորն՝ որոյ անուամբն կործանեաց զչաստուածսն։ Ասէ Պիղատոս. Ճշմարիտ յիշատակարան նորա գրեալ է[1] ի մարգարէսն Հրէից, թէ՝ ոչ ոք է նման նմա յաստուածսն հեթանոսաց[2]. որում և ես իսկ հաւանեցայ աքանչելեացն զոր տեսի և լուայ։ Եւ ասէ կայսրն. Եւ դու զիա՞րդ ածեր ի վերայ նորա զչարչարանսն[3] որ այդպէս ասես զնմանէ. ո՞չ

1. Յօր. աստանօր գոն այլ եւս կրկին տողք յետոյ ուրեմն մուծեալք, յորս բառք ինչ եղծեալ գոլով իմաստ բանիդ մնայ մթին. այսպէս՝ Երկիր լուր Խորհրդոյ նորա։ Պատասխանի ետ Պիղատոս և ասէ... Նորա և ոչ Երբէք հնազանդքին հրամանաց։

1. Գ և Դ օր. զնեն. Ասէ Պիղատոս. Ճշմարիտ որդի Աստուծոյ էր նա, զի երեւալ է. ։

2. Գ և Դ օրինակք աստանօր ունին այսպէս. Եւ էբրև զայս ասաց Պիղատոս, է նմին ժամանակում յաստուածոց և ահեղածոյ՝ որ կէն է ծագումն երկրաւորացն, արարչացն. և կրկին հեթանոսաց խաւար գործներեան։ Եւ ասէ կայսրն. Անօգուտ հրաշալի և հրաշագործ էր Յիսուսն այն՝ որոյ անուամբն զաստուածսն աւերածս որպէս. և դաս։

3. Գ և Դ օր. ասէ մինչև՝ Ասէ Պիղատոս չունի։

օրինակաւ ածեր ի վերայ նորա զայսպիսի գործս չարչարանաց, որ այդպէս դու ինքնին վկայես. ո՞չ ապաքէն յաղագս հակառակութեան և թագաւորութեան իմոյ արարեր զայդ։ Պատասխանի ետ Պիղատոս և ասէ. Ո՛չ այդպէս, թագաւոր. այլ յաղագս անօրէնութեան և հակառակութեան անաստուածիցն և անօրէն Հրէիցն գործեցի զայդ։

Եւ կայսրն լցեալ բարկութեամբ, խորհուրդ արարեալ ընդ սնկղիտոսացըն և ընդ խորհրդականսն և ընդ բազմութիւն ամենայն ժողովրդեանն Հռոմայեցւոց, հրամայեաց գրել հրովարտակ, յաղագս անօրինացն Հրէից, այսպիսի օրինակաւ.

Լիկկիանոսի նախարարի կողմանց արեւելից աշխարհի, խնդալ։

Ծանուցանեմ ձեզ, զոր ինչ ի ժամանակս յայս գործեցաւ համարձակութիւն բնաչացդ Երուսաղեմի և բնակչաց մերձակայ քաղաքացդ Հրէից. մանաւանդ անօրէնութեան, զոր գործեցին ի վերայ Յիսու-

ապաքէն յաղագս հակառակութեան թագաւորութեանս իմոյ, որպէս գրեաց առ իս արքայն Հայոց[1] մի անգամ և երկիցս, վասն չարութեանդ քո։ Ասէ Պիղատոս. Արքայ քաջ, ո՛չ այդպէս է, տէր իմ կայսր, այլ յաղագս անիծից և անօրէն ազգին Հրէից, զի նենգեցին ինձ։

Սրտմտեալ կայսրն, և գրեաց հանդերձ սինկղիտոսօքն և ամենայն մեծամեծօքն Հռոմայեցւոց, վասն կատաղեալ ազգին Հրէից այսպէս.

Լիկկիանոսի նախարարի կողմանցդ արեւելից, խընդալ։

Ծանիցես զյանդգնութիւնդ Երուսաղեմի, զոր ինչ արարին անօրէնութիւն ի վերայ Տեառն Յիսուսի որդոյն Աստուծոյ, այն՝ որ ի Պիղատոսէ դատապարտեալ եղ ի խաչ. որ յաղագս անիրաւ չար-

1. Ե. օր. յաւելու՝ Աբգար։

սի՝ որ անուանեալ կոչէր որդի Աստուծոյ, այն՝ որ ի Գիղատոսէ ամբարշտէ դատապարտեալ, եւ ի խաչ որ յաղագս անիրաւ չարչարանացն՝ խաւար կալաւ զամենայն տիեզերս, մինչեւ մերձ լինել ի կորնչել։

Արդ վասն այսորիկ կամ լիցի քեզ, հրամանաւ մերով փութանակի երթիցես ի կողմանս յայնոսիկ, հանդերձ ամենայն զօրօքդ, եւ առցես ի գերութիւն զամենայն բնակիչս նոցա. եւ հրամանաւ այսուիկ՝ հընազանդեցուցեալ ածցես ի վերայ նոցա պամենայն վրէժս եւ նեղութիւնս՝ ըստ արժանեաց իւրեանց. եւ ցրուեսցես զազգս նոցա ընդ ամենայն հեթանոսս լինել ի ծառայութիւն, հալածական առնել զնոսա, զի մի երեւեսցին ի վերայ երկրի. քանզի լի են նոքա բազում չարութեամբ։

Եւ իբրեւ եհաս հրովարտակս այս, ի կողմանս

չարանացն խաւար կալաւ զամենայն ծագս տիեզերաց[1], մինչեւ մերձ ի կորընչել։

Արդ, կամ լիցի[2] քեզ, խմով հրամանաւս երթիցես ամենայն զօրօքդ ի կողմանսդ այդոքիկ, եւ առցես զամենայն բնակիչք դոցա[3]. եւ հրամանաւս այսու՝ ածցես ի վերայ նոցա զամենայն վրէժս չարչարանաց եւ նեղութեանց, ըստ արժանեաց իւրոց. եւ ցրուեսցես զազգս նոցա ընդ ամենայն հեթանոսս ի ծառայութիւն, զի մի բնաւ երեւեսցին նոքա ի վերայ երկրի, քանզի լի են նոքա բազում չարութեամբ, որպէս լուայ[4] յԱրգար Թագաւորէն Հայոց։

Իբրեւ էառ զհրամանս զայս Լիկիանէ, ի կայսե-

1. Ե. օր. զտիեզերս ամենայն. իսկ Գ և Դ. օր. ծագս աշխարհի։
2. Գ և Դ օր. չունին՝ կամ լիցի քեզ։
3. Գ և Դ. օր. առցես ի գերութիւն զամենայն բնակիչս նոցա։
4. Ե. օր. լուաք։

աշխարհէն արեւելից առ Լիկիանոս, երթեալ հրամանաւս այսու հնազանդեցուցանէր զազգն ամենայն Հրէից. զոմանս ի նոցանէ ընդ սրոյ պատուհասիւ արկանէր, և զայլս բազումս հանեալ ի Հրէաստանէ՝ ցրուէր զնոսա ի ծառայութիւն ընդ ամենայն ազգս հեթանոսաց, ուր և են մինչեւ ցայսօր ժամանակի։

Եւ յայտնի եղեալ կայսերն ամենայն որ ինչ գործեցաւ ի ձեռն Լիկիանոսի յաղագս Հրէից՝ ի կողմանս արեւելից և Պաղեստինացոց, հաճոյ թուեցաւ նմա, և սկսաւ թագաւորն միանգամայն վասն.....[1] և հարցեալ և ծանուցեալ զամենայն, և հրամայեաց ումեմն ի մեծամեծաց իւրոց՝ որում անուն էր Ալբիոտա, սրով հատանել զգլուխն Պիղատոսի, ա-

րէ, երթեալ կատարել զհրամանս նորա, և զոմանս ընդ սուր ածելով և զոմանս ի ծառայութիւն հեթանոսաց և ի գերութիւն, ցրուէր[1] ընդ ամենայն երկիր, և որ կան մինչեւ ցայսօր ժամանակի[2]։

Եւ լուեալ կայսերն, զոր ինչ արար Լիկիանէ, հաճոյ եղեւ նմա։ Եւ ապա ետ հրաման Ալփիտոսի ումեմն՝ վասն Պիղատոսի, և ասէ. Ա՛ռ զդա, և կտրեա՛ զգլուխ դորա. զի դա ամբարտաւանութեամբն իւրով[3]. ձգեաց զձեռն իւր յարդարն այն, որ Քրիստոսն կոչէր[4], վասն որոյ նշանակեաց դա, որ կամօք իւրովք հեռի եղեւ ի փրկութենէ։

1. Աստանօր օր. եղծեալ գոլով բառ մի անընթեռնլի մնայ։

1. Գ և Դ օր. յաւելուն զնոսա։

2. Գ և Դ օր. չունին՝ և որ կան մինչև ցայսօր ժամանակի։

3. Գ և Դ օր. ունին այսպէս. Ա՛ռ զդա, և չարաչար մահուամբ սատակեա։ Եւ նա թա[illegible] [illegible] չարչարեալ ի [illegible], և հատեալ զգլուխն Պիղատոսի. զի դա ամբարշտութեամբն իւրով..։

4. Ե. օր. անուանէր։

սելով. Սա ամբարշտութեամբ մխեաց զձեռն իւր յարդարն յայն, որ անուանեալ կոչէր Քրիստոս. հրամայեմք այդու մահուամբ նշաւակել զդա, որպէս և կամօք իւրովք հեռի եղեւ ի փրկութենէ:

Եւ այսոցիկ այսպէս գործելոց, փառաւոր լինէր անուննն Քրիստոսի Աստուծոյ առ ամենեսեան: Որում փառք և պատիւ հանապազ վայել է՝ այժմ և միշտ յաւիտեանս. ամէն:

Եւ այսոցիկ այսպէս գործելոցս՝ փառաւոր լինէր անուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, ընդ ամենայն տեղիս և առ ամենեսեան. և ի մէնջ փառաւորի ամենասուրբ Երրորդութիւն այժմ և միշտ[1]:

1. Գ և Դ. օր. չունին է մինչ. իսկ Ե. օր. ունի այսպէս. ընդ ամենայն տեղիս առ ամենեսեան. և նմա փառք յաւիտեանս. ամէն:

Digitized by Google

# ԱՅԼ ՕՐԻՆԱԿ

## ԹՂԹՈՅՆ ՊԻՂԱՏՈՍԻ ԱՌ ՏԻԲԵՐ*

Ի ժամանակս Տիբերեայ կայսեր, եղեւ փրկարար կենսաբեր չարչարանքն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ի սորա ի հնգետասաներորդ ամին, գայ ի մկրտութիւն Քրիստոս՝ ի Յորդանան, երեսուն ամաց. և ի վեշտասաներորդ ամին՝ գլխատեցաւ Մկրտիչն Յովհաննէս. և յութուտասաներորդ ամին խաչեցաւ Քրիստոս. և ի յիննուտասներորդ ամին քարկոծեցին զՍտեփանոս, և ի նոյն ամի ընդրեցաւ Պաւղոս յառաքելութիւն։ Եւ էր յԵրուսաղէմ՝ Յակոբոս եղբայր Տեառն. և ի նոյն ժամանակս է Յուսեպոս պատմագիր և Փիլոն ժամանակագիր։ Իսկ Տիբերոս տեղեկացեալ վասն սքանչելագործութեան նշանացն Քրիստոսի, խնդրեաց առ ինքն զՊիղատոս. իսկ նորա երկուցեալ ի տանջանացն, գրեաց տախտակ վասն Քրիստոսի, որ ունի օրինակ զայս։

Պոնտիոս Պիղատոս, թագաւորի մեծի խնդալ.

Դժնդակ իրք պատահեալք, զոր զնոցանէն պատմեմ քեզ. Հրէայք յաղագս նախանձուն իւրեանց, և իւրեանց դժնեայ դատաստանաւն չարչարեցին զնա ի զուր. վասն որոյ՝ պատուէր ունէին հարքն նոցա, թէ՝ առաքեսցէ Աստուած զսուրբն իւր յերկնից, որ՝ և թագաւոր նոցա կոչեսցի. զսա խոստացաւ ի ձեռն

* Խորագիրդ եդաւ ի մէնջ։

Digitized by Google

կուսին առաքեալ յերկիր։ Սա ապա յիմում դատաւորութեան՝ եկն ի Հրէաստան, և տեսեալ զնա՝ զկոյրս լուսաւորելով, զբորոտս մաքրելով, զանդամալոյծս բժշկելով, զդեւս ի մարդկանէ հալածելով, զմեռեալս յարուցեալ, հողմոց սաստեալ, ի վերայ ալեաց գնացեալ, և բազում և այլ ինչ արարեալ. որպէսզի ամենայն ժողովրդեան Հրէից՝ որդի զնա ասել Աստուծոյ։ Եւ նախանձու քահանայապետքն ընդդէմ նորա շարժեալք, կալան և ինձ զնա մատնեցին, և այլ ընդ այլոյ ստեալ՝ ասէին մոլորեցուցիչ զնա, և ընդդէմ օրինաց նմա գործեալ։

Եւ հաւատացեալ այսոցիկ այսպէս լինել, տանջեալ զնա մատնեցի կամաց նոցա. որոց խաչեալ զնա և թաղեալ, զպահապանս կացուցեալ ի վերայ նորա. իսկ զօրականացն իմոց պահեալ զնա. յերրորդ յաւուր յարուցեալ։ Այլ այն(պէս) բորբոքեցաւ չարութիւն Հրէից, որպէսզի տալ արծաթ զօրականացն՝ ասելով. Ասասջիք, թէ աշակերտք նորա զմարմին նորա գողացան։ Այլ նոքա առեալ զարծաթն՝ լռել զեղեալան ոչ կարացին, քանզի և նոքա՝ յարուցեալ վկայեցին զնա տեսեալ։

Զայսոսիկ վասն այնորիկ ծանուցի, զի մի այլ ոք այլապէս ասիցէ, և կարծեսցես հաւատալ Հրէիցն ստաբանութեանց։

Եւ նոյնժամայն առեալ զՊիղատոս՝ նաւեցին ի Հռոմ. և նա զանձն իւր ընկենոյր ի ծով, և խեղդամահ սատակեցաւ. և զԹուղթս զայս եթող վասն փառացն Քրիստոսի. որ է օրհնեալ յաւիտեանս. ամէն։

## Դ

# ԹՈՒՂԹ ԼԵՆՏՈՒԼԵԱՑ ՊՈԲԼԻՈՍԻ

## ՅԻՍՈՒՍԷ ՆԱԶՈՎՐԵՑԻՈՑ*

*Թուղթ Լենտուլոսի Հռովմայեցի բդեշխապետին՝ որ է Պրոկոնսլին, զոր գրեալ է նա, հեթանոս գոլով դատաւոր ի Հրէաստան, — ի ժամանակի քարոզութեան Փրկչին մերոյ, — առ ոմն բարեկամ իւր ի Հռովմ, ըստ որում Նիկեփորոս:*

Երեւեցաւ յայսմ ժամանակիս և դեռ կեայ, այր մեծ ի զօրութեան անուանեալ Քրիստոս Յիսուս, որ կոչի մարգարէ զօրաւոր. — զոր աշակերտք նորա ասեն Որդի Աստուծոյ, յարուցիչ մեռելոց և առողջարար ամենայն հիւանդութեանց: Իսկ հասակաւ երկայն, միջակ և պատուելի. դէմս ունի յարգելի, ընդ որում նայեցողքն կարեն սիրել և զարհուրիլ. զհերս ունի ի գոյն հասուն կաղնւոյ, և հարթ և ողորկս, իբր մինչեւ

* Այս թուղթ՝ յեղեալ միանգամ ի լատին լեզուէ ի մերս աշխարհիկ բարբառ, հրատարակեցաւ ի Բազմավէպ Հանդիսի. բնագիրն՝ յորմէ թարգմանեցաւ յայնժամ, գտանէր ի Հռովմ՝ ի դիւանի պալատան Կեսարինի (Cesarini) անուն դքսի: Համեմատեալ զսոսա զերկոսին ընդ միմեանս՝ գտաք ինչ ինչ տարբերութիւնս. և զի չէր մարթ ի ստորեւ էջիս նշանակել զտարբերութիւնս, ուստի և զանց արարեալ, զփափաքողսն ի խնդրելիս անդր յղեմք. զայս և եթ յուշ արարեալ, զի յաստանօր հրատարակեալս պակասին տողք ինչ ի սկզբանն՝ և առաւելագոյն են ի վերջն: — Հմմ. Բազմ. Հանդէս, 1856, հատ. ԺԴ, էջ 252:

Digitized by Google

ցականչս, իսկ յականջացն պտոյտս և կնճիռս, սակաւ ինչ առաւելափայլունս. ի յուսոցն շրջանօս, յերկուս բաժանեալս ի միջոյ գագաթան՝ ըստ սովորութեան Նազովրացւոցն. ճակատն հարթ և պարզագոյն, երեսօքն առանց կնճռմտման, թարց աղտոյ իրիք զոր կարմրայտ կարգադրեալ ամօթխածութիւն գեղեցկացուցանէ, ունգացն և բերանոյն՝ բնաւ ո՛չ գոյ արհամարհումն: Մօրուս ունի խիտ և նորափթիթ՝ համագոյն հերացն, երկայն և ի միջոյ յերկփեղկս բաժանեալ. զդէմ ունի պարզ և հասուն, աչօք գոլով դալարօք, պնճազարդիւք և պայծառօք. ի կշտամբելն զարհուրելի, ի խրատելն հեզ և սիրելի, և միշտ պահեալ զուրախութիւնն ընդ ծանրութեան, որ ո՛չ երբեք տեսեալ եղեւ ծիծաղիլ, այլ երբեմն լալ: Ի հասակի մարմնոյն երկայն ուղիղ. զձեռս ունի և զբազուկս ի տեսլեան ախորժելիս, ի խօսելն էր ծանր, փոքր և համեստ. գեղեցիկ ի մէջ որդւոց մարդկան:

# Ե

## ՏԵՍԻԼ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

### ՏԵՍԻԼ ԱՄԵՆԱՍՐԲՈՒՀՒՈՅ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԶՈՐ ԵՏԵՍ ԱՄԵՆՕՐՀՆԵԱԼՆ՝ ՅԱՂԱԳՍ ՏԱՆՋԱՆԱՑ ՄԵՂԱՒՈՐԱՑ [1]

(Ըստ Ա և Բ օրինակաց)

Խորհեցաւ ամենասրբուհին [2] երթալ [3] ի լեառն Ձիթենեաց, կալ յաղօթս. և [4] ի գնալն իւր աղէր առ Տէր Աստուածն մեր. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, եկեսցէ Նախազօրավարն Միքայէլ, որպէսզի պատմեսցէ ինձ յաղագս երկնաւորացն և երկրաւորաց և սանդարամետականաց: Եւ յասել նորա զայս [5], եկն Նախազօրավարն Միքայէլ՝ հանդերձ չորեք հա-րիւր հրեշտակօք. հարիւր յարեւելից [6] և հարիւր [7] յա-

1. Բ. օր. ունի այսպէս. Տեսիլ ամենասրբուհւոյ և փառաւորեալ սուրբ Աստուածածնին, յաղագս տանջանաց:
2. Բ. օր. յաւելու Աստուածածնին:
3. Բ. օր. ելանել:
4. Բ. օր. ունի այսպէս. և խնդրեաց է Տեառն Աստուծոյ, զի առաքեսցէ զհրեշտակն իւր, որ եկեալ պատմեսցէ...:
5. Բ. օր. և է յաղօթելն ամենասրբուհւոյ Աստուածածնին, եւլ.:
6. Բ. օր. ունի այսպէս. հանդերձ հարիւր հրեշտակօք է յարևելից:
7. Բ. օր. յաւելու՝ հրեշտակք:

Digitized by Google

բեւեռից, հարիւր[1] ի հիւսիւսոյ եւ հարիւր[2] ի հարաւոյ. եւ վերացուցին զամենօրհնեալ բերկրեալն[3], եւ զովելով ասէին զնա. Ուրախ լեր Հօր ճառագայթ. ուրախ լեր Որդւոյ հանգստարան[4]. ուրախ լեր Հոգւոյ բնակարան[5]. ուրախ լեր երկնից հաստատութիւն. ուրախ լեր չորեքտասանցն հաստատութեանցն խնդումն[6]. ուրախ լեր մարգարէիցն քարոզութիւն[7]. ուրախ լեր որ ես քան զամենեսեան բարձրագոյն մինչեւ յաթոռն Աստուծոյ։

Ասաց իսկ եւ առ հրեշտակսն ամենօրհնեալ բերկրեալն[8]. Ուրախ լեր Միքայէլ նախազօրավար, անտեսանելոյ Հօր պաշտօնեայ. ուրախ լեր Միքայէլ նախազօրավար, Որդւոյ իմոյ խորհրդակից. Ուրախ լեր Միքայէլ նախազօրավար, և սուրբ Հոգւոյն հրամանակատար. ուրախ լեր Միքայէլ[9] նախազօրավար եւ վեցթեւեանցն գովելի. ուրախ լեր Միքայէլ[10] նախազօրավար՝ տանջանացն կոխիչ, եւ աթոռոյն Տեառն[11] արժանապէս վերակացու. ուրախ լեր Միքայէլ նախազօրավար, որ հանդերձեալ ես փող հարկանել եւ զարթուցանել զյաւիտենից ննջեցեալսն. ուրախ լեր Միքայէլ նախազօրավար, գլուխ երկնային[12] վերին զօրացն մինչեւ յաթոռն Աստուծոյ։ Նոյնպէս եւ զամենայն հրեշտակսն գովէր շնորհալից բերկրեալն[13], եւ աղաչէր յաղագս այնոցիկ որք ի տանջանսն էին։

Եւ ասէր ցնախազօրավարն[14] Միքայէլ. Պատմեա

1. Բ. օր. յաւելու՝ հրեշտակ։
2. Բ. օր. յաւելու՝ հրեշտակ։
3. Բ. օր. Սուրբ Աստուածածինն ըստ հարիւր հրեշտակէն։
4. Բ. օր. բնակարան։
5. Բ. օր. Հոգւոյն սրբոյ շտեմարան։
6. Բ. օր. չորեքտասանեցն խնդութիւն։
7. Բ. օր. քարոզութիւն։
8. Բ. օր. Ասէ ամենօրհնեալն Աստուածածինն առ հրեշտակսն։
9. Բ. օր. չունի՝ Միքայէլ։
10. Բ. օր. չունի Միքայէլ։
11. Բ. օր. չունի Տեառն։
12. Բ. օր. երկնաւոր զօրացն։
13. Բ. օր. յաւելու՝ սուրբ Աստուածածինն։
14. Բ. օր. Եւ ասէ նախազօրավարն. Ո՛վ ամենաշնորհալից բերկրեալ, որ ինչ ասես ցիս և ես։

ինձ որ ինչ ի վերայ երկրի։ Եւ ասէ ցնա Միքայէլ. Զոր ինչ հարցանես ընդ իս, շնորհալից բերկրեալ,՝ես պատմեմ քեզ։ Ասէ[1] ամենասրբուհին. Քանի՞ տանջանք են որով տանջին ազգք մարդկան։ Ասէ ցնա Միքայէլ[2]. Անթիւ տանջանք են։ Եւ ասէ ցնա ամենասրբուհին[3]. Պատմեա ինձ որ ինչ յերկինս և յերկրի[4]։

Յայնժամ հրամայեաց նախազօրավարն Միքայէլ, և բացան մարդկային կապանքն և երեւեցան դժոխք։ Եւ ետես ամենասրբուհի Աստուածածինն զորս ի տանջանսն էին բազմութիւն արանց և կանանց[5], և տըրտում եղեւ։ Յայնժամ[6] եհարց շնորհալից բերկրեալն՝ ցնախազօրավարն[7]. Ո՞վ են այսոքիկ[8], և զի՞նչ են մեղք սոցա։ Ասէ Նախազօրավարն. Սոքա են[9] որ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին ոչ հաւատացին, և վասն այնորիկ տանջին։ Եւ ետես ամենասրբուհի Աստուածածինն այլ տեղի խաւար մեծ[10], և եհարց ցՄիքայէլ[11]. Զի՞նչ է խաւարս այս, և ո՞վ են որ տանջին ի սմա։ Ասէ Նախազօրավարն[12]. Բազում հոգիք կան[13] ի խաւարդ յայդ։ Եւ ասէ ամենասրբուհին. Բարձցի խաւարդ, որպէսզի տեսից զտանջանսդ։ Պատասխանի ետուն[14] հրեշտակքն՝ որ պահէին զտանջանսն, և ասեն. Պատուէր ունիմք յանտեսանելի[15] Հօրէն, զի մի՛ տեսցեն դոքա զլոյս՝ մինչեւ ծագէ Որդին քո[16], օրհնեալն։ Եւ ի տրտմութեան եղեալ ամենասրբուհին, ամբարձ

1. Բ. օր. յաւելու ցնա։
2. Բ. օր. Եւ ասէ Նախազօրավարն. Ո՛վ ամենասրբուհի։
3. Բ. օր. բերկրեալն։
4. Բ. օր. և ի վերայ երկրի։
5. Բ. օր. յաւելու՝ ծերոց և տղայոց։
6. Բ. օր. է որոտմունք մեծ եղև։
7. Բ. օր. Յայնժամ հարցանէ բերկրեալն ընդ հրեշտակին և ասէ։
8. Բ. օր. Սոքա։
9. Բ. օր. Եւ ասէ ցնա հրեշտակն. Դոքա։
10. Բ. օր. ունի այսպէս. տանջանք և խաւար մեծ։
11. Բ. օր. չունի ցՄիքայէլ։
12. Բ. օր. և ասէ հրեշտակն։
13. Բ. օր. են։
14. Բ. օր. յաւելու՝ ամենայն։
15. Բ. օր. յանտանելի։
16. Բ. օր. ծագեսցէ լոյսն որդին։



Digitized by Google

զաչս իւր յերկինս, և ասէ. Յանուն Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն, բարձցի խաւարդ՝ որպէս զի տեսցուք և զայս տանջանս: Եւ առժամայն բարձաւ խաւարն այն, և անդ կային բազմութիւն արանց և կանաց, և կոծումն մեծ եղեւ: Եւ տեսեալ զնոսա ամենասրբուհի Աստուածածինն[1], արտասուեաց. և ասէ ցնոսա. Զի՞նչ առնէք ո՞վ[2] հալածականք, զի՞արդ կայք տառապեալք. և զի այդպէս[3] այդր գտայք. չիք ձայն և ոչ պատասխանի տանջելոցդ[4]: Ասեն հրեշտակքն որք պահէին զնոսա[5]. Ընդէ՞ր ոչ խօսիք ընդ բերկրեալն: Ասեն որք ի տանջանսն էին. Յաւիտենից ոչ տեսաք զլոյս և ոչ կարեմք հայել ի վեր: Եւ կային անդ բազմութիւն արանց և կանաց, և մրրիկ յոյժ[6] էր վերայ նոցա: Եւ տեսեալ զնոսա ամենասրբուհին՝ ելաց յոյժ: Եւ ասեն ցնա տանջանաւորքն. Ո՞յս տիրուհի, Աստուածածին, որդին քո ամենօրհնեալն, եկն և ոչ եհարց զմեզ. և ոչ Աբրահամ Նահապետն[7]. և ոչ Մկրտիչն Յովհաննէս մեծն ի մարգարէս, և առաքեալն Պաւղոս առ մեզ ոչ երեւեցաւ. և դու ամենասրբուհի պարիսպ քրիստոնէից, որ բազում[8] աղաչեցեր զԱստուած վասն[9] հաւատացելոց, զի՞ այդպէս խնդրեցեր զմեզ և գտեր աստ: Յայնժամ ասէ ամենասրբուհին ցնախազօրավարն[10]. Ո՞վ են այսոքիկ, և զի՞նչ են[11] մեղք սոցա: Ասէ Նախազօրավարն[12]. Սոքա են որ ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին ոչ հաւատացին, և զքեզ Աստուածածին ոչ խոստովանեցան, եթէ ի քէն ծնաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս, և էառ մարմին ի քէն: Եւ արտասուեալ[13] ամենասրբուհին, ասէ ցայնոսիկ՝ որք ի տանջանսն էին.

1. B. օր. չունի Աստուածածին:
2. B. օր. չունի ո՞վ:
3. B. օր. ունի զի՞նչ:
4. B. օր. ունի այսպէս. և պատասխանին ոչ պատասխանի ետուն նոցա:
5. B. օր. զնէ զտանջանսն:
6. B. օր. չունի յոյժ:
7. B. օր. Նախահայրն:
8. B. օր. յաւելու՝ անգամ:
9. B. օր. յաւելու՝ մեր մեղաւորացս:
10. B. օր. յաւելու՝ Միքայէլ:
11. B. օր. էին:
12. B. օր. Ասէ ամենասրբուհին:
13. B. օր. արտասուեաց:

Ընդէ՞ր այդպէս մոլորեալ էիք, տառապեալք. ո՞չ գիտէք[1] եթէ անուն իմ հալածէ զամենայն չար[2] ստեղծուած: Եւ զայս ասելով՝ յանկարծ դարձեալ խաւարն ի վերայ նոցա, որպէս էր ի սկզբանէ:

Ասէ ցնա[3] նախազօրավարն Միքայէլ. Զի՞նչ[4] կամիս ամենասրբուհի, ի հարաւ ելցուք եթէ յարեւմուտս[5]: Ասէ ամենասրբուհին. Ելանեմք ի հարաւ: Եւ նոյնժամայն կացին սերոբէքն և քերոբէքն և չորեքհարիւր հրեշտակքն ընդ նոսա. և հանեալ[6] ածին զօրհնեալն ի հարաւային կողմն, ուր ելեալ գայր գետ[7] հրեղէն. և կային անդ բազմութիւն արանց և կանանց. ոմանք մինչև ի մէջսն, և ոմանք մինչև ի կուրծսն, և այլք մինչև ցգլուխսն[8], և այլք[9] մինչև ցփողսն, և այլք[10] մինչև ցգագաթունսն:

Եւ տեսեալ ամենասրբուհի Աստուածածինն, հառաչեաց. եհարց ցնախազօրավարն[11] Միքայէլ. Ո՞վ են այդոքիկ՝ որ մինչև ի մէջսն անկեալ են ի հուրդ: Ասէ[12]. Սոքա են որ զհօր և զմօր անէծս ժառանգեցին, և վասն այնորիկ տանջին[13]: Եւ ասէ ամենասրբուհին. Ո՞վ են այդոքիկ[14], որ մինչև ի կուրծսն անկեալ կան ի հուրդ: Ասէ[15]. Սոքա որ զսենդեկնոսութիւն իւրեանց պղծեցին և անարգեցին և պոռնկութեամբ աղտեղացան, և վասն այնորիկ տանջին[16]: Եւ ասէ ամենասրբուհին. Ո՞վ են այդոքիկ, որ մինչև ցփողսն անկեալ կան ի հուրդ: Ասէ. Սոքա են որ զմարդոյ միս կե-

1. Բ. օր. լուայք:
2. Բ. օր. չունի չար:
3. Բ. օր. չունի ցնա:
4. Բ. օր. զի՞րդ:
5. Բ. օր. ելանեմք ի հարաւ, եթէ ելանեմք յարևմուտս:
6. Բ. օր. հանէին:
7. Բ. օր. որ կայր գետ:
8. Բ. օր. չունի՝ և այլք մինչև ցգլուխսն:
9. Բ. օր. ոմանք:
10. Բ. օր. ոմանք:
11. Բ. օր. ընդ նախազօրավարն:
12. Բ. օր. Ասէ նախազօրավարն. Որ զհօր...:
13. Բ. օր. է տանջանան են:
14. Բ. օր. չունի այդոքիկ:
15. Բ. օր. յաւելու՝ նախազօրավարն:
16. Բ. օր. սատանաօր ունի այսպէս. Սոքա են որ զանդրէնատուԹեան ճողքն, և ի պառնըկուԹեան տարցան: Ասէ:

բան [1]: Այէ ամենասրբուհին. Է՞ հնար ուտել մարդոյ զմիս մարդոյ [2]: Այէ Նախազօրավարն. Լո՛ւր ամենասըրբուհի [3]. Որք բերեն զզաւակսն յորովայնէ իւրեանց, և ընկեցին զնոսա կերակուր շանց. և որք մատնեցին անիրաւ զեղբարս իւրեանց առաջի դատաւորաց և իշխանաց, նոքա կերան զմիս մարդոյ, և վասն այնորիկ տանջին: Այէ ամենասրբուհին. Ո՞վ են այդոքիկ [4], որ մինչեւ ի գագաթունսն անկեալ կան ի հուրդ: Այէ Նախազօրավարն. Սոքա են որ զպատուական և զսուրբ խաչն ունէին, և երդնուին սուտ ի զօրութիւն խաչին Տեառն. յորմէ հրեշտակք դողան և ահիւ երկիր պագանեն, և մարդկան ունելով՝ երդնուին սուտ, և զոր ոչ գիտեն վկայեն, և վասն այնորիկ տանջին [5]:

Եւ ետես ամենասրբուհին մարդ մի կախեալ զոտիցն [6], և որդունք ծծէին զնա: Եւ հարց ցնախազօրավարն. Ո՞վ է սա, և զի՞նչ մեղք սորա [7]: Այէ Նախազօրավարն. Սա այն է՝ որ տոկոս առնոյր ոսկոյ և արծաթոյ իւրոյ, և վասն այնորիկ տանջի [8]: Եւ դարձեալ ետես ամենասրբուհին, կին մի կախեալ զերկուց ոտիցն. եհարց ցնախազօրավարն. Ո՞վ է այս կինս [9] և

1. Բ. օր. յաւելու բամբասելով:
2. Բ. օր. ունի այսպէս. Եւ է՞ հնար, որ ուտեն զմիս մարդոյ:
3. Բ. օր. Այսպէս ունի. և ես պատմեմ քեզ յաղագս այդորիկ. Սոքա են՝ որ զկերակուրս որդւոց բերէին յորովայնէ իւրեանց և ընկեցին շանց: Եւ այլք որք մատնեցին թագաւորաց զեղբարս իւրեանց և իշխանաց. սոքա են որ կերան զմիս մարդոյ, վասն այդորիկ այդպէս տանջին:
4. Բ. օր. չունի այդոքիկ:
5. Բ. օր. ունի այսպէս. Սոքա են որ առնէին զխաչն և երդնուին սուտ, և զոր ոչ գիտէին վկայէին, և վասն այնորիկ տանջին:
6. Բ. օր. ունի այսպէս. Եւ ետես ամենասրբուհին յայլ տեղի տանջանաց մարդ կախեալ զոտից իւրոց:
7. Բ. օր. և ասէ. Ո՞վ են այդոքիկ և զինչ մեղք սոցա:
8. Բ. օր. Սոքա են որ շահով տային զարծաթ իւրեանց, և վասն այնորիկ տանջին.
9. Բ. օր. Եւ այլ տեղի գնացեալ ամենասրբուհին, և ետես կին մի կախեալ զոտից իւրեանց:

զի՞նչ է մեղք սորա։ Ասէ Նախագորավարն. Սա ունկն դնէր[1] դրացեաց իւրոց, և արկանէր բանս չարութեան առ ի յառնել կռիւ[2], և վասն այնր[3] տանջի։ Եւ տե-սեալ զայս ամենասրբուհին, արտասուեաց և ասէ. Լաւ էր մարդոյ՝ եթէ չէր ծնեալ։ Ասէ Նախագորա-վարն. Ո՛վ ամենասրբուհի, դեռ ոչ[4] է քո տեսեալ զմեծամեծ տանջանսն։ Ասէ ամենասրբուհին[5] ցնախա-գորավարն. Ելցուք որպէս զի տեսից զամենայն տան-ջանսն։ Եւ[6] ասէ. Ո՞ւր կամիս. ելցուք յարեւմուտս։ Եւ առժամայն կացին[7] սերոբէքն և քերոբէքն, և չո-րեք հարիւր հրեշտակքն. և հանին[8] զբերկրեալն յա-րեւմուտս։ Եւ ետես ամենասրբուհին՝ ամպեղէն մրրիկ, և ի մէջ նորա[9] բազմականս որպէս բոց հրոյ, և կային բազմեալ ի նա բազմութիւն արանց և կանանց, և հրե-ղէն մլիչապք[10] ի վերայ նոցա, և բոց հրոյ որ ուտէր իբրեւ զեղեգ զմեղաւորսն[11] ի վերայ բազմականացն։ Եւ[12] տեսեալ ամենասրբուհին, հառաչեաց և հարցա-նէր[13] ցնախագորավարն. Ո՞վ են սոքա, և զի՞նչ են մեղք սոցա։ Ասէ Նախագորավարն. Սոքա են՝ որ ի ժամ[14] առաւօտու սրբոյ կիրակէին ի քուն կային որպէս[15] մե-ռեալք և ոչ ընթացան[16] յեկեղեցի Աստուծոյ, և վասն այնորիկ տանջին։ Եւ ասէ ամենասրբուհին. Եթէ ոք ոչ կարէ յառնել, զի՞նչ արասցէ[17]։ Ասէ Նախագորավա-րըն[18]. Եթէ[19] ոք վառեալ տեսանէ զտուն իւր ի չո-

1. Բ. օր. որ տանջէր էր..:
2. Բ. օր. և յարուցանէր կռիւս:
3. Բ. օր. այնորիկ տանջին այսպէս:
4. Բ. օր. Չէ՞ դառն:
5. Բ. օր. յաւելու Աստուածա-ծին:
6. Բ. օր. Ասէ Նախագորավարն Միքայէլ. Գնասցուք յարեւելս:
7. Բ. օր. վերացան:
8. Բ. օր. Եւ տարան զամենօրհ-նեալսուրբ կոյսն Մարիամ յա-րեւելս:
9. Բ. օր. Նորա կային որպէս բոց հրոյ և նոսա կային բազմական արանց:
10. Բ. օր. յաւելու կոյսն:
11. Բ. օր. զնոսա.
12. Բ. օր. Եսես:
13. Բ. օր. եհարց ընդ հրեշ-տակն Միքայէլ և ասէ. Ով:
14. Բ. օր. չունի՝ ի ժամ:
15. Բ. օր. իբրև.
16. Բ. օր. ոչ ընթանային:
17. Բ. օր. չունի արասցէ:
18. Բ. օր. հրեշտակապետն:
19. Բ. օր. սատի մինչև ցշուրջ չունի:

*րից կողմանց՝ և ոչ կարէ յառնել, ունի թողութիւն։ Եւ ետես այլ տեղի ուր կային աթոռք հրեղէնք, և ի վերայ նոցա[1] նստեալ կային[2] բազմութիւն արանց և կանաց, և այրէին ի[3] վերայ նոցա։ Եհարց ամենասր-բուհին ցնախազօրավարն[4]. Ո՞վ են սոքա, և զի՞նչ են մեղք սոցա։ Ասէ[5]. Դոքա այնոքիկ են՝ որ ոչ յառնէին ընդդէմ քահանային՝ յորժամ գայր յեկեղեցոյ Աստու-ծոյ, և[6] առ ոչինչ համարէին զնոսա, և վասն այնո-րիկ տանջին։ Եւ ետես ամենասրբուհին[7] ծառ երկա-թեղէն[8] որ ունէր ճիւղս[9] երկաթիս, կախեալ կային ի նոսա բազմութիւն արանց և կանաց[10]. և տեսեալ զնոսա[11] ամենասրբուհին, արտասուեաց և եհարց[12] ցնախազօրավարն. Ո՞վ են չարչարեալքդ[13] այդ, և զի՞նչ մեղք դոցա. Ասէ նախազօրավարն. Սոքա են երդ-մնաւորք չարք[14] և ժանդք և չարախօսողք, և որք մեկ-նեցին[15] զեղբայր յեղբօրէ[16]։ Եւ ասէ ամենասրբու-հին. Զի՞արդ մեկնի եղբայր յեղբօրէ։ Ասէ նախազօ-րավարն. Եթէ ոք ի հեթանոսաց կամէր մկրտել, և ասէ[17] ոք ցնա. եթէ դու պղծակեր, այլազգի և ան-հաւատ, և այսպէս դժուարեցուցանէ[18] և առնէ զվարձս որոշելոյն։*

*Եւ ետես ամենասրբուհին յայլ[19] տեղի, մարդ կա-*

1. Բ. օր. չունի նոցա։
2. Բ. օր. նստէին։
3. Բ. օր. զնոսա։
4. Բ. օր. հրեշտակապետն։
5. Բ. օր. յաւելու նախազօրա-վարն ասէ ինձ։
6. Բ. օր. չունի առ ոչինչ հա-մարէին զնոսա։
7. Բ. օր. յաւելու յայլ տեղի տանջանաց։
8. Բ. օր. երկաթի.
9. Բ. օր. ճղերս բազմաւս։
10. Բ. օր. յաւելու զմեղաւոր կա-րեանց։
11. Բ. օր. չունի զնոսա։
12. Բ. օր. գրեալ թէ յամենայն ուրեք զնէ՝ եհարց ընդ նա-խազօրավարն։
13. Բ. օր. այս տանջանաւորքս։
14. Բ. օր. չունի՝ չարք և ժանդք։
15. Բ. օր. բաժանեցին։
16 Բ. օր. յեղբօրէ և զհայր յոր-դւոյ և զմայր ի դստերէ և եղբ աք։
17. Բ. օր. ասէին դոքա։
18. Բ. օր. դժուարացուցանէին առնել վարձս ընդ որոշելոյն։
19. Բ. օր. չունի յայլ տեղի։

Digitized by Google

խեալ յոտից[1], և ելեալ գայր ընդ ունկունս նորա արիւն, և լեզու նորա կապեալ էր[2] ի բոց հրոյն, և ոչ կարէր հառաչեալ և ասել. Տէր ողորմեաց ինձ։ Եւ ընդ առնել աղաչանս ամենաօրհնուհոյն, եկն[3] հրեշտակն որ ի վերայ տանջանացն[4], և արձակեաց զլեզու նորա։ Եհարց ամենաօրհնուհին ցնախագորավարն[5]. Ո՞վ է այս ողորմելիս, որ ունի զայսպիսի համբաւանս[6]։ Եւ ասէ նախագորավարն[7]. Սա է կոնոմոսն՝ որ ոչ արար զկամս Աստուծոյ, այլ ուտէր զինչս եկեղեցոյն, և ասէր. Որ ծառայէ զտաճարն[8], ի տաճարէն սնանի, և վասն այնորիկ[9] այսպէս տանջի։ Եւ ասաց[10] Աստուածածինն. Որպէս արար եղիցի դորա։ Եւ դարձեալ կապեաց հրեշտակն զլեզուն նորա[11]։

Եւ ասէ[12] նախագորավարն. Եկ ամենաօրհնուհի և ցուցից քեզ ուր տանջին քահանայքն։ Եւ[13] եկեալ եկն և եսես[14] քահանայս կախեալ յըղնկունսն, և հուր ի գագաթանց նոցա հեղոյր և այրէր զնոսա։ Եւ տեսեալ ամենաօրհնուհին, եհարց ցնախագորավարն և ասէ[15]. Ո՞վ են այսոքիկ, և զի՞նչ են մեղք սոցա։ Ասէ[16]. Սոքա են որ մերձ[17] կային անտեսանելի աթոռոյն Աստուծոյ, և յորժամ շօշափէին[18] զմարմին և զարիւն

1. Բ. օր. զորէց խօսից և ընդ ընդերաւն նորա հոսէր արեանն։
2. Բ. օր. չունի էր։
3. Բ. օր. եկեալ։
4. Բ. օր. տանջանարանացն։
5. Բ. օր. յաւելու՝ և ասէ։
6. Բ. օր. տանջանս։
7. Բ. օր. հրեշտակապետն։
8. Բ. օր. տաճարէն է տաճարի անդէ սնանէ։
9. Բ. օր. այդորէկ և չունի այսպէս։
10. Բ. օր. ասէ ամենաօրհնեալն օրհնեալ Աստուածածինն։
11. Բ. օր. չունի նորա։
12. Բ. օր. ասէ սուրբ Աստուածածինն ցհրեշտակապետն. տարցես զիս և յայլ տեղի տանջանաց զի տեսանեմ և գիտեմ։ Եւ հրեշտակապետն ցամենաարքուհին. Ե՛կ և ես ցուցից։
13. Բ. օր. չունի. և եկեալ եկն։
14. Բ. օր. տեսանէ քահանայս որ կախեալ կային զընկոյց ձեռանց։
15. Բ. օր. չունի՝ և ասէ։
16. Բ. օր. յաւելու նախագորավարն։
17. Բ. օր. մերձակայք էին։
18. Բ. օր. փորձէին։

Digitized by Google

Որդւոյն[1] Աստուծոյ, անկանէին առաջիքն ի վայր և չարժէր աթոռն Աստուծոյ[2], և պատուանդան փրկչին[3] դողայր, և նոքա ոչ իմանային, և վասն այնորիկ տանջին: Եւ տեսի ամենասրբուհին մարդ և գազան թեւաւոր որ ունէր երիս գլուխս որպէս բոց[4] հրոյ. երկրորդ գլուխն առաջս մարդոյ, և երրորդ գլուխն առ բերանով[5] Նորա: Եւ տեսեալ ամենասրբուհին[6]՝ եհարց ցնախագորավարն. Ո՞վ է սա, և որպիսի՞[7] են մեղք սորա, որ ոչ ոք կարէ թափել զսա ի վիշապէն[8]: Ասէ[9]. Սա է որ ընթեռնոյր և ոչ առնէր զհրամանս սրբոյ աւետարանին. կարդայր՝ և ոչ ուսուցանէր ժողովրդեանն, և ինքն զպատուիրան Աստուծոյ ոչ առնէր որպէս արժանն էր, և վասն այնորիկ տանջի այսպէս: Եւ ասէ Նախագորավարն[10]. Եկ ամենասրբուհի, և ցուցից քեզ ուր տանջին հրեշտակական և առաքելական զգեստաւորքն[11]: Եւ եկեալ եկն և տեսի որ կային ի հուրն և ուտէր զնոսա: Եհարց ամենասրբուհին ցնախագորավարն. Ո՞վ են այսոքիկ, և զի՞նչ են մեղք սոցա: Ասէ Նախագորավարն. Սոքա զհրեշտակական և զառաքելական զգեստն զգեցեալ էին, ի վեր՝ հայրապետք կոչին, և զանունն Աստուծոյ ոչ պատուեցին յերկիրս. օրհնեցէք մուրբք լսէին՝ և յերկինս սուրբք ոչ կոչեցան, քանզի ոչ արարին զկամս Աստուծոյ և ոչ պահեցին զպատուիրանս Նորա, և ոչ մի բարի արարին առ[12] ի պատիւ հրեշտակական[13] զգեստին, և վասն այնորիկ կան[14]

1. Բ. օր. Տեառն Քրոյ Յիսուսի Քրիստոսի:
2. Բ. օր. Էրինչին:
3. Բ. օր. ոտից Նորա:
4. Բ. օր. պհոտր վառեալ:
5. Բ. օր. առ բերանն:
6. Բ. օր. Աստուածածինն... ցը-հրեշտակապետն:
7. Բ. օր. զի՞նչ էցէ:
8. Բ. օր. ի վիշապէն յայտնի:
9. Բ. օր. յաւելու Նախագորա-վարն, այս է:
10. Բ. օր. հրեշտակապետն:
11. Բ. օր. Հայրապետքն և վար-դապետքն և եպիսկոպոսքն, որ զանուանեալս պատուեցին յեր-կրի, օրհնեցէք սուրբ լսէին, և յերկինս ոչ կոչին սուրբք. ետն-չէ ոչ:
12. Բ. օր. չունի առ ի պատիւ:
13. Բ. օր. ի հրեշտակական զգե-ստուն:
14. Բ. օր. այսպէս տանջին:

յայլպիսի տանջանս: Եւ ետես [1] Աստուածածինն կանայս կախեալ ի ծայր [2] ղանկացն [3], և բոց հրոյ ելեալ գայր [4] ի բերանոյ նոցա և այրէր զնոսա. և եկեալ [5] գազանք ուտէին զնոսա, և հառաչանօք բարբառէին. Ողորմեցարուք մեզ զի մեք միայն եմք ի տանջանս խստագոյն՝ առաւել [6] քան զամենեսեան՝ որ ի տանջանս են: Եւ տեսեալ [7] զնոսա ամենասրբուհին՝ արտասուեաց, և եհարց ցնախազօրավարն [8]. Ո՞վ են այսքիկ, և զի՞նչ մեղք սոցա: Ասէ Նախազօրավարն [9]. Սոքա երիցուհիք [10] են, և [11] այլք որ զքահանայս ոչ պատուեն, և [12] յետ մեռանելոյ քահանային առին արս, և վասն այնորիկ տանջին: Եւ տեսեալ [13] ամենասրբուհի Աստուածածինն ի նոյն [14] տեղի կախեալ կին մի՝ և գազան երկգլխեան ուտէր զստինս նորա: Եհարց ամենասրբուհին ցնախազօրավարն. Ո՞վ է սա, և զի՞նչ մեղք սորա: Եւ ասէ [15]. Սա սարկաւագակին էր՝ որ ետ ըզմարմին իւր ի պոռնկութիւն, և վասն այնորիկ տանջի: Եւ ետես [16] այլ [17] կանայս՝ որ կային ի մէջ հրոյն և ամենայն գազանք ուտէին զնոսա. Եհարց [18] ամենասրբուհին. Զի՞նչ են մեղք սոցա: Եւ ասէ [19]. Սոքա վա-

1. Բ. օր. տեսեալ ամենասրբուհին:
2. Բ. օր. չունի ի ծայր.
3. Բ. օր. ղանկացն:
4. Բ. օր. չունի գայր:
5. Բ. օր. և ամենայն:
6. Բ. օր. չունի առաւել:
7. Բ. օգ. եբերև եղեւ:
8. Բ. օր. յաւել և տակ. Ո՞ր են սոքա:
9. Բ. օր. չունի Նախազօրավարն:
10. Բ. օր. երէցկանայք:
11. Բ. օր. չունի, և այլք որ ըզքահանայս ոչ պատուեն:
12. Բ. օր. այլ և յետ մահուան քահանայքն:
13. Բ. օր. ետես սուրբ:
14. Բ. օր. է նոյն տեղին սար Աստուածածին կախեալ և գազան երկգլխեան որ ուտէին զստինս նորա:
15. Բ. օր. յաւելու Նախազօրավարն:
16. Բ. օր. յաւելու ամենօրհնեալ սրբուհին:
17. Բ. օր. այլ տեղի որ կային կանայք ի մէջ:
18. Բ. օր. եհարց ցհրեշտակապետն. Ո՞վ են սոքա, զի՞նչ մեղք է սոցա:
19. Բ. օր. յաւելու Նախազօրավարն:

Digitized by Google

նուհիք[1] էին և ի պոռնկութիւն ընթացան, և վասն այսորիկ այսպէս տանջին։

Եւ ասէ Նախազօրավարն[2]. Ե՛կ ամենասրբուհի, և ցուցից քեզ ո՛ւր տանջին բազմութիւնք[3] մեղաւորաց։ Եւ[4] ելեալ ամենասրբուհին եկն և ետես գետ հրեղէն. և էր տեսակ գետոյն արիւն[5], և[6] դայր և ուտէր զերկիր[7]։ Եւ տեսեալ ամենասրբուհին, արտասուեաց և եհարց ցնախազօրավարն. Ո՞վ են այսքիկ, և զի՞նչ են մեղք սոցա։ Եւ ասէ[8]. Սոքա են պոռնիկք, շնացողք, գողք, աւազակք[9], զրկողք, ոխակալք, քինահանք, որ[10] յառաջին օրն քառասնորդացն թողին զպահսն[11] և յերդումն ընթացան. և որք ուտեն ի տունս այլազգեաց, և որք բաժանեցին այր և կին, արբեցողք, զրակաշառք. սոքա են անողորմ[12] իշխանք, եպիսկոպոսք արծաթասէրք և որ[13] տոկոս[14] առին[15] ոսկոյ և արծաթոյ իւրեանց ամբարշտեալք[16]։

Եւ լուեալ ամենասրբուհի Աստուածածինն՝ արտասուեաց[17] և ասէ. Վա՜յ մեղաւորաց։ Եւ ասէ ցնա[18] Նախազօրավարն. Ընդէ՞ր լաս ամենասրբուհի, դեռ ոչ է քո[19] տեսեալ զմեծամեծ տանջանսն։ Եւ ասէ[20] Աստուածա-

1. Բ. օր. վանայէք։
2. Բ. օր. առաց հրեշտակապետն։
3. Բ. օր. յաւելու ամենայն։
4. Բ. օր. և ետես ամենասրբուհին գետ։
5. Բ. օր. չունի արեան։
6. Բ. օր. եկեալ կայր։
7. Բ. օր. յաւելու՝ ալիք նորա սաստիկ զբազմութեան ձկանց։ Ապա յարէ և արդասաստիկ սասանեաց խոյան, և եհարց ընդ հրեշտակապետն։
8. Բ. օր. յաւելու նախազօրավարն։
9. Բ. օր. չունի աւազակք, զըրկողք, ոխակալք, քինահանք։
10. Բ. օր. և յառաջ։
11. Բ. օր. զպահսն և որ ատէին զհետ անօրինաց էին արբեցողք։
12. Բ. օր. յաւելու պատարագն։
13. Բ. օր. յաւելու՝ շահ։
14. Յօր. տակոսս։
15. Բ. օր. առանն արծաթոյ իւրեանց։
16. Բ. օր. չունի մինչև ցԱստուածածինն։
17. Բ. օր. յաւելու ամենասրբուհին։
18. Բ. օր. չունի ցնա։
19. Բ. օր. տեղ։
20. Բ. օր. չունի մինչև ցԸ. Զէ՞րդ։

Digitized by Google

ծինն. Եկ Միքայէլ մեծ իշխան, և տարցես զիս ի մե-ծամեծ տանջանսն: Եւ ասէ. Զնարդ կամիս, յարեւելս ելցուք, թէ ի դրախտն. յաջակողմն թէ ի ձախակողմն[1] ուր են մեծամեծ տանջանքն: Եւ ասէ ամենասրբու-հին. Ելցուք դէպ ի ձախակողմն: Եւ յասեալ[2] նորա զայս, եկեալ կացին սերոբէքն և քերոբէքն և չորեքհարիւր հրեշտակսն, և հանեալ ածին զբերկրեալն[3] ի ձախա-կողմն: Եւ ահա գետ հրեղէն կայր անդ[4], և խաւար մեծ[5] ի վերայ նորա. և հայեցութիւն գետոյն խաւա-րագոյն[6] իբրեւ զկպրի[7]. և կային անդ բազմութիւն արանց և կանանց, և[8] սաստկանայր հրոյն բռնու-թիւն[9], և որպէս վայրենի ծով ընկղմէր զմեղաւորսն բիւրաւոր կանկնաւ, և ոչ կարէին ասել ողորմեաց մեզ որ[10] ես արդար դատաւոր. քանզի ուտէր զնոսա որդն անքուն և կրճտումն[11] ատամանցն[12], և գազա-նացն՝ որ ուտէին զնոսա[13]՝ ոչ գոյր թիւ:

Եւ տեսեալ ամենասրբուհոյն[14] զհրեշտակսն որք պա-հէին զնոսա[15], վերագոչեցին մեծաձայն. Սուրբ ես[16] Աստուած, որ գթացար ի մեզ վասն[17] Աստուածածնին. գոհանամք զքէն որդի Աստուծոյ, որ յաւիտենից ոչ տեսաք[18] զլոյս, և այսօր տեսաք ի ձեռն[19] Աստուա-ծածնին: Եւ դարձեալ գոչեցին հրեշտակքն[20] միաձայն[21],

1. Բ. օր. չունի մինչև ցձախա-կողմն:
2. Բ. օր. և ընդ ասելն նորա զայս եկին սերոբէքն:
3. Բ. օր. զբերկրեալ սարբ կային:
4. Բ. օր. առ նա:
5. Բ. օր. չունի մեծ:
6. Բ. օր. այնորէկ:
7. Բ. օր. կապարէ և է նմա կայէն:
8. Բ. օր. տանջէ:
9. Բ. օր. բազմութիւն և է վայր ընկղմէր:
10. Բ. օր. չունի որ ես:
11. Բ. օր. կրճտումն:
12. Բ. օր. յաւելու բազում եր:
13. Բ. օր. զմարմինս:
14. Բ. օր. զամենասրբուհին հրեշ-տակսն:
15. Բ. օր. զտանջանսն փոխեցին մեծային:
16. Բ. օր. յաւելու Տէր:
17. Բ. օր. վասն քո սուրբ ծնո-ղին ամենօրհնեալ Աստուածա-ծնին մօր քո:
18. Բ. օր. տեսեալ եմք:
19. Բ. օր. վասն սուրբ
20. Բ. օր. յաւելու որք զտան-ջանսն:
21. Բ. օր. յաւելու՝ այսպէս:

ասելով. Ուրախ լեր բերկրեալ Աստուածածին[1] կոյս. ուրախ լեր ճառագայթ անանց լուսոյ: Ուրախ լեր, և դու Միքայէլ[2] Նախագորավար, որ բարեխօս ես[3] աշխարհի և[4] ամենայն ստեղծուածոց. քանզի և մեք տեսանելով[5] զմեղաւորս ի տանջանսն, յոյժ տրտմեալ եմք:

Եւ[6] տեսեալ ամենասրբուհին զհրեշտակսն խոնարհեալք և ցամաքեալք, արտասուեաց: Եւ գոչեցին մեղաւորքն մեծաւ ձայնիւ. Բարիոք եկիք վասն մեր՝ որք յաւիտենից եմք ի խաւարիս յայս: Եւ ասէ ամենասրբուհին. Վա՜յ մեղաւորաց. և դարձեալ ասէ. Թող տեսցուք զմեղաւորսն: Եւ եկն Աստուածածինն հանդերձ հրեշտակօք, և բազմութիւն մեղաւորաց աղաղակէին. Տէր ողորմեաց մեզ. և յետ առնելոյ զխընդրուածսն՝ դադարեցին: Եւ հարցեալ ամենասրբուհին ցնախագորավարն, ասէ. Ո՞վ է այս գետս, և զի՞նչ է ալիք սորա, և ո՞վ են որ կան ի հուրդ: Ասէ Նախագորավարն. Այս գետս խաւարային Սողոս, և ալիք սորա են կայծակունք հրոյ. այս գետս է խաւարն արտաքին, և որք հոլածին ի սմա՝ Հրեայքն են որք խաչեցին զՏէր մեր Յիսուս Քրիստոս զորդին Աստուծոյ. և ամենայն ազգք՝ որք ոչ են մկրտեալ, և որք ոչ հաւատացին ի Հայր և յՈրդի և Հոգին սուրբ. և որք ի քրիստոնէից նուիրեցան դիւաց և ուրացան զՔրիստոս և զսուրբ մկրտութիւնն, և որք պոռնկին յանպատեհ իրս ի սենդեկնոսութիւն մեռոնի և ի մայր և ի դուստր. և դեղարարք որք դեղեն զմարդիկ և սպանանեն, և որք խեղդեն զծնունդս որովայնի: Եւ ասէ ամենասրբուհին. Ըստ հաւատոյ իւրեանց եղիցի դոցա:

Եւ նոյն ժամայն ծածկեաց զնոսա մրրիկ գետոյն այնորիկ. և անկան հրեղէն ալիքն ի վերայ մեղաւորացն և խաւարն ծածկեաց զնոսա: Եւ ասէ Նախա-

1. Բ. օր. ամենօրհնեալ սուրբ Աստուածածին կոյս:
2. Բ. օր. չունի՝ Միքայէլ:
3. Բ. օր. յաւելու յաղագս:
5. Բ. օր. չունի՝ և ամենայն ըստեղծուածոց:
6. Բ. օր. տեսանեմ:

զօրավարն ցամենասրբուհին. Եթէ ոք անկանիցի ի խաւարդ յայդ, և ոչ յիշատակ նորա լիցի առ Աստուած, զինչ լինիցի։ Ասէ Աստուածածինն. Վա՜յ է մեղաւորաց, զի անվախճան է բոց հրոյդ։ Եւ ասէ Նախազօրավարն. Եկ ամենասրբուհի և ցուցից քեզ զծովն հրեղէն, և տեսցես ուր տանջին ազգք քրիստոնէից։ Եւ եկեալ ամենասրբուհին՝ ետես զմեղաւորսն որպէս հատ մանանխոյ, եհարց ցնախազօրավարն. Ո՞վ են սոքա, և զի՞նչ են մեղք սոցա։ Եւ ասէ ցնա Միքայէլ. Սոքա են մկրտեալքն և* ի Քրիստոս միայն նուիրեալքն. և զգործսն բանսարկուին արարին և կորուսին զժամանակ ապաշխարութեան, և վասն այնորիկ տանջին։ Եւ ասէ ամենասրբուհին ցնախազօրավարն. Մի՛ խնդիր[1] հայցեմ ի քէն. թո՛ղ եկից տանջիմ և ես ընդ մեղաւորսն, զի և[2] նոքա որդիք որդոյ իմոյ կոչեցան։ Եւ ասէ, Նախազօրավարն. Դու ի դրախտն հանգիր[3] ամենասրբուհի։ Եւ ասէ ամենասրբուհին. Աղաչեմ[4] զքեզ, յղէ զչորեքտասանցն[5] զհաստատութիւն, և զեւթներորդ երկինս, և զամենայն զինուորութիւնս հրեշտակաց. և թող աղօթեմք վասն մեղաւորաց, թերեւս լուիցէ մեզ Տէր Աստուած[6] և ողորմեսցի դոցա։ Եւ ասէ Նախազօրավարն. Կենդանի է Տէր Աստուած մեծանուն. եւթն անկամ յաւուրն՝ և եւթն անկամ ի գիշերին յորժամ զտէրունական օրհնութիւնսն կատարեմք[7], խնդրուածս առնեմք վասն մեղաւորաց, և յոչինչ համարի զմեզ Տէր։ Եւ ասէ ամենասրբուհին ցնախազօրավարն. Աղաչեմ զքեզ հրամայեա զօրաց հրեշտակաց, և ամբարձէք զիս ի բար-

* Բ. օր. աստանօր ի կարգս բանիցն այլապէս ունի և է դոյզն ինչ խառնակ։

1. Բ. օր. յաւելու տանէմ։

2. Բ. չունի և սոքա։

3. Բ. օր. հանգէիցես։

4. Բ. օր. չունի աղաչեմ զքեզ։

5. Բ. օր. հնգետասան յեօթնե- րորդ յերկինսն և բոլ։

6. Բ. օր. յաւելու մեծանուն, և չունի ասել մինչ ցեօթն անգամ։

7. Բ. օր. մտաւոյանեմք և ոչ ինչ համարի զմեզ Տէր, եթէ խնդրիցս առնեմք վասն մեղաւորաց։

Digitized by Google

ձրութիւնս երկնից և ընկեցէք[1] զիս առաջի անտեսա-նելի Հօրն։

Եւ նոյն ժամայն[2] հրամայեաց նախազօրավարն, և վերացուցին[3] սերովբէքն և քերովբէքն. և համբարձաւ[4] ամենասրբուհին յերկինս, և կացուցին[5] զնա առաջի անտեսանելի Հօրն. և ամբարձ[6] զձեռն իւր յա-նարատ Որդին իւր, և ասէ. Տէր ողորմեաց քրիս-տոնէից, քանզի տեսի և ոչ հանդուրժեմ, Թող[7] տան-ջիմ և ես ընդ նոսա։ Եւ եկն[8] ձայն որ ասէր ցնա[9]. Զիա՞րդ ողորմիմ նոցա՝ որ իւրեանց եղբարց ոչ ողորմեցան։ Տեսանեմ զբեւեռս[10] Որդոյ իմոյ, և զիա՞րդ ունիմ[11] ողորմել նոցա։ Եւ ասէ ամենասրբուհին. Տէր քրիստոնէից ողորմեաց, ի վերայ ձեռակերտայ[12] քոյ. զի զամենայն[13] չար ստեղծուած անուն իմ հա-լածէ։ Յայնժամ[14] հոգի ելեալ գայր և ասէր. Սրբու-հի, տիրուհի, օգնեա. Յայնժամ ասէ Տէր առ[15] նա. Լուր ամենասրբուհի. Չիք մարդ ի վերայ երկրի՝ որ կոչէ զանուն իմ, իսկ ես ոչ թողում զնա ոչ յերկինս և ոչ յերկրի։ Եւ ասէ ամենասրբուհին. Ո՞ւր է մար-գարէութիւնն Մովսէսի, ո՞ւր են ամենայն մարգարէքն և հարքն, որք ոչ երբեք մեղուցեալ են. ո՞ւր է սուրբ կիրակէն՝ որ[16] է պարծանք քրիստոնէից. ո՞ւր է զօրու-թիւն սուրբ և պատուական խաչին՝ որ զԱդամ և զԵւա ի հին անիծից փրկեաց։

Յայնժամ Միքայէլ նախազօրավարն և ամենայն սուրբքն, համբարձին միաձայն ասելով. Տէր ողորմեաց

1. Բ. օր. անկեցէք։
2. Բ. օր. առժամայն։
3. Բ. օր. վերանացին։
4. Բ. օր. վերացուցին։
5. Բ. օր. փառան։
6. Բ. օր. տարածեաց զձեռն իւր յաջ մածին որդին և ասէ։
7. Բ. օր. յաւելու ննջեց։
8. Բ. օր. ննջեալ։
9. Բ. օր. չունի ցնա։
10. Բ. օր. յաւելու է ցեռա։
11. Բ. օր. եւ ողորմիմ։
12. Բ. օր. ցեռաքերծոյ։
13. Բ. օր։ զի ամենայն ստեղ-ծուած զանուան իմ եղերե։
14. Բ. օր. չունի մինչև ցՅայն-ժամ։
15. Բ. օր. ընդ արքահն։
16. Բ. օր. չունի որ է։

քրիստոնէից։ Յայնժամ խօսեցաւ Մովսէս և ասէ. Ողորմեաց Տէր՝ որոց զօրէնս քո եդու։ Աղաղակեաց Յովհաննէս[1], և ասէ. Ողորմեաց Տէր որոց ես զաւետարանն քո ուսուցի։ Գոչեաց[2] և առաքեալն Պաւղոս. Ողորմեաց Տէր, որոց ես զպատգամս քո ընծայեցի յեկեղեցիս։

Եւ ասէ Տէր Աստուած. Լուարուք, լուարուք[3] ամենեքեան. եթէ ըստ օրինացն՝ զոր ետն Մովսէսի, և ըստ պատգամացն՝ զոր եբեր Պաւղոս, և ըստ աւետարանին՝ զոր աւետարանեաց Յովհաննէս, նզբիմբք թող դատին։ Եւ[4] ոչ ունէին ինչ ասել սուրբքն, բայց միայն, ողորմեա, արդար դատաւոր։

Եւ ասէ ամենասրբուհին. Տէր, ողորմեաց մեղաւորաց, որք[5] զօրէնս քո պահեցին, որք զաւետարանն քո ընդունեցան և զպատուիրանս քո պահեցին և[6] ընդ սիրելիս եղեն քեզ։ Յայնժամ[7] ասէ ընդ նոսա Տէրն. Եթէ ոք արար դոցա[8] չար, և ոչ հատուցին չարին չար, բարիոք ասես զի զօրէնս իմ և զաւետարանս ընթերցան. իսկ եթէ այսպէս չար[9] հատուցին, զի՞արդ ասես եթէ ընդանիս եղեն. այժմ հատուսցի դոցա[10] ըստ իւրաքանչիւր գործոց իւրեանց։ Յայնժամ[11] լռեալ ամենայն սուրբքն զձայն Տեառն, և պատասխանի տալ ինչ ոչ ունէին, զի ձանձրացան. յայնժամ ողորմութիւն Նորա ծածկեցաւ ի մեղաւորացն։ Եւ ասէ ամենասրբուհին. Ո՞ւր է Գաբրիէլ, որ աւետեաց[12] ինձ զուրախ լերն, եթէ յառաջ քան զյաւիտեանս ծնանիս զանսկզբնակիցն[13] Հօր. և արդ ի վերայ մեղաւորացդ ոչ նայի[14]։ Ո՞ւր է մեծ Նախազօրա-

1. Բ. օր. Յովհաննէս, աւետարանն քո, ասացի ես։
2. Բ. օր. յայնժամ Պօղոս։
3. Բ. օր. չունիք՝ լուարուք։
4. Բ. օր. և ոչ այլ ինչ ասել միայն ողորմեաց արդար։
5. Բ. օր. որոց։
6. Բ. օր. և ընդանիս քեզ եղին։
7. Բ. օր. և ասէ Տէր Եթէ ոք։
8. Բ. յաւելու ինչ։
9. Բ. օր. չարին չար։
10. Բ. օր. նոցա։
11. Բ. օր. չունի ասոր մինչև ցայնժամ։
12. աւետարանեաց։
13. Բ. օր. զնակիցն։
14. Բ. օր. նայեցեալ։

Digitized by Google

վարն, որ զկարկուտն ի վերայ գագաթանն իւրոյ բառնայ և հեղու ի պղծել երկիր. զի վասն չար[1] գործոց մարդկան, պղծեցաւ երկիր, և արգել[2] Տէր Աստուած զանձրեւ օրհնութեան[3] իւրոյ, և ապականեաց զպըտուղս նորա[4]. ո՞ւր են որ անտեսանելոյ Հօր պաշտօնեայք են. ո՞ւր է զօրութիւն պատուական[5] խաչին, որ ոչ գտանի ընդ մեզ յաղաչեալ[6] զՏէր վասն մեղաւորաց: Եկայք ամենայն հրեշտակք, որ բնակեալդ էք յերկինս. եկայք ամենայն արդարք՝ զոր Աստուած արդարացոյց, և համարձակութիւն ունիք բարեխօսել վասն մեզաւորաց: Ե՛կ և դու Միքայէլ Նախազօրավար, որ ես գլուխ անմարմնոցն մինչեւ յաթոռն Աստուծոյ. հրամայեա[7] ամենեցուն, և անկցուք առաջի անտեսանելի Հօրն, և մի՛ կանկնեսցուք մինչեւ լուիցէ Տէր Աստուած, և նայեսցի[8] ի վերայ մեղաւորաց:

Յայնժամ անկան առաջի աթոռոյն Աստուծոյ[9] ամենայն զօրութիւնք երկնաւորաց, և ամենայն դասք հրեշտակաց: Եւ ետես Տէրն զաղաչանս նոցա[10], և գթացեալ ասէ ցմիածին Որդին իւր. Ե՛ջ որդի իմ սիրելի, և տես զհայցուածս մեղաւորացն, և երեւեցո զերեսս քո ի վերայ նոցա: Եւ իջեալ Տէրն, յանարատ յաթոռոյ իւրմէ, և տեսեալ զնոսա[11] որք ի տանջանսն էին, գոչեցին ամենեքեան[12] միաձայն ասելով. Ողորմեաց մեզ, որդի Աստուծոյ թագաւոր յաւիտենից: Եւ ասէ Տէրն լուարուք ամենեքեան որ ի տանջանսդ էք, դրախտ տնկեցի և մարդ արարի ըստ պատկերի իմում

1. Բ. օր. չարութեան մարդկան:
2. Բ. օր. յաւելու եւ:
3. Բ. օր. վասն նանրութեան ե-րեանց:
4. Բ. օր. նոցա:
5. Բ. օր. յաւելու [illegible] եւ [illegible]:
6. Բ. օր. որ է յաղաչել:
7. Բ. օր. եւ հրամայեաց զօրաց հրեշտակաց՝ թող անկցուք:
8. Բ. օր. ողորմեսցի:
9. Բ. օր. ամենասրբուհի սուրբ կոյսն Մարիամ և սուրբ ամենայն:
10. Բ. օր. զամենօրհնեալ սրբուհոյն եւ հրեշտակացն եւ գթացեալ եւ ողորմեալ: Ասէ ընդ որդին միածինն:
11. Բ. օր. զայնոսիկ որ էին տանջանսն:
12. Բ. օր. չունի ամենեքեան:

և ըստ նմանութեան, տէր դրախտին զնա կարգեցի[1], և կեանս յաւիտենականս ետու նմա. իսկ նա զանցեաւ և մեզօք իւրովք մահու մատնեցաւ. բայց ես ոչ ժուժկալեցի տեսանելով[2] զգործս ձեռաց իմոց բռնադատեալս ի բանսարկուէն, այլ[3] եկի յերկիր, մարմին զգեցայ յանարատ մօրէ իմմէ, բարձրացայ ի խաչին[4] զի ազատեցից զձեզ ի հին[5] անիծիցն. ջուր խնդրեցի, և ետուն ինձ քացախ ընդ լեղոյ խառնեալ. ձեռք իմ որ ստեղծագործեցին[6] զմարդն, հարան ի բեւեռաց. ի գերեզմանի եդայ և ի դժոխս իջեալ՝ զԹշնամին կոխեցի և զընտրեալսն իմ հանի[7] անդի. ի Յորդանան օրհնեցի զհնացեալ բնութիւնս մեզօք և ոչ կամեցարուք մկրտել, և մկրտեալքն զպատուիրան[8] իմ ոչ արարին, և վասն այդորիկ գտայք յայդպիսի[9] տանջանսդ[10]։ Իսկ այժմ վասն բանալոյ Հօր իմոյ զերկինս, որ առաքեաց[11] զիս վասն ձեր, և վասն աղաչանաց մօր իմոյ՝ որ վասն ձեր արտասուս բազում եհեղ, և վասն Միքայելի նախազօրավարի իմոյ[12], և վասն բազմութեան վկայից իմոց, որ[13] բազում աղաչեցին զիս վասն ձեր, ահա տաց ձեզ տանջելոցդ ունել հանգիստ[14] զտիւ և զգիշեր զօր սուրբ կիրակէին, ի փառս և ի պատիւ ամենասուրբ Երրորդութեանն. և ասացեալ ամենեցուն՝ ամէն։

1. Բ. օր. արարի։
2. Բ. օր. ժուժկեցի տեսանել։
3. Բ. օր. և։
4. Բ. օր. և բարձրայ ի վերայ խաչէն կամաւորապէս։
5. Բ. օր. յառաջին։
6. Բ. օր. ստեղծ զմարդ, և զսա բեւեռեցի ի վերայ խաչին։
7. Բ. Յօր. հանից. եդաք ըստ Բ. օր.։
8. Բ. օր. զգործս։
9. Բ. օր. չունի յայդպիսի։
10. Բ. օր. յաւելու և ոչ ուրանամ ողորմել ձեզ։
11. Բ. օր. արձակեաց։
12. Բ. օր. չունի իմոյ։
13. Բ. օր. յաւելու՝ շատ և։
14. Բ. օր. յաւելու. ի սուրբ և ի մեծի հինգշաբաթին մինչև յերկուշաբաթն, վասն պատուոյ յարութեան իմոյ փառաւորել զՀայր և զՈրդի և զսուրբ Հոգին։ Եւ պատուական տօնեալ ամենեցուն ասացին. Փառք բարեգթութեան քո, փառք բարեխաւսութեանդ և մարդասիրութեանդ քո, այժմ և միշտ և յաւիտեանս։

## Բ

## ՏԵՍԻԼ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԶՈՐ ԵՏԵՍ

## ՍՈՒՐԲ ԿՈՅՍՆ ՎԱՍՆ ՊԺՈՒԽՈՑՆ

(Ըստ Գ, Դ, Ե, Զ և Է օրինակաց)

Խոնարհեցաւ սուրբ[2] Աստուածածինն Մարիամ երթալ[3] ի լեառն Ձիթենեաց, կալ յաղօթս։ Եւ ի գնալն իւրում խնդրեաց յԱստուծոյ աղօթիւք, որպէս զի առաքեսցէ Տէր զհրեշտակ իւր, զի ցուսցէ նմա զոր[4] ինչ գործի ի վերայ երկրի, և ի ներքին կողմն երկրի[5] ի սանդարամետսն։ Եւ հրամայեաց Տէր Միքայէլի հրեշտակապետին՝ որպէս զի[6] ցուսցէ նմա հրեշտակապետն Միքայէլ, զամենայն զոր ինչ և հրամայեսցէ սուրբ կոյսն։ Եւ ահա բազմութիւն[7] հրեշտակաց[8] դասապետին Միքայէլի, երկրպագեցին տիրամօր կուսին, և գովէին զսուրբ կոյսն ասելով. Ուրախ լեր[9] Հօր նա-

1. Ե. օր. չունի խորագիր. Զ. օր. ունէ, Տեսիլ սուրբ Աստուածածնին, զոր ետես ի լերանն Ձիթենեաց. իսկ Է. օր. Պատմութիւն երանելւոյն Մարիամու Աստուածածնին։
2. Դ և Զ. օր. ամենասուրբն, իսկ Է. օր. խոնարհեցաւ սուրբ։
3. Ե. օր. երթայր։
4. Զ. օր. որ ինչ։
5. Դ. օր. երկնի։
6. Զ. օր. ցուցանէ զնա ի տեղւոջն ի տեղի։
7. Ե և Է օր. բազմութիւնք հրեշտակաց դասապետին Միքայելի։
8. Զ. օր. հրեշտակացն դասապետութեանն։
9. Զ. օր. չունի ասելով մինչև ցբնակարան։

ռազայթ. ուրախ լեր Որդւոյն բնակարան. ուրախ լեր[1] Հոգւոյն սրբոյ տաճար. ուրախ լեր երկնի և երկրի հաստատութիւն[2]. ուրախ լեր մարգարէիցն քարոզ. ուրախ լեր որ քան զամենայն բարձր ես, մինչև յաթոռն Աստուծոյ:

Նոյնպէս և ամենօրհնեալ կոյսն և բերկրեալն[3] գովեաց զհրեշտակապետն Միքայէլ, և զամենայն[4] զօրսն միանգամայն աղաչէր[5] սուրբ կոյսն վասն այնոցիկ որք ի տանջանսն էին՝ բազմութիւնք արանց և կանանց. և ի տրտմութիւն եղեալ եհարց և ասէ. Ո՞վ ոք են այդոքիկ. և զի՞նչ են մեղք դոցա: Ասէ հրեշտակն. Սոքա են որ ի Հայր և յՈրդին և ի սուրբ Հոգին ոչ հաւատացին, և վասն այնորիկ տանջին: Եւ ետես սրբուհին[6] յայլ տեղի խաւար մեծ. եհարց ցհրեշտակն թէ՝ Զի՞նչ է խաւարս այս, և ո՞վ ոք են որ տանջին ի սմա: Ասէ հրեշտակն. Բազում հոգիք կան ի խաւարդ այդ. բարձցի խաւարդ՝ որպէս զի տեսցես[7] զայդ տանջանսդ: Պատասխանի ետուն հրեշտակքն[8] որ պահէին զտանջանսն և ասեն[9]. Պատուէր ունիմք

1. Ե. օր. չունի ուրախ լեր Հոգւոյն սրբոյ տաճար:
2. Զ. օր. ուրախութեան:
3. Է. օր. գովեալն:
4. Դ. օր. յաւելու երկնային:
5. Զ. օր. ունի այսպէս. Եւ աղաչէր Ս. Կոյսն վասն այնոցիկ որք ի տանջանսն էին. և ասէր ցՄիքայէլ հրեշտակն. Պատմեա ինձ զոր ինչ կայ ի վերայ երկրի: Եւ ասէ զօրապետն Միքայէլ. Զոր ինչ հարցանես ընդ իս, ով մայր Աստուծոյ, ես պատմեմ քեզ: Ասէ սրբուհին. Քանի՞ ազգ տանջանք են որով տանջին ազգ մարդկան: Ասէ Միքայէլ. Անթիւ տանջանք են: Ասէ ցնա սրբուհին. Պատմեա ինձ զամենայն որ կայ ի վերայ երկրի: Յայնժամ հրամանաւ տեառն հրեշտակն, և բացան մարդկային կողմանք և երևեցան դժոխք: Եւ ետես սրբուհին Աստուածածինն զոր ի տանջանսն էին բազմութիւնք:
6. Զ. օր. Աստուածածին:
7. Ե և Է. օր. տեսեր: Զ. օր. տեսցեն:
8. Ե և Է. օր. հրեշտակն:
9. Ե և Է. օր. տուեր... ասէմ:

Digitized by Google

յանտեսանելի Հօրէն զի մի՛ տեսցեն դոքա զլոյս՝ մինչեւ գայ Որդին քո օրհնեալ[1]: Եւ ի տրտմութիւն եղեալ սրբուհին, ամբարձ զաչս իւր ի վեր[2] յերկինս և ասէ. Ցանուն Հօր և Որդւոյ և[3] Հոգւոյն սրբոյ, բարձցի խաւարդ՝ որպէս զի տեսից և զայս[4] տանջանս: Եւ առժամայն բարձաւ խաւարն այն. և անդ կային բազմութիւն արանց և կանանց, և կոծումն[5] եղեւ: Եւ տեսեալ զնա[6] սրբուհի Աստուածածինն, արտասուեաց և ասէ ցնոսա. Զի՞նչ առնէք հալածականք. զի՞ կայք աստ տառապեալք, և զի՞արդ[7] գտայք: Եւ ոչ ձայն և ոչ պատասխանի տային[8] տանջեալքն: Ասեն հրեշտակքն որ պահէին[9] զտանջանսն[10]. Ընդէ՞ր ոչ խօսիք ընդ բերկրեալն: Ասեն որք ի տանջանսն էին. Յաւիտենից ոչ տեսաք, և ոչ կարեմք հայել ի վեր: Եւ կային անդ բազմութիւնք արանց և կանանց և մրրիկ յոյժ ի վերայ նոցա: Եւ տեսեալ զնոսա[11] սըրբուհին, ելաց յոյժ: Եւ ասեն ցնա տանջանաւորքն. Կոյս տիրուհի[12] Աստուածածին, Որդին քո ամենօրհնեալն եկն և ոչ եհարց[13], և ոչ Աբրահամ նահապետ և ոչ Յովհաննէս Մկրտիչն, և ամենայն մարգարէքն առ մեզ ոչ երեւեցան. իսկ դու Աստուածածին մայր Աստուծոյ, պարիսպ քրիստոնէից, որ բազում անգամ աղաչեցեր զԱստուած վասն մեղաւորաց, զի՞ այդպէս խնդրեցեր և գտեր զմեզ[14] աստ: Յայնժամ ասէ սըրբուհին ցՄիքայէլ հրեշտակն. Ո՞վ են[15] այդոքիկ, և զի՞նչ են մեղք դոցա: Ասէ ցնա հրեշտակն. Սոքա[16]

1. Դ, Ե, Զ և Է. օր. դնեն օրհնեալն:
2. Զ. օր. չունի ի վեր:
3. Է. օր. չունի և Հոգւոյն սրբոյ:
4. Դ. օր. զայր:
5. Զ. օր. կոծումն մեծ եղև յոյժ:
6. Դ. օր. զայն. իսկ Զ. օր. զնոսա:
7. Դ. օր. յաւելու՝ այդր:
8. Զ. օր. ասէին:
9. Դ և Ե. օր. պահէին:
10. Զ. օր. զնոսա:
11. Ե. օր. նոցա:
12. Զ. օր. Մարիամ:
13. Դ. օր. չունի՝ եհարց. իսկ Զ. օր. եհարց զմեզ:
14. Դ. օր. չունի զմեզ:
15. Ե. օր. չունի են:
16. Դ. օր. չունի ասա են որս

են որ ի Հայր և յՈրդին և ի սուրբ Հոգին[1] ոչ հաւատացին, և զքեզ Աստուածածին ոչ դաւանեցին, և ոչ խոստովանեցան եթէ ի քէն ծնաւ Տէրն մեր Յիսուս Քրիստոս. և վասն այնորիկ[3] տանջին: Եւ արտասուեալ[4] Սրբուհին. ասէ ցայնոսիկ որք ի տանջանսն էին. Ընդէ՞ր այդպէս տառապեալ[5] էք և մոլորեալ էք. ո՞չ գիտէք[6] եթէ անուն իմ հալածէ զամենայն ստեղծուածս: Եւ զայս ասելով դարձեալ անկաւ խաւարն ի վերայ նոցա, որպէս և յառաջն էր:

Ասէ հրեշտակն ցսրբուհին. Զի՞նչ կամիս, ելանեմք ի հարա՞ւ թէ յարեւմուտս: Եւ ասէ Սրբուհին. Ելցուք[7] ի հարաւ: Եւ նոյնժամայն բազմութիւն հրեշտակաց հանին զբերկրեալն ի հարաւային կողմն, ուր ելեալ գայր գետ հրեղէն. և կային[8] բազմութիւն արանց և կանանց. և ոմանք մինչեւ ցմէջսն[9] թաղեալ կային ի մէջ հրեղէն[10] գետոյն, ոմանք մինչեւ ցկուրծսն և մինչեւ ցգլուխսն, կէսք մինչեւ ցփողսն, և այլք մինչեւ ցգագաթսն: Եւ տեսեալ զնոսա սրբուհի Աստուածածինն հառաչեաց և ասաց[11]. Ո՞վ են այդոքիկ, և[12] զի՞նչ են մեղք դոցա, որ մինչեւ ցմէջսն անկեալ կան ի հուրդ: Ասէ հրեշտակն. Սոքա են որ զհօր և զմօր անէծս առին[13], և վասն այնորիկ տանջին:

Եւ ասէ Սրբուհին. Ո՞վ են այդոքիկ որ մինչեւ ցկուրծսն անկեալ կան ի հուրդ: Ասէ հրեշտակն. Սոքա են որ ըստնդիկնոսութիւն[14] իւրեանց պղծեցին և անարգեցին[15], և պոռնկութեամբ աղտեղացուցին[16], և

1. Զ. օր. Հոգին, ոչ խոստովանեցան:
2. Դ և Է. օր. հաւատացին:
3. Զ. օր. յաւելու այդպէս:
4. Ե և Է. օր. արդարացեալ... դատն էին:
5. Զ. օր. դառնացեալ էք մոլորեալք:
6. Զ. օր. ոչ լուայք:
7. Դ. օր. ելանեմք:
8. Դ. օր. յաւելու անդ,
9. Զ. օր. սաստի մինչև և այլք չունի:
10. Է. օր. հրոյն և՛ ոմանք:
11. Զ. օր և եհարց զհրեշտակն ասէ:
12. Դ և Զ. օր. չունին, և զի՞նչ են մեղք դոցա:
13. Զ. օր. ժառանգեցին:
14. Ե. օր. հրեշտակն որ զնենգաւորեան եղբարց:
15. Դ. օր. չունի անարգեցին:
16. Զ. օր. աղտեղացան. իսկ Դ և Ե. օր. աղտեղեցին:

վասն այնորիկ տանջին։ Ասէ Սրբուհին. Ո՞վ են այդոքիկ, որ մինչեւ ցփողսն անկեալ կան ի հուրդ։ Ասէ հրեշտակն[1]. Որ զիւրեանց ծնունդ բերեն և ոչ խրատեն, յորժամ գան ի հասակ՝ թողուն զծնողսն և երթան[2] խառնին ընդ հեթանոսս. և որք մատնեն զեղբարս իւրեանց ի ձեռս առ իշխանս և դատաւորս, և որ զրկէ զընկերն, յամենայն[3] իրս, սոքա կերան ըզմիս մարդոյ, և վասն այնորիկ տանջին։ Եւ ասէ Սըրբուհին. Ո՞վ են այդոքիկ, որ մինչեւ ցգագաթն[4] անկեալ կան ի հուրդ։ Ասէ հրեշտակն. Սոքա են որ ըզպատուական սուրբ խաչն ոչինչ համարին, և երդնուն սուտ, և[5] որք ոչ գիտեն՝ վկայեն, և որք արբենան[6] անառակութեամբ, և վասն այնորիկ տանջին։ Եւ տեսեալ Սրբուհին անդ այլ մարդ կախեալ զոտիցն, և որդունք նման օձից ծծէին զնա. եհարց սրբուհին և ասէ, Ո՞վ[7] է սա, և զի՞նչ են մեղք սորա[8]։ Ասէ հըրեշտակն. Սա այն է որ չահ և տոկոսիս[9] առնոյր ոսկոյ և արծաթոյ, և վասն այն տանջին։

Եւ ետես Սրբուհին կին մի կախեալ յերկու[10] ոտիցն, և ասէ. Ո՞վ է այս կին[11], և զի՞նչ են մեղք դորա։ Ասէ հրեշտակն. Դա այն է որ ունկն[12] դնէր դրացեացն իւրոց և արկանէր բան չար ի մէջ նոցա, որ կռիւ լինէր, և վասն[13] այնորիկ տանջի։ Եւ արտասուեաց Աստուածածինն և ասէ. Լաւ էր մարդոյ թէ չէր ծընեալ[14]։ Ասէ զօրապետն Միքայէլ. Ո՞վ Սրբուհի ոչ է[15]

1. Զ. օր. յաւելու. Ասէ հրեշտակն. Սոքա են որ զմարդոյ միս կերան։ Եւ ասէ սրբուհին. Եւ հնա՞ր է ուտել զմիս մարդոյ։ Է. օր. որ զմարդոյ՝միս կերան։
2. Զ. օր. ընդ խառնակչին։
3. Է. օր. յամենեսեանն։
4. Դ և Ե. օր. գագաթանն։
5. Զ. օր. չունին, և որ ոչ գիտեն վկայեն. իսկ Է. օր. և սուտ վկայեն։
6. Ե. օր. հարբենան։
7. Է. օր. չունի. Ո՞վ է սա։
8. Ե և Է. օր. դոցա։
9. Զ. օր. փոխան առնուան։
10. Զ. օր. երկուս։
11. Ե և Է. օր. Ո՞վ է սա կին. ասէ հրեշտակն։
12. Ե և Է. օր. ականջ դնէր։
13. Զ. օր. վասն այն տանջի։
14. Ե. օր. ծնէր։
15. Դ և Զ. օր. դեռ ոչ է։

Digitized by Google

տեսեալ քո զմեծամեծ տանջանսն: Ասէ Սրբուհին. Կամիմ[1] զի տեսից զամենայն տանջանսն: Ասէ հրեշտակն. Ելցուք[2] յարեւմուտս: Եւ բազմութիւնք հրեշտակաց հանին, զբերկրեալն յարեւմուտս: Եւ ետես Սրբուհին մրրիկ ամպեղէն, և ի մէջ նորա կային աթոռք որպէս բոց հրոյ: Եւ կային բազմեալ ի վերայ նոցա[3] բազում արք և կանայք, և հրեղէն վիշապք ի վերայ նոցա, բոց հրոյն այրէր որպէս եղէգն[4] զմեղաւորսն ի վերայ աթոռոցն: Եւ տեսեալ Սրբուհին հառաչեաց[5] և ասաց[6]. Ո՞վ են այդոքիկ, և զի՞նչ են մեղք դոցա: Ասէ հրեշտակն. Սոքա են որ ի ժամ[7] առաւօտուն սուրբ կիրակէին ի քուն կային, և ոչ գնացին եկեղեցի Աստուծոյ, և վասն այն տանջին: Ասէ Սրբուհին. Եթէ[8] ոք հիւանդ լինի, կամ այլ իրօք տկարացեալ և ոչ կարէ յառնել և գալ յեկեղեցի Աստուծոյ, զի՞նչ արասցէ: Ասէ հրեշտակն. Եթէ ուրուք հրով վառի տուն ի չորից կողմանց, և պատէ հուրն զտունն, և ոչ կարէ յառնել և[9] գալ եկեղեցի Աստուծոյ, ապա ունի թողութիւն:

Եւ ետես այլ տեղի ուր[10] կային բանդրունք[11] հրեղէնք, և ի վերայ նոցա նստեալ կային բազմութիւն արանց և կանանց, որք այրէին ի վերայ նոցա: Եհարց սրբուհին ցհրեշտակն. Ո՞վ[12] են այդոքիկ, և զի՞նչ են մեղք սոցա: Ասէ հրեշտակն. Սոքա են այնոքիկ՝ որ[13] ոչ յառնէին ընդդէմ քահանային, յորժամ գայր յեկեղեցոյ Աստուծոյ, և վասն այն տանջին: Եւ տեսեալ

1. Ե և Է. օր. չամիմ տեսանել:
2. Զ. օր. Ելցէք յարևելս. և տես ժամայն բազմութեանց:
3. Գ, Դ, Ե և Է. օր. Նորա:
4. Ե. օր. զեղեգն:
5. Ե և Է. օր. հառաչէ մեծ դոյա և ասաց:
6. Զ. օր. եհարց:
7. Է. օր. չունի ժամ.. սուրբ:
8. Զ. օր Եթէ ոք ուխտաւոր յառանել զինչ արասցէ:
9. Դ և Զ. օր. չունին, և գալ եկեղեցի Աստուծոյ:
10. Ե. օր. այլուր:
11. Դ և Զ. օր. բագրանք. իսկ Է. օր. բանագրանք:
12. Է. օր. չունի ով են այդոքիկ:
13. Ե և Է. օր. որ ոչ երթայ ընդ քահանային եկեղեցին, և վասն:

սրբուհին ծառ. երկաթեղէն, որ ունէր ճիւղս երկաթիս[1], և ի նոսա կային կախեալ բազմութիւն արանց և կանանց. և տեսեալ զնոսա Սրբուհին՝ արտասուեաց, և եհարց ցհրեշտակն. Ո՞վ են տանջանաւորքդ այդոքիկ։ Ասէ հրեշտակն. Սոքա են երդմնաստերքն չարք և ժանդք և չարախօսք, որք մեկնեցին[2] զեղբայր յեղբօրէն։ Ասէ Սրբուհին. Զի՞ արդ մեկնի[3] եղբայր յեղբօրէ։ Ասէ հրեշտակն. Եթէ ոք ի հեթանոսաց գայ մկրտիլ և այլք ասեն ցնա թէ դու անհաւատ ես և այլազգի և պիղծ ես, և անյոյս առնէ ըզնա, զպատիժն[4] նա կրէ որ անյոյս արար զնա, և վասն այսր տանջի։ Եւ ետես Սրբուհին այլ տեղի տանջանարան[5]՝ մարդ կախեալ զոտիցն, և ընդ ըռընկունսն արիւն իջանէր, և լեզու նորա կապեալ էր ի բոցոյ հրոյն և ոչ կարէր հառաչել և ասել. Տէր ողորմեա ինձ, և կամ աղաչել զսուրբ կոյսն։

Եւ եկն հրեշտակն որ էր ի վերայ տանջանացն և արձակեաց զլեզու նորա[6]։ Եհարց Սրբուհին. Ո՞վ է այս ողորմելիս, որ ունի զայսպիսի հալածանս[7]։ Ասէ հրեշտակն. Սա է կոնոմոսն[8] որ ոչ արար զկամս Աստուծոյ, այլ ուտէր անվախ[9] զինչս եկեղեցւոյն և ոչ աղօթէր. քանզի ասէր, որ ծառայէ զտաճարն՝ ի տաճարէ անտի սնանի. և վասն այնորիկ տանջի աստ։ Եւ ասաց Աստուածածինն. Որպէս և արար, եղիցի դորա. և դարձեալ կապեցաւ լեզու նորա։ Եւ[10] ասէ հրեշտակն. Եկ[11], Սրբուհի ցուցից քեզ ուր տանջին քահա-

1. Ե և Է. օր. չունի որ ունէր ճիւղս (Դ. ճիւղս) երկաթիս։
2. Ե և Է. օր. զատեցին։
3. Զ. օր. մեկնեցին զեղբայր յեղբօրէ. իսկ Ե և Է. օր. մեկնեցին եղբօրէն։
4. Դ. օր. չունի զպատիժն նա կրէ որ անյոյս արար զնա։ Է. օր. զպատիժն Աստուծոյ կրէ։
5. Ե. և Է. օր. տանջանարան, (Գ. օր. չունի տանջանարան) մարդ մի ... և ընդ կրկնկացն արեան։
6. Զ. օր. նորա։
7. Դ և Ե. օր. հալածականս։
8. Յօր. եդեալ էր կոնոնոսն, և զայս ըստ Ե, Զ, և Է. օր։
9. Զ և Է. օր. չունին անվախ։
10. Զ. օր. և ասաց զօրավարն Միքայէլ եկ։
11. Ե և Է. օր. եկ Մարիամ։

Digitized by Google

նայքն։ Եւ եկեալ[1] ետես քահանայս կախեալս ի յօտանցն և հուր իջանէր յընկանցն և ի գագաթաց նոցա, և այրէր զնոսա։ Եւ[2] ասէ Սրբուհին. Ո՞վ են այդոքիկ, և զի՞նչ են մեղք դոցա։ Ասէ հրեշտակն. Սոքա են որ մերձ կան անտեսանելի աթոռոյն Աստուծոյ, որ է սեղանն սուրբ. յորժամ գործէին զմարմին և զարիւն որդւոյն Աստուծոյ անարժան, և վասն երեսաց բաշխէին անարժանից, և շարժէր աթոռն Աստուծոյ, և պատուանդան Փրկչին դողայր, և նոքա ոչ ի մանային, և վասն այնորիկ տանջին։ Ետես Սրբուհին մարդ՝ զի[3] որպէս գազան թեւս ունէր, և երեք գլուխ ունէր որպէս զբոց հրոյ, և այրէր զնոսա։ Եւ ասէ. Ո՞վ է սա, և որպիսի՞ են մեղք սորա։ Ասէ հրեշտակն. Սա է որ ընթեռնոյր, և ոչ առնէր զհրամանս սուրբ աւետարանին, կարդայր[4] և ոչ ուսուցանէր ժողովրդեանն՝ զԱստուծոյ պատուիրանն, և ինքն իսկ ոչ առնէր, և վասն այնորիկ տանջի։ Ասէ հրեշտակն[5]. Եկ մայր Աստուծոյ և ցուցից քեզ ուր տանջին առաքելական[6] և հրեշտակական զգեստքն։ Եւ եկեալ ետես Սրբուհին զբազումս որ կային ի հուրն, և ուտէր զնոսա որդն անքուն։ Եհարց Սրբուհին ցհրեշտակն. Ո՞վ են այդոքիկ, և զի՞նչ են մեղք դոցա։ Ասէ հրեշտակն. Սոքա են որ հրեշտակական և առաքելական[7] զգեստն են զգեցեալ յերկրի, հայրապետք կոչեցան՝ և զԱստուծոյ պատուիրանն ոչ պահեցին. ի մարդկանէ[8] օրհնեցաք սուրբ լսէին[9], և յերկինս ոչ եղեն. քանզի

1. Զ. օր. և եկեալ, և ետես քահանայս ընկեցեալ կախեալ և հուր իջանէր ի գագաթանց նոցա։
2. Զ. օր. և տեսեալ սրբուհին եհարց. Ո՞վ են այսոքիկ։ . . . դոցա։
3. Ե և Զ. օր. չունին զի։
4. Զ. օր. աստի մինչև՝ և ինքն եւս չունի։
5. Զ. օր զօրավիգն Միքայէլ. Եկ մայր Աստուծոյ և սուրբուհի, ցուցից։
6. Դ. օր. աստի մինչև զգեստն են՝ զգեցեալ չունի։
7. Զ. օր. չունի առաքելական։
8. Է. օր. ոչ առնէին. բայց աստի մինչև և ոչ եղեն՝ չունի, նոյնպէս և Զ. օր։
9. Դ. օր. ասէին։

Digitized by Google

ոչ արարին զկամս Աստուծոյ, և ոչ ինչ բարի արարին առ ի պատիւ հրեշտակական զգեստին. և վասն այն տանջին։

Եւ ետես Սրբուհին[1] կանայս կախեալս և[2] ի ծայրից մատանցն՝ գլխիվայր, և բոց հոսէր[3] ի բերանոց նոցա և այրէր զնոսա. և [4]հրեղէն գազանք ուտէին զմարմինս նոցա. հառաչանօք ասէին, ողորմեցարուք ինձ[5], միայն եմ խիստ ի տանջանս։ Եւ Սրբուհին[6] արտասուեաց, և ասէ. Ո՞վ են դոքա, և զի՞նչ են մեղք դոցա։ Ասէ հրեշտակն. Երիցուհիք[7] էին, որ յետ մեռանելոյ քահանայէն՝ առին այլ այր, և վասն այն տանջին։ Եւ ետես Աստուածածինն ի նոյն տեղի կին մի կախեալ և գազան մի երկուգլխէն՝ ուտէր զերկու ստինս նորա. Եհարց սրբուհին. Ո՞վ է սա, և զի՞նչ է մեղք սորա[8]։ Ասէ հրեշտակն. Դա սարկաւագի[9] կին էր որ զմարմին իւր ետ ի պոռնկութիւն, և վասն այն տանջի։ Եւ ետես Սրբուհին և այլ կանայս որ կային ի մէջ հրոյն. եհարց թէ՝ Զի՞նչ են մեղք սոցա։ Ասէ հրեշտակն. Վանուհիք էին դոքա, ի պոռնկութիւն ընթացան[10], և վասն այն տանջին։ Եւ ասէ[11] հրեշտակն. Ե՛կ սրբուհի և ցուցից քեզ ուր տանջին բազում մեղաւորք։ Եւ եկեալ[12] Սրբուհին ետես անդ գետ հրեղէն, և տեսակ գետոյն որպէս արիւն, և գայր[13] գետն որպէս հուր, և ալիք գետոյն ուտէր զմեղաւորսն։ Եւ[14] տեսեալ սուրբ Կոյսն արտասուեաց, և ասէ ցհրեշ-

1. Զ. օր. չունի Սրբուհին։
2. Զ. օր. չունի և։
3. Զ. օր. բոց հրոյ հանէր ի բերանոյ նոցա։
4. Զ. օր. չունի աստի մինչև հառաչանօք։
5. Դ. օր. զի մայն մեք եմք։ իսկ Զ. օր. զի մեք միայն եմք խիստ տանջանս տան զանձինս որ ի տանջանս։
6. Զ. օր. ունի և փոխել զնոսա Սրբուհին
7. Զ. օր. Երէցուհիքն։
8. Զ. օր. զինչ է դա։
9. Ե. օր. սարկաւագի։
10. Գ, Ե և Է. օր. ընթանան։
11. Զ. օր. ասաց հրեշտակն։
12. Է. օր. և փոխել սրբուհին գետ հրեղէն։
13. Դ. օր. չունի գետն որպէս հուր, և ալիք։
14. Դ. օր. չունի և փոխել սուրբ Կոյսն։

տակն. Ո՞վ են այդոքիկ, և զի՞նչ են մեղք դոցա։ Ասէ հրեշտակն. Սոքա են պոռնիկք[1], զրկողք, ոխակալք, քէ-նահանք, որք յառաջին օրն քառասներորդաց պահոցն՝ թողեալ զպահսն յերդումն ընթանան[2]. և որք ի տունս այլ ազգաց կերան զպահսն. և որք բաժանեցին այր և կին, և արբեցողք և բամբասողք, զրախօսք, անողորմ իշխանք. եպիսկոպոս արծաթասէրք, և որք կաշառօք առնեն դատաստան կամ ոսկի և արծաթ շահոյ[3] տան։

Եւ լուեալ սուրբ Աստուածածին, և ասաց[4] արտա-սուօք. Վա՜յ է մեղաւորաց։ Ասէ հրեշտակն. Ընդէ՞ր[5] լաս Սրբուհի, դեռ ոչ է տեսեալ քո զմեծամեծ տան-ջանսն։ Ասէ սրբուհի Աստուածածին. Եկ Միքայէլ մեծ իշխան, և տար ցոյց ինձ զմեծամեծ տանջանսն։ Ասէ հրեշտակն[6]. Զի՞նչ կամիս, ելցո՛ւք յարեւելս ի դրախտն, յաջակո՞ղմն թէ[7] ի ձախակողմն, ուր են մե-ծամեծ տանջանսն։ Ասէ Սրբուհին. Ելցուք ի ձախա-կողմն։ Յայնժամ[8] բազմութիւն հրեշտակաց հանին զքերկրեալն ի ձախակողմն. և ահա գետ հրեղէն կայր անդ, և խաւար մեծ ի վերայ նորա, և[9] տեսիլ գե-տոյն որպէս կպրոյ, և կային անդ բազմութիւն արանց և կանանց։ Սաստկանայր[10] հրոյն բռնութիւն և որ-պէս ի ծով ընկղմէր զմեղաւորս ի խոր[11] անդ, և ոչ կարէին ասել՝ Ողորմեաց մեզ Տէր, արդար դատաւոր. քանզի ուտէր զնոսա որդն անքուն, և կրճտումն ա-տամանց[12] գազանացն, որպէս որոտ ելանէր։

1. Դ և Զ. օր. յաւելուն շը-նոյգոյն, ձողք, սաղաւարտք։
2. Զ. օր. չունի յերդուած ընթացան և որք ի տունս այլազգաց կե-րան զպահն։
3. Դ և Զ. օր. շահօղ. իսկ Ե և Է. օր. շահողք։
4. Դ և Զ. օր. արտասուելով և ասէ վա՜յ։
5. Ե և Է. օր. չունին՝ ընդէ՞ր
6. Զ. նա։
7. Ե և Զ. օր. չունի ելէք ի յախակողմն. Ե և Է. օր. չունին ուր են մեծամեծ տանջանսն։ Ա-սէ սրբուհին. Ելցուք ի յախա-կողմն։
8. Զ. օր. նոյնժամայն։
9. Դ. օր. չունի և տեսիլ գե-տոյն որպէս կպրոյ։
10. Դ և Զ. օր. ծանր՝ սաստ-կանայր։
11. Զ. օր. խորան։
12. Գ, Ե, Զ և Է. օր. ատա-մանց և գազանացն։

Digitized by Google

Եւ տեսեալ[1] զնոսա Սրբուհին և զհրեշտակն որ պահէին զնոսա աշխատեալք յոյժ. և գոչեցին որք ի տանջանսն էին. Սուրբ Աստուած՝ գթա ի մեզ վասն սուրբ Աստուածածնի մօր քո, որ յաւիտեան ոչ տեսաք[2] զլոյս, և այսօր տեսաք ի գալ առ մեզ սուրբ Աստուածածնին: Եւ գովեցին հրեշտակքն զսուրբ կոյսն ասելով. Ուրախ լեր բերկրեալ Աստուածածին կոյս. ուրախ լեր ճառագայթ անանց լոյս[3]. ուրախ լեր[4] ամենասուրբ կոյս, որ բարեխօս ես աշխարհի և ամենայն մեղաւորաց. քանզի յոյժ տրտում եմք վասն մեղաւորաց, տեսանելով զնոսա ի տանջանս: Եւ գոչեցին որք ի տանջանսն էին. Բարի եկիք վասն մեր՝ որ յաւիտենից եմք ի խաւարս[5] յայս: Եւ ասէ Սրբուհին. Վա՜յ է մեղաւորաց, թող տեսցուք զմեղաւորսն: Եւ սուրբ Աստուածածինն բազում հրեշտակօք և դասք մեղաւորաց աղաղակէին. Տէր, ողորմեա[6] մեղաւորաց: Եւ յետ աղաղակին[7], եհարց և ասէ. Ո՞վ է այս գետս, և զի՞նչ է ալիք սորա, և ո՞վ ոք են որ կան ի հուրդ: Ասէ հրեշտակն[8]. Այս գետս է Սաւղոս[9] խաւարային, և ալիք սորա կայծակունք հրոյ, և սա է խաւարն արտաքին. և որք կան ի յայս հուրս, Հրէայք են՝ որք խաչեցին զՔրիստոս որդին Աստուծոյ, և ամենայն ոք՝ որ ոչ են մկրտեալ, և որք ոչ հաւատան ի Հայր և Որդին և ի Հոգին սուրբ Աստուած[10] ճշմարիտ: Եւ քրիստոնեայք որք ուրացան զՔրիստոս և նուիրեցան[11]

1. Դ, Ե և Զ. օր. տեսեալ սրբուհին զհրեշտակն. իսկ Է. օր. Ես սրբուհին տեսանէր զհրեշտակն:
2. Դ. օր. ոչ տեսաք ի գալ առ:
3. Դ և Զ. օր. լուսոյն:
4. Զ. օր. ունի Միքայել հրեշտակապետ որ:
5. Դ. օր. ի տանջանս:
6. Զ. օր. յաւելու Տէր:
7. Զ. օր. աղաղակին դադարեցոյց և եհարց սրբուհին (Դ. ևս ունի սրբուհին) և ասէ:
8. Զ. օր. Միքայել հրեշտակն:
9. Է. օր. աղբոս:
10. Զ. օր. չունի. Աստուած ճշմարիտ. (Դ. ևս չունի զճշմարիտ):
11. Զ. օր. նուիրեցան ի սրբ- տէնստեան մասանէ:

դիւաց, և որք պոռնկեցան ի սնդիկնոսութիւն մեռոնի, և ի[1] մայր և ի քոյր և ի դուստրս: Եւ դեղատուք որ դեղեն մարդիկք, և սպանանեն որպէս սրով, և որք խեղդեն զծնուլն յորովայնի իւրեանց: Եւ ասէ սրբուհին. Ըստ հաւատոց իւրեանց եղիցի դոցա: Եւ նոյնժամայն ծածկեաց զնոսա մրրիկ գետոյն այնորիկ, և անկան հրեղէն ալիքն ի վերայ մեղաւորացն և խաւարն ծածկեաց զնոսա: Եւ ասէ զօրավարն Միքայէլ. Եթէ ոք անկանի յայդ հուրդ, ոչ լինի յիշատակ նորա առաջի Աստուծոյ: Եւ ասէ Սրբուհին. Վա՜յ մեղաւորաց, զի անվախճան[3] է բոց հրոյդ: Ասէ հրեշտակն[4]. Եկ, Սրբուհի, և ցուցից զծովն հրեղէն, և տեսցես ուր տանջին ազգ քրիստոնէից: Եւ ելեալ Սրբուհին ետես զմեղաւորսն, որպէս զհատ[6] մանանխոյ, և եհարց. Ո՞վ[7] են այդոքիկ, և զի՞նչ են մեղք դոցա: Ասէ[8] հրեշտակն. Սոքա են մկրտեալք և ի Քրիստոս միայն նուիրեալք, իսկ զկամս սատանայի արարին, և կորուսին զժամանակն ապաշխարութեան, և վասն այնորիկ տանջին[9]: Եւ ասէ Սրբուհին ցհրեշտակն[10]. Խնդիր մի հայցեմ ի քէն, թող[11] ինձ տանջիմ և ես ընդ մեղաւորսն, զի և նոքա եղբարք որդւոյն իմոյ կոչեցան՝ և որդիք Աստուածոյ: Ասէ հրեշտակն. Դու հանգիր ի վերինն Երուսաղէմ, ո՜վ Սրբուհի: Ասէ սուրբ կոյսն. Աղաչեմ զքեզ յղեա զինն դասս հրեշտակաց և զամենայն զօրութիւնս երկնից, զի աղաչեսցուք վասն մեղաւորաց, թերևս լուիցէ մեզ Հայրն երկնաւոր և ողորմեսցի նոցա: Ասէ հրեշտակն. Կենդանի է Տէր Աստուած մեծ և հզօրն, զի եօթն[12]

1. Զ. օր. չունի ի մայր և ի դուստրս:
2. Ե և Է. օր. յայնժամ:
3. Դ. օր. վախճան է:
4. Զ. օր. հրեշտակապետն Միքայէլ:
5. Ե և Է. օր. տես:
6. Դ. օր. մանանախոս, իսկ Ե. օր. մանանախոյ:
7. Զ. օր. մրկպակաւ զնէ ծովս:
8. Զ. օր. Եւ ասէ նա. Սոքա են մկրտեալք. իսկ զկամսն:
9. Զ. օր. կամելու այսոցիկ:
10. Զ. օր. ցզօրավարն:
11. Դ և Ե. օր. Թող ինձ տանջիմ:
12. Ե և Է. օր. չունին եօթն անգամ յատուկն և:

անգամ յաւուրն, և եօթն ի գիշերին, յորժամ զԱստուծոյ զօրհնութիւնս կատարեմք, խնդրեմք[1] վասն մեղաւորաց, և ոչինչ համարի զմեզ Աստուած: Եւ ասէ սրբուհին ցհրեշտակն. Աղաչեմ զքեզ հրամայեա զօրաց հրեշտակաց՝ որ տանին զիս ի բարձրութիւնս երկնից, և ընկեցէք զիս առաջի անտեսանելի Հօրն: Եւ առժամայն բազմութիւն զօրացն հրեշտակաց[2], և սերովբէքն և քերովբէքն վերացուցին զսուրբ զԱստուածածինն, և կացուցին զնա առաջի անտեսանելի Հօրն. և տարածեաց զձեռն իւր առ[3] անարատ Որդին, և ասէ. Ողորմեա Տէր, քրիստոնէից, քանզի տեսի և ոչ հանդուրժեմ. թող տանջիմ և ես ընդ նոսա: Եւ եկն ձայն որ ասէ ցնա. Զի՞արդ ողորմիմ նոցա որ իւրեանց եղբարցն ոչ ողորմեցան. տեսանեմ զբեւեռս որդւոյ իմոյ, և զիա՞րդ ողորմիմ[4] նոցա: Եւ ասէ Սրբուհին. Տէր, ողորմեա քրիստոնէից, ի վերայ ձեռակերտաց քոց, զի զամենայն ստեղծուածս անուն քո հալածէ:

Ցայնժամ Հօգին իջեալ գայր և ասէր. Սրբուհի[5] տիրամայր, ողորմեա[6] մեղաւորաց: Եւ Տէրն ձայնէ առ սուրբ կոյսն. Լուր սրբուհի. չիք ոք ի վերայ երկրի որ առնէ զկամս[7] Աստուծոյ, իսկ ես զիա՞րդ ողորմիմ նոցա[8], որ ոչ կատարեն զկամս իմ, զի ոչ ունին կեալ ոչ յերկինս և ոչ յերկրի: Եւ ասէ Սրբուհին. Ո՞ւր է մարգարէութիւն Մովսէսի, ո՞ւր են ամենայն մարգարէքն և սուրբ հարքն[9], որք ոչ են երբեք[10] մեղուցեալ. ո՞ւր է սուրբ կիրակէն որ է պարծանք քրիստոնէից. ո՞ւր է զօրութիւն սուրբ և պատուական խաչին՝ որ զԱդամ և զԵւայ ի հին անիծիցն փրկեաց:

1. Զ. օր. չունի. խնդրեմք:
2. Ե, Զ. և Է. օր. չունին հրեշտակաց:
3. Դ, Ե, Է և Զ օր. չունին առ:
4. Ե և Է. օր. չունին ողորմիմ նոցա: Եւ ասէ սրբուհին. Տէր:
5. Դ. օր չունի սրբուհի տիրամայր:
6. Զ. օր. օգնեա:
7. Զ. օր. զկերպն:
8. Զ. օր. նմա որ ոչ կատարէ: Դ. չունի, որ ոչկատարեն զկամս իմ:
9. Ե և Է. օր. հայրապետք:
10. Զ. չունի երբեք:

Digitized by Google

Յայնժամ Միքայէլ զօրավարն և ամենայն սուրբքն համբարձին միաբան զձայնս [1] իւրեանց ասելով. Ողորմեա Տէր, քրիստոնէից: Եւ խօսեցաւ Մովսէս և ասէ. Ողորմեա որոց զօրէնս քո ետուր [2]: Աղաղակեաց Յովհաննէս. Ողորմեա [3] որոց զաւետարանն քո ուսուցի: Գոչեաց և մեծն Դաւիթ. Ողորմեա Տէր, որոց զպատգամս քո ընծայեցի: Եւ ասէ Տէր. Լուարուք ամենեքեան, եթէ ըստ օրինաց զոր ետ ձեզ Մովսէս, և ըստ պատգամացն զոր եբեր Դաւիթ, և ըստ աւետարանին զոր աւետարանեաց Յովհաննէս, նոքօք թող դատին [4]: Եւ ոչինչ ունէին ասել սուրբքն, բայց միայն՝ Ողորմեա Տէր [5] արդար դատաւոր: Եւ ասէ Սրբուհին. Ողորմեա Տէր մեղաւորաց [6], ողորմեա Տէր, որոց զօրէնս քո պահեցին. և զաւետարանս քո ընդունեցին, և զպատուիրանս քո պահեցին, և ընդ սիրելիս եղեն քեզ: Պատասխանի ետ Նոցա և ասէ. Եթէ ոք դոցա չար արար, և ոչ հատուցին չարին չար, բարի ասէք, թէ զօրէնս քո պահեցին. իսկ եթէ չարի չար հատուցին [7], զի՞արդ ասէք թէ յընտանիս եղեն քեզ. այժմ հատուցից ըստ գործոց իւրեանց: Եւ ամենայն սրբոցն լուեալ զձայն Տեառն, և պատասխանի տալ ոչ ունէին, զի ձանձրացան վասն խնդրելոյն. և ողորմութիւն Տեառն ծածկեցաւ ի մեղաւորաց: Եւ ասաց Սրբուհին. Ո՞ւր է Գաբրիէլ, որ ասաց ինձ զուրախ լերն, թէ ծնանիս զէակիցն Հօր անախտ, և նա ի վերայ մեղաւորաց ոչ նայի. ո՞ւր են որ անտեսանելի Հօրն պաշտօնեայքն են. ո՞ւր է զօրութիւն սուրբ խաչին, որ ոչ գտան յաղաչանս Տեառն մերոյ՝ վասն մեղաւորաց: Եկայք ամենայն հրեշտակք

1. Զ. օր. ձայն:
2. Գ. Ե և Է. օր. ետուն:
3. Զ. օր. յաւելու տէր:
4. Դ. օր. թող դատին:
5. Դ. օր. չունի այսպէս ողորմեա տէր մեղաւորաց, զօրէնս քո պահեցին և զաւետարանս քո ընդունեցան, և այլն:
6. Ե և Է. օր. չունին ողորմեա տէր մեղաւորաց:
7. Դ. օր. ունի այսպէս. Եթէ ով դոցա չարին չար, բարի ասէք թէ զօրէնս պահեցին, իսկ եթէ չարին չար հատուցին, և այլն:
Ե. օր. դոցա չար արար և ոչ հատուցին:
Զ. օր. դոցա չար արար և ոչ հատուցին, չարի բարի ասէք:

Digitized by Google

որք կայք յերկինս, եկայք ամենայն արդարք որք բարի գործեցիք յերկրի և արդարացայք, և համարձակութիւն ունիք բարեխօսել առ Տէր վասն մեղաւորաց: Ե՛կ դու Միքայէլ հրեշտակապետ, որ գլուխ ես անմարմնոց[1], հրամայեա և անկցուք առաջի անտեսանելի Հօրն. և մի՛ ոտն կացցուք մինչեւ որ լսէ մեզ Տէր Աստուած, և գթասցի ի մեղաւորսդ[2]:

Յայնժամ անկան առաջի Աստուծոյ, զօրութիւնք և դասք երկնաւորաց, և ամենայն սրբոցն: Եւ[3] ետես Տէր զաղաչանս նոցա՝ որ վասն մեղաւորաց, և գթացաւ ի նոսա և ասաց ընդ Միածին որդին իւր. Էջ որդի իմ սիրելի, և տես զհայցուածս նոցա, և երեւեցո զերեսս քո ի վերայ մեղաւորաց: Եւ իջեալ Տէր, յաթոռոյ փառաց իւրոց, և տեսեալ զնոսա որք ի տանջանսն էին, գոչեցին միաձայն ասելով. Ողորմեա մեզ Որդի Աստուծոյ, Թագաւոր յաւիտենից: Եւ ասէ Տէր. Լուարուք ամենեքեան որք ի տանջանսդ էք: Դրախտ տնկեցի և[4] մարդ արարի ըստ իմում պատկերի և նմանութեան, տէր ի վերայ ամենայնի եդի զնա և զյաւիտենական կեանքն ետու նմա. իսկ նա մեղաւ[5] և մահու[6] մատնեցաւ. իսկ ես ոչ անտես արարի զնա թողուլ ի ձեռն որսողին. եկի[7] առնուլ մարմին յանարատ մօրէն իմմէ, բարձրացայ ի վերայ խաչին, զի զձեզ ազատեցից ի հին անիծիցն: Ջուր խնդրեցի՝ ետուք[8] ինձ քացախ ընդ լեղեաւ[9] խառնեալ. ձեռք իմ ստեղծին զմարդ, ի գերեզմանի զիս եդին. իջի ի դժոխս, ըզթշնամին կոխեցի՝ և զընտրեալս իմ հանի անտի: Առաքեցի իմոց աշակերտացն մկրտել[10] զամենայն ոք յա-

1. Զ. օր. և դասուցն:
2. Ե. օր. մեղաւորաց:
3. Ե և Է. օր. չունելին աստի մինչև փոխելոյն:
4. Ե և Է. օր. և նոր մարդ:
5. Ե և Է. օր. մեռաւ:
6. Դ և Զ. օր. և կամովք իւրովք մատնեցաւ:
7. Դ և Զ. օր. Եկի յերկիր առնել մարմին:
8. Դ և Զ. օր. Ետուաք. Ե. օր. և Է. օր. Ետուն:
9. Դ և Զ. օր. ընդ լեղւոյ:
10. Դ, Ե և Է. օր. յաւելուն յանուան իմ:

նուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ մկրտեցան, և ըզ-պատուիրանն իմ ոչ պահեցին, վասն այնորիկ ի տանջանսդ[1] այդ գտան. իսկ այժմ՝ վասն բանալոյ Հօր իմոյ զերկինս; որ[2] արձակեաց վասն աղաչանաց մօր իմոյ, որ բազում անգամ աղաչեաց վասն ձեր, և վասն Միքայէլի դասապետին վերնոցն, և վասն բազմութեան վկայից իմոց՝ որ յոյժ[3] աղաչեցին զիս. վասն այ-նորիկ ահա տաց ձեզ տանջելոցդ հանգիստ զտիւ և զգիշեր կիրակէին և ի մեծի հինգշաբաթուն, մին-չեւ ի սուրբ Պենտակոստէն, ազատանալ ի տանջանացդ և փառս տալ Աստուծոյ: Եւ պատասխանի տուեալ ասացին. Ամէն, ամէն:

Բարեգթութեան քո փառք (և) թագաւորութեան քո, Հայր և Որդի և սուրբ Հոգի, այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից. ամէն:

1. Դ. օր. ի տանջանսն յանդ:
2. Դ և Ջ. օր. և արհամարհեաց զիս վասն ձեր և վասն աղաչանաց մօր իմոյ, որ բազում անգամ ելաց վասն ձեր:
3. Է. օր. այժմ:



Digitized by Google

որք կայք յերկինս, եկայք ամենայն արդարք որք բարի գործեցիք յերկրի և արդարացայք, և համարձակութիւն ունիք բարեխօսել առ Տէր վասն մեղաւորաց: Ե՛կ դու Միքայէլ հրեշտակապետ, որ գլուխ ես անմարմնոց[1], հրամայեա և անկցուք առաջի անտեսանելի Հօրն. և մի՛ ոտն կացցուք մինչև որ լսէ մեզ Տէր Աստուած, և գթասցի ի մեղաւորսդ[2]:

Յայնժամ անկան առաջի Աստուծոյ, զօրութիւնք և դասք երկնաւորաց, և ամենայն սրբոցն: Եւ[3] ետես Տէր զաղաչանս նոցա՝ որ վասն մեղաւորաց, և գթացաւ ի նոսա և ասաց ընդ Միածին որդին իւր. Էջ որդի իմ՛ սիրելի, և տես զհայցուածս նոցա, և երեւեցո զերեսս քո ի վերայ մեղաւորաց: Եւ իջեալ Տէր, յա՛թոռոյ փառաց իւրոց, և տեսեալ զնոսա որք ի տանջանսն էին, գոչեցին միաձայն ասելով. Ողորմեա մեզ Որդի Աստուծոյ, Թագաւոր յաւիտենից: Եւ ասէ Տէր. Լուարուք ամենեքեան որք ի տանջանսդ էք: Դրախտ տնկեցի և [4] մարդ արարի ըստ իմում պատկերի և նմանութեան, տէր ի վերայ ամենայնի եդի զնա և զյաւիտենական կեանքն ետու նմա. իսկ նա մեղաւ[5] և մաշու[6] մատնեցաւ. իսկ ես ոչ անտես արարի զնա թողուլ ի ձեռն որսողին. եկի[7] առնուլ մարմին յանարատ մօրէն իմմէ, բարձրացայ ի վերայ խաչին, զի զձեզ ազատեցից ի հին անիծիցն: Ջուր խնդրեցի՝ ետուք[8] ինձ քացախ ընդ լեղեաւ[9] խառնեալ. ձեռք իմ ստեղծին զմարդ, ի գերեզմանի զիս եդին. իջի ի դժոխս, ըդթշնամին կոխեցի՝ և զընտրեալս իմ հանի անտի: Աստցի իմոց աշակերտացն մկրտել[10] զամենայն ոք յա-

1. Զ. օր. և դասուցն:
2. Ե. օր. մեղաւորաց:
3. Ե և Է. օր. չունին աստի մինչև քաղեցէն:
4. Ե և Է. օր. և նոր մարդ:
5. Ե և Է. օր. մեղաւ:
6. Դ և Զ. օր. և չամոքէ ե- րակէ մարդնեցաւ:
7. Դ և Զ. օր. եկի յերկիր առի մարմին:
8. Դ և Զ. օր. եդուք. Ե. օր. և Է. օր. եդուն:
9. Դ և Զ. օր. ընդ լեղւոյ:
10. Դ, Ե և Է. օր. յաւելուն յանուան իմ:

Digitized by Google

նուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ մկրտեցան, և ըզ-պատուիրանն իմ ոչ պահեցին, վասն այնորիկ ի տանջանսդ[1] այդ գտան. իսկ այժմ՝ վասն բանալոյ Հօր իմոյ զերկինս ; որ[2] արձակեաց վասն աղաչանաց մօր իմոյ, որ բազում անգամ աղաչեաց վասն ձեր, և վասն Միքայէլի դասապետին վերնոցն, և վասն բազմութեան վկայից իմոց՝ որ յոյժ[3] աղաչեցին զիս. վասն այ-նորիկ աՀա տաց ձեզ տանջելոցդ Հանգիստ զտիւ և զգիշեր կիրակէին և ի մեծի Հինգշաբաթուն, մին-չեւ ի սուրբ Պենտակոստէն, ազատանալ ի տանջանացդ և փառս տալ Աստուծոյ ։ Եւ պատասխանի տուեալ ասացին. Ամէն, ամէն ։

Բարեգթութեան քո փառք (և) թագաւորութեան քո, Հայր և Որդի և սուրբ Հոգի, այժմ և միշտ և յաւի-տեանս յաւիտենից. ամէն ։

1. Դ. օր. ի տանջանան յանդ։
2. Դ և Զ. օր. և արձակեաց զիս վասն ձեր և վասն աղաչանաց մօր իմոյ, որ բազում անգամ ելաց վասն ձեր։
3. Է. օր. այժմ։



Digitized by Google

## Գ

## ՏԵՍԻԼ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ԶՈՐ ՑԱՅՏՆԵԱՑ ՆՄԱ ՀՐԵՇՏԱԿՆ ԶՏԵՂԻ ՏԱՆՋԱՆԱՑՆ [1] ԹԷ ՈՐՊԷՍ ՏԱՆՋԵՆ ԶՄԵՂԱՒՈՐՔՆ

(Ըստ Ը և Թ օրինակաց)

Ով պատուական և աստուածասէր ժողովուրդք[2] և գնեալք պատուական արեամբ Նորա. լուարուք[3] և ի միտ առէք զոր պատմեմ ձեզ զճառս տեսլեան[4] Աստուածածնին մօր Տեառն, և տուք Նմա օրհնութիւն ամենայն բերանով[5], վասն զի Նա է բարեխօս ամենեցուն որ հաւատան ի[6] սուրբ ծնունդն Քրիստոսի, և ապաւինին ի բարեխօսութիւն Նորա։

Յետ համբառնալոյ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և զսուրբ զառաքեալսն առաքեաց յաշխարհս՝ քարոզել և դարձուցանել զմարդիկ յաստուածպաշտութիւն. էր սուրբ կոյսն Մարիամ Աստուածածինն յԵրուսաղէմ քաղաքում աւուրս։

Իսկ ի միումն աւուր զմտաւ ածեալ Սրբուհին և խորհէր խնդրելով ի Տեառնէ, զի յայտնեսցէ և ցուց-

1. Թ. օր. փանճանոյ ժողովրդոց։
2. Թ. օր. յաւելու՝ Քրիստոսի հաստատեցելոց։
3. Թ. օր. լուեցէք։
4. Թ. օր. յաւելու՝ սրբոյ։
5. Թ. օր. յամենայն բերանոյ։
6. Թ. օր. է նա և է սուրբ ծնունդն Քրիստոսի։

Digitized by Google

ցէ[1] զտեղի տանջանացն մեղաւորաց։ Եւ յարուցեալ գնաց ի լեառն Ձիթենեաց. և ամենայն բոյսք երկրի խոնարհեալ երկիր պագին[2] նմա։ Եւ սկսաւ աղօթել առ միածին որդին և Աստուածն մեր, և յաղօթելն իւրումասէ այսպէս. Ո՜ Տէր իմ, և արարիչ Նախայաւիտենական. ո՜ Տէր, միածին որդի[3] իմ և փրկիչ Յիսուս Քրիստոս. ո՜ Տէր[4], որ հոգոց և մարմնոց ունիս իշխանութիւն. որ հաճեցար յաղախին ծառայս քո, և ծնար՝ Աստուած և մարդ կատարեալ, և ստեամբ կերակրեցար և ձեռամբ իմով բարձեալ եղեր, և զամենայն յանձն առեր[5]. խաչեցար և թաղեցար և յարեար ի մեռելոց, զդժոխս աւերեցեր և զամենեսեան[6] ազատեցեր ի մեղսասէր թշնամոյն. համբարձար փառօք յերկինս, և գալոց ես միւսանգամ դատել զամենայն տիեզերս։ Արդ[7], աղաչեմ և խնդրեմ ի քէն, Տէր, նայեաց յերկնից ի սրբութենէ քումմէ յաղաչանս ծառայի և մօր քո, և կատարեա զխնդրուածս իմ՝ որում ցանկայ անձն իմ։ Դու, Տէր, որ սրտագէտ ես ամենայն մարդկան և առատ ես ողորմութեամբ քո, աղաչեմ[9] և խնդրեմ ի քէն, Տէր, առաքեա զհրեշտակապետն քո յերկնից, զի եկեալ ցուցցէ[10] և յայտնեսցէ ինձ զտեղի տանջանաց մեղաւորացն, որ կրելոց են յաւուրն դատաստանի, թէ որպիսի՛ է վիշտ և նեղութիւն նոցա, կամ զի՛նչ տեղի է, կամ ո՛րպէս չարչարին։

Եւ առժամայն առաքեցաւ ի Տեառնէ հրեշտակապետն Գաբրիէլ, բազում հրեշտակօք, և խոնարհեալ երկիր պագին սրբոյ Կուսին և ասէին. Ուրախ լեր Աստուածածին կոյս, անսկզբնական Բանին բնակա-

1. Թ. օր. ցուցանէ։
2. Թ. օր. պատկերին սրբոյ խաչին։
3. Թ. օր. չունի որդի իմ։
4. Թ. օր. չունի՝ Տէր։
5. Թ. օր. յաւելու եկեր և լըցեր զբանս մարգարէիցն։
6. Թ. օր. չունի՝ և զամենեսեան ազատեցեր։
7. Թ. օր. չունի Արդ։
8. Թ. օր. յորժամ ցանկացայ։
9. Թ. օր. յաւելու զքեզ։
10. Թ. օր. ցուցանէ և յայտնէ։

Digitized by Google

րան և մայր միածնի որդւոյն Աստուծոյ, երկըրպագեալ յարարածոց և քարոզեալ ի սուրբ առաքելոցն. զի Տէրն քո միածին[1] և Աստուածն մեր, առաքեաց զմեզ առաջի քո, զի ցուցանեմք և յայտնեմք զխորհուրդս սրտի քո՝ զոր[2] կամէիր գիտել:

Ասէ Աստուածածինն ցհրեշտակապետն. Ուրախ լեր և դու զօրապետ հրեշտակաց և հրամանակատար աներեւոյթ Բանին Աստուծոյ. [3]արդ, ցո՛յց ինձ զխընդրուածս իմ, զոր հրամայեաց քեզ Տէր՝ կատարել զայս: Ասէ հրեշտակապետն. Ո՛վ ամենօրհնեալ Աստուածամայր, այժմ կատարին խնդրուածք քո:

Եւ հրամայեաց հրեշտակապետն[4], և բացան դժոխք, և երեւեցան որք ի սաստիկ և ի սոսկալի տանջանսն էին: Քանզի կային ի միում տեղւոջ կանգնեալ բազմութիւն արանց և կանանց, և ելանէր ի նոցանէ սաստիկ լալումն և հառաչումն[5], որպէս ձայն որոտման ամպոց, և ողբումն և հառաչումն յոյժ: Եհարց ամէնօրհնեալն Մարիամ ընդ հրեշտակապետն և ասէ. Ո՞վ են սոքա: Ասէ հրեշտակապետն. Սոքա այնոքիկ են, որ ոչ հաւատացին ի Հայր և ի սուրբ Հոգին. արդ[6] այնպէս չարչարին յաններելի տանջանս:

Եւ նայեցաւ Սրբուհին յայլ տեղի, և ետես խա

1. Թ. օր. յաւելու որդին:

2. Թ. օր. որում ցանկայիր:

3. Թ. օր. աստի սկսեալ մինչև ցխնդրուածս քո, յաւելեալ ի բանս իւր, ունի այսպէս. և զարթուցանող յանդունդից ննջեցելոցն, և զերանացեալ տան զամենայն դասս հրեշտակաց, տեսանել և խընդրել ի քէն, վասն միածնի որդւոյ քոյ, ցոյց ինձ և յայտնեա զտեղի հօրսոյ մեղաւորացն, թէ զինչ կայցեն է, որպէս վերստին և նեղութեանս դըժոխոցն. և տանէ՞ տեղի պանջանացն՝ յորում շարչարին. և զի՞նչ պատիժս և պատուհասս է նոցա, խոստովան են թէ թէթեւագոյնս: Ասէ հրեշտակապետն. Ո՛վ ամենօրհնեալ Աստուածամայր և պաշտամոր Երրորդութեանն, կատարին խընդրուածս քո:

4. Թ. օր. հրեշտակին:

5. Թ. օր. յաւելու ողբումն:

6. Թ. օր. չունի արդ, և դնէ այսպէս:

Digitized by Google

ւար մի մեծ, և կային անդ բազում հոգիք. ասէ[1] Աս-տուածածինն. Ո՞վ են սոքա որ բնակեալ կան ի Թան-ձրամած[2] և յաղջամուղջ խաւարին, զի ոչ երեւին, այլ զձայնն վայի և ողբալոյ միայն լսեմ. վերացի խա-ւարն, զի տեսից զանտանելի տանջանս՝ թէ ո՛րպէս չարչարին անդ։ Ասէ հրեշտակապետն. Անհնար է քեզ լուսոյդ՝ տեսանել զխաւարային տանջանսն[3], զի պա-տուիրեալ է աներեւոյթին Աստուծոյ՝ մի՛ տեսանել ար-ժանաւորացն զայս տեղի տանջանաց։

Ապա յոյժ տրտմեցաւ[4] Աստուածածինն. հայեցաւ յերկինս արտասուելով՝ ասաց. Յանուն սուրբ Երրոր-դութեան վերացի խաւարն զի տեսից զոր անդ են. և վերացաւ խաւարն սակաւ մի, և ընդ աղօտ ե-րեւեցան[5] բազմութիւն մարդկան. և ելանէր ի նոցանէ ողորմելի գոչումն ի դառն տանջանացն։ Իբրեւ ե-տես Աստուածածինն զնոսա[7], ելաց դառնապէս և ա-սէ. Գերիք և Թշուառականք, ընդէ՞ր եկիք յայսպիսի տեղի տանջանացն։ Եւ նոքա ասեն միաբան. Ո՛վ Աս-տուածամայր, մեք երբեք զլոյս ոչ եմք տեսեալ, յորմէ հետէ անկաք ի դժոխս, և ոչ կարեմք ի վեր հայել. այլ Թաղեալ կամք[8] մինչեւ ցգլուխս մեր յաղջամուղջ խաւարիս, և յաւիտեանս յաւիտենից զայս տեղիս[9] եմք ժառանգելոց. [10]զի սակաւ ժամանակ մի հեշ-տացաք ի մեղս, և յաւիտեան Թիամք անհանգիստ. սակաւ ժամանակաւ ուրախացաք մեղօք, և անդադար լամք և հառաչեմք. զսակաւ լոյս աշխարհի տուաք ի

1. Թ. օր. յաւելու ասաց է։
2. Թ. օր. ունի՝ ի Ծանծրամած խա-ւարին, որ ոչ կարեմ տեսանել. վերացի խաւարն և տեսից զանտանելի տանջանս նոցա։
3. Թ. օր. զայն տեղի տանջա-նացն, պատուիրեալ։
4. Թ. օր. Եւ յոյժ տրտմեալ։
5. Թ. օր. դնէ Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյ սրբոյ, վե-րացի խաւարն. և տանջմանցն վերացաւ, և երեւեցան։
6. Թ. օր. ահեղ գոչումն և ող-բումն։
7. Թ. օր. չունի զնոսա։
8. Թ. օր. Ծանծրամած խաւա-րեալ կամք։
9. Թ. օր. տեղի տանջանացս։
10. Թ. օր. աստի մինչև բայց դա-սացեր Աստուածածին, չունի։

Digitized by Google

մեղս, և անելանելի միամբ ի խաւարիս, ոչ տեսանեմք ի մարդկանէ օգնական: Բայց դու սուրբ Աստուածածին, պարծանք[1] քրիստոնէից երեւեցար[2] մեզ. [3]արդ, աղաչեմք զքեզ, օգնեա մեզ, զի ոչ ոք է իբրեւ զքեզ մեծ առաջի Աստուծոյ:

Ասէ Աստուածածինն ցհրեշտակապետն. Զի՞նչ մեղք են սոցա, որ այսպիսի անողորմ չարչարին[4]:

Ասէ հրեշտակապետն. Սոքա այնոքիկ են, որ ոչ հաւատացին ի միածին որդին քո՝ որ ի քէն ծնաւ, ի ճշմարիտ Աստուածն յաւիտենից. [5]և որք զհերձուածս և զայթագղութիւն խօսեցան զքէն և որդւոյ քո. վասն որոյ դոքա տանջին յաւիտեան, և ոչ են ազատելոց[6]:

Ասէ դարձեալ Աստուածածինն. Ո՜վ թշուառականք, ընդէ՞ր այնպէս չար պատրանօք մոլորեցայք, [7]և ոչ լուարուք սուրբ գրոց և լինել ուղղափառ քրիստոնեայ. զի ոչ ես և ոչ ոք կարէ ազատել զձեզ ի տանջանաց, թէպէտ խղճալիք թուեցայք ինձ և ողորմելի, զի այդ է բաժին անհաւատին և ուրացողին: Ապա դարձաւ խաւարն ի վերայ և ծածկեաց զնոսա:

[8]Ասէ Աստուածածինն ցհրեշտակապետն. Ցոյց ինձ զայլ տեղի տանջանաց: Եւ անցեալ յայլ տեղի տանջանաց. եւտես գետ մի հրեղէն, և ի միջի նորա բազում արք և կանայք, ոմանք թաղեալք մինչեւ ցը-

1. Թ. օր. յաւելու՝ և պարէտ:
2. Թ. օր. դնէ՝ եկեր առ մեզ:
3. Թ. օր. պակաս մինչև առաջի Աստուծոյ չունի:
4. Թ. օր. որ այսպիսի չարչարին:
5. Թ. օր. պակաս մինչև Որդւոյ քոյ չունի:
6. Թ. օր. չունի և ոչ են ազատելոց:
7. Թ. օր. պակաս մինչև ծածկեաց զնոսա, ունի այսպէս. և ոչ լսաք սուրբ Հօրդ պատուիրանաց, զի պարտ էր լսել Քրիստոնէից. և դարձեալ խաւարն ծածկեաց զնոսա:
8. Թ. օր. զայս ասէն մինչև ցԹաղեալ արք և կանայք, ունի այսպէս. Ասէ Աստուածածինն ցհրեշտակապետն. Երթիցուք յայլ տեղի տանջանաց. և գնացին. և անդ գետ հրեղէն և կային անդ արք և կանայք Թաղեալք:

զօտիս իւրեանց, ոմանք մինչեւ ի պարանոցն, եւ այլք մինչեւ ցգագաթն, եւ կէոք բնաւ ոչ երեւէին[1]: Ասէ Աստուածածինն ցհրեշտակապետն. Աւաղ, աւաղ[2], ո՞վ են սոքա: Ասէ հրեշտակապետն[3]. Սոքա այնոքիկ՝ որ մինչեւ ցգօտին են թաղեալ ի հուրն, նոքա՝ որ[4] բարկացուցանեն զծնօղս[5] եւ ոչ են կացեալ հնազանդ[6], եւ զանէծս հօրն եւ մօրն իւրեանց ժառանգեցին[7]: Եւ որք մինչեւ ի պարանոցն են թաղեալ, այնոքիկ են՝ որ ոչ պատուեն[8] զկնքաւորս իւրեանց, այլ պոռնկական[9] գնացիւք վարեալ են զհետ նանրութեանց աշխարհիս[10]: Եւ որք մինչեւ ցգլուխն են թաղեալ, նոքա այն[11] կանայքն են, որ յորժամ ծնանին՝ ձգեն զաւակն իւրեանց եւ մեռուցանեն, եւ կամ յորովայն հեղձուցանեն[12], նոքա մարդակերպ անասունք են, ընդ մարդասպանս դատապարտին: Եւ այնոքիկ՝ որ ծածկեալ կան ի մէջ հրոյն[13], նոքա սուտ են երդուեալ յԱստուած եւ ի քեզ եւ ի սուրբ եկեղեցի եւ ի խաչն պատուական:

Ետես Աստուածածինն յայլ տեղի տանջանաց բազմութիւն մարդկան, որք[14] անկեալ կային չարաչար, եւ անքուն որդք վիշապացեալ ուտէին[15] զմարմինս նոցա: Ասէ Աստուածածինն. Ո՞վ են սոքա: Ասէ հրեշտակապետն. Սոքա վաշխ եւ տոկոսիս ժողովեալ են, զորբս եւ զայրիս եւ զաղքատս զրկեալ են[16], եւ ոչ նայե-

1. Թ. օր. կէսք անյայտք եւ գլուխովք:
2. Թ. օր. զնէ՝ աղաղակեմ պէտք պատմեա ինձ, ո՞վ են սոքա:
3. Թ. օր. յաւելու ո՛վ Աստուածամայր. այնոքիկ:
4. Թ. օր. չունի ի հուրն:
5. Թ. օր. բարկացուցեալ են, զծնօղս իւրեանց:
6. Թ. օր. յաւելու՝ նոցա:
7. Թ. օր. ժառանգեալ են:
8. Թ. օր. են պատուեալ:
9. Յօր. պոռնկական:
10. Թ. օր. յաւելու նոքա եւ տանջին ի գեհեան հրոյն:
11. Թ. օր. չունի նոքա են այն:
12. Թ. օր. չունի եւ կամ յորովայն հեղձուցանեն:
13. Թ. օր. ունի այսպէս. Եւ այնոքիկ որ անյայտք եւ գլխովքն են թաղեալ:
14. Թ. օր. չունի որք:
15. Թ. օր. եւ որդունքն ուտէին:
16. Թ. օր. Սոքա վաշխ եւ տոկոսիւք զորբս եւ զայրիս եւ զաղքատս զրկեալ են:

Digitized by Google

ցեալ ի դատաստան Աստուծոյ : Ետես Աստուածածինն, և ահա գազանք ուտէին զանձն նոցա[1], և ոմանք յիժից և քարբից քանցէին զաւնկն նոցա. եհարց վասն նոցա : Եւ ասէ հրեշտակն[2]. Կինն այն կաւ յարուցեր է, վասն այնորիկ ամենայն ոսկերոքն ի կոււս գազանաց տայլի, և զի ունկն դնէր և զչարն բորբոքէր և հայհոյել տայր, զօրէնս Աստուծոյ ոչ երբեք յիշէր, վասն այնորիկ իժ և քարբ զլսելիս նորա խայծատեն միշտ :

Ասէ Աստուածածինն. [3]Վա՜յ մեղաւորաց, որ այդ անտանելի տանջանքդ պատրաստեալ է նոցա. զի ոչ հաւատան սպառնալեացն Աստուծոյ, և ոչ յիշեն, թէ վասն այնորիկ բազումք սովեցան, ծարաւեցան, մերկ և անհանգիստ եղեն, և այլ բազում չարչարանս կրեցին յաշխարհի, զի յայսպիսի տանջանաց ազատեսցին. այլ երանի եթէ մեղաւորք չէին ծնեալ կամ եկեալ յաշխարհի[4] :

Ապա[5] դարձեալ ասէ ցհրեշտակն. Ցո՛յց[6] ինձ զայլ տեղի. և գնացին, և տեսանէին յարեւմտից կողմանէ ամպ հրեղէն ուժգին, և բազմութիւն քրիստոնէից կային անդ արք և կանայք, և բոցեղէն օդք ուտէին զնոսա : Ասէ Աստուածածինն. Ո՞վ են սոքա : Ասէ հրեշտակապետն. Սոքա այնոքիկ են, որ զուխտ եկեղեցոյ արհամարհեն[7], և ի տեղի աղօթից ոչ եր-

1. Թ. օր. ունի այսպէս. և ահա կէսն մի կախեալ կայր և ահեղակերպ գազանք ատամէին զանձն նորա. եհարց վասն նորա :
2. Թ. օր. այս տուն մինչև ցխայծառքն մեր, այսպէս ունի. Ասէ հրեշտակապետն. Կախ- յարուցանէր և ականջբորո- թեան տանէր և հայհոյել տայր զօրէնսն Աստուծոյ և անզգամաթեամբ խօսէր և յօրէնս Աստուծոյ ուրանայր :
3. Թ. օր. չունի սատի մինչև ցաղաղակեսցին այլ :
4. Թ. օր. յաւել է վերայ երկրէ, և յաւելու՝ բայց բարեխօսու- թեամբ խմոր կաթողիկէն ամենայն խնդրեմ մարդկան :
5. Թ. օր. չունի ապա :
6. Թ. օր. երթեցաք յայլ :
7. Թ. օր. յաւելու պղծութեան սիրեն :

թան, և զոր կիրակի ոչ պահեն և պատուեն[1], և ըզպտուղ եկեղեցոյ և զիրաւունս քահանային՝ կտրեն և ոչ տան[2]. [3]վասն որոյ ո՛չ թէ քահանային չտան, այլ զուխտ և զհրամանն Աստուծոյ անարգեն և զնզովս ընդունին. վասն որոյ կտրեալ է ողորմութիւն Աստուծոյ ի նոցանէ, և տապանեան ամբախառն հրով յաւիտեան:

Դարձեալ տեսանէր սուրբ Կոյսն[4], բազում արք և կանայք զի կախեալ կային զլեզուէն[5] իւրեանց չարաչար. և[6] ասէ ցհրեշտակն Ո՞վ են սոքա: Ասէ հրեշտակն. Սոքա այնոքիկ են, որ տեսանեն զքահանայն և ոչ ասեն, Օրհնեա տէր. այլ կան և մնան զի քահանայն զողջոյն տայ[7], և լինի Քրիստոսի հակառակ. և կամ պատճառեն, թէ օտար է կամ աղքատ և կամ անարժան. վասն զի Քրիստոս հրամայէ բերանովն[8], թէ յորժամ տեսանես զքահանայն՝ իբրև զիս համարեա, զի ես ետու նմա զաստուածատուր իշխանութիւն, Թէ զոր կապեսցէ յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս, [9]և զոր արձակեսցէ յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս:

Ետես Աստուածածինն ծառ մի փշալից[10] սաստիկ և դժնդակ ոստովք, և կախեալ կային զոտիցն[11] բազումք. եհարց և ասէ. Եւ դոքա զի՞նչ մեղք են: Ասէ հրեշտակն. Սոքա հայհոյիչք են և բամբասողք[12], [13]և ոյք զպտուղ եկեղեցւոյն ուտեն և ոչ լնուն զպէտս

1. Թ. օր. դնէ միայն ուղղափառքն:
2. Թ. օր. յաւելու՝ վասն այնորիկ տանջին յաւիտեան:
3. Թ. օր. չունի աստի մինչև ցյաւիտեան:
4. Թ. օր. յաւելու Մարիամ:
5. Թ. օր. ի լեզուաց:
6. Թ. օր. եհարց զհրեշտակն և ասէ. Ո՞վ են:
7. Թ. օր. տայցէ ողջոյն նոցա և չունի լինի Քրիստոսի հակառակ:
8. Թ. օր. չունի բերանովն:
9. Թ. օր. չունի աստի մինչ ցերկինս:
10. Թ. օր. չունի փշալից սաստիկ:
11. Թ. օր. ընդ ոտիցն:
12. Թ. օր. յաւելու վասն այսորիկ չարաչար պատժին:
13. Թ. օր. չունի աստի մինչև ի չար ոտիցն ծառոյն:

նորա. վասն որոյ բերանոյն քամբասէր՝ փուշք խո-ցոտեն, և զոտսն՝ որ ընթանայր ի լսել զչարն, կախեալ են ի չար ոստիցն ծառոյն:

Ետես Աստուածածինն յայլ տեղիս. և ահա մերկ պարանոց[1] կախեալ կային ոմանք[2] ի ձեռաց իւրեանց և անանց[3] հրով տոչորէին: Եհարց և ասէ. Զի՞նչ է պատուհաս դոցա: Ասէ հրեշտակն. Այս այն քահանայքն են, որ ոչ են պատրաստ՝ և ի սուրբ խորհուրդն մերձենան, և ոխս պահեն ժամանակաւ[4] և պատարագս մատուցանեն[5], [6]և զընկերն արհամարհեն և ատեն՝ և աղօթս մատուցանեն. զոր իբրև քան զպոռնիկս վատթար է ոխապահն, և պատարագն այնպիսոյն՝ բարկացուցանէ զԱստուած:

Դարձեալ տեսանէ Աստուածածինն լիճ մի հրեղէն, և անքուն որդունք կային ի նմա, նման մեծամեծ լերանց[7]. և բացեալ զբերանս իւրեանց խայծատէին զնոսա, որք էին ի լճին, արք և կանայք[8]. եհարց և ասէ. Ո՞վ են սոքա: Ասէ հրեշտակն. Սոքա են յիշոցնատուքն, որ պեղծ բերանովն իւրեանց բարկացուցանեն զԱստուած, և չնացողք և պոռնիկք և իգացեալք և արուագէտք, և դոքա անբժշկելի տանջին:

Եւ տեսանէր Սրբուհին գետ մի հրեղէն և խաւար աղջամղջին, և որպէս զձէթ եռայր ի մէջն, և որք կային անդ արք և կանայք՝ այրէին և խորովէին հանապազ[9]: Ասէ Աստուածածինն. Ո՞վ են սոքա. վերացի՛ր խաւարն զի տեսից[10] զնոսա: Եւ առժամայն վերացաւ խաւարն. և աղաղակեցին միաբան և ասեն. Ո՜վ Աստուածամայր, անշիջանելի՛ լոյս, և դու Գաբրիէլ

1. Թ. օր. մերձաղարանոց:
2. Թ. օր. դնէ մարդիկ:
3. Թ. օր. անանցանելի:
4. Թ. օր չունի ժամանակաւ:
5. Թ. օր. յաւելու՝ վասն այնո-րիկ դատաստանին:
6. Թ. օր. չունի աստի մինչև ցբարկացուցանէ զԱստուած:
7. Թ. օր. չունի նման մեծամեծ լերանց:
8. Թ. օր. դնէ՝ խայծատէին զմար-մինս բազմաց արանց և կանանց:
9. Թ. օր. և որպէս զձէթ եռայր և կային ի նմա բազմամբոխ արանց և կանանց:
10. Թ. օր. փեսանեմ:

հրեշտակապետ, բարեխօս լերուք մեղաւորացս․ զի մեք բնաւ[1] լոյս չեմք տեսեալ, [2] և հանապազ երերամք ի տարտարոսիս․ բայց լոյս Աստուածածնիդ ծագեաց առ մեզ իբրև զարեգակն[3]։ Ասէ Աստուածածինն․ Ո՞վ են սոքա[4]։ Ասէ հրեշտակն․ Սոքա այնոքիկ են, որ խաչեցին զքո միածին որդին զՏէրն մեր Յիսուս Քրիստոս․ հալածեցին զսուրբ մարգարէսն և զառաքեալսն և սուրբ մարտիրոսսն չարչարեցին[5], և զմկրտութիւն և զպատարագն արհամարհեցին[6], և ոչ կարացին ապաշխարել․ դոքա յաւիտեան տանջելոց են։ Ապա դարձեալ խաւարն և ծածկեաց զնոսա։

Եւ ասէ հրեշտակն․ Ո՞վ սրբուհի, ե՛կ և ցուցից[7] քեզ զտարտարոսն, գլալ աչացն և զկրճել ատամանցն․ գնացին։ Եւ ետես Սրբուհին, և ահա տարտարոսն երևէր մթապատ խաւարաւ, և ձայն սաստիկ լալոյ և ատամանց կրճտելոյ․ և կային անդ բազումք և լային, յաւէտն տանջէին, և ոչ ոք ողորմէր նոցա[8]։

[9][ Եւ ամա՛նք ողորմելի ձայնիւ ասէին․ Լացէք, և լալով երգել զԳաբրիէլ, մի՛ թէ յողբս չարժել՝ որ գայ զմեր հոգիս քակել, զմեզ յահեղ ցաւէս վճարել․ լաւ էր յաշխարհի հրով այրել, քան անշէջ հրով կսկծել․ լաւ էր՝ որ կտրատամահ մեռանել, քան անմահ մնալ և տանջիլ․ անօգնական մնալ՝ քան թէ արարչին յաչաց ելեր, չկամի ոք մեզ ողորմել․ մեր ստեղծօղն է մեզ խռովել, այնպէս կսկիծ է տաւել, որ լալու չու-

1․ Թ․ օր․ երբէք։
2․ Թ․ օր․ չունի ասոր մինչև է տարտարոսին։
3․ Թ․ օր․ քան զարեգակն պայ-ծառ։
4․ Թ․ օր․ յաւելու կամ զինչ պատասխան տայ։
5․ Թ․ օր․ յաւելու՝ և կախար-դութեամբ վարեցին զկեանս իւ-րեանց։
6․ Թ․ օր․ ունի այսպէս և ըղ-նաւէրքն ոչ կարացին և ոչ ապաշխարեցին։
7․ Թ․ օր․ Ո՞վ սրբուհի երեկեցար յայլ տեղի չարչարանաց և ցու-ցէց։
8․ Թ․ օր․ յաւէտն և յերկեալքն և ոչ ոք ողորմէր նոցա։
9․ [ ] փակագծեալ չափաւ բանքդ՝ յաւելեալ են ի ռամիկ գրչէ, զոր չունի Թ․ օր․։

նիմք դադարել. ե՛նց սառնամանիք է և ցրտել, որ կրճտումն ատամանցն է եղեր]։

Եւ ասէ Աստուածածինն. Ո՞վ են սոքա ողորմելիքս, որ ի յայնպիսի դառն նեղութիւն և ի վիշտս[1] կան։

Ասէ հրեշտակն. Սոքա այնոքիկ են, որ ոչ են խոստովանեալ զմեղս իւրեանց, և ոչ են հաղորդեալ ի մարմնոյ և արեան[2] Քրիստոսի. ոչ են ողորմել աղքատացն[3], զորբս և զայրիս զրկեալ են, մինչև ի յօրն մահուն՝ ո՛չ դարձել և ո՛չ խոստովանել, այլ անդարձ են մեռանել[4] և փոքր համարել զմեղսն. վասն այնորիկ այնպիսի տանջանս է պատրաստեալ դոցա։

Դարձեալ, [5][ետես սուրբ Կոյսն, և այլ մեծ և ահագին տեղի տանջանաց. զի յահագին խոր վիհ մի տեսանէր այլակերպ և սևադէմք, և նոքա զոմանց, որ անդ կային բազում մարդիկ, գլեզուս հանէին և զանքուն որդունս կախէին ի լեզուէն՝ զի ծծէր. և զոմանց զհրացեալ շամփուրս անցուցանէին ընդ լսելիսն, և զոմանց զաչսն հանէին, զոմանց յըռընկունս մրրիկ ծխոյ անցուցանէին, զոմանց զսիրտն ծակոտէին հանապազ սրով սաստիկ. զոմանց զձեռս և զոտս կապէին և ի խաւարն անդընդոցն արկանէին. զոմանս գլխիվայր կախէին յաղջամղջին խաւարին, զոմանս անհնարին վիմօք՝ ի վերայ սրտին եդեալ, և այլ բազում տանջանօքն տանջէին։ Իսկ յորժամ ետես զայս ամենայն Աստուածածինն, զահի հարեալ եղաց դառնապէս, և ասէ ցհրեշտակապետն. Ո՛վ հրեշտակապետ, դողացաւ անձն իմ յայս տեսլենէս. այլ ասա ինձ զամենայն ճշմարտապէս, ո՞վ են այնոքիկ ողորմելիքն։

Ասէ հրեշտակապետն. Ես պատմեցից քեզ զամենայն։ Այն որ սևադէմք էին՝ չար հրեշտակք են, որ տանջեն զմեղաւորսն, որպէս չար դահիճք թագաւորաց.

1. Թ. օր. ի նեղութեան վշտի։

2. Թ. օր յարենէն։

3. Թ. օր. աղքատք են։

4. Թ. օր. դնէ այսպէս. այլ մինչև յետին օրն ի տառապանս ընչոյն ոչ են դարձեալ և խոստովանեալ... մնացեալ. և չունի՝ և փոքր համարել զմեղսն։

5. [ ] փակագծեալդ աստի սկսեալ յէջն 430 չիք ի Թ. օր։

Digitized by Google

զի զորոց լեզուսն ծծէին որդունքն՝ լեզուանիքն են և անզգամքն և բամբասողքն, որ խոցոտեն զմարդիկ և ուրախանան, և չեն տեսեալ՝ ասեն, և ջանան ի յամենայն լսելիս արկանեն։ Եւ զորոց լսելիս խոցոտէին՝ նոքա են՝ որ զչարն լսեն և ուսանին, և ընդդէմ բանից գրոցն խցեն զականջս, և ոչինչ համարէին։ Եւ զորոց զաչսն հանէին, նոքա են՝ որ չարակնեն զբարիս ընկերին, և ոչ կամէին զաստուածատուր շնորհս ընկերին և կամ զաջողութիւն զոր ետ Աստուած. և որք զմրրիկ ծխոյ ունէին, նոքա են՝ որ զհոտ առնուն մեղացն ուրախանան և գործեն՝ զբազում չարիս։ Եւ զորոց զսիրտն ծակոտեն հանապազ, նոքա են՝ որ զչար խորհին ի սիրտս իւրեանց, չնան, գողանան, սպանանեն, և ոչ չիջուցանեն զբոց մեղացն բարի խորհրդով։ Իսկ որք ձեռօք և ոտովք կապեալ են, նոքա են՝ որ ձեռօքն զրկեալ են և մեղս չօշափեալ և ոտիւքն ի մեղս գնացեալ։ Իսկ որ կախեալ են գլխիվայր, նոքա են՝ որ հպարտ են և ամբարտաւան, զինքեանս փառաւոր կարծեն քան զընկերն, և իւրեանց չարն փոքր թուին և ընգերին մեծ, և ամենեւին զկամս իւրեանց պաշտեն և զինքեանս գիտեն միայն ճշմարիտ։ Եւ որք զվէմն ունէին եդեալ ի վերայ սրտին, նոքա խաբեալ են զանմեղսն և կցորդարարեալ չարեաց իւրեանց, և ինքեանքն անմեղացեալ և զանմեղն իւրեանց չարեացն պատճառ եդեալ. վասն որոյ որ զմարդ խաբէ՝ զԱստուած է խաբել, զստեղծիչ մարդոյն. և զի ոչ ազատեցին զանմեղն ի չար անուանէ և ոչ խոստովանեցան։

Ետես Աստուածածինն և այլ զարմանալի իրս. և զոմանս ի մէջ կտրէին սուսերաւ, և զոմանս ի գեհեն բորբոքեալ բոցոյն խորովէին անխնայաբար. և նոքա վայ և եղուկ կարդային հանապազ և կոծէին։ Ասէ Աստուածածինն. Ո՞վ են սոքա։ Ասէ հրեշտակն. Եւ որ սրով ընդ մէջ կտրէին, նոքա են՝ որ ոչ ունին զգործս բարիս և զրկեալ են զամենայն ոք. կտրեն ի նմանէ զշնորհս աւազանին և տան ի զրկեալն, և ինքեանք մնան որպէս զանհաւատ, և չունին մասն

և բաժին ի Քրիստոսէ. վասն այնորիկ դատապարտին: Եւ որք անխնայաբար խորովէին, նոքա են՝ որ նախանձին և չարախօսեն և սպանանեն զանուն ընկերին՝ մակադրութեամբ անուամբ և կատակութեամբ. վա՜յ նոցա, զի Քրիստոս զիւր անուն տայ քրիստոնէին ի մկրտութիւն, և նոքա որ փոխեն զանուն և լինին սատանայ, և զիւրեանց չար անուն դընեն. զի Քրիստոս հրամայէ, վա՜յ որ ասէ վատ անուն եղբօրն և յիմար. վասն այնորիկ պարտական են նոքա գեհենին, որպէս ասէ Տէրն. և ո՛ր կին որ Քրդու տղային ծիծ տայ, նա մասն ի Քրիստոսէ չունի]:

Ասէ Աստուածածինն. Լաւ էր եթէ չէին[1] մեղաւորք ի վերայ երկրի. բայց անհնար է ինձ համբերել, եթէ ոչ աղաչեցից զՈրդին իմ միածին վասն աւազանածին քրիստոնէից, թերեւս ողորմեսցի նոցա[2]:

Ասէ հրեշտակն. Ո՛վ Սրբուհի[3] անարատ, թող զդոսա, և եկ տարայց զքեզ յայն[4] տեղին՝ զի տեսանես զոր քեզն է պատրաստեալ որդին քո և Աստուածն մեր, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ[5]:

Ասէ Աստուածածինն. Ոչ, այլ աղաչեմ զքեզ[6] հրեշտակապետ, և ես և դուք աղաչեսցուք զԱստուած ի բարձանց, զի գթասցի յիւր ստեղծուածս և ներումն արասցէ տագնապելոց քրիստոնէից տանջանաց[7]:

Ասէ հրեշտակապետն. Ո՛վ ամէնօրհնեալ Աստուածածին, մեք յամենայն ժամ կարգեալ կամք առաջի[8] աստուածութեան նորա, բայց դու՝ յորժամ որդին քո

1. Թ. օր. յաւելու ծնեալ:

2. Թ. օր. ունի այսպէս. Բայց անհնար է ոչ թողուլ զայնոսիկ որ յայտակիսի տանջանս. որք զկերպարանս ոսկերք աստուածին որդւոյ իմոյ առին և բերեցանէին անապատանցան:

3. Թ. օր. յաւելու կոյս:

4. Թ. օր. յայլ:

5. Թ. օր. աստէն յաւելու՝ զխորանն լուսոյ, ուր ոչ գոյ հեծութիւնք և տրտմութիւնք:

6. Թ. օր. դնէ՝ հրամայեա զի ելցեն յերկնից դասք հրեշտակաց և ես:

7. Թ. օր. չունի՝ տանջանաց:

8. Թ. օր յաւելու՝ փառաց:

Digitized by Google

փառաւորեսցէ զքեզ, յայնժամ[1] և դու խնդրեա ի նըմանէ, մինթէ լուիցէ քեզ[2]:

Յայնժամ ծունր կրկնեալ Աստուածածինն առաջի աստուածութեան, և ասէ. Ո՜վ Տէր իմ և միածին որդի, ո՜վ Տէր և արարիչ նախայաւիտենական. աղաչեմք զքո մարդասիրութիւնդ, հայեաց յաղաչանս աղախնոյ և մօր քո՛[3] վասն ամենայն քրիստոնէից. հայցեմք ի քէն, զի[4] որ խոստովանին զքեզ Քրիստոս[5] Աստուած ճշմարիտ նախայաւիտենական[6], զի թէպէտ մեղաւորք[7] են մեռեալ, բայց յիշատակ և ապաւէն զքեզ ունին, և զաղախինս և զմայր քո. բարեխօսութեամբ իմով և ամենայն հրեշտակաց և ամենայն սրբոց, լուր[8] և թող զմեղս ամենայն հաւատացելոց՝ որք ի դառն և ի դժնդակ տանջանս իցեն:

Յայնժամ ձայն եղեւ յերկնից և ասէ. Ո՜վ մայր իմ և կոյս, տապանակ սրբութեան իմոյ.[9] ես վասն դոցա խաչեցայ, թուք և ապտակ առի յերեսս իմ, մինթէ դառնայցին և ես ջնջէի զմեղս նոցա. մինչեւ ցեւթանասնեկին եւթն թողի. մինթէ զհրամանս իմ և զօրէնս իմ պահէին, և ոչ ետու դոցա քահանայից հրեշտակս անմարմին, այլ մարմնաւոր իբրեւ զինքեանս. ետու քահանայ, և զիմ իշխանական հրամանս ետու, զի ոչ

1. Թ. օր. յայնժամ խնդրեսցէ:
2. Թ. օր. մինև ողորմ բարեգութին Աստուծոյ:
3. Թ. օր յաւելու՝ որ կարդամս առ քեզ մի անդրէն առներ զխնդրուածս իմ:
4. Թ. օր. չունի զի:
5. Թ. օր. չունի՝ Քրիստոս:
6. Թ. օր. Նախայաւիտենական:
7. Թ. օր. մեղօք:
8. Թ. օր. չունի և ամենայն որբոց, և յաւելու այսպէս՝ լուր ինձ և ողորմեա և թող:
9. Թ. օր. սատի մինչև՝ զկամս նորա կատարեսցէն՝ (յէջն 432) ունի այսպէս. դուք զղարզարանսն իմ թեոյն և խացուած կողէց իմոյ. փրով եղոս նոցա պատուակեր՝ զի զհրամանս և զպատուիրանս իմ պահեսցեն. էջէ յերկնից և մարմնացայ ի քէն, և վասն դոցա զամենայն յանձն առի, զի ոչ հեռասցին յինէն, զի Բողքն զտեղեօղ եարեանց և զհեր բանտարկեալն աստանայէ փնացէն. ի յարարչէս հեռացան և խաբեբայէն հնազանդեցան:

ան ինչ կրեսցեն ի հրեշտակէ, այլ անաչ և աներկիւղ խոստովանեսցեն զմեղս և ապրեսցեն. դոքա զիս թողին զստեղծօղս իւրեանց և զերախտաւորս, և զթըշնամին իմ սիրեցին և զկամս նորա կատարեցին:

Ասէ Աստուածածինն. Լուր ինձ, Տէր տէրանց, զի թէպէտ և մեղան, այլ մկրտեցան[1] և հաւատացին ի Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին, և զգալուստն քո խոստովանեցան. և սուրբ զանուն քո ոչ մոռացան, այլ յամենայն ժամ ի բերանս իւրեանց ունէին[2] ի նստել և յառնելն:

Պատասխանի ետ Տէր մեր Յիսուս Քրիստոս և ասէ. Ո՞վ տապանակ սրբութեան իմոյ. դոքա մերձաւորաց իւրեանց ոչ ողորմեցան, և ոչ աղքատաց և ոչ պարտապանաց[3]. և ոչ պատուէր իմ հնչէր յամենայն ժամ ի լսելիս իւրեանց. զիա՞րդ ողորմեցայց[4] դոցա՝ զի[5] ծառ են անպտուղ:

Ապա Աստուածածինն տրամեալ և յոգոց հանեալ և զաչս իւր բազում արտասուօք լցեալ՝ և ողբայր զկորուստ մեղաւորաց[6]: Եւ ետես ի վեր, և ամենայն դասք նահապետաց, մարգարէից կանգնեալ կային շուրջ զիւրեւ, և ասէ. Եկայք և դուք հրեշտակք, և մարգարէից դասիւքս աղաչեսցուք զԱստուած և խնդրեսցուք զթողութիւն ամենայն հաւատացելոց՝ որք կան

1. Թ. օր. և մեղաւորք են՝ այլ զսուրբ մկրտութիւն ընկալան և:
2. Թ. օր. այսպէս ունի. ունէին, ի գալ և ի գնալ, ի գիշերի և ի տուընջեանն և յամենայն ժամու, և ի նեղութեանս իւրեանց օրհնէին զքեզ և բարեխօս ունէին զիս առ քեզ:
3. Թ. օր. պարտականաց:
4. Թ. օր. ողորմիմ:
5. Թ. օր. չունի՝ զի ծառ են անպտուղ:
6. Թ. օր. չունի՝ և ողբայր զկորուստ մեղաւորացն, և յարէ մինչև ի բանն՝ կամա իւրով կորիցէ, զայս ձև օրինակի. Ետես և ահա դասք ամենայն նահապետացն կանգնեալ և զմարգ մարգարէիցն զի կային առ: Ասէ Աստուածածինն. Եկայք և դուք դասք հրեշտակաց և հրեշտակապետաց և մեծաւն աղաչեսցուք զՏէր և խնդրեսցուք թողութիւն ամենայն հաւատացելոց որք խաբեալ ի սատանայ և

ի դժոխս։ Յայնժամ միաբանեցան նոքա ընդ Աստուածածնին, աղաչեցին զՈրդին միածին մեծաւ հառաչանօք։

Պատասխանի ետ Փրկիչն և ասէ. Լուարուք ինձ և գիտասջիք, զի յառաջագոյն ասացի ի սուրբ աւետարանին, թէ Ամենայն ծառ որ ոչ առնէ պտուղ բարի՝ հատանի. զի՞նչ արարից զքրիստոնեայն, որ զանուն ունի քրիստոնէի և գործքն անհաւատի, զի զանուն իմ պղծեն այնպիսիքն. և ո՞ր թագաւորն զինուորին տացէ զփառս և զպատիւ, եթէ ոչ ըստ օրինին մարտիցէ. ո՞վ ոք այգի տնկէ, և փոխանակ խաղողոյ փուշըս կտրեսցէ, զի փուշն հրոյն է բաժին, և ծառն անպտուղ՝ կտրեսցի և ոչ մնասցէ կենդանի։ Նոյնպէս ամենայն մեղաւորք ոչ ետուն ինձ պտուղ բարութեան, ոչ տաց նոցա զիմ արքայութիւն. ոչ կատարեցին զհրամանս իմ, ոչ արարից զկամս նոցա. ոչ եղեն ի տանէ մեղաց՝ ապաշխարութեամբ, ոչ դարձայց ես առ նոսա ողորմութեամբ։ Զի՞արդ զանպտուղ ծառն ընդ պտղաբերս դասեցից. զի՞արդ զփուշն ընդ ծաղկանցն յօդեցից. զի՞արդ անաշխատ մշակին վարձս հատուցից ընդ աշխատաւորաց. զի՞արդ զբարեկամս սատանայի ընդ սիրելիսն Աստուծոյ դասեցից. զի՞արդ մեռեալս ընդ կենդանոյն փառաւորեցից, զկուսանս ընդ շնացողսն, ճգնաւորս ընդ պոռնիկս, զի՞արդ լիցի այդ։ Ես Աստուած էի յաւիտենական, եղէ մարդ վասն մեղաւորաց, զի զմեղաւորս ի չար բնութենէ դարձուցից, և բարի եղիցի բնութիւն. և որք ճշմարիտ դարձցին ի չարէն, տաց նոցա զտեղի արդարոց,

կան ի մէջ տանջանացն։ Յայնժամ ամենայն հոգիք որբոցն և դասք հրեշտակացն միաբան ձայնս եդեալ աղաղակէին և ասէին. Ո՜վ Տէր, արդար ես դու և ուղիղ են դատաստանք քո, այլ գործք ձեռաց քոյ են

և ողբաձայնեալք ի մարդասէրութենէդ քումմէ, ողորմեա նոցա։ Պատասխանի ետ Փրկիչն և ասէ. Լուարուք և ի միտ առէք. Ես նորոգեցի զաշխարհս և զդրախտն զարդարեցի. զԱդամ ըստ պատկերի իմոյ արա-

և զհրեշտակս երկնից ուրախ արարից վասն նոցա՝ որպէս ի հարսանիս։ Ես, որ սերովբէք ոչ իշխէին նայել ի փառս աստուածութեան իմոյ, իբրև զանարգ ոք խոնարհեցայ, և զպոռնիկն թողի մերձենալ յոտս իմ և արտասուօք թանալ զոտս իմ, զի ամենայն մեղաւորք ուսցին՝ թէ ոչ փախչիմ ի նոցանէ, այլ թողում զամենայն մեղս։ Ես, որ ի բարձրութիւնս երկնից ի վերայ իննեակ դասուց հրեշտակաց նստէի, Աստուած ընդ հօր գոլով, ի խաչ բարձրացայ կամաւ, զի զորս ի խորս մեղաց են անկեալ անօրէնութեամբ՝ ի վեր հանից յերկինս։ Ես, որ անմատոյց լուսով ծածկէի ընդ Հօր և սուրբ Հոգոյն, իբրև զմահապարտ թուք և ապտակ առի յերեսս իմ, զի զամօթ մեղաւորին բարձից և արարից պարզ երեսօք տեսանել զիս։ Ես, որ քաղցրութեամբ խնամէի ընդ Հօր զարարածս, դառն լեղի և քացախ արբի, զի զդառնութիւն մեղացն՝ զոր արբոյց սատանայ մարդկան, քաղցրացուցից աստուածային շնորհօք իմովք։ Ես, որ կենդանի եմ յաւիտենից և անթերի յաթոռ աստուածութեան իմոյ, որպէս մեռեալ՝ ի վերայ խաչին ննջեցի, զի զմահու չափ մեղաւորս կենդանացուցից և հանից ի դըժոխոց։ Ես, ի բուին ունիմ զամենայն եղեալս, զի մի կորիցեն. ասացի. Աստուած իմ ընդէր թողեր զիս, զի ոչ թէ վասն իմ աղաչէի, այլ յորմէ հետէ մարմին առի, իբրև յամենայն բերանոյ աղաչէի զՀայր՝ թէ ընդէ՞ր թողուս զմեղաւորս, զի ես վասն սոցա աղա-

չեմ։ Ես, որ ոչ բաժանիմ իմ ծոցոյ Հօր [1], գոչեցի առիւծաբար ի վերայ խաչին. Հայր ի ձեռս քո աւանդեմ զհոգի իմ. Թէ՝ Հայր, յայսմ հետէ որ տեսեր զորդին միածին խաչեալ, մի՛ թողուր զհոգիս մեղաւորացն ի դժոխս իջանել. Նոքա զիս խոցոտեցին մեղօք՝ և ես բժշկեցի, Նոքա զիս անարգեցին՝ և ես սիրեցի, Նոքա ընդ սատանայի գնացին՝ և ես առ յիս կոչեցի, Նոքա դժոխս չինեցին՝ և ես զարքայութիւն ետու. այսուհետեւ որ կամաւ խոյս զաչան՝ և ոչ հայի ի լոյս, ինքն է ինքեան պարտաւոր, որ թողու զլոյս և գնայ ընդ խաւարն, կամաւ իւրով կորիցէ։

Յայնժամ, սուրբ կոյսն Մարիամ, տարածեաց առաջի աստուածութեան զսուրբ աջինսն կուսական, և արտասուալից հառաչանօք [2] անկեալ յերկիր, և ասէ. Տէր, յիշեա՛ զարտասուս ծառայի քո և զկուսական մօր քո հառաչանս, զի ստեամբ իմով սնուցի զՏէրդ երկնի և երկրի. վասն քո հրամանիդ՝ զոր հրամայեցեր անսուտ բերանովդ, թէ որ հաւատայ յիս ի խաւարի մի՛ մնասցէ, ողորմեա՛ [3] հաւատացելոց քոց, որք կան յանդերձելի [4] տանջանսն, զի քո են դաւանողք և զքեզ խոստովանին [5] Աստուած։

Իսկ բարերարն Աստուած և ողորմածն [6] Յիսուս Քրիստոս, խօսել սկսաւ ընդ սուրբ ծնօղին [7] իւրոյ, և ասէ։ [8] Ընտրեալ ի սկզբանէ աշխարհի յամենայն ազ-

[illegible]
[illegible]
[illegible]
[illegible] Յայնժամ։

1. Յօր. հօրն։
2. Թ. օր. [illegible], և [illegible]
[illegible]։
3. Թ. օր. [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]։

4. Թ. օր. յանդաննելի։
5. Թ. օր. [illegible]։
6. Թ. օր. յաւելու՝ և [illegible]
որդին Փրկիչն։
7. Թ. օր. [illegible], և։
8. Թ. օր. ասէ սկսեալ մինչև ցվախճան ունի զայս ձև օրինակի։ [illegible]
[illegible]
[illegible]
[illegible]
[illegible]

գաց մարդկան, և զքեզ միայն գտի արժանաւոր տաճար բնակութեան իմոյ, և որպէս տղայ եղէ ի քեն, և հնազանդութեամբ կատարեցի զոր ինչ և ասէիր, և այժմ ոչ Թողից զկամս սրտի քո ի սպառ։

Արդ, ո՛վ ք են ծնունդ սուրբ աւազանին, և հաւատացեալ ճշմարտապէս յամենասուրբ Երրորդութիւն, և յորժամ հիւանդանան և ջերմեռանդ սրտիւ խոստովանին զմեղս իւրեանց և ողբան արտասուօք, և զքեզ բարեխօս կալցեն, և հաւատան՝ եթէ ես կարող եմ Թողուլ ըզմեղս, յայնժամ ես վասն քո բարեխօսութեանդ՝ Թողից զամենայն մեղս նոցա և ազատեցից ի տանջանաց։ Եւ եթէ ոք զամենայն աւուրս՝ ո՛չ մահու չափ մեղօք և Թէ ո՛չ գիտաբար, և այն եւս իցէ մի հետ՝ հանդիպեալ ակամայ, Թէ կարասցէ յուսալ յիս և ի սուրբ ծնօղն իմ, խոստովանի հաւատով և ո՛յնպէս փոշմանի՝ որ Թէ ի հիւանդութենէ ապրի և այլ ոչ դառնայ ի մեղս, ես Թողում զամենայն մեղս նորա։ Եւ եթէ անարժան է՝ և հաղորդեալ, որ քան զամե-

[illegible]

[illegible]

նայն մեղս ծանրագոյն է, վասն քո՝ աղաչանացդ այլ ո՛չ տաց զփառս և զտեղին, զոր խոստացայ հաւատացելոց և արդարոց. Նոյնպէս թէ լինի նմա բարեխօսութեամբ և յետին աւուրն զղջանայ, միայն ի տանջանացն ազատեցից՝ այլ ո՛չ փառաւորեցից, զի վասն ծնօղիդ իմոյ արարից զայնչափ ազատութիւն: Իսկ եթէ յուսով ոք մեղանչէ, մնալ յետին աւուրն, նա անյոյս կորիցէ և ոչ ազատի. և թէ ոչ կարասցէ պատրաստ լինել ի ժամ հիւանդութեանն վատաբախտութեամբ, կամ ծուլացի, կամ թէ ո՛չ հաւատայ թէ մեռանի, կամ լեզուն կապի, կամ ազգի ազգի ցաւօք խելագարի, ոչ առցէ այնպիսին թողութիւն և ոչ ազատեսցի ի տանջանաց, զի ոչ կարաց յուսով խոստովանել և զղջալ և արտասուել. վասն այնորիկ պատուիրեցի՝ թէ յամենայն ժամ արթուն կացէք. զի միոյ միոյ հանդիպի՝ որ կարէ յաւուրն յետին զղջալ, և թէ զղջանայ՝ չլինի փառացն արժանի. իսկ որ յամենայն ժամ պատրաստ և սուրբ կացին ի մեղաց, զխոստա-

ամենայն ով որ խոստովանի և հաւատայ, և արժանաւորացեալ հաղորդի, ի միւսանգամ գալստեանն իմում յանուանէ կոչեմ զնա՝ և մասնաւորեմ յարքայութեան իմում: Եւ այս սուրբ նոյն Մարկոս Աստուածածինն բացեալ զբերանն իւր օրհնեաց զԱստուած և ասէ. Օրհնեալ ես Հայր անսկիզբն. օրհնեալ ես Որդի միածին, ծնեալդ ի Հօրէ յառաջ քան զյաւիտեանս: Օրհնեալ ես Հոգի Սուրբ՝ բխեալդ ի Հօրէ և յՈրդւոյ յաւիտեանս: Ով սուրբ Կոյս Աստուածածին, որ ի ձեռն քո զփակեալ դուռն դրախտին բացեր մեղաւորաց.

Ո՛վ ամենասուրբ Կոյս, զմիածին ցանկոյն քաւեաց զմեծամասնութեան եկեղեց: Ով ամենասուրբ Կոյս Աստուածածին, ի ձեռն քո երկնային խաղաղութեան պարգեւեցաւ աշխարհի. ի ձեռն քո, ո՛վ ամենօրհնեալ Աստուածածին, լուսաւորեցան ամենայն մեռեալք, և մարդիկ հրեշտակ եղեն. ի ձեռն քո, ո՛վ ամենօրհնեալ Աստուածածին, հրեշտակաց խօսակից արժանաւորեցան լինել մարդիկ և յերկիր յերկինս ամբառնին: Ի ձեռն քո, ո՛վ ամենօրհնեալ Աստուածածին, համարձակութեան առին մարդիկ առ Որդին քո միածին. ի ձեռն քո ամենօրհնեալ Աս-

Digitized by Google

ցեալ բարիսն և զանսպառ ուրախութիւնսն ժառան-գեն և զանծերանալի մանկութիւն և զանմահութիւն ընդ հրեշտակսն. և թէ ումեք հանդիպեսցի մեղս ի կամաց սատանայի և ի փորձանաց, թէ փութով զըղ-ջանայ և զգործեալսն ապաշխարէ ի կենդանութեան իւրում, այնպիսին ընկալցի պսակ ընդ արդարսն, և ոչ յիշեսցին մեղք նորա:

Յայնժամ, սուրբ կոյսն Մարիամ Աստուածածինն, բացեալ զբերան իւր՝ օրհնեաց զԱստուած, և ասէ. Օրհնեալ ես Հայր անսկիզբն, օրհնեալ ես Որդիդ միա-ծին, օրհնեալ ես Հոգիդ ճշմարիտ, զի լուար մօր քո և ետուր կրկին յոյս մեղաւորաց, զի մինչեւ յետին շունչն լսես աղաչանաց մեղաւորին և ազատես ի տան-ջանաց:

Եւ արդ, ո՜վ պատուական քահանայք և ժողովուրդք, արք և կանայք, ծերք և տղայք, ցնծացէք և ուրախ լերուք, և միաբան զձեռս ձեր ի վեր համբարձէք և

տուածածին, ծագեցաւ լոյսն յամենայն տիեզերս. յորժամ որ-դին քո խոնարհեցաւ Յիսուս Քրիստոս և Աստուած մեր. Ի յետ նորին բարեխօսու-թեանց ո՜վ ամենօրհնեալ Աս-տուածածին, մահ կոչեցաւ (*) և դժոխք աւերեցաւ. Ի յետ քո ո՜վ ամենօրհնեալ Աստուա-ծածին, ամենայն կապ խոր-տակեցան և ապստամբութեան յերկիր գնայի. Ի յետ քո ամենօրհնեալ Աստուածածին, զվտածին որդին քո, զՏէրն մեր Յիսուս Քրիստոս՝ Աստուած ծանեաք, որում ամենայն մար-դիկք և հրեշտակք երկրպագեն աստուծոյ. Անսկիզբն Հայր, ան-սկիզբն Որդի, անսկիզբն Հո-գի սուրբ, անբաժանելի Եր-րորդութեան համագոյ:

Եւ արդ, ո՜վ պատուական դաս քահանայից և ամենայն ժողո-վրդոց, [illegible] վեր [illegible] և զսուրբ Աստուա-ծածինն օրհնեցէք, զի նա է յոյս և ապաւէն և բարեխօս ամենայն հաւատացելոց քրիս-տոնէից: Զի նա հաւատոյն և [illegible] և [illegible] բանն [illegible] նորա, [illegible] դարձե, [illegible] ընկալարուք, զի համարս [illegible] յաւուրն դատաստանին. և [illegible]

օրհնեցէք զսուրբ Աստուածածինն և զմիածին որդին իւր, զի նա է լոյս և ապաւէն և բարեխօս ամենայն հաւատացելոց քրիստոնէից և փրկութիւն մեղաւորաց. և դուք պատրաստեցէք զանձինս ձեր յայսմ հետէ ահաւոր և սոսկալի տօնիս, զի որ ոք վասն Աստուածածնին հաշտեսցէ ընդ թշնամոյն, նա զՈրդին միածին հաշտեցուսցէ ընդ իւր. որ ոք սուրբ Կուսին համար՝ ոչ նախանձի և ընկերին չար ոչ՛ առնէ, նա ըզբարիս հոգեւոր և մարմնաւոր նմա պարգեւէ. որ ոք վասն սուրբ (Կուսին) յամենայն չարէ փախչի, Աստուածածինն զնա ամենայն սրբոց մարտիրոսացն պսակակից առնէ և ընդ արդարս փառաւորէ * ։

[illegible]

[illegible]

*Նախաբանն (418) և վերջաբանդ յաւելուած թուի ի գրչէն ։

# Դ

## ՏԵՍԻԼ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ

## ԶՈՐ ԵՏԵՍ ԶՏԱՆՋԱՆՔ ՄԵՂԱՒՈՐԱՑ

*(Ըստ Ժ օրինակին)*

*Յարուցեալ Աստուածածին մայր Տեառն, գնաց ի լեառն Ձիթենեաց, կալ յաղօթս վասն ամենայն հաւատացելոց. զի թերեւս փրկեսցէ զնոսա Աստուած յամենայն նեղութեանց և ի գեհենի տարտարոսէ, և յաղջամղջին խաւարէն, և խնդրէր ի Տեառնէ Աստուծոյ մերոյ հանդիստ ամենայն քրիստոնէից։ Եւ յաղօթելն զայս ասէր. Տէր Յիսուս Քրիստոս, լուր աղաչանաց իմոց, և առաքեա առ իս զհրեշտակապետն Գաբրիէլ, որ եկեալ պատմեսցէ ինձ զտեղի տանջանաց մեղաւորաց։ Եւ առժամայն առաքեցաւ հրեշտակապետն Գաբրիէլ, բազում հրեշտակօք։ Եւ ի տեսանելն Սրբուհոյն ուրախ եղեւ։ Եւ ասէ հրեշտակապետն. Ուրախ լեր, անսկզբնական բանին բնակարան, մայր միածնի Որդւոյն. ուրախ լեր Հոգւոյն սրբոյ հովանի, ի հրեշտակաց երկրպագեալ և ի մարգարէից քարոզեալ. ուրախ լեր բերկրեալ, Տէր ընդ քեզ, քանզի լուաւ Տէր աղօթից քոց, և առաքեաց զմեզ ցուցանել քեզ ըզտեղի մեղաւորացն։ Եւ ասէ Աստուածածինն ցԳաբրիէլ հրեշտակն. Ուրախ լեր և դու զօրապետ հրեշտակաց աներեւոյթին Աստուծոյ, և սպասաւոր Որդւոյ իմոյ, և խորհրդակից Հոգւոյն սրբոյ, և հրամանակատար Աստուծոյ։ Աղաչեմ զքեզ, ցո՛յց ինձ զտեղի տանջանաց մեղաւորացն, թէ որպէս են վիճակքն դըժոխոցն, և քանի՛ մեղք են անմահ տանջանացն՝ յո-*

Digitized by Google

րում չարչարին մեղաւորքն ըստ գործոց իւրեանց։ Եւ յայնժամ հրեշտակապետն հրամայեաց, և բացան դըժոխք, և երեւեցան ամենեքեան որ էին ի սոսկալի և դժնդակ տանջանսն։ Եւ ի միում տեղոջ անգեալ կային, բազմութիւնք արանց և կանանց՝ յորոց ելանէր դառն ողբումն և հառաչումն։ Ասէ Աստուածածին. Ո՞վ են սոքա։ Ասէ հրեշտակապետն. Սոքա են՝ որ ոչ հաւատացին ի Հայր և յՈրդի և ի Հոգին սուրբ, և այդպէս հրեղէն բոցով և այլ զանազան տանջանօք այրին։ Եւ նայեցեալ Աստուածածին յայլ տեղիս, և տեսեալ խաւար մեծ, և ասէ Աստուածածին. Զի՞նչ սոքա՝ որ բնակեալ են յայսմ խաւարի։ Ասէ հրեշտակապետն. Բազում հոգիք են՝ որ արգելեալ են յայսմ խաւարի։ Ասէ Սրբուհին. Վերացո՛ զխաւարն և տեսից զպատժեալդ որ ի դմա է։ Ասէ հրեշտակն. Անհնարին է տեսանել զայս տեղի տանջանացս, զի պատուիրեալ է ամենակալին Աստուծոյ մի՛ տեսանել զխաւարն զայն, մինչեւ որդին Աստուծոյ առաւել քան զարեգակն պայծառ ծագեսցէ։ Եւ յոյժ տրտմեցաւ Աստուածածինն. և նայեցեալ յերկինս ասէ. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ վերասցի խաւարն, և տեսից զտանջեալսն և դմա։ Եւ առժամայն վերացաւ խաւարն, և երեւեցան բազմութիւնք արանց և կանանց. և ելանէր ի նոցանէ լալումն և ողբումն և հառաչումն յոյժ, եւ տեսս զնոսա Աստուածածինն և ելաց դառնապէս. ասէ ցնոսա. Գերիք թշուառականք, ընդէ՞ր էք ի յաններելի տանջանս արգելեալ։ Եւ ասեն նոքա. Մեք լոյս երբեք ոչ եմք տեսեալ, և ոչ ի վեր կարեմք նայել, զի մինչ ի գագաթս թաղիմք յաղջամղջին խաւարն։ Բայց դու, ո՛վ սուրբ Կոյս աստուածածին, օրհնեալդ յամենայնի, ո՛րպէս եկիր առ մեզ յեղուկքս և եղկելիքս, յաւիտեանս յաւիտենից յայսմ տեղի տանջանացս եմք, և ամենազօր Որդին քո յերկնից իջեալ, և առ մեզ ոչ երեւեցաւ։ Աբրահամ հայր արդարոց, և Մովսէս՝ որ ընդ Աստուծոյ խօսեցաւ, և Յովհաննէս Մկրտիչն, և Պետրոս առաքեալն, և այլք յընտրելոցն, առ մեզ ոչ եկին. իսկ դու ամենօրհնեալ

Աստուածածին, պարիսպ քրիստոնէից և յոյս հաւա-
տացելոց, որ յամենայն ժամ աղաչես զԱստուած
վասն մեզ մեղաւորացս՝ որ մեղօքս եմք մեռեալ։ Եւ
ասէ Աստուածածին ցհրեշտակն. Զի՞նչ են սոցա մեղքն։
Ասէ հրեշտակն. Սոքա են՝ որ ոչ հաւատացին ի Տէր
Յիսուս Քրիստոս, յիրաւի յաւիտեան տանջին։ Եւ դար-
ձեալ ծածկեաց զնոսա խաւարն։ Ասէ Աստուածածին
ընդ հրեշտակն. Երթիցուք յայլ տեղիս տանջանաց։
Եւ երթեալ տեսին գետ մի հրեղէն, յորում թաղեալ
կային անդ բազմութիւնք արանց և կանանց, և էին
ոմանք մինչև ցգօտին, և ոմանք մինչև ցպարանոցն,
ոմանք մինչև ցգագաթն, անձամբ և գլխովն։ Ասէ
Աստուածածին ցհրեշտակն. Ո՞վ են սոքա, և զի՞նչ յան-
ցանք են սոցա։ Ասէ հրեշտակն. Այն՝ որ մինչև ի գօ-
տին թաղեալ են, այն նոքա են՝ որ առեալ են զանէծս
հօր և մօրն իւրեանց, և ոչ են հնազանդեալ ծնողացն։
Եւ այն՝ որ մինչև ի պարանոցն, նոքա են՝ որ ոչ պա-
տուեն զկնքահայրն իւրեանց, այլ մանաւանդ անար-
գեցին և պոռնկեցան ընդ նոսա. և տանջին յաւիտեան։
Եւ այն՝ որ մինչև ի գագաթն են՝ կանայքն են յոր-
ժամ ծնանին զտղայս ձգեն, նոքա մարդակերքն են, և
անխիղճ գազանք, զնոսա Աստուած ընդ մարդասպանս
դասէ։ Եւ այն՝ որ անձամբն և գլխովն են ծածկեալ,
նոքա են՝ որ ի խաչ և յեկեղեցի երդնուն, այսպէս չա-
րաչար տանջին։

Եւ ետես Աստուածածինն յայլ տեղիս որ կախեալ
կային մարդիկ գլխիվայր և որդունք ուտէին զմար-
մինս նոցա. և ասէ Աստուածածին. Ո՞վ են սոքա։
Ասէ հրեշտակն. Այն են սոքա՝ որ վաշխ առնուն և
տոկոսիս ժողովեն։ Եւ դարձեալ Աստուածածին յայն-
կոյս՝ և տեսեալ զմարդիկ կախեալ, և աճեղակերպ
գազանք ուտէին զմարմինս նոցա, և հրեղէն որդունքն
մտանէին ընդ ականջս նոցա և ծամէին ըզլեզուս նոցա.
ասէ Աստուածածինն. Զի՞նչ են սոքա։ Ասէ հրեշտակն.
Սոքա են՝ որ երթան ի դուռն այլոց, և զրոյց տանին
և յարուցանեն կռիւս. վասն այնորիկ չարաչար տան-
ջին։ Եւ արտասուեաց Աստուածածինն և ասէ. Լաւ

Digitized by Google

էր ձեզ թէ չէի՞ք ծնեալ յաշխարհի։ Եւ ասէ Աստուածածինն. Երթեցուք յայլ տեղի տանջանաց։ Եւ տեսեալ յարեւելից կողմն ամպ հրեղէն, և բազմութիւնք արանց և կանանց քրիստոնէից անդ, և բոցեղէն և ահագին վիշապք ուտէին զմարմինս նոցա։ Եւ ասէ սուրբ կոյսն Մարիամ: Զի՞նչ մեղք են սոցա, որ այսպէս չարչարին։ Ասէ հրեշտակն. Սոքա են որ արհամարհեն զկոչօղս սուրբ եկեղեցւոյ, զքուն և զծուլութիւն սիրեցին, և ի ժամատեղ ոչ գնացին, և զկամս սատանայի կատարէին, և՛ ի ժամ աղօթիցն ոչ յառնէին ի քնոյ, և վասն այնորիկ չարաչար պատժին։ Ասէ սուրբ Աստուածածինն. Այն որ հիւանդն է՝ զի՞նչ լինիցի. Ասէ հրեշտակն. Եթէ զտունն վառեն և առանց բառնալոյ ոչ կարէ փախչել՝ չէ մեղադրելի, ապա թէ ըղձեշտութիւն անձինն սիրէ, և պատճառէ և ոչ երթայ յաղօթս, այսպէս տանջին։

Եւ դարձեալ, ետես սուրբ Կոյսն (զի) բազումք կախեալք կային գլխիվայր, և լեզուք նոցա կապեալ ի հրակիզմանէ բոցոյն։ Ասէ Աստուածածինն. Ո՞վ են սոքա։ Ասէ հրեշտակ. Սոքա են՝ որ վստահանան[1] յանօթ եկեղեցւոյն, և ասեն թէ՝ որ սեղանոյն պաշտօնեայք են՝ անտի վայելեսցեն. և արգելին զպտուղ եկեղեցւոյն, վասն այնորիկ տանջին։ Եւ դարձեալ, ետես Աստուածածին հուր սաստիկ և բազմութիւնք արանց ի նմա. Ասէ. Զի՞նչ են սոքա։ Ասէ հրեշտակ. Սոքա քահանայապետքն են՝ որ կան առաջի սուրբ սեղանոյն և զանապական մարմինն բեկանեն, և արկանեն ի սկիհն և ոչ զ(գ)ուշանան, որ թէ կաթ մի ի բաժակէն և ի հացէն անգանի ի վայր, այսպէս չարչարին։ Եւ այլք ի քահանայից որ ոխ պահեն և պատարագ մատուցանեն, ընդ սատանայի տանջին։ Դարձեալ, ետես Աստուածածինն ի տեղոջ մի լիճ հրեղէն, և տատանեալ ի մէջ ալեացն՝ բազմութիւնք արանց և կանանց. և ասէ սուրբ կոյսն Մարիամ աստուածածին. Զի՞նչ են մեղք սոցա։ Ասէ հրեշտակ. Սոքա

1. Յօր. վարդախանան։

են շնացողքն, մատնիչք, երդմնուրացքն, կախարդք, արծաթասէրք, արուամոլք, կռապաշտք, գողք, զրկողք, վասն այնորիկ տանջին։ Եւ նայեցեալ սուրբ Կոյսն՝ տեսանէր գետ մի հրեղէն, և խաւար ի վերայ նորա, և եռայր որպէս գձէթ ի կաթսայ, և բազմութիւնք մարդկան է նմա. և վերացաւ խաւարն, և ետես զնոսա Աստուածածին, որք աղաղակէին ամենեքեան միաբան և ասէին. Ողորմեա մեզ, մայր Աստուծոյ, մեք յաւիտեան զլոյս չենք տեսեալ, և սուրբ արեգակդ ծագեաց մեզ լոյս, առաւել քան զարեգակն։ Եւ ասէ Աստուածածինն. Զի՞նչ է յանցանք սոցա։ Ասէ հրեշտակ. Սոքա Հրէայքն են՝ որ խաչ(եց)ին զՔրիստոս, և զսուրբ մարգարէքն և զառաքեալն և զմարտիրոսքն չարչարեցին, և ոչ հաւատացին ի Հայր և ի յՈրդի և ի Հոգին սուրբ։ Եւ դարձեալ սուրբ Աստուածածին ի թիկունս կոյս, և տեսանէ աթոռ հրեղէն, և նստեալ ի վերայ աթոռոյն բազմութիւնք արանց և կանանց, և ի հրակիզմանէ բոցոյն այրէին. ասէ Աստուածածինն. Ո՞վ են սոքա։ Ասէ հրեշտակ. Սոքա են՝ որ քահանային ընդ առաջ ոչ ելին, և ասեն թէ օտարական է և աղքատ, և պատճառեն թէ երիտասարդ է՝ և պարտ է նմա մեզ յառնել. այսպէս տանջին։ Եւ նայեցեալ Աստուածածինն՝ ետես ծառս երկաթիս և ոստս ի նմա, և ի ծայր ոստոցն կախեալ կային բազմութիւնք արանց և կանանց։ Ասէ Աստուածածին. Ո՞վ են սոքա։ Ասէ հրեշտակն. Ցիշնցատուքն են, հայհոյիչքն, և ըզմկրտութիւն ոչ պահեցին, այլ բանիւք խոստովանեցան զՔրիստոս և գործովք զկամս սատանայի արարին. և ի ժամ աղօթիցն պղերգացան, և աղօթիցն դատարկացան, և աղքատաց և տնանկաց ոչ ողորմեցան, և նոքա յաւիտեան տանջին։ Եւ ասէ սուրբ կոյսն Մարիամ՝ ցԳաբրիէլ և Միքայէլ հրեշտակապետքն. Հանդերձ առաքելովք և մարգարէիւք, եկայք արասցուք աղօթս, վասն հոգւոյն մեղաւորաց, թերեւս ողորմեսցի նոցա Աստուած։ Եւ խոնարհեալ ծունր կրկնեցին, և կացին յաղօթս և լսելի եղեւ աղօթք սրբուհոյ Աստուածածնին և ամենայն սրբոց առ Տէր. և ձայն եղեւ

Digitized by Google

յերկնից որ առէր. Կաան բազում պաղատանաց և արտասուաց ձերոց, որք ի տանջանսն էն, ի յարութեան իմում, մինչև ի միւսանգամ գալուստն հանգիստ ձեզ ի տանջանացդ: Եւ յորժամ լուան զձայնն, ամենեքեան ուրախացան, և որպէս ի միոջէ բերանոյ, աղաղակէին և ասէին. Փառք քեզ Քրիստոս, Թագաւոր մարդասէր, և ողորմած Տէր, և քեզ վայել է'':

## Ե

## ՏԵՍԻԼ Ս. ԿՈՒՍԻՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ

## ԶՈՐ ԳՐԵԱՑ Ս. ԱՌԱՔԵԱԼՆ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԻՉՆ

## ՔՐԻՍՏՈՍԻ ՅՈՀԱՆՆԷՍ, ԶԻ ՆԱ ՍՊԱՍԱՒՈՐԷՐ Ս. ԿՈՒՍԻՆ

## ՄԻՆՉԵՒ ՓՈԽԵՑԱՒ ՅԱՍՏԵԱՑՍ Ի ՎԵՐԻՆ ԵՐՈՒՍԱՂԷՄ

(Ըստ ԺԱ օրինակին)

Սուրբ կոյսն Մարիամ, մայր Բանին Աստուծոյ, որ հանապազ ի բարեխօսութիւն կայ առաջի աստուածութեանն վասն ամենայն հաւատացելոց Քրիստոսի; յորժամ փոխել կամեցաւ յաշխարհէս՝ և երթալ յանտրրտում ուրախութիւնսն, զմտաւ էած վասն հոգւոց արդարոց և մեղաւորաց թէ՝ զինչ լինին, և կամ մեղաւորաց հոգիքն որպէս տանջին, և արդարոց հոգիքն յորում տեղւոջ զուարճացեալ հանգչին:

Եւ յաւուր միում եկ ի լեառն Ձիթենեաց ամենասուրբ Կոյսն և տարածեալ զձեռս իւր ի նմանութիւն խաչի, եկաց յաղօթս բազում հառաչանօք և յորդաբուխ արտասուօք, և այսպէս ասաց ի սրտի իւրում. Տէր, Աստուած զօրութեանց, ստեղծիչ ամենայն կեն-

Digitized by Google

դանեաց, որ առաքեցեր զՈրդիդ քո սիրելի, որ եկն և մարմնացաւ յաղախնոյ քումմէ, և հաճեցաւ լինել մարդ ճշմարտապէս որպէս և ինքն կամեցաւ։ Եւ արդ, Տէր իմ և Աստուած, լո՛ւր աղաչանաց՝ աղախնոյ քում՝ և առաքեա առ իս զհրեշտակապետն Գաբրիէլ և զՄիքայէլ, զի նոքա եկեալ ցուցանեն զամենայն տանջանս մեղաւորացն և զհանգիստ արդարոցն, զի փափագիմ տեսանել զամենայն ինչ զնոցա։

Եւ առժամայն եկեալ հրեշտակապետն Գաբրիէլ և Միքայէլ բազում զօրօք հրեշտակօք առ ամենասուրբ Կոյսն, և խոնարհեցուցեալ զթեւս իւրեանց՝ ողջոյն տային սուրբ Կուսին և ասէին. Ողջոյն ընդ քեզ ամենասուրբ Կոյս, մայր և տաճար Բանին Աստուծոյ. ողջոյն քեզ լուսեղէն խորան, մարմնարան արեգականն արդարութեան. ողջոյն քեզ բնակարան Աստուծոյ և օթեւան Հոգւոյն սրբոյ. ողջոյն քեզ սերովբէ հողեղէն, որ զանտանելին տարար յորովայնի և զանտեսանելին տեսեր 'ի մարմնի, և բարձեր ի գիրկս քո, զոր և մեր թեւաքօղեալ ոչ կարեմք հայել ի նա. իսկ դու, ի վերայ՝ սուրբ բազկացդ գգուեցեր, երանեն քեզ երկիր և ամենայն ազինք։ Ուրախ լեր ամենասրբուհի Կոյս. քանզի լուաւ Տէր աղօթից քոց, և առաքեաց զմեզ ցուցանել քեզ զամենայն տեղիս տանջանաց և զհանգիստ արդարոցն։ Ասէ սուրբ կոյս Աստուածածինն ընդ հրեշտակապետն. Ուրախ լերուք և դուք անմարմին զուարթունք և սուրբ հրեշտակապետք և զօրավարք զօրաց երկնաւորաց, որ զչար բռնաւորն սատանայ ամօթ արարէք, և արժանաւորեալ սպասաւորէք առաջի աՀեղակերպ աստուածութեանն. ուրախ լերուք, աւետաբերք և յաշաքարողք [1] քան զամենայն հրեշտակս, տնօրինեցելոյն վասն մեր, որ յաւուր գալըստեան որդոյն Աստուծոյ՝ մարմնացելոյն յինէն՝ գոչէք զփողն աստուածային, և զարթուցանէք զյաւիտենից ննջեցեալսն։ Արդ աղաչեմ զձեզ, ո՛վ հրեշտակապետք, ցուցէք ինձ զամենայն կայանս մեղաւորացն թէ որ-

1. Այդպէս յօրինակին, գուցէ՝ ողխորհրդատարողք։

պէս տագնապին և նեղին մեղաւորքն ի տանջանս մեծամեծս։ Պատասխանի ետուն հրեշտակապետքն և ասեն․ Ո՜վ ամենասուրբ Կոյս, բազում և դժնդակք են տեղիս տանջանացն, որ չարչարին դասք մեղաւորաց՝ ըստ մեղաց իւրեանց։ Բայց են տեղիք տանջանաց որ խստագոյն են, և են՝ որ թեթեւագոյն։ Եւ ասէ հրեշտակապետն Գաբրիէլ․ Հրամանաւ Աստուծոյ բացցին խորութիւնք անդնդոց և երեւեսցի տանջանք յաւիտենից ննջեցելոցն։ Եւ իբրեւ զայս ասաց, առժամայն բացան սանդարամետք անդնդոց և վարեցաւ խաւարն և մութն որ կայր ի վերայ մեղաւորացն։ Եւ ետես ամենասուրբ Կոյսն, զի կային ի միում տեղոջ բազմութիւն արանց և կանանց, որ հառաչէին և կոծէին ի մէջ բոցոյն․ ասէ սուրբ Աստուածածինն․ Ո՞վ են այնոքիկ որ այնպէս տանջին, և կամ զի՞նչ մեղաց են պարտապանք։ Ասէ հրեշտակապետն․ Դոքա են՝ որ ոչ հաւատացին ի Հայր և ի Որդի և Հոգին սուրբ․ վասն այնորիկ աններելի է տանջանք նոցա։ Եւ հայեցեալ՝ յայլում տեղի ետես խաւար սոսկալի, և ի մէջ խաւարին երեւէին արք և կանայք, և ձայնք նոցա ելանէր ողորմագոյն քան զամենայն ողբս․ և ի սաստիկ խաւարէն սեւացեալ էին նոքա, և աղաղակէին վա՜յ ի վերայ վայի։ Ասէ ամենասուրբ Կոյսն․ Ո՞վ են նոքա որ խաւարեալ են, և կամ զի՞նչ դառնագոյն և չար գործոց են մեղապարտք։ Ասէ հրեշտակն․ Ո՛վ Սրբուհի մայր և կոյս, անհնարին է նոցա տեսանել զլոյս, այլ աղջամղջին խաւարաւ ծածկին մինչեւ ի գալուստն Տեառն, յորժամ Որդին քո յայտնեալ․ որպէս զարեգակն յերկնից ծագէ։ Եւ հայեցաւ Աստուածածինն յերկինս և գոչեաց հառաչմամբ և ասէ․ Տէր իմ, միածին Աստուած Բան Հօր, որ ստեամբ իմով դիեցուցի, լուր աղաչանաց աղախնոյ քո և անուամբ զօրութեան քո վերացի խաւարն և տեսից զպատժեալսն։ Եւ առժամայն վերացաւ խաւարն, և բացան ամենայն տեղիք տանջանացն, և երեւեցա՛ն անթիւ բազմութիւնք մարդկան, և յալումն և ողբումն գայր ի նոցանէ սաստիկ յոյժ։ Յայնժամ սրբուհի Աստուածածինն բազում

Digitized by Google

արտասուս եհեղ՝ յորժամ ետես զնոսա և ասէ. Ո՛վ եղկելիք և թշուառականք, վասն է՞ր յայդպիսի անողորմ տանջանս մտեալ էք։ Ասեն նոքա. Վասն բազում և անառակ չար գործոց մերոց, որ անզեղջ մտաք մնայաք ի չարիս, վասն այնորիկ և յիրաւի կամք ի յանհնարին տանջանս և խաւարաւ ծածկեալ եմք, և ոչ բնաւ տեսանեմք զլոյս. կուրացան աչք մեր՝ և ոչ ունիմք կարողութիւն ի վեր նայել, զի թաղեալ կամք ի մէջ թանձրագոյն մթութեանս, որ անցեալ է ի վերայ գլխոց մերոց. բայց յորժամ խոնարհեցար և եկիր առ մեզ, ապա վերացաւ խաւարս և տեսաք զլոյս. ո՛վ ամենասրբուհի և միշտ կոյս, այլ ոք ի սրբոցն զայս մեզ ոչ արար. զի Որդին քո որպէս զարեգակն ծագեաց առ մեզ, և լոյս նորա ծագեաց յերկիր և մեք ոչ իմացաք։ Ադամ նախաստեղծն, և Աբրահամ, Իսահակ, Յակոբ սիրելիքն Աստուծոյ, Մովսէս և Ահարոն, Յեսու, Դաւիթ, Յովհաննէս Մկրտիչն հաւատային ի լոյս Որդոյն քո, և ելեալ աստի գնացին, և մեք ոչ ծանեաք զնոսա։ Առաքեալքն Քրիստոսի Պետրոս և Պաւղոս և այլքն, նա և ամենայն լուսեղինացն հոյլքն հրեշտակաց՝ զայս մեծապէս բարութիւնս մեզ ոչ արարին։ Իսկ դու, ո՛վ մայր Աստուծոյ, յոյս և ապաւէն հոգոց և մարմնոց, պարիսպ ամենայն հաւատացելոց և օգնական նեղելոց. մի՛ դադարեր յաղաչելոյ զՏէրն քո, վասն մեր մեղաւորացս, զի լուիցէ Որդին քո, և թեթեւացուսցէ զանողորմ տանջանս որ եկն ի վերայ մեր. զի յորժամ երեւ(եց)ար առ մեզ, լոյս ծագեաց ի վերայ մեր, և տեսաք զմեծ զողորմութիւն քո՝ զոր ցուցեր մեզ։

Ասէ Աստուածածին ցհրեշտակն. Ո՞վ են այդոքիկ որ այդպէս սաստիկ և անողորմ տանջանօք տանջին։ Ասէ հրեշտակապետն. Դոքա են՝ որ ոչ հաւատացին յՈրդին քո միածին, որ ի քէն մարմնացաւ վասն փրկութեան աշխարհի։ Յայնժամ իբրեւ լուաւ զայս ի հրեշտակէն ամենասուրբ Կոյսն, ողբս առեալ ողբայր զնոսա, և ասէր. Ո՛վ թշուառականք և եղկելիք, ընդէ՞ր մոլորեցայք և ոչ հաւատացէք գրելոց սրբոց մար-

գարշելեաց, և քարոզութեան և ճշմարտութեան սուրբ առաքելոցն. ընդէ՞ր խաւարեցոյց սատանայ զմիտս ձեր, և հայհոյէք զորդին Աստուծոյ՝ որ ձեզ փրկութիւն եկն շնորհել խաչիւն իւրով։ Եւ իբրեւ զայս ասաց սուրբ Կոյսն, դարձեալ ծածկեաց զնոսա խաւարն։ Ասէ սուրբ Աստուածածինն ընդ հրեշտակն. Եկայք, երթիցուք յայլ տեղի տանջանաց։ Եւ իբրեւ գնացին, տեսին գետ մի հրեղէն և յորձանք նորա յորդահոս. և կային ի նմա բազմութիւնք արանց և կանանց, ոմանք բնաւ ոչ երեւէին։ Ասաց սուրբ Աստուածածինն. Ո՞վ են այդոքիկ, և կամ զի՞նչ գործք չարեաց նոցա, որ յայսմեծ և ահագին տանջանս չարչարին։ Ասէ հրեշտակն Տեառն. Որ մինչեւ ի գագաթունս թաղեալ կան, այնոքիկ են՝ որ չարչարեցին զծնօղս իւրեանց, և անարգեցին, և արհամարհեցին և բարկացուցին սրտմտութեամբ և ժառանգեցին զանէծս նոցա։ Եւ որ մինչեւ ի պարանոցն թաղեալ կան ի մէջ հրոյն, նոքա են՝ որ ընդ որդեգիրս իւրեանց պոռնկեցան, և ի մայր նոցա մեղանչեցին, և զբարձրեալն Աստուած բարկացուցին, և վասն այնորիկ ընկեցան ի մեծագոյն կորուստն։ Եւ որ ամենայն մարմնով թաղեալ կան ի մէջ բոցոյն, նոքա են կանայք չարք՝ որ շնան և պոռնկին և յղանան, և դեղ առեալ սպանանեն զմանկունսն. և թէ լինի որ գայ ի ծնունդ՝ խեղդամահ առնեն և ըսպանանեն։ Եւ որ մինչեւ ի մէջս են ի տանջանս, նոքա են՝ որ երդուան սուտ ի խաչ և յեկեղեցի և ի խաչելեալն Աստուած։ Եւ ետես յայլ տեղի մարդիկ՝ զի կախեալ կային զոտից իւրեանց և հրեղէն որդունք ուտէին զմարմինս նորա։ Ասէ սուրբ Աստուածածինն. Զի՞նչ մեղս գործեալ են նոքա։ Ասէ հրեշտակապետն. Սոքա են մեծատունք՝ որ զրկեցին զաղքատսն, խորեցին ի վարձուց և կողոպտեցին զանմեղս և եդին ի բանդի, առին կաշառ և թիւրեցին զդատաստան արդարոցն, հարին գողս և աւազակս յանցս ճանապարհաց և ըսպանութիւն գործեցին, և ժողովեցին ոսկի և արծաթ բազում, ի կորուստ անձանց իւրեանց։ Եւ հայեցեալ յայլ տեղիս ամենասուրբ Կոյսն, և տեսանէ կանայք

զի կախեալ կային գլխիվայր, և բանային զբերանս իւրեանց և թափէին զլեզուս իւրեանց թզաչափ, և ելանէր բոց ծիրանի ընդ բերանս իւրեանց, և ընդ ականջս իւրեանց՝ ի նմանութիւն իժ օձից մտանէին և ելանէին։ Ասէ սուրբ Աստուածածինն. Ո՞վ են այնոքիկ՝ որ այնպէս դառն տանջանօք չարչարին։ Ասէ հրեշտակն. Նոքա են ականջադիր կանայքն՝ որ պատերազմ և կռիւ և մարդասպանութիւն գործել տային, վասն ականջադրութեան իւրեանց, վասն որոյ յիրաւի են տանջանքն այն ի վերայ նոցա։ Ասէ սուրբ Կոյսն. Լաւագոյն էր մեղաւորաց թէ բնաւ չէին լեալ յաշխարհի, և ոչ ունէին յարութիւն և ակն՝ այս դժուարին տանջանացս, և գնացին ըստ գործոց իւրեանց. և երանի՜ է արդարոց և բարեգործաց, զի արժանի եղեն նոքա արքայութեան երկնից. բայց վա՜յ մեղաւորաց, զի ընկալան նոքա զյաւիտենից կորուստն։

Ասէ, ով եղբարք իմ սիրելիք, լուայք զայս ամենայն մի ըստ միոջէ, եթէ որպէս տանջանք և կորուստ կայ առաջի մեր անողորմելի. աղաչեմ զձեզ մի՛ ձանձրանայք զբարիս գործել, զի կարող լինիցիք հասանել խոստացելոց բարեացն և անթառամ պսակացն. ի Քրիստոս Յիսուս Տէր մեր, որում վայելէ փառք յաւիտեանս. ամէն[1]։

1. Այս տուն թուի լինել յաւելուած ի գրչէն։

# Ձ

# ՆՆՋՄԱՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

## ԵՐԱՆԵԼՈՅՆ ՆԻԿՈԴԻՄՈՍԻ ԱՍԱՑԵԱԼ[1]

## ՅԱՂԱԳՍ ՆՆՋՄԱՆ ՄԱՐԻԱՄՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

## ԵՒ ՄԻՇՏ ԿՈՒՍԻՆ

*Սուրբ կոյսն Մարիամ Աստուածածին էր յԵրուսաղէմ։ Եւ եկն հրեշտակն Տեառն և ասէ ցնա. Յարուցեալ երթիցես ի լեառն Ձիթենեաց, և ասացից քեզ զբանն Տեառն, թէ[2] որպէս առաքեաց զիս։ Եւ յարուցեալ փութանակի երանելի Կոյսն գնաց ի լեառն Ձիթենեաց, որպէս ասաց նմա հրեշտակն Տեառն։ Եւ ասէ հրեշտակն. Եհաս ժամ[3] փոխման[4] և հանգստեան քո ի տեղի՝ ուր պատրաստեցաւ, անհաս ի մարդկանէ. զի ոչ ոք գիտաց[5], թէ ուր իցես ի զգայութեան և ի տեսութեան ի բարւոք եղելում։ Սոսկալի և սքան-*

1. Բ. օր. է հանգստեան տօնի Ս. Կուսին Մարիամու Աստուածածնի, մօր Տեառն մերոյ և Փրկչին Յիսուսի Քրիստոսի։ Գ. օր. Փոխումն և հանգիստ Ս. Աստուածածնի և մշտ կուսին Մարիամու։ Դ. օր. Հանգիստ ննջման և փոխման Աստուածածնին և մշտ կուսին Մարիամու, իսկ Ե. օր. յաւելու՝ մօր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։
2. Բ, Դ և Ե օր. չունին Թէ։
3. Դ. օր. ժամանակ։
4. Բ. օր. ննջման և փոխման քո։
5. Յօր. գիտացաւ, Բ, Դ և Ե. օր. գիտացեւ, իսկ Գ. օր. գիտաց։

Digitized by Google

չելի իմն բերկրանօք լցեալ[1] ամենասուրբ Կոյսն զմա-
քուր լոյսն տեսանելով, և որպէս ի խաւարէ ի լոյս ի
ստորնայնոցս փոխելով[2] ի մշտնջենաւորսն. անճառ
լուսոյն մերձ կալով, և անտի լուսով տալցեալ որ ի
Հայր և յՈրդի և ի սուրբ Հոգին: Եւ հեշտութեամբ
հրաժարիս[3] յաշխարհէս. ոչ ըստ այլոց[4] ննջեցելոց,
վասն զի աննմանք են քոյդ և նոցա հրաժարումն, որ-
պէս և զծնունդն հրաշալի ծնար, և զկուսութիւնդ[5]
ոչ ապականեցեր: Եւ զի ոչ այլ ուրեք երևեցաւ Աս-
տուածածին Կոյս յառաջինս, կամ ի վերջինս ի մարդ-
կանէ[6], և հոգևոր ծնունդ. սոյնպէս[7] և հրաժարումն
և հանգիստ ննջման քո, այլափոխեալ առատութեամբ
պարգևաց վերնոյն, հարազատապէս[8] զհետ երթեալ
քո ամենասուրբ Կոյս. ուստի մերժեալ են ցաւք և
տրտմութիւնք[9]. և ոչ գիտեմ զի՛նչ պարտ է ասել որ
պատրաստեալ է քեզ ի Տեառնէ[10], անքնին տեղի ու-
րախութեան, այլ յայլմէ երևեալ՝ փառաց ի փառս
երևմամբ: Եւ ամենայն հրճուանօք վայելեսցես զա-
ռաջիկայ ուրախութիւնս[11] ամենասուրբ Կոյս[12]. և մի՛
զարհուրիր ի չարաշուք[13] մահուանէ անտի, զի ոչ եկի
զարհուրեցուցանել զքեզ, այլ հալածել զերկիւղ մահու
ի քէն: Զի նոյն ինքն Տէրն և Որդին քո միածինդ հան-
դերձ երկնաւոր զօրօքն և առաքելոցն դասիւք[14] յղար-
կեսցէ զքեզ, ամենասուրբ Կոյս, ի հանգիստն յաւիտե-

1. Գ, Դ և Ե. օր. բերկրեալ:
2. Դ. օր. փոխեցեր ի ստոր- նայնոցս ի մշտնջենաւոր լոյսն:
3. Դ. օր. հրաժարեցես:
4. Ե. օր. օրինակի:
5. Գ. օր. զկուսութիւնդ ամ- բողջ պահեցեր, իսկ Դ. օր. և զկուսութիւնդ ոչ լուծեր:
6. Բ. օր. մարմնանալ ի հոգևոր:
7. Դ և Ե. յայսմ. Գ. օր. Սոյն- պէս և հրաժարումն և հան- գիստ այլափոխեալ:
8. Դ. օր. տարապարաբար և ա- ռանց աւելորդաց:
9. Ամենայն օր. զնեն հեծու- թիւնք:
10. Դ. օր. ի Քրիստոսէ, Ե. օր. չունի Տեառնէ:
11. Ամենայն օր. յաւելուն ոչ ինչ հատուցանաս:
12. Գ. օր. աստի մինչև՝ Այսպի- սի բերկն (էջ 453) չունի:
13. Բ, Դ և Ե. օր. չարաշունչ:
14. Ե. օր. չունի դասուք:

նից։ Այսպիսի թերեւս էին բանք հրեշտակին առ Կոյսն ասացեալ։ Եւ ասէ Մարիամ ցհրեշտակն.Ահաւասիկ պատրաստեալ կամ աղախին Տեառն։ Եւ գնաց ի նմանէ հրեշտակն որ խօսէր[1]։

Եւ յարուցեալ Մարիամ տարածեալ[2] զձեռս իւր ի նմանութիւն խաչի, եկաց յաղօթս առ Տէր. եբաց զբերան իւր և ասէ[3]. Ո՜վ Տէր Աստուած, արարիչ ամենայն[4] երեւելեաց և աներեւութից, և առաւել խնամակալ ազգի մարդկան և մարդասէր. ո՜վ Հայր ամենակալ, բարերար և բարեգործ, որ առաքեցեր զմիածին Որդիդ քո ի փրկութիւն ազգի[5] մարդկան, որ եկն զգեցաւ[6] զմարդկային[7] կերպարան յաղախնոյ քո, և նկարեաց և տպաւորեաց յորովայնի իմում զպատկեր գձձութեանս, և ի փառս միաւորութեան[8] բնութեան աստուածութեան իւրոյ։ Եւ յորովայնի իմում զպարսափելի փոխադրութիւն ներմարդութեանն՝ միաւորեաց և խառնեաց ի մի որդի, որպէս և ինքն գիտէ իւր խորին և անհասանելի տնօրէնութեամբն[9], և մի յԵրրորդութենէդ ճանաչի հաւատացելոց, և որք կարդան զանուն Աստուծոյ արարողիդ[10] Հօր և Որդւոյ և Հոգւոյդ սրբոյ։ Մի աստուածութիւն[11] և զօրութիւն և փառք ամենասուրբ Երրորդութեանդ քարոզի ընդ ամենայնի տիեզերս. որով փրկեցան ամենայն[12] արարածք և հնազանդեցան աւետարանին, և միոյ Աստուծոյ զերկրպագութիւն և զփառս և զօրհնութիւն ի բարձունս առաքեն[13]։ Եւ ես ի նոյն բերեալ հաստատութիւն հաւատոյ, որ ի Հայր և յՈրդի և ի Հոգիդ սուրբ, պատուեսցի և սիրեսցի գողջախոհութիւն և զսրբութիւն, կուսութեամբ

1. Ե. օր. յաւելու ընդ նմա։
2. Գ, Դ և Ե. օր. տարածեաց
3. Գ. օր. և ասաց այսպէս։
4. Գ և Դ. օր. ամենայնի։
5. Դ և Ե. օր. չունի ազգի։
6. Գ, Դ և Ե. օր. զգեցաւ։
7. Դ. օր. յաւելու՝ բնութեան։
8. Ե. օր. միութեան։
9. Դ և Ե. օր. խնամատարութեան։
10. Դ. օր. արարողէ, իսկ Գ. օր. արարչին։
11. Դ. օր. յաւելու տէրութեան
12. Այլք չունին՝ ամենայն։
13. Գ. օր. վերառաքին։

Digitized by Google

նաՀատակել ի քո անուն, ի քո գիտութիւն[1], լուսաւոր կարգօք և կրօնիւք: Եւ վերադոյն ըստ օրէնացն եղեալ յամենայնի կոյս մնալով, արժանի թերեւս աղախին քո ըստ երկնային կոչմանդ, խորհեցայ և խօսեցայ, և ոչ թողի ի մտաց զյիշումն Աստուծոյ. այլ և զպատուիրանաց քոց պահպանութիւն՝ որովք կեցի և հանդիսացայ, և զամենայն վտանգս ի Հրէիցն արհամարհեցի՝ որ ի վերայ իմ բերեալս պէսպէս և զանազան:

Եւ արդ, դու Տէր, Հայր մեր՝ որ յերկինսդ ես, սուրբ է անուն քո. և աղախին քո ըստ հրամանի քում փոխիմ յաշխարհէս ի հանդերձեալսդ, որպէս կամք (քո) հրամայեցին ի ձեռն հրեշտակին, որ երեւեցաւ ինձ, և պատմեաց ինձ զփոխումն անձին իմոյ յաշխարհէս. և ես պատրաստեալ կամ՝ ի կոչումն հրաժարելոյ աւուրն. եղիցին կամք քո բարի յիս՝ որպէս յերկինս և յերկրի, զի ոչ ումեք այսպէս յորդւոց[2] մարդկանէ արարեր՝ որպէս աղախնոյ քում, որ երանեցայ յամենայն ազգաց, և զՈրդիդ քո զԱստուած իմ՝ յղութեամբ յորովայնի[3] կրեցի և ծնայ անճառապէս ըստ մարմնոյ՝ զանճառելի ծնունդ Հօրդ, որով փրկեցան ամենայն[4] արարածք, մանաւանդ եւս առաւել խնդրելին աղախնոյ քո[5], թէ պարտ է տեղի տալ երկրաւորացս՝ երկնաւորին, և անցաւորացս՝ յաւիտենականին, որ կայ և մնայ, որ ոչ սասանի[6] և ոչ փոփոխի, և ոչ ոք ի հակառակորդաց և յապստամբաց վտանգացի առնուլ զամուրսդ և զանըմբռնելիսդ:

Եւ արդ, դու Տէր Հայր իմ[7], ես կաւ և դու ստեղծիչ իմ, մի՛ անտես առներ զաղախին քո, յուսոյ փրկու-

1. Դ և Ե. օր. յաւելուն, լուսաւորեալ շնորհօք փառացն քո, և առաջնորդեալ յարդարութեան լուսաւոր:
2. Ե. օր. չունի որդւոց, Գ. օր. զնէ՝ յորդւոց:
3. Դ. օր. յաւելու իմաց:
4. Գ, Դ և Ե. օր. չունին ամենայն:
5. Գ, Դ և Ե. օր. քում:
6. Դ. օր. սխալանէ:
7. Գ. օր. մեր:

Digitized by Google

թեան[1] իմոյ[2]։ Ո՛վ, Տէր կենաց, և Աստուած[3] մխիթա-
րութեանց, որ ոգւոց շտեմարանդ ես և մարմնոց տուն
և տեղի բնակութեան[4]. որ արարեր զամենայն և յօ-
րինեցեր, և դարձեալ փոփոխես՝ որպէս դու իսկ գի-
տես խորին քո[5] գիտութեամբդ։ Այժմ, ընկալ զա-
ղախին քո ի խորանսդ յաւիտենից, յանմահութեան
վիճակն, ի լուսաւորացն կայանսն, ի սրբութիւն սըր-
բոցն, ի վերինն Երուսաղէմ, ի մշտնջենաւոր կեանսն[6],
և յանանց ուրախութիւնսն, և յանսպառ[7] բարիսն,
յաւերժ[8] ուրախութիւնն, յանստուեր լոյսն, մեծի լու-
սոյդ մերձ կալով և ամենասուրբ Երրորդութեանդ լու-
սովդ լցայց[9], զորոյ և զհոսումդ ընկալայ յերկրի յօ-
րավայնի իմում, քոյով զօրութեամբդ հովանի[10] եղեալ,
Հայր ամենակալ, և Հոգւոյդ[11] սրբոյ սրբելով զիս իջ-
մամբ, որ զՈրդւոյ քո զմարմնանալն յօրինէր հրաշա-
փառ և անապական, և զտեալ[12] յամենայն գեհենա-
քարշից, որպէս յայտ առնեն նոքին իսկ բանք մարգա-
կայնոց իրացս։ Արդ, այժմ աղբիւրդ[13] բարեաց լուսոյ,
հանդիպեցայց ի փոխմանս իմ, յերկրաւորացս յողջու-
նելիսդ[14] և յոյժ ախորժելիսդ սուրբ[15] Երրորդութեանդ։

1. Դ. օր. երջանկութենէդ։
2. Գ. օր. չունի իմոյ, Ե. օր. զնէ զս։
3. Գ, Դ և Ե. օր. յաւելուն ամենայն։
4. Ե. օր. յանէութենէց և դար-ձեալ, Դ. օր. որ արարեր զամե-նայն յանէութենէց էր որպէս են։
5. Գ. օր. զս դիտողութեանդ և քննութեամբդ, Դ. օր. զս գիտութեամբդ և դիտողու-թեամբդ, Ե. օր. զս իմաս-տութեամբ և գիտութեամբդ։
6. Դ. օր. կարգաց։
7. Դ. օր. յանխռով։
8. Գ և Դ. օր. յաւէժ պայ-ծառութեանց, Ե. օր. յա-ւերժական խնդութեանն։
9. Գ և Դ. օր. յաւելուն՝ լու-սաւորեցայց։
10. Դ. օր. հովանաւորեալ։
11. Դ և Ե. օր. հոգւովդ սրբով։
12. Ե. օր. զարդեալ։
13. Դ. օր. աղբերդ լուսոյ և բարեաց, Ե. օր. բարութեանց և լուսոյ։
14. Ե. օր. յողջունաբերելիցն։
15. Դ և Ե. օր. դիտաւորու-թեամբ զամենասուրբ զլոյսդ սուրբ Երրորդութեանդ։

Digitized by Google

Ըստ կարողութեան զլոյսն տեսանել աղախնոյ քում [1], և արժանաւորապէս [2] ըստ խոստմանն զկատարեալ բարեացն ընդունելութիւն և լուսաւորութիւն, առ ի յընդունելի և աստուածազգեստ [3] լինել ի ճշմարտութեանն կերպարանս [4], ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր. և զհամացեղս ըստ մարմնոյ [5], զհաւատացեալս յամենասուրբ Երրորդութիւնդ, խնամեսցես ի մարմնի՝ զոր գնեաց արեամբն իւրով միածին Որդիդ, յիշխանութենէ խաւարի յազատութիւն փառաց անուան իւրոյ։ Արդ, զօրացո զամենեսեան [6] ընդդէմ հանապազորդեան թշնամւոյն, զյաղթութեան [7] շնորհս տուր միշտ [8] յուսացելոյն և ապաւինելոցն ի քեզ. զի դու ես կարող յամենայնի, որ եսդ յէութեան, իսկութեան, անքննութեան, բնակեալդ ի լոյս անմատոյց, և օրհնիս ի դասուց անմարմնոց հրեղինաց և անմահից [9]։ Դու, Տէր, և ի հողեղինացս հաճեցար ընդունել զօրհնաբանութիւն [10]. արա զամենեսեան որդիս լուսոյ և որդիս տուընջեան, զի երկիւղածութեամբ սրբեալ ի մեղաց և անարատ [11] վարուք կրօնաւորեալք յայսմ աշխարհի, առանց գայթակղութեան կատարեսցեն [12] զժամանակ պանդխտութեանս՝ մատակարարեալ ի մարմնական [13] ընթացս ի հաճոյս [14] կամաց քոց բարեսիրաց. և ի բաց մերժել [15] զախտասիրացն կամս, և միշտ առ քեզ ունել զցանկութիւնս իւրեանց. արանց և կանանց [16]

1. Բ, Գ և Դ. օր. քո։
2. Ե. օր. յաւելու՝ ընդ այլ։
3. Բ. օր. զչտարբերելոյն ընդունելութիւն։
4. Դ. օր. աստուածազգեաց, իսկ Ե. օր. աստուածազգեացող կերպարանաւ։
5. Գ, Դ և Ե. օր. յաւելուն՝ ազգի։
6. Ե. օր. չունի զամենեսեան։
7. Դ. օր. և զյաղթութեան շնորհս միշտ։
8. Բ. օր. չունի միշտ։
9. Գ. օր. անմահից հոգեղինաց։
10. Ե. օր. զօրհնութիւն։
11. Այլք՝ արատաւորք։
12. Բ և Դ. օր. կատարեսցուք։
13. Ե. օր. ի մարմնաւոր։
14. Գ. օր. հաճոյացեալ։
15. Բ. օր. առնել։
16. Դ. օր. յաւելու ծերոց և տղայոց։

և ամենայն չափու հասակի[1] մարդկայնոցս[2], և ամենայն[3] սրբութեամբ, անարատութեամբ և կուսութեամբ[4] և պարկեշտութեամբ վերաբերեալք յարդարութենէ ի հանդերձեալսդ[5] Որդւոյ քո սիրելւոյ, և ի խորանի սրբութեան սրբոց[6] քոց[7], մատուցանել ընդ փառս ամենասուրբ Երրորդութեանդ, Հօր[8] և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Եւ ի վերուստ ձայն լսելի եղեւ[9] ամենեցուն[10], որ ասէր. Երանելի ես դու ի կանայս, ո՜վ ամենասուրբ[11] Կոյս. ե՛կ և՛ հանգիր ի բազում ճգնութեանցդ, և ուրախութեամբ ուրախասցիս[12], և Տէր ընդ քեզ: Եւ խնդութեամբ լնոյր ամենասուրբ Կոյսն և օրհնէր զԱստուած:

Յետ այսորիկ դառնայր ի տուն իւր. և ժողովեցան առ նա ամենայն մերձաւորք իւր՝ տեսանել[13] և լսել վասն որոյ կոչեցաւ ի հրեշտակէն ի լեառն Ձիթենեաց: Եւ եկեալ աղաչէին զնա[14] պատմել նոցա ստուգիւ. և ասաց նոցա ճշմարտութեամբ[15], և զփոխման հրաւէրն եցոյց նոցա. և բազում լալիւն եղեւ ժողովելոցն[16], և մորմոքէին ի մեկնելն նորա ի նոցանէ և այլ ոչ եւս տեսանել զնա: Եւ ասէ Մարիամ. Մի՛ լայք ի վերայ իմ, այլ ուրախ լերուք, զի զատորինս թողում և երթամ առ Տէրն և Միածին[17] Որդին, առ որ անձկացեալ եմ. զի նա ինքն հրաւիրեաց զիս և կոչեաց յիւր արքայութիւնն[18] և ի հանգիստն: Ընդէ՞ր ճմլեցուցանէք զսիրտ իմ. զի թէ Տէրն

1. Այլք՝ հաստոյց:
2. Գ. օր. մարդկան:
3. Ե. օր. չունի ամենայն:
4. Գ. օր. կուսութեան և պարկեշտ ամաստանութեամբ:
5. Այլք յաւելուն արքայութեան:
6. Դ. օր. սիրելւոյ:
7. Այլք՝ յաւելուն ամենեցուն:
8. Ե. օր. չունի Հօր, Որդւոյ և Հոգւոյն սրբոյ:
9. Դ և Ե. օր. լինէր:
10. Այլք չունին ամենեցուն:
11. Դ. օր. սուրբ:
12. Դ և Ե. օր. ուրախ եղիցես:
13. Դ. օր. յաւելու զնա:
14. Գ, Դ և Ե. օր. զնա:
15. Դ. օր. զճշմարտութեան:
16. Բ. օր. ժողովելոցն:
17. Ե. օր. Աստուած:
18. Գ. օր. յաւելու փառան:

Digitized by Google

իմ Քրիստոս միածինն[1], որ մարմնացաւ յինէն՝ ճաշակեաց զմահ, ո՛րքան մեզ պարտ է[2]։ Եւ արդ, մի՛ երկընչիք, միայն թէ[3] ամբիծ վարուք և ուղղափառ հաւատով արժանաւորեալք. զի մահ մեղաւորաց է չար, իսկ արդարք՝ փոխին ի մահուանէ ի կեանս։ Բայց զգոյշ լերուք[4] անձանց, զի իւրաքանչիւր ոք ի ճանապարհի է, և հոսան[5] երկրաւորացս յոլով բերեն զմեղս։ Որք ի կուսութեան էք՝ արք և կանայք, սիրեցէք զկուսութիւն[6], զի իցէք սուրբ մարմնով և հոգւով, և մի՛ խաբեսցին միտք[7] ձեր ի հակառակացն ի Քրիստոսի միամտութենէ[8]. այլ արթուն կացջիք[9] ի խորհուրդս մաքուրս[10], և գործեցէք զարդարութիւն. զի առընթեր է զօրացուցիչն[11] Քրիստոս, որք նուիրեցին զանձինս իւրեանց նմա ի բնակութիւն։ Զի թէպէտ և զթշնամին արդարութեան զչարախորհուրդն[12] կուսից ի շարժումն[13] տեսանիցէք, մի՛ զարհուրիք, այլ քաջալերեցարուք Տերամբ և կարողութեամբ նորա, և ճգնեցարուք[14], և լինի փախստական ի ձէնջ։ Եւ երանի կուսից, որք կացին[15] միաբանութեամբ ընդ Քրիստոսի, և պահեցին զանձինս յամենայն փաղաղական[16] գիջութեանց և ի խորհրդոց անմաքրից։ Տացէ[17] նոցա տեղի յարքայութեանն արդարոց, անուանի առաւել քան ուստերաց և դստերաց. և անստուեր[18] լուսովն լցցին,

1. Դ և Ե. օր. Որդին Աստուծոյ։
2. Դ. օր. յաւելու մեռանել։
3. Գ. օր. յաւելու հաստատայք։
4. Այլք՝ զգուշացարուք։
5. Գ. օր. խօսան։
6. Այլք. սրբութիւն, զի սուրբ է Տէր և է սուրբն բնակելով ի մէջ ձեր, (Բ. օր. ձեզ) թողլով զի արարեալ կուսութեան, այլ զի իցէ սուրբ մարմնով և հոգւով։
7. Դ. օր. ախտք։
8. Բ. օր. իմաստութենէն։
9. Գ. օր. յամենայն։
10. Ե. օր. մտաւորս։
11. Բ, Դ և Ե. օր. յաւելուն խաչից։
12. Բ և Դ. օր. չար խորհրդոցն։
13. Բ. օր. յելման։
14. Գ. օր. ճգնութեամբ ջերմով։
15. Գ. օր. յաւելու յառաջին։
16. Բ. օր. փաղաղական, Գ. օր. փաղաղականն գիջութենէ։
17. Դ. օր. զի տացէ։
18. Ե. օր. անոյշ։

Digitized by Google

յանապատ բարիսն վայելեալք, և անապական և անթառամ պսակօքն վայելչապէս[1] զարդարեսցին ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր: Արդ, արթունք լերուք[2] և յամենայն ժամ աղօթս արարէք, զի յամենայն փորձանաց հակառակամարտին[3] ապրեալք լիցուք[4], և կալ առաջի փեսային մարմնացելոյ Բանին[5] յինէն. մաքուր հոգւով և մարմնով[6], զուարթ և բերկրեալք. կոյսք և ճշմարիտք, ամբիծք և անարատք, պայծառ ջահիւք մտանել յառագաստն Քրիստոսի[7] անմահ[8] փեսային, ընդ որս ես արժանաւորեցայց շնորհօք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, յորս ամենակալ[9] Հայրն ուրախ առնէ միածին Որդւովն իւրով և սուրբ Հոգւովն: Եւ զի՞ ես պարտ[10] է ինձ երկայնել[11] զբանս, ունիք զՔրիստոսի խրատն, զքարոզեալն[12] ձեզ աւետարանչացն, նաև յառաքելոցն[13] և ի մարգարէիցն, նոցա լուիջիք. զի յայնցանէ իմասջիք զԱստուծոյ մարդասիրութիւնն և զճանապարհս արդարութեան. որ փոքր ինչ հայցէ՝ մեծամեծ շնորհէ, աստ և որ անդէն կեանքն[14]:

Եւ մինչդեռ նա զայս խօսէր, եկն Յովհաննէս առաքեալ և աւետարանիչ Քրիստոսի և կոյս[15]. որում ի խաչին Տէրն[16] զնոյն յանձն արար՝, թէ Ահա մայր քո. և ցնոյն[17], թէ Ահա որդի քո. որ սպա-

1. Բ. օր. և լուսատեսակ զգեստուքեաւ, Դ և Ե. օր. զգեստուքեաւ:
2. Այլք՝ կացէք:
3. Բ և Ե. օր. հակառակողին, Գ և Դ. օր. հակառակորդին:
4. Գ. օր. ապրեալ լիջիք, Դ և Ե. օր. լինիջիք:
5. Այլք՝ Բանին Աստուծոյ, Գ. օր. Հօր իմոյ:
6. Բ. օր. յարդար սուրբ սրտիւ, իսկ Գ. օր. առողջ կարգաւ ճշմարտիւ:
7. Գ. օր. չունի Քրիստոսի:
8. Դ. օր. երկնաւոր փեսային և անմահին:
9. Դ. օր. երկնաւոր:
10. Դ. օր. պիտոյ:
11. Ե. օր. արկանել:
12. Ե. օր. զքարոզեալն ձեզ յաւետարանին:
13. Գ, Դ և Ե. օր. զառաքելոցն և զմարգարէիցն:
14. Յօր. կայ կեանքն, ուղղեցաք ըստ այլոց օր.:
15. Գ. օր. չունի կոյս:
16. Այլք յաւելուն՝ զամենասուրբ:
17. Բ և Դ. օր. դարձեալ:

սաւորէր և հոգայր վասն նորա զամենայն աւուրս կենաց ամենասուրբ կուսին[1] Մարիամու Աստուածածնին։ Եւ ասէ Մարիամ ցՅովհաննէս․ Որդեակ, որպէս Տէր եցոյց ինձ ելանել յաշխարհէս[2], և մտանել առ Քրիստոս առ որ անձկացեալն եմ․ և դու, օրհնեացիս[3] ամենայն հոգևոր օրհնութեամբ՝ որ ոչ անցանէ, և զիս բարիոք ընկալար, և այժմ[4] բարիոք յղարկեսցես առ Քրիստոս, և արասցես աղօթս վասն իմ, զի անցից ընդ[5] իշխանութիւնս և ընդ այսս չարութեան որք ընդ երկրաւս։ Եւ մարմնոյ իմոյ զգոյշ լեր ի Հըրէից[6] յատելեացն Քրիստոսի, զի[7] գիտես զնոցա չարութիւնն[8], որքան նեղեցին զիս և տառապեցուցին, ուրանալ զճշմարտութեան ծնունդն Օծելոյն՝ որ մարմնացաւ յինէն՝ որպէս և ինքն կամեցաւ։ Ամ եղբարք քոյովք առաքելովք, որպէս Տէր ցուցցէ[9], արասջիք․ և յղարկեսջիք զիս սաղմոսիւք և օրհնութեամբք և երգօք հոգևորօք, և զօր ննջման իմոյ առնիջիք[10] ի փառս անուան Տեառն Աստուծոյ մերոյ։

Եւ տրտմեցաւ առաքեալն Յովհաննէս, իբրև լուաւ զայս յամենասուրբ Կուսէն[11], և ասէ․ Ո՜վ ամենասուրբ Կոյս և մայր Փրկչին[12], որ զԱստուած զմիածին որդին Հօր յորովայնի քում կրեցեր յղութեամբ, և քրովբէքն[13] ծածկէին զարգանդ քո, և դասք հրեշտակաց զքեւ շուրջ լեալ օրհնէին զքեզ և զմարմնացեալն ի քէն․ որ ե-

1․ Գ․ օր․ Աստուածամօրն։
2․ Այլք՝ մարմնոյս, Գ․ օր․ առ-ուէ և մտանեմ։
3․ Ե․ օր․ օրհնեալ լիջիս։
4․ Ե․ օր․ չունի այժմ։
5․ Գ․ օր․ յաւելու խաւարային։
6․ Բ․ օր․ չունի հրէից։
7․ Բ․ օր․ զոր բնէնին։
8․ Բ․ օր․ յաւելու՝ զչարաղաւ-թեան։
9․ Դ․ օր․ ցուցցէ ձեզ, Ե օր․ եցոյց ձեզ։
10․ Բ և Դ․ օր․ արասջիք։
11․ Ե․ օր․ զայս ասելով, և ասէ։
12․ Բ․ օր․ Փրկչաբանին։
13․ Բ․ օր․ և քերոբէիւք և սերովբէիւք ծածկեալ յորովայնդ քո, Գ․ օր․ քրովբէիցն իւրեանց ծածկէին զարգանդ քո, Դ․ օր․ Սերովբէիցն (Ե․ օր․ քերոբէիցն) իւրեանց ծածկէր արգանդ։

Digitized by Google

բանեցար ի բոլոր ազգաց՝ օրհնեալդ ի կանայս[1]։ Եւ արդ, դու հոգա՛ս վասն հոգւոյ և մարմնոյ, և իշխանութեանցն[2] անցանելոյ և ի չարութեան այսոցն։ Մեք զի՞նչ[3] արասցուք, որք ոչ ունիմք զայսպիսի երանութիւնս։ Վասն որոյ զքեզ ունիմք[4] ի բարեխօսութիւն, զառաջնորդական միտս մեր լուսաւորելով ի գիտութիւն ճշմարտութեան, որպէս և պատուիրեաց մեզ Տէր. զի գնասցուք սիրով հոգւոյն հեզութեամբ, և քարոզեսցուք զբանն ճշմարտութեան ընդ ամենեսեան[5]. և զյաղթութեան շնորհս հանապազ ընդունել ի Քրիստոսէ միածնի Որդւոյ քո և ի Տեառնէ մերմէ, առ թըշնամիս մեր և ատելիս անուանն[6] սրբոյ. Նա և ամենայն հաւատացեալք յամենասուրբ Երրորդութիւնն՝[7] զքեզ ունին բարեխօս առ[8] միածին Որդի քո և Աստուած մեր[9]։ Քեւ[10] լուծան անէծք նախահօրն Ադամայ և մօրն Եւայի. և նոյին ամօթալից մերկութիւնն դարձեալ ծածկի լուսաւոր պատմուճանաւն ի լուսաւոր[11] աւազանին, յաստերս[12] և ի դատերս։ Ի քէն ծառն[13] պտղաբերի, ո՛վ ամենասուրբ Կոյս, և զմահաբեր պտղոյն ճաշակս դառնութեան՝ քաղցրացուսցէ ամենազօր[14] յօրութեամբ[15] իւրով։ Դու ես պարծանք կուսից և ողջախոհից. վասն որոյ՝ ի քո բարեխօսութիւնդ ապաւինեալ[16] ամենայն հաւատացեալք

1. Այլք յաւելուն. դու եղեր լուծիչ անիծից, և տես բացաճանապարհ դրախտին (Դ. օր. ծառոյն, Գ և Դ. օր. կենաց) որ բացեալն որոց շնորհեանն է պահեր քերովբէիւքն (Դ. օր. սրովբէին։
2. Գ. օր. ընդ իշխանութեանս։
3. Դ. օր. զիա՞րդ արդարասցուք։
4. Այլք՝ կարդամք։
5. Դ. օր. չունի յամենեսեան։
6. Բ և Դ. օր. յաւելուն, նորա, Ե. օր. Տեառն։
7. Բ, Դ և Ե. օր. անուան։
8. Դ. օր. չէ նշեալ։
9. Այլք դնեն՝ Որդւոյ քո և Աստուծոյ մեր։
10. Գ. օր. լուծեալ։
11. Դ. օր. սուրբն։
12. Դ. օր. չունի յաստերս և դատերս։
13. Այլք՝ կենաց։
14. Դ. օր. ամենակարող։
15. Ե. օր. զօրութեամբ։
16. Գ և Դ. օր. ապաւինին, Բ. օր. ապաւինելով, Ե. օր. չունի։

Digitized by Google

տալ[1] Քրիստոսի զթողութիւն մեղաց նոցա[2], և զմեծ զողորմութիւն։ Եւ մի՛ լիցին սասանեալք յամենայն փորձութեանց[3] հակառակորդին և ի սնոտի խաբէութեանց նորա, զի յամենայնի՛ զարժանաւոր փառաւորութիւնսն ամենեցունց Տեառն հատուսցեն[4]։

Եւ[5] մինչդեռ զայս խօսէր Յովհաննէս ի տան ամենասուրբ[6] կուսին Մարիամու[7] Աստուածածնին, ժողովեցան և այլ առաքեալքն Տեառն[8] ի դուրս[9] տանն, որպէս կոչեցեալք ի Հոգւոյ սրբոյ, Պետրոս և Պաւղոս, Յակովբոս և Անդրէաս, Փիլիպպոս և Թովմաս, Յակովբոս Ալփեան և Շմաւոն Նախանձայոյզ, և Յուդա Յակովբեան։ Եւ[10] եւ Յովհաննէս առ նոսա, և կացին յաղօթս[11] առ Տէր։ Եւ ոչ գիտէին զնն յոր[12] ինչ կոչեցանն։ Եւ ամբարձեալ զձեռս իւր[13] Պետրոս[14] և ասէ. Տէր Աստուած ամենակալ, որ նստիս յաթոռս[15] քերովբէական ի բարձունս, և օրհնիս ի զօրաց հրեշտակաց[16], և զխոնարհս տեսանես և խնամես ողորմութեամբդ[17]. լոյս՝ և ի լոյս բնակեալ, և լուսաւորես զմիտս[18] զառ ի քեզ հաւատացելոց. Քրիստոս Որդի Աստուծոյ փրկիչ աշխարհի[19], որ ժողովեցեր զմեզ յիւրաքանչիւր ի վիճակաց, ցոյց[20] զզօրութիւն խորհրդ-

1. Բ. օր. տալով, Դ. օր. տալ տե, Գ. օր. խնդրելով ի Քրիստոսէ տալ, Ե. օր. չունի տալ Քրիստոսի... մեղաց ընծայեցին։
2. Գ, Դ և Ե. օր. չունին նոցա։
3. Գ. օր. փորձառութենէ ընդդիմամարտին։
4. Դ և Ե. օր. մտաւորացն։
5. Գ. օր. զայս էբրև։
6. Ե. օր. չունի ամենասուրբ։
7. Գ. օր. մօր Տեառն։
8. Դ. օր. չունի Տեառն։
9. Բ և Գ. օր. չունին ի դուրս տանն։
10. Դ. օր. յայնժամ, Գ. օր. և Յովհաննէս ընդ նոսա։
11. Բ և Դ. օր. յաւելուն մօտեան։
12. Դ. օր. ինէ, Գ. օր. չունի։
13. Գ. օր. էարեանց ասէն։
14. Դ. օր. յաւելու ի վեր։
15. Բ, Դ և Ե. օր. ի վերայ քերովբէական աթոռոյ։
16. Դ. օր. հրեշտակապետաց։
17. Գ. օր. յաւելու քով, Դ. օր. քո։
18. Բ. օր. զոխերս, Գ. օր. զամենեսեան։
19. Դ և Ե. օր. աշխարհաց։
20. Դ և Ե. օր. յաւելուն մեզ։

Digitized by Google

դոյս[1], առ ի գիտել և ճանաչել զկամաց քոց տես-չութիւն։ Եւ շնորհք[2] սուրբ[3] Հոգւոյդ լցուսցէ զամե-նեսեան[4] զժողովեալքս՝ զի[5] ի հարցանել կամաց քոց հաճութիւն՝ առ միմեանս լսելով և խօսելով, ոչ ար-տաքոյ եղիցուք[6] կամաց քոց բարեսիրաց. և[7] ի քո փառս կատարի ամենայն ինչ՝ այժմ և՝ յաւիտեանս։ Եւ ասացեալ զամէնն, ողջունեցին զմիմեանս և գո-հացան ամենեքեան[8]։

Եւ պատմեաց Յովհաննէս զամենասուրբ Կու-սէն, որպէս առ[10] հրաման ի Տեառնէ[11] ելանել յաշ-խարհէս[12]. և վասն այնորիկ ժողովեաց զմեզ[13] Տէր, զի յղարկեսցուք[14] զնա ի հանդերձեալսն, որպէս և կամեցաւ արարիչն ամենեցուն[15]։ Եւ նոցա լուեալ և սքանչացեալ[16] և ի տրտմութեան եղեալ սուղ ինչ արտասուեցին. և դարձեալ զմիմեանս մխիթա-րէին[17] հանդերձեալ յուսովն, որպէս արժանաւորացն խոստումն է, զոր խոստացաւ ամենեցունց Տէր, յետ աստեացս փոփոխմանցս մխիթարէին[18]։ Եւ մտեալ ի ներքս ամենեքեան[19] առաքեալքն, և կացին յաղօթս առ[20] Տէր, և ետուն ողջոյն ամենասուրբ Կուսին[21] և ընկալան[22] զխաղաղութեանն ողջոյնն[23] ի Տէր։

1. Գ. օր. խորհրդոյդ։
2. Գ. օր. շնորհօք... լցուսցէ։
3. Բ և Դ. օր. ամենասուրբ։
4. Բ. օր. չունի զամենեսեան։
5. Բ. օր. գիտելով զկամաց քոց զհաճութիւնս։
6. Գ և Ե. օր. եղիցի, Դ. օր. եղիցին։
7. Բ. օր. զի, Ե. օր. քանզի։
8. Բ. օր. յաւելու զԱստուած։
9. Բ. օր. վասն ամենասուրբ հոգւոյն։
10. Բ և Ե. օր. առնել։
11. Բ. օր. չունի ի Տեառնէ։
12. Գ. օր. վասն փոխման երկրոյ։
13. Բ. օր. զնեղ
14. Գ, Դ և Ե. օր. յաղարկեցաք։
15. Բ. օր. արարածոց, Ե. օր. ամենայնի։
16. Բ. օր. ոքանչացան սուղ ինչ։
17. Ե. օր. չունի մխիթարէին։
18. Բ, Գ և Դ. օր. չունին մխիթարէին։
19. Բ. օր. երկոտասան, Դ և Ե. օր. ամենեքեան երկոտասանն։
20. Բ և Ե. օր. չունին առ Տէր։
21. Դ և Ե. օր. յաւելուն Մարիամու Աստուածածնին մօր Տեառն։
22. Բ. օր. յաւելու՝ ի նմանէ։
23. Դ և Ե. օր. յաւելուն՝ ամենեքեան։

Digitized by Google

Ի նմին ժամու ցնծացաւ Սրբուհին ի փառս և ի գովութիւն արարչին Աստուծոյ[1], և լցեալ Հոգւով սրբով ամենասուրբ Կոյսն և ասէ. Օրհնեալ է Տէր Աստուած[2], որ ժողովեաց[3] զձեզ ի հրաժարումն[4] աշխարհի իւրոյ. և օրհնեալ անուն սուրբ փառաց Նորա, որ այսպէս բարեհաճեցաւ. օրհնեցէք[5] ամենայն ծառայք Տեառն զՏէր, որ եկիք[6] այսօր. ի գալստեանս ձերում զուարճացաւ սիրտ իմ, և բերկրեցաւ անձն[7] իմ ի Տէր. զի հայեցաւ ի տառապանս աղախնոյ իւրոյ, և կոչեաց զձեզ ի մխիթարութիւն և ի սփոփանս անձին իմոյ, ելանել յաշխարհէս։ Արդ, լերուք ինձ զօրացուցիչք և աղօթիւք ձերովք յուղարկեցէք զիս ի հանդերձեալսն՝ ի հանգիստն յաւիտենից[8]։ Եւ մի ոք յայսոց չարաց դժրեսցէ ինձ՝ որք հակառակին. և յելանել իմում առ Տէր, խաղաղութիւնն Քրիստոսի միասցէ առ ձեզ առատապէս, ո՜վ առաքելական դասք երկոտասանից։

Դուք էք լոյս աշխարհի, որպէս ասաց Տէրն[9] միածին Որդին[10], որ լուսաւորէք[11] զանձինս ի խաւարային խորհրդոց։ Դուք էք աղ երկրի, որ զանհամութիւն մարդկան համեմէք ստուգութեամբ[12] աղիւն ճշմարտութեամբ առնել պիտանիս[13]։ Դուք էք[14] սիրեցեալք ի Հօրէն բոլորից, կոչելով[15] զտիեզերս յորդէգրութեան շնորհս և ի սէր ամենակալին։ Դուք էք աշակերտք Քրիստոսի հեզոյն և մարդասիրին, որ զտկարութիւնս մեր էառ

1. Բ. օր. էարոյ, Դ. օր. էարոյ Աստուծոյ։
2. Բ, Գ և Ե. օր. չունին՝ Աստուած։
3. Ե. օր. արժանաւորեաց։
4. Դ. օր. է յաղարկման։
5. Բ. օր. առ օրհնեցէք։
6. Ե. օր. ժողովեցայ։
7. Գ. օր. ոգի։
8. Գ. օր. յաւիտենական։
9. Բ. օր. յաւելու՝ իմ։
10. Գ. օր. չունի՝ որդին։
11. Գ. օր. լուսաւոր էք, Ե. օր. լուսաւորեցէք։
12. Ե. օր. խաղաղութեամբ։
13. Գ. օր. պիտանիս։
14. Դ. օր. չունի էք։
15. Ե. օր. կոչեցեալ, Դ. օր. հրաւիրելով։

Digitized by Google

և ձեօք քարոզեաց զաւետիս[1] յերկրի։ Դուք էք Հոգւոյն սրբոյ ընդունակք[2], որ բաշխէք տիեզերաց շնորհս՝ ըստ իւրաքանչիւր արժանաւորութեան[3]։ Դուք էք՝ որ հոգեւոր աւազանաւն լուանայք զՀնութիւն մեղաց, և նորոգէք հոգւով և մարմնով վերստին[4]։ Դուք էք քարոզք ճշմարտութեան, որ զամենայն զստութիւն և ըղխորամանգութիւն[5] ածէք ի լոյս՝ Տերամբ։ Դուք էք սերմանողք արդարութեան, և անիրաւութեան[6] արձանացուցիչք[7], և այսոց չարաց հալածիչք ի մարդկանէ։ Դուք էք յորդորիչք կուսանաց և ողջախոհութեան ապաշխարհականք, ի մաքրութիւն և ի սրբութիւն ճգնաւորելով[8] միշտ։ Դուք էք՝ որ[9] ամուսնացելոց զպարկեշտութիւն վարդապետէք[10], և զորդիս խրատու և ուսմամբ[11] Տեառն[12]։ Դուք էք՝ որ յերկոտասան աթոռսն նստիք՝ դատել զերկոտասան ազգն Իսրայելի և զամենայն տիեզերս, և ըստ արժանեացն հատուցանէք[13] ըստ բարեացն գործոց, համանգամայն և[14] ըստ վատթարիցն․ զարդարսն որք հաւատացին Բանին[15] կենաց՝

1․ Բ․ օր․ զաւետարան արքայութեան, Ե․ օր․ զաւետիս կենաց, Դ․ օր․ զաւետիս կենաց յերկիր։
2․ Բ․ օր․ ընդունողք։
3․ Ե․ օր․ արժանաւորելոյ, Բ․ օր․ արժանաւոր լինելոյ մաքուր խորհրդով։
4․ Բ․ օր․ վերստին։
5․ Բ, Գ, Դ և Ե․ օր․ ըղխորամանկութեան մարդկան ի լոյս ածէք ի Քրիստոս (Գ․ օր․ ի Տէր)։
6․ Բ․ օր․ արձանացուցիչք մեղաց։
7․ Գ․ օր․ արդարացողք։
8․ Բ․ օր․ ճգնելով, Դ․ օր․ յորդորելով։
9․ Բ․ օր․ յաւելու՝ էք որ։
10․ Դ․ օր․ քարոզիչ վարդապետէք։
11․ Բ և Ե․ օր․ իմաստութեամբ Տեառն ուսուցանել, Գ․ օր․ ուսուցանէք։
12․ Այլք յաւելուն․ Դուք էք որ զկենդանարար մարմին և զարիւն ծծելոյն, հաստատեցելոյ բաշխէք ի թողութիւն մեղաց արժանաւորելով (Գ․ օր․ արժանաւորեցելոյն)։
13․ Բ․ օր․ հատուցանէք բարեգործացն բարիս։
14․ Բ, Դ և Ե․ օր․ և վատթարացն։
15․ Գ․ օր․ չունի՝ Բանին։

յաւիտենական ի կեանսն առաքելով, և զանիրաւսն և զանհնազանդս՝ ի տանջանսն[1], զոր պատրաստեալ է սատանայի և հրեշտակաց նորա: Արդ, որ զայսքան և զայսպիսի շնորհս[2] և զիշխանութիւն առէք ի Քրիս-տոսէ, լերուք աշախնոյ Տեառն[3] յղարկաւորք[4] ի փոխմանս իմում[5]՝ աղօթիւք ձերովք. որպէս զի[6] անդր ժառանգեցից[7] զխոստացեալ բարիսն ի Քրիստոս Յի-սուս ի Տէր մեր:

Եւ զայս ասացեալ՝ լռեաց ի խօսելոյ ամենասուրբ Կոյսն[8]:

Եւ առաքեալքն զմիմեանս յորդորէին խօսել բանս մխիթարութեան: Եւ ամենեցուն զՊետրոս ստիպեալ՝ վասն զի նա իսկ էր գլուխ[9] առաքելոցն և[10] այլոց աշակերտացն: Եւ ասէ Պետրոս. Զի՞նչ այսուհետեւ զբանիցս գովութիւն ընծայեսցուք Սրբուհոյս, որ գովութեամբ ի գովութիւն յուղարկի[11], և ի կենաց ի կեանս, և ի փառաց ի փառս անմահականս[12]: Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ զարմացուցեր զվերին զօրու-թիւնսն ի յայտնել[13] ծածկեալ[14] խորհրդոյն Աստուծոյ: Ո՜վ[15] ամենասուրբ Կոյս, որ զմարմնացեալ Բանն[16] յո-րովայնի քում կրեցեր, և անձառաբար և առանց աղ-

1. Բ, Դ և Ե. օր. յաւէրժն. յաւիտենից, Գ. օր. յաւիտե-նականս:
2. Դ. օր. շնորհի շնորհս, Բ. օր. յաւելու և զայսպիսի:
3. Բ. օր. յաւելու Յիսուսի:
4. Գ, Դ և Ե. օր. յաղա-չաւորք:
5. Բ և Ե. օր. էմ:
6. Այլք յաւելուն՝ երբեմն:
7. Ե. օր. յաւելու ինչ, Դ. զխոստացեալն ինչ զբարիս:
8. Բ, Դ և Ե. օր. յաւելուն Աստուածածին:
9. Բ և Գ. օր. յաւելուն, եր-ջանիկն, Ե. օր. երջանիկ-նեիցն, և:
10. Բ և Ե. օր. չունին և այլոց (Դ. օր. այլ) աշակերտացն:
11. Գ. օր. յաղարկեսցուք:
12. Ե. օր. անմահ կենացն, Գ. օր. չունի:
13. Գ, Դ և Ե. օր. է յայտնու-թեան, Բ. օր. է յայտնութեան ծածկեալ որդւոյն Աստուծոյ:
14. Ե. օր. ծածկեալ:
15. Ե. օր. ասէ մինչև առանց աղտոյ չունի:
16. Դ. օր. յաւելու Աստուծոյ:

Digitized by Google

տոյ։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, տեղի[1] անտանելւոյն[2], զոր երկինք ոչ կարէին[3] տանել, որովայնդ ոչ նեղեցաւ[4] մեծութիւն։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, որ զԱստուած յարգանդի[5] կրեցեր յղութեամբ, և ծածկեցաւ որովայն քո թեւովք քերովբէից[6]։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, (առ) որ ըզհրեշտակապետն Գաբրիէլ յուրախութիւն[7] աւետաւոր[8] առաքեաց Հայր և Որդի[9]։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, որ քո աւետեօք զամենեսեան ի տրտմութենէ յուրախութիւն դարձուցեր զհաւատացեալս[10] ի Տէր[11]։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, որ զանճառելին[12] ծնար զմիածին Որդին, որ յառաջ քան[13] զքեզ և զամենայնս՝[14] որ երեւին։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, էական Բանին[15] մայր, և կենդանութեան ծնօղ, և առագաստ անլուծանելի անմահ փեսային Քրիստոսի[16]։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, Քրիստոսի բնակարան, անաղտ և անարատ, յամենայն նիւթականացս սրբեալ[17] և բարեօք հրով փորձեալ։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, լուսոյ մայր՝ որ լուսաւոր առնէ զամենայն մարդ եկեալ յաշխարհս՝ լուսաւորելով[18] զխաւարեալս։ Ո՛վ ամենասուրբ Կոյս, կենդանականին Քրիստոսի աղբիւր, արբուցանելով զաստուածասիրաց անձինս հոգեւոր ջրոյն խաղացելոյ[19] ի սիրտս։ Ո՛վ

1. Ե. օր. մայր։
2. Դ. օր. անտանելի։
3. Բ. օր. կարէին։
4. Բ. օր. նուաղեցաւ մեծութեան։
5. Բ. օր. յորովայնի։
6. Գ, Դ և Ե. օր. սերովբէից։
7. Բ. օր. չունի յուրախութիւն։
8. Գ և Դ. օր. չունին՝ աւետաւոր, Ե. օր. աւետեաց։ Բ և Գ. օր. առ քեզ։
9. Դ և Ե. օր. Հոգին սուրբ։
10. Բ. օր. չունի զհաստատեցեալս ի Տէր։
11. Դ և Ե. օր. Աստուած։
12. Ե. օր. զանճառելին ծնեալ։
13. Գ. օր. քան զյաւիտեանս՝ որ։
14. Բ. օր. քան զամենայն յաւիտեանս, Ե. օր. զամենայնքըս յաւիտեան հաստատեցան։
15. Գ. օր. Աստուծոյ։
16. Բ և Ե. օր. Տեառն, Դ. օր. չունի Քրիստոսի։
17. Բ. օր. ընտրեալ և յամենայնի բարեաց։
18. Դ և Ե. օր. և լուծանելով զխաւար մեղաց։
19. Գ. օր. չունի խաղացելոյ ի սիրտս (Դ. օր. ջրանն)։

Digitized by Google

ամենասուրբ Կոյս, արեւելք արեգական արդարութեան՝ որ ծագեաց յերկիր և ելոյծ զխաւար մարդկայնոց[1] մեղաց։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, աշտանակ ոսկի եւթն-արփի[2] շնորհաց Հոգւոյն սրբոյ ընդունարան, որ հո-գիացուցանէ զանձինս[3] սրբոց՝ Աստուծոյ։ Ո՜վ ամե-նասուրբ Կոյս, որ ծնար[4] զՏէր տիեզերաց և զԹա-գաւորն Թագաւորաց, և զբանշխողն պարգեւաց և զփրկիչն Քրիստոս։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, դուռն իմա-նալի դրախտին և արքայութեանն երկնից, նեղ ճանա-պարհաւն յընդարձակ[5] տանելով ի կեանսն[6]։ Ո՜վ ա-մենասուրբ Կոյս, պարծանք կուսից և ուրախութիւն ողջախոհաց, և որք սրբութեամբ նահատակին ընդդէմ չարին։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, կանանց ազգի փառք, որ զնախամօրն զանցանսն բարձեր[7] քո տատուա-ծային[8] ծննդեամբ Քրիստոսի։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, լուծիչ անիծից, և արդարացուցիչ մեղուցելոյ[9] ազգի մարդկան՝ ի ձեռն ողորմութեան Որդւոյ քո[10]։ Ո՜վ ամե-նասուրբ Կոյս, մայր փրկութեան և ազատեցուցիչ[11] ի ծառայութենէ ապականութեանց[12] յազատութիւն փա-ռաց Յիսուսի Քրիստոսի. Ո՜վ[13] ամենասուրբ Կոյս, վերագոյն քան զերկինս և բարձրագոյն քան զամե-նայն զինուորութիւնս երկնաւոր[14] զօրութեանցն։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ վերագոյն քան զամենայն ա-

1. Գ. օր. մարդկային։
2. Բ, Դ և Ե. օր. եւթնաճրա-գեան։
3. Բ. օր. ընկալեալ հաստատ-ցելոյ, Դ. օր. մարդկան, Ե. օր. չունի։
4. Դ. օր. Տեառն, Ե. օր. փո-խանակ ծնօղի յետոյ ուրեմն յաւելու՝ է գեղ նկարէր։
5. Բ և Դ. օր. յընդարձակն տանէ։
6. Գ. օր. յաւելու յաւիտենից։
7. Գ և Ե. օր. լուծէր։
8. Ե. օր. չունի Աստուածա-ծին։
9. Գ. օր. մեղուցելոյ։
10. Դ. օր. յաւելու Յիսուսի Քրիստոսի։
11. Բ, Գ, Դ և Ե. օր. ազատիչ։
12. Բ և Գ. օր. ապականութեան։
13. Գ. օր. չունի զայս տունս։
14. Բ և Ե. օր. երկնաւոր զօրացն Տեառն, Դ. օր. երկնային զօրութեանն։

բազմած՝ զանհրաւոյթան[1] և զերեւելիսս, երեւեցար[2] յաշխարհի։ Ո՜վ ամենասուրբ Կոյս Աստուածածին[3], որ ի քէն մարմնացաւ Աստուած[4] Բանն, որ յանմահից զօրացն երկրպագութիւն[5] առնու այժմ և հանապազ։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, ամենասուրբ Երրորդութեանն հարսն, որ եղեր տաճար և խորան[6] և բնակարան Աստուծոյ[7]։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ հանդերձեալ ես ելանել[8] յաշխարհէ աստի, և երթալ առ այն աշխարհն՝ որ ոչ մեզ[9] տեսանելի է և ոչ իմանալի[10]։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ ի հրեղէն կառսն հանգչի Որդիդ քո և Աստուած մեր՝[11] վերափոխէ զքեզ յերկրայնոց[12] յերկինս[13]։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ ի քո բարեխօսութիւնդ ապաւինեալ աղաչեմք զՄիածին Որդի քո, զի ողորմեսցի ազգի մարդկան։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ փոխագրիս յանանց կեանսն, յանմահութեան վիճակն, լեր միշտ բարեխօս մեղուցելոցս[14]։ Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ երթաս զբարիոք[15] ճանապարհն, մի՛ անտես առներ զյուսացեալս[16] ի քո բարեխօսու-

1. Բ. օր. յաւելու քան։
2. Բ և Դ. օր. բնաւորեցար (Դ. օր. երևեցար) որպէս յայտ ցուցանէ, Ե. օր. երևեցար պայծառապէս։
3. Բ և Դ. օր. չունին Աստուածածին։
4. Այլք չունին՝ Աստուած։
5. Ե. օր. երկրպագէս և փառաբանութիւն առնուս։
6. Բ և Դ. օր. չունին խորան։
7. Բ, Դ և Ե. օր. յաւելուն Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ երանեցար ի բոլորեց (Դ. բոլոր) արարածոց. ոչ միայն ազգք մարդկան, այլ և բանակք հրեղինաց (Դ. օր. հրեշտակաց) երանեն զքեզ (Ե. օր. չունի զքեզ։
8. Բ և Ե. օր. թողուլ զաշխարհս և։
9. Ե. օր. այժմ։
10. Այլ օր. իմանի։
11. Դ. օր. յաւելու. այսօր։
12. Ե. օր. յերկրաւորաց։
13. Բ և Դ. օր. յերկնայինս։
14. Ե. օր. յաւելու՝ Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ բացեր զդրունս արքայութեան, ընդ որ մտանեն համարձակ, մի՛ փակեսցէ առ զքեզ ողջոյն հասանողս։
15. Բ. օր. զանտես։
16. Բ. օր. զապաւինեալս։

թիւնդ առ[1] փրկիչն մեր Քրիստոս[2]: Ո՜վ ամենասուրբ Կոյս, որ փութաս ելանել ի մարմնոյ[3] և մտանել առ Աստուած, միշտ բարեխօս լեր հաւատացելոցս որք զքեզ մեծացուցանեմք[4]: Ո՜վ ամենասուրբ Կոյս, որք[5] ընդ հրեշտակին զՈւրախ լեր բերկրեալն՝ աւետաւոր ձայնիւ քեզ[6] երանեն, և զամենասուրբ Երրորդութիւնն[7] օրհնեն և փառաւորեն՝ սաղմոսիւք և օրհնութեամբ և երգօք հոգևորօք, մի՛ անտես եղիցին[8] ի փրկութենէ[9] անձանց՝ ի ձեռն քո բարեխօսութեանդ. զի ոչ զայլ ոք ունին միջնորդ և օգնական և բարեխօս՝ բայց զքեզ, տօնելով զյիշատակ ննջման և փոխման քո, որպէս կարգաւորի ի մէջ եկեղեցւոյ Քրիստոսի: Եւ[10] հոգևոր վայելչութեամբ այլայլմէ երեւմանց՝ ի ձայն օրհնութեան[11] փառաւոր[12] առնիցեն[13] զանփոփոխելի տէրութիւնն, այժմ և հանապազ: Նա և զմեզ ոչ անտես արասցես ի քո[14] բարեխօսութենէդ, Սրբուհի անարատ մայր Տեառն. որպէս զի մեզ տացի բան իմաստութեան[15], սնոտի իմաստութեանցն յաղթել, բոլորովին զտիեզերս ամենայն՝ աւետարանին ուռկանաւն ժողովեսցուք ի միաբանութիւն փառաց ամենասուրբ անուանն[16]. որպէս զի ամենեցուն հովուաց և հօտից յօժարել[17] ի հաւատս, ի յոյս, ի սէր,

1. Գ. օր. առ որդիդ քո և Աստուած մեր:
2. Ե. օր. չունի Քրիստոս:
3. Բ և Ե. օր. յերկրէ:
4. Գ, Դ և Ե. օր. մեծացուցանեն:
5. Գ, Դ և Ե. օր. որ ընդ հրեշտակօքն, Բ. օր. որ զհրեշտակօքն:
6. Բ և Ե. օր. զքեզ:
7. Ե. օր. երրորդութեան:
8. Ե. օր. առնէր:
9. Բ. օր. ի փրկութեան:
10. Դ. օր. այլայլմէ ի ձայն օրհնութեան հոգևոր վայելչութեան:
11. Բ, Գ, Դ և Ե. օր. յաւելուն ի մի բերան:
12. Ե. օր. փառաւորեսցեն,
13. Բ. օր. յաւելու՝ զԱստուած:
14. Բ. օր. չունի քո, Ե. օր. յաւելու մեր:
15. Այլք յաւելուն՝ և գիտութեամբ:
16. Բ. օր. Երրորդութեանն, Դ. օր. անուան նորա որդւոյ, Ե. օր. անուան նորա:
17. Բ. օր. յօժարեալս, Ե. օր. յօժարեալք:

Digitized by Google

ի սրբութիւն, ի ձեռն քո բարեխօսութեանդ՝ հաստատեսցուք ի մարդասիրութեան շնորհս[1] Տեառն. լքանելով[2] զերկիր[3] ի դէպ ժամանակի, և վերաբերեալք յերկրէս[4], երկնայնոցն[5] և անմահիցն լիցուք[6] ժառանգորդք, ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն:

Եւ զայս ասացեալ երանելոյն[7] Պետրոսի, կային[8] յաղօթս և առնուին կերակուր ուրախութեան. օրհնէին զԱստուած և գոհանային[9], և մխիթարեցան ոչ սակաւ ամենեքեան[10] բանիւք բազմօք գոհութեամբ Սրբուհւոյն: Եւ այլ առաքեալքն օրհնէին զԱստուած և մեծացուցանէին զԱստուածածինն[11]: Եւ յարուցեալ[12] Մարիամ առանձին լինելով՝ լուաց զինքն և զգեցաւ հանդերձս նորս, և զհինն ետ կուսանացն որք ընդ նմայն էին: Եւ դարձեալ սկսեալ ի պաշտօն աղօթիցն, և մատն մի ի տուընջեան, և զգիշերն ողջոյն[13] հանէին ի գլուխ յաղօթսն Աստուծոյ. և ընդ[14] առաւօտն յորժամ ասացին զամէնն, աւանդեաց զհոգին ամենասուրբ Կոյսն[15] Աստուածածին, ի փառս ամենասուրբ Երրորդութեանն: Եւ տունն լի եղեւ լուսով[16], և ահ կալաւ զամենեսեան: Եւ բարձին զմարմին Սրբուհւոյն[17] զի տարցեն ի գերեզմանն՝ զոր իւր իսկ ցուցեալ էր և

1. Բ, Դ և Ե. օր. շնորհաց:
2. Ե. օր. լուծանելով:
3. Գ. օր. զաւարէս:
4. Գ. օր. յերկրայնոցս:
5. Բ և Դ. օր. յերկնայինս:
6. Բ. օր. լինել ժառանգակիցք:
7. Բ. օր. Երանելի առաքելոյն, Դ. օր. սուրբ առաքելոյն, Ե. օր. առաքելոյն:
8. Դ. օր. կային:
9. Ե. օր. յաւելու՝ զՏեառնն:
10. Բ, Դ և Ե. օր. յաւելուն այլովք; Ե. օր. չունի բանիւք:
11. Գ. օր. զամենասուրբ Կոյսն:
12. Գ. օր. յարուցեալ Մարիամ փառաձեւաց զՅիսուս էր, և եկաց յաղօթս մեծաւ խոնարհութեամբ, և ապա զգեցաւ նոր հանդերձս:
13. Բ, Դ և Ե. օր. ամենայն:
14. Այլք յաւելուն՝ այն:
15. Բ, Դ և Ե. օր յաւելուն Մարիամ:
16. Դ. օր. յաւելու բազմաց հոտ անուշութեան:
17. Դ և Ե. օր. յաւելուն. Աստուածածնին:

արարեալ։ Յայնժամ ամբոխ յուզեալ[1] ի Հրէիցն և հասեալ ի վերայ, կամէին յափշտակել զմարմին ամենասուրբ Կուսին[2], և անկաւ ի վերայ նոցա ահաւորութիւն և խաւարեցոյց զնոսա։ Բայց[3] մի ոմն ի Հրէից անտի, ընթացաւ[4] բուռն եհար զշանդերձիցն[5], և զաղաղակ եբարձ[6], թէ ահաւասիկ զո՞ր խնդրէին։ Եւ իսկոյն[7] վաղվաղակի հատան ձեռք նորա ի կրկնուածս[8] արմկանն[9], և ինքն յերկիր կործանեցաւ. լայր և ողբայր զթշուառացեալ անձնն[10], եղո՜ւկ զինքն ասելով։ Եւ ասէր. Ողորմեցարուք[11], ողորմեցարուք ինձ, ո՜վ սուրբք[12] առաքեալք Քրիստոսի, վկայք ճշմարտութեանն. և մարդասիրութիւն ցուցէք առ իմ յանդըգնութիւնս[13]։ Ասէ Պետրոս. Հաւատա՞ս ի Քրիստոս յորդին Աստուծոյ թէ[14] Աստուած է, և յամենասուրբ կոյսն Մարիամ[15] մայր նորա[16]. և լինի քեզ բըժշկութիւն։ Եւ ասէ. Հաւատամ թէ Աստուած[17] է Քրիստոս որդին Աստուծոյ, և Մարիամ մայր Քրիստոսի և Աստուածածին։ Եւ անդրէն յարեցան ձեռք նորա ի մարմին իւր, և եղեն[18] ողջ իբրեւ զառաջինն իսկ[19], և երթայր ընդ նոսա ի գերեզմանն և օրհնէր զԱստուած ի վերայ[20] սքանչելեացն[21]։ Եւ աղօթս ա-

1. Բ. օր. յուզեր, Դ. օր. յուզեր։
2. Ե. օր. յաւելու Աստուածածին։
3. Գ. օր. իսկ։
4. Դ. օր. ձգեցեալ և։
5. Ե. օր. զդագաղաց։
6. Այլ՝ բարձեալ։
7. Բ, Դ և Ե. օր. անդէն։
8. Ե. օր. չունի կրկնուածս, Դ. օր. յարմկանէ կրկնուածոյ։
9. Բ, Դ և Ե. օր. արմկացն։
10. Դ. օր. յաւելու իւր։
11. Դ. օր. չունի ողորմեցարուք։
12. Բ, Դ և Ե. օր. չունին սուրբ։
13. Բ, Դ և Ե. օր. յաւելուն և ողորմեցարուք ինձ։
14. Ե. օր. չունի թէ Աստուած է։
15. Բ. օր. չունի Մարիամ։
16. Գ և Ե. օր. նորա. իսկ Դ և Ե. օր. յաւելուն Աստուածածին և կոյս։
17. Բ, Դ և Ե. օր. Յիսուս Քրիստոս է որդի Աստուծոյ։
18. Բ, Գ և Դ. օր. եղև։
19. Գ, Դ և Ե. օր. չունին իսկ։
20. Ե. օր. յաւելու անդաստան։
21. Ե. օր. յաւելու Աստուծոյ, Գ. օր. ոչ եղև։

բարեաւ որբոցն[1] առաքելոցն և ամենայն հաւատացեալքն ընդ նոսա, եդին զմարմին Սրբուհոյն ի գերեզմանի[2], ուր չէր զոք բնաւ եդեալ։ Եւ լոյսն՝ որ ի տանն[3]՝ ծագեցաւ[4] ի վերայ նորա ի ճանապարհին, և ի գերեզմանին հաստատեալ կայր. առաւել քան զճառագայթս արեգականն[5], և ոչ նուաղէր[6] զերիս աւուրս։ Եւ ամենեքեան յաղօթս յորդորեալք ի վերայ գերեզմանին։

Եւ զկնի[7] երից աւուրց, ի չորրորդումն[8] իջին հրեշտակք ի գերեզման ամենասուրբ Կուսին, և Տէր[9] ամպով ի վերայ գերեզմանին. և ի վեր[10] ամբարձին յամպն հրեշտակք[11] զմարմինն։ Եւ ձայնք օրհնութեանց հոգեւոր երգով քաղցրաձայնութեանց[12] լսելի լինէին ի փառաբանութիւն Աստուծոյ։

Ցափշտակեցաւ ամենասուրբ մարմինն ամպովք յերկինս[13], եթէ հոգւով[14] միաւորեալ իցէ ընդ մարմինն և եթէ ոչ, ես ոչ գիտեմ, Աստուած գիտէ. զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ և ի սիրտ մարդոյ ոչ անկաւ, զոր[15] ինչ պատրաստեաց Աստուած[16] կուսին[17] Մարիամու։ Եւ մեզ լռութեամբ պատուեսցի անհասութեամբ[18] ի գովութիւն և ի փառս Կուսին։ Այսպէս ի Քրիստոս

1. Ե. օր. չունի որբոցն։
2. Բ. օր. չունի ի գերեզմանի։
3. Բ և Ե. օր. ի տանն էր։
4. Գ և Ե. օր. ծագեաց, Բ. օր. ծագեցաւ ի ճանապարհին, և իբրև եկին ի գերեզմանն՝ հաստատեցաւ լոյսն ի վերայ գերեզմանին առաւել։
5. Գ. օր. յաւելու փայլեալ։
6. Ե. օր. և նուաղեալ։
7. Այլք՝ յետ։
8. Բ և Ե. օր. յաւելուն առաւօտուն։
9. Ե. օր. չունի և Տէր։
10. Բ և Ե. օր. չունին ի վեր։
11. Գ. օր. յաւելու յերկինս։
12. Բ և Դ. օր. քաղցրաձայնութեան։
13. Բ, Դ և Ե. օր. ի դրախտն։
14. Բ և Դ. օր. հոգին, Ե. օր. հոգւովն։
15. Բ. չունի զոր ինչ, Գ, Դ և Ե. օր. չունի ինչ։
16. Գ. յաւելու որդւոյ, Բ. օր. [illegible]։
17. Դ և Ե. օր. Աստուածամօրն (Դ. օր. ամենասուրբ) կուսին։
18. Ե. օր. անհասանելեան իմն գովութեամբ ի փառս։

Digitized by Google

յանպատմելի կեանսն ամբարձաւ[1] մարմին ամենասուրբ Կուսին, որ ծնաւ աշխարհի զփրկիչն Քրիստոս. մերձ յանմերձանալի կեանսն[2]: Այսպէս նննջեաց[3] զհասարակաց ննջումն[4], և վերափոխեցաւ[5] յանանց կեանսն: Ոչ ըստ այլոց ումանց[6] զայս ինչ կամ զայն բարբառեալ[7] զպատմութիւնս:

Եւ յետ այսորիկ ժողովք[8] առաքելոցն և որք ընդ նոսա հաւատացեալքն՝ աղօթս արարեալ մկրտէին[9] զայրն[10] բժշկեալ: Եւ առ հասարակ[11] լոյսն և ամենայն սոսկալի[12] սքանչելիքն՝ որ[13] երեւեցան վասն ամենասուրբ Կուսին՝ սպառեցան ի[14] փառս և ի գովութիւն ամենասուրբ[15] Երրորդութեանն: Եւ ասեն ժողովք առաքելոցն ցՊետրոս. Խօսեա ընդ[16] ժողովուրդըն բանս յորդորականս մխիթարութեան[17], և գնասցուք յիւրաքանչիւր վիճակս: Եւ Պետրոս բռնադատեաց[18] զՊաւղոս խօսել: Եւ ասէ Պաւղոս. Այժմ, ո՛վ եղբարք իմ, ի մէնջ փոխադրեալ[19] եղեւ մայրն Կոյսն յանմատանելի[20] և յանմատոյց[21] կեանսն, և պարտ է

1. Բ, Գ, Դ և Ե. օր. ամբարձեալ (Գ. օր. ամբարձեալ) ամենասուրբ կուսին Աստուածածնին:
2. Դ և Ե. օր. ըստ ընթեռնլ. Բ. օր. չունի մերձ յանմերձենալի կեանսն:
3. Գ. օր. յաւելու. սուրբ կոյսն:
4. Այլք՝ մահն:
5. Գ. օր. փոխեցաւ:
6. Ե. օր. ոմանց:
7. Ե. բարբառելոյ, Բ, Գ և Դ. օր. բարբառել:
8. Ե. օր. ժողովեալ:
9. Գ, Դ և Ե. օր. մկրտեցին:
10. Դ. օր. յաւելու զայրն հրեայ:
11. Յօր. հասարակ:
12. Բ և Գ. օր. չունին ողոքանքն:
13. ժ' Գ. օր. առ մի պակասէ:
14. ժ' Բ. օր. առ մի պակասէ:
15. Գ, Դ և Ե. օր. Տեառն Աստուածոյ:
16. Բ և Գ. օր. առ:
17. Ե. օր. մխիթարութեանս:
18. Ե. օր. արձակեաց:
19. Բ, Դ և Ե. օր. փոխադրեցաւ ամենասուրբ, Գ. օր. փոխեցաւ:
20. Բ, Գ և Դ. օր. յանպատմելի: Ե. օր. չունի, Գ. օր. յաւելու յանպատմելի:
21. Բ, Գ և Ե. օր. յանանց, Դ. օր. յանհասանելի:

մեզ զտօն Վերափոխման նորա առնել[1] սաղմոսիւք և օրհնութեամբ, զի լիցի[2] մեզ բարեխօս և ամենայն հաւատացելոց. և ի տեղւոջ հանգստեան Սրբուհոյն[3] նորոգել եկեղեցի և կոչել[4] Աստուածածին. որպէս զի անունն[5] երեւեցուսցէ զխորհրդոյն զօրութիւնն: Նաեւ նախանձաւոր լինել մաքրութեան և կուսութեան[6], և յահ և յերկիւղ Տեառն կուսութեամբ յղանալ[7] զարդարութիւն, և պնդեւոր[8] փրկութիւն կատարելապէս ծնանել, և Քրիստոսի լինել մայր և քոյր և եղբայր. որպէս և ասաց[9]. Ո՞վ է իմաստուն և հանճարեղ իմացի[10] զայս. զի ճշմարիտ կուսութիւն, ազգակցութիւն ունի առ ամենասուրբ Կոյսն: Ո՞վ որոշեսցէ ըզլաւն ի վատթարէն, և կուսութեամբ նահատակեսցի և զաշխարհս ատիցէ[11] և զերկրաւոր[12] բերկրանս, և զկենցաղոյս ունայնութիւնս, որ այսօր են[13] և վաղիւն կորնչին[14] և ապականին: Ո՞վ որ[15] զլոյս[16] կուսութեան ի խաւարէ ախտիցն սրբեսցէ՝ հոգւով և մարմնով անաղտ և անարատ, որպէս յայտ առնէ[17] նորին իսկ սրբեցելոյ Կուսին[18]:

Ո՞վ զկուսութեան զփառս և զպարծանս՝ որպէս և են[19], ազատեսցէ ի շաղախմանց, միշտ զՔրիստոս յին-

1. Բ, Դ և Ե. օր. տեսնել, Գ. օր. կատարել:
2. Գ. օր. եղիցի, Բ, Դ և Ե. օր. յաւելուն՝ միշտ:
3. Գ. օր. Ս. Աստուածածնին մօր Տեառն:
4. Բ. օր. անուանել, Գ, Դ և Ե. օր. յաւելուն սուրբ:
5. Բ և Դ. օր. յաւելուն նոյն:
6. Բ. օր. չունի կուսութեան:
7. Ե. օր. ստանալ:
8. Բ և Գ. օր. հոգւոյն, Դ և Ե. օր. հոգւոյ:
9. Դ. օր. յաւելու նոյն:
10. Գ. օր. ոչ իմացի:
11. Բ, Գ և Դ. ատեսցէ:
12. Բ, Դ և Ե. օր. զերկրաւորաց բերմանս:
13. Գ, Դ և Ե. օր. է:
14. Գ և Գ. օր. կորնչի և ապականի, Բ և Ե. օր. կորնչին ի բաց:
15. Բ, Դ և Ե. օր. չունի որ:
16. Ե. օր. զայս կուսութեան ի խառնակութենէ:
17. Գ. օր. առնել:
18. Բ, Դ և Ե. օր. յաւելուն Քրիստոսի:
19. Բ, Դ և Ե. օր. յաւելուն որքան են:

քեան ունելով որ Տէրն է փառաց։ Ո՜վ որ[1] զվերինն խորհել[2] միշտ կուսից[3], ուր Քրիստոս նստի, և ոչ ի վայր քարշեալ խոտորեալ[4], որ ի ստորին[5] բերմունսն են։ Ո՜վ անցնդելի կուսութեանն պատիւ, որ միշտ սրբեալ[6] և ուրոնպատիկ[7] քան զամենայն պայծառութիւնս՝ որ ամենեցունց ցուցանի[8]։ Ո՜վ կուսից[9] հովւոր[10] պատերազմաց ընդդէմ չարին[11], և զյաղթութեան պսակն ի գլուխ կապիցեն պայծառապէս[12]։ Ո՜վ կուսութիւն[13] ընդ Աստուծոյ միաւորեալ[14], և ընդ ամենասուրբ Կուսին բնակութիւն[15] ի խորանսն յաւիտե-

1. Բ և Ե. օր. չունի որ։
2. Դ. օր. խորհելով, Գ. օր. խորհի։
3. Բ, Գ և Ե. օր. կուսէ։
4. Դ. օր. խորտակեալ, Ե. օր. խախտեալ։
5. Բն. և Գ. օր. ստորին բերմանն, Դ. օր. որ ստորին բերմանցն։
6. Բ, Գ և Ե. օր. պարզեալ, Դ. օր. մաքրեալ։
7. Դ. օր. յաւելու առաւել։
8. Բ, Դ և Ե. օր. յաւելուն. Ո՜վ այնքան կատարելութեան մեծի շնորհի, (Դ. օր. մեծութեան կատարէ շնորհ յերկրէ) ու ևս յերկրէ եղելոյն անարատ կուսաւ և կրծնեալ (Դ. օր. օրհնեալ և կուսաւ), այլ մեր ընդ անմարմնոյն մատուցեալս է Քրիստոս. (Դ. օր. մատուցեալ է՝ Քրիստոս Յիսուս)։
9. Բ, Դ և Ե. օր. կուսանաց։
10. Դ. օր. հոգևորական։
11. Բ, Գ և Դ. օր. յաղթող երևեալ, իսկ Ե. օր. յաղթող լինելով երևեալս։
12. Ե. օր. պայծառ պայծառապետս, Բ. օր. ծառայապետս։ Ապա Բ, Դ և Ե. օր. յաւելուն. Ով ստանալի անմահն կառոյց, կամ երևելոյն (Բ. օր. կատարելոյն) առեալ որ յաղթեն արդարութեան ծնունդ է տան Տեառն (Ե. օր. Աստուծոյ) է փառքն Աստուծոյ մերոյ ծագեալս սուրբս և փառքս։ Ո՜վ կուսից, որ յաղթեցին մեր բերելով. որ լինի կրկնութեամբ և խորհել մեր զբարին և զհանճարն և զկատարելոյն։ Ո՜վ կուսից, մեր զՏէրն խորհելով զի սուրբ հոգով և մարմնով մեծեալ յանձին երաց լուսոյ՝ որք աղաւնեալք են անարատութեան կուսաց։
13. Ե. օր. կուսութեամբ։
14. Դ և Ե. օր. միաւորութեան։
15. Դ. օր. բնակութեան, Բ. օր. միաւորութեան է կեանս յաւիտենից, Գ. օր. յաւելու ընկալեալ։

Digitized by Google

նից [1], զոր ի ձեռն սրբութեան[2] ժողովէ առ ինքն ըզ-
գասս կուսանաց, զորս բարի[3] Հայրն ուրախ առնէ ի սէր
փեսային յանապառ և յանվախճան ուրախութիւնն[4]:

Արդ, ով եղբարք իմ սիրեցեալք ի Տեառնէ և մեծութեան նորա քարոզք և սպասաւորք. զիւրաքանչիւր[5] տաղանդ ի գործ արկցուք և շահեցուք զժողովուրդս, այլ յայլմէ ժողովելոցս[6] ի միաբանութիւն[7]. որում ամենայն ծունր կրկնեսցի[8], այլովքն հանդերձ: Եւ զնոյն ինքն զամենասուրբ Կոյսն Աստուածածին Մարիամ[9] բարեխօս ունել մեւ Քրիստոս, զի[10] ուղղեսցէ զգործս[11] մեր ի ճանապարհս խաղաղութեան, և զհաւատացելոց անձինս փրկեսցէ յաշխարհէ[12]: Որպէս զի ամենեցունց հովուաց և հօտից ար-

1. Դ. օր. յաւիտենականն:
2. Գ և Դ. օր. յաւելուն մաքրութեան, Բ. օր. սուրբ կուսութեանն մաքրութեամբ, Ե. օր. սրբազնոյն սրբութեամբ:
3. Դ. օր. բոլորից:
4. Բ, Դ և Ե. օր. յաւելուն, և զվարդապետել բարերացն վայելս (Ե. օր. վայելչութեանս) դոյ, որպէս և այժմ փառք են հասանեն լուսոյ ստանձնելեացն դեսպ (Ե. օր. դեսպանաց) յառաջ ննջման Աստուածածնին, որքան էջն կարելոյս ի մարմնի իբրև հայելիւ (Ե. օր. իբր հոգևով հայելով) և տեսական (Դ. օր. երկնական) դէմ առ դէմ, այլ յայնժամ դէմ յանդիման: Արդ նմանեսցուք (Բ. օր. զօրացարուք) համբերով և յառաջ ի գործս արդարութեան (Ե. օր. բարութեան) և սրբութեան (Դ. օր. ի սըրբութեան) և մի ևս խորհըրդով ի կորիզուք:
5. Բ, Դ և Ե. յաւելուն հաւատացեալ:
6. Բ, Դ և Ե. օր. յաւելուն երևմանց:
7. Գ. օր. յաւելու հաւատոյ, Բ, Դ և Ե. օր. յաւելուն. փառաց ամենազօր տէրութեան (Բ. օր. ամենասուրբ Երրորդութեան):
8. Բ, Դ և Ե. օր. յաւելուն. երկնից երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց, և ամենայն լեզու խոստովան լիցի թէ Տէր Յիսուս Քրիստոս ի փառս Աստուծոյ Հօր և Հոգւոյն սրբոյ:
9. Բ, Դ և Ե. օր. չունին Մարիամ:
10. Դ և Ե. օր. յաւելուն յաջողեսցէ:
11. Բ. օր. գնացս:
12. Բ, Դ և Ե. օր. յաւելուն ապա ի չարէն, զօրութեամբ և շնորհօք:

Digitized by Google

ժամանաւոր լինել երանութեանցն[1] որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր, որում փառք յաւիտեանս. ամէն։ Եւ[2] զայս ասացեալ, ինքեանք սփռեցան յիւրաքանչիւր վիճակս, ի Հոգւոյն սրբոյ առաջնորդեալք. կամաւ Հօր ամենակալի և Որդւոյն միածնի, որում փառք յաւիտեանս. ամէն։

1. Ն. օր. արքայութեան երկնից։
2. Բ. օր. և ասացեալ զօրհնութիւն՝ օրհնեցին զԱստուած և սփռեցան. աստ աւարտին Դ և Ե. օր. իսկ Բ և Գ. օր. չունին։

# ԳԼԽԱԿԱՐԳՈՒԹԻՒՆՔ ՄԱՏԵՆԻՍ

## Ա

## ԳԻՐՔ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ


ԳԼՈՒԽ Ա. — Վասն սրբոյ կուսին Մարիամու՝ որ եղեւ ի տան հօր իւրում. զոր ասացեալ է սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն . . . . . . . 1

ԳԼՈՒԽ Բ. — Վասն սրբոյ կուսին Մարիամու ծննդեան, որ եղեւ ի տան հօր իւրում . . . . . 3

ԳԼՈՒԽ Գ. — Վասն սրբոյ կուսին Մարիամու սննդեանն, որ եղեւ ի տաճարն սրբութեան, զամս երկոտասան . 6

ԳԼՈՒԽ Դ. — Վասն սրբոյ կուսին Մարիամու՝ տալ զնա Յովսեփայ ի կնութիւն՝ ըստ օրինի աւանդութեանց իւրեանց, պահել զկոյսն սուրբ զգուշութեամբ, և յանձնելոյ զնա հաւատով ի Տէր. ամէն . . . 9

ԳԼՈՒԽ Ե. — Վասն աւետաւոր հրեշտակի ձայնին, որ քարոզեաց զյղութիւն սրբոյ կուսին Մարիամու. . 14

ԳԼՈՒԽ Զ. — Վասն տրտմութեան Յովսեփայ, և զրպարտելոյ զկոյսն սուրբ անմեղութեամբ և դատապարտելոյ զնա . . . . . . . . . 24

ԳԼՈՒԽ Է. — Վասն Մարիամու յանդիմանելոյ զկուսութիւնն սուրբ, և պարկեշտութիւնն Յովսեփայ, և տալ նոցա երկոցունց զջուրն փորձութեան . . . 30

ԳԼՈՒԽ Ը. — Վասն ծննդեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յայրին . . . . . . . 33

ԳԼՈՒԽ Թ. — Վասն Նախամօրն Եւայի և Յովսեփայ փութով հասանել նոցա, և տեսանել զծնունդ ամենագովեալ սուրբ կուսին Մարիամու . . . . 39

ԳԼՈՒԽ Ժ. — Վասն հովուացն՝ որ տեսին զծնունդ Տեառն մերոյ . . . . . . . . . 41


Digitized by Google

ԳԼՈՒԽ ԺԱ. — Վասն գալստեան մոգուցն ընծայիւք յերկրպագութիւն նորածին մանկանն Յիսուսի . . 42
ԳԼՈՒԽ ԺԲ. — Վասն քառասնօրեայ գնալոյն ի տաճարն բազում ընծայիւք . . . . . . . 53
ԳԼՈՒԽ ԺԳ. — Վասն Հերովդէի և կոտորելոյ նորին ըզմանկունս ի Բեթղեհէմ և խաբելոյ ի մոգուցն. . 55
ԳԼՈՒԽ ԺԴ. — Վասն սպանման Հերովդի զԶաքարիա քահանայապետն ի տաճարին . . . . 57
ԳԼՈՒԽ ԺԵ. — Վասն հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ՝ գնալ նոցա փախստական ի ձեռաց՝ չար Հերովդէի երկիրն յԵգիպտոս . . . . . . . 60
ԳԼՈՒԽ ԺԶ. — Վասն գնալոյ յերկիրն Իսրայելի և բնակելոյ յաշխարհն Գալիլեացւոց ի Նազարէթ . . 70
ԳԼՈՒԽ ԺԷ. — Վասն փոխելոյ անտի և գնալոյ յերկիրն Ասորոց . . . . . . . . 76
ԳԼՈՒԽ ԺԸ. — Վասն երթալոյ նոցա յերկիրն Քանանու, և տղայութիւնն զոր առնէր Յիսուս. . . . 82
ԳԼՈՒԽ ԺԹ. — Վասն երթալոյ նոցա յերկիրն Իսրայելի և տալոյ յուսումն դպրութեան. . . . . 84
ԳԼՈՒԽ Ի. — Վասն տալոյ զՅիսուս Գամաղիելի յուսումն գրոց . . . . . . . . . 86
ԳԼՈՒԽ ԻԱ. — Վասն գնալոյ ի քաղաքն Տապարիա, և տալոյ զՅիսուս յարուեստ ներկարարութեան . . 91
ԳԼՈՒԽ ԻԲ. — Վասն գնալոյ նորա յԱրեմաթեայ քաղաք, զտղայութիւնն զոր առնէր Յիսուս մահու և յարութեան . . . . . . . . 100
ԳԼՈՒԽ ԻԳ. — Վասն գնալոյ նոցա յարտեւան լերին. տղայութիւն զոր առնէր Յիսուս . . . . 106
ԳԼՈՒԽ ԻԴ. — Վասն գնալոյ նոցա ի գիւղն յԵմաւուս, և բժշկէր զհիւանդս, և զսքանչելիսն զոր առնէր Յիսուս. 108
ԳԼՈՒԽ ԻԵ. — Վասն հրեշտակին ազդ առնելոյ Յովսեփայ գնալ ի քաղաքն Նազարէթ . . . . 112
ԳԼՈՒԽ ԻԶ. — Վասն բազում բժշկութեանց՝ զոր կատարեաց Յիսուս ի քաղաքն և ի գիւղն և այլ տեղիս, զոր առնէր բժշկութիւն Յիսուս . . . . 115
ԳԼՈՒԽ ԻԷ. — Վասն մարգարէիցն աւանդութեան ըզգրեալսն կատարելոյ, և օրինացն՝ զոր առնէր Յիսուս . 117
ԳԼՈՒԽ ԻԸ. — Վասն դատաւորութեան զոր առնէր ի մէջ

Digitized by Google

երկու զինուորաց . . . . . . . . 122

## ԳԻՐՔ ՏՂԱՑՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

### Բ. ՕՐԻՆԱԿ


ԳԼՈՒԽ ԺԱ. . . . . . . . . . 127

ԳԼՈՒԽ ԺԲ. — Վասն տանելոյ զնա ի տաճարն ի քաղաքն Երուսաղէմ ի թլփատել. . . . . . . 129

ԳԼՈՒԽ ԺԳ. — Վասն չարութեան Հերովդէի և կոտորելոյ զմանկունսն ի Բեթղեհէմ . . . . . 131

ԳԼՈՒԽ ԺԴ. — Վասն դարձեալ չարութեան Հերովդեայ սպանանել զԶաքարիա վասն Յովհաննու որդւոյ նորա . 133

ԳԼՈՒԽ ԺԵ. — Վասն հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ փախչել յԵգիպտոս . . . . . . 136

ԳԼՈՒԽ ԺԶ. — Վասն գնալոյ նոցա փախստեամբ ի Գեբրոն, որ է քաղաք . . . . . . . 137

ԳԼՈՒԽ ԺԷ. — Վասն խորտակելոյ զկուռսն և զդիսն և զքուրմսն Եգիպտացւոց . . . . . . . 143

ԳԼՈՒԽ ԺԸ. — Վասն դառնալոյ նոցա հրամանաւ հրեշտակին յերկիրն Իւրեանց . . . . . . . 148

ԳԼՈՒԽ ԺԹ. — Գալ յերկիրն Արաբիա, խորտակեաց ըզկուռսն, և կենդանացոյց զմեռեալն . . . . 150

ԳԼՈՒԽ Ի. — Վասն գնալոյ նոցա յերկիրն Ասորեստանեայց, և վասն այլ սքանչելեացն և յարուցանելոյ զմեռեալն . . . . . . . . . 156

ԳԼՈՒԽ ԻԱ. — Եկեալ յերկիրն Քանանու առնէր սքանչելիս ի ծածուկ, և կենդանացոյց զմեռեալն . . . 167

ԳԼՈՒԽ ԻԲ. — Եկեալ նոցա յերկիրն Իսրայելի և տալ զՅիսուս յուսումն դպրութեան . . . . 177

ԳԼՈՒԽ ԻԳ. — Եկեալ նոցա ի քաղաքն Տապարի, և տալով զնա յուսումն ներկ(արա)րութեան, և սքանչելեացն որ եղեւ անդ . . . . . . . . 206

ԳԼՈՒԽ ԻԴ. — Եկեալ նոցա ի քաղաքն Արիմաթայ, արար սքանչելիս և կենդանացոյց մեռեալս . . . . 217

ԳԼՈՒԽ ԻԵ. — Վասն գնալոյ նոցա յերկիրն Գալիլէացւոց և զոր առնէր ընդ տղայսն Եբրայեցւոց և զսքանչելի գործոյն . . . . . . . . 226

ԳԼՈՒԽ ԺԱ. — Վասն գալստեան մոգուցն ընծայիւք յերկրպագութիւն նորածին մանկանն Յիսուսի . . 42
ԳԼՈՒԽ ԺԲ. — Վասն քառասնօրեայ գնալոյն ի տաճարն բազում ընծայիւք . . . . . . . . 53
ԳԼՈՒԽ ԺԳ. — Վասն Հերովդէի և կոտորելոյ նորին ըզմանկունս ի Բեթղեհէմ և խաբելոյ ի մոգուցն. . 55
ԳԼՈՒԽ ԺԴ. — Վասն սպանման Հերովդի զԶաքարիա քահանայապետն ի տաճարին . . . . 57
ԳԼՈՒԽ ԺԵ. — Վասն հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ՝ գնալ նոցա փախստական ի ձեռաց՝ չար Հերովդէի երկիրն յԵգիպտոս . . . . . . . 60
ԳԼՈՒԽ ԺԶ. — Վասն գնալոյ յերկիրն Իսրայելի և բնակելոյ յաշխարհն Գալիլեացւոց ի Նազարէթ . . 70
ԳԼՈՒԽ ԺԷ. — Վասն փոխելոյ անտի և գնալոյ յերկիրն Ասորոց . . . . . . . . 76
ԳԼՈՒԽ ԺԸ. — Վասն երթալոյ նոցա յերկիրն Քանանու, և ողջայնութիւնն զոր առնէր Յիսուս. . . . 82
ԳԼՈՒԽ ԺԹ. — Վասն երթալոյ նոցա յերկիրն Իսրայելի և տալոյ յուսումն դպրութեան. . . . . 84
ԳԼՈՒԽ Ի. — Վասն տալոյ զՅիսուս Գամաղիելի յուսումն գրոց . . . . . . . . . 86
ԳԼՈՒԽ ԻԱ. — Վասն գնալոյ ի քաղաքն Տապարիա, և տալոյ զՅիսուս յարուեստ ներկարարութեան . . 91
ԳԼՈՒԽ ԻԲ. — Վասն գնալոյ նորա յԱրեմաթեայ քաղաք, զողջայնութիւնն զոր առնէր Յիսուս մահու և յարութեան . . . . . . . . 100
ԳԼՈՒԽ ԻԳ. — Վասն գնալոյ նոցա յարտեւան լերին. ողջայնութիւն զոր առնէր Յիսուս . . . . 106
ԳԼՈՒԽ ԻԴ. — Վասն գնալոյ նոցա ի գիւղն յԷմաւուս, և բժշկէր զհիւանդս, և զքանչելիսն զոր առնէր Յիսուս. 108
ԳԼՈՒԽ ԻԵ. — Վասն հրեշտակին ազդ առնելոյ Յովսեփայ գնալ ի քաղաքն Նազարէթ . . . . 112
ԳԼՈՒԽ ԻԶ. — Վասն բազում բժշկութեանց՝ զոր կատարեաց Յիսուս ի քաղաքն և ի գիւղն և այլ տեղիս, զոր առնէր բժշկութիւն Յիսուս . . . . 115
ԳԼՈՒԽ ԻԷ. — Վասն մարգարէիցն աւանդութեան ըզգրեալսն կատարելոյ, և օրինացն՝ զոր առնէր Յիսուս. 117
ԳԼՈՒԽ ԻԸ. — Վասն դատաւորութեան զոր առնէր ի մէջ

Digitized by Google

երկու զինուորաց . . . . . . . . 122

## ԳԻՐՔ ՏՂԱՅՈՒԹԵԱՆ ՔՐԻՍՏՈՍԻ

### Բ. ՕՐԻՆԱԿ

ԳԼՈՒԽ ԺԱ. . . . . . . . . . 127
ԳԼՈՒԽ ԺԲ. — Վասն տանելոյ զնա ի տաճարն ի քաղաքն Երուսաղէմ ի Թլփատել. . . . . . . 129
ԳԼՈՒԽ ԺԳ. — Վասն չարութեան Հերովդէի և կոտորելոյ զմանկունսն ի Բեթղեհէմ . . . . . 131
ԳԼՈՒԽ ԺԴ. — Վասն դարձեալ չարութեան Հերովդեայ սպանանել զԶաքարիա վասն Յովհաննու որդոյ նորա . 133
ԳԼՈՒԽ ԺԵ. — Վասն հրեշտակին յայտնելոյ Յովսեփայ փախչել յԵգիպտոս . . . . . . 136
ԳԼՈՒԽ ԺԶ. — Վասն գնալոյ նոցա փախստեամբ ի Գեբրոն, որ է քաղաք . . . . . . 137
ԳԼՈՒԽ ԺԷ. — Վասն խորտակելոյ զկուռսն և զդևսն և զքուրմսն Եգիպտացւոց . . . . . . 143
ԳԼՈՒԽ ԺԸ. — Վասն դառնալոյ նոցա հրամանաւ հրեշտակին յերկիրն իւրեանց . . . . . . 148
ԳԼՈՒԽ ԺԹ. — Գալ յերկիրն Արաբիա, խորտակեաց զդկուռսն, և կենդանացոյց զմեռեալն . . . . 150
ԳԼՈՒԽ Ի. — Վասն գնալոյ նոցա յերկիրն Ասորեստանեայց, և վասն այլ սքանչելեացն և յարուցանելոյ զմեռեալն . . . . . . . . 156
ԳԼՈՒԽ ԻԱ. — Եկեալ յերկիրն Քանանու առնէր սքանչելիս ի ծածուկ, և կենդանացոյց զմեռեալն . . . 167
ԳԼՈՒԽ ԻԲ. — Եկեալ նոցա յերկիրն Իսրայելի և տալ զՅիսուս յուսումն դպրութեան . . . . 177
ԳԼՈՒԽ ԻԳ. — Եկեալ նոցա ի քաղաքն Տապարի, և տալով զնա յուսումն ներկ(արա)րութեան, և սքանչելեացն որ եղեւ անդ . . . . . . . 206
ԳԼՈՒԽ ԻԴ. — Եկեալ նոցա ի քաղաքն Արիմաթայ, արար սքանչելիս և կենդանացոյց մեռեալս . . . 217
ԳԼՈՒԽ ԻԵ. — Վասն գնալոյ նոցա յերկիրն Գալիլէացւոց և զոր առնէր ընդ տղայսն Եբրայեցւոց և զսքանչելի գործոյն . . . . . . . . 226

Դ. — Տեսիլ Ս. Աստուածածնին Մարիամու, զոր ետես զտանջանս մեղաւորաց (Ըստ Ժ օրինակին) . . 440

Ե. — Տեսիլ Ս. Կուսին Մարիամու Աստուածածնին, զոր գրեաց Ս. առաքեալն և աւետարանիչն Քրիստոսի Յովհաննէս, զի նա սպասաւորէր Ս. Կուսին մինչև փոխեցաւ յաստեացս ի վերին Երուսաղէմ (Ըստ ԺԱ օրինակին). . . . . . . . . 443

## Զ

## ՆՆՋՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Երանելոյն Նիկոդիմոսի ասացեալ յաղագս ննջման Մարիամու Աստուածածնի և միշտ կուսին. . . . 451

Digitized by Google

# ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ ԱՆՁԱՆՑ ԵՒ ՏԵՂԵԱՑ


Աբբիոն, տես Սաւուղ
Աբբիւրոն 225
Աբգար թգ. 278, 375
Աբել 46, 51, 276, 304
Աբիսա՝ որդի Թամարայ 72, 75–6, 154–5
Աբիրոն 13
Աբուլթեան 343
Աբրահամ 2, 46, 237–8, 248, 250, 278, 295· 366–7, 386,
404, 441, 448, եայլն։
Ագղեպ, Ասկղեպ չաստուած 314
Ադամ 46, 51, 294–5, 304, 414, 448, եայլն։
Ադդաս, Ադաս 335–6, 342–3, 351–2
Ադդեբիոս, Ադդեբուոս 319
Ալբիոսս } 377
Ալփիոսս }
Ահարոն 448
Աղեքսանդր մեծն 61, 138, 307
» քհնյպ. հր. 313, 314
Ամբեղէոս, Ամբեղիանոս քհնյպ. հր. 336
Ամովնիա, տես Մովնի
Այդդէ, տես Ադդաս
Անանիաս, տես Աննաս դպիր
Անդէաս, տես Եգիաս
Անդրէաս առաք. 462
Անդրոնիկոս, Ադրոնիկոս 319
Աննա մայր Ս. Աստուածածնի 2–8, 251–4, 264–6
Աննա քհնյպ. հր. 313, 318–9, 337–9, 343–4, 353, 364, 372
Աննաս դպիր 30–1, 244–5, 258–9
Ապողոն չաստուած 63–7, 71, 141, 142, 145, 149, 309–312
եայլն։


Digitized by Google

Ասխալոն,
Ասկաղոն, 60, 137
Ասղողոն
Արաբիա 150
Արաբիաս, տես Աբիաս որդի Թամարայ
Արեմաթեմ, Արեմաթայ քղ. 100, 217, 335, 341, 355, ևայլն:
Արքեղայոս, Արքեւեղոս 47-69, 148, 290, 300, 365, 372, ևայլն:
Արտեւան 226
Աւգոստոս կայսր 246, 259, 329
Աքայիա 53, 130

Բաբելոն 313
Բազմավէպ Հանդէս 381
Բաղդասար եբրայեցի 118, 121
» Թգ. Արաբացւոց 19, 42-52, 273-306, ևայլն:
Բարաք 7
Բարգիմիշայ, Բարգիմշա, Բարդմիշա 285, 296
Բարեյեսու, Բարեսու Թգ. 84, 89-90, 177, 202
Բարհուբիդայ, Բարխուբիդայ 285, 296
Բեգովր քղ. 55, 130
Բեթղեհէմ, Բեդղահեմ 36-48, 53, 55-6, 128-132, 246, 262, 278, 290-1, ևայլն:
Բեհեզի 10
Բոթսորոն, Բողորոսոն 84, 177
Բոսրա գղ. 204
Բուքորոն գղ. 115

Գաբրիէլ հրշտ. 15-19, 243, 257, 268-272, 399, 415, 419-432, 440-445-450
Գալիլեա 58, 100, 217, 226, 336 ևայլն:
Գամաղիէլ 85-88, 179-187, 200, 202
Գասպար, Գասբար Թգ. հնդկաց 19, 42-52, 273-306
Գեստաս, Կեստաս 329-331, 344
Գողիաթ 333

Դաղամիշա, Դաղմիշա 285, 296
Դաղան 13
Դաւիթ մրգ. 10, 11, 242, 278, 448, ևայլն:

Digitized by Google

Դեմաս, Դեմեաս 329-331, 344
Դըղմիշայ, Դըղմուշա, Դըղումշա 285, 296
Դիշպուղա, Դիշպահայ 285, 296
Դովկայէ, Դովղայէ 313

Եբեր 108-111, 228-232
Եգիաս, Եգիա 335-6. 342, 351-2
Եգիպտոս 60, 136-7, 149, 306, 307, այլն:
Եղիա մրգ. 337, 354-5, 357
Եղիազար իշխ, 68-9. 147
— քհ. 2, 4-5, 7
Եղիսաբեթ 7, 9, 22-4, 57, 135, 143, 249, 257, 263, այլն:
Եղիսէ մրգ. 337, 354
Եմաւուս գղ. 108, 228
Ենովս 305
Երիքով 337
Երուսաղէմ 43, 48, 51-4, 74, 118, 120-1, 124-5, 128-9
140, 172, 177, 285, 296, 359-360, 373, այլն:
Եւա 38-40, 414
Եփթայիա գղ. 108, 228

Զաքարիա քհ. 7-13, 22, 31-4, 57-9, 133-5, 241-3, 249,
255-256, 263-4
Զերաս 319
Զինոն 193-202

Թովմաս առաք. 462

Իսահակ 319
Իսաքար 105, 225
Իսպանիայ 285, 296
Իսրայէլ 91-99, 206-8, 210-216

Լենտուլոս 381
Լիկիանոս 375-377

Խարհէ քղ. 61, 158, 307
Խոյրատար գին. 126

Digitized by Google

Խորինա, Խորինէա 285, 296
Խումարայ, Խամարայ 285, 296

Կայէն 46, 51, 276, 294–5, 304
Կապետոնիոն, Կապիտոլիոն, 373
Կայիափա 313–319, 337–339, 344, 353, 365, 372, եւայլն:
Կարմեղոս լ. 226
Կիւրոս 47, 295, 305
Կորխ 13
Կլոպաս 319

Հաբէլ, տես Աբէլ:
Հերոդ 313
Հերովդէս Թգ. 44–8, 52, 54, 59, 96, 128–137, 248–9, 262–4, 277–281, 284, 286–291, 295, 297–301, 306, 313, 328–9, 365:
Հռոմ 359, 371, 381
Հրէայք 313, 314–335, 345–366, 444, 472
Հրէաստան 23, 54, 57, 74, 130, 137, 140, 360, 377, 380 եւայլն:

Ձեթենեաց լեառն 451, 457

Ղազարոս 68–9, 147, 326
» կամ Ղազարիոս 319
Ղենկիանոս, Ղենդիանոս 344
Ղեւի քհ. հր. 7
— քհպտ. հր. 313, 341–2, 344

Ճոհարտար գին. 126

Մաղիամ քղ. 82, 167
Մալլա–Քաղիր–Մաին քղ. 148
Մաղաքիա 113–4, 233–5
Մամբրէ 70, 148
Մանուիէլ 246, 256
Մարիամ՝ Աստուածածին, տես ի սկզբանէ ցվերջ մատենիս:
» քոյր Ղազարու 68–9, 147

Digitized by Google

Մարթա քոյր Ղազարու 68-9, 147
Մելգոն, Մելքոն թգ. պարսից 19, 42–52, 124, 127, 275–306
Մելքիսեդեկ, Մելքիսեթեկ 47, 295, 305
Միքայէլ հրշտկպտ. 382–412, 444, 446–47
Միքիա 113-4, 233–5
Մոգք, տես Մելգոն, Գասպար և Բաղտասար։
Մովնի՝ որդի Շարուհի 81, 165–6
Մովսէս մրգ. 16, 324–5, 399, 414, 441, 448

Յակոբ նհ. 16, 248, 270, 336, 448
— եղբ. Տեառն 1, 264, 378, 462
— Աղփեան 462
Յամրէս 324
Յայել գղ. 175
Յայիրա 343
Յանէս 324
Յուրիոս քհպտ. 313
Յեսու 448
Յեսու Բարաբբա 327
Յիսուս, տես ի սկզբանէ ցվերջ մատենիս
Յովակիմ հայր Ս. Աստուածածնի 1–6, 237–241, 250–254, 264–266
Յովել, Յովւել օրէնսգէտ 53, 129
Յովհաննէս մկրտիչ 9, 57, 249, 263, 379, 386, 399–404, 441, 448
» աւետարանիչ 445, 459–460, 462, 463
Յովնաթան 104–5, 214–5
Յովսէփ աստուածահայր, տես առհասարակ յամենայն էջս սկըսեալ յ՚ 9–ց339 էջս, եւայլն։
— Արիմաթացի 332–5, 338–41, 344–8, 350, 355–8
Յովւէլ 227
Յորդանան 338, 354, 379
Յուդա առաք. 462
Յուդաս 319
» քհպտ. 313
Յութենէ 251
Յուսեպոս պատմագիր 379

Նազարէթ, 13, 70, 112, 114, 117, 121 233

Նեփթաղիմ քհյա. 313
Նեկեփորոս 381
Նիկողեմոս, Նեկոմմիդոս 313, 324-7, 333-9, 341, 354, 357-358, 451
Նոյ 46, 295, 305

Շահայպանոյ, Շախապանայ 285, 296
Շահապրաւ քղ. 76, 156
Շահուրա, Շահուրի 285, 296
Շամիրամ 285, 296
Շուրուրա, Շաւուրա, Շամուրա 285, 296
Շաւուղ 175
Շմաւոն առաք. 462

Ովկիանոս 60, 306
Ովսաննա 237-40, նոյն ընդ Մարիամ Աստուածածնին:
Ովսէ 53

Պաղեստին 355-360, 377
Պաղտասար, տես Բաղտասար:
Պաւղոս առաք. 379, 386, 448, 462, 474
Պենտակոստէ 417
Պետեղոմն քհ. 253
Պետրոս առաքեալ 441, 448, 462, 466, 471-72, 474
Պիղատոս 313-334, 344-348, 357, 359, 367, 371-380
Պոբլիոս, տես Լենտուլոս
Պողպայս, Պուլպայս քղ. 137, 307

Ռոբէն, Ռուբիմ 327, 250, 264

Սաբեղէք, Սաբեղայ, տես Սամբեղէք:
Սաղայէլ 144
Սահակ նհ. 2, 237, 448
— քհ. 344
Սամբեղէք, Սամբեղաք 336-343, 351-354
Սամուէլ
որ և 319
Սանտուէլ

Digitized by Google

Սարաքա, տես Իսաքար։
Սարգիս Շնորհալի 1
Սարոն քղ. 226
Սաւուղ 194, 201
Սէթ 46, 51, 276, 294-95, 304
Սէմ 295, 305
Սիմէոն Ծերունի 54, 130, 136, 142, 144
» քհպտ. 313
Սինա լ. 70
Սողոս, Սաւղոս (՞) գ. 396, 412
Սողոմէ, Սողովմէ 40–41, 247, 261–2
Ստեփանոս 315–16
» Ս. (սրկւգ.) 379

Վերոնիս, Վրոնիկայ 326

Տայանու դաշտ 60, 137
Տապարիա քղ. 91, 206
Տիբեր կայսր 313, 325, 359–360, 379

Փաթթեա չաստուած 116
Փարաւոն 324
Փելեսիեա, Փելէիոս, Փեղեայ, Փեղիոս քհ. 342, 343
Փեննեհեզ որ և Փեռնէս 319
Փիլիմովն, Փիլիմոն քհ. 335, 351–2
Փիլիպպէ քհ. 59, 135
Փիլիպպոս առաք. 462
» 365, 372
Փիլոն ժամանակագիր 379
Փիւնիկիա 359, 360

Քանան 82, 167
Քեբրոն 60, 137, 306
Քիրամ սաորի 115, 117

Digitized by Google

[redacted]
0042537592

## DUE DATE

INTERLIBRARY LOAN
SEP 21 1995
GL/Rec SEP 12 1995

201-6503
Printed in USA

Digitized by Google

Digitized by Google

LOOK FOR BARCODE

Digitized by Google

Digitized by Google

OOK FOR BARCODE

Digitized by Google

Digitized by Google

Digitized by Google